Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2492

ВОЗВРАТИТЕ КНИГУ НЕ ПОЗЖЕ
обозначенного здесь срока

914	15/X 37			

82
4-78 աշ
№ 9021.
1001
4964
14 JUN 2005
2 NOV 2009

ՄԱՐԻԱ ԿՈՐԵԼԼԻ
MARIE CORELLI

ԲԱՐԱԲԲԱ

BARABBAS

Քրիստոսի ժամանակակից վէպ

ԵՐԿՈՒ ՄԱՍԻՑ։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

Աղէքսանդր (Արտակ) Տէր-Սարգս. Պարզեանցի։

Հրատարակեց Մկրտիչ աւագ քահանայ Տէր-Սարգս.-Պարզեան։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան ընկ. «Վերեիչև և Կամենմախեր»
Тип. т-ва «Вереичевъ и Каменмахеръ». Тифлисъ, Мих. пр., № 81.
1903

21 MAY 2013
2492

Дозволено цензурою, 28 декабря 1902 г., г. Тифлисъ.

ՁՕՆ

Առ Նորին Սուրբ Օծութիւն

Վեհափառ Հայրապետն Ամենայն Հայոց

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

Թարգմանչից.

ՀՐԱՏԱՐԱԿՉԻՑ

«Եւ որ ոք արբուսցէ ձեզ ջուր բաժակաւ յանուն յայս թէ զուք Քրիստոսի էք, ամէն ասեմ ձեզ, մի կորուսցէ զվարձս իւր»:

Մարկ. Թ. 40.

Տասնեակ տարիների ընթացքում Յիսուսի վարդապետութեան մխիթարիչ լոյսը կրելուս համար, բարեպաշտօն ժողովուրդը վարձատրել է ինձ իր լումայով, որի մի մասը՝ սոյն գրքին վերածելով, գոհունակութեամբ սրտի՝ ձգում եմ մեր հաւատքի գանձանակը:

Մկրտիչ աւագ քահանայ Տէր Սարգս.-Պարգեւեան:

ՅԱՌԱՋԱԲԱՆ

«Զամենայն զոր միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս եւ զուք արարէք նոցա. զի այն իսկ են օրէնքն եւ մարգարէք»:

Փրկիչ:

«... Զի՞նչ օգուտ իցէ եղբարք իմ, եթէ ասիցէ ոք հաւատս ունել եւ գործս ոչ ունիցի, միթէ կարիցեն հաւատքն ապրեցուցանել զնա»:

Յակ. Բ. 14.

Մարիա Կորելլիի «Բարաբբան» Փրկչի վարքը յիշատակող՝ ուշադրութեան արժանի՝ բազմաթիւ գրուածքներից օրինակելին համարելով,—վստահացանք անգլիերէն բնագրի՝ կոմսուհի Ե. Փ. Կրօպոտկինայի ռուսերէնից թարգմանելու:

«Բարաբբան» Աւետարանը պարզաբանելով,—առաջնորդում է մեզ —խղճով և ճշմարտութեամբ—կենդանի հաւատքի խորը թափանցելու, որ այնքան ցանկալի է...

«Բարաբբայի» շնորհիւ ընթերցողի առաջ վառ գոյներով անցնում են այն վսեմ պատկերները, որոնք Երկնային սիրոյ, խղճի և ճշմարտութեան Վարդապետի գործերով—մեզ օրինակ է թողել:

Մարիա Կորելլիի հանճարը՝ Արարչի անսահման բնութեան վեհութեամբ փիլիսոփայական անզուգ զառանցանքը արհամարհելով, դէպի բարձրը ձգտող մարդկութեան համար Երկնային Պատգամախօսի երկրաւոր օրինակելի կեանքն է արձանագրում:

Մարիա Կորելլին, 'ի նկատի ունենալով ճշմարտութեան համար տանջուելու երջանկութիւնը, իւրեն յատուկ ոգևորութեամբ, աննման

փառքը է տալիս, թէ ինչպէս տանջանքի խաչը դէպի Երկնային Լոյսն է առաջնորդում խաւարի որդուն…

Վերջապէս՝—Մարիա Կորելլին իւր կենդանի հաւատքով և նորա «Բարաբբան»—ճշմարտութեամբ՝—ցոյց են տալիս մեզ խղճի անդորրութեան այն ճանապարհը, որին այնքան ձգտում է մարդկութիւնը, և որին հասնելու համար բազմաթիւ որպէս թէ հանճարներ բիւրաւոր թշուառների ճշմարտութեան դէմ խարխափելու պատճառ են դառնում այնպիսի ճարպիկութեամբ, որ նոյն իսկ խաւար ամբոխն է նոցա չաստուածացնում՝ 'ի կորուստ իւրայինների…

Ա. Փարզեանց

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I.

Սիրիական *) երկար և տապ օրը մօտենում էր իւր վախճանին։

Խեղդող տաքութիւնը համարեա թէ անտանելի էր։ Հրէական բանտի հողէ խոնաւ յատակներից թունաւորող գարշահոտութիւն դուրս գալով, վարակում էր այնտեղ եղած օդի աննշան մասը։ Խորքում, նորա ամենացածր բաժանմունքներում, անտանելի մութն էր թագաւորում. միմիայն ամենածանր յանցաւորներին յատկացրուած բաժանմունքում օդի բարակ շիթը կամակորութեամբ թափանցում էր խոր խաւարի մէջ։ Արեւելեան գեղաշուք երկնքի այդ ամենաթոյլ անդրադարձումն անգամ միայնակ բանտարկեալի վերայ ընկնելով, ծակծկում էր նորա աչքերը, որից նա սովորած էր լինում շուռ գալու կապարի նայուածքի և հառաչանքի տակ։ Դէպի յետ կծկուելով, որքան թոյլ կը տային շղթաները, նա՝ լոյսից խուսափելու համար՝ կաշկանդուած ձեռքերով փակում էր երեսը և միևնոյն ժամանակ աննպատակ ժանդութեամբ կրծոտում էր շրթունքները, մինչ բերանը զգալ կը տար նորան սեփհական արեան դառնութիւնը։

Այդպիսի անոյժ կատաղութեան մէջ նա շատ շատ էր ընկնում։ Նա մտաւորապէս կատաղում և կռւում էր այն պայծառ լոյսի դէմ, որը սրի նման կտրում էր անտեսանելի մութը։ Նա այդ ճառագայթին նայում էր ինչպէս իւր անհաշտ թշնամու կամ յաւէտ տանջանքների աղբիւրի վերայ։ Նա ժամանակի վերաբերութեամբ կորանով էր դառում. երբ ճառագայթը երեւում էր, նա իմանում էր, որ օրն է այդ։ Երբ անյայտանում էր—մօտենում էր գիշերը։ Ժամանակի սահելու մասին մի ուրիշ նշան նա չը գիտէր։ Նորա գոյութիւնը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ խուլ տանջանքների մի երկար շղթայ, որը ան-

*) Սիրիական—Սիրիա՝—աշխարհիս այն կողմը, որտեղ գտնւում էր Հրէաստանը և այլն։ Սիրիա—տաճկ. Sùria, Suristan, արաբ. Էշշամ, լատ.-յուն. Syria, ֆրանս. Syrie.

զօր բարկութեան սաստկութեան տակ կորսւելով, շատ քիչ բաւականութիւն էր տալիս նորան, որով նա աւելի բութ կենդանական բնաւորութեան մէջ էր ընկնում։ Նա ոչ մի բանի մէջ իրեն հաշիւ չէր տալիս, բայցի այդ պարզ ճառագայթի վերաբերութեամբ, որը չեղ ընթացք բռնելով, ընկնում էր նորա վերայ և տեսողութիւնը գոցելով,—տանջանք էր պատճառում։ Բաց մակերևոյթի վերայ նա կարող էր տանել Սիբիրական արեգակի ամբողջ փայլունութիւնը.—աչք չէր համարձակիլ նորա նման յանդուգն ակնարկ ձգելու իւր մեծութեամբ ճառագայթածածք կապուտակի վերայ թագաւորող հրային գնդին, բայց այդ տխուր բանտի օդի միայնակ անցքի համար թողնուած նեղ ճեղքից ընկնող բարակ, կուրացուցիչ ու թափանցիկ լոյսի ճիւղը նորա աչքին երևում էր ինչպէս մի մարմնացած արհամարհանք կամ կիրք։ Նա անընդհատ զանգատւում էր այդ ճառագայթի դէմ, և այժմ, կծկուելով իւր յարդեայ ծածկոցի վերայ, հայհոյանքներով քաշւում էր հեռու ու հեռու՝ դէպի մութը։ Նա իրեն ձգած յարդի մէջ թաւալելով, նզովում էր թէ Աստծուն, թէ ճառագայթին և թէ մարդկանց։ Նա միայնակ էր, բայց ոչ բոլորովին միայնութեան մէջ. Նոյն անկիւնի մօտ, որտեղ նա վայրենի գազանի նման կծկուել էր, մի երկաթի վանդակ եւս կար, որը հարևան ծածքի համար միայնակ անցքի տեղ էր ծառայում. այդ վանդակի միջից յանկարծ մի նիհար, կեղտոտ ձեռք լարուեց։ Օդի մէջ մի քանի ապարդիւն շարժմունք գործելուց յետոյ, այդ ձեռքը վերջապէս գտաւ և ձգեց նորա հագուստի ծայրը, իսկ մէկի խրպոտ թոյլ ձայնը կոչեց զորան իւր անունով.—«Բարաբբա»։

Բարկացկոտ շարժուածք գործելով, նա արագութեամբ շուռ եկաւ, որին յաջորդեց շղթայի տխուր և խղճալի ձայնը։

—Ի՞նչ դարձեալ...

—Մեզ մոռացել են,—հառաչեց ձայնը։—Վաղ առաւօտից մեզ ուտելիք չեն բերել։ Ես քաղցած և ծարաւ մեռնում եմ։ Ես զղջում եմ, որ մի ժամանակ տեսայ քո երեսը ու խառնուեցի քո չար դիտաւորութիւններին։

Բարաբբան ոչինչ չը պատասխանեց։

—Յիշո՞ւմ ես դու,—շարունակեց նորա անտեսանելի ընկերը,—մեր կողմերում տարւայ ո՞ր ժամանակն է։

—Ես ժամանակով չեմ հետաքրքրւում.—պատասխանեց Բարաբբան արհամարհութեամբ։—Եւ ինչ գործ ունիմ ես տարւայ եղանակների հետ։ Տարի անցաւ, կամ մի քանի տարիներ այն ժամանակից՝

երբ մեզ այստեղ բերեցին,—ինձ համար այդ միևնոյն է։ Իսկ դու գիտես։

—Տասն և ութ ամիս է անցել, ինչ դու սպանել ես փարիսեցուն,—նկատելի շարութեամբ պատասխանեց հարևանը։—Եւ եթէ այդ չար գործողութիւնը չը լինէր, մենք կը խուսափէինք ներկայիս դժբաղդութիւնից։ Ճշմարիտ եմ ասում քեզ և աղղակի զարմանալի է, որ մենք դեռ այսքան երկար ապրում ենք,—ախր հիմա պասեք է։

Բարաբբան ոչինչ չը պատասխանեց և ոչնչով չը յայտնեց զարմանք կամ ցաւակցութիւն։

—Յիշո՞ւմ ես արդեօք պասեքի սովորութիւնը.—շարունակեց միւսը։—Մի բանտարկեալ, որին կը ընտրէ ժողովուրդը, պէտք է ազատ թողնուի։ Ա՜խ, եթէ դա մեզանից մէկը լինէր։ Այն ժամանակ մենք տասը կը լինէինք. տասը հոգի Հրէաստանի ամենայայտնի մարդիկներից, ի հարկէ բացի քեզնից։ Չէ՞ թէ դու խելագարւում էիր սէրից՝ և բոլորը գիտեն, որ կատաղի սիրահարից աւելի յիմարը չէ կարող լինել...

Բարաբբան միշտ լուռ էր։

—Եթէ անմեղութիւնը վարձատրւում է,—վանդակի յետևից շարունակեց անհանգիստ ձայնը,—ուրեմն ընտրութիւնը պէտք է որ ինձ վերայ ընկնէ։ Միթէ ես մեղաւոր եմ։ Իմ հայրերի Աստուածը վկայ է, որ իմ ձեռքերը ներկուած չեն արդարների արիւնով։ Ես ոչ մի փարիսեցու չեմ սպանել։ Փոքր ինչ ոսկի,—ահա այն բոլորը, ինչ ես փնտրում էի...

—Եւ միթէ դու այդ չը ստացար. յանկարծ արհամարհանքով կտրեց նորան Բարաբբան։ Երեսպա՜շտ։ Միթէ դու չը կողոպտեցիր փարիսեցուն, վերցնելով նորանից բոլորը, մինչ վերջին զարդարանքը անգամ։ Քեզ պահապանը այն ժամանակ բռնեց, երբ դու ատամներով պոկում էիր նորա ձեռքից ոսկի ապարանջանը,—իսկ նա դեռ շընչում էր։ Կորիր քո ստախօսութիւնը։ Դու ամբողջ Երուսաղէմի ամենաանխիղճ աւազակն ես և ինքդ էլ լաւ գիտես այդ։

Վանդակի յետևից մռնչացի նման մի ձայն լսուեց և նիհար ձեռքը յանկարծակի կատաղութեան տակ բարձրացաւ և յանկարծակի կորեց։ Լռութիւնը շարունակուեց։

—Ամբողջ օրը առանց կերակրի. հառաչեց նորից ձայնը։—Եւ ո՛չ մի կաթիլ ջո՛ւր։ Եթէ շուտով չը գան, ճշմարիտ որ կը մեռնեմ ե՛ս։ Ես կը մեռնեմ մթնութեան մէջ՝ այս սարսափելի նկուղում։

Ապա վախկոտութիւնից թոյլ ձայները ճչոցի փոխուեցին։

—Ինձ լսիր դու, անիծեալ Բարաբբա՛։ Ես մեռնո՛ւմ եմ։

—Հէնց այդ էլ քո վախճանն է, սառնասրտութեամբ պատասխանեց Բարաբբան: Այժմ ով ոսկի ունէ, յամենայն դէպս, դռները բաց թողնելով, կարող է հանգիստ քնել:

Այլանդակ ձեռքը դարձեալ ներս սողաց, այս անգամ բռնցունքի սեղմուած, որը իւր տգեղութեամբ կարծես թէ պատկերացնում էր իւր անտեսանելի տիրոջ ստոր բնաւորութիւնը:

—Դու սաղայէլ ես, Բարաբբա՛.—և այլայլուած դէմքի դժգոյն ստուերը իւր քայքայուած ու դուրս ցցուած մազերով մի րոպէում երևեցաւ վանդակի մօտ: Երդւում եմ, որ պէտք է ապրեմ դեռ, միայն թէ քեզ խաչուած տեսնե՛մ:

Բարաբբան լռութիւն պահելով, իւր շառաչող շղթաներով մի կողմ քաշուեց կատաղի հարևանից:

Այրող ցաւի զգացողութեան տակ, նա վախկոտութեամբ իւր աչքերը դէպի վեր բարձրացնելով, վստահութեամբ հառաչեց, վառւող ճառագայթափայլ սլաքը այլևս չէր լուսաւորում այդ խորշը,—նա փոխուել էր փափուկ, կարմիր, աղօտ շողքի:

—Արևի մայր մտոցն է,—մրթմրթաց նա: Քանի՜ քանի՜ անգամ արեգակը բարձրացել և մայր է մտել այն ժամանակից, երբ ես տեսայ նորան: Ահա՛ այն ժամը, որ նա սիրում էր: Նա իւր աղջիկներով շրջապատուած կը գնայ ջրհորի մօտ, որը նորա հօր տան յետևումն է գտնւում և արմաւենիների տակ կը հանգստանայ և կը ուրախանայ, մինչդեռ ես... ես.... Ո՜հ, Աստուած վրէժխնդրութեա՛ն: Ես ոչ մի ժամանակ այլևս չը պիտի տեսնեմ նորա երեսը: Տասն և ութ ամիս տանջանքի տա՛կ: Տասն և ութ ամիս այս գերեզմանի մէջ և ազատուելու ոչ մի յոյս:

Նա ուժեղ շարժուածք գործելով, կանգնեց և ուղղուեց. Նորա գլուխը, զգուշութեամբ քայլելու ժամանակ, համարեա թէ կպչում էր առաստաղին. իւրաքանչիւր շարժուածքի ժամանակ նորա մերկ ոտքերի ծանր շղթաները ուժգնութեամբ հնչում էին: Մի ոտքը պատի խորշի վերայ դնելով, նա բարձրացաւ և աչքը ձգեց այն ճեղքին, որտեղից տաք մայրմտոցի կրակային լոյսն էր ընկնում, բայց շատ քիչ բան էր երևում այդ անցքի միջից:—Միմիայն բանտին պատկանող այրուած գետնի չոր ցանկապատ հրապարակը և միայնակ արմաւենին դէպի երկինք ձգուած տերևներով: Նա ուշադրութեամբ նայել սկսեց, աշխատելով քաղաքը շրջապատող հեռու ընկած մառախլապատ լեռների ձևերը զանազանել, բայց երկար ժամանակ անօթի և ծոմ մնալուց ուժասպառ եղած, չը կարողացաւ իւր գլուխը պահելու և իւր նախկին անկիւնը վերադարձաւ: Այդտեղ նա շարունակեց նորա-

տել՝ տխրութեամբ հետևելով յատակի վերայ անդրադարձուած վարդագոյն շառաւիղին: Այդ լոյսը լուսաւորում էր նորա երեսը ևս, շըշտելով խոժոռուած յօնքերը և մութ բարկացկոտ աչքերը. պարզ լուսաւորում էր նորա, երկար ժամանակ քաղցածութեան հետ կռուելու ազդեցութիւնից, որպէս թէ ուժասպառ լինող և ծանրութեամբ բարձրացող բաց կուրծքը և բաց պղնձային գոյնով փայլում էր նորա ձեռքերը կաշկանդող միաձոյլ երկաթի շղթայի մէջ: Նա իւր խառնխուռն մազերով և անկարգ մօրուքով աւելի նման էր բռնուած վայրենի գազանի, քան մարդկային արարածի: Նա համարեա թէ հագնուած չէր: Ազդրները և փորը ծածկուած էին փսիաթի կտորով, որը կապուած էր կոպիտ չուանով: Բանտում տաքութիւնը անտանելի էր, բայց և այնպէս նա մերթ ընդ մերթ դողում էր այդ խեղդուկ մթնութեան մէջ և երեսը դնելով ծնկների վերայ կոթնած շղթայապատ ձեռքերի մէջ, բաւի թափանցիկ և բանի նայուածքով կարմիր արեգակնային ճառագայթին էր նայում, որը իւրաքանչիւր րոպէում դժգունանում և կամաց կամաց մարում էր: Նախ ճառագայթը բացկարմիր էր, ինչպէս այն սպանուած փարիսեցու արիւնը,—մտածեց Բարաբբան, չարաբաստիկ ժպիտով,—հիմայ նա դժգոյն-վարդագոյն եղաւ, ինչպէս գեղեցիկ կնոջ յանկարծաթռուչիկ կարմրութիւնը: Եւ այդ մտքի մէջ նա ամբողջ մարմնով դողդողաց: Գաղանի հառաչանքի ազդեցութեան տակ՝ նա ցաւեցնելու մօտ իւր ձեռքերը իրար սեղմեց, որպէս թէ զօրանով տանել էր ձգտում իւրեն անտանելի ֆիզիքական տանջանքը:

—Յուդիթ, Յուդի՛թ.—շշնջաց նա:—Թանկագին Յուդի՛թ:

Եւ ամբողջ մարմնով դողդողալով՝ նա շուռ եկաւ և սեղմեց ճակատը խոնաւ ու լպրձին պատին. այդ դրութեան մէջ նա անշարժ մնաց, իւր ձևականութեամբ քարեայ արձան մտաբերելով: Արեգակի վերջին գեղեցիկ արտացոլումն հանգչեց և մութ խաւարը ծածկեց բոլորը: Ո՛չ մի ձայն, ոչ մի շարժուածք ցոյց չէին տալիս մարդու ներկայութիւնը այդ զարհուրելի խաւարի մէջ: Հազիւ երբեմն լսւում էին մկների ծածկամիտ շշուկները, որոնք շտապով վազվզում էին յատակի վերայ. ապա նորից խոր, մեռելային հանգստութիւն էր տիրում: Իսկ երկինքը ծածկւում էր իւր բոլոր գեղեցկութեամբ: Երկնային մարմինները զարթնելով, դուրս էին լողում կարմրերանգ տարածութեան վերայ, ինչպէս ջրային շուշաններ ջրի մակերևոյթում: Արևելքում արծաթի շերթը ցոյց էր տալիս այն տեղը, որտեղից շուտով լուսինը պէտք է դուրս գար: Բանտի ճեղքից սոսկ մի աստղ կարելի էր նկատել: Բայց այժ, երբ լուսինը դեռ նոր էր երև-

ւամ հորիզոնի վերայ, նորա ոչ մի արծաթի շողքը չը կարողացաւ ընկնել բանտի մթնութեան մէջ և գժբաղդ բանտարկեալի խղճալի պատկերը լուսաւորել: Միայնակ և անտեսանելի, նա կռւում էր ֆիզիքական և բարոյական ցաւի հետ, ինքը ևս չը նկատելով, որ ամբողջ պատը, որին նա կռթնել էր, թրջուած էր արցունքներով, այն, արեան կաթիլների նմանող, այրող արցունքներով, որոնք ուժեղ մարդուս մահաչարչար տանջանքի ազդեցութիւնից են յառաջանում:

II.

Ժամերը կամաց կամաց սահում էին... Յանկարծ ծանր հանգըստութիւնը ընդհատուեց հեռաւոր ճչոցով: Ինչպէս ծովի յանկարծակի հոսանք, նա սկսուեց հեռուից և մօտենալով՝ չարաբաստիկ ղօղանջում էր... Հանդարտ շարժուելով, աւելի և աւելի բարձրանալով, այդ ձայնը ընկաւ բանտի պատերին և անդրադարձուեց հազարաւոր արձագանքներով...

Արդէն զանազանւում էին բազմաթիւ ոտքերի խառնիխուռն կոխկրտոցի ձայները և զէնքերի շառաչիւնը: Խոպոտ ձայներով վիճում էին, լսւում էին սուլոցներ և ջահերի բոցը դէպ առ դէպ անդրադառնում էր բանտի մէջ, ուր Բարաբբան էր պառկած:

Ահա բարձր ծիծաղը ծածկեց ընդհանուրի աղմուկը և մէկը կոչեց. «Մարգարէ, ասա ով խփեց քե՞զ»: Ծիծաղը ընդհանուրին անցաւ: Ճչոցների, սուլոցների և ծափերի տարափներ թափուեցին... Ապա, փոքրիկ ժամանակամիջոց. վայրենի աղաղակները կտրուեցին և նոցա փոխարէն երկու կամ երեք հոգի գլուխ անցածների վճռաբանութեան ձայնը լսուեց: Դարձեալ նորոգուեց աղաղակը և հանդարտութեամբ անցնելով բանտի մօտից, ինչպէս որոտման հեռացող ձայները, կամաց կամաց խլացաւ:

Բայց դեռ չփոթութիւնը տևում էր, երբ բանտում լսուեց շղթաների հանդարտիկ սոսափիւնը և կաշկանդուած ձեռքերի թոյլ ընդհարումը ներքին վանդակի մօտ, ու նախկին խօսեցող ձայնը նորից հնչեց.—«Բարաբբա՛»:—Պատասխան չը տրուեց:

— Բարաբբա՛, դու լսու՞մ ես մօտեցող բազմութեան ձայները:— Լռութիւն:

—Բարաբբա՛... Շո՛ւն... Մարդասպա՛ն: Եւ խօսեցողը ուժեղ բռունցքներով խփեց վանդակափեղկին:—Լաւ լուրերի համար դու խուլ ես՝ ինչ է:—Ես քեզ ասում եմ—քաղաքում խառնակութիւն է

տիրո՛ւմ: Գուցէ մեր ընկերներն յաջողութեամբ գործո՛ւմ են: Հեռու օրէնքը: Հեռու բռնակալը, հալածողը: Հեռու փարիսեցինե՛րը: Հեռու բոլո՛րը:—Եւ նա ծիծաղեց. իսկ նորա ծիծաղը նման էր խռպոտ շշնջոցի:—Բարաբբա, մենք ազատ կը լինե՛նք: Ազատուա՛ծ: Մտածի՛ր, աւազա՛կ: Հազար նզովք քե՛զ: Դու քնել ես, կամ մեռած ես, որ ինձ չես պատասխանում:

Բայց նա 'ի զուր էր ձայնը բարձրացնում և աւելորդ էր նորա բռունցքներով վանդակադուռը խփելը:—Բարաբբան համր էր:

Լուսնի լոյսը, որը արդէն բարձրացել էր մինչ երկնքի կէսը, ներսը բոլորովին ծածկել էր իւր հանելուկային շողքով, այնպէս՝ որ նորա կազմուածքը ևս համարեա աննկատելի էր բանտարկեալի համար, որը ներքին շինութեան վանդակից էր նայում: Այդ ժամանակ ամբոխի չփոթութիւնը կորչեց հեռւում և դէպ առ դէպ մեղմիկ հասնում էր նոցա խաղաղ տրտունջի շշնջոցը, ինչպէս ալիքների հեռաւոր ձայնը, որոնք խփւում են ժայռերին:

—Բարաբբա, Բարաբբա՛—և բարկացկոտ թոյլ ձայնը, ծածկուած չարութեան զգացողութիւնից, յանկարծ աւելի սաստկացաւ: —Դու լաւ լուրերի չես հետևում, ուրեմն լսի՛ր—վատերը՛: Լըսի՛ր: Լսի՛ր քո ընկեր Գանանին, որը քեզնից լաւ գիտէ կանանց չարանենգութի՛ւնը: Ինչո՞ւ դու այն փարիսեցուն սպանեցիր: Դու յիմա՛ր ե՛ս: Այն 'ի զուր չարչարանք է՛ր: Նորա պարծենկոտութիւնը ճշմարիտ էր և քո Ցաւլիթը ոչ այլ ինչ է, եթէ ոչ...

Ամօթալից խօսքը, որը նա կամենում էր գործ ածել, չը հնչեց: Մինչ այդ ժամանակ անտարբեր Բարաբբան, անսպասելի և արագութեամբ, կատաղած առիւծի նման, յարձակուեց Գանանի վերայ, բռնեց նորա ձեռքերից, որոնց նա սողացրել էր վանդակի միջից և սեղմեց նոցա այնպիսի գազանային կատաղութեամբ, որ հազիւ չը կոտրատուեցին ոսկորները:

—Անիծուած Գանա՛ն: Շո՛ւն: Մէկ էլ արտասանիր նորա անունը և ես դուրս կը կորզեմ քո աւազակային ձեռքերը և քեզ կը թողնեմ միմիայն բազուկներդ—գողանալու համար:

Երես առ երես, աղօտ լուսնի տակ, համարեայ մէկը միւսին աննկատելի, նոքա միառժամանակ կռուեցին անլուռ կատաղութեան տակ. նոցա շղթաները, խփուելով երկաթի վանդակին, անախորժ շաչիւն էին հանում. վերջապէս, ցաւի ազդեցութեան տակ, զարհուրելի գոռոցով, Գանանը դուրս կորզեց իւր արիւնոտած մատները և ձեռքերը գազանային սեղմելուց, ու կատարեալ անուժութեամբ յետ ընկաւ իւր բանտի մթնութեան մէջ: Բարաբբան, ծանր շունչ քաշե-

լով, ընկաւ իր յարդի վերայ. Նորա իւրաքանչիւր երակը խփում էր և դողում:

—Ի՛նչ, եթէ այդ ճշմարիտ է,—մռմռաց նա՝ ատամները կրճտեցնելով,—եթէ ճիշտ որ նա ինձ խաբել է և նորա բոլոր գեղեցկութիւնը դիմակի տեղ էր ծառայում միմիայն իր ստութեան համար: Ո՜հ, Աստուած, նա այն ժամանակ հազարից վատ է ինձանից և իմ ոճրագործութիւնս նորա դէմ ոչինչ է:

Նա իր գլուխը սեղմեց տարածած ձեռքերի վերայ և անշարժ պառկելով, աշխատեց իր սկզբնական համարձակ, յանդուգն և անսանձահարելի բնաւորութեան մասին իրեն հաշիւ տալու: Բայց այդ այնպէս դժուար էր, որ տակաւ տակաւ նորա մտքերը սկսեցին ցրուել և ընկաւ պղտոր ինքնամոռացութեան մէջ, որը նորան, քիչ առաջուայ վշտերի հետ համեմատած, դուրեկան էր երևում: Նորա խփուած բռընցունքները բացուեցին, շնչառութիւնը հանգստանալ սկսեց և, սաստիկ դատարկելուց յառաչելով, նա ձգուեց յարդի վերայ իր բոլոր երկարութեամբ, ինչպէս նեղացած շուն—և քնեց:

Իսկ գիշերը թագաւորում էր: Լուսինը և աստղային մոլորակները հանգիստ հետևում էին իրենց օրէնքներին, և երկրիս բոլոր մասերից տարբեր հաւատքների զանազան ձևերի աղօթքները դէպի երկինք էին բարձրանում: Աղօթքներ՝ ողորմածութեան, ներողամտութեան և օրհնութեան այն մարդկութեան համար, որը ոչ ողորմածութիւն և ոչ ներողամտութիւն ունէ՛ր: Ապա կախարդական սպասմամբ մութ երկնային կամարները փոխուեցին աղօտ—մոխրագոյնի, լուսինը հանդարտութեամբ ծածկուեց և աստղերը հանգեցին մէկը միւսի հետևից, ինչպէս տօներից յետոյ՝ լապտերները...

Օրը զովացաւ և առաւօտը սկսեց:

Բարաբբան շարունակ քնած էր: Քնի մէջ նա անգիտակցաբար երեսը շուռ տուեց բանտի մէջ ներս խուժող աղօտ լոյսի կողմը և հանդարտ ժպիտը նորա դէմքի նախկին ժանտ արտայայտութիւնը փոխեց: Նորա այդպիսի պառկած դրութիւնից կարելի էր երևակայել՝ թէ ինչի էր նման այդ վայրենի, անգութ արարածը երիտասարդութեան ժամանակ. չը նայելով շղթայուած անդամներին, փոքր ինչ գրաւիչութիւն կար նորա քնած դիրքի մէջ: Չը սանրուած խիտ մօրուքի վերևում, շրթունքների քնքոյշ ծալուածքում՝ երևում էր բերանը և գերազանցող գեղեցկութիւնը դրոշմուած էր լայն ճակատի և փակուած աչքերի վերայ: Իսկութեամբ նա վայրենի և չըզղջացող չարագործ էր. բայց քնի կատարեալ հանգստութեան տակ նորան անխիղճ ճակատագրի անմեղ զոհի տեղ կարելի էր ընդունել:

Լուսանալու մօտ անսովոր շարժմունք և ձայներ լսուեցին բանտի արտաքին գաւթում:—Բարաբբան, դատարկութիւնից թուլացած, լսեց այդ աղմուկը, դորա համար իրեն ոչ մի հաշիւ չը տալով: Յետոյ, քանի որ աղմուկը աւելի սաստկանում էր, նա ակամայ բացեց աչքերը և մի արմունկի վերայ կռթնելով՝ սկսեց ականջ դնել: Շուտով նա ջոկեց զէնքերի շաչիւնի ձայնը և մարդկանց ոտքերի չափածոյ քայլերի տրոփիւնը: Մինչ նա քնաթաթախ և թոյլ դրութեան մէջ ինքն իրեն հարց էր տալիս, թէ ինչ կարող էր նշանակել այդ անսովոր երևոյթը, շառաչիւնը և չափածոյ քայլերի ձայները միշտ մօտենում էին և վերջապէս այդ ձայնը կանգ առաւ հէնց նորա նկուղի դռների մէջ: Բալանին դարձաւ կողպէքի մէջ, սողնակները յետ դրուեցին իրենց հսկայաձև փականքներով, դուռը բացուեց և այնպէս փայլուն լոյս ցոլաց, որ նա ակամայ ձեռքերը աչքերին տարաւ, որպէս զի նոցա կարծեցեալ հարուածից պահպանէ: Գիշերային թըռչունի նման թարթափելով, նա կանգ առեց, կամակորութեամբ և անհասկացողութեամբ նայելով այն առարկային, որը նորա առջին էր: Բանտի դռների մէջ կանգնած էին զրահափայլ հռովմէական զինուորների խումբը և կերոնը ձեռքին արձանացած էր նոցա գլուխը անցած սպան:

— Բարաբբա՛, դուրս արի՛:

Բարաբբան ոչինչ չը հասկանալով, քնաթաթախ նայում էր: Յանկարծ հնչեց մի խլացուցիչ ճչոց. «Ես եմ, ես Գանանն եմ, ես անմեղ եմ: Ինձ ես դատաստանատուն տարեցէ՛ք: Արդարադատ եղէ՛ք: Ես չը սպանեցի փարիսեցուն, այլ Բարաբբա՛ն: Տօնի ողորմածութիւնը պէտք է Գանանի համար լինէ՛: Չէ կարող լինել, որ դուք Բարաբբային վերցնէ՛ք, իսկ ինձ թողնէ՛ք»...

Ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց այդ բացականչութիւններին, սպան միմիայն կրկնեց իր հրամանը. «Բարաբբա, դուրս ե՛կ»:

Վերջնականապէս խելքի գալով, Բարաբբան դժուարութեամբ բարձրացաւ և բոլոր ճիգով աշխատեց հրամանը կատարելու, բայց ծանր շղթաները նրան խանգարում էին: Նկատելով այդ, սպան հրաման տուեց իր մարդկանց և մի քանի րոպէից շղթաները ընկան ու չարագործը շրջապատուեց պահապաններով:

— Բարաբբա՛: Բարաբբա՛:—Շարունակեց գոռալ Գանանը:

Բթամտութեամբ նայելով իրեն շրջապատած զինուորներին, Բարաբբան կանգ առաւ, յետոյ նայեց նոցա գլխաւորի վերայ:

— Եթէ դուք ինձ տանում էք մահուան պատիժը կրելու,—ասաց նա թուլութեամբ,—ես ձեզ խնդրում եմ, տուէք կերակուր այն

մարդուն։ Նա ամբողջ օրը քաղցած և ծարաւ է, նոյնպէս և բոլոր գիշերը, իսկ մի ժամանակ նա իմ ընկերս էր։

Սպան զարմացմամբ նայեց նորա վերայ։

— Այդ քո վերջին խնդիրն է, Բարաբբա՛։—Հարցրեց նա։—Այժմ պասեք է, և մենք քեզ թոյլ կը տանք բոլորը, ինչ որ բարի է և խելացի։

Նա ծիծաղեց, ծիծաղեցին և նորա մարդիկը։ Իսկ Բարաբբան միմիայն ուշադրութեամբ առջևը նայեց, որի աչքերի մէջ գազանային արտայայտութիւն էր նկատւում։

— Արեցէք այդ ողորմածութիւնից, — հանդստութեամբ շշնջաց նա,—ես էլ քաղցած էի և ծարաւ, բայց Գանանը ինձնից թոյլ է։

Դարձեալ սպան նայեց նորա վերայ, բայց այս անգամ պատասխանի չը արժանացրեց։ Զուաափոյթ չուռ գալով, նա հրամայողական գիրք բռնեց ու իւր մարդկանց գլուխ անցած, Բարաբբային մէջտեղ առնելով, դուրս եկաւ բանտից։ Քարեայ զուիթներից անցնելով, զինուորները կերոնները հանգցրին։ Գիշերը անցաւ և առաւօտը սկսեց։

III.

Խումբը՝ բանտի դուռթը մտնելով, կանգ առաւ, որպէս զի ժամանակ տայ դռները բանալու։ Այնտեղ, ցանկապատի միւս կողմում, տարածւում էր փողոցը, քաղաքը, ազատութի՛ւնը։ Բարաբբան դարձեալ միատեսակ յամառութեամբ առջևը նայելով, խուլ հոգւոց հանեց և, որպէս թէ խեղդուելով, շղթայուած ձեռքերը դէպի կոկորդը տարաւ։

— Ի՞նչ պատահեց քեզ.—հարցրեց ուղեկցողներից մէկը, նորա կողքից զէնքով հրելով։—Բարձրացի՛ր, յիմար. անկարելի է, որ դեփուռը կարող լինէ քեզ սպանուած ցուլի նման տապալել։

Իսկ Բարաբբան ճիշտ որ տատանւում էր և անշուշտ վայր կը ընկնէր, եթէ զինուորները չը բռնէին նորան և նորից ոտքի վերայ չը կանգնեցնէին հայհոյանքով և անէծքներով։ Նորա երեսը ծածկուեց մեռելային գունատութեամբ և խառնուած մօրուսի վերևում երևացին սպիտակ շրթունքները, որոնք, մեռելի նման, ցցուած էին խփուած ատամների վերայ։ Նորա շնչառութիւնը հազիւ թէ զգալի էր։

Սպան մօտեցաւ և նայեց նորա վերայ։

— Նա մեռնում է անօթութիւնից,—շտապով ասաց նա,—նորան գինի տուէ՛ք։

Հրամանը անմիջապէս կատարուեց։ Բայց ուժից ընկած բանտարկեալի շրթունքները սեղմուած էին և նա ոչինչ չէր զգում։ Գինին կաթիլ կաթիլ ուժով լցնում էին նորա կոկորդը և երկու րոպէից կեանքի եկողի նման խոր հոգւոցով նորա կուրծքը բարձրացաւ և աչքերը լայնութեամբ բացուեցին։

— Օդ... օ՛դ.—հեծեծեց նա։—Ազատ օ՛դ... լո՛յս...

Նա շղթայուած ձեռքերը տարածեց, յետոյ, գինու տաքութիւնից ուժի աւելանալը զգալով, սկսեց ծիծաղել։

— Ազատութի՛ւն.—կոչեց նա։—Ազատութի՛ւն։ Ապրել կամ մեռնե՛լ։ Միևնոյն չէ՞։ Ազատ եմ... ազա՛տ եմ։

— Լռի՛ր, շո՛ւն.—կոչեց սպան բարկութեամբ։—Ո՞վ քեզ ասաց, որ դու ազատ ես։ Նայի՛ր քո կաշկանդուած ձեռքերին և խելացի եղիր։ Զգոյշ նայեցէք սորա վերայ, զինուորներ։ Յառա՛ջ։

1001

Բանտի դռները ծանրութեամբ ծածկուեցին նոցա յետևից, և խմբի չափաւոր քայլուածքը արձագանգ էր տալիս փողոցներում, որոնցով նոքա անցնում էին, և ստորերկրեայ անցքի մէջ, որը ուղղակի տանում էր դէպի դատաստանատուն, կամ դատաստանի դահլիճը։ Այդ անցքը երկար էր, քարեայ կամարներով, որը դէպ առ դէպ լուսաւորւում էր խղճային լապտերներով, որոնք որպէս թէ զօրացնում էին խոր մթնութիւնը։ Խաւարը և լռութիւնը տիրում էին այնտեղ, ինչպէս և բանտում, և Բարաբբան նոր վախի զգայնութեամբ՝ սայթաքում էր իւրաքանչիւր քայլափոխում, աշխատելով յետ չըմնալ իւր առաջնորդողների չափածոյ քայլերից։ Նորա բոլոր յոյսը կորչեց։ Նորա ուղեղի մէջ փայլող ազատութեան հրաշալի գաղափարը այժմ երազի նման կորչեց։ Նորան անշուշտ դէպի մահացումն էին առաջնորդում. դորան այժմ նա աներկբայ էր։ Ինչ ողորմածութիւն կարող էր սպասել նա այն անձնաւորութիւնից, որը՝ ինչպէս գիտէր Բարաբբան՝ պէտք է իրեն դատէր և պատժէր։—Չէ՞ թէ Հրէաստանի նահանգապետը Պիղատոսն էր։ Իսկ նա՝ Բարաբբան՝ բարկութեան րոպէի մէջ սպանել էր փարիսեցուն,—Պիղատոսի ընկերակիցներից մէկի՛ն։

Ա՜հ, թո՛ղ նզովուած լինի այդ փարիսեցին... Նորա պճնյալթեք շարժուածքը, նորա ինքնագոհ ժպիտը, նորա ցուցամատի վերայ փայլող մատանիքով սպիտակ ձեռքը և հագուստի ու կացութեան բոլոր անշան մանրամասնութիւնները, որոնք զանազանում էին նորան միւս մարդկանցից,—այդ բոլորը մտաբերեց Բարաբբան—անյաղթելի

ԳՐԱԴԱՐԱՆ БИБЛИОТЕКА 1922 Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

զզուանք զգալով։ Նա կարծես նորից տեսաւ նորան՝ ինչպէս այն ժամանակ, երբ սրի մի հարուածով նորան գետին գլորեց։ Նա սաստիկ ծածկուեց արիւնով, իսկ լուսնի լոյսի տակ նորա աչքերը անբնական չռուած էին երեւում, ինչպէս ատելութեան զգացմունքով վառուած դէպի Բարաբբան—մարդասպանը։ Բնութեամբ բարձրուած կեանքը վրէժխնդրութիւն էր կոչում։ Բարաբբան այդ հասկանում էր։ Միմիայն մահուան կերպը, որ գործադրւում էր ծանր յանցաւորների համար, շատ էր վախեցնում նորան եւ նորա իւրաքանչիւր նեարդը որպէս թէ դողում էր ապագայ ճաշակելի տանջանքներից։ Եթէ, ինչպէս այն փարիսեցին, նա բաժանուէր կեանքից մի վայրկեանի մէջ, այդ ոչինչ բան էր, բայց փայտեայ ձողերի վերայ տարածուել եւ ժամերով տանջուել կիզող արեգակի ճառագայթների տակ, զգալ եւ փորձել թէ ինչպէս է իւրաքանչիւր կաթիլ արիւնը չէկացած կրակի փոխւում, իսկ յետոյ սառոյցի.—այդ բաւական էր, որ անգամ քաջ մարդին էլ ստիպէր դողալու։

Եւ Բարաբբան, նուաղած երկար ծոմապահութիւնից եւ օդի բացակայութիւնից, այնպէս սաստիկ դողաց, որ դժուարութեամբ էր քարշ տալիս ոտքերը։ Նորա գլուխը պտոյտ էր գալիս եւ աչքերը ցաւում էին։ Նորա ականջները խուլ զօղանջում էին արեան ուղեղի մէջ թափուելուց եւ բազմաթիւ մօտեցող վայրենի կատաղած աղաղակների ձայնից, որոնց մէջ նորան թւում էր, որ զանազանեց իւր սեփական անունը.—Բարաբբա... Բարաբբա՜։

Վախեցած, նա սկսեց իւրեն շրջապատող զինուորների երեսը նայել, բայց ոչինչ չը կարողացաւ նկատել նոցա բրոնզեայ, անշարժ դէմքի գծագրութիւնից։ Նա աշխատեց լսել,—նորան խանգարում էին զէնքերի շառաչմունքը եւ ոտքերի չափածոյ կոխկրտոցի ձայնը։ Բայց ահա՝ դարձեալ, այդ արդէն խաբուսիկ չէ, դարձեալ կոչում են. «Բարաբբա... Բարաբբա՜»։ Զարհուրանքը ակամայ պատեց նորան։ Անխիղճ ամբոխը, ինչպէս սովորութիւն է, ակնյայտնի է, նորա մահն էր պահանջում, եւ պատրաստւում էր ուրախութեամբ նայելու նորա տանջանքներին։ Ոչ մի դուրեկան բան չը կայ գազանացած ամբոխի համար, քան մարդկային արարածի մահացու ֆիզիքական տանջանքը։ Ոչ մի բան այնքան ուրախացուցիչ քրքիջ չէ յառաջացնում, ինչպէս յուսահատութիւնը, տանջանքը,—թշուառ զոհի վերջին կռիւը, որը երկար եւ ծանր մահուան պատժի է ենթարկւած։ Սոսկ այդ մտածելիս՝ քրտնքի խոշոր կաթիլներ էին երեւում նորա ճակատի վերայ եւ նուաղած առաջ գնալով, նա լռութեամբ աղերսում էր յանկարծակի մահ ստանալու

այն պատճառով, որ տաք արիւնը շուտափոյթ եւ անդիմադրելի ոյժով ներս թափուէր նորա կեանքի մի որեւ է կենսական առանցքի մէջ ու նա յանկարծ ոչնչանար եւ անյայտանար՝ ինչպէս ծովի մէջ նետուած մի քար։ Բոլորը, բոլորը, միմիայն չը ընկնել ամբոխի ծիծաղի եւ չարախնդածութեան տակ, որը դիմում է դէպի մահուան տեսարանը, ինչպէս կը դիմէր դէպի մի որեւ է հանդէս։ Աւելի եւ աւելի մօտեցաւ աղաղակը, որը դէպ առ դէպ կտրւում էր լռութեան երկար ժամանակամիջոցով, եւ մի այդպիսի ժամանակ նորա ճանապարհորդութիւնը իւր վախճանին մօտեցաւ։ Ստորերկրեայ անցքի վերջին անկիւնը բարձրանալով, ճանապարհորդները դէպի Աստուծոյ լոյսը դուրս եկան. մի քանի աստիճան բարձրանալով, նոքա անցան բաց բոլորաձեւ սրահից եւ կանգ առան մի մեծ դահլիճի մէջ, որը բաժանուած էր երկու քառանկիւն մասերի,—մէկը համարեա դատարկ, միւսը խիտ ամբոխով լցուած, որին մի շարք հռովմէական զինուորներ, ցենտուրիօնին *) իրենց գլուխ ունենալով, դժուարութեամբ էին պահում շինութեան մէջ։ Երբ Բարաբբան զինուած պահապաններով երեւաց, մի քանիսները գլուխները դէպի նա դարձրին եւ ամբոխի միջից շշնջոց լսուեց, բայց ոչ մի հետաքրքրութեան կամ կարեկցութեան ակնարկ չը ձգուեց նորա վերայ։ Ժողովրդի բոլոր ուշադրութիւնը լարուած էր մի աւելի ծանրակշիռ առարկայի վերայ։ Այնպիսի դատաստան էր կանգնած, որը դեռ գոյութիւն չունէր մարդկային դատաստանատներում, եւ այնպիսի Կալանաւորի էին հարցաքննում, որը դեռ մահացու մարդուն պատասխան չէր տուել։ Զգացողութեան յանկարծակի թեթեւութեամբ՝ Բարաբբան գուշակեց, որ զուցէ նորա վախը անհիմն էր։ Ոչ մի նշաններ չը կային, որով ամբոխը նորա մահը պահանջէր. վարակուելով ընդհանուրի լարուած հետաքրքրութեան հոգւով, նա՝ որքան կարող էր՝ լարեց վիզը, որպէս զի նկատէ այն, ինչ առջեւը անցնում էր։ Այդ նկատելով՝ նորա առջեւ կանգնած մարդիկը աչքի ընկնող զզուանքով յետ քաշուեցին, բայց նա ուշադրութիւն չը դարձրեց այդ զզուանքի արտայայտութեանը, քանի որ հէնց դորանով նորա առջեւը բացուեցաւ եւ նա կարող էր արձակ տեսնել դատաստանական ամպհովանին եւ այն բոլորը, ինչ նորան պատել էին։ Այդտեղ նստած էին սինեդրիոնի **) անդամների խումբը, որոնցից մի քանիսին ճանաչում էր, ինչպէս օրինակ՝ քահանայապետ Կայիափային, նորա ազգական, նոյնպէս քահանայապետ, Աննային։ Ներքեւում մի քանի դպրապետներ, աթոռների վերայ նստած, մի ինչ որ

*) Ցենտուրիօն—հարիւրապետ։

**) Սինեդրիոն—Հրէական բարձր ատեան։

րան էին գրում շտապով։ Այդ ազդեցիկ մարդկանց միջում նա զարմանքով նկատեց փոքրիկ, նիհար և խորշոմապատ լումայափոխին ևս, այն յայտնի մարդուն, որը իւր սարսափելի վաշխառութեան և դէպի աղքատները անխղճութեան համար, Երուսաղէմի մէջ բոլորից անիծուած էր։ Ի՞նչպէս է այստեղ ընկել այդ խղճալի վատապարծը,—մտածեց Բարաբբան. բայց նա դորա վերայ երկար չը մտածեց,—նորա աչքերը ակամայ մէկին փնտռում էին և կանգ առան հռովմայեցի դատաւորի վերայ, այն դատաւորի, որի սխուր, խիստ դէմքը Բարաբբային դեռ բանտի մէջ էր երեւացել։ Այդ Պիղատոսն էր, միշտ հանդարտ, խիստ, բայց միեւնոյն ժամանակ և կեանքի ու մահուան դէմ ողորմած միջնորդ։ Երեւի նա այդ օրը տանջուել էր կամ դատարկ։ Ոչ մի ժամանակ որեւէ օրինական բռնակալ այդպիսի մաշուած դէմք չէր ունեցել։ Առաւօտեան մոխրագոյն լոյսի տակ, նորա դէմքի գծերը գունատ և մեռելային անշարժ էին. նա ձեռքով անգիտակցաբար խաղում էր վզից դէպի կուրծքը կախ ընկած կնիքի հետ, որը ծածկուած էր հազուագիւտ թանկագին քարերով. և դատաւորական ցած ընկնող ծալքերով հագուստի տակից՝ հոգաթափի մէջ առնուած մի ոտքով անհամբերութեամբ խփում էր յատակին։ Բարաբբան երկիւղով նորա վերայ նայեց և ակամայ սարսեց. այդ օրը Պիղատոսը աւելի սխուր քան անխիղճ մարդի էր նմանում,—բայց դարձեալ մի ինչ որ արտայայտութիւն կար նորա խիստ պատկերի և սեղմուած բարակ շրթունքների ամուր գծերի մէջ, որը ոչ այնքան փափկութիւն էր գուշակում նորա բնաւորութեան մէջ։ Եւ քանի որ Բարաբբան պըղտոր խորհրդակցում էր դորա վերաբերութեամբ, յանկարծ սարսափելի աղաղակ դուրս թռաւ նորան շրջապատող ամբոխի միջից, որը նման էր տհաճին ալիքների ձայնի, որոնք կարծես թէ յանկարծակի այդ դահլիճի մէջ թափուեցին.

—Խաչի՛ր։ Խաչի՛ր Նորան...

Աղաղակը կատաղի էր և զարհուրելի, և այդ խլացուցիչ բացականչութիւնների ազդեցութեան տակ՝ Բարաբբան յանկարծ արթնացաւ իւր լեթարգիական դրութիւնից. որպէս թէ յանկարծակի ընդհարումի ազդեցութիւնից, նա ուշքի եկաւ և դողաց։ Խաչի՛ր Նորան, խաչի՛ր։ Բայց ո՞ւմ։ Որի՞ կեանքն էին այդպիսի կատաղութեամբ պահանջում։ Իւրը արդեօք։ Ո՛չ, ինչ կարծիք որ նորանը չէ,—ամբոխը նորան չէր էլ նկատում։ Ծաղրելի ակնարկը բոլորովին ուրիշ կողմի վերայ էր ձգուած։ Իսկ եթէ նա չը պիտի խաչուէր, ապա ուրեմն ո՞վ։ Աւելի առաջ թեքուելով, նա նայեց այնտեղ, որտեղ ամբոխի ակնարկն էր ուղղուած և զարհուրելի դատաստանի առաջ կանգնած տեսաւ մի

Կերպարանք, և զարմացման ու հիացման մէջ շունչ քաշեցրին։ Երեւում էր, որ այդ Պատկերի վերայ ամփոփուել էր բոլոր վսեմութիւնը, ամբողջ լուսապայծառութիւնը, բարձր և ահագին դատաստանատան բոլոր մեծաշքութիւնը, փայլուն լուսամուտներից ներս ընկնող ամբողջ լոյսը, որը համահաւասար արեգակային սաք ճառագայթներին էր փոխուում տակաւ առ տակաւ։ Այդպիսի ճառագայթացումն, այդպիսի ույժ, այդպիսի զուգաւորութիւն կատարեալ գեղեցկութեան և կարողութեան մի մարդկային պատկերի մէջ—Բարաբբան ոչ մի ժամանակ դեռ չէր պատահել, չէր էլ մտածում, որ այդ կարելի՛ է։ Նա նայեց, նայեց այնքան, մինչ ամբողջ նորա հոգին՝ կարծես թէ՝ փոխուեց միմիայն անսովորական զգացմունքի։ Կարծես՝ երազի մէջ՝ նա շշնջաց. «ո՞վ է այդ մարդը։» Ոչոք նորան պատասխան չը տուեց։ Գուցէ ոչոք նորան չը լսեց էլ։ Եւ նա իւր մէջ կրկնեց դարձեալ և դարձեալ նոյն հարցը, չը կտրելով աչքերը այն բարձր, Աստուածային Գոյացութիւնից, որը միակ իւր նայուածքով՝ ցոյց էր տալիս իւր ծայրահեղ առաւելութիւնը բոլոր մարդկանց և առարկաների վերայ, և որը այնու ամենայնիւ լուռ կանգնած էր, օրէնքին հնազանդուող ձեւով, հանդարտ ու նշանաւոր ժպիտը հրաշալի շուրթերի վերայ և ցած ձգած արտեւանունքների տակից հեզ նայուածքով, որպէս թէ լուռ սպասելով այդ դատավճռին, որը նա ինքն էր վճռել։ Ինչպէս արեգակով լուսաւորուած մարմարիոն անդրի, նա կանգնած էր ուղիղ և հանդարտ։ Նորա սպիտակ հանդերձը, յետ ընկնելով բազուկներից, գեղեցիկ ծալքեր էր կազմում և բաց անում հոլանի ձեռքերը, որոնք խաչուած էին կուրծքի վերայ հանգիստ խաղաղութեան արտայայտութեամբ, և հէնց այդ հանգստութեան մէջ էր՝ որպէս թէ՝ կայանում ու ծածկուում նորա ամենակարող և անդիմադրելի ույժը։ Մեծութիւն, իշխանութիւն, անվիճելի վսեմութիւն, այդ բոլորը արտափայլում էին այդ հրաշալի և աննման Պատկերից. բայց, մինչ Բարաբբան նայում էր դեռ,—հիացած, վախեցած և անհանդարտ, ինքը ևս չը իմանալով ինչու,—ամբոխի աղաղակը նորից հնչեց աւելի ևս գազանային կատաղութեամբ. «Ջնջի՛ր Նորա՛ն։ Բա՛րձ Նորա՛ն։ Խաչի՛ր Նորա՛ն»...

Եւ հեռում, ամբոխի ամենայետին շարքերում, հնչեց արծաթաձայն և սուր մի կանացի բացականչութիւն, որը ինչպէս կախարդական երաժշտութիւն, ծածկեց միւս մնացած ձայները. «Խաչի՛ր։ Խաչի՛ր Նորան»...

Այդ կանացի ձայնի ուժգին հնչմունքը բռնադատեց կատաղի ամբոխին և աւելի լարեց նորան։ Վայրենի խառնակութիւն բարձրա-

ցաւ: Գոռում և գոչում, հառաչանքները, սուլոցները—օդը խլացրին: Վերջապէս Պիղատոսը բարկացկոտ և հրամայողական նշանով վեր կացաւ և շուռ եկաւ դէպի ժողովուրդը: Կանգնելով ուղիղ ամպհովանու առջև, նա բարձրացրեց ձեռքը, որով հրաման տուեց՝ լռելու: Կամաց կամաց ձայները փափկացան, տակաւ տակաւ մեռնելով. բայց նախ մինչ կատարեալ հանդարտութիւնը կը տիրապետէր, միևնոյն երիտասարդ, անուշ, մեղմալին ձայնը, այժմ ուրախ ծիծաղի, ելևէջով կորուող, դարձեալ հնչեց. «Խաչի՛ր: Խաչիր Նորան»:

Բարաբբան սարսեց: Այդ արծաթահնչիւն ծիծաղը, սառոյցի նման նորա սրտին կպչեց, բոլէակամ դողոց առաջացնելով. նորան այնպէս երևաց, որ նա մի ժամանակ լսել է արդէն գուգուող ուրախութեան մի այդպիսի արձագանգ և կարծես թէ նորա մէջ մի ինչ որ բան ծանօթ էր հնչում: Պիղատոսը սրատես ակնարկով աշխատեց ամբոխի միջից գտնելու ում էր պատկանում այդ աղաղակը, ապա խաղաղ արժանաւոր տեսքով հարցրեց. «Ասացէք, Նա ի՞նչ չար բան է արել»: Այդ պարզ հարցը, ակնյայտնի էր, որ իւր ժամանակին չէր տրուած, քանի որ ամենավատ հետևանքներ ունեցաւ: Դորա միակ պատասխանն էր զարհուրելի կատաղների քրքիջը և գազանային կատաղութեամբ որոտացող տրտունջը եղան, որոնց շնորհիւ դատապարտուածն պատերը դողացին: Մարդիկ, կանայք և փոքրիկ երեխաներ, բոլորն էլ մասնակցում էին այդ խմբին, դոցա միացան և քահանայապետները, աւագները ու դրագէտները, որոնք խայտաճամուկ խմբով կանգնած էին ամպհովանու տակ, Պիղատոսի յետևը: Պիղատոսը նոցա լսեց, ուժգնութեամբ շուռ եկաւ և, յօնքերը կիտելով, նայեց նոցա խիստ նայուածքով: Քահանայապետ Կայիափան այդ ակնարկը իւր վերայ զգալով, 'ի պատասխան քաղցրութեամբ ժպտաց և կիսաշշնջով ասաց, որպէս թէ զուրեկան առաջարկութիւն անելով.

— Խաչի՛ր Նորան...

— Ճշմարիտ որ լաւ կը լինէ Նորան մահուան պատժի ենթարկել,—քրթմնջաց Աննան, Կայիափայի հաստ ընկերը, աչքի տակովը Պիղատոսի վերայ նայելով:—Յարգելի Կառավարիչը կարծես թէ տատանւում է. բայց չէ թէ այդ խաբեբան աւելի քան Կեսարի բարեկամը չէ:

Պիղատոսը խոր արհամարհանքով նորա վերայ նայեց, բայց ոչ մի պատասխանի չը արժանացրեց: Ուսերը թափ տալով, նա նստաւ իւր նախկին տեղը և երկար փորձող ակնարկ ձգեց Մեղաւորուղի վերայ:

Ի՞նչ չարիք է Նա գործել: Աւելի ուղիղ կը լինէր ասել. Ի՞նչ

վնաս Նա կարող էր գործել: Մի՞թէ կար գէթ մի հատիկ մեղաւորութեան կամ մասնութեան նշոյլ այդ բաց, գեղեցիկ և ճառագայթացոլ դէմքի մէջ: Ո՛չ: Ազնուութիւնը և ճշմարտութիւնը դրոշմուած էին Նորա դէմքի իւրաքանչիւր գծի վերայ, և, բացի այդ, լոկ Կալանաւորի արտաքին տեսքը մի այնպիսի ազդեցութիւն ունէր, որ զարհուրեցնում էր Պիղատոսին և մի ինչ որ անբացատրելի և միևնոյն ժամանակ անվիճելի գոյութեան ույժ ներշնչում նորան. այդ վերին աստիճանի, բայց գաղտնի, մեծութիւնն էր, որը շրջապատել էր Նորան և Նորանից դուրս էր գալիս աւելի ևս ահեղ ուժով, քանի որ այդպէս անյայտ և խոր էր ծածկուած: Մինչ այլայլուած Կառավարիչը ուսումնասիրում էր այդ հանդարտ և վսեմագոյն Պատկերի կազմուածքը ու մտածում էր թէ ինչպէս պէտք է վարուել, որ լաւ հետեւանք ունենար,—Բարաբբան էլ՝ իւր կողմից՝ նոյնպէս ուշադրութեամբ նայում էր նոյն ուղղութեամբ, աւելի և աւելի զարմանալի կախարդական զմայլումն զգալով այն Մարդուց, որին ամբոխը կամենում էր սպանել: Վերջապէս՝ անսանձ հետաքրքրութիւնը նորան վստահութիւն տուեց և նա զինուորներից մէկին հարցրեց.

— Ասա՛՝ խնդրում եմ՝—ո՞վ է այս կալանաւոր արքան:

Զինուորը ծիծաղեց և շուռ եկաւ:

— Թագաւո՞ր: Հա՛, հա՛, հա՛: Նա իրեն կոչում է հրէաների թագաւոր: Խղճալի կատակ, որի համար Նա իւր կեանքով կը պատասխանէ: Նա ոչ այլ ոք է, եթէ ոչ Յիսուս Նազովրեցին, հիւսնի որդին: Նա խառնակութիւն ձգեց և հաւատացրեց ժողովրդին օրէնքին չը լսելու կարևորութեան մէջ: Բացի այդ, Նա պտտում է նզովուած խաբեբաների, գողերի, մաքսանենգների և մեղաւորների հետ: Նա մի տեսակ ընդունակութեան տէր է և հմուտ կախարդութեան մէջ. մարդիկ ասում են, որ Նա կարող է կորչել այն վայրկեանի մէջ, երբ Նորան մատն են գալիս: Բայց երէկ Նա ոչ մի ույժ գործ չը դրեց կորչելու: Մենք Նորան ուղիղ Գեթսեմանէի մօտ առանց դժուարութեան վերցրինք: Նորա աշակերտներից մէկը օգնեց մեզ: Մի քանիսները ասում են, որ նա խելագար է,—ոմանք՝ թէ նա բռնուած է սատանայի ույժով: Բայց այդ միևնոյն է, այժմ նա կալանաւորուած է և անշուշտ պիտի մեռնէ:

Բարաբբան լսում էր նորան անհասկացողութեամբ: Այդ կայսրանման մարդը—հիւսնի որդի, հասարակ բանւոր և դեռ արհամարհելի Նազովրեցի ցեղի՞ց: Ո՛չ: Այդ անկարելի՛ է: Յետոյ նա յիշել սկսեց, որ դեռ առաջ, մինչ նա, Բարաբբան, դեռ բանտ չէր ձըգուած, տարօրինակ ձայներ էին պտտում, թէ մի ինչ որ Յիսուս

հրաշքներ էր գործում, ակարներ և հաշմանդամներ բժշկում, կոյրերին տեսողութիւն էր վերադարձնում և աղքատներին քարոզում։ Այն ժամանակ նոյնպէս հաւատացնում էին, որ Նա մի որև է Ղազարոսի, որը մեռած էր և թաղուած, երեք օրից յետոյ յարութիւն էր տուել, բայց այդ ձայնը շուտով խեղդուեց փարիսեցիների և դպիրների բողոքներով։ Կոյր ամբոխը կոպիտ էր և սնոտիապաշտ, և ոչ որ չէր կարողանում բժշկել զզուեցուցիչ կեղտոտ ակարութիւնները, որոնք պատահում էին իւրաքանչիւր քայլափոխում։ Նա զօրանով օգտւում էր և մեծ ներգործութիւն ունէր այդ զրկուած դժբաղդ մարդկանց վերայ։ Բայց բառիս բուն նշանակութեամբ, եթէ դա միևնոյն մարդն էր, որի մասին և նախ խօսում էին, ուրեմն անկարելի էր չը հաւատալ այն հրաշագործութիւններին, որոնք Նորան էին վերագրում։ Նա ինքը հրաշքի մարմնացումն էր։ Իսկ ինչումն էր կայանում Նորա ույժը։ Շատ բան էին պատմում այդ Յիսուս Նազովրեցուց... Բայց Բարաբբան չը կարողացաւ յիշել, ինչ արդեօք։ Բանտի մէջ անցկացրած տասն և ութ ամիսները նորա յիշողութիւնից կարողացել էին շատ բան ջնջելու, աւելի ևս, որ նա այդ ժամանակ իւր խղճուկ օթևանում միշտ մտածում էր իւր սեփհական անբաղդութեան վերայ, և անուժ տանջանքի մէջ միշտ միևնոյն հրաշալի պատկերն էր յարութիւն առնում, Նորանից սիրուած աղջկայ կերպարանքով։ Իսկ այժմ, որքան էլ դա տարօրինակ երևար, նա չէր կարողանում մի որև է ուրիշ բանի վերայ մտածել, բայց միայն այն Մարդի ճակատագրի մասին, որից նա չէր կարողանում աչքերը հեռացնել։ Եւ մինչ նա նայում էր, Նորան այնպէս էր երևում, որ դատաստանատունը յանկարծ լայնացաւ և վառ կուրացնող փայլով լցուեց, որը հարիւրաւոր ճառագայթներով դուրս էր գալիս այն հրեշտակային սպիտակ Պատկերից։ Նորա շուրթերից ակամայ դուրս թռաւ մի թոյլ և վախկոտ ճիչ։

— Ոչ, ո՛չ.—շշջաց նա։—Ո՛չ, ասում եմ ձե՛զ։ Դուք չէք կարող, չը պիտի համարձակուիք Նորան խաչելո՛ւ։ Նա հոգի՛ է։ Այդպիսի մարդ չէ կարող լինե՛լ։ Նա Աստուած է։

Հազիւ կարողացաւ նա այդ խօսքերը արտասանել, ինչպէս հռովմայեցի զինուորներից մէկը շուռ եկաւ, և իւր պղպատեայ ձեռնոցով ուժգնութեամբ խփեց նորա շրթունքներին.

— Ցիմար, լռի՛ր, կամ դու էլ ես կամենում Նորա աշակերտը լինել։

Ցաւից դողալով, Բարաբբան փորձեց իւր կաշկանդուած ձեռքերով շրթունքներից ցայտող արիւնը սրբել և ուղիղ Յիսուս Նազով-

րեցու սրանչելի ակնարկին հանդիպեց։ Գթով լի այդ ակնարկը թափանցեց նորա հոգու խորքը լի քնքշութեամբ. ոչ մի կենդանի արարած իւր կեանքի մէջ չէր պարգևել նորան այդպիսի գթոտ, ըմբռնող ակնարկ։ Անմտածելի շտապ շարժուածքով նա աւելի ևս յառաջ անցաւ, որ մօտենայ Նորան, Ով այդպիսի գուրգուրանքով նայեց իրեն վերայ։ Բռնի ինքնամոռացութիւնը ստիպեց նորան անարգելք յառաջանալ դահլիճի ամբողջ լայնութեամբ, և իւր կոպիտ, անասնական ուժով նետուել այդ նոր Ընկերի ոտքերի տակ և դուրս կորզել Նորան բոլորից և բոլորի՛ վրէն։ Բայց նա շրջապատուած էր մերկացրած զէնքերով և չէր կարող այդ շրջանից դուրս գալ։ Նոյն վայրկեանին դպիրներից մէկը, բարձր հասակով և նիհար, անպաճոյճ հագնուած, բարձրացաւ իւր տեղից, և բաց անելով մագաղաթեայ ծրարը, տաղտկացուցիչ միահնչիւն ձայնով սկսեց մեղադրանքը կարդալ։ Այդ մեղադրանքը շտապփոյթ կազմուած էր դեռ երեկոյեան, քահանայապետ Կայիափայի տան մէջ։ Խորին լռութիւն տիրեց, ուշադրութեան և սպասելու խաղաղութիւնը տիրեց ամբոխին, որը՝ ինչպէս կատաղի գազան՝ սպասում էր, որ Նորան աւար ձգէին։ Պիղատոսը լսում էր խոժոռուած և ձեռքով դարձած աչքերը ծածկելով։ Կարդալու ժամանակ փողոցի աղմուկը պարզ մտնում էր դատաստանատուն, և մի անգամ ևս մի երգող երեխայի ուրախ ձայն ներս թափանցեց, ինչպէս մխիթարիչ զանգակ։ Երկինքը կամաց կամաց կորցնում էր իւր մոխրագոյն ցոլմունքը և արեգակը միշտ դէպի վերև էր բարձրանում հորիզոնի վերայ, թէպէտ դեռ դատաստանատան դահլիճի բարձր լուսամուտներից ներս չէր մտել։ Նա վառ փայլով լուսաւորում էր կամ կանացի մազերը զարդարող կարմիր աղուխը, կամ հռովմայեցի զինուորի պղպատեայ զրահը, մինչ սրահը մնում էր ցուրտ աղօտ սպիտակութեան մէջ, և նորա յետևում կարմրերանգ վարագոյրները թագման ճոխ զարդարանքի տպաւորութիւն էին թողնում։

Մեղադրանքի կարդացումն վերջացաւ, իսկ Պիղատոսը դեռ լուռ էր։ Ապա՝ յետ տանելով ձեռքը, որով ծածկել էր աչքերը, իւր ծիծաղկոտ ակնարկը ձգեց վաղուցուայ ազդեցիկ ընկերակիցների վերայ։

— Այս Մարդուն դուք ինձ մօտ էք բերել։ Ի՞նչի մէջ էք մեղադրում Նորան։

Կայիափան և Աննան, որը սինեդրիօնի փոխ-նախագահն էր, իրարու մէջ զարմացական և այլայլուած ակնարկ փոխեցին։ Վերջապէս, Կայիափան՝ արհամարհուած արժանաւորութեան ցուցմունքով նայեց, ոպէս թէ շրջապատողներին կոչելով։

— Ճշմարիտ է՝ որ դուք բոլորդ էլ լսեցիք մեղադրանքը,—ասաց նա,—և պատուելի Կառավարչի հարցը 'ի զուր է: Ինչերմես են պէտք ուրիշ վկաներ: Եթէ այդ մարդը չարագործ չը լինէր, մենք Նորան այստեղ չէինք բերել: Նա Աստծուն հայհոյում էր: Երէկ երեկոյեան մենք Նորան հարցրեցինք յանուն Ամենակարող Աստծու պատասխանել, Նա՞ է արդեօք Քրիստոսը, Յաւէտ Օրհնուածի Որդին, և Նա վստահութեամբ պատասխանեց. «Ես եմ: Եւ տեսջիք զՈրդի մարդոյ նստեալ ի վերայ ամպոց երկնից՝ զօրութեամբ և փառօք բազմօք»: Ինչ էք մտածում դուք: Մի՞թէ Նա արժանի չէ մահուան: Հաճոյութեան շշունջը տարածուեց քահանաների և աւագագոյների կիսաշրջանում: Բայց Պիղատոսը արհամարհութեան նշան անելով, յետ ընկաւ իւր գահաւորակի վերայ:

— Դուք առակներով էք խօսում և միմիայն մոլորացումն էք տարածում: Եթէ Նա Ինքն է ասում, որ Նա մարդու որդի է, ինչպէս էք դուք ասում, որ Նա Աստուծոյ Որդի է:

Կայիափան շառագունեց և կամենում էր ընդիմախօսել, բայց մտածելով, զսպեց իրեն և շարունակեց քծու ժպտով.

— Դու զարմանալի ողորմած տրամադրութեան մէջ ես, Պիղատոս, և քո Թագաւորը քեզ չի անարգել ինչպէս չափից դուրս խիստ Կառավարչի: Մեր օրէնքով Նա, ով աստուածանարգութիւն է անում, ենթարկւում է մահուան: Իսկ եթէ Աստծուն հայհոյելը քո աչքին յանցանք չէ, ինչ կասես դու Նորա խառնակիչ ընութեան համար: Վկաներ կան, որոնք երդւում են, որ Նա Կեսարին տուրք տալու դէմ էր քարոզում. միևնոյն ժամանակ Նա շատ չար պարծենկոտ է: Նա գոռոզութեամբ յայտարարեց, որ սուրբ տաճարը կը քանդէ այնպէս, որ ոչ մի քար՝ քարի վերայ չի մնայ, և երեք օրուայ մէջ, առանց ձեռքերի օգնութեան, մի նոր և մեծ տաճար կը շինէ՛: Այդպիսի խելացնոր խօսքերը ամբոխի խելքն գրգռում են: 'Ի լրումն՝ Նա խաբում է կոյր ամբոխին ևս, ձևացնելով թէ հրաշքներ է անում,—մինչդեռ դոքա սուտ ձեռնածութիւններ են: Վերջապէս Նա Երուսաղէմի մէջ մտաւ Թագաւորական պատւով,—այդտեղ նա դարձաւ իւր ընկեր Աննային,—դու, Աննա, կարող ես այդ պատմել, դու այնտեղ էիր, երբ տեսեց այդ գալուստը:

Աննան, առաջ անցնելով, ձեռքերը ծալեց և անկեղծութեան նմանօրինակ արտայայտութեամբ, իւր պղտոր և նենգ աչքերը ցած ձգեց:

— Ճշմարիտ որ՝ ժանտախտը արմատանալով այդ մարդու մէջ, սպառնում է ամբողջ նահանգը լափելու,—ասաց նա:—Ես ինքս տեսայ,

թէ ինչպէս ժողովուրդը, երբ այդ խարեբան քաղաք էր մտնում, ճանապարհին Բեթփագէից և Բեթանիայից յառաջ անցաւ Նորան դիմաւորելու յարգանաց այլ և այլ բացականչութիւններով, միևնոյն ժամանակ ամբողջ ճանապարհը արմաւենու և ձիթենի ոստերով, անգամ իրենց հանդերձներով էին ծածկում, որպէս թէ համաշխարհական յաղթանակ տանողի դէմ և չորս կողմից յաղթական ձայներ էին տարածւում. «Ովսաննա՜յ: Օրհնեալ որ գաս յանուն Տեառն: Ովսաննա՜յ: Օրհնութիւն 'ի բարձունս»:— Ես այդ տեսնելով սարսափելի զարմացայ և երկիւղ կրելով՝ իսկոյն գնացի Կայիափայի մօտ, որ պատմեմ Նորան ամբոխի այդ վայրենի և անօրէն գործողութիւնը ու Նորա աններելի ցոյցը. յանկարծ կայսերական պատւով դիմաւորել անիծուած նազովրեցիներից մէկի՜ն:

— Մի՞թէ Նա ճիշտ Նազարէթից է,—հարցրեց աւագագոյներից մէկը:

— Ես լսել եմ, որ Նա ծնուել է Հրէաստանի Բեթղեհէմում, և թէ Հերովդէս Թագաւորը լսել է զանազան հրաշքների մասին, որոնք տեղի են ունեցել Նորա ծննդեան ժամանակ:

— Չար խօսք է,—շտապով պատասխանեց Աննան:—Մենք Նորան երեկ երեկոյեան տետրարխի *) մօտ տարանք, և եթէ Նա կամենար, կարող կը լինէր պաշտպանուել: Հերովդէսը Նորան բազմաթիւ հարցեր տուեց, բայց Նա չը կամեցաւ կամ չը կարողացաւ պատասխանել, այնպէս որ տետրարխը համբերութիւնից դուրս գալով, ուղարկեց Նորան Պիղատոսի մօտ, որպէսզի սա Նորան դատէ: Բոլորն էլ գիտեն, որ Նա Նազարէթից է, Նորա ծնողքը այնտեղ են ապրում և աշխատանք անում:

Պիղատոսը լսում էր, բայց ոչինչ չէր խօսում: Նա շփոթուած էր: Կայիափայի և Աննայի պատճառաբանութիւնները Նորան դատարկ խօսքեր էին երևում, նոցա, սինեդրիոնի այդ անդամներին, Նա չէր սիրում. Նա գիտէր, որ այդ մարդիկը միմիայն իրենց սեփհական շահերն են պտրտում, և անձնական հաշիւները պահպանում, իսկ գլխաւոր պատճառը, թէ ինչո՞ւ էին նոքա Նազովրեցի Մարգարէին ատում—վախն էր. այն վախը, թէ նոցա տեսութիւնները խախտուելու վերայ են, իսկ օրէնքները շարժւում են, որով նոցա հեղինակաւորութիւնը ամբոխի մէջ կորչում էր: Նոքա տեսնում էին, որ այդ Կալանաւորը, ով կուզէ թող լինի Նա, ակնյայտնի է, որ անկախ էր մտածում:—Քահանայութեան համար աւելի զարհուրելի բան չը կայ, քան մտքի ազատութիւնը, խըղ-

*) Տետրարխ—քառիշխան. կայսրութեան չորրորդ մասի փոխարքաներից մէկը:

ճի անկախութիւն և ընդհանուրի կարծիքների անարգանքը։ Անգամ Պիղատոսը ևս մի բանից վախենում էր, ոչ այնպէս՝ ինչպէս հրէից քահանաները, բայց այնու ամենայնիւ երկիւղ էր կրում, ինքն էլ չը իմանալով ինչու։ Նա աշխատում էր Նազովրեցուն չը նայել, որի բարձր, լուսաճաճանչ կազմուածքը այնպէս էր երեւում թէ՝ դանազանուելով դատաստանական իշխանութեան գունատութիւնից և սառնութիւնից՝—փայլում էր ներքին անբնական կրակով։ Նա չը բարձրացնելով աչքերը, մտածում էր իւր դրութեան վերայ, բայց ոչինչ վճռել չէր կարողանում։ Իսկ ժամանակը սահում էր։ Սինեդրիօնը անհամբերութիւն էր արտայայտում. Պիղատոսը զգաց, որ պէտք է՝ վերջապէս՝ խօսել և գործել, ու դանդաղ շուռ գալով, նա ուղղակի Մեղադրուածին դիմեց, որը միենոյն րոպէին իւր գլուխը բարձրացնելով, դատաւորի անհանդարտ փորձող ակնարկին՝ բաց և պարզ նայուածքով պատասխանեց, որից անընկճելի բարութիւն, համբերութիւն և անվերջ քնքշութիւն էր արտափայլում։ Այդ նայուածքը տեսնելով, Պիղատոսը ամբողջ մարմնով դողաց, բայց իրեն ուժ տալով, նա սառն անտարբերութեան տեսք ընդունեց և բարձր, ազդեցիկ ձայնով արտասանեց.

— Դու ոչինչ չես պատասխանում։ Մի՞թէ չը լսեցիր ինչքան բաների մէջ են քեզ մեղադրում։

Այդ խօսքերի ժամանակ, շարունակ չը շարժուող Ձիւնափայլ Պատկերը տատանուեց և, շարժուելով, դանդաղ ու կայսերական ազատութեամբ՝ կանգ առեց Պիղատոսի դէմ, շարունակ նորա վերայ նայելով։

Ծագող արեգակի վառ ճառագայթը, շեղ ընկնելով բարձր լուսամուտից, Նորա բրօնզեայ—ոսկեգոյն մազերի, որոնք ցածր ալիքներով պատել էին Նորա ճակատը, ստուերը լուսաւորեց։ Նորա աչքերը դատաւորի երեսից չը հեռացան, և Նա հանդարտիկ ժպտաց, որպէս թէ նախ ներելով նորան դեռ չը գործած յանցանքը։ Բայց ոչ մի խօսք չը արտասանեց։ Պիղատոսը դողաց։ Սառցային ցուրտը նորա երակների մէջ արիւնը կանգնեցրեց և նա ակամայ բարձրացաւ և՝ բռնելով իւր դատաւորական գահի ոսկեզօծ քանդակագործութիւնից, որպէս զի վայր չը ընկնէ, քայլ առ քայլ յետ յետ նահանջեց։ Ձիւնափայլ հագուստի մէջի Գոյացութեան մօտենալը, նորա հոգին անդադրելի երկիւղով լցրեց և նա մտաբերեց այն հնաւանդ սովորութիւնները և նախապաշարմունքները, որոնց մէջ Աստուածութիւնը յանկարծ անսպասելի մարդկանց մէջ է երեւում, սակ իւր յաւիտենական մեծութեան շնչով ոչնչացնելով նոցա· Եւ այդ վայրկեա-

նը, որ նա կանգնած էր երես առ երես Աստուածային Մեղադրուածի հետ, նորան ամբողջ յաւիտենականութիւն երեւաց։ Այդ անանցանելի վայրկեան էր, երբ անսպասելի պարզութեամբ բոլոր նորա գլխից անցածը իրեն ներկայացաւ, անդրադարձուելով՝ ինչպէս բնութեան պատկերը ցօղի կաթիլի մէջ, և մի ինչ որ անանցանելի նախազգացմունք մի ուև է անցքի, որը զարհուրելի էր ապագայում, ծագեց յանկարծ, ինչպէս մի մութ ամպ հորիզոնի վերայ։ Իւր համար աննկատելի, նորա երեսը մահացու դժգոյնութեամբ ծածկուեց, և նա՝ իւր մէջ հաշիւ չը տալով իրեն շարժմունքների մէջ՝ աղերսանքով ձգեց ձեռքերը դէպի յառաջ, որպէս թէ կամենում էր մի խիստ վնասող ընդհարում յետ տալ։ Գիտուն հրէաները, որոնք նորան շրջապատել էին, այդ ամեն ինչ կլանող վախին զարմացմամբ էին նայում, և տխրութեան և այլայլման ակնարկներ փոխում իրար մէջ։ Այդ ժամանակ աւագագոյներից մէկը, մի սեաչեայ, խորամանկ ծերունի, շտապով մօտեցաւ նորան և ձեռքը ուսի վերայ դնելով, հանդարտ ձայնով կոչեց.

— Ի՞նչ պատահեց քեզ, Պիղատոս։ Դու կարծես թէ կաթուածահար եղար, կամ քո խե՛լքը պղտորուեց։ Զօրապե՛տ, խնդրում եմ քեզ. ժամերը անցնում են,—իսկ այժմ Պասեքի մօտենալու ժամանակ, լաւ կը լինի, որ դու կատարես ժողովրդի կամքը։ Քեզ համար այդ չարագործը ինչ նշանակութիւն ունէ։ Հրամայի՛ր, որ Նորան խաչեն, քանի որ Նա դաւաճան է և իրեն Թագաւոր է կոչում։ Դու լաւ գիտես, որ մենք ուրիշ Թագաւոր չունենք, բացի Կեսարից,— իսկ այդ Մարդը ասում է, որ հրէաների Թագաւորն է։ Հարցրի Նորան, ճշմարի՞տ է թէ ո՛չ, որ Նա պարծեցել է իւր ուժով։

Պիղատոսը չփոթուած իւր խորհրդատուին նայեց. Նորան այնպէս երեւաց, որ նա մի վատ երազի մէջ է և չար հոգիները անասելի չարագործութեան վերաբերութեամբ էին փնթփնթում։ Դառնացած և սառած սրտով, նա՝ այնուամենայնիւ՝ հասկանում էր, որ պարտական է վերջապէս Կալանաւորին հարցաքննելու։ Թրջելով չորացած շրթունքները, նա հարց դրեց, թէպէտ և նորա ձայնը այնքան թոյլ էր, որ հազիւ կը լսուէր.

— Դու ե՞ս արդեօք հրէից Թագաւորը։

Խոր լռութիւն տիրեց։ Յետոյ ամենակախարդական երաժշտութիւնից աւելի դուրեկան հնչող Թափանցիկ ձայնը հանդարտութեամբ տարածուեց։

— Արդեօք քեզնի՞ց ես ասում, թէ ուրիշներն են այդպէս իմ մասին խօսել։

Պիղատոսը կարմրեց և զգուշութեամբ ձեռքերով բռնեց բազկաթոռի մէջքից: Նա անհամբեր նշան արաւ, և խիստ, թէպէտ ամբողջովին դողալով, պատասխանեց.

— Մի՞թէ ես հրեայ եմ: Իսկ քո ազգը և քո քահանայապետները քեզ ինձ մօտ բերեցին. դու ի՞նչ ես արել:

Լոյսը, որպէս թէ ներքին կրակից, լուսաւորեց Նազովրեցու խորհրդաւոր, պայծառ աչքերը: Խորհրդաւոր մտածկոտ ժպիտը խաղում էր Նորա շրթունքների վերայ: Այդ ակնարկով և այդ ժպիտով Նորա ճառագայթացող տեսքը լռութիւնը փոխում էր ճարտարախօսութեան, և Պիղատոսի խորհրդաւոր հարցը. ի՞նչ ես դու արել—արդէն պատասխանի արժանացած երևաց. չը լսուած պատասխանը խօսքերի փոխուած, կարող էր այսպէս հնչել.—ես ի՞նչ արի: Ես կեանքը քաղցրացրի և մահից դառնութիւնը հեռացրեցի: Այժմ գոյութիւն ունէ պատիւ մարդուս համար, և քնքշութիւն՝ կնոջ համար: Յոյս կայ բոլորի համար, և դրախտ բոլորի համար, և Աստուած բոլորի համար ևս: Եւ սիրոյ զօրը,—Աստուածային՝ սիրոյ և մարդկային,— մարմնացած Ինձ մէջ, յաւիտենական զօրերով լուսաւորում է երկիրը: Բայց այդ մեծ ճշմարտութիւնները անտարածանելի մնացին, ինչպէս դեռ մարդկային հասկացողութեան համար չափից դուրս դժուար մի առարկայ, և այն խորհրդաւոր ժպիտով, որը լուսաւորում էր Նորա դէմքը, Մեղադրուածը համեստութեամբ պատասխանեց.

— Իմ թագաւորութիւնը այս աշխարհից չէ: Եթէ նա այս աշխարհից լինէր, Իմ ծառաները կը կռուէին ինձ հրէաների ձեռքը չը տալու համար, բայց դեռ Իմ թագաւորութիւնը—այստեղ չէ:

Եւ իւր հրաշալի սէգ իրանը ուղղելով, Նա գլուխը բարձրացրեց և նայեց գահլիճի ամենաբարձր լուսամուտի վերայ, որը շտապով ծագող արեգակի լուսաւոր ոսկեայ ճաճանչների տակ, փայլում էր գերթ աննման գոհար: Նորա տեսքը պատած էր այնպիսի մեծութեամբ և այնպիսի ուժով, որ Պիղատոսը նորից դողդողաց, դարձեալ նոյն անզուսպ վախի զգացմունքից, որը սեղմում էր նորա սիրտը:

Նա անհանգստութեամբ նայեց քահանաների և աւագագոյների վերայ, որոնք թեթևութեամբ առաջ անցնելով, ուշադրութեամբ լսում էին. բայց նոցա դէմքերը միմիայն սառն անտարբերութիւն էին ցոյց տալիս: Կայիափան չարանենգ ժպտաց և ծածուկ մի ինչ որ բան շշնջաց Աննային:

Պիղատոսը իւր կամքին հակառակ հարցաքննութիւնը շարունակեց: Հանդարտ և սառնասիրտ ձևանալով, նա անփոյթ ողորմածասիրութեամբ հետևեալ հարցը տուեց.

— Դու՝ նշանակում է, որ թագաւոր ես:

Կալանաւորը սէգ շարժմունքով իւր փայլուն ակնարկը նոցա վերայ ձգեց, որոնք այնքան ջղաձիգ անհամբերութեամբ Նորա պատասխանին էին սպասում, յետոյ, հանդարտ և թափանցիկ ակնարկը Պիղատոսի աչքերի մէջ ձգելով, պատասխանեց.

— Դու ասացեր:

Եւ երբ Նա այդ խօսքերը արտասանեց, արեգակը լուսամուտի վերին կամարից ընկնելով, կարմրերանգ ոսկեգոյն կրակափայլով դատաստանատունը լուսաւորեց, ցոլացնելով Աստուածային բազուկը այնպիսի երփներանգ փայլով, որից երևում էր թէ ինքը երկինքն է Նորան պսակել, Նորա վերայ դնելով ճշմարտութեան վսեմ կնիքը:

Րոպէական հանդարտութիւն տիրեց:

Պիղատոսը լուռ նստած էր՝ անվճռականութեան մէջ. սինեդրիոնի անդամների մէջ խռովութեան և անհամբերութեան շշունջ անցաւ: Ինչո՞ւ համար են վկայութիւնները: Նա դատուած է հէնց իւր բերանո՛վ: Նա ինքը իւր մատնողութիւնը ցոյց տուեց: Ուրեմն թո՛ղ մահուան պատիժ կրէ:

Արեգակի ճառագայթները պարզութեամբ խաղում էին Կալանաւորի սպիտակ հագուստների հետ, որպէս թէ պատահելով նոյնպիսի վառ լոյսի, որը դուրս էր ցայտում Նորանից: Պիղատոսի ակնարկը յարուած էր և պղտոր. նորա քներակները խփում և ցաւում էին: Նա շփոթուած էր, այլայլուած և վերին աստիճանի դատարած: Այն Մարդի գեղեցկութիւնը, որը Նորա դէմ կանգնած էր, չափից դուրս շլացուցիչ էր, որը չէր կարող անջնջելի տպաւորութիւն չը թողնել. և նա հասկացաւ, որ Նորան անարգ մահուան դատելով,— նա մի այնպիսի մեծ եղեռնագործութիւն կանէ, որի հետևանքը ան՟կարելի է նախագուշակել,—և ակամայ վախենում էր: Նա հասկանում էր նոյնպէս այն դրական դերը, որ Աննա և Կայիափայ քահանայապետները խաղում էին. ինչպէս նոքա ձգտում էին Յիսուսին դատաստանի ենթարկել և թէ ինչ միջոցներով և ում օգնութեամբ նոքա իրենց նպատակին հասան:

Մի խելացնոր երիտասարդ, որին Իսկարիօտ էին կոչում, որը ծերունի հօր միակ որդին էր, խառնուեց Յիսուս Նազովրեցու աշակերտներին: Իսկ Իսկարիօտ հայրը հարուստ վաշխառու էր և Կայիափայի մեծ ընկերը և սիրելին: Դիւրին էր ըմբռնել, որ ծերունին, քահանայապետից գրգռուած և ինքը ես դժգոհ իւր որդու դէպի մի

որև է անծանօթի կրօնամոլութիւնից յանկարծակի բռնուած լինելուց,—գործ կը դնէ իւր հայրական բոլոր ազդեցութիւնը, որ կարող լինէ համոզելու իւր որդուն՝ մտանելու իւր «Ուսուցիչ» կոչուածին։ Ենթադրութիւններ էլ կային, որոնց Պիղատոսը չէր էլ մտաբերում, թէպէտ դոքա ևս բաւական էին կասկած ձգելու քահանայապետների ցուցմունքի անբարեխղճութեան վերաբերութեամբ։ Միառժամանակ դորա վերայ մտածելով, նա՝ վերջապէս՝ դէպի խորհուրդը դարձաւ և հարցրեց.

— Իսկ Իսկարիովտացին ո՞ւր է։

Աւագագոյները անհանգստութեամբ այս ու այն կողմից նայեցին, բայց ոչ ոք պատասխան չը տուեց։

— Դուք ինձ ասացիք, որ պահապաններին նա տարաւ դէպի այնտեղ, որտեղ Նազովրեցին ծածկուած էր,—շարունակեց Պիղատոսը դանդաղութեամբ։—Քանի որ նա այդպիսի մեծ դեր է խաղացել կալանաւորութեան մէջ, ուրեմն նա այստեղ պէտք է լինէ։ Ես շատ կը ցանկանայի գիտենալ, թէ ի՞նչ կարող է նա ասել այս Մարդու վերաբերութեամբ, որի յետևից նախ նա գնաց և յետոյ՝ յանկարծ ձգեց։ Նորան ինձ մօտ բերեցէ՛ք։

Աննան ամբողջովին կուացաւ, անկեղծ հնազանդութեան ձևով։

— Երիտասարդը երկիւղից թողել է քաղաքը։ Նա մի տեսակ վայրենի խելագարութեան մէջ է ընկել. երէկ՝ ուշ գիշերը, նա մեզ մօտ էր, բարձր ձայնով իւր մեղքերն էր ողբում նա և կամեցաւ մեզ վերադարձնելու այն արծաթի դրամները, որոնք մենք նորան վճարել էինք իւր ցոյց տուած ծառայութեան և օրէնքին հնազանդելու համար։ Պարզ է, որ նա բռնուած է մի տեսակ չար ջերմով, քանի որ մինչ մենք նորան հանդարտ հակառակում էինք և աշխատում հանգստացնելու,—նա կատաղութեամբ դրամները մեր դէմ շպրտեց, և այդ ուղիղ տաճարի մէջ, ու այն ժամից անյայտացել է, իսկ թէ ո՛ւր—մենք այդ չը գիտենք։

— Տարօրինակ բան է,—շշնջաց Պիղատոսը։ Իսկարիովտացու բացակայութիւնը նորան չափից դուրս դուր չեկաւ։ Նա սաստիկ ցանկանում էր, որ այդ մարդը բացատրութիւն տար այն պատճառների մասին, որոնց հիման վերայ նա յանկարծ իւր Ուսուցչին մատնեց,— բայց այժմ, երբ այդ անկարելի էր, նա իրեն աւելի ևս ճնշուած ու նեղուած զգաց։ Նորա գլուխը պտոյտ էր գալիս, միտքը պղտորւում և նորան թւում էր՝ թէ խաւարը պատել է իրեն։ Այդ խաւարի մէջ նա կրակի մեծ շրջաններ էր նկատում, որոնք, տակաւ տակաւ փոքրանալով, կապում էին նորան վառուող լոյսի օղով։ Սարսափելի

շնչառութիւնը աւելի և աւելի էր բարդւում ու ծանրանում, խանգարելով նրա շնչառութիւնը և տեսողութիւնը, այնպէս, որ նա կարիք զգաց դուրս թռչել մի որև է տեղ և բարձր ձայնով աղաղակել, որ կարողանայ ազատուել այդ սարսափից, ինչպէս յանկարծ նորա այդ անբացատրելի ներքին տանջանքը վերջացաւ,—մէկի թւում շնչառութիւնը որպէս թէ շոյում էր նորա ճակատը, և նա աչքը բարձրացրեց և տեսաւ, որ Մեղաւորուածի հեզ, սիրող ակնարկը յառած էր իւր վերայ այնպիսի խոր, անեզր քնքշութեան և ողորմածասիրութեան արտայայտութեամբ, որ նորա առջև յանկարծ կեանքի և անեզր բաղդի նոր միաք բացուեց։ Այդ վայրկեանից նորա շփոթութիւնը վերջացաւ և ընթանալու ճանապարհը պարզուեց։ Դէպի քահանայապետները և աւագագոյները դառնալով, նա ամուր, վճռողական հնչիւնով արտասանեց.

—Ես այս Մարդի մէջ ոչ մի մեղք չեմ գտնում։

Նորա խօսքերը ընդունեցին միաձայն արհամարհանքով։ Կայիափան՝ մոռանալով իւր մշտական անձնազսպումը, վեր թռաւ տեղից և կատաղութեամբ կոչեց.

—Ո՛չ մի յանցանք, ո՛չ մի մե՛ղք։ Դու խելագարուել ես, Պիղատոս։ Նա գրգռում է ժողովրդին, ամեն տեղ քարոզելով, սկսած Գալիլիայից, թէ...

—Եւ դեռ ա՜հ,—ընդմիջեց նորան Աննան, իւր երկար, լղար վիզը լարելով և այլանդակ երեսը ցոյց տալով,—Նա միմիայն մաքսաւորների և մեղաւորների հետ է ծանօթութիւն շարունակում, իսկ բոլոր բարեգործ մարդկանց՝ բացարձակ դժոխք խոստանում։ Այստեղ նստած է ռաբբի Միխան, որը լսել է նորա հրապարակական բացականչութիւնները և յիշում է այն բոլորը, ինչ ասել է Նա՝ ամբոխին խաբելու համար։ Խօսիր, Միխա, քանի որ Կառավարչին բաւական չեն մեր վկայութիւնները, որպէսզի վճիռ արձակէ այս Խաբեբայի և Աստուածանենգի դէմ։

Միխան, որը ծերունի մի հրէայ էր, մութ, խորշոմած երեսով և անխիղճ աչքերով, շուտափոյթ վեր թռաւ տեղից և ծոցից մի քանի կտոր տախտակներ հանեց։

—Այս խօսքերը,—ասաց նա,—գրել եմ ես ճիշտ այնպէս, ինչպէս ինքս նոցա իմ ականջներով հէնց տաճարի մէջ եմ լսել։ Չէ՞ թէ այդ պատանի ՝ հերձուածող կրօնամոլը չը քաշուեց իւր վնասակար կարծիքները քարոզելու անգամ այս շինութիւնների մէջ, որոնք կանգնուած են բացառապէս աղօթքների համար։ Ինքներդ

դատեցէք, մի՞թէ նորա խօսքերը չեն շնչում անխիղճ կատաղութեամբ,—և նա, աչքերի մօտ տանելով տախտակները, սկսեց հանդարտութեամբ կարդալ.

—Վա՜յ ձեզ դպրաց եւ Փարիսեցւոց կեղծաւորաց. զի փակէք զարքայութիւն երկնից առաջի մարդկան. դուք ոչ մտանէք, եւ որոց մտանենն՝ չտայք թոյլ մտանել: Վա՜յ ձեզ դպրաց եւ Փարիսեցւոց կեղծաւորաց. զի ուտէք զտունս այրեաց. պատճառանօք երկարէք զաղօթս, վասն զի աւելի զդատաստան ընդունիցիք: Վա՜յ ձեզ դպրաց և Փարիսեցւոց կեղծաւորաց. զի յածեք ընդ ծով եւ ընդ ցամաք առնել եկամուտ մի, եւ յորժամ լինիցի՝ առնէք զնա որդի գեհենի կրկին եւս քան զձեզ: Վա՜յ ձեզ առաջնորդ կոյրք. զի ասէք, որ երդնու ի տաճարն՝ չէ ինչ, բայց որ երդնու յոսկին որ ի տաճարին է՝ արժան է: Յիմարք և կոյրք, զի՞նչ մեծ է, պատարագն եթէ սեղանն՝ որ սրբէ զպատարագն: Վա՜յ ձեզ դպրաց են Փարիսեցւոց կեղծաւորաց. զի նմանէք գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երեւին գեղեցիկ, եւ ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ: Օձք, ծնո՜ւնդք իժից, զի՞արդ փախնուցուք ի դատաստանէ գեհենին:—Միխան այստեղ կանգ առաւ և նայեց շրջապատողներին:—Ճշմարիտ որ,—նկատեց նա միևնոյն տաղտկացուցիչ ձայնով,—այն մարդու համար, ով ամէն կերպ աշխատում է ներշնչել ամբոխին, որ նա խոնարհ է և խաղաղասէր,—այդ խօսքերը բաւականին ազդու են և լի են՝ կարգապահութեան և օրէնքի ներկայացուցիչների դէմ՝ չարութեամբ: Սուղ է նոցա մէջ հեզութիւն, բայց դորա փոխարէն շատ է խարուսիկ ինքնասիրութիւն և բարկութի՜ւն:

Պիղատոսի շուրթերի վրայ թեթև ժպիտ խաղաց: Հոգու մէջ նա ծածուկ պաշտում էր այդ Մարդու սքանչելի ֆիզիքական և բարոյական վստահութիւնը, որը չէր վախենում խաբեբայութիւնը և երեսպաշտութիւնը ցոյց տալ նոյն իսկ տաճարի մէջ, երբ այնտեղ նոքա այն ժամանակ բոլորից շատ էին թագաւորում:

—Ես քեզ ասում եմ, բարի Միխա, քեզ՝ Կայիափա և քեզ նոյնպէս՝ Աննա,—արտասանեց նա վճռողականապէս,—ոչինչ յանցանք նորա մէջ ես չեմ գտնում: Անգամ Հերովդէսը, որի մօտ դուք երէկ գնացել էիք, և նա մահուան պատժի արժան ոչինչ չէր գտել...

—Սպասի՛ր, պատուելի Պիղատոս, լսի՛ր ինձ.—կտրեց նորա խօսքը մի խռպոտ նուազ ձայն, և ծերունի վաշխառուի փոքրիկ այլանդակ պատկերը, 'ի զարմանս Բարաբբայի, որը խորհրդի մէջ յայտնի տեղ էր բռնում, անզսպելի կատաղութեան արտայայտութեամբ՝ դուրս ցցուեց:

—Լսի՛ր, խնդրում եմ քեզ: Մի՞թէ դու նշանակուած չես, որ նայես ճշմարտութեան կողմը և պաշտպանես Հրէաստանի արհամարհուածներին և նեղեալներին: Ասում եմ քեզ, մեծ պարոն, այդ չարագործ է, դա ստախօս է և մատնի՛չ:

Այդտեղ պառաւ անպիտանը օդ կուլ տուեց, քանի որ չափից դուրս կատաղութիւնից խեղդւում էր:

—Այդ խաբեբայ մարգարէն, երկու օր առաջ, մտաւ տաճար և, տեսնելով ինձ իմ սովորական տեղում,—իսկ դու չը գիտես, բարեծնունդ Պիղատոս, որ ես հէգ, ազնիւ մարդ եմ,—ինչպէս մի խելագար՝ ինձ վերայ յարձակուեց և, ինձ ամուր ձեռքով բռնելով, սկսեց խարազանով հարուածե՜լ: Ինձ նա մտրակե՜ց.—այդտեղ նորա ձայնը ճչոցի փոխուեց,—և արտաքսեց սուրբ տեղից: Նորա շրթունքները լի էին հայհոյանքներով և նզովքներով դէպի Աստուած: Նա ասաց. «Տուն իմ տուն աղօթից կոչեսցի. եւ դուք արարէք զդա այրս աւազակաց»: Դու այդ հասկանում ես, Պիղատոս: Նա ինքը տաճարը իրենը կոչեց, քանի որ նա իրեն կոչեց հրէաների թագաւոր, և կամենում էր բոլոր Հրէաստանի վերայ թագաւորել: Խաչի՛ր նորան, յարգելի Կառավարիչ: Խաչի՛ր յանուն Աստուծոյ: Եւ խարազանով հարո՜ւածիր նորան: Հարուածի՛ր նորան, մինչ հպարտ և անմաքուր արիւնը երակներից առուակներով դուրս թափէ...Հարուածնե՜ր տո՛ւր նորան, հարուածի՛ր այնպէս, ինչպէս նա Ղևի *) զաւակներից մէկին հարուածեց,—չէ թէ նա ինձ... ինձ յանդգնեց խփե՜լ...

Այդտեղ նա կանգ առաւ, եռացող չարութիւնից խեղդուելով: Պիղատոսը սառն ժպիտով նայում էր նորա վերայ:

—Ճիշտ որ, Զաքարիա, դու ինձ լաւ պատմեցիր այդ մարդի մեծ ծառայութեան համար: Վաղուց արդէն դու արժանի էիր մտրակուելու, իսկ այժմ, երբ դու քո պատիժը կրեցիր, Երուսաղէմում քո անբաղդ զոհերից շատերը կը ուրախանան:

Գոհացողութեան, անգամ ծիծաղի, շշուկը ակամայ տարածուեց խորհրդարանում, բայց քահանայապետի բարկացկոտ նայուածքի տակ՝ դարձեալ բոլորը հանդարտեց:

Զաքարիան հեռացաւ, բարկութեան տակ մի ինչոր բան, մըրմըռթալով, իսկ Պիղատոսը հանդարտութեամբ շարունակեց:

—Աւելի քան երբեւիցէ՝ ես համոզուած եմ, որ այս երիտասարդ

*) Ղևի. Ղևեայ զաւակներ. Է անուն երրորդի որդւոյ Յակոբայ ի Լիայէ... Է՛ անուն ցեղի նորա... որ Աստուած ընտրեաց... և կարգեաց ի նմանէ քահանայս... Ցրուեալք ի զանազան քաղաքս: Բառգրքաշակ Մխիթարայ մեծի աբբայի—Վենետիկ:

Քարոզչի և աղքատների Պաշտպանի մէջ մեղք չը կայ, և ոչ մի պատճառ չը կայ Նորան մահուան դատապարտելու, ապա ուրեմն, քանի որ ձեր մէջ սովորութիւն է Պասեքի տօնին մի բանտարկեալ արձակել,—ուրեմն ես Նորան բաց եմ թողնում և ձեզ վերադարձնում:

—Ամբոխը քեզ մաս մաս կանէ, Պիղատոս, այդպիսի մտացածին գործողութեանդ համար.—բարկութեամբ կռչեց Կայիափան: —Ի՞նչ: Մի այնպիսի անմեղ մարդ, ինչպէս այդ խեղճ Զաքարեան է, որը միմիայն իւր արհեստով է պարապում, պէտք է հրապարակի մէջ ծեծուէ, իսկ դու, կառավարիչդ Հրէաստանի, հարկաւոր չես համարում այդ վերջացնել: Դու Կեսարի բարեկամը չես, եթէ այդ մարդուն արձակես: Բացի այդ, ժողովուրդը խնդրում է Բարաբբայի ազատութիւնը, որը չարագործութիւն էր արել կատաղութեան րոպէում, ոչ թէ առաջուց մտածելով և հանդարտութեամբ: Նա այստեղ է բերուած իմ հրամանի համեմատ, որը թէպէտ պահապանների հսկողութեան տակ է, բայց իւր ազատութեանն է սպասում:

—Ուրեմն նա ի զո՜ւր է սպասում,—ուժգնութեամբ բացականչեց Պիղատոսը:—Երդւում եմ Հռովմի բոլոր աստուածներով, որ նա կը խաչո՛ւէ: Ազատութի՛ւն՝ Բարաբբային: Ճիշտ որ դուք յիշողութիւն չունիք: Մի՞թէ նա չէր խառնակութիւն բարձրացրել հռովմէական կառավարութեան դէմ: Մի՞թէ նա աւելի վատ բաներ չէր քարոզում, քան այս անմեղ Նազովրեցին: Վերջապէս, վերջապէս, միթէ նա չը սպանեց ձեր ազնիւներից մէկին, փարիսեցի Գաբրիասին, այն գիտուն և յայտնի մարդուն: Լսեցէք, դուք միայն նախանձից դրդուած՝ կամենում էք այդ ազնիւ կեանքը կորցնել և չարերին պահպանել: Բայց դուք ի զուր էք ամբոխը գրգռում: Այժմ ես ինքս ժողովրդին կը դիմեմ և իրեն կը վերադարձնեմ Նորան, որին նա Հրէից թագաւոր է կոչում:

Եւ իւր բազկաթոռի վերայից Պիղատոսը վեր կենալով, պատրաստուեց դատաստանատան բարձրութիւնից վայր իջնելու: Կայիափան շուտով առաջ ցցուեց խանգարելու, բայց Պիղատոսը դառնութեամբ հեռացրեց Նորան և Կայիափան իւր տեղում մեխուած մնաց՝ շփոթութեան և ծածուկ կատաղութեան արտայայտութեամբ: Նա իւր սպիտակ նիհար ձեռքերը իրար սեղմեց մինչ ցաւ զգալը, և կրծքի վերայի մեծ թանկագին զարդարանքը, ներքին խիստ յուզմունքից, բարձրանում և ցածրանում էր: Աննան անշարժ նստած էր իւր տեղում, բոլորովին այլայլուած կառավարչի վճռով և նայում էր մի կէտի վերայ, որպէս թէ չը կարողանալով ըմբռնել այն, ինչ անցնում էր: Տոկոսատու Զաքարիան միայն ազատութիւն տուեց իւր զգաց-

մունքներին և վայրենութեամբ ձեռքերը տարածելով ու կուրծքը ծեծելով, բարձր ձայնով ողբում էր.

—Վա՜յ, վա՜յ: Այլ ես Երուսաղէմում ճշմարտութիւն չը կա՜յ: Նախատինք և վիշտ Աբրահամի որդկերանց, որոնք Հռովմի երկաթապատ կրունկի տակ մաշուած են: Հեծութիւն մեզ,—կոտորածի բնակալի և հալածչի գերիներիս...

Եւ մինչ նա այդպէս բացականչում էր իւր նիհար և այլանդակ մարմնով յետ և առաջ տատանուելով, Աստուածային Կալանաւորը յանկարծ շուռ եկաւ և խորին ակնարկ ձգեց նորա վերայ: Շուտափոյթ Նորա հոգու մէջ փոփոխութիւն յառաջացաւ. նա դողալուց դադարեց և ամբողջովին մի տեսակ տձև հաւաքածուի կծկուեց,—կարելի է ասել, նմանեց հաշմանդամ սատանայի, և սկսեց վայրենի շշուկով անէծքներ թափել:

Նազովրեցին նորա վերայ մի րոպէաչափ նայեց. ազնիւ բարկութիւնը մթնեցրեց Նորա ճակատի պարզութիւնը, բայց այդ արդար բարկութեան ստուերը շտապով անյայտացաւ, քան թէ երևաց: Նորա դէմքը նորից հանդարտ հանգստութեան և համբերութեան արտայայտութիւն ստացաւ: Միմիայն հրաշալի յստակ աչքերը աւելի ուշադրութեամբ սկսեցին վերև նայել, որպէս թէ օգնութիւն փնտռելով պարզ երկնակի ճառագայթի սքանչելութեան մէջ:

Մինչ այդ ժամանակ, սպիտակ մօրուքով, սինեդրիոնի վերին աստիճանի պատուելի անդամներից մի ծերունի, միջամտեց և հեռացնելով դեռ ևս փնթփնթացող Զաքարիային, Պիղատոսին դիմեց հանդարտութեամբ և զսպուած ձայնով.

—Հաւատացի՛ր ինձ, Պիղատոս, դու բոլորովին արդարամիտ չես այս գործում: Մի մարդու համար դու ուզում ես անպատուել և ժողովրդին, և քահանայապետներին: Այնպիսի մի խառնակիչ և աւազակ, ինչպէս Բարաբբանն է, այնուամենայնիւ դարձեալ ժողովրդի համար այնքան վնասակար չէ, քան թէ այդ նոր ուսմունքի երիտասարդ քարոզիչը, որը, երևի, զգալով իւր գեղեցկութեան ազդեցութիւնը և ֆիզիքական ոյժը, օգտւում է դոցանից, որ քեզ վախեցնէ և ստիպէ օրէնքի կատարումն փոխելու: Մեզ մօտ այդպէսները շատ են գալիս Եգիպտոսից, որոնք միմիայն արտաքին գեղեցկութեամբ և մի տեսակ գեղեցկաճառ բացատրուելու ընդունակութեամբ, գերում են ամբոխին, ստիպելով նորան հաւատալու իրենց անբնական ոյժին: Անգամ Բարաբբանն ևս իշխող տեսք ունէր, երբ խօսում էր ամբոխի հետ և համոզում էր ծոյլերին ու դժգոհներին խառնակութիւն ձգելու: Նա ևս գրքեր ուսումնասիրել և մի տեսակ գեղեցիկ

ոճ ունէ։ Անգամ խառնակիչներից ամենաերկիւղածները այնքան հեռու չըգնացին, ինչպէս Դա։ Եւ թէ Նա իւր շուրջը հաւաքեց Հրէաստանի ամենավատթար ամբոխը,—բացի միակ Իսկարիովտացից, որը պատկանելով բարեծնունդ ընտանիքի, իւր ֆանատիկոսութեամբ *) սաստիկ տարբերւեց հօրը,—և միմիայն այդպիսիներին խոստացաւ դրախտի մուտքը։ Չէ թէ Նա յայտնեց, որ ուղտին ասեղի անցքից անցնելը աւելի դիւրին է, քան հարուստ մարդու Աստուծոյ Թագաւորութեան մէջ մտնելը։ Այդպիսի վայրենի ուսմունքով Նա բացարձակ հաստատում է, որ անգամ Մեծ Կեսարը ես փախուստ չէ կարող տալ յաւիտենական դժոխքից. Եթէ այդպիսի հասկացողութիւնները տարածուին Հրէաստանի մէջ, ուրեմն քո Թագաւորդ իսկ, քեզ կը մեղադրէ չափից դուրս ներողամտութեանդ համար. այնպէս արա, որ ողորմածասիրութիւնը չը վնասէ բանականութեան։

Պիղատոսը նորա խրատը նկատելի անտարբերութեամբ լսեց։ Նորա ներքին վրդովմունքից ուղիղ յօնքերը շարժուեցին և փոքր ինչ լռելուց յետոյ, նա տաքութեամբ ասաց.

—Ուրեմն վերցրէցէք Նորան և ձեր օրէնքով դատեցէք։

—Մենք իրաւունք չունինք ոչ ոքի մահուան դատապարտելու, —լրջութեամբ ասաց նա,—դու ես կառավարիչը և մենք պարտական ենք քեզ դիմելու արդարադատութեան համար։

Այդ ժամանակ բազմութեան մէջ մի տեսակ խլրտում եղաւ. ամբոխը տատանուեց, որ միջոց տայ եկւորին անցնելու։ Դա մի բարակ, սևաչեայ, քնքոյշ և գեղատեսիլ երիտասարդ էր. Նա հագած ունէր մետաքսեայ աղօտ-ամպագոյն զգեստներ, գօտեւորուած կարմրաներկ գօտիով, որը զարդարուած էր արծաթով և ոսկով։

Նա շտապով, բայց մի տեսակ զգուշութեամբ, յառաջացաւ, Նազովրեցու սէգ Պատկերի վերայ վախկոտ ակնարկ ձգելով, Պիղատոսը անհամբերութեամբ նորա մօտենալուն էր սպասում։ Նա ճանաչեց իւր կնոջ սիրելի ծառային և չէր հասկանում, թէ ինչը պիտի ստիպէր նորան այդպիսի անպատեհ ժամանակ այդտեղ գալու։ Պատանեակը դատաստանատան բարձրութեանը մօտենալով, մի ծնկի վերայ ընկաւ և ձեռքի պատուած փաթեթը լարեց։ Պիղատոսը շտապով բանեց այդ, բացարեց թերթը և կարդալով՝ ակամայ ճչաց։ Փաթեթը նորա կնոջից էր,—որը Հռոմի հպարտ և անվախ ամենագեղեցիկ կանանցից մէկն էր, և որը հրէական սովորութիւն-

*) Ֆանատիկոս—կրօնամոլ. իւր կրօնական վարդապետութեան շատ խիստ հաւատացող։

ների դէմ ամենախոր զզուանք էր զգում։ Ահա թէ ինչ էր գրել նա. «Այդ Արդարին ոչինչ մի անիր, քանի որ ես այժմ երազի մէջ Նորա պատճառով շատ տանջուեցի»։

Շտապով ծառային արձակելով, որը միևնոյն ճանապարհով հեռացաւ, Պիղատոսը, թերթը ձեռքի տակ ճմլելով, ամբողջովին խորասուզուեց մտածողութեան մէջ։

Արեգակի լոյսի տարափներ էր թափում դատաստանատան չորս կողմը. հեռու մի տեղում զանգակը ժամը խփեց։ Մեղաւորուածի ձիւնափայլ Պատկերը, ինչպէս Աստուածութեան մարմարիոնանդրի, անշարժ կանգնած էր շլացուցիչ առաւօտեան ճառագայթների տակ, իսկ Պիղատոսի մտքի մէջ միակ և ամենասիրելի կնոջ խօսքերն էին կրկնւում,—անմերժանելի, ինչպէս մուրճի խուլ և անդատար հարուածներ.

—Այդ Արդարին ոչինչ մի անիր...

IV.

Եթէ որ Նա կարողանար իւր մտածմունքները անվերջ շարունակելու,—այդ նորան զուրեկան կը լինէր։ Ժամանակի վերաբերութեամբ նա իրեն հաշիւ չէր տալիս. նորան այնպէս էր թւում, թէ մի ինչ որ անսահման, անհասկանալի ոյժ՝ պատելով իրեն՝ փոխում էր մի խեղճ, թոյլ, անոյժ մարդկային տաշեղի, որը անընդունակ էր կառավարելու և անընդունակ դատելու։ Նորա մէջ մի զգացմունք յղացաւ, որպէս թէ տասնեակ տարիներ խորտակող շտապութեամբ անցել են նորա վերայից, սկսած այն ժամանակից, երբ այդ Նազովրեցի Բանտարկեալը իւր դէմ կանգնեց։ Ներքին՝ ծերութեան և անընդունակութեան այդ գաղտնի զգացմունքի հետ միասին, որից բոլորովին սառոյց էր կտրում նորա արիւնը, Նա դեռ զգում էր, որ սինեդրիոնի բոլոր անդամները դէպ իրեն էին նայում, զարմանալով նորա անվճռականութեան վերայ և անհամբեր, այդ գործի վերաբերութեամբ, նորա վճռին սպասելով, որը՝ նոցա կարծիքով՝ ամենասովորական և հասարակ արդարադատութիւնից էր կախուած։ Իսկ Պիղատոսի աչքի առաջ դա մի տեսակ մեծ և սարսափելի դժուար էր երևում։ Վերջապէս Նա՝ ոյժ գործ դնելով, վեր կացաւ, և իւր երկար զգեստները հաւաքելով, ներքից պատրաստուեց վայր իջնելու արդարադատութեան բարձրութիւնից։ Դիտահեղինա-

կառք, կիսաղերսող նշանով նա Մեղաւորուածին հրամայեց իւր ետևից գնալ։ Նորան հնազանդուեցին առանց ընդդիմախօսութեան, և Նազովրեցին, սէգութեամբ և մեծադիրք, բայց համբերութեամբ գնաց իւր դատաւորի յետևից, որի երկար հագուստները ճանապարհ էին մաքրում նորա քայլերի համար։ Նոցա յետևից գնում էին քահանայապետները և ատյանները՝ մի ինչ որ բան շշնջալով և գլուխները շարժելով կառավարչի այդպիսի անբացատրելի գործողութեան վերաբերութեամբ, իսկ նոցա յետևից քարշ էր գալիս ծեր, անճոռնի վաշխառու Զաքարիան, յենուելով հաստ ոսկեզօծ ձեռնափայտի վերայ, որպիսին բոլորովին ծածկուած էր թանկագին քարերով։ Այդ շքեղ առարկան տարօրինակութեամբ բաժանւում էր նորա մնացած չքաւոր և աղտոտ շորերից։ Մինչդեռ այդ խայտաճամուկ խումբը դանդաղկոտութեամբ անցնում էր, հանդարտութեան մէջ համակրական բացականչութիւններ էին լսւում. վերջապէս այնքա՜ն երկար ուշացրած դատավճիռը պիտի հնչէ այլ ևս...

Մօտենալով վանդակապատին (ցանկապատին), որը բաժանում էր ընդհանուր դահլիճի դատարանի տեղը, Պիղատոսը կանգ առաւ։ Այնքան բարձրացնելով ձայնը, մինչ կարող լինէին լսելու և վերջին շարքերը, փոքր ինչ նորանից յետև կանգնածի արքայական դէմքը ցոյց տալով, բացականչեց։

—Սա՛ է ձեր Թագաւորը։

Վայրենի ծիծաղի, հեգնութեան և սուլոցի տարափները նորա պատասխանը եղան։ Կայիափան հեգնութեամբ ժպտաց, իսկ Աննան ներքին ծիծաղից ամբողջ մարմնով տատանուեց։ Անսահման զըզուանքով Պիղատոսը նոցա վերայ նայեց։ Նա հրէաների քահանաներին՝ իրենց բոլոր ուսմունքով և ծխակատարութեամբ՝ արհամարհում էր և դա բոլորովին նա չէր ծածկում։ Նա հանգստութիւնը վերականգնեցնելու համար ձեռքը բարձրացնելով, նորից կատաղած ամբոխին դարձաւ.

—Ես այս Մարդուն ձեզ մօտ հարցաքննեցի,—նոյնպիսի պարզ, հեռուում հնչող ձայնով արտասանեց նա,—և ո՛չ մի մեղք, մահուան արժանի, նորա մէջ չեմ գտնում։

Այդ տեղ նա կանգ առաւ, իսկ զարմացած ամբոխը չը համարձակուեց լռութիւնը խզելու, ապա նա շարունակեց.

—Բայց դուք մի սովորութիւն ունիք, որի հիման վերայ, ի սէր Պասեքի տօնի, պէտք է ձեզ համար մի կալանաւորի արձակեմ. կամենում էք, որ ես «Հրէից Թագաւորին» արձակեմ։

Մերժմունքի միաձայն աղաղակը նորա ձայնը ծածկեց։

—Ո՜չ, մեզ պէտք չէ դա։

—Դորան ո՛չ, այլ Բարաբբային։

—Բարաբբա՜յին, Բարաբբային...

Այդ անունը հնչում էր հազարաւոր ձայներով, և կրկնւում էր, մինչ հեռուում, ազատ օդի մէջ ցրուիլը։

Պիղատոսը յետ նահանջեց՝ խառնուած և բարկացած։ Նա այժմ միմիայն իւր զրութիւնը զգաց։ Ակներև էր, որ ամբոխը պիտի պատրաստուած լինէր քահանայապետներից, քանի որ նա կամակորութեամբ կանգնած էր իւր պահանջի վերայ՝ յայտնի աւազակին արձակելու,—անմեղ մարդու փոխարէն։ Եւ ամբոխը լիովին իրաւունք ունէր պահանջելու այն, ինչ իրեն պէտք էր... 'ի սէր տօնի միրձաւորութեան։ Պիղատոսը տխրութեամբ հառաչեց և սկսեց առաջին կարգերը նայել, որպէս թէ մէկին պտրտելով։

—Ու՞ր է Բարաբբան,—անհամբերութեամբ հարցրեց նա։—Նորան այստեղ բերեցէք։

Կարճ խառնակութիւն առեց, և Բարաբբային,—քրքրուած, մերկ, վայրենի աչքերով, բայց դարձեալ գրաւիչ գեղեցկութեան նշանների տակ և նիհարկեկ դէմքի գծագրութեան մէջ, դէպ՝ առաջ հրեցին, որը հռովմէական բանակի երկու զինուորների մէջ էր առնուած։

Պիղատոսը զզուանքով նորա վերայ նայեց։ Բարաբբան ոչ պակաս արհամարհական նայուածքով պատասխանեց նորան։ Զգալով, որ բոլորի ուշադրութիւնը այժմ իւր վերայ է ամփոփուած, վաղուց բանտարկուած և երկար ժամանակ տանջուող մարդու բուն ոգւով, նա այդ «հռովմէական բռնակալի», ինչպէս կոչում էին հրէաները Պիղատոսին, դէմ կանգնեց. հպարտութիւնը և խռովութիւնը նորից Բարաբբայի արիւնը գզգռեցին։ Եթէ այդ հիանալի լուսափայլ Դէմքը չը լինէր, որը այնպիսի արքայական հանգստութեամբ կանգնած էր այդտեղ, նորա կարգում,—Բարաբբան կարող չը պիտի լինէր իրեն զսպելու, և անշուշտ իւր շղթայակապ ձեռքերով կը խփէր դատաւորին։

Իսկ այժմ նա կանգնած էր անշարժ. նորա աչքերը կայծակներ էին թափում. մթնագոյն կուրծքը անհանգստութեամբ և ծանրութեամբ շնչում էր, և նա ամբողջովին ուժեղ, անկատար, անկիրթ մարդկութեան մարմնացումն էր պատկերացնում։

Իսկ նորա մօտ, ինչպէս հակապատկեր, կանգնած էր Աստուածութիւնը, ամենամեծ պատկերը, կատարելագործուած և հոգևորիչ մարդու կենդանի ներկայացուցիչը, որի բնութիւնը ամեն բանից մօտ էր նմանում Աստծուն և որին, 'ի սէր այդ նմանութեան, են-

թարկում էին արհամարհելի եղեռնագործական պատժի: Նորան անխելահասութեամբ միասին կանգնեցնելը այդ լաւութիւն պահող մեղաւորուածի հետ, աղօտ մտքով փայլեց Բարաբբայի խելքի մէջ, մինչդեռ նա լրբութեամբ Պիղատոսին էր նայում. ապա նա սկսեց մտածել այն բանի վերայ, թէ գուցէ ժողովրդի ձայնով նորան իբաւացի ազատեն,—այն ժամանակ, առաջին դէպքում, ուր գործ կը դնէ նա իւր ազատութիւնը, պիտի լինէ ամբոխին հաւատացնելը,—այն արքայանման Մարդուն ողորմածասիրութիւն ցոյց տալ, Որը նորա մութ, յօշոտած հոգու մէջ մի տեսակ ծածուկ կախարդական ներգործութիւն ձգեց: Եւ մինչդեռ նա այդ բոլորի վերայ կը մտածէր, Պիղատոսը ուշադրութեամբ նորա վերայ նայելով, խիստ և ամփոփ հարց գրեց.

—Եւ այդպէս, փարիսեցի Գաբբիասին դու սպանեցի՞ր:

—Հա՛, եա: Եւ ես միւսին ես կը սպանէի, եթէ որ դարձեալ քաղաքում մի այնպիսի ստո՛ր խաբեբայ գտնուէր:

Պիղատոսը դէպի քահանայապետները և աւագագոյնները դարձաւ:

—Լսում էք, ինչ է նա ասում: Եւ այսպիսի մարդու դուք ուզում էք ազատել: Չը զղջացող և կամակոր, նա չէ ողբում իւր եղեռնագործութիւնը. միթէ նա արժանի է ներման:

Կայիափան, այդ հարցից փոքր ինչ շփոթուած, մի րոպէաչափ աչքերը ցած ձգեց, ապա վերև նայեց, իւր երկար երեսին համբերութեան և ողորմածասիրութեան զարմանալի արտայայտութիւն տալով:

—Բարի Պիղատոս,—պատասխանեց նա կամացուկ և հանդարտ,—դու այդ գործի եղելութիւնը չը գիտես: Բարաբբան, իրաւացի, շատ բանի մէջ է մեղաւոր, բայց այնուամենայնիւ մի այնպիսի պատճառ կայ, որ նորա կիրքը իրաւացի պիտի գզուէր: Մենք՝ սուրբ տաճարին պատկանողքս՝ կը սովորեցնենք նորան, թէ ինչ գնով կարելի է Ամենաբարձրեալի մօտ իւր եղեռնագործութիւնը գնել, և մենք չը պիտի ձգենք, այլ կը ընդունենք այդ ընծան: Անբաղդ Գաբբիասը թէպէտ յայտնի մարդ էր և գիտուն, բայց այնուամենայնիւ նա շատ չար լեզու ունէր, և ասում են, որ նա ստորութեամբ բամբասել և անուանարկել է այն պարկեշտաբարոյ աղջկան, որին Բարաբբան սիրում էր:

Պիղատոսը բարկութեամբ յօնքերը կիտեց:

—Այդ բոլորը աննշան և ցածր գործեր են,—ասաց նա,—որոնց համար դու, Կայիափա՛, պարտական չը պիտի լինիս աշխատելու:

Քո խօսքերը կանայք բամբասանքով են շնչում: Սպանելը միշտ սպանութիւն է, կողոպտելը—կողոպուտ. ինչ տեսակ պատճառներ էլ որ լինին, այնուամենայնիւ եղեռնագործութիւնը կը մնայ: Բարաբբան գող է և մարդասպա՛ն:

Եւ նորից դէպի ամբոխը դառնալով, նա իւր նախկին հարցը կրկնեց:

—Որի՞ն էք ցանկանում, որ ես արձակեմ ձեզ—Բարաբբայի՞ն թէ Յիսուսին, որը կոչւում է Քրիստոս...

Այլայլուած ու խառնակուած ժողովուրդը միաձայն պատասխանեց.

—Բարաբբայի՛ն: Բարաբբայի՛ն....

Պիղատոսը յուսահատութեամբ արհամարհանքի նշան անելով, ուսի վերայից տխուր ակնարկ ձգեց Նազովրեցու վերայ, որը ընկղմուած էր խոր մտածողութեան մէջ, որպիսին, կարող էր պատահել, դարեկան պիտի լինէր, քանի որ նա ժպտում էր:

Մի անգամ ևս Պիղատոսը դարձաւ դէպի ժողովուրդը.

—Ի՞նչ կը կամենայիք, որ ես այն մարդու հետ անեմ, որին դուք Հրէից Թագաւոր էք կոչում:

—Խաչի՛ր: Խաչի՛ր նորան...

Պատասխանը արուեց արհամարհութեան վայրենի բացականչութիւններով և, ինչպէս առաջ, պարզ արծաթահնչիւն կանացի ձայնը ծածկեց բոլոր մնացող ձայներին.

—Խաչիր նորան:

Բարաբբան դողաց այնպէս, ինչպէս ձին կը դողայ խթաններէ ընդհարումից: Նա աչքերի մէջ գաղանի յատուկ փայլով, զննեց գոռացող ամբոխը, բայց չը կարողացաւ այն դէմքը գտնել, որը նա այնքան ցանկանում էր և միևնոյն ժամանակ վախենում էր տեսնել: Եւ դարձեալ անբացատրելի յափշտակութեան ընկճուելով, նա մեխեց իւր ակնարկը այն տեղին, որտեղ արեգակի ճառագայթները լուսաճաճանչ փայլմունքով միախառնւում էին նորա գլխի վերայ, որին Պիղատոսը Քրիստոս էր կոչում: Ի՞նչ էր նշանակում այն խորին սէրը և այն անեզր կարեկցութիւնը, որոնք լուսաւորում էին այդ հրաշալի Դէմքը: Ի՞նչպիսի նուրբ՝ չը ասուած՝ խօսք էր դողում այդ տխուր շրթերի վերայ,—Բարաբբան չը գիտէր, բայց նորան յանկարծ այնպէս երևաց, որ իւր ամբողջ կեանքը, բոլոր գործուած բարի և չար գաղտնիքներով, բաց գրուած էր այն փափուկ ակնարկի առջև, որը այնքան ուշադրութեամբ ձգուած էր իւր վերայ:

—Ոչ, ո՛չ,—կոչեց նա շտապով և անհամբեր,—նա չէր խօսեցո-

ըը, չէ՞ր կարող նա այդպէս խօսել։ Կանայք փափուկ են սրտով, ոչ թէ անգութ. նա մի որևէ մէկի տանջանքը ցանկանալ կարող չէ։ Ո՛հ, Երուսաղէմի ժողովուրդ,—շարունակեց նա, որի ձայնը աւելի ևս ամուր ու պարզ հնչեց, և նա շուռ եկաւ, որ դէպի ամբոխը ընս տա երես կանգնէ.—այս Մարգարէի մահը դուք ինչու պիտի պահանջէք։ Նա ձեզանից ոչ մէկին չէ սպանել, ոչ մէկից ոչինչ չէ գողացել։ Աւանդութիւնը ցոյց է տալիս, որ նա ձեր տկարութիւնները բժշկել է, մխիթարել է ձեզ ձեր վշտերի մէջ, և զանազան զարմանալի հրաշքներ է գործել,—այդ նոյնը և դուք ինքներդ էք ասում։ Եւ այսպիսի գործողութիւնների համար դուք նորան կամենում էք մահուան դատապարտել։ Ո՞ւր է ձեր ճշմարտասիրութիւնը։ Որտե՞ղ է ձեր դատողութիւնը։ Չէ թէ ես, ես ե՛մ արժան պատժուելու։ Ես, որ սպանել եմ Գաբրիասին և ուրախանում եմ իմ չարագործութեան վերայ։ Ես արիւնոտած եմ, մեղաւոր և ոչ դարձի եկած,—ուրեմն արժանի եմ մահուան, իսկ այս Մարդը անմե՛ղ է։

Ծիծաղ, ծափահարութիւններ և ճչոցներ եղան նորա պատասխանը. որոնց միջից կոչում էին. «Բարաբբա՛, Բարաբբա՛, տուէ՛ք մեզ Բարաբբային»։

—Ծածկեցէ՛ք նորա բերանը.—բացականչեց Աննան բարկութեամբ։—Նա ճիշտ որ իր խելքը կորցրել է, քանի որ այդպիսի խելառ բառեր է դուրս թողնում իր բերանից։

—Խելագար է՝ թէ ոչ,—դուք ինքներդ էք նորան ընտրել ազատելու համար,—հանդարտութեամբ նկատեց Պիղատոսը.—կարող է պատահել, որ դուք այժմ նորան էլ չը ընդունէք, քանի որ նա անբաղդ Նազովրեցուն պաշտպան հանդիսացաւ։

Մինչ նա կը խօսէր, ամբոխը սպառնալիքով դէպի վանդակապատը ընկաւ. այդ յանկարծակի խրարանցումից հռովմէական զինուորների շարքը տատանուեց և հազարաւոր բարձրացրած ձեռքեր օդի մէջ տատանուեցին, որոնք Քրիստոսի անշարժ կերպարանքն էին ցոյց տալիս։

—Ի խա՛չ հան զդա։ Խաչեցէ՛։

Պիղատոսը շտապով յառաջ քայլեց և խստութեամբ հարցրեց.

—Ձեր արքային՝ արդեօք՝ խաչեմ։

Հազարաւոր ձայներ պատասխանեցին նորան.

—Բացի Կեսարից, մենք թագաւոր չունե՛նք։

—Ճշմարիտ՝ քո անվճռականութեամբ, Պիղատո՛ս, դու քաղաքի մէջ խառնակութիւն կը ձգես,—ասաց Կայիափան յանդիմանութեամբ.—մի՞թէ չես տեսնում, որ ամբոխը համբերութիւնից դուրս է գալիս։

Այդ վայրկեանին սպիտակ գլխով մի բարձր մարդ, որը զարդարուած էր աչքի ընկնող կարմիր տուրբանով*), վստահութեամբ առաջ անցաւ ամբոխի միջից և բարձր այլայլուած ձայնով կոչեց.

—Մենք օրէնք ունենք, և մեր օրէնքով նա պէտք է մեռնէ, որովհետև իրեն Աստուծոյ Որդի կոչե՛ց։

Այդ խօսքերը լսելով՝ Պիղատոսը մի քանի քայլ դէպի յետ նահանջեց ցանկապատից, մի այնպիսի յանկածակի զգացողութեամբ, որպէս թէ մի անյայտ մէկը անտեսանելի ձեռքով խփեց նորան։ Որդի Աստուծո՞յ։ Մի այդպիսի հաստատութիւն, ի հարկէ, Աստուածանենգութիւն էր, եթէ ճիշտ որ Մեղադրուածը իր համար այդպէս էր ասել. բայց դորան Պիղատոսը բոլորովին հաւատացած չէր։

Երբ դեռ վաղուց Կայիափան դորա մասին ասել էր, նա արհամարհանքով էր լսել նորան, գիտենալով, որ քահանայապետը ոչ մի սուտ առաջ չէր կանգ առնում, միայն թէ այդ իրեն օգտաւէտ լինէր,—բայց այժմ, երբ ժողովրդի միջից մէկը նա միևնոյն մեղադրանքը յայտնեց, Պիղատոսը արդէն դա անուշադրութեամբ չէր կարող անցնել։ Վերջապէս, նա նշանակուած էր, որ հրէաների մէջ արդարութիւն գործ դնէ,—իսկ նոցա մէջ Աստուածանենգութիւնը ամենավատթար յանցանքների մէկն էր հաշւում։ Իսկ Պիղատոսը ինքը, ինչպէս հռովմայեցի, դորան բաւականաչափ ներողամտութեամբ էր նայում։ Հռովմէական բոլոր չ'աստուածները այնքան ծիծաղելի էին, իրենց յանցաւոր ցանկութիւններով մարդկութեան այնքան մօտ, որ անգամ պատճառ չը կար նոցա մարդկութիւնից բարձր ընդունելու։ Իր ֆիզիքական ոյժով կամ քաջագործութեամբ փառքի արժանացած իւրաքանչիւր զինուոր կարող էր համարձակութեամբ հաստատել, որ նա Աստուծոյ որդի է, դորանով բոլորովին վիրաւորած չը լինելով իւր հայրենակիցների կրօնական զգացմունքը, իսկ ճոխաբան աւանդութիւնը յաճախ այդ սուտը ճշմարիտ էր փոխում։ Եւ այն խորհրդաւոր կողմում, որը ոռոգւում էր ծոյլ Նեղոսով, մի՞թէ չէին երկրպագում Օզիրիսին**),—Աստծուն, որը մարդկային կերպարանքի մէջ էր մարմնացած։ Այդ գաղափարը այնչափ սովորական էր. բոլոր ազգերի մէջ մի տեսակ բնազդական ցանկութիւն կար Աստուածութիւնը պատել մահացու արտաքին տեսքի

*) Տուրբան—գլխի փաթաթան։

**) Օզիրիս—հին եգիպտացւոց գլխաւոր չ'աստուածը, Իզիդայի ամուսինը։

մէջ։ Զարմանալու ոչինչ չը կար այն բանի մէջ, որ այդ երիտասարդ Նազովրեցի փիլիսոփան միաւորուած լինէր այդ ընդհանուր մարդկային աւանդութեան հետ,—թէպէտ և ապացուցուած չէր, որ նա ճշմարտապէս այդպէս էր ասել։ Եւ Պիղատոսը, ամբողջովին կլանուած եգիպտական աստուածների բնաւորութեամբ, Մեղաւորուածին նշան արեց, որ նա իրեն մօտենայ։

Կալանաւորը դէպի Պիղատոսը յառաջացաւ և մօտ կանգնեց նորան, որը Մեղաւորուածին սկսեց նայել նոր ցանկութեամբ և հետաքրքրութեամբ—յետոյ, ընկերասիրական ձայնով, համարեա աղերսող, նորան հարցրեց.

—Որտեղի՞ց ես Դու։

Պատասխան չը կար։ Միմիայն սոսկ նայուածք։ Բայց այդ հրամայողական ակնարկի մէջ մի այնպիսի ահարկու ոյժ կար, որը նման էր՝ որոտմունքից առաջ՝ կայծակաբեր ամպի,—և սարսափելի տխրութիւնը և մի ինչ որ զարհուրելի բանի նախազուշակութիւնը պատեցին Պիղատոսի հոգուն։ Նա ցանկութիւն զգաց աղաղակելու, ձայն տալու, իր ներքին խռովութեան վերաբերութեամբ բացարձակ յայտնելու քահանայապետներին և ժողովրդին թէ ինչպիսի ճնշող ոյժով և ծանրութեամբ էին ընկած նորա վերայ իւր դատաստանական պարտականութիւնները... Բայց խօսքերը մեռնում էին նորա շնչափողի մէջ և անյուսութեան ու անուժութեան զգացմունքը տիրացաւ նորա կամքի վերայ։

—Ինձ արդեօք չես պատասխանում,—արտասանեց նա խռպոտ և դողդոջ՝ զգացմունքից զուրկ ձայնով։—Միթէ՞ չը գիտես, որ ես իշխանութիւն ունիմ խաչելու քեզ, և իշխանութիւն—արձակելու։

Խոշոր ճառագայթացոյ աչքերը նայում էին նորա վերայ դարձեալ միենոյն զննողական ուշադրութեամբ, բայց կարեկցութեամբ. մեղմ, հարուստ ձայնը, ինչպէս հրեշտակային երգ, դարձեալ հնչեց.

—Դու Ինձ վերայ ոչ մի իշխանութիւն չէիր ունենալ, եթէ որ քեզ տրուած չը լինէր դա 'ի վերուստ. դորա համար աւելի մեղք է նորան, ով Ինձ քեզ մատնեց։

Եւ թափանցիկ ակնարկը Պիղատոսին թողնելով, կանգ առաւ Կայիափայի վերայ, որը սասանուեց, որպէս թէ հրաշէկ բոցի հպումից։

Պիղատոսը, աւելի քան երբ և իցէ, այն վսեմութեան, իշխանութեան և անվեհերութեան ազդեցութեան տակ գտնուելով, որոնցով շնչում էր Կալանաւորի ամբողջ պատկերը, նորից սկսեց զանազան աւանդութիւններ յիշել, որոնք պատում էին Եգիպտոսի

մէջ,—աստուածներ՝ փախստական միապետների վերայ հռչակուած որոնք, այլևս իրաւունք չը ունենալով իրենց թագաւորութեան մէջ ապրելու, թափառում էին ամբողջ աշխարհի վերայ, տարածելով Արևելքի միստիքական—գաղտնի—ուսմունքը և բժշկութեան հրաշքներ գործելով։ Միթէ՞ կարելի չէր, որ այդ Կալանաւորը, որը իւր բաց ճակատով, յստակ մութ կապոյտ աչքերով և գեղեցիկ իրանի անբացատրելի վսեմութեամբ այնքան չէր նմանում հրէայի,—չը նայելով այն աւանդութեան, թէ նա հասարակ դասակարգից է յառաջացել,—այն պսակուած արքաների մէկը չէր։ Այդ իդէան—միտքը—աւելի և աւելի Պիղատոսի երևակայութեան վերայ տիրանալով, ստիպեց նորան հարցնելու։

—Թագաւոր ես Դու։

Եւ առանձին խմն չեշտով նա հասկանալ տուեց Կալանաւորին, որ եթէ դա այդպէս էր, ուրեմն ազատութիւնը դեռ կարելի էր։ Բայց Նազովրեցին միմիայն գանգազութեամբ հառաչեց և պատասխանեց.

—Դու ես ասում, որ ես թագաւոր եմ։

Ապա դէպի իւր անբաղդ դատաւորը խղճացող զգացմունքով, նա աւելացրեց.

—Ես նորա համար ծնուեցի և նորա համար եկայ աշխարհ, որ ճշմարտութեան մասին վկայեմ։ Իւրաքանչիւր մարդ, ով ճշմարտութիւնից է, կը լսէ իմ ձայնը։

Մինչ նա խօսում էր, Պիղատոսը նայում էր նորա վերայ ապշած։ Ո՛չ,—դա դաւաճան չէր, ո՛չ էլ եղեռնագործ, իսկ ամենահասարակ կերպով ամբողջ աշխարհի ամենաբարձր վարքի տէր խելացնոր։ Նորա սեփհական խօսքերը քան քահանայապետների բոլոր պատճառները աւելի հաստատող էին դորան։ Նա, ով կամենում էր վկայել ճշմարտութեան համար այս աշխարհի մէջ, որը լցրուած է խաբեբայութեամբ և կեղծաւորութեամբ, 'ի հարկէ՝ մտաւոր խանգարուած էր։ Միթէ սուտը միշտ գոյութիւն չունէր։ Միթէ նա յաւէտ գոյութիւն չը պիտի ունենայ։ Միթէ՞ աթինացի Սոկրատէսը 500 տարի առաջ չը մեռաւ նորա համար, որ ճշմարիտ խօսեց։

Պիղատոսը, որը լաւ ծանօթ էր յունական և հռովմէական փիլիսոփայութեան հետ, գիտէր, որ հասարակութեան բոլոր խաւերում միշտ հալածում էին բոլոր այնպիսիներին, որոնք առանց ծածկելու այն էին խօսում,—ինչ մտածում էին։ Համարեայ մի մարդու սպանելը այնքան երկիւղալի չէ, քան նորա վերայ ճշմարիտ խօսելը. Այդպէս մտածելով, նա նշանացի տուեց հասկանալու, որ վերջնականապէս հնազանդւում է ճակատագրին, և ձայնի մէջ դառն

հեգնութիւն արտայայտելով, նա յաւիտենական չը պատասխանուած այն հարցը գրեց թէ.

—Ի՞նչ է ճշմարտութիւնը...

Այս Մեղաւորուածին և մեղադրողներին նայելով, քահանայապետների, ամբոխի և Բարաբբայի (որը նորա առջև կանգնած էր դաժան սպասողութեան մէջ) վերայ ակնարկը փոխելով, նա անհամբերութեամբ հառաչեց և խոր յուսահատութեան տեսքով վճռեց կատարել այն, որից նորա ամբողջ հոգին դողում էր. ապա նա իւր մօտ կոչելով ծառայողներից մէկին, մի ինչ որ բան շշնջաց նորա ականջին։

Ծառան հեռացաւ և համարեա նոյն ժամուն վերադարձաւ մի մի մեծ արծաթէ կոնքով,—ջրով լցրուած։ Իւր հարուստ հագուստը դէպի յետ ձգելով, որը մեծ ծալքերով յատակի վերայ փռուեց, կառավարիչը մի անգամ ևս ամբոխին մօտեցաւ, որը անհամբեր և աղաղակող դարձաւ կրկին։ Նորա յետևից ծառան տանում էր ջրով լի արծաթէ կոնքը։ Կառավարիչը մօտենալիս, աղաղակը փոքր ինչ մեղմացաւ և բոլորը սկսեցին ուշադրութեամբ նրան հետազօտել, աւելի ևս նորա համար, որ նորա գործողութիւնները անսպասելի և անսովորական էին։ Ոսկի թելերով ասեղնագործուած թևքերը ծալելով և հոլանի արմունկները ի ցոյց հանելով, նա մերկ ձեռքերը բարձր պահեց, ափերով դէպի առաջ, այնպէս որ նորա բոլոր մատանիները առաւօտեան արեգակի ճառագայթների տակ կայծեր սփռեցին, և ապա հանդարտ ընկղմեց նոցա փայլող, ինչպէս հագուագիւտ քար, ջրի մէջ. յետոյ լուսաւորուող կաթիլները դէպի հեռու ցօղելով, նա խիստ և պարզ ձայնով կոչեց.

—Անպարտ եմ ես այս արդարի արեան մէջ, նայեցէք դուք։

Ամբոխը ճչում և գոռում էր։ Նա հասկացաւ և ընդունեց կոչը։ Նոցա հռովմէական դատաւորը հրապարակով հեռացնում էր իրենից ամեն մի պատասխանատուութիւն անցկացող գործողութեան վերաբերութեամբ,—թող այդպէս լինէ։ Իսկ նոքա, Աստուծոյ ընտրեալները, Իսրայէլի որդիքը, հիացմամբ ընդունում էին այդ,—և դա առաջին անգամը չէր նոցա պատմութեան մէջ,—սքանչելի դէպքի համար անմեղին մահուան դատապարտելու։

Մարդիկ և կանայք մի ընդհանուր խլացուցիչ գոռոց բարձրացրին.

—Արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց...

Սարսափելի, զարհուրելի նզովքը ծանրութեամբ դէպի երկինք բարձրացաւ։ Եւ հրային տառերով գրուեց նա Հրեշտակի ձեռքով,

թէ ինչպէ՛ս թշուառ ազգը իւր սեփհական կամքով՝ իրեն դատապարտեց...

V

Դորանից յետոյ այլ ևս ոչինչ չէր կարելի ասել։

Անկիրթ, անսիրտ ամբոխը ո՛չ խելք, ո՛չ ողորմածասիրութիւն և ո՛չ ճշմարտութիւն ունէր, իսկ նորա կամքը կատարել անհրաժեշտ էր։ Այդպիսի միաձայն վճիռը ոչ մի փոփոխութեան չէր ենթարկւում։

Պիղատոսը հասկացաւ, որ եթէ նա դարձեալ վստահութիւն ունենայ Աստուածային Մեղաւորածին պաշտպանելու, այն ժամանակ, կարող է պատահել, որ ամբոխի անհամբերութիւնը սահմանից անցնէ և վերջանայ անկարգութիւններով և արիւնահեղութեամբ։ Դորա համար, ինչպէս անխուսափելի փոթորիկից բռնուած մի մարդ, նա իւր կամքը զոհեց ամբոխին գրաւելու համար։

Կայիափան՝ տեսնելով, որ Պիղատոսը, վերջապէս ընկճւում է անհրաժեշտութեան և անխուսափելի դրութեան առաջ, թեթևութեամբ հառաչեց։ Տատանումները վերջացած էին։ Նազովրեցի Մարդը մահուան պիտի դատապարտուէր։ Եւ քահանայապետը ուրախութեամբ մի ինչ որ բան շշնջաց իւր աներոջ՝ Աննային, որը, նորան լսելով, գոհունակութեամբ շփում էր իւր հաստ ձեռքերը, երբեմն աչքերը դէպի վեր բարձրացնելով շնորհակալական աղօթքի համար այն վերաբերութեամբ, որ վերջապէս սուրբ Երուսաղէմ քաղաքը ազատուած պիտի լինէ «Նազովրեցու» երկիւղալի ներկայութիւնից։

—Եթէ նա մեռնէ,—շշնջաց Կայիափան՝ խէթ նայուածք ձգելով դէպի իւր ճառագայթացող ախոյեանը, «ճշմարտութեան վկային»,—աւելի ևս այդ հրապարակական անարգ մահուան պատժից յետոյ, այն ժամանակ նորան շուտով կը մոռանան. նորա հագուագիւտ աշակերտները արհամարհուած կը լինին, նորա անմիտ ֆանատիկոսական-մոլեռանդ-ուսմունքը ծաղրուած կը լինէ, և մենք կը հսկենք, որ նորա ծնունդը, ուսմունքը ու մահը չը գրուէ մեր պատմութիւնների մէջ։ Փողոցային դատարկաշրջիկ։ Խուժր ամբոխի քար ողիչ։ Ինչո՞վ է կարող նորա անունը տարածուել...

—Ի հարկէ նա չի տարածուիլ,—պատասխանեց Աննան փափկութեամբ և հաւատացած։—Դու, սիրաղան Կայիափա, միշտ չափից դուրս մեծ նշանակութիւն ես տալիս այդ մարդի պարծենկոտու-

թեանը։ Այդպէսները շատ կը ճարուին, որոնք հաւատացնում են, որ չը նայելով թէ իրենց ցեղը նոցա չէ ճանաչում և յարգում,—նոքա՝ այնուամենայնիւ՝ ապագայում յայտնի պիտի լինին։ Այդպէս են պարծենում ինքնավստահ փիլիսոփաները, խելացնոր բանաստեղծները, որոնք երևակայում են՝ թէ նոցա տխմար բանաստեղծութիւնները մի որևէ բանի արժողութիւն ունին, և նոյնպէս այդպիսի քարոզիչները,—մինչ դեռ այն բոլորը, ինչ նոքա հաստատում են, դատարկ զարդախօսութիւն է մնում։ Ճշմարտապէս, եթէ այս մարդու մասին պատմութիւնը ոչինչ չը յայտնէ,—ուրեմն ո՞վ պիտի հաւատայ ապագայում, որ նա գոյութիւն ունէր։

Կայիափան սառնութեամբ ժպտաց։

—Նորա մասին քիչ խօսք կը լինէ պատմութեան մէջ,—ասաց նա։—Նորա տխմար աշակերտները անուս են, իսկ մեր դպիրները միմիայն այն կը գրեն, ինչ մենք կը հրամայենք նոցա։

Այդ խօսակցութեան մի մասը մաքսանենգ Զաքարիան լսեց, որը հաճութեամբ ճօճում էր գլուխը ու ժպտում։

Այն մահուան դատավճիռը, որով պատժեցին հրէաները Անմահ Գալանաւորին, ագահ սեղանաւորի չնչին, ցածր հոգուն ինչպէս մի բալասան էր ներգործում։ Նա մխիթարութիւն զգալով և չարախնդութեան մէջ ընկնելով, դէպ առ դէպ իր թանկագին քարերի մէջ կորած գաւազանով խփում էր յատակին, որով կամենում էր իր հաճութիւնը և գոհունակութիւնը ցոյց տալու։

Պիղատոսը՝ նորանից զկնի, երբ բոլոր ներկայ եղողներին ձեռքերը լուանալով պարզ ցոյց տուեց իր արհամարհանքը այդ չար եղեռնագործութիւնը կատարելու դէմ, շարունակեց իր վերայ դրուած մնացեալ պարտականութիւնները կատարել անխղճային շտապողութեամբ և զզուանքի զգացողութեամբ։ Նորա կարծիքով, այժմ ոչ մի բան չէր կարող այդպէս բաւականին արագ կատարուել. Նա աւելի ջղային էր և անհամբեր։ Ամօթի բոց գոյնը դէպ առ դէպ նորա դէմքը ծածկելով, շուտով տեղի էր տալիս մահացու գունատութեան. Նորա դէմքի գծագրութիւնը անշարժ էր և բոլոր իր շատալ շարժուածքի մէջ նա զգուշութեամբ փախուստ էր տալիս դատավճռուած մարդու վերայ նայելուց։

Նորա հրամանով քսան զինուորներ մերկացրած զէնքերով շրջապատեցին այն ձիւնափայլ Կերպարանքը, որը դեռ այնուամենայնիւ կանգնած էր աստուածային լռութեամբ և յստակ արևգակի փայլմունքի տակ՝ անշարժ։ Զինուորները կոպիտ և անկիրթ մարդիկ էին, որոնք, նկատելով բնուածի սէգ և սառնասիրտ տեսքը, սկսե-

ցին նորա վերայ ծիծաղել։ Իսկ Նա ինքը որպէս թէ նոցա ներկայութիւնը չէր էլ նկատում։ Երջանկութեան միտքը, երևում էր, գրաւել էր նորան, և նորա ճառագայթացող արտաքին տեսքից դատելով, Նա՝ կարծես թէ՝ գիտէր, որ իր միակ ժպիտը կարող է ստեղծել և՛ լոյս, և՛ կեանք, և՛ չը ճաշակուած երջանկութիւն։

Հէնց այդ ժամանակ, մինչ պահապանները կըշրջապատէին նորան, այն զինուորները, որոնք կռուած էին Բարաբբայի վերայ, յետ քաշուեցին, նորան միայնակ թողնելով Կառավարչի սեփհական ձեռքով վերջնական ազատութիւնը ստանալու։ Բարաբբան կանգնած էր Պիղատոսի դէմ միայնակ։ Երկաթէ շղթաները դէպի ցած էին ձգում նորա ձեռքերը, որոնք թմրած և այլանդակուած էին երկաթի ճընշող ազդեցութիւնից և ծանրութիւնից։ Յոգնածութիւնից նորա գլուխը պտոյտ էր գալիս, որը յառաջանում էր զգացմունքից ևս, բայց սև աչքերը փայլում էին և նորա մարմնի իւրաքանչիւր ջիղը և մկանունքը վաղուց ցանկացածին ազատութիւնը ճաշակելու ըղձացմունքից դողում էին։ Նորա տանջանքը երկար չը տևեց։

Պիղատոսը ինքը չէր կամենում այլ ևս ուշացնելու։ Սպասող սպայի ձեռքից զէնքը խլելով, որը պատրաստուած էր հէնց այդ նպատակի համար, Նա մի այնպիսի կատաղի ոյժով խփեց բանտարկեալի շղթաներին, որ նոյն ժամուն փշուր փշուր եղան, շառաչմամբ մարմարեայ յատակի վերայ թափուելով։ Այդ խորտակիչ ձայնը ժողովրդի վերայ գրգռող տպաւորութիւն գործեց, որը սկսեց ուրախութեամբ կոչել.

—Բարաբբա՛։

—Ազատութի՜ւն, Բարաբբային։

—Ուրախացի՛ր, Բարաբբա։

Մինչ այդ՝ Բարաբբան նայում էր թափուած կապանքներին ապուշ դէմքով, ինչպէս մի անծանօթ, անտես առարկաների վերայ։ Նա գիշեր և ցերեկ, տասնևութ ամսուայ ընթացքում նոցա կրել էր, իսկ այժմ նորան այնպէս էր երևում, որ նա դոցա չէր ճանաչում... Նա ձեռքերը բարձրացրեց և սկսեց նոցա յետ և առաջ տատանել, իր սեփհական շարժմունքի թեթևութեան և արագութեան վերայ զարմանալով։ Բայց այն ուրախութիւնը, որը մինչ այդ դեռ միմիայն ազատութեան վերաբերութեամբ մտածելու ժամանակ, լցրել էր նորա սիրտը մխիթարութեամբ—այդ մխիթարութիւնը այժմ կարծես թէ՝ չը կար այլ ևս. Նա անդարձ կորցրել էր մի անյայտ տեղ և ո՛ւր կամ ինչ կերպով—իրեն՝ Բարաբբային՝ ևս յայտնի չէր։ Նա վաղուց դորան ծարաւելով, ջերմ սրտով աղօթանէր դորա վերաբե-

բութեամբ և յոյս ունէր սատնալու,—իսկ այժմ, իւր կամքը կատարուելուց յետոյ,—յոյսը կորչեց: Ծանր յուսահատութիւնը տիրեց նորան և կարծես թէ երազի մէջ նա Կայիափայի ձայնը լսեց, որը ասում էր.

—Դու, Պիղատոս, արդեօք չը պիտի անցկացնես այդ ապարանջանները Նազովրեցուն: Ո՛վ գիտէ. երբ նորան դէպի պատժարան տանելու լինին, նա, գուցէ, ապստամբութիւն ցոյց տայ:

Պիղատոսը յօնքերը կիտեց:

—Դարձեալ ինչ: Միթէ նա դիմադրեց պահապաններին: Միթէ նա գէթ մի անգամ շարժուեց: Նա չէ վիճում դատավճռի դէմ,—նա լռիկ և հնազանդ ընկճւում է ձեր միջոցով հրամանագրած ճակատագրին: Ուրեմն ինչու պէտք է նորան կապել, որը ոչ մի դիմադրութիւն չէ ցոյց տալիս: Թող հրէաները վախկոտ լինին, բայց նոքա չեն կարող ստիպել Հռովմայեցուն ևս նոյնը լինելու:

Եւ նա շտապով դէպի Բարաբբան շուռ եկաւ.

—Ինչու ես այստեղ սպասում, անպիտան: Մեր միջից դո՛ւրս.—և ծածկուած բարկութեան հնչիւնը դողաց նորա մշտական հանդարտ ձայնի մէջ:—Անզգամ, մարդասպան և գող, քո ազգիդ օրէնքը ազատում է քեզ, որ դու կարողանաս աւելի ազատութեամբ սպանել և կողոպտել:

Բարաբբան հառաչեց և նորա մութ երեսը շառագունեց: Անուանարկող խօսքերը խորունկ խոցեցին նորան, բայց նա ոչինչ չը գտաւ հակառակելու: Նա իւր գլուխը անուժութեամբ ցած ձգեց...

Նա գիտէր, որ ինքը ազատ էր, բայց ազատութիւնը նորան այն անվերջ ուրախութիւնը չը բերաւ, ո՛րն ակն ունէր. այնտեղ, պահապաններից հեռու, սպասում էր նորան ժողովուրդը, որպէսզի դիմաւորէ մխիթարական ուրախ բացականչութիւններով, բայց նորա անդամները որպէս թէ մեխուած էին այն տեղում, որտեղ կանգնած էր նա, և եթէ այդ նորա կեանքին արժենար անգամ, նա, չէր կարողանում կարել իւր զգացողութեամբ և տխրութեամբ լի ակնարկը նորա պատկերից, Որին նորա փոխարէն մահուան դատապարտեցին: Աւելի լաւ էր,—մտածեց նա ինքն իրեն,—մեռնել այդ մարդու փոխարէն, քան շարունակել կեանքը,—թէպէտ և ազատ: Եւ այդպիսի խորհրդածութեան ժամանակ նորան յանկարծ այնպէս երևաց, թէ փափուկ լոյսը լուսաւորում էր Նազովրեցու բարձրահայեաց գլուխը աղօտ միգային օղով, որը աւելի և աւելի էր պայծառանում: Նա վախեցած յետամուտ եղաւ այդ հրաշքին. հաւանական է, որ ուրիշներն ևս, նորանից բացի, պիտի տեսնէին այդ հիանալի լուսաւորութիւնը: Դատաւորը, քահանաները, զինուորները և ժողո-

վուրդը—միթէ նոքա բոլորն էլ կուրացած էին այդ բանի դէմ, որը այդքան պարզ երևում էր: Նա փորձեց խօսելու և բացատրելու դոցա այդ հրաշքը, բայց լեզուն կարկամեց, և նա միմիայն նայել էր կարողանում, ինչպէս խելակորոյս մէկը, նա ցանկանում էր մի որևէ բառ արտասանելու, բայց այդ բառը մնում էր առանց ձայնի: Կայիափան, նորա այլայլուած տեսքից բարկացած, դէպի նա մօտեցաւ:

—Յիմար, Կառավարչի հրամանը լսեցի՞ր դու: Դուրս կորի՛ր և զսպելով քեզ, մի՛ համարձակիր Իսկարիոտի տանը մօտենալ...

Բարկութեան շշնջոցով դրուած այդ հրամանը Բարաբբային դարձրեց Քրիստոսի վերայ նայելուց և նա անձնական չարութեան բռնկումն զգաց: Նազովրեցի Մարգարէի գլխի վերայից փայլումն անյայտացաւ. կորչեց և զարմանքը, և ակամայ զարհուրանքը... Նիւթական կեանքը և նորա պահանջները դարձեալ առաւելութիւնը վերցրեցին:

Քահանայապետի վերայ արհամարհական ակնարկ ձգելով, նա հպարտութեամբ իւր բարձր իրանը ուղղեց, և մէջքը ատեանին շուռ տալով, շտապ քայլերով ցանկապատից հեռացաւ:

Հռովմէական զինուորները յետ քաշուեցին, որպէսզի նորան տեղ տան անցնելու: Մի վայրկեան ևս և նա արդէն ամբոխի մէջ էր, որը նորան ընդունեց անվերջանալի շնորհաւորութեան գոռոցով և հիացմամբ:

Յաղթանակը տարած ամբոխը շրջապատեց նորան, նորա անունը կրկնելով, տղամարդիկ գրկում էին նորան, կանայք բռնում ու համբուրում էին նորա աղտոտ ձեռքերը, փոքրիկ երեխաները նորա շուրջ կողմում խաղում էին, անհասկանալի ուրախութիւնից կաղկանձելով, որով նոքա վարակուել էին մեծերից. մի մարդ, հիացմունքից ամեն բան մոռանալով, ուսերի վերայից հարուստ վերնազգեստը վերցնելով, ողորմածութեան արցունքների տակ, ձգեց հէնց նոր ազատուած բանտարկեալի նիհարացած կիսամերկ մարմնի վերայ:

Դէպի նա նախկին զզուանքի յետքերը այլևս չը մնացին: Ամբոխը, քամույ աւելի փոփոխական, ուրախանում էր, որ իւր խօսքը և կամքը յաղթանակեցին և ազատութիւն տուեց այդ մարդուն, և եթէ դատենք նոցա բացականչութիւններով և ուրախութեամբ լի աղաղակներով, այդ յայտնի մարդասպանը կարող էր թագաւոր ևս լինել, որը նորից դէպի իւր գահն էր բարձրանում: Ամբոխի մեծ մասը բոլորովին մոռացել էր Դատապարտուածին, որին մահն էր սպասում: Նա բաւականանում էր նորանով, որ շրջապատել էր իւր

միջոցով ազատուած մարդուն, որին մօտիկ գինետան մէջ հիւրասիրում էր գինով և կերակրով, միևնոյն ժամանակ աղաչում էր թոյլ տալ նորան ճանապարհ ձգելու դէպի տուն։

Խեղդուելով և ճմլուած, թանկագին թիկնոցի տակ, որպիսին ընծայ ընդունեց մարդասէր անծանօթից, Բարաբբան աջ և ձախ էր նայում, հնարք մտածելով այդ զարմացման արմկալի ցոյցից ազատուելու համար, որոնք վերջ ի վերջոյ նորան համբերութիւնից հանում էին։ Նա ինքը ոչ մի մխիթարութիւն չէր զգում։ Նա ընկերների գինը բոլորից լաւ էր ճանաչում։ Չափից դուրս դառնացած, մռայլ և անհամբեր աչքերով, նա որոնում էր մէկին, որը, նա զգում էր, կարող էր այդ տեղ լինել,—մի անձնաւորութիւն, որը նորա համար դրախտի մարմնացումն էր։ Բայց նորան իւր ուզածին չը յաջողուեց գտնել, որին այնքան փնտռում էր, և անյաջողութեան համար չարացած, նա ուշադրութիւն չէր դարձնում զանազան նորութիւնների և բամբասանքների վերայ, որոնցով հիւրասիրում էին նորան։

Յանկարծ մի նոր բացականչութիւն տարածուեց.

—Նայեցէ՛ք։ Նորան ծեծում են։

Ինչպէս դէպի եզերքը թափւող ծովային ալիք, ամբոխը բնազդմամբ և ընկերակցութեամբ առաջ նետուեց, ուժով դէպի ատեանը մօտենալով։ Մատերի վերայ կանգնելով և պարանոցները լարելով, նոքա աշխատում էին ուրիշների ուսերի վերայից տեսնել՝ թէ ինչ է կատարւում. տղամարդիկ բարձրացնում էին փոքրիկ երեխաներին. ոմանք, աւելի ևս կանայք, ցաւակցութեամբ և կարեկցութեամբ, խղճի խայթից, բացականչում էին, բայց ընդհանրապէս լարուած սպասողութեան զոհ տրամադրութիւնը բռնել էր ամբոխին։

Բարաբբան ամբոխի խիտ հրելուց առաջ ձգուելով, նորից ուղիղ ցանկապատի մօտ գտնուեց,—և քանի որ նա հասակով բարձր էր, ուրեմն նորան դիւրին էր բոլոր անցքին նայելը։

—Անաստուածնե՛ր.—շշնջաց նա։—Շնե՛ր։ Սատանանե՛ր։ Խփե՛լ անղէն մի մարդի։ Ո՜հ, սուր քաջագործութիւն։

Ու վշտալի ակնարկով և սրտի բարձր տրոփիւնով նա շարունակեց նայել։

Ատեանը այժմ միմիայն հռովմէական զինուորներով էր բռնուած, քանի որ նոքա թիւը աւելացրել էին՝ օգնութիւն ցոյց տալու համար անխիղճ, գազանային գործողութեան մէջ։ Մերկ սրերի և կացինների շրջանի մէջ կանգնած էր Նազովրեցին, հնազանդութեամբ տանելով մարդկանց կոպիտ հրոցը և հարուածները,

որոնք նորա վերայից վերնազգեստներ էին պոկոտում։ Սպան, մինչ այդ, տուեց Պիղատոսին մտրակը, որը շինուած էր պարանի երկար կապկպուած հանգոյցներից, որոնք սուր երկաթի մեխերով էին վերջանում։ Կառավարչի պարտականութիւնների մէկն էլ կայանում էր նորա մէջ, որ սեփհական ձեռքերով պիտի պատժէր դատապարտուած յանցաւորին,—բայց այդ անբաղդ մարդը, որի վերայ այժմ այդ զարհուրելի աշխատանքն էր ընկել, ամբողջ մարմնով դողում էր, և նա, գազանային տանջանքի գործիքը հեռացնելով, գլխով բացասական նշան արաւ։ Զինուորները սպասում էին, նայելով նորա վերայ անհասկացողութեամբ։ Նազարէթ քաղաքի Մարդը նոյնպէս ըսպասում էր նախկին խոնարհութեամբ և հանդարտութեամբ։ Արեգակի լոյսը խաղում էր նորա մերկացրած բազուկների և շլացուցիչ սպիտակութեամբ ու հրաշալի ձևով ձեռքերի վերայ։ Նա սպասում էր, և խորունկ նուրբ կարեկցութեամբ նայում էր իւր անբաղդ դահիճի վերայ։

Կայիափան և նորա աները իրար մէջ դժգոհութեան ակնարկներ փոխեցին։

—Դու դարձեալ ուշացնում ես դատավճռի կատարումն, Պիղատո՛ս.—ասաց քահանայապետը գոռոզութեամբ։—Ժամանակը թանկ է։ Կատարի՛ր, վերջապէս, քո պարտականութիւնդ. խփի՛ր…

VI.

Իսկ Պիղատոսը դեռ ևս չէր վստահանում, իւր շուրջը պղտոր նայուածք ձգելով։ Նորա երեսը գունատ էր, շրթունքները սեղմուած և նորա ամբողջ բարձր իրանը թանկագին զգեստների տակ, մեռելի նման սառած և անկենդան էր երեւում։ Ո՜հ, եթէ նորա սրտի միջի այդ ցաւը դեռ ևս զօրեղանար, որ կորցնելով գիտակցութիւնը, նա ազատուած լինէր այդ կայսերական հանդարտութիւնը և մնացմնացած համբերութիւնը մտրակելու սարսափից։ Բայց կեանքը և գիտակցութիւնը, թէպէտ և նորան խիստ տանջանքներ էին պատճառում, այնուամենայնիւ չէին ձգում նորան անգիտակցութեան մէջ, և ժողովուրդը, որին կառավարում էր նա, պահանջում էր նորանից, որ իւր պարտականութիւնները լիովին կատարէ։ Նա մեքենայաբար լարեց ձեռքը և մտրակը խլելով, սայթաքելով և ցած ձգած աչքերով դէպի Դատապարտուածը յառաջացաւ…

Զինուորները, չը նայելով Պիղատոսի դիմադրութեան, որ

պէտք է կապել նորան, ով ընդդիմութիւն չէ ցոյց տալիս, այնու, ամենայնիւ բանտարկեալի ձեռքերը չուանով կապեցին այն վախի ազդեցութեան տակ՝ թէ մի գուցէ նա հարուածներից պաշտպանուել սկսէ։

Այդ անտեղի և անարժան կապանքներին Պիղատոսը նայում էր դառնութեամբ և անուժ բարկութեամբ։ Նա իշխանութիւն չունէր ոչնչացնելու կամ մեղմացնելու օրէնքը. նա անբաղդ գործիք էր ճակատագրի և խոր զզուանքով դէպի իր անձնաւորութիւնը և դէպի այն, ինչ պարտական էր կատարելու, նա խփեց աչքերը... և խարազանը բարձրացրեց։

Մտրակը ծանր և այրող շչումով ընկաւ քնքոյշ մարմնի վերայ, և՛ դարձեալ բարձրացաւ, և՛ նորից ընկաւ... պայծառ և անարատ արիւնը դուրս ցայտեց երկաթէ մեխերի տակից և փայլուն կաթիլներով սրսկուեց մարմարեայ յատակի վերայ...

Բայց Աստուածային Նահատակի շրթունքները ոչ մի հնչիւն և ցաւի հառաչանք չը հանեցին։ Ոչ մի մարգարէական ձայն չը բարձրացաւ, որ հռչակէ ճշմարտութիւնը։ «Բայց Նա վիրաւորեցաւ վասն մեղաց մերոց. և պատժեցաւ վասն մերոց անօրէնութեանց. խրատ խաղաղութեան մերոյ 'ի Նմա. եւ Նորա վիրօքն բժշկեցաք»*)։ Այդ ժամանակ տարօրինակ, անբացատրելի լռութիւնը տիրում էր ամբոխի վերայ, որը նայում էր հեռուից մէկը միւսին դուրս հրելով։ Ժողովուրդը հետաքրքրութեամբ հետևում էր պատժի կատարման վերայ. բայց՝ վերջապէս, երբ սուր, կոշտ երկաթի մեխը խրուեց Կալանաւորի ոսկեհուռ մազերի մէջ և դուրս կորզեց գոցա, որոնք ամբողջովին սրսկուած էին թարմ արիւնով, ամբոխի միջից մի աղջիկ սկսեց թախծութեամբ հեծկլտալ։ Կանացի լացի ձայնը կորզեց Պիղատոսին իր զարհուրելի գործից. նա, տենդային փայլը այտերի վերայ, նայեց կատաղի աչքերով և խելագար ժպիտը բերանին—ու կանգ առաւ։

Վաշխառու Զաքարիան, կաղալով, առաջ ցցուեց, այլայլուած դրութեան մէջ իր թանկագին ձեռնափայտը շարժելով։

—Դարձեա՛լ, դարձեա՛լ, ամո՛ւր, բարեծնունդ կառավարիչ.—

*) Մարգարէութիւն Եսայեայ՝—ԾԳ, 5. Հանճարեղ հեղինակուհին մէջ է բերում Եսայի մարգարէութիւնից, բայց ամփոփ. մենք համարձակուեցանք բնագիրը արտագրել Աստուածաշունչ սուրբ Մատեանից, որպէս զի լիուլի ըմբռնուի գորան դիմելու նպատակը։

Ծանօթ. հայ—թարգմանչի։

բացականչեց նա խիստ և քայքայուած ձայնով։ Դարձեա՛լ, դարձեա՛լ, նոր ուժո՛վ։ Քո հարուածները կարող են միմիայն երեխայի վնասե՛լ։ Նա խփեց ուրիշներին—թո՛ղ այժմ ինքը ևս մտրակի ճաշակը փորձէ՛։ Նա դեռ ոչ մի անգամ չէ ճչացե՛լ։ Նա դեռ ևս ցաւ չէ՛ զգում։ Նորից խփի՛ր, գերագոյն Պիղատոս, ճշմարտութիւնը ա՛յդ է պահանջում։ Նա ինձ մտրակեց, ծերունի ազնիւ մարդիս, դորա համար նա նոյնը պիտի փորձէ իր մարմնու վերայ, իսկ եթէ ո՛չ, նա իր մեղքերը չը զղջացած կը մեռնէ։ Դարձեալ, դարձեալ, բարեշնորհ կառավարիչ, միմիայն թո՛ղ քո հարուածները աւելի ուժեղ լինի՛ն։

Մինչ նա կը խօսէր կատաղի շարժմունքներ գործելով, Նորա ձեռքի փայտը յանկարծ սողաց դողդոջ ձեռքերից և ընկաւ մարմարեայ յատակի վերայ. մի մեծկակ մարգարիտ դուրս թռչեց ընդելուզուածքից և հեռու գլորուելով, կորչեց անյայտութեան մէջ։ Յուսահատութեան զառոցով զզուելի պառաւը ծնկների վերայ ընկաւ, և բարձր ձայնով հեկեկալով, սկսեց ման գալ, յատակի վերայ լափլափելով իւր ճանկերի նմանող դեղին ձեռքերով և անշարժ զինուորներին աղաչելով—օգնել նորան կորուստը գտնելու։

Մի քանի դէմքերի վերայ տխուր ժպիտ երևաց, բայց ոչ մի մարդ չը շարժուեց։ Հառաչելով և հեծկլտալով, ծեր վաշխառուն սկսեց սողալ չորքոտանու նման դատաստանատան ամբողջ յատակի վերայ; ուշադրութեամբ գետնի վերայ նայելով և իր աղտոտ ձեռքը ամեն մի խոռոչ լարելով, որտեղ կարելի էր կարծիք տանել, թէ կը ընկնէ մարգարիտը։ Այդ դրութեան մէջ նա բոլորովին կորցրել էր մարդկային պատկերը. և նման էր տձև վայրենի անասունի։ Նորա համար այդ կորուստը անմոռանալի էր,—և այդ դէպքի վերաբերութեամբ կատաղութեան ու վշտի ցաւից, նա բոլորովին մոռացաւ Նազովրեցուց վրէժխնդիր լինելու ցանկութիւնը։

Պիղատոսը, հետևելով նորան և նորա երեխայական լացը լսելով, այնպէս գոհ էր այդ անբաղդութեամբ, որ նորա սիրտը անգամ թեթևացաւ և, հնչու ծիծաղելով ամենաանսպասելի քքիջով, նա հեռու ձգեց իրենից արիւնոտած մտրակը, հանդարտած մարդու տեսքով, իր անդուր պարտականութիւնը վերջացրած։

Բայց Կայիափան բաւականութիւն չէր ստացել։

—Դու դատապարտուած յանցաւորին ամենաաննշան գանակոծութեամբ վարձատրեցիր, Պիղատոս,—ասաց նա։—Ինչո՞ւ համար դու այդքան շուտ ձգեցիր խարազանը։

Պիղատոսի աչքերը չար կրակով փայլատակեցին։

—Մի՛ գրգռիր ինձ չափից դուրս, ոխակալ քահանա.—աղեր-սեց նա այլայլուած:—Ես իմ անիծեալ գործը վերջացրի: Արեցէք դուք մնացածը:

Կայիափան մի քանի քայլ յետ նահանջեց, սաստիկ շփոթու-թեան մէջ: Նորա դէմքի արտայայտութեան մէջ իրաւացի զարհու-րեցնող մի ինչ որ բան կար.—մութ, սարսափելի թախիծը, որը մի րոպէաչափ ստիպեց քահանայապետին անգամ՝ կորցնել իր մշտա-կան սառնարիւնութիւնը և հանդարտութիւնը:

Մի րոպէաչափ տատանումից յետոյ, նա նորից տիրեց իրեն և ցենտուրիօնին նշան արաւ, որը նշանակում էր թէ՝ մտրակելու տեսարանը վերջացաւ և կարելի է ձեռնարկել հետևեալ գործողու-թեանը:

Սինեդրիօնի բոլոր անդամները, նոցա թւում աւագները ևս և դպիրները, թողեցին իրենց տեղերը և, խոյս գլուխ տալով կա-ռավարչին, զոյգ զոյգ դէպի յածրի դահլիճը դիմեցին, որը կոչւում էր պրետօրիում *):

Այդտեղ նոյնպէս զինուորները հաւաքուեցին, որ տանեն կամ հրեն դատապարտեալ Նազովրեցուն: Դանդաղ և արժանաւորութեամբ շարժելով, քահանայական թափորը ծածկուեց, և Պիղատոսը միայ-նակ մնաց, իր տեղում մեխուած մի ինչ որ անհասկանալի ուժով: Պահուելով ամբոխից միապաղաղ մարմարիօն կոթողի յետև, նա յենուեց այդ սառն հենարանին ծայրահեղ յոգնածութեան տակ, խորտակուած հոգւով և մարմնով, դառնացութիւնից և անհասկա-նալի, իրեն չը թողնող, վշտից ընկճուելով: Իր մթնած յիշողու-թեան մէջ նա աշխատեց գտնել այն զարհուրելի զգացմունքի պատճառը, որը զգում էր նա. Թւում էր նորան, որ այն մահուան պատիժը, որ պիտի ի կատար ածուէր այդ օրը իսկ՝ Երուսաղէմի մէջ, ամենամեծ եղեռնագործութիւնն էր, որը երբ և իցէ կարող էր կատարուել ամբո՛ղջ աշխարհիս վերայ: Նա կանգ առաւ նոյն իսկ իւր համար խճճուած այդ հանելուկի դէմ՝—նա չը կարողացաւ իրեն իսկ բացատրել իւր մէջ աւելացող զզուանքի պատճառը: Իւր կնոջ պատուէրը նոյնպէս նորան շփոթեցրեց, և նա նորից փաթեթը հա-նելով, տարօրինակ յղումը կարդաց.

«Այդ Արդարին ոչինչ մի՛ անիր, քանի որ ես այժմ երազի մէջ Նորա պատճառով շատ տանջուեցի»:

Ծածկամի՛տ խօսքեր: Եւ ինչ են նշանակում նոքա: Հուստի-

*) Պրետօրիում—պրետօրիա՝—դատաստանական տեղ հին Հռովմում:

ցիան, հպարտ, անվախ հռովմայեցի գեղեցկուհին,—ինչո՞ւ պիտի տանջուէր:—Երազ է՛ր տեսել: Նա, ով ոչ մի ժամանակ իւր երազի մէջ ոչ ոք չէր տեսել, որը բոլոր նախազգուշակութիւնների վերայ ծիծաղում էր և բոլոր աստուածներին կատակում: Նա ոչ մի երևա-կայութիւն չունէր, նա՝ մինչև անգամ որոշեալ սահմանի չար էր և անողորմ, որպիսին հռովմայեցիք կոչում էին—հերոսական լինել:

Նա հանդստութեամբ և մի տեսակ զոհունակութեամբ էր նա-յում ամենասարսափելի գլադիատօրական *) մարտնչումներին և ա-մեն մի գազանային տեսարաններին, որոնք Հռովմում տաքացի էին: Երբ նա ընդամենը տասն և երկու տարեկան էր, սառնասրտու-թեամբ հետևում էր այն տեսարանին, որտեղ մի որևէ թշուառ գե-րու վերայից կաշին պոկում էին 'ի պատիժ նորա գողութեան մէջ բռնուելուն: Ուրեմն նորա ներկայիս բողոքը՝ մի որևէ յանցաւորի մահուամբ պատժուելու դէմ, բաւականին զգալի էր և ուշադրու-թիւնից անվրիպելի.

«Այդ Արդարին ոչինչ մի անիր»:

Ի՞նչ պիտի անէր նա այդ ժամուն նոյն Արդարին տեսնելով: Պիղատոսը՝ վախկոտութեամբ նայելով՝ դողդողաց և ամբողջ մար-մնով սառչեց այն տեսարանի զարհուրանքից, որը անցաւ. Նա ան-գամ կեանքը կը տար, որպէսզի այդ գազանութեան առաջն առնուէր —բայց նա գիտէ, որ այդ փորձը ապարդիւն պիտի անցնէր:

Կոյր ամբոխը հռչակում էր իւր կամքը,—և այդ կամքը կատար-ուած պիտի լինէր:

Չը կար ո՛չ մի պաշտպան այն ճշմարտութեան համար, որը թոթափուած էր ամբո՛ղջ աշխարհի ստով: Ո՛չ մի ժամանակ չէ ե-ղել այդ, բայց և դժուա՛ր թէ մի որևէ ժամանակ լինէ:

Ամբոխի նախկին խոր լռութիւնը կատաղի գոռոցների փոխուեց. ամբողջ օդը ճիչերով լցուեց,—նման յանկարծակի ազատուած վայ-րենի գազանների խուլ մռնչոցների:

Զինուորները այլ ևս չը զսպելով քահանայական ավտօրիտէ-տից**) և նոցա ներկայութիւնից ու գրգռուած ամբոխի տրտունջից,

*) Գլադիատօրական—գլադիատօր՝—Հին Հռովմում այսպէս կոչւում էին հրա-պարակական ըմբիշները, որոնք մարտնչում էին կատաղի գազանների հետ:

**) Ավտօրիտետ՝—իշխանութիւն, առանձին կշիռ և նշանակութիւն, որ ունէ մի յայտնի մարդ կամ նորա կարծիքը:

իրենց հրացաններին*) ծայրերով կոպտութեամբ հրում էին Կալանաւորին դէպի առաջ այն յոյսով, թէ նա ոտքերի տակի մակերևոյթը կորցնելով, դէպի պրետօրիում տանող սանդուղքներից դէպի ցած պիտի գահավիժէ:

Նոցա վայրենի ընդհարումները ոչնչով կոչուած չէին, քանի որ Աստուածային Մարտիրոսը ընդդիմութիւն չէր ցոյց տալիս, այլ հանգստութեամբ գնում էր: Նորա դեռ մերկացրած բազուկներից արիւն էր հոսում: Նորա ձեռքերը ամրութեամբ կապկպուած էին,—բայց ո՛չ ցաւը և ո՛չ վէրքերը կարող եղան փոխելու Նորա բրանի վսեմութիւնը ու քայլերի աչգութիւնը. իսկ հրաշալի ճառագայթացօղ աչերը արտայայտում էին գաղտնի մտածողութեան և գերմարդկային գիտութեան միևնոյն աննման պատկերը:

Նեղելով Նորան ամեն կողմից, չարագործ պահապանները ծաղր ու ծանակ էին անում Նորա վերայ, Նորա ականջների մէջ անպատկառելի խօսքեր և անպարկեշտ երգերի կտորներ հնչելով:

Նոցանից մէկը, նստարանի վերայ մէկից մոռացուած կարմիր վերարկուն խլելով, ձգեց այդ Կապեալի վիրաւորուած ուսերի վերայ. ճոխ քղամիդը հեռու ձգուելով յատակի վերայ, կայսերական խոր ծալքեր էր կազմում: Նա, ով այդպիսի զարդարանք մտածեց, բարձր ձայնով կոչեց, Կալանաւորին նիզակով ցոյց տալով:

—Ուրախացի՛ր, Թագաւոր Հրէից:

Ծափահարութիւններ և հաւանութեան աղաղակներ հետևեցին այդ կատակելի յարձակմունքին: Միմիայն Բարաբբան այնքան խստասիրտ ամբոխի միջից սկսեց բողոքել.

—Ամաչեցէ՛ք. կոչեց նա: — Ամօթ արեցէ՛ք, հռովմայեցիք: Պատկառանք զգացէ՛ք, Երուսաղէմի մարդիկ: Ինչո՞ւ պիտի ծիծաղել թշուառ Դատապարտուածի վերայ:

Բայց նորա ձայնը կորչեց ընդհանուր աղմուկի մէջ, իսկ նոքա, որոնք լսեցին, անգամ ուշադրութիւն չը դարձրեցին, և շուտով մի նոր յաղթական ձայն հնչեց,—նոր խայտառակ կատակ գրաւեց ամբոխին:—«Արքային պսակեցէ՛ք»:

Միւս զինուորը առաջինի օրինակին հետևելով, ցանկապատի

*) Ռուսերէն՝ «ружей»,—գուցէ տպագրական սխալ է «оружіе» (զէնք) բառի հետ շփոթուած. կամ հրացան գործ է ածուած 'ի հնումն զորան փոխարինող զէնքի նշանակութեամբ և փոխաբերական մտքով. այդպիսի ոճ գործածելու նպատակն է նախկին տեսարանը ներկայումս աւելի կենդանի պատկերացնելու:

Հայ-թարգմ.

վերայից դէպի կից այգին թռչեց, և նորա պատի տակից սողարմատ վարդի երեք հատ փշերով պատատ ճղներ կտրելով ու նոցանից ծաղիկները և տերևները փրցնելով, կռացրեց նոցա այնպէս, որ պսակի ձև ստացան, ու մօտեցաւ լռելայն Քրիստոսին: Նորա ընկերները խրախուսում էին նորան աղմկալի բացականչութիւններով ու ծիծաղով. «Յնծա՛, Թագաւոր Հրէից»... կոչեց նա, Աստուածային Կապեալի գլուխը փշեայ պսակով ծածկելով ու ամուր սեղմելով դէպի յօնքերը, այնպէս՝ որ արիւնը խիտ կաթիլներով յանկարծակի դուրս ցայտեց:—«Ուրա՛խ լեր: Ուրա՛խ լեր»...

Եւ նա սքանչելի, անմռունչ Դէմքին երկաթէ թաթպանով խփեց.

—Գալխոն Թագաւորի՛ն.—բղաւեց մի փոքրիկ երեխայ,—դուրս գալով ամբոխի միջից և օդի մէջ յաղթական ձևով մի թեթև եղէգն ճօճելով:

Զինուորները դարձեալ ծիծաղեցին և՝ խլելով եղէգն՝ դրեցին նորան Կապեալի կաշկանդուած ձեռքերի մէջ: Եւ վայրենի ձևականութիւններով զզուելի չարագործների յանդուգն խումբը դժոխային բացականչութիւններով ներս սողաց և ծնկների վերայ ընկաւ: Նոցա աղտոտ երեսները լկտիութեամբ դէպի վեր բարձրացան և ձեռքերը տարածուեցին, որպէս թէ երկրպագութեան ձևով, միևնոյն աւետումը կրկնելով.

— Յնծա՛, Թագաւոր Հրէից...

Բայց նոյն յաջողութիւնը ունեցան, ինչ կը ունենային, եթէ արևգակի վերայ յարձակուէին կամ աստղերին անպատուէին:

Ծածկախորհրդութեամբ վշտի այդ Մարդը հեռու էր նոցանից իւր զգացմունքներով և Նորա ծայրահեղ գեղեցկութեան ծալուածքով շուրթերը դեռ ես ո՛չ մի բառ, ո՛չ մի բողոք չը շշնջեցին: Այդ հանդարտիկ լռութիւնը գրգռում էր ամբոխին և կատաղեցնում.—դա ցոյց էր տալիս Նորա անվիճելի արիութիւնը, ճակատագրին հնազանդութիւնը, անխախտ հաստատամտութիւնը և համբերատարութիւնը, որը ձևակերպւում էր խոր արհամարհութեան արտայայտութեամբ դէպի ամբոխի անմիտ կատաղութիւնը:

—Նզովեա՛լ թո՛ղ լինէ Նա.—կոչեց մէկը:

—Միթէ Նա լեզու չունէ:

—Այլ ես Նա ցանկութիւն չէ՛ զգում քարոզելու:

Ստիպեցէ՛ք Նորան խօսելու:

—Խօսի՛ր, ո՛վ մարդ.—կատաղութեամբ կոչեց մի զինուոր, Նորա բազկին սրի պատեանով ամուր խփելով:—Դու շատ էիր վայլա-

բանում յանցանքի և առաքինութեան վերաբերութեամբ։ Ի՞նչպէս ես համարձակւում այժմ չը խօսելու։

Բայց ո՛չ ծաղրը և ո՛չ հարուածը չը կարողացան պատասխանելու ստիպել Թագաւորին։ Նրա չքնաղածնունդ դէմքի գծագրութիւնները նոյնը մնացին և հանդարտ։ Նորա ճառագայթափայլ աչքերը դարձեալ նոյնութեամբ հառած էին դէպի վեր, որպէս թէ հեռուի մի որևէ հրաշալի տեսարանով էին զգւում, և միմիայն արեան խիտ կաթիլները, որոնք ցայտում էին փշեայ պսակի տակից, ցոյց էին տալիս Նրա տանջանքը և ծառայում էին նիւթական կեանքի և զգայողութեան գոյացութիւնը հաստատելու համար։

—Դու՞ կաս Նրա մէջ.—աղաղակեց մէկը։

—Նա չէ ապաշխարում և ոչինչ չէ՛ զգում։

Անընդհատ շարունակւող աղմուկի ժամանակ, Պիղատոսը դեռ անբաժան կանգնած էր և միայնակ հետևում էր բոլոր անցքերին, ինչպէս մի մարդ տենդային զառանցման մէջ։ Կարծես թէ երազի մէջ, նա տեսաւ, որ փշեայ պսակով և ծիրանի—կարմիր քղամիդով Կայսերական անձնաւորութեանը կատակութեամբ հրում են և պրետօրիումի միջից զառիվայր սանդուխքներով քարշ են տալիս դէպի ներքև—արտաքին գաւիթը, և Նա՝—ինքը իրեն հաշիւ չը տալով իւր շարժուածքների մէջ՝—շտապով առաջ ընկաւ՝ այնպէս, որ կտրեց մօտեցող պահնակների ճանապարհը։ Նրա յանկարծակի ներկայութիւնը նկատելով, ցենտուրիօնը կարգ. տուաւ։ Զինուորները, նոյնպէս չփօթուած այն հանգամանքից, որ նոքա բռնուած են իրենց գազանային արարքների մէջ անձամբ Կառավարիչով, վայրկեանի մէջ գոռում-գոչումները կտրելով, հենուեցին զէնքերի վերայ։

Մի անգամ ևս, բայց վերջին անգամ այս աշխարհում, Պիղատոսը ուղիղ նայեց Դատապարտուածի վերայ։—Կապկպուած, ծեծկուած և ամբողջովին ծածկուած արիւնով, փշեայ պսակը գլխին, որի փշերը որպէս թէ ակամայ ցցուել էին Նրա քունքերին,—Նազովրեցին ընդունեց այդ վշտալից, հարցական, համարեա աղերսող ակնարկը՝—հանդարտութեամբ և քնքշութեամբ ծածկուած նայուածքով։ Իսկ Պիղատոսը զարհուրանքով և սարսափելի երկիւղի մէջ տեսաւ, որ փշեայ պսակից վերև լուսին էր տալիս դարձեալ մի պսակ—փայլուն • լոյսի, գործուած երեք ոսկեգոյն, կապտագոյն երանգներով, ճառագայթներից, որոնք, անդրադառնալով վերևում և չորս կողմը հազարաւոր կայծեր ցրուելով, այնպէս էր երևում, թէ միաւորում էին երկինքը երկրի հետ։

Ինչպէս երևաց այդտեղ նոյն ճառագայթացոլ պսակը, մինչ

*լայնացող, մինչև անվերջանալի... Ի՞նչ էր նշանակում այդ կախարդութիւնը։ Ինչպէս խեղդւողը բռնում է տաշեղի կտորից, որը լողում է ծովային ալիքների մէջ, Պիղատոսը ըմբռնեց կարմիր քղամիդը, որը ինչպէս լոյսի սիմվօլ *) պատել էր Փրկչի կայսերական իրանը, և ձգեց նորան, որպէս թէ կամենալով դէպ իրեն քաշել թէ քղամիդը և թէ Իրեն՝—Կալանաւորին։ Նորա անխօսք ցանկութիւնը կատարուեց։ Նազովրեցի Մարդը հնազանդութեամբ թոյլ տուեց նորից Իրեն տանել վերև,—պրետօրիումից դէպի դուրս տանող վերջին աստիճանի մօտ։ Այդտեղ Նա նորից երես առ երես կանգ առեց ժողոված բազմութեան առաջ, իւր տխուր մեծութեան և եղեռնագործական հրաշալիութեան ամբողջ վսեմութեամբ—և մի ակնթարթի մէջ խոր լռութիւնը թագաւորեց։ Ապա Պիղատոսը, ցաւից կտրտուող սրտով, սարսափահար և ընկճուած այդ տանջուողի և չը ընդդիմացողի մեծութեան տեսողութեամբ, կարմիր քղամիդի ծայրը թողեց որպէս թէ նա այրելիս լինէր։ «Ecce Homo» **) (Սա Մարդ է)—բացականչեց նա իւր մայրենի լեզուով, բարձրացնելով ձեռքերը դէպի երեսի ուշադրութիւն չը դարձնելով, թէ կը հասկանայ նորան թէ ո՛չ հրէից ազգը. «Ecce Homo»! (Се Человѣкъ)—(Ահա՛ Սա Մարդ է),—և ծիծաղի ու լացի կատաղի ըմբռնումն տիրեց նորան. նա ջղաձըգութեամբ զսպեց բերանը իւր թիկնոցով, որպէս թէ խեղդել էր կամենում այդ անմիտ, անզսպելի հառաչանքները և, յանկարծ դէպի մի կողմը տատանուելով, երեսի վերայ ուղղակի գետին ընկաւ՝ կատարեալ ուշաթափութեան մէջ։*

VII.

Ամբոխի մէջ սարսափի ձայնը տարածուեց. ընդհանուր խառնակութիւն առաջացաւ և ժողովուրդը մի քանի խմբերի բաժանուեց։ Ոմանք օգնութեան վազեցին դէպի կառավարիչը, միւսները դարձեալ Բարաբբային մօտեցան, իրենց ուրախութիւնը արտայայտելու նորա ազատութեան վերաբերութեամբ, բայց մեծ մասը պատ-

---

*) Սիմվօլ—նշանաբան. մի որևէ նշանակութիւն ցոյց տուող նշան։

**) «ECCE HOMO»!—«Се Человѣкъ»՝—«Սա մարդ է»—Պիղատոսի խօսքերը Փրկչի վերաբերութեամբ։

բաստում էր Աստուածային Դատապարտեալի յետևից ընկնելու, նորա մահը տեսնելու փափագով։ Որքան էլ որ քստմնեցուցիչ և անբնական չը երևէ, այնու ամենայնիւ ապրող մարդիկ ամեն ժամանակ միշտ բաւականութիւն և զարմանալի մխիթարութիւն են զգում մեռնող մարդու մահուան վերջին տանջանքը տեսնելով։ Կենդանի վկայ լինել տանջուող մահապարտի վերջին ակամայ հառաչքին՝ շատերի համար մեծ մխիթարութիւն է կազմում։ Եւ հէնց այդ օրը այդպիսիների համար անսովոր և զարհուրելի տեսարան էր պատրաստուած. ձայն էր պտտում, որ բացի գալիլիացի Մարգարէն, մահուան պատիժ պիտի կրէին երկու յայտնի աւազակներ ես։ Այդ տեսակ տեսարանի համար արժէր և սպասել։

Տղամարդկանց, կանանց և երեխաների ահագին խայտաճամուկ խումբը համբերութեամբ յանցաւորների մահուան էր սպասում. հազարաւոր ձայների չը կտրուող խօսակցութիւնը այնպէս էր հնչում, ինչպէս անհամար մեղուների խոխոջիւնը, որը երբեմն փոխւում էր ոտքերի կոխկրտոցի ձայնի, երգեցողութեան և սուլոցների։

Հռովմէական զինուորները, չափից դուրս տխրած Պիղատոսի յանկարծակի և անսպասելի ուժաթափութեամբ, Նոցա մտածողութեամբ, Նազովրեցու կախարդութեան շնորհիւ ու գաղտնի ուժի ազդեցութեամբ, այլևս ծաղրելու տրամադրութիւն չունէին։ Նորա վերայից կարմիր քղանցքը խլելով, նոքա Նորա վերայ Նորից իւր նախկին հագուստը ձգեցին, և տխուր, անքարեցակամ ոտնարկներով ճանապարհ գնելով, խիստ պահապանների հսկողութեան տակ՝ դէպի դուրս տարան։

Լոյս և անտանելի շոգ առաւօտը բացուեց. արտաքին գաւթում արծաթաշիթ ցայտով խփում էր շատրուանը, որը՝ կարծես թէ՝ զովացնել էր կամենում երկնքի հրային կապուտակութիւնը։ Զինուորների ամբողջ պահնակը կանգ առաւ, մինչ ցենտուրիօնը կը խօսէր դահճապետի հետ, որի պարտականութիւնն էր յանցաւորների համար խաչեր գնել և նոցա գամել այդ խաչերին։

Այդ օրը երեք խաչի պահանջ կար, և նա կասկածում էր, կը գտնուէ արդեօք նորա պահեստի մէջ բաւարար բարձր և ամուր մի խաչ որը դիմանալ կարողանայ Կալանաւորի մեծատեսիլ կազմուածքին, որին ցոյց տուին նորան։

—Ճշմարի՛տ որ։ Ես ցաւում եմ, որ Նա դատապարտուած է. —շշնջաց նա կարեկցական հառաչք արձակելով կոպիտ ձայնի միջից։—Նա վսեմաշուք տեսք ունէ, և Նորան այսպիսի խայտառակութեամբ սպանելը անպայման սխալմունքը. Պետրօնիա, հաւատա ինձ,

դու ինքդ կը համոզուես այդ բանի մէջ։ Միթէ դու չես յիշում, թէ ինչպէս քո ընկերոջ, որը ապրում էր Կափառնայում, մի կաթուածահար ծառայ ունէր—և այս մարդը բժշկեց նորան, անգամ նորա տանը չը լինելով։ Ես քեզ ասում եմ, լաւ չէ դորան սպանելը։ Եւ այժմ, ինչպէս տեսնում եմ ես, դու մռայլ դէմք ունիս,—դու ես չես համակրում դատավճիռը։

Պետրօնիան աչքերը ցած ձգեց և իւր մերկացրած զէնքի ծայրով՝ հանդարտութեամբ նկարել սկսեց գետնի վերայ։

—Նորան մեր Կառավարիչը չը դատապարտեց,—ասաց նա հանդարտ ձայնով,—և այդ հիման վերայ Հռովմը պատասխանատու չէ։ Պիղատոսը կամենում էր ազատելու Նորան,—բայց հրէաները մահուան պատիժ ուզեցի՛ն։

— Այո՜, այո՛.—շշնջաց դահիճը, որը անձամբ Ապուլիայի կողմերից էր.—հրէանե՛րը, հրէանե՛րը... Եուպիտերին [1] միայն կարող է յայտնի լինել՝ թէ որքան մութ և արիւնալից են նոցա պատմութիւնները. ասում են, որ նոքա սպանում էին իրենց սեփհական երեխաներին, որպէս զի հանդստացնեն արիւնածարաւ աստուածութիւնը [2]։ Իսկ գեր քահանաները ամենապարարտ գառներին իրենց տուն էին քարշ տալիս, ձևացնելով, որ նոցա Աստուածը այդպիսի ագահ ախորժակ ունէ. իսկ նոքա, որոնց մօտ շատ է անարդարութեամբ վաստակած ոսկին, պնդում են, որ բարձր նշանակուած վաշխառուական տոկոսները՝ իսկապէս Աստուծոյ օրհնութիւնն են իրեն ճշմարտասիրութեան համար։ Բայց այս Կալանաւորը չէ՞ թէ հրէայ չէ։

Ցենտուրիօնը տխրութեամբ Դատապարտուածի վերայ նայեց, որը փաթաթուած էր Նորից իւր սպիտակ հագուստներով, բայց՝ ինչպէս առաջ՝ փշեայ պսակով։ Ծպիտը խաղում էր Նորա դէմքի վերայ, իսկ աչերով Նա հետևում էր թիթեռնիկի կամակոր թռթռումներին, որը մերթ մօտենում էր շատրուանին մօտ, այնպէս, որ արծաթային շիթերը փայլում էին Նորա թևերի վերայ, կամ բարձրանում էր օդի մէջ, որպէս թէ արեգակի ճառագայթի հետ խաղալով։ Իսկապէս այդպէս պիտի լինէր Նորա արտայայտութիւնը, երբ Նա բացականչում էր. «Հայեցարո՛ւք ի շուշանն վայրենի՝ ո՛րպէս աճէ. ոչ ջանայ եւ ոչ

---

1) Եուպիտեր—Լատին. Զեվս, զեվս՝ յոյների և հռովմայեցիների գլխաւոր չ'աստուածը. Սատուրնի և Ռեի որդին։

2) Ակնարկում է Յեփթայէի ուխտը և աղջկան զոհելը։ Գիրք դատաւորաց Գլ. 11, 30—40.

Հայ թարգմանիչ։

նիլթէ. ասե՛մ ձեզ, զի եւ ոչ Սողոմոն յամենայն ի փառսն իւրում զգեցաւ իբրեւ զմի ի նոցանէ»։

— Նա հրէայ չէ, այդ չէ կարող լինել,—նորից կրկնեց դահիճը։

— Ո՛չ, նա հրէայ է.—պատասխանեց Պետրօնիան հառանչանքով։—Կամ, ծայրահեղ դէպքում, այդպէս են ասում։ Նա խուլ Նազարէթ քաղաքից է,—այնտեղի հիւսն Յովսէփի որդին, և նորա Մայրը, Մարիամը, այժմ այստեղ է, կամ այստեղ էր մօտ ժամանակներս, միւս կանանց հետ։

Դահիճը կամակորութեամբ գլուխը շարժեց։

— Դու չես կարող ստիպել ինձ դորան հաւատալու,—ասաց նա։—Նորա դէմքը օտարականի նման է. այդպիսի անձնաւորութիւն չը կայ ամբողջ ամբոխի մէջ,—նա յոյն չէ, հռովմայեցի ես չէ, և եգիպտացի չէ, և թէպէտ ես չեմ կարող որոշել նորա ազգութիւնը, բայց պատրաստ եմ երդուելու, որ նա հրէայ չէ՛։ Իսկ ինչ վերաբերում է խաչին, դորա համար դուք պէտք է սպասէք, մինչ ես ամենամուրը կը ջոկեմ, որովհետև նորա վերայ՝ ճշմարիտ որ՝ պիտի մի իսկական հերկուլէս *) բարձրանայ։ Մի՞թէ դու չես տեսնում նա որպիսի բարձր հասակ ունէ, ինչպիսի մկանունքների տէր է և ինչ տեսակ ուժ է շնչում նորա ամբողջ Պատկերը։ Եթէ ես նորա տեղ լինէի,—մի հարուածով ամբողջ պահնակախումբը կը ոչնչացնէ՛ի։

Եւ իւր սեփհական կատակի վերայ ծիծաղելով, նա գնաց, իւր հետ երեք թէ չորս զինուորներ վերցնելով։

Միւս զինուորները մնացին Նազովրեցու մօտ։ Իւրաքանչիւր բոպէի մէջ ամբոխը գնալով աւելանում էր, որը այժմ տարածուած էր հեռու՝ փողոցի ամբողջ երկարութեամբ։ Նոցա տրամադրութիւնը աւելի անհամբեր և լարուած էր, թէպէտ ոմանք հիասթափուած էին—նոքա խաբուած էին իրենց յոյսի մէջ։ Ո՛չ մի մխիթարութիւն չը կար նայելու այն մարդու մահուան պատժին, որը ինքը իրնով չէր հետաքրքրում և հանդարտութեամբ սպասում էր իւր ճակատագրին համարեա բաղդաւոր մարդու դէմքով։ Բոպէները անցնում էին, իսկ խաչը դեռ ես չը կար։

Այդ դանդաղկոտութիւնը դեռ ես կարող էր շարունակուել, ուստի շատերը հեռացան, որպէսզի իրենց ծարաւը յագեցնեն։ Նոցա թւումն էր և Բարաբբան։ Նորա նախկին ընկերներից ոմանք առաջարկեցին նորան իրենց հետ գնալու և քարշ տանին հարևան գինե-

*) Հերակլ—հերկուլէս,—որդի Զեւսի և Ալկմենի, զօրեղագոյնների յայտնի հերոս. փոխաբերական մտքով՝ ամենաուժեղ։

տունը, որտեղ նոքա նորա արեւշատութեան համար բաժակ բարձրացրին։

Բարաբբան նոցա հետ սկսեց ուտել և խմել. և քանի որ նա համարեա սովամահ էր լինում, այդ պատճառով միաժամանակ մըտածեց միմիայն իւր ստամոքսի բաւարարութեան համար։ Իսկ ապա, իրենից մնացող բաժինը հեռացնելով, շարունակեց մռայլութեամբ նստել, ընդհանուրի ուրախութեան չը մասնակցելով։

— Քեզ ինչ պատահեց, բարեկամ.—հարցրեց վերջապէս նոցանից մէկը։—Դու սատակող շան նման տխուր ե՛ս։ Ո՞ւր է քո նախկին ուրախ բնաւորութիւնը։

— Կորչե՛ց.—խստութեամբ պատասխանեց Բարաբբան։ Նորա մթնագոյն աչքերը աւելի ես մթնեցին և լուրջ տպաւորութիւն ստացան։—Նախկին օրերում ես ուրախ էի, չը գիտենալով թէ ինչու։ Այժմ ես տխուր եմ, նոյնպէս չը գիտենալով տխրութեանս պատճառը։ Ես երկար տանջուեցի... Ես յոգնած եմ... և... և... ինձ թւում է, որ այն Նազովրեցուն սպանելը մեծ եղեռնագործութի՛ւն է...

Նորա խօսքերը ծիծաղով ընդունուեցին։—Ճիշտ որ, Բարաբբա,—գոռաց մի մարդ, իւր անագեայ բաժակը սեղանին խփելով՝ ի նշան, որ նա կամենում էր նորից լցնելու,—դու բանտից թոյլ կնոջ զգացմունքներով ես դուրս եկե՛լ։ Դու—գայլ էիր, իսկ այժմ յանկարծ փոխուած ես գառան։ Ո՞վ կը սպասէր դորա՞ն։ Դու, որ այնպիսի համարձակութեամբ ստախօս Գաբրիէլի անխը ցցեցիր դանակդ, յանկարծ մի մարդու վերայ ես լաց լինում, որին չես էլ ճանաչում և որը՝ միևնոյն ժամանակ՝ լիովին արժանի՛ է մահուան պատժի։

— Նա մահուան արժանի չէ,—շշնջաց Բարաբբան,—այդ մարդը անմե՛ղ է։

Նա կանգ առաւ և իւր տեղից ակամայ վեր թռչեց։ Նորա ընկերները խմելը թողնելով, ուշադրութեամբ նորան էին հետամուտ լինում։

— Ես ձեզ՝ բոլորիդ էլ՝ ասում եմ,—հաստատուն ձայնով շարունակեց նա,—այն երիտասարդ Մարգարէի մէջ ո՛չ մի մեղք չը կայ։ Նա հէնց ձեր պատմուածներով՝ շատ բարի գործքեր է արել, և ես, մի քիչ առաջ, նորա վերայ նայելով, տեսայ... տեսայ...

Նա կանգ առաւ—տարօրինակ սարսափը պատկերացաւ նորա դէմքի վերայ, և նա դողաց։

— Ի՞նչ.—հարցրեցին նորանից ընկերակիցները միաձայն։—Անշուշտ, դու ես չար ոգւով բռնուած ե՛ս։ Ի՞նչ տեսար դու։

— Ոչի՛նչ.—և Բարաբբան դառն ժպիտով շուռ եկաւ։—Ոչ մի

այնպիսի բան, որ դուք կարող լինէիք տեսնելու, կամ ցանկանայիք տեսնել։

Բոլորը նորա վերայ նայեցին ակնյայտնի զարմանքով։ Միթէ այդ երեւակայող, մտածկոտ և մռայլ մարդը Բարաբբան էր։ Արդեօք այդ նոյն կատաղի աւազակն է, որը, շատ ժամանակ չէ անցել, ինչ իւր նմանների գլուխը անցած, խառնակեց ժողովուրդը և ամբողջ Երուսաղէմի խաղաղութիւնը խանգարեց։

Եւ մինչ նոքա այդպէս կը մտածէին, հանդարտ մեղեդիական, բայց երգիծաբանող մի ձայն, յանկարծ, դէպի նոցա դարձաւ։

— Ներեցէք ինձ պարոններ, որ ձեր ուրախ խօսակցութիւնը ընդհատում եմ, բայց ես կը կամենայի յարգանքս արտայայտել նորան, որին հարկաւոր է, և խոնարհութեամբ շնորհաւորել ազգի ընտրեալին։ Մեծ են Իսրայէլի որդիքը, որոնք սփռուած են բոլոր գաւառների ընթացքում՝ միակ ընտրուած՝ ամենակարող Աստուծով, որը ակնյայտնի է, բոլորովին չէ հետաքրքրվում միւս ազգերի ճակատագրով։ Ճշմարիտ է նոցա դատավճիռը իւրաքանչիւր հարցի մէջ և անմեղ է նոցա վճիռը։ Մեծ պէտք է լինէ նա, ով նոցա ողորմածութեան արժանի դառնեց—կը նշանակէ՝ մեծ է Բարաբբան, և նորան ես շնորհաւորելով իւր ազատութեան մէջ,—ամենախորին յարգանքս եմ արտայայտո՜ւմ։

Ոչ մի խօսակցութիւն չէր կարող ձևակերպել ձայնի այն բոլոր ելևէջը, որոնցով տուած էր այդ փոքրիկ ճառը։ Իւրաքանչիւր հընչիւնը՝ երեւում էր՝ դառն հեգնութեամբ էր տիրանում, և բոլորը բընազդմամբ շուռ եկան, որպէս դի խօսեցողին նայեն, և նորան նկատելով,—տատանուեցին վախի ազդեցութիւնից։ Բարաբբան, այնուամենայնիւ, ծանօթ չը լինելով նորանց հետ, նորա վերայ նայում էր այնպէս, ինչպէս ամեն մի անծանօթի վերայ, թէպէտ նորա նայուածքի մէջ մի տեսակ հետաքրքրութեան նշոյլ կար։ Նա տեսաւ իւր առջև մութ ձիթենւոյ գոյնի երեսով մի տղամարդի, որը թէպէտ շատ կարճ հասակի և նուրբ կազմուածքի տէր էր, բայց ակնյայտնի էր, որ նորա կազմակերպութիւնը ամուր էր և առողջ՝ իւր երկար ձուաձև երեսով, ուղիղ սև յօնքերով և աչքերով, որոնք այնպէս էին փայլում և այնպիսի մի տարօրինակ գոյնի էին, որ աւելի շատ որև է ճառագայթացոլ անգին քարերի էին նմանում, քան տեսողութեան գործարանի։ Նոքա աւելի շուտ մութն էին, թէպէտ նոցա մէջ կար մի տարօրինակ ոսկեգոյն երանգ, ինչպէս ամպագոյն ելեկտրոն (սաթ), այնպէս՝ որ ժամանակ առ ժամանակ նոքա բոլորովին ջինջ էին երևում և փայլում էին ինչ որ է անբնական և անդրաշխարհային կրակով։

Նա հագած էր փափուկ դեղին կտորից օտարատարազ չորեր, գօտեպնդուած դիւրաթեք ոսկեայ գօտիով. Նորա լայն վերարկուի վերին մասը հանգոյց էր գոյացնում, որը մասամբ ծածկում էր նորա խիտ սև մազերը և պարանոցի մօտ բռնուած էր օպալներից (հնդիկքար) ընդելուզուած ճարմանդով։

Այն անդուրեկան տպաւորութիւնը, որ թողեց նա բոլորի վերայ իւր երևալով, ըստ երևոյթին նորան ուրախացնում էր. բայց այնուամենայնիւ Բարաբբային մօտեցաւ և խոնարհութեամբ ողջունեց։ Բարաբբան, շփոթութեան մէջ, նայում էր նորա վերայ։

— Զմայլելի Բարաբբա,—շարունակեց նա դեռ միևնոյն սառն, բայց զուարճական ձայնով։—Մի մերժիլ ինձ, խնդրում եմ, քո ընկերութեան մէջ ընդունի՜լ։ Ես պանդուխտ եմ և օտարերկրացի, և ինձ անծանօթ են Հրէաստանի գաւառները, որը այնքա՜ն բարգաւաճուած է Եհովայի ձեռքով։ Ես կոպիտ եմ, շատ քիչ բան իմացող և շատ բաներ սովորած, բայց այնպիսի դէպքերում, որոնք կախուած են քո բարեբաղդութիւնից, դու ինձ անպէտք չես գտնիլ,—լինէ դա կեա կամ մէ՜ռ։

Բարաբբան սարսափի մէջ ընկաւ. նորա ընկերներից մէկը նորան մի կողմը քաշելով՝ շշնջաց ականջին.

— Դա Մելխիորն է *)։ Աշխատիր նորան դուր գալո՜ւ։ Նա վատթար համբաւի տէր է՝ և սատանաների վերայ իշխանութիւն ունի։

— Ես նորան չեմ ճանաչում,—կոչեց Բարաբբան բարձր ձայնով, չը նայելով իւր ընկերների ակնարկութիւններին,—և դորա համար նորա շնորհաւորութիւնը ինձ համար անհասկանալի է։

Անծանօթը ժպտաց.

— Ես ազնուութիւնը սիրում եմ,—ասաց նա։—Եւ դու, Բարաբբա, ազնիւ ե՜ս։

Ամբողջ սենեակի միջից կոպիտ ծիծաղ անցաւ և Բարաբբան դողաց, ինչպէս մարակի ազդեցութիւնից։

— Ճիշտ է՝ դու ինձ չես ճանաչում, բայց նոյնպէս ճշմարիտ է և այն՝—որ դու ինձ կը ճանաչես։ Իրաւ է, որ իմ անունը Մելխիոր է, ինչպէս քո ընկերը քեզ յայտնեց, բայց սաղայէլի վերայ ես իշխանութիւն չունեմ։

Նորա աչքերը փայլատակեցին, ինչպէս ալազլին, խիտ սև յօնքերի տակից և նա շարունակեց.

---

*) Մելխիոր—հրէակ. melech (թագաւոր) or (լոյս)։

-- Այդ ինչ է հագինդ՝—ուրախ խայտաճամուկ հագուստ.—և Նա ասեղնագործուած վերնազգեստը շարժեց, որի մէջ Բարաբբան դեռ շուռ էր գալիս։—Դու համարեա թէ մերկ ես այս փայլուն թիկնոցի տակ,—սքանչելի Էմբլեմա *) (նշանաբան) մարդկութեա՛ն։ Հէնց ուղիղ այդ դրութեանդ մէջ էի ես սպասում գտնելու քեզ. արտաքուստ հագնուած՝ ինչպէս թագաւոր, իսկ ներքուստ՝ ամենաաղքատ աղքատութիւն։ Հետևիր ինձ, որ մաքրուած լինիս քո բանտի կեղտի՛ց։ Ես դեռ այստեղ եմ ապրում, այս գինետուն—պանդոկում, և վերևում, իմ սենեակում, դու կարող պիտի լինիս ճոխութեամբ հագնուելու, որպէս զի արժանաւորութեամբ կանգնած լինիս այն աղջկայ աչքի առջև, որին սիրում ես դու։ Այդ տեսքիդ մէջ նա քեզ վերայ ծիծաղել միայն կարո՛ղ է։ Մինթէ նա նախ ես քեզ վերայ չէր ծիծաղում։ Գնա՛նք և զարդարուիր յառաջիկայ տօնի համար։

Բայց Բարաբբան իւր տեղում կանգնած մնաց, թէպէտ և նորա երեսը շառագունեց, երբ անծանօթը սկսեց խօսել այն աղջկայ վերայ, որին նա սիրում էր։ Թիկնոցով ծածկուելով, նա հպարտութեամբ մերժման նշան արաւ։

— Ես ոչ ոքի չեմ ընկճւում,—ասաց նա,—ես դեռ շատ վաղուց չէ, ինչ ազատութիւն եմ ստացել, որ նորից գերի լինել ցանկանա՛մ։ Սոյն խօսքերը կոպտութեան տեղ մի՛ ընդունիր, ժամանակը շուտով կը անցնէ, և մի քանի րոպէից յետոյ՝ ես՝ ամբոխի հետ՝ այստեղից դուրս կը գամ. ես ցանկանում եմ Նազովրեցու մահը տեսնելու։

Մելխիորի դէմքի գծագրութիւնը փոխուեց՝ տեղի տալով աչքի ընկնող վշտի յաղթանակ՝ տխրութեան։

— Դու անշուշտ կը տեսնես այդ մահը,— ասաց նա։—Մինթէ ամբողջ աշխարհը այնտեղ չէ լինելու։ Այդ մարդասպանների ամենամեծ յաղթանակն է ամբողջ մարդկութեան վերայ... Հրէաների հանդէ՛սը... Իսկական տօն, անմոռանալի մահուան պատիժ—ասում եմ քեզ, ոչ ոք նորա մասին չը պէտք է՛ մոռանայ։ Եւ յաւիտեանս յաւիտենից՝ պատմուածքը այն մասին՝—թէ ինչպէս այդ Նազովրեցուն սպանեցին, որպէս զի բաւականացնեն Աստծուց ընտրուած Իսրայէլի ազգի արինարբութիւնը, զարմացման և սարսափի արձանի տեղ պիտի՛ ծառայէ։—Նա կանգ առաւ, նորա դէմքը նախկին ծիծաղկոտ արտայայտութիւնը ընդունեց։—Այո՛, դու կը տեսնես Մարդաբէի մահը, բայց՝ ասում եմ քեզ՝—որ նա, որին դու սիրում ես, նոյն-

*) Էմբլեմա—նշան, որը մի որև է նշանակութիւն ունէ.—նշանաբան։

պէս այնտեղ է լինելու։ Իսկ դու մինթէ սիրահարուածի նման ես, այն էլ այդ տեսակ ծիծաղաշարժ հագուստի մէջ։ Աւելի շուտ դու վայրի արջի նմանութիւն ունե՛ս։—Նա ծիծաղեց...

— Բայց այնուամենայնիւ՝ ես քեզ չեմ խնդրում առաջարկութիւնս կատարելու, ինքնագլուխ Բարաբբա՛։ Ես լոկ ասում եմ քեզ, որ իմ սենեակում դու կարող ես քաղաքավարի հագնուել, եթէ միմիայն քո ցանկութիւնը այդ է՛։ Եւ՝ կարող է պատահել՝ դու այնպիսի նորութիւններ կը լսես, որոնք հետաքրքրում են անշուշտ։ Արա՛ ինչպէս կը ցանկանա՛ս։ Հետևիր ոչ ի՛մ՝—այլ սեփհական ցանկութեանդ յետևից։

Նա անփոյթութեամբ գլուխ տուեց ներկայ եղողներին և, սենեակի միջից փափուկ կատուի քայլերով առաջ գնալով, սկսեց մութ նեղ սանդուղքներից դէպի վեր բարձրանալ, որոնք իջևանատեղի դէպի երկրորդ յարկն էին առաջնորդում։

Նորա խորհրդաւոր և ծածկամիտ խօսքերից և ձևերից զարմացած և այլայլուած Բարաբբան յետևեց նորան ակնարկով, մինչ նա դուրս կը գար, ապա, ինչպէս ծայրագոյն կարիքի ազդեցութեան տակ գործող մի մարդ, նա ամփոփ ներողութիւն խնդրեց իւր շուարած ընկերակիցներից, և, առանց ըմբռնելու արածը, ակամայ մի որև է անտեսանելի ոյժի հնազանդուելով, շտապեց անծանօթի յետևից։

VIII.

Նա խելքը կորցրել է՛։

— Ո՞վ.—Մելխիորը՝ թէ Բարաբբան։

— Երկուսն է՛լ։

Դայնանման բացականչութիւններ էին լսւում այն սենեակի մէջ, որտեղ դեռ նստել էր բազմութիւնը։ Մելխիորի յանկարծակի երևալը, ազատուած եղեռնագործի հետ ունեցած նորա խօսակցութիւնը, և, վերջապէս, նորա հեռանալը, որին միաւորուեց և Բարաբբան,—այդ բոլորը մի քանի րոպէի գործ լինելով, տարօրինակ և անսովոր անցքի տպաւորութիւն էր թողնում։

— Ո՞վ է այդ Մելխիորը։ Ի՞նչ է նորա պարապմունքը.—կասկածանքով հարցրեց նստողներից մէկը։—Ո՞ր կողմից է նա։ Ի՞նչպէս ընկաւ նա Երուսաղէմի մէջ։

Լռութիւնը յաջորդեց։ Երևում էր, որ ոչ ոք չը կարողացաւ պատասխանել։ Պանդոկապետը, որ զուրալի և գրաւիչ ձևակեր-

պութեամբ մի հրէայ էր, գողտագողի խօսեցողներին մօտեցաւ, և իւր վերայ ուշադրութիւն դարձնելու համար՝ փափուկ հազալով, ասաց.

— Պարոններ, ինձ այնպէս է թւում, որ դուք 'ի զուր էք ենթադրում, որ նա, իւր յաճախ քաղաքը գալու շնորհիւ, որ և է վատթար գործերի տէր է։ Նա անվիճելի հարուստ և խելօք մարդ է։ Ոչ ոք չէ կարող ասել, թէ նա որ երկրից է, թէպէտ, իմ կարծիքով, նա պէտք է որ Եգիպտոսից եկած լինէ։ Ոչ մի գործ, նա երևի չունէ, իւր սեփհական զուարճութիւնից բացի. ամեն մի հեռանալիս, նա մի որ և է աղքատի, իւր այստեղ լինելու շնորհիւ, թողնում է բարդաւորութեան մէջ։

— Զարմանալի չէ՛, որ դու նորա մասին լաւ ես խօսում, Բենեզրա՛.--ծիծաղեց լսողներից մէկը։—Դու գիտես թէ ինչպէ՛ս պէտք է քսակդ ոսկով լցնել։ Չափից դուրս ախմարութիւն կը լինէր, եթէ դու այդ օտարականին հայհոյէիր, որը քո մօտ է ապրում, և որից դու ամեն բանի համար երկու տակ գին ես կորզո՛ւմ։ Թո՛ղ տուր։ Դու չե՛ս կարող նորա մասին իրաւացի դատել։ Փողը միշտ լաւ գրաւական է դառնում։

Բայց Եզրան միմիայն ժպտաց և սկսեց հաւաքել դատարկ անագեայ ըմպանակները։

— Դուք զուցէ ուղիղ էք՞ դատում,—ասաց նա սառնասրտութեամբ։—Ո՛չ մի պանդոկապետ չի սկսիլ հայհոյել կանխիկ վճարող հիւրին։ Բայց՝ այնուամենայնիւ՝ 'ի զուր էք վախենում Մելխիօրից,—նա վերին աստիճանի համեստ վարքի տէր է և ոչ ոքի վնաս չէ հասցնում։

— Դու, շատ կարելի է, որ այդ չը գիտես էլ,—հակառակեց մի կոպիտ շինական, անդիցը վերկենալով։—Բայց նոքա, որոնք այդպիսի գերազանց հաշակ ունեն, շատ անգամ դանազան կախարդութեամբ և աչքակապութեամբ մահացու չարիք են հասցնում։ 'Ի հաստատութիւն կարող է ծառայել Նազովրեցի խելացնոր և մոլար մարգարէն։ Մի՛թէ նորա դէմքը հրեշտակի չէ՛, բայց այնուամենայնիւ՝ նա սուրբ տաճարը հայհոյեց, հաւատացնելով, որ ոչ մի քար քարի վերայ չը պիտի մնայ, որ ապացոյց լինէ նախկին փառքին և մեծութեանը։ Հէնց դորա համար նա արժանի՛ է մահուան։ Եւ սակ նորա ակնարկից Պիղատոսը այս առաւօտ հազիւ թէ խելքը չը թռցրեց և վերջը կատարեալ ինքնամոռացութեան մէջ ընկա՛ւ։

— Այո՛, այո՛։ Դու ճի՛շտ ես ասում։

Եւ մահուան պատիժը յիշելով, որին ականկալու էին, պանդոկը

թողնելու նպատակով՝ ամբողջ խումբը կանգնեց և սկսեց ակրոջ հաշիւը վճարել։

Մինչ նոքա զբաղուած էին, մի վայրենի աղաղակ անցաւ դրսում սպասող ամբոխի միջից։ Բոլորը ակամայ դէպի այն կողմը նայեցին և, շուտափոյթ իրենց հաշիւները վերջացնելով, փողոցը վազեցին, որտեղ նոցա սպասում էր շլացուցիչ, ամենազարհուրելի տեսարան, որը երբ և իցէ տեսնուած էր երկրիս վերայ,—տեսարանը Աստուած—մարդի, դէպի մա՛հը տարուող... Այժմ ամբոխը այնքան շատ էր, որ բռնել էր ամբողջ փողոցը։ Առևտրականները իրենց սայլակներով և բեռնաւորուած ջորիներին յաջորդող բեռնակիրները չէին կարողանում իրենց ճանապարհ բաց անելու, և պարտաւորուած էին իրենց նշանակուած տեղերը կողմնակի, կից փողոցներից գնալու։

Երեխաները, խուռնչիւր բոպէում, լացելով յետ և առաջ էին վազվզում, աշխատելով իրենց ծնողներին գտնելու։ Ճանապարհորդների խումբը, որը ամբողջ կարաւանով հէնց նոր էր եկած Դամասկոսից, այնպէս էր ճնշուած ժողովրդով, որ չէր կարողանում այլ ևս առաջ անցնելու։ Հեռւում, որքան նկատելի էր աչքով, տարածւում էր խայտաճամուկ ամբոխը, իսկ մէջտեղում, դանդաղ, վսեմ քայլերով, փշեայ պսակով գնում էր Նազովրեցի՛ն։

Նորա ձեռքերը այժմ կապկպուած էին մէջքից այնպէս, որ նա չը կարողանայ ոչ մի բանի հպուել, կամ որ և իցէ շարժմունք գործել, որպէս զի ամբոխի գթասրտութեան շարժառիթ դառնայ։

Զինուորները փայփլուն միրկացրած սրերով շրջապատել էին նորան, որի յետևից գնում էին չորս մարդ ևս, որոնց թւում և դահիճը, դժուարութեամբ տանելով տասն ֆուտ [1]) երկարութեամբ ծանր խաչը [2]), որի ծայրը գետնին էր կպչում, քանի որ բոլորովին բարձրացնելը նոցա ուժից վեր էր։ Հէնց երբ ամբոխը տեսաւ մահուան դատապարտուած Քրիստոսին, միաժամանակ հնչեցին ցոհունակութեան և յաղթութեան բացականչութիւններ, և բոլորը շուռ էին գալիս դէպի մահուան տեղին, որ նշանակուած էր քաղաքից դուրս, մի փոքրիկ լեռան վերայ, որը կոչւում էր Գողգոթա, իսկ ըստ ոմանց «Գագաթն»։

Նոյն վայրկեանին, երբ ժողովուրդը մօտեցաւ մահուան դատա-

---

1) Սաժէնը 7 ֆուտ կամ 3 արշին է։

2) Նախընթաց տողերում Մարիա Կորելլին Փրկչի ձեռքերը «այժմ» կապկպուած լինելը շեշտելով, 'ի նկատի ունէ դորանից վաղ Փրկչի անձամբ խաչ բառնալն ըստ վկայութեան Ս. Գրոց։ Ծան. Հայ Թարգմ.

պալատութեան տեղին, նորան խառնուեցին դարձեալ երկուսը՝—Մելխիօրը և Բարաբբան:

Բարաբբան մութ-կարմրագոյն պատմուճան և թիկնոց էր հագած, որոնք եղբագործուած էին ոսկով. նորա մօրուքը սանրուած էր և խուզուած. արծաթ սպիտակ կտաւեայ ծածկոցը փայլչութեամբ պատում էր նորա խիտ, սև մազերը: Այդ հագուստների մէջ նա բոլորովին նման չէր այն կոպիտ, կիսամերկ աւազակին, որին առաւօտեան արձակել էին բանտից: Նա չը հեռանալով իւր նոր խորհրդաւոր ընկերից, նայում էր նորա վերայ սուր ուշադրութեամբ, կարծես թէ վախենալով աչքից հեռացնելու: Նորա դէմքը լուրջ էր և հանդարտ, մի տեսակ մռայլ գեղեցկութեան հետ, նա ընթանում էր բնածին քընքշութեամբ և արձակ վստահութեամբ, անդամ մի տեսակ առաւելութեամբ: Դէպ առ դէպ նա աչքերով փնտռում էր ամբոխի միջից քայլող դատապարտուած Հրէից Թագաւորի սպիտակ կերպարանքը, որի փշեայ պսակով լուսափայլ Գլուխը բարձրանում էր ամբոխի վերայ, ինչպէս խոշոր աստղ մանր մոլորակների միջից:

— Եղեռնագործութի՛ւն է մահուան պատիժ տալ անմեղին.— շշնջաց նա:—Թո՛ղ խօսեն, ինչ կը կամենան, այնուամենայնիւ դա չարագործութի՛ւն է:

Մելխիօրը նորա վերայ թափանցիկ փորձողական ակնարկ ձգեց:

— Եղեռնագործութիւն չէ՞ հաշւում այդ, երբ ժողովուրդը դա է ցանկանում,—ասաց նա,—իսկ անմեղին սպանելը մեղաւորից մարդուն միշտ մխիթարութիւն է պատճառում: Միթէ ծուղակներ չեն լարում երգող թռչունների դէմ, և չե՞ն կտրում մատաղհաս եղջերուի կոկորդը: Միթէ արմատահան չեն անում ոչնչով անմեղ ծառը, և չե՞ն տրորում ծաղիկները իրենց կոպիտ ձեռքերով: Ի՞նչ ես կամենում դու, Հրէաստանի զաւակ: Փիզիքական կամ բարոյական անմեղները միշտ սպանուած են եղել այս աշխարհում, և պիտի լինի՛ն... Ոչ ոք չէ՞ հաւատում անարատ մարմնին, աւելի քի՛չ են հաւատում անարատ հոգուն: Անարատ մարմնի և անբիծ հոգու տէր է այդ՝ փըշով պսակեալը,—բազմաթիւ կողմերի տիրապետողը, իսկ նայիր, ինչքան են մերայիններից գնում, որ տեսնեն՝ թէ ինչպէ՞ս պիտի մեռնէ նա...

Բարաբբան լուռ էր. նա անհամբերութեամբ մտքի մէջ կրկնելով՝ աշխատում էր հասկանալ սոյն ոճը. «բազմաթիւ կողմերի տիրապետողը»...

— Ի՞նչ է մահը.—շարունակեց Մելխիօրը:—Ինչո՞ւ նա մեզ այնքան զարհուրելի է երևում: Բոլո՛ր մարդկանց վախճանը դա է:

Իսկ՝ այնուամենայնիւ՝ ով անմեղին կը սպանէ,—պիտի իւր պատիժը կրէ: Իբրև վկայ կարող ես դու ծառայել, Բարաբբա, որ ազատեցիր աշխարհը դատարկախօս խաբեբայից: Իւր նմանների մէջ առաջին տեղը բռնող այն Գաբրիասը ծածկուած էր երեսպաշտական դիմակի տակ, իսկ դու քո դաշոյնի մի հարուածով արտաքսեցիր նորան դէպի խաւար անդո՛ւնդը: Այդ անխելացի էր, դիւրագրգիռ բարեկամս, որովհետև նա թէպէտ չարագործ, այնուամենայնիւ պահպանում էր օրէնքով. իսկ այս օրինակելի, ճշմարտաքարոզ Մարդը գնում է մահուան տեղին, դատապարտուած հրէաներից,—իսկ հրէաները իրենց վերաբերութեամբ մտածում են, որ անմեղ են և անդատապարտելի՛... Բայց միմիայն... դեռ առ այժմ...

Երբ նա դադարեց խօսելուց, սարսափելի աղաղակ բարձրացաւ և բազմաթիւ ամբոխը յանկարծ կանգ առաւ:—Ծանրկեկ խաչը դուրս սողաց տանող զինուորների *) ձեռքից և մի կողմը ընկնելով, քիչ էր մնում, որ մօտից անցնող մարդուն ճմլէր: Խաչը գետնից բարձրացնելը շատ դժուար էր, և երբ դա յաջողեց, տանողները կանգ առան, որ շունչ քաշեն, և չորս կողմն էին նայում՝ օտարի օգնութեան սպասելով:

Հէնց այդ ժամանակ հսկայ, լայնաթիկունք, սևահեր և սևագոյն երեսով մի տղամարդ դուրս պրծաւ ամբոխի միջից: Այդ տեսնելով, շատերը սկսեցին բարձր, աղմկալից ձայնով ողջունել նորան: Նա իւր ահագին հասակով զանազանւում էր շրջապատողներից:—Նա բոլորից անհամեմատ բարձր էր, բացի թէրևս Նազովրեցուց, և ուղիղ երկայնաձև աչքերի կտրուածքով ու տարօրինակ հագուստով աչքի էր ընկնում, որ նա բոլորովին տարբեր ցեղից էր, քան Իսրայէլի ընտրեալները:

---

*) По свидѣтельству древн. писателей, преступникъ самъ долженъ былъ нести свой крестъ до мѣста казни, и по евангелисту Іоанну крестъ сначала и былъ возложенъ на рамена Христа Спасителя. а когда Христосъ изнемогъ подъ его тяжестью, тогда воины передали Симону Киринеянину.—(Распятіе. Изъ послѣдн. дней земн. жизни Господа Іисуса Христа. Иннокен. Арх. Херсонскій. Ев. Іоан. 19, 17).

Примѣч. Духовн. Ценз. (Ա.):

(Ա.)—Թարգմ.՝—Հին մատենագրների վկայութեան համաձայն, յանցաւորը ինքն էր պարտական մինչ մահուան տեղը իւր խաչը տանելու, և ըստ աւետարանիչ Յովհաննու՝ խաչը նախ դրուած էր Քրիստոս Փրկչի ուսերի վերայ, իսկ երբ Քրիստոսը դատրեց նորա ծանրութեան տակ, այն ժամանակ զինուորները Սիմոն Կիւրենացուն յանձնեցին խաչը:—(«Распятіе Изъ послѣд. дней земн. жизни Господа Іисуса Христа. Иннокен. Арх. Херсонскій». Աւետար. Յովհ. 19, 17):

Նկատող. Հոգ. Գրաքնն.

Մինչ նա, հրելով բոլորին, ինչպէս թզուկների, առաջանում էր, զինուորներից մէկը ճանաչեց նորան և կոչեց իւր անունով.

— Սիմո՛ն։

— Այստեղ արի, Սիմո՛ն։ Օգնիր մեզ. ինչ՝—Ռուփոսը և Աղեքսանդրը քեզ հետ են։

— Ի՞նչ լուրեր կան Կիւրենայից։

— Դու հէնց լաւ ժամանակին եկար, Սիմո՛ն։

— Գէթ մի անգամ դու մեզ պէտք կը գաս։

Լսելով այդ և ուրիշ նոյնանման բացականչութիւններ, Կիւրենացին կանգ առաւ և արհամարհութեամբ շրջապատողներին նայեց։

— Այս ինչ յիմարական աղմկալի հանդէս է.—հարցրեց նա սրտի վշտով։—Գուցէ դուք Երուսաղէմը նորա բոլոր գողերից և խաբեբաներից էք ազատում։ Բայց այն ժամանակ քաղաքը դատարկ կը մնայ։

Ապա, Կալանաւորի լուսափայլ դէմքը տեսնելով, նա հարցրեց.

— Ո՞վ է այս ծառայելու մատնուած՝ Թագաւորի որդին։

— Դու՝ երևի՛ արբած ես, որ յանցաւորի մէջ որ և է Թագաւորի որդի ես տեսնում, իսկ մեզ գողեր և խաբեբաներ ես կոչում, չէ՞ն։

— Թո՛ղ նա տանի Նազովրեցու խաչը.—աղաղակեցին միւսները։—Նա շատ անգամ է պարծեցել իւր չորս մարդու ուժ ունենալով։

— Այո՛, այո՛, թո՛ղ տանի խաչը։ Այդ յիմար Կիւրենացու համար արժանի գործ է։

Բոլորը գոռում-գոչումով շրջապատեցին նորան։ Հսկայ Սիմոնը կամեցաւ ըստ իւր սովորութեան գործելու և բռնցունքներով իրեն ճանապարհ բաց անելու, երբ յանկարծ ամբոխի գլխի վերևը նա պատահեց Քրիստոսի յստակ, լուսափայլ ակնարկին։ Նորա երակների միջից կրակ անցաւ՝—նա դողաց՝ բոլոր անդամներով։ Տարօրինակ զարմանքը և ակամայ վախը նորա խելքը մթնեցրին և, իւր կամքի հակառակ, նա գտնուեց այն տեղում, որտեղ խաչ բարձողները կանգնած էին, դեռ ևս հանգստանալու մտքով և իրենց դատրած դէմքերից քրտինքներն էին սրբում։

— Շնորհակալ ե՛մ քեզ, Սիմո՛ն.—ասաց նոցանից մէկը։—Գէթ մի անգամ քո լայն մէջքը մեզ ծառայութիւն արած կը լինէ՛։ Որդիքդ ո՞ւր են։

— Ինչերո՞ւդ են պէտք նոքա.—դժգոհ ձայնով շշնջաց Սիմոնը։—Նոքա չէ՞ թէ վաղուց Երուսաղէմումն են։

— Ռուփոսը արբեցութեամբ է պարապում,—կոկոնձաց մօտիկ կանգնող մի երեխայ։—Իսկ Աղեքսանդրը շուտ շուտ լումայափոխների մօտ է քարշ գալիս։

— Իսկ դու շատախօս և յիմար երեխայ ես,—հակաճառեց նորան Սիմոնը։ Ո՞վ քեզ թոյլ տուեց հասակը առածների յետևից քարշ գալու։ Կիւրենայում քեզ կը մտրակէին այն բանի համար, որ դու մեծերի մօտ բերանդ բաց ես անում։

— Ես քեզ մեծի տեղ չեմ դնում,—պատասխանեց երեխան ծիծաղկոտութեամբ։—Դու տրուկ ես, ցեխով ծածկուած։ Բարձրացրի խաչը և նայիր,—չը սայթաքես։

Սիմոնը բոլէաչափ տատանուեց. Նա ցանկութիւն զգաց մի հարուածով յանդուգն երեխային գետին տապալել։ Բայց նորան շըրջապատել էին հրէական ամբոխը և հռովմէական զինուորները, իսկ,—որ գլխաւորն է,—նա իւր վերայ էր զգում այն հրաշալի տխուր աչերի իշխանութիւնը, որոնք արտայայտում էին նորան իրենց ցանկութիւնը, իրենց լռիկ, հաստատուն կամքը. և նա ոչ մի դիմադրութիւն չը գործ դրեց, երբ զինուորները, ծաղր ու ծանակի տակ, բարձրացնելով ծանրկեկ խաչը, դրին այդ ահագին ծանրութիւնը նորա ուսերի վերայ։

— Ինչպէ՞ս է քեզ դուր գալիս այդ, լեռների և ծովի կողմերից եկած հսկայ.—մռթմռթաց մի քայքայուած պառաւ կին, ոսկրացած ձեռքերի կծկուած բռնցունքը ցոյց տալով նորան։—Դարձեալ կը պարծենա՞ս լեռան վերայ կանգնած քաղաքով և այն ուժով, որ ներշնչել են քեզ բնական եղանիները։ Մենք դեռ ևս կը լսենք՝ թէ ինչպէ՞ս կը ճաթկրտան քո ոսկորները, Կիւրենացի աւազակ, որ համարձակւում ես հայհոյել Իսրայէլի՛ որդկերանց։

Բայց Սիմոնը չը պատասխանեց։ Նա խաչը ճարպկութեամբ գլորեց մէջքի վերայ։ Գրկելով ներքին մասը իւր ամուր ջղաձիգ ձեռքերով, նա, երևում էր, այդ զարհուրելի ծանրութիւնը բարձրացնում էր զարմանալի թեթևութեամբ և անգամ ցանկալի մխիթարութեամբ։

Զինուորները զարմացմամբ տեղի տուին նորան. այդպիսի հերկուլէսեան ուժը համարեա հրաշք էր և նոցա մէջ ակամայ յարգանք զարթեցրեց։

Ցենտուրիոն Պետրոնիան մօտեցաւ նորան։

— Կարող ես դու՝ ճիշտ որ՝ խաչը տանել.—հարցրեց նա։ Նա փափկասիրտ մարդ էր և խղճի տէր, ու ինքը իւր մէջ ոչ մի ժամանակ չէր արդարացնում ամբոխին նորա անխղճութեան մէջ, միևնոյն ժամանակ և չը ներելով զինուորների բուռն յանդգնութիւնը։—Դեռ

բուսականին հեռու ենք Գողգոթայից, կը տանեմ՝ արդեօք՝ այդ տարածութիւնը։

Սիմոնը բարձրացրեց իւր սև ասխածային գլուխը. նորա աչքերը խոնաւ էին և՝ մի ինչ որ է բանից՝ գորովալի։ Թեթև ժպիտը խաղում էր նորա մազերով բուսած շրթունքների վերայ։

— Ես այս բեռնով մինչ աշխարհիս ծայրը կը գնամ,—ասաց նա, և նորա կոպիտ ձայնը դողաց խոր փափկութեան տակ։—Ինձ նա այնքան թեթև է թւում, ինչպէս գետակի եզրից կտրուած մի եղէգն։ 'Ի զուր խօսքեր միք կորցնիլ իմ ուժիս կամ դադարելուս համար։ Առաջ գնացէք պսակակիր Կալանաւորով։ Ես կը հետևեմ ձեզ։

Պետրօնիան զարմացմամբ նորա վերայ նայեց, բայց ոչինչ չը ասաց։ Ամբոխը նորից տատանուեց, ինչպէս մռայլ ծովի բարկացկոտ ալիքները. մութ ամբո՛խ, լուսաւորուած Հրէից Թագաւորի Աստուածային դէմքով, ճառագայթացող աչերով և լուսաւոր անձով, ինչպէս փայլակնապայծառ փարոսո՛վ... Եւ այդ հազարաւոր ոտքերի ձայնը անլսելի, անհարկու արձագանգ էր զարթեցնում։ Գոռում-գոչումների և հայհոյանքների տակ, արեան ծարաւի ամբոխը աւելի և աւելի շուտափոյթ էր ընթանում ընդ առաջ, այնտե՛ղ, դէպի Գողգոթա...

IX.

Արեգակը այժմ կանգնած էր բարձր, և տապը համարեա անտանելի էր։ Առաւօտեան դատաստանը, որը, շնորհիւ Պիղատոսի անվճռականութեան, սովորականից վաղ էր սկսուել, շատ ուշ վերջացաւ։ Անգամ ամբոխից արձակուած դատավճռից յետոյ դարձեալ արգելանքներ կային, այնպէս՝ որ ժամանակը աննկատելի անցնելով, վաղուց կէս օր էր։ Երկինքը բոլորովին անամպ էր և այնպիսի մութ կապոյտ գոյնի, որը մետաղեայ կապարի նմանութիւն ունէր։ Փայլուն շեշտակի ճառագայթները, սուր տեգների նման, թափանցելով ամեն տեղ, այրում էին ամեն ինչ կիզիչ բոցով։ Երուսաղէմը խաղաղ տարածուած էր այդ շլացուցիչ փայլունութեան տակ։ Այս ու այն կողմերում բարձր արմաւենիները հպարտութեամբ տարածում էին իրենց կինամոնագոյն բները, փոշոտ տերևների հետ։ Թզենու մեծ ու լայն տերևները, թափուելով դէպի ցած ամենահարուստ շինութիւնների կողից, ծուլութեամբ կախ էին ընկնում, դէպի հեռուն փռուելով, որոնց ճղների վերայ դէպ առ դէպ աչքի էին ընկնում հիւթալից, համարեա հասուն պտուղները։

Միևնոյն լոյսով լուսաւորուած գեղաշուք Մօրիա լեռան վերայ գտնուած Սողոմոնի տաճարը շողշողում էր ինչպէս մի ահագին թանկագին ադամանդ։ Նորա հրաշալի կոթողները և կամարները պարզ զանազանւում էին,—տեսանելի լինելով քաղաքի ամեն կողմերից։ Հնդկաթզենու (кактусъ) վարդագոյն ծաղիկները և մառղաշ ձիթենիների մոխրագոյն կանաչը տեղ տեղ նայում էին տների և շինութիւնների միանման գծերի մէջ։

Այդ բոլորի վերայ, կարծես թէ որոտմունքից առաջ, չարաբաստիկ հանդարտութիւն էր թագաւորում, և այդ ծանր խաղաղութիւնը մի տարօրինակ հակապատկեր էր կազմում ներքևում գտնուած ամբոխի կատաղի խռովութեան հետ, որի գրգիռը անտանելի կիզող ջերմութեան ազդեցութեան տակ աւելի սաստկացաւ։

Փողոցներից անցնելով տենդային այլայլմունքի մէջ, որը զօրեղանում էր դէպի առաջ արուած իւրաքանչիւր քայլից, նոցա կատաղութիւնը տասնապատիկ աւելացաւ շոգից և յոգնածութիւնից եւ. գազանային ճչոցներ-մռնչիւն լսուեցին, մինչ այդ ամբոխը աւելի շուտափոյթ դէպի առաջ ձգտեց, իրար հրելով, իրեն շուտ ձգել կարողանալու համար դէպի պատժարանի տեղը։

Երբ զինուորները կանգ առան գինետների մօտ իրենց ծարաւը կոտրելու և փոշով լցուած կոկորդները զովացնելու նպատակով,— շատերը հետևեցին նոցա օրինակին, և գինին ըմպանակներով ու բաժակներով սկսեց ձեռքէ ձեռք անցնել։

Գինու ներգործութիւնը շուտով նկատելի եղաւ։ Մարդկանց և կանանց անկարգ խմբերը պարել և երգել սկսեցին։ Ոմանք մի տեսակ անկապ զուարճութեան մէջ մտան,—միւսները դատողութիւններ էին տալիս։ Ամենակոպիտներից մէկը Սիմոնին գինի առաջարկեց, որից մերժումն ստանալով, բարկութեան ազդեցութեան տակ, թափեց խաչի վերայ։

Կարմիր հեղուկը, արիւնի նման, թափւում էր փայտի վերայից, և այդ արատ պատճառողը ծիծաղեց.

— Ահա սա ես մկրտուե՛ց.—գոռաց նա լուռ հաւանութիւն ցոյց տուող խմբին։—Եւ աւելի լաւ մկրտութեամբ, քան այն անզգոյշ Յովհաննու մկրտութիւնը։

Նորա ընկերակիցները սկսեցին ծափահարել և ընդհանուրի աղմուկը աւելի սաստկացաւ։

Ամբոխը, որ միշտ փոփոխական է լինում, երևի, բոլորովին մոռացել էր Բարաբբային, որի ազատութիւնը քիչ առաջ նա այնքան բանի պահանջում էր։ Ժողովուրդը, ակնյայտնի էր, չէր էլ նկատում

նորա ներկայութիւնը, գուցէ նորան չէր էլ ճանաչում, քանի որ Բարաբբան այժմ պարկեշտ և քաղաքավարի էր հագնուած։ Նա այնուամենայնիւ գտնուելով ամենաանձուկ տեղում, շրջապատողների անտաշ արբեցողի արարմունքներին էր նայում տխուր խստութեամբ։ Հազիւ երբեմն նորա աչքերը անհանգստութեամբ և անասելի ուրախութեամբ փնտռում էին ամբոխի միջից մէկին, որը կորած և շատ թանկագին էր։ Մելխիօրը, որ դեռ ես նորա շուրջին էր կանգնած, նկատելով այդ, փոքր ինչ ծաղրաբար ժպտաց.

— Նա այստեղ չէ,—ասաց Նա։—Միթէ մտածում էիր դու, որ նա անկարգ ամբոխի հետ միասին կը գնայ։ Ո՛չ։ Նա կը գայ կողմնակի անցքերից, ինչպէս և քահանայապետները, և, կարող է պատահել, որ անմեղ Կայիափան անձամբ առաջնորդէ նորա՛ն։

— Կայիափա՞ն.—կրկնեց Բարաբբան հարցական ձայնով։—Ի՞նչ գործ ունէ նա Կայիափայի հետ։

— Մեծ գործ,—պատասխանեց Մելխիօրը։—Կայիափայի կինը նորա ամենամերձ ընկերուհի՛ն է։ Միամիտ բարբարո՛ս։ Դու աշխարհիս համար տասն և ութ ամիսների ընթացքում կորած էիր,—կնոջ համար դա բաւականին ժամանակ է շա՛տ անկարգութիւններ անելու համար։ Ո՛չ, մի բարկանար։ Իմ խօսելուս ոճն է այսպէս, բայց ես համաձայն եմ հաւատալու, որ քո այն աղջիկը բոլոր բարեգործութիւնների տիպարն է, մինչ դեռ...

— Մինչ դեռ՝ ի՞նչ.—հարցրեց Բարաբբան կասկածանքով։

— Մինչ չէ հաստատուած ուրի՛շը.—պատասխանեց Մելխիօրը։—Որ նա գեղեցիկ է—այդ անվիճելի է, իսկ գեղեցկութիւնը՝ ահա բոլորը—ինչ տղամարդու հոգին է պահանջում։ Բայց, այնու ամենայնիւ, ինչպէս ես քեզ առաջ էլ ասել եմ,—այդ աղջկայ եղբայրն էր, որ մատնեց Նազովրեցո՛ւն։

— Այդ ինձ զարմացնում է,—շշնջաց Բարաբբան։—Յուդան միշտ մաքուր սրտի տէր մարդ էր. անկեղծ և հեզաբարոյ մի երիտասա՛րդ։

— Դու նորան լաւ էի՞ր ճանաչում.—հարցրեց Մելխիօրը, անքթիթ նորա վերայ նայելով։

— Ոչ թէ բոլորովին լաւ, բայց՝ այնու ամենայնիւ՝ բաւարար,—և Բարաբբան ամօթից կարմրեց։—Նա ինձ հետ էր աշխատում, երբ ես Զադին վաճառականի տանն էի, որի մասին քեզ պատմել եմ։

— Հա՜...—Ոսկու և մարգարտի պարսիկ առևտրականը—ու Մելխիօրը նորից ժպտաց։—Եւ քո բարեսիրտ Յուդայի քոյրը դուր գալու

համար, դու թանկագին քարեր գողանալով, բռնուեցիր գողութեանդ մէ՛ջ։ Արժանի՛ Բարաբբա։ Ինձ թւում է, որ հէնց քո այդ գեղեցկուհուդ շնորհիւ էր, որ դու քո մնացեալ չարագործութիւնները ևս գործեցիր։

Բարաբբան աչքը գետին ձգեց։

— Նա ջերմաջերմ թանկագին զարդեր էր ցանկանում,—ասաց նա, որպէս թէ ներողութիւն խնդրելով։ Եւ ես վերցրեցի մի մաքուր մարգարտեայ մանեակ։ Դա ինձ արժանի երևաց նորա կուսութեանը և աւելի իր տեղում նորա փափուկ պարանոցի վերայ, քան Զադինի հին ու փոշոտ արկղների մէջ։

—Ճշմարիտ է,—բաւականին պատճառ է եղել տիրոջդ կողոպտելու համա՛ր։ Եւ քո պատճառաբանութիւնը շատ պարզ է ու հասարա՛կ։ Փարիսեցի Գաբրիասը բամբասեց քո գեղեցկուհուն և դու դանակիդ մի հարուածով ստիպեցիր նորա լեզուին ընդ միշտ կարկամելու։ Ճիշտը ասած, Յուդիթ Իսկարիովտացին է միակ պատճառը թէ քո բանտարկութեանդ և թէ քո բոլոր տանջանքների, իսկ նորան դու դեռ սիրում ե՛ս։

— Եթէ դու նորան տեսնէիր...—հառաչեց Բարաբբան։

— Ես նորան տեսել ե՛մ.—պատասխանեց Մելխիօրը հանդարտութեամբ։—Նա ոչինչ չունէ ընդդէմ այն բանի, որ բոլորը նորան տեսնե՛ն։ Միթէ նա քաղաքիս առաջին գեղեցկուհին չէ։ Ինչո՞ւ պիտի ծածկէ նա իր գեղեցկութիւնը ու շքնաղութիւնը։ Բայց նորա հրապուրիչ աղուորութիւնը յաւէտ չը պիտի տևէ. Թող նա 'ի ցոյց հանէ այդ, մինչ դեռ չի կորչել, բայց՝ այնու ամենայնիւ՝ քեզ նա՝ գող և մարդասպան է դարձրել։

Բարաբբան այդ չարաբաստիկ ճշմարտութեան դէմ չը վիճեց։— Մինչև անգամ,—շարունակեց Մելխիօրը,—այն խառնակութիւնը, որի մէջ դու ես կցուած էիր, արդեօք նոյնպէս նորա պատրաստածը չէ՞ր։

— Ոչ, ո՛չ. բացականչեց Բարաբբան շուտափոյթ։—Քիչ պատճառներ կա՞յին։ Մենք՝ բոլորս էլ ընկճուած ենք դաժան բռնակալութեան տակ. այնքան Հռովմը չէ մեղաւոր, ինչքան մեր սեփհական իշխանութիւնները։ Մեր քահանաները և փարիսեցիները, մեզ կառավարելով, շատ են դէպի չարը գործ դնում իրենց ո՛յժը։ Խեղճերը—հալածուած են, արհամարհուածները—ոչնչով չեն պաշտպանուո՛ւմ։ Իսկ ես շատ եմ կարդացել և՛ յունարէն, և՛ լատիներէն, և՝ անգամ աշխատել եմ իւրացնել փոքր ինչ և եգիպտական իմաստութիւն. ես լաւ յիշողութիւն ունիմ ու ազատ կարող եմ խօսել, այնպէս որ ինձ հեշտ է ամբոխի հետ վարուել։ Ես մի քանի գժգոհների պատահելով,

առաջարկեցի նոցա իմ ծառայութիւնը. ինքս էլ չը գիտեմ, թէ դա ինչպէս պատահեց. բայց չէ թէ իւրաքանչիւր մարդ ազատութեան ձգտումն ունէ, իսկ մենք,—ազատ ե՛նք:

— Համբերեցէ՛ք: Դուք շուտով ամենամեծ ազատութիւնը կը ունենա՛ք.—ասաց Մելխիօրը, և նորա ակնարկը յանկարծ մթնեց:—Ժամանակը մօտենում է, երբ Իսրայէլի որդիքը երկաթի ձեռքով կը սկսեն կառավարել բոլոր կողմերին:—Դրամի ձայնը կը ծառայէ նոցա իշխանութեան տեղ. և նոցա համար, որոնք ոսկին աւելի են սիրում քան կեանքը—Հոգին՝փշեայ պսակի տակ գետնի վերայ 'ի զուր տեղը ապրե՛ց: Հրէաների յաղթանակը դեռ ընդառաջ է: Երկար ժամանակ նոքա գերուած էին և յաղթահարուած, դորա համար նոքա ևս՝ իրենց կողմից՝ գերիներ պիտի վերցնեն և մեծամեծ թագաւորների դէմ յաղթութիւն ցոյց տան: Խարեբայութեամբ, ստախօսութեամբ, խորամանկութեամբ, մարդկային իմացականութեամբ, մեքենենգութեամբ և ամեն մի թունաւոր սլաքով, որ գտնուում է սատանայի իշխանութեան տակ,—այդ բոլորի ազդեցութեան տակ նոքա կը կառավարե՛ն: Անգամ քո անունը, Բարաբբա, նոցա նշանաբանի տեղ պիտի ծառայէ.—դու կը լինիս «Հրէաների Թագաւոր», որովհետև նա, Ով մեր առջևից գնում է—Թագաւոր է աւելի լայնատարած ժողովրդի,—ժողովրդի անմահ հոգիներու,—որոնց վերայ ոսկին ոչ մի ազդեցութիւն չէ կարող ունենա՛լ:

Բարաբբան նայում էր նորա վերայ երկիւղով, քիչ բան հասկանալով նորա ասածից, բայց վախեցած նորա խիստ և ահարկու ձայնից, որը, երևում էր, որ մի ինչ որ քստմնելի բան էր նախագուշակում:

— Ո՞ր ժողովրդի մասի՛ն ես խօսում.—աղերսեց նա վերջապէս,—ի՛նչ աշխարհ:

— Ինչ աշխարհ.—կրկնեց Մելխիօրը:—Ոչ մի աշխարհ, այլ հազար միլիօնաւոր աշխարհնե՛ր: Այնտեղ՝ հեռուում, մեր վերայ, և նա ցոյց տուեց կարի լուսափայլ երկինքը,—կապուտակ ցանցը ծածկում է նոցա մեր աչքերից, բայց՝ այնուամենայնիւ՝ նոքա կան,—այդ երազ և զառանցանք չէ՛: Ահագին պարունակ մոլորակաց, անհուն դասաւորութիւններ, որոնք գնում են ընդ միշտ նախասահմանուած ճանապարհով, լի են գեղգեղանքով, լցուած կեանքով, պարգևարաշխուած լոյսով—և այդ Մարդը, արհամարհուած Նազովրեցին, որ գընում է իւր մահուան առաջ, գիտէ այդ բոլոր գաղտնիքնե՛րը:

Ցանկարծակի սարսափով բռնուած՝ Բարաբբան կանգ առաւ և իւր ծանօթի թիկքից բռնեց:

— Ի՞նչ ես խօսում.—հազիւ արտասանեց նա:—Դու դատողութիւնդ կորցրել ե՛ս: Միթէ դու ես տեսել ես տեսիլ: Ինձ մէջ տարօրինակ մտքեր են ծնուում այն ժամանակից, երբ ես տեսայ նորա դէմքը, իսկ նորա վերայ... Ոչ,—բարի Մելխիօր,—ինչո՞ւ համար այդ եղեռնագործութիւնը անշուշտ պիտի ընկնէ Հրէաստանի վերայ: Թո՛յլ տուր ինձ խօսել ժողովրդի հետ: Կարող է պատահել, որ ուշ չէ դեռ նորա փրկութեան մասին մտածե՛լը:

— Փրկութեա՞ն,—կրկնեց Մելխիօրը:—Դու կամենում ես գառը գայլերից ազատել, եղջերուն՝ վագրներից,—կամ՝ ամենահասարակօրէն՝ հաւատը՝ քահանաների՛ց: Թո՛յլ տո՛ւր: Դու յանդուգն ես և անմտացածին շատապո՞ղ: Ի՛նչ որ նշանակուած է՝—պէտք է որ կատարուի՛:

Նա լռեց և մի որոշեալ ժամանակ անցկացրեց մտածողութեան մէջ: Բարաբբան գնում էր նորա մօտից, նոյնպէս ոչ մի խօսք չը ասելով, լի անհասկանալի զարհուրանքով և այլայլմունքով: Ամբոխը գոռում և կատաղում էր, բայց նոքա արտաքին ձայների վերաբերութեամբ խուլ էին. վերջապէս Մելխիօրը բարձրացրեց իւր գլուխը և միևնոյն տարօրինակ սաթափայլ աչքերով հարցրեց.

— Իսկ Ցուդա Իսկարիովտացին, քո կարծիքով, պարզ և բարոյական մարդ էր:

— Նա այդպէս էր երևում, երբ ես ճանաչո՛ւմ էի նորան. ասաց Բարաբբան ակամայ, քանի որ նա մտքով ծանրաբեռնուած էր երևում և կամենում էր, որ իրեն հանգստութիւն տան իւր մտահոգութիւնների մէջ:—Նա յայտնի էր իւր ճշմարտասիրութեամբ. նորան հաւատում էին. նա Ձագինի գրքերի հաշիւն էր տանում: Նա դէպ առ դէպ ծարաւում էր կատարելագործութիւնների և բարեկարգութիւնների,—նա արհամարհելով բռնակալութիւնը, ատում էր և քահանաներին: Նոքա մինչ այն աստիճան նորան անտանելի էին, որ նա ոչ մի ժամանակ չէր յաճախում աղօթատները, և եթէ անում էր այդ,—դա միմիայն նորա համար էր, որ հօր կամքը կատարած լինէ և աւելի ևս քրոջը գուրեկան լինէ, որին նա չափից դուրս սիրում էր: Այդ բոլորը նա ինձ մի կերպ պատմե՛ց: Բայց մի գեղեցիկ օր նա յանկարծակի և ծածուկ թողեց քաղաքը. ոչ ոք չը իմացաւ թէ ուր գնաց նա—և դորանից յետոյ...

— Դորանից յետոյ դու Ձագինից մարգարիտ գողացար նորա համար, որին դու սիրում ես, իսկ ապա սպանութիւն ես գործեցիր, որպէս զի պատժես նորա չարախօսներին, և այդ բոլորի համար քեզ մութ բանտ ձգելով՝ հազիւ թէ չը խաչեցին այսօ՛ր:

Բարաբբան բարձրացրեց աչքերը, որոնք լուսաւորւում էին մի տեսակ կրակով։

— Ես փառաւորապէս կը մեռնէի այն կայսերանման Մարդուն ազատելու համա՛ր.—բացականչեց նա։

Մելխիօրը ուշադրութեամբ նորա վերայ նայեց, և նորա դէմքի խիստ արտայայտութիւնը փափկացաւ։

— Թէպէտ դու մարդասպան ես և գող, թէպէտ դու զեղծում ես օրէնքները,—ասաց նա,—բայց՝ այնուամենայնիւ՝ մի ինչ որ բարեշնորհ բան կայ քո բնութեան մէջ։ Ես յոյս ունիմ, որ այդ առաւելութիւնը քեզ պատուաբեր լինէ։ Իսկ Յուդայի մասին ահա թէ ինչ կարող եմ ասել ես քեզ։—Երբ նա այնպէս յանկարծակի թողեց Երուսաղէմը, այն ժամանակ Նա գնաց Գալիլիական ծովի մօտ և այնտեղ միաւորուեց Նազովրեցի Մարգարէի մնացեալ աշակերտների հետ։ Նա ճանապարհորդում էր Նորա հետ միասին։ Ես ինքս տեսել եմ Նորան Կափառնայում, և նա միշտ առաջիններից մէկն էր, որ ծառայում էր իւր Ուսուցչին։ Իսկ այստեղ՝ Երուսաղէմում, երէկ՝ գիշերին՝ նա Նորան պահապաններին մատնեց, որի համար յաւիտենական «Յուդա» անունը դարերի ընթացքում պիտի նշանակէ՝ «Մատնի՛չ»։

Բարաբբան դողաց, ինքն էլ չը իմանալով թէ ինչու։

— Իսկ Յուդիթը գիտէ՞ այդ մասին.—հարցրեց նա։

Սառն ժպիտը փայլեց Մելխիօրի շրթունքների վերայ։

— Յուդիթը շատ բան գիտէ, բայց ոչ բոլորը։ Նա եղբօրը չէ տեսել երէկուանից՝ արեգակը մայր մտնելուց սկսա՛ծ։

—Ի՞նչ կայ ո՛ր, հաւանական է, որ նա փախած լինէ քաղաքից։

Մելխիօրը մի տեսակ տարօրինակ ձևով նորա վերայ նայեց, ապա պատասխանեց.

— Այո, փախչեց...

— Իսկ այն մնացողները, որոնք հետևում էին Նազովրեցուն,—շարունակեց Բարաբբան,—ո՞ւր են նոքա։

— Նոքա նոյնպէս փախչեցին,—ասաց Մելխիօրը։—Նոցա ինչ էր մնում անելու։ Բաւականին բնական է և մարդկային բնութեան յատուկ—ձգել կորչողի՛ն։

— Նոքա բոլորն էլ վախկոտնե՛ր են.—ջերմութեամբ բացականչեց Բարաբբան։

— Ո՛չ.—պատասխանեց Մելխիօրը։— Նոքա բոլորն էլ մարդիկ ե՛ն։

Եւ իւր ընկերի տխուր դէմքի արտայայտութիւնը նկատելով, նա աւելացրեց.

— Մի՞թէ դու չը գիտես, ամենասիրելի Բարաբբա, որ վախկոտներ և մարդիկ—միևնոյն բանն է։ Դու երբ և իցէ փիլիսոփայութիւն արե՞լ ես։ Եթէ ո՛չ, ուրեմն ինչո՞ւ համար ես կարդացել դու լատինական և հրէական մագաղաթեայ փաթեթները և խորասուզուել եգիպտացւոց ուսմունքի մէջ։ Չը կայ մի մարդ, որը միշտ հերոս հանդիսանայ մեծ և փոքր գործքերում. գովելի գործողութիւնները կատարւում են խիստ գրգռուած դրութեան րոպէներում։ Նայի՛ր քեզ վերայ.—դու բարձր հասակ ունիս, լայնաթիկունք ես, դու ամուր ոսկորներ և մկանունքներ ունես,—մի խօսքով—դու լաւ կազմուածքի տէր ես և քաջագործ ես երևում։ Չը նայելով այդ բոլորին, կանացի աչերի ակնարկը, կանացի ժպիտը, որ և է ներշնչելի խօսքը չքնաղ կանացի շրթունքներից, կարող են քեզ ստիպել սպանել և մինչև անգամ գողանա՛լ։ Եւ դորա համար էլ դու մարդ ես, նոյնպէս վախկո՛տ։ Լինել չափից դուրս հպարտ՝ չը գողանալու համար, չափից դուրս փափկասիրտ—չը սպանելու համար,—ահա այդ կը լինէր մի տեսակ՝ մարդկային ոյժից վեր՝ քաջութիւն։ Չէ թէ մարդիկ նոյնպէս գաճաճներ են,—նոքա փախչում են որոտմունքից և երկրաշարժից։ Նոքա իրենց ամբողջ կեանքի մէջ երկիւղ են կրում։ Իսկ նոցա կեանքը ինչ է։—Նոյնը—ինչ մի փոշու հիւլէ արեգակի ճառագայթի մէջ, կամ մի մժղուկ մժեղների մէգի մէջ։—Ո՛չ այլ ի՛նչ։ Ոչ մի ժամանակ մարդիկ դորանից բարձր չեն լինիլ, մինչ չը գիտենան գին տալ իրենց կեանքի արժէքին։ Եւ շատ քիչ մարդ կարող է այդ գիտենալ։

Բարաբբան հառաչեց։

— Ճշմարիտ՝ դու շատ ես սիրում կրկնել իմ մեղքերի մասին գիտեցածդ պատմութիւնը,—ասաց նա։—Գուցէ դու մտածում ես, որ ես չե՛մ կարող այդ շուտ շուտ լսել։ Իսկ այժմ դու ինձ վախկոտ էլ ես կոչո՛ւմ։ Այնու ամենայնիւ ես չեմ կարող քեզ վերայ բարկանալ, քանի որ դու պանդուխտ ես, իսկ ես, չը նայելով ազատութեանս, այնուամենայնիւ եղեռնագործ եմ և բացի այդ, դու՝ իմաստուն լինելով՝ միևնոյն ժամանակ և անհասկանալի ոյժի տէր ես... դորա համար ես կը զսպեմ ինձ յանդիմանութիւններից։ Բայց այնքան ուշ չէ ինձ համար, որ ես չը վստահանամ գին չը տալ իմ կեանքիս։ Ես մտածում եմ, որ կը հասնեմ այդ վստահութեան։

'Ի հարկ է կարող ես,—ասաց Մելխիօրը։ Եթէ որ դու միմիայն ցանկանաս, այն ժամանակ ոչ երկնային, ոչ երկրային ոյժերը կարող են խանգարել քե՛զ։ Բայց դա մի այնպիսի գործ է, որի մէջ քեզ ոչ ոք ճանապարհ ցոյց տալ չէ կարող։ Կեանքը յուռութ է՝ (Та-

лисманъ)—քեզ ձրիապէս ձգուած, բայց այդ կախարդական պարգևի նպատակը դու պէտք է հասկանա՛ս։

Առաջացող ամբոխը յանկարծ կանգ առաւ։

Դարձեալ բացականչութիւններ լսուեցին աղաղակների հետ.

— Նա կը մեռնէ նախ, մինչ Նորան կարող կը լինին խաչելո՛ւ։

— Նա ուժաթափւո՛ւմ է։

— Եթէ Նա չէ կարող այլևս քայլել, Նորան կապոտեցէք պարաններով և քա՛րշ տուէք դէպի Գողգոթա։

— Ասացէք Սիմոնին, որ նորան նա խաչի հետ տանէ՝ 'ի միասի՛ն։

— Բռնեցէ՛ք Նորան, չարագործներ.—կոչեց մի կին.—մի՞թէ կամենում էք, որ Կեսարի ականջն ընկնէ, որ Հրէաները—բարբարոսներ ե՛ն։

Աղաղակը քանի գնում աւելանում էր և գազազած ամբոխը դէպի յետ նահանջելով, սպառնում էր ճմլել շատերին. ոմանք ընկան և կոխկրտուեցին. երեխաները լաց էին լինում, անկարգութիւնը կատարեա՛լ էր։

— Այժմ հարկաւոր էր փորձել Նորան ազատելո՛ւ.—շշնջաց Բարաբբան՝ սաստիկ այլայլուած և սեղմեց բռնցունքները, որպէս թէ պատրաստութիւն տեսնելով կռուելու համար։

Մելխիօրը ամուր բռնեց նորան։

— Փորձիր նոյնպէս կորզել արեգակը երկնքից,—ասաց նա բարկութեամբ։ Հանդարտի՛ր, անմտադի՛ր յիմա՛ր։ Դու չես կարող ազատել Նորան, Որի համար մահը—Աստուածային լրումն է կեանքի՛։ Աշխատենք առաջ անցնելու, որ կանգ առնելու պատճառը իմանանք, բայց ոչ մի խօսք մի ասի՛ր։ Սպասի՛ր ց'վախճան։

X.

Այդ խօսքերով, Բարաբբայի ձեռքից ամուր բռնած, նա մտաւ մարդկանց ամենախիտ խմբի մէջ, որպիսին, կարծես թէ կախարդական ոյժով, նորա առջև բացուեց, և շուտով դուրս եկաւ մի բաւականին ազատ տեղ, որտեղից կարելի էր յետամուտ լինել անցնող տեսարանին։ Ընդհանուրի ազմուկը և կոչումները կենտրոնացած էին Նազովրեցու մեծափառ կերպարանքի առջև, Որը՝ այնու ամենայնիւ՝ կանգնած էր վեհութեամբ, բայց չը նայելով դորան, ուշաթափութեան մէջ էր երևում։ Նորա դէմքը մեռելատիպ դժգոյն էր և աչքը

խփուած։ Զինուորները և ամբոխը մտածելով՝ թէ Նորա մահը արդէն մօտեցել է, ջուր էին պահանջում, կամ մի որ և է ուրիշ ըմպելիք անզգայ Կալանաւորին ուշքի բերելու համար,—մինչ՝ վերջապէս՝ մերձակայ տնից մի մարդ դուրս վազեց, իւր հետ մի ըմպանակ ունենալով, որը լցրուած էր գինու և միւռոնի խառնուրդով, ու տուեց այդ ցենտուրիօնին։

Պետրօնիայի սիրտը ակամայ սեղմուեց կարեկցութիւնից և, որպէս թէ խղճի խայթումից դրդուած, նա՝ առաջանալով՝ մօտեցրեց բաժակը Աստուածային Նահատակի շրթունքներին, որը, զգալով սառն հպումը, բացարեց ճառագայթացոլ աչերը և ժպտաց։

Այդ ժպիտի անհամեմատելի գեղեցկութի՛ւնը և փափկակենցաղ քնքշութիւնը անսահման ներողամտութիւն և համբերութիւն արտայայտելով իրենց մէջ, յանկարծ՝ որպէս թէ՝ լուսաւորեցին այդ բոլոր խաւար ամբոխին և թովիչ ներգործութիւն ունեցան նորա վերայ։ Ճչոցները և սուլոցները կտրուեցին, բոլորը ակամայ դարձան դէպի ճառագայթածածկ Պատկերը, որը լուսաւորւում էր նոցա վերայ այնքան անասելի գեղեցկաշնորհութեան մէջ։

Պետրօնիան յանկարծակի վախով բռնուած տատանուեց և վերադարձրեց գինով ու միւռոնով լի ըմպանակը մատուցանողին. Նազովրեցին չը կամեցաւ ոչ մի բան ըմպել, Նա միմիայն իւր լուսաւոր, հրաշալի ժպիտով շնորհակալութիւն արտայայտեց։ Եւ կոպիտ ցենտուրիօնին անբնական երևաց, որ այնպիսի մի անձն, որպիսին Նա է, հարկաւոր է գտնում շնորհակալութիւն յայտնելու, անգամ միմիայն ակնարկով... բայց ինչո՞ւ անբնական. Պետրօնիան իրեն այդ բացատրել չը կարողացա՛ւ։

Մինչ այդ մի քանի կանայք աւելի մօտ շարժուեցին դէպի Դատապարտուածը, և ուղիղ Նորա դէմքին նայելով,—գերուած էին Նորա մեծափառ տեսքով, որոնք սկսեցին Նորա մասին խօսել զգացուած և խղճահարութեամբ. իսկ միւսները, աւելի զգայունները, վստահացած յարգանքի շշուկով, որ անցաւ ամբոխի միջից, սկսեցին բարձրաձայն հեկեկալ, իրենց կուրծքերին խփելով, իրենց վիշտը ցոյց տալու նպատակով։

— Հրէաները՝ կարող է պատահել՝ կը փոխեն իրենց դատավճիռը,—ասաց մի զինուոր դժգոհութեամբ։—Այս անընդհատ կանգ առնելով և լաց ու կոծով մեր գործը ոչ մի ժամանակ չը պիտի վերջանա՛յ։ Ինչո՞ւ չենք յառաջանում մենք։

— Լռի՛ր.—ասաց Պետրօնիան սաստկութեամբ։—Մի՞թէ չես

տեսնում, որ Նա թուլանում է յոգնածութիւնից և՝ հաւանական է՝ մտրակի հարուածների ցաւից: Թող տուր Նորան հանգստանալո՜ւ:

Բայց Նա, Որի մասին խօսում էին, արդէն ուշքի եկաւ: Նորա շրթունքները թեթևաբար բացուեցին—դողդոջ և տամուկ, որպէս թէ երկնքից նոր ոյժ ստացած: Թեթև կարմրութիւնը նորից ծածկեց Նորա երեսը, և Նա նայեց—ինչպէս մի մոլորեալ հրեշտակ,—Իւր ուր գտնուած լինելը կամենալով գիտենալ:

Ողբացող կանայքը՝ երեխաներին գրկած՝ դէպի Նա մօտեցան և, չը քաշուելով զինուորների բարկացկոտ ակնարկներից, հպուեցին մինչ Նորա հագուստը: Մի երիտասարդ մատրոնայ 1), Հռովմից եկած, բարձրացրեց իւր փոքրիկ խարտեաշ որդեակին, որ փոքրիկը կարողանար Նորան նայելու: Երեխան առաջ ընկաւ, կամենալով բռնելու նախ փշեայ պսակը, ապա թէ ոսկեգոյն մազերը: Այն գրաւիչութիւնը և անսահման քնքշութիւնը, որոնք արտափայլում էին Աստուածային Անմահի դէմքի վերայ՝ երեխայի գրաւիչ ու քաղցրիկ փորձերը տեսնելիս, խոր շարժեցին մօր սիրտը, որը սեղմելով իւր փոքրիկին գրկի մէջ՝ անզուսպ և ուժգնապէս հեկեկալ սկսեց. մեծկակ արցունքները նորա աչերի վերայից թափուեցին իւր փոքրիկ որդու գլխի վերայ: Միւս կանայք, նորա օրինակից վարակուելով, նորոգեցին իրենց լացը այնպիսի ջղաձգական (իստերիկական) աւիւնով, որ մարդկանց դժգոհութիւնը, որ վաղուց արդէն երևում էր, այժմ իւր սահմանից դուրս եկաւ:

— Ի՞նչ անպիտան արարածներ են այդ կանայք: Ձարժուեցէք շուտո՜վ: Այս լացով նոքա՝ հաւանական է՝ կարող պիտի լինեն դատարեցնելու օրէնքի կատարո՜ւմը: Մենք այլ ևս ինչո՞ւ ենք սպասում:

Բայց այդ բարկացկոտ բացականչութիւնները քիչ ներգործութիւն ունեցան, և լաց լինող կանայք դեռ ևս խռնւում էին Նազովրեցու չորս կողմը, մինչ Նա Ինքը նոցա վերայ նայեց սիրալիր, բայց միևնոյն ժամանակ և հրամայական արտայայտութեամբ, որով մի անգամից զսպեց նոցա:

Հանդարտ, թոյլ ձայնը, ինչպէս մեղեդի, հնչեց,—հրաշալի, չափից դուրս դիւրահնչիւն երգի նման.

— Դստերք Երուսաղէմի, մի՛ լայք ի վերայ իմ, այլ լացէ՛ք ի վերայ անձանց և ի վերայ որդւոց ձերոց 2). զի եկեսցեն ա-

1) Матрона—հռովմայեցի պատուաւոր կին—մայր:

2) Զորոց աղաղակեցին Հրեայքն, Արիւն դորա ի վերայ մեր եւ ի վերայ որդւոց մերոց:

ւուրք յորս ասիցեն՝ թէ Երանի՜ ամլոց եւ որովայնից որ ոչ ծնան, եւ ստեանց որ ոչ դիեցուցին 1): Յայնժամ սկսանիցեն ասել լերանց՝ թէ անկերո՛ւք ի վերայ մեր, եւ բլրոց թէ ծածկեցէ՛ք զմեզ:

Հնչուն ձայնը դողաց, և Կալանաւոր Արքայի հրաշալի աչերը փայլեցին մտածկոտ կարեկցութեամբ, և Նա շարունակեց.

— Զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զինչ լինիցի 2):

Կանայք լսում և նայում էին Նորա վերայ տարակուսանքի մէջ, ու հանդարտում, թէպէտ չէին հասկանում Նորա խօսքերի նշանակութիւնը: Վերջին բառերը նոցա աւելի ևս անհասկանալի երևացին և նոքա չէին կարողանում հասկանալ, որ «դալար ծառ» խօսքերի տակ Նա անուանում էր ամբողջ աշխարհը, որ Նա նախատեսնում էր մարդկանց անհաւատութիւնից և անլսելութիւնից առաջացած սոսկ միմիայն վիշտը, որի շնորհիւ աշխարհը կը հնանայ և կը փտէ, ինչպէս «չոր ծառ»: Չոր անհաւատութեան և չոր սիրոյ մէջ, առանց անսասան սուրբ զգացմունքի, այս աշխարհը նման պիտի լինէ չոր Խուիք, և կը կորչէ, ինչպէս աստղային փոշի անեզրականութեան մէջ, իւր Արարչի և բարձրագոյն ճակատագրի կամքը չը կատարելով: Այսպիսի նախազգացմունքներ լինում են միմիայն մտածողների և փիլիսոփաների մէջ: Մարդկանց մեծագոյն մասը ոչ ժամանակ, ոչ էլ կամեցողութիւն ունեն դորա մասին մտածելու: Նոքա ժամանակ ունեն՝ խըմելու, ուտելու. ունեն ժամանակ,—որ դողան և խաբեն, ժամանակ ունեն սպանելու և ցածրացնելու մարդուս արժանաւորութիւնները... Բայց ժամանակ չունեն կանգ առնելու և մտածելու, որ չը նայելով մեր բոլոր աննշան աշխատանքներին և թեթև փառասիրութեան, այս մոլորակը մեզ չէ պատկանում, այլ Աստծուն, և եթէ Նա կամենայ միայն, այս աշխարհս մի վայրկեանի մէջ անհետ կը կորչէ, և նորա յիշատակը կը մնայ սոսկ 'ի սէր այն բանի, որ նորա վերայ Աստուածափառ Քրիստոսը ծնուելով և մեռնելով,—սրբագործեց նորան:

Հրէայ ժողովրդից ոչ մէկը այդ մեծահռչակ առաւօտեան չը կարողացաւ հասկանալ այն հրաշքը և ծածկեալ խորհուրդը, որ

1) Զի ոչ տեսցեն վաղէտս որդւոց իւրեանց:

2) Եթէ ընդ իս այս անցք անցանեն՝ ընդ սուրբս եւ ընդ անարատս, իսկ զինչ ընդ մեղապարտսն եւ ընդ ամբարիշտս լինիցի:

«Վարք Քրիստոսի—Հ. Գաբրիէլ Այվազովսկու»:

Բացատր. Հայ թարգմանչի:

դուրս էին գալիս Աստուածային Պատկերից, որը իւր մեծափառութեամբ այնքան հանդարտ շարժւում էր նոցա մէջ։ Բոլորը, ինչ հասկացան նոքա, այն էր, որ այդ զարմանալի ֆիզիքական գեղեցկութեան տէր մարդը քահանայապետների ձեռքով մատնուած էր մահուան դատակնիքի իւր նոր ուսմունքի համար, որ կայանում էր իրեն Աստուած կոչելու մէջ։

Վախեցած կանայքը, որոնց կոպտութեամբ հրում էին պահնակները, ողբալով այդ մահուան պատիժը, ցրուեցին ամբոխի մէջ, ինչպէս մի փոթորիկի տակ գտնուած տերևներ, և իրենց արցունքները մոռանալով, խորասուզուեցին իրենց երեխաներին հրելուց պահպանելու աշխատութեան մէջ։

Դէպի զանազան կողմերը ընկնող վախեցած ջորիների և ձիաների պատճառով անկարգութիւնը զգալի աւելացաւ. դոքա ընկած էին այդ խառնիճաղանճի մէջ մօտակայ զուգընթաց փողոցներից։

Բայց՝ վերջապէս՝ զառիվայր դարձուածքը բաց արեց բոլորի առջև դէպի Գողգոթա տանող տեսարանը։ Ամբոխը ընդհանուր խլացուցիչ աղաղակ բարձրացրեց և Սիմոն Կիւրենացին, որ դեռ ևս տանում էր խաչը, շփոթուած և տխրած այդ վայրենի վայնասունով, դէպի վեր բարձրացրեց իւր գլուխը։

Նա մինչ այդ ժամանակ մի տեսակ մոռացկոտութեան մէջ էր։ Նա իւր բեռան ծանրութիւնը չէր զգում և նորան այնպէս էր թըւում,—որպէս թէ նա օդի վերայով գնալիս լինէ։ Նա բոլոր ժամանակ լուռ էր, չը նայելով՝ որ շրջապատողներից շատերը նորա վերայ ծիծաղում էին և աշխատում բարկացնելու նորան թէ կոպիտ կատակներով և թէ—ծաղրածութիւններով։ Նա անգամ վախենում էր ձայն հանելու, որպէս զի դորանով մի գուցէ կորցնէ այն հրաշալի և քաղցր դրութիւնը, որի մէջ գտնւում էր ինքը,—մի դրութիւն, որը լցնում էր նորա հոգին զմայլմունքով, որի աղբիւրը նա իրեն բացատրել չէր կարողանում։ Նորա չորս կողմում, ամբոխի աղաղակներից վերև, վխտում էր մի տեսակ երաժշտութիւն, նա զանազանում էր ծածկախորհուրդ մեղեդիներ, որոնք կարծես դուրս գալիս լինէին եթերական քնարից։ Ճանապարհի կարծր քարերը նորա համար թաւիշանման փափուկ էին, այն խաչը, որ նա տանում էր, մրտենւոյ և վարդենու անուշահոտութիւն էր բուրում, նա ծանր չէր անգամ արմաւենի ոստից, որը կտրուած լինէր 'ի յիշատակ յաղթութեան։ Նա մըտաբերեց թէ ինչպէս իւր երիտասարդ հասակի մէջ տանում էր—մի անգամ—իւր ուսերի վերայ երկու տարեկան մի արքայազնու, ընդկալնելով նորան Կարինէան լեռներից ներքև՝ մինչ դէպի ծովը, և ե-

րեխան՝—գոհ իւր գնացքի սրնթացութեամբ՝—տատանում էր որթի ճիւղը, իւր զմայլմունքը արտայայտելու համար։ Խաչի ծանրութիւնը այն երեխայի ծանրութիւնից աւելի չէր, որը ուրախութեամբ խաղում էր իւր ոտի հետ։ Բայց նուիրական ուղին արդէն մօտենում էր իւր վախճանին։ Ամբոխի բիրտ աղաղակները զարթեցրին նորան։

Հրաշալի մեղեդուն յաջորդեց մի աննկարագրելի սրտաճմլիկ երգ. և երբ նա Գողգոթան տեսաւ, այն ժամանակ սկսեց մի տեսակ մահացու դառնութիւն զգալ։ Իւր կեանքի մէջ նա ոչ մի ժամանակ այդպիսի զգալի երջանկութիւն չէր վայելել, ինչպէս ներկայումս, երբ նա տանում էր Նորա խաչը, որը շուտով պիտի 'ի խաչ հանուէր։ Բայց մօտեցաւ այն ժամանակը, երբ նա պարտաւորուած, վայր պիտի դնէր իւր ուսերից այդ խաչը, նորից բարձրացնելու համար անհամեմատ աւելի ծանր բեռն թէ կենսական դառնութիւնների և թէ զրկանքների՝ դառն տանջանքի հետ զուգաւորուած։ Ինչո՞ւ չէ սպասում ինձ մահը հէնց այստեղ,—մտածեց նա խռովութեամբ, այստեղ, որտեղ այդ Լուսաճաճանչ գլխով Մարդը փայլում է իւր դէմ, ինչպէս երկնքի վերայ պայծառ արեգակը։ Դա ինչքան լաւ կը լինէր... Գողգոթան երևաց նորան համայն կեանքի բնական վախճանը։ Նա, սոպռի մէկը, չը լուսաւորուած ու անկիրթ, չէր կարող բնալուծել այն, ինչ զգում էր և իւր նոր զգացմունքների վերաբերութեամբ հասկացողութիւն կազմել, բայց մի տեսակ փոփոխութիւն առաջացաւ նորա մէջ, այն րոպէից սկսած, երբ նա կրեց խաչը իւր ուսի վերայ,—նա այդ հասկանում էր։

Երբ ամբոխը—վերջապէս—հասաւ 'ի տեղի պատժարանի, մի քանի ձիաւորներ, կողմնակից փողոցից սրնթաց անցնելով, միակերպ սլացան լեռան վերայ։ Նոցա տաքացած ձիաների սմբակները գետինը փորելով, աւազի կոյտեր էին ցրւում չորս կողմերի վերայ։ Այդ հռովմէական պատրիցիաներն *) էին, որոնք, լսելով մի ինչ որ առաջացող անցքի մասին, եկել էին ներկայ գտնուելու այդ հրէական հանդիսակատարութեան։

Նոցանից յետոյ եկան մի խումբ ուրիշ մարդիկ—ոսկով, գոյնզգոյն, փայլուն, թանկագին հագուստների մէջ։ Դոքա Կայիափա և Աննա քահանայապետներն էին, Սինեդրիոնի շատ անդամների և նոցա խմբի մէջի ընտիր մարդկանց հետ։

Մինչ այդ՝ Բարաբբան գտնւում էր Մելխիորի հսկողութեան

---

*) Այդպէս կոչւում էին հին Հռովմում բարձր դասակարգի ներկայացուցիչները։

տակ, որը, զարմանալի դիւրութեամբ, թեթևութեամբ և հանդարտու-
թեամբ, անցկացրեց նորան մարդկանց ամենախիտ խմբի միջից դէ-
պի մի արձակ տեղ,—լեռան ամենամերձ ստորոտում:

Մինչ նոքա կը հասնէին այդտեղ, մի քանի-փարթամ հագնը-
ուած կանայք, որոնցից մի քանիսը ցած թողնուած ծածկոցների
տակ էին, մօտակայ հովապատ այգու ճեմելիքից դուրս գալով, ընկը-
սեցին հանդարտ—չը շտապելով—բարձրանալ դէպի սարը:

Նոքա ուրախութեամբ խօսում և բարձր ձայնով ծիծաղում էին:

Նոցանից մէկը՝ ամենաբարձրը,—գիրաթեք, փտահ չար-
ժուածքներով, առաջ էր ընթանում աչքի ընկնող հպարտութեամբ:
Նորա գլուխը և ուսերը ծածկուած էին շողշողան կարմրով և փայ-
լուն հրավառ թիկնոցով:

— Նայի՛ր,—շշնջաց Մելխիօրը, Բարաբբայի թևից բռնելով,
նորան պահելու համար:—Ահա՛ նա: Տեսնո՞ւմ ես այն մեկենազոյն
հագուստը: Այդ այն ծաղիկի մեռաքսեայ պատեանն է, որի հոտը
հանում է քեզ խելքից: Դա գողացած մարգարտի գնահատողն է,—
հրէաստանի ամենաանմեղ և ամենաանարատ կոյսը—Յուդիթ Իսկա-
րիովտացի՛ն...

Բարաբբան կատաղի զոռոցով և հայհոյանքով աշխատեց ազատ-
ուել նորանից:

— Թո՛ղ ինձ.—ճչաց նա: Մի՛ բռնիր ինձ: Երդւում եմ հոգւո-
վըս,—ես քեզ կը սպանե՛մ:

Նա 'ի զուր էր ճիգ թափում ազատուելու: Մելխիօրի ձեռքը,
թէպէտ թեթև էր երևում, բայց երկաթի ոյժ էր պարունակում իւր
մէջ, որը չը դողաց անգամ, իսկ պէծպծան աչքերը չը վրիպեցին
Բարաբբայի բարկացկոտ դէմքի նայելուց, որոնք ձգուած էին նորա
վերայ խորին, անտանելի արհամարհութեան արտայայտութեամբ:

— Ցանկոտ,—ասաց նա հանդարտութեամբ—մոլորեալ բար-
բարո՛ս: Երդւում ես հոգւովդ, որ դու ինձ կարող ես և սպանե՛լ: Մի
երդւիր հոգւովդ, բարեկամս, ինչքան էլ խորթ չը հնչէ հոգի բառը
քո վերաբերութեամբ, բայց՝ այնուամենայնիւ՝—նա քո մէջ գոյու-
թիւն ունէ՛: Այդ անվիճելի է, ուրեմն այդպէս. նայի՛ր, որ նա քեզ-
նից վրիժառու չը լինէ—նորա համար, որ 'ի զուր տեղը հոգի ա-
նունը գործ ես ածում: Մի՞ գուցէ մտածում ես, որ ինձ ես նոյնչափ
հեշտ է սպանել, որքան և փարիսեցուն: Դու շատ սխալ ես: Քո դա-
նակի պողպատը կը հալուէ իմ մարմնիս մէջ, ձեռքերդ կը կար-
կամէին, եթէ համարձակուէիր դու նոյա ինձ վերայ բարձրացնելու:

Գանգ առ մի առժամանակ և մի թօթափիլ քեզնից ընկերակցութիւնս,
դա դեռ քեզ շատ հարկաւոր պիտի լինէ՛:

Բարաբբան նայեց նորա վերայ աղերսանքով և մի տեսակ սառն
ծանրութիւն ընկաւ նորա սրտի վերայ և նորան տիրած զգացմունքը
անչափ գրգռեց նորան: Եւ նա, ինքը իրեն հաշիւ չը տալով, ուժա-
սպառ եղած, րոպէական զգացմունքի ազդեցութեան տակ, ընկճուեց
այդ անծանօթի իշխանութեան առջևը: Մեղաւորը նա ինքն էր, եթէ
այժմս նորա կամքը բոլորովին խորտակուած էր:

Նա միմիայն մի տխուր ակնարկ ձգեց դէպի կրակափայլ թիկ-
նոցը և դատարկեց մաքառելուց. մինչ այդ հրափայլ թիկնոց կրող
կինը միշտ վեր էր բարձրանում դէպի Գագաթան *), հեռուից, օդի
մէջ լողացող հնդկաթզենու ծաղկի նմանելով:

— Դու չը գիտես,—շշնջաց նա:—Դու չես կարող գիտենալ,
թէ ուրքա՞ն եմ փափագում ես գէթ նորա դէմքին նայելու:

— Եւ դու չուտով քո ծարաւը կը կոտրես, բայց՝ գոնէ՝ այն-
պէս ձևացիր,—որ մարդ ե՛ս: Մի՛ մատնիր քեզ նորա ընկերուհիների
ներկայութեամբ. Նոքա միմիայն քեզ վերայ ծիծաղել կարող են.
միևնոյն ժամանակ մի մոռանալ, որ դու եկել ես այստեղ մահ տես-
նելու՝—այնպիսի մահ, որը ամեն տեսակ սէրից բա՛րձր է:

Բարաբբան հառաչանք արձակեց և նորա գլուխը տխրութեամբ
դէպի ցած ընկաւ: Նորա դէմքի ոյժեղ, արտայայտիչ գծերը այլայլ-
ուած էին իրեն ծփող բուռն ցանկութեան ազդեցութեան շնորհիւ,
բայց այն տարօրինակ ոյժը, որ նորա վերայ ունէր իւր ընկերը—
անխուսափելի էր:

Մելխիօրը աչալուրջ քննելով նորան, սկսեց նորա հետ նորից
քնքշութեամբ խօսել,—այս անգամ բնորոշ և լուրջ.

— Նայի՛ր. նոքա արդէն բարձրանում են Գողգոթայի վերայ:
Դատապարտուածին տեսնո՞ւմ ես դու, տես և նորա պահնակներին,—
որոնք արդէն լեռան կէսի վերա՛յ են: Գնանք, հետևենք նոցա: Դու
պիտի տեսնես, թէ ինչպէս է աշխարհը մեռնում և ինչպէս պիտի
արեգակը խաւարէ՛: Դու կը լսես բարկացած Աստուծոյ ահարկու որոտ-
մունքը այդ սիմվօլիկական (նշանաբան) Աստուածայնութիւնը մար-
դուս մէջ սպանելու վերաբերութեամբ: Դեռ ո՛չ մի ժամանակ չէ կա-
տարուել այդպիսի քստմնելի սպանութիւն, դա մարդկութեան ուղիղ

*) Երրայեցի է ձայնդ՝ կուկօլէթ՝ որ զԳառափն նշանակէ, այն է՝ Տեղի
կառափելոյ—Գողգոթա: «Վարք Քրիստոսի—Հ. Գ. Այվազովսկու»:
Բացատր. հայ-թարգմ.

նշանաբանն է, և այդ օրից աշխարհս պիտի շարունակէ իւր ճանապարհը արիւնային մէգի մէջ, դուցէ ազատուած, բայց բծաւորուած —և դրոշմուած յաւիտենական դարերի ընթացքի մէջ խաչի նշանով։

XI.

Բարաբբան լսում էր և դողում։ Նեղուած և ակամայ երկիւղի տակ նա իւր նոր ընկերին էր հետեւում։ Անհասկանալի, մի տեսակ ներքին բնազդում համոզում էր նորան Մելխիօրի խօսքերի զարհուրելի ճշմարտութեան մէջ, բայց նա իրեն բացատրել չէր կարողանում, թէ ինչու օտարականը խորհրդաւոր Նազովրեցու մասին աւելի գիտէր, քան թէ իրենք՝ հրէաները։ Նա սկսեց լեռան վերայ բարձրանալ վշտով լցուած սրտով և համարեա թէ՝ յուսահատութեան մէջ։ Նա զգում էր, որ մի ինչ որ զարհուրելի և անհասկանալի բան պիտի կատարուէ. և թէ Իսրայէլի որդոց վերայ սարսափելի ոյժով կարող է ընկնել այն նզովքը, որը իրենք իսկ իրենց վերայ կոչեցին։ Աստուած ինքը չէ կարող փոխել մարդուս կամ մի ազգի ճակատագիրը, երբ այդ ընտրուած է արդէն բուն իրենցից։ Անկիրթ Բարաբբան անգամ հասկանում էր կամքի ազատութեան ոյժը։

Զոր գետինը ճաթրտում էր ոտքերի տակ, կարծես թէ վառուելիս լինէր և տաքութիւնը աւելի ևս սաստկանում էր։

Համարեա օրուայ երրորդ ժամն էր և կիզիչ արեգակի կուրացուցիչ փայլը անխնայ ծածկում էր ամբողջ հրապարակը, որը մի տեսակ ահեղ փեթակի տպաւորութիւն էր թողնում, լցուած խառնիճաղանճ մեղուներով։

Ամբոխը չորս կողմը փռուելով, առանձին խմբեր կազմեց, որոնցից ամեն մէկը, յետ և առաջ շարժուելով, աշխատում էր իրեն համար աւելի բարեպատեհ տեղ գտնելու, որ կարող լինէր ամբողջովին դիտելու այն սոսկ եղեռնագործութիւնը, որը շուտով պիտի 'ի խաչ հանուէր։ Սարը ինքն այնքան բարձր չէր և զով օրերին դիւրին էր նորա վերայ բարձրանալ, բայց այդ օրը, երբ երկինքը և գետինը վառւում էին մի տեսակ չարաբաստիկ կրակով, ճանապարհը դժուար էր երեւում և երկար։

Մելխիօրը և Բարաբբան, չը նայելով արեգակի փայլուն, կիզիչ ճառագայթներին, գնում էին անընդհատ և բաւականին արագ, մինչ՝ վերջապէս՝ գագաթին հասնելով, պատահեցին կանանց մի փոքրիկ

խմբի. այդ խումբ կազմողները շրջապատել էին ուշաթափութեան մէջ ընկած մէկին, որը պարկած էր նոցա առջև։ Բարաբբան կոպտութեամբ մտածելով, թէ մի գուցէ Յուդիթը ևս նոցա թւի մէջ է գտնւում, առաջ վազեց։ Մելխիօրը չը արգելեց նորան։

Բայց նա շուտափոյթ հիասթափուեց—մետաքսեայ հագուստի մէջ մտած գեղեցկուհին չը կար։

Կային միմիայն մի քանի գժգոյն, վատագին հագնուած կանայք, որոնցից մի քանիսը աղիողորմ լալիս էին։ Միմիայն մէկը բարձր կոչումից էր երեւում. նա կանգնած էր առանձին,—բաց թողնուած խիտ ծածկոցի շնորհիւ անկարելի էր նկատել նորա դէմքը։ Բոլորի ուշադրութիւնը ամփոփուած էր նորա վերայ, ով զրկուել էր գիտակցութիւնից։ Արտաքին տեսքով նա բոլորից էլ աղքատիկ էր երեւում։ Կոպիտ գորշ կտաւեայ հագուստի մէջ, նա փսիաթից գոտի էր կրում. նա պարկած էր այն դիրքի մէջ, որի մէջ ընկել էր ու նոր մեռածի տպաւորութիւն էր թողնում։ Նորա հանդարտ, սրտառուչ գեղեցկութիւնը այնքան շլացուցիչ էր, որ Բարաբբան նորա անօգնական դրութիւնը տեսնելով, դէպի նա մի տեսակ քնքոյշ կարեկցութիւն զգաց։ Նորան միւս կանանցից գլխաւորապէս զանազանում էին իւր մազերը։ Նա վայր ընկնելիս, նոքա սփռուել էին, իսկ այժմ խիտ ոսկեհուռ ալիքներով նորա դէմքը պատելով, մինչ ծնկներն էին թափւում։ Նորա դէմքի գծերը ողորկ կլորուած և փափկատիպ էին, ինչպէս երեխաներինը, իսկ խփուած աչերի աւելի մութ մազերից խիտ արտեւանունքները ստուեր էին ձգում այտերի վերայ։

— Սորան ինչ է պատահել,—հարցրեց Բարաբբան մեղմութեամբ։

Երկու-երեք կանայք նորա վերայ կասկածանքով նայելով, ոչինչ չը պատասխանեցին։

Մելխիօրը կանգ առնելով, փոքր ինչ հեռուում սպասում էր։ Բարաբբան նախ կոչեց նորան, բայց տեսնելով, որ նա չէ շարժւում, ինքը դէպի նա մօտեցաւ։

— Միթէ մենք նորանց չենք կարող օգնութեան հասնել.— հարցրեց նա։—Այնտեղ մի հրաշալի գեղեցկութեան տէր աղջիկ ընկած է ուշաթափ և անօգնական։

— Ինչ կամենում ես, արա՛,—պատասխանեց Մելխիօրը, հանդարտութեամբ նայելով նորա երեսին։—Բայց ես պարտական եմ ըզգուշացնելու քեզ։ Այդ զմայլելի գեղեցկութեան տէր աղջիկը, ինչպէս դու ես նորան կոչում,—մի թեթեւաբարոյ կին է. դա քաղաքի ոսկեհեր ցոփուհին է, որի անունն է Մարիամ Մագդաղենացի։

Բարաքբան սարսեց՝ խայթուածի նման, ու յօնքերը կիտեց:

— Մարիամ Մագդաղենացի,—շշնջաց նա։—Այո, նա մեղաւոր կի՛ն է: Նորա մասին ես շա՛տ բան եմ լսել: Բայց ես ինքս չեմ կամենում անխիղճ լինել և նորա վերայ քար չէի ձգիլ, բայց — այնուամենայնիւ—եթէ որ ես այսօր Յուդիթին տեսնեմ և նորա հետ խօսակցութիւն ունենամ, այն ժամանակ...

— Բաւական է,—կտրեց նորա խօսքը Մելխիօրը արհամարհարար:—Ես հասկանո՛ւմ եմ քեզ: Դու չես կամենում արտատաւորուել, իմ բարի բարեկամս, անառակ կնոջ ակնարկից, քանի որ Յուդիթը մաքուր է, ինչպէս դրախտը, իսկ Մարիամը մեղաւոր է՝— ինչպէ՛ս դժոխք: Թո՛ղ նորան այնտեղ, որտեղ նա պառկած կայ, թո՛ղ նորան նոցա ձեռքերի վերայ, որոնք շրջապատել են նորան: Նա, որին դու՝ մարդասպանդ, արհամարհում ես, դարձրուած է դէպի գզջում և ներուած նորանով, որ այս ժամուս պիտի մեռնէ: Բայց ինչ օգուտ դորանից: Ոչինչ, քանի որ նորան կը խաչեն: Իսկ դու, մինչդեռ, պիտի ապրե՛ս: Ո՜հ, հրաշալի աշխարհ, սանդրող արդարադատութեան: Փոքր ինչ առաջ անցնենք:

Բարաքբան լսում էր նորան ամօթահար լռութեամբ:

— Եթէ նա դարձի է եկել, ուրեմն այդ լաւ նշան է,—շշնջաց նա,—բայց ինչո՞ւ համար՝ եթէ այդպէս է՝ ինքդ չես մօտենում նորան:

Մելխիօրի աչքերի հեգնական արտայայտութիւնը յանկարծակի լըջութեան փոխուեց:

—Ինչո՞ւ.—կրկնեց նա մտածմունքի մէջ ընկած։—Եթէ ես քեզ ասեմ՝ ինչու, դու կը իմանայիր այն, ինչ դեռ ես չեմ կարող հասկանալ: Բաւականացիր նորանով, ինչ որ ես քեզ կասեմ. այդ կանանց մէջ կայ Մէկը, որին ես չը պիտի համարձակիմ առանց երկըրպագութեան մօտենալ. այնտեղ, ուր նա ոտնակոխում է, գետինը նուիրական է դառնում: 'Ի սէր նորա, կինր յաւիտենական դաբերի ընթացքի մէջ թագուհի պիտի լինէ: Ո՛չ, այդպիսի զարմացական ակնարկով մի՛ նայիր, դու դեռ աւելին կը լսե՛ս:

Այդ խօսքերից յետոյ, նա նորից սկսեց առաջ ընթանալ, և Բարաքբան, աւելի ևս շփոթուած, ուսի վերայից դէպի յետը մնացած խումբը մի անհանգիստ ակնարկ ձգեց: Նա նկատեց, որ Մագդաղենացին այնքան էր ուշքի եկած, որ կարողանում էր դժուարութեամբ ոտքի կանգնել, ու զմայլելով նորա մազերի չքնաղութեամբ, որոնք լուսաւորուած էին արեգակի փայլուն ճառագայթներով, դարձրեց աչքերը և լռութեամբ սկսեց հետևել Մելխիօրին

Յանկարծ սրտաճմլիկ, չարաչար մի ճիչ օդը ճեղքելով՝ կրկնուեց դարձեալ և դարձեալ:

Բարաքբան կանգ առաւ, նորա արիւնը սառեցի կտրուեց այդ զարհուրելի հառաչքից, և անկարող լինելով որևէ ձայն հանելու, նա վախկոտութեամբ և հարցական ակնարկով իւր ընկերոջ վերայ նայեց:

—Այդ դեռ առաջին զգացմունքն է ցաւի, որպիսին դու այսօր և սոյն րոպէիս մէջ կարող էիր փորձել,—ասաց Մելխիօրը։—Դեռ այժմ մեխում են երկու աւազակներին: Լսում ես մուրճերի խուլ հարուածները: Դարձեալ մի քանի քայլ, և ահա մենք բոլո՛րը կը տեսնենք:

Նոքա շտապեցնելով իրենց քայլերը, երկու րոպէի մէջ բլրի գագաթին հասան: Այդտեղ՝ միանգամից. նոցա առջև բացուեց սպանութեան տեղի ահարկու ամբողջ բեմը,—որը մի այնպիսի քստմնելի մեծութեան տէր տեսարան էր, որ մարդկային խելքը անընդունակ էր հասկանալու նորա տուած եղերերգական,—չարատանջ, անսահման դառնութեամբ լեցուած,—չար պտղի արժէքը:

Խիտ ամբոխը շրջապատեց ամբողջ գագաթատեղին: Զինուորները երկու մասի բաժանուեցին. առաջին շարքը դէպի աջ, իսկ միւսը՝ դէպի ձախ: Ցենտուրիօնը նշան տուեց, և Սիմոն Կիւրենացին ակամայ, նկատելի քնքշութեամբ, իւր ուսերի վերայից վայր դրեց ահագին խաչը. Նոյն րոպէին Նազովրեցին հանդարտութեամբ շարժուեց դէպի այն տեղը, որը ցոյց տուեց նորան պահապանը և տանջանաց տեղին մօտենալով, սկսեց խոնարհութեամբ սպասել ճակատագրի իւր դէմ հանած փորձանքի վախճանին:

Դահիճները արդէն սկսել էին իրենց զարհուրելի աշխատանքի մասերով պարապել, քանի որ, Կայիափայի կարգադրութեամբ, երկու աւազակները աւելի վաղ պիտի գամուած լինէին իրենց խաչերին: Այդ նորա համար էր արուած, որպէսզի հրէական քահանաների նըրբաճաշակ անխղճութիւնը բաւականութիւն գտնէր, որոնք յոյս ունէին այդպիսով Նազովրեցուն վախեցնելու, նախ նորան վկայ կանգնեցնելով այն մարդկանց տանջանքին, որոնք պարտաւորուած էին նորա հետ միասին մեռնելու: Բայց սիննդրիօնի արիւնարբու անդամները իրենց բաղձանքին չը հասան:

Աստուածային Կալանաւորի լուսափայլ Պատկերի վրայից երկիւղի ստուեր անգամ չը անցաւ. Նորա սիգապանծ Իրանը ոչ մի անգամ չը դողաց նախաճաշակելիք տանջանքների ազդեցութիւնից:

Նա կանգնած էր ուղիղ, ինչպէս հրամայող հաղթական աշխարհների և իւր ոյժը զգացող. Նորա բարձր և ձիւնափայլ կերպարանքը զգալի ջոկւում էր հրափայլ երկնքի տակ և միաւորւում էր իւր մէջ փայլփլուն արեգակային ճառագայթների համայն կուրացուցիչ փայլը. Նորա փշեայ պսակի իւրաքանչիւր փուշը փայլփլում էր, գերթ ցօղի կաթիլ. Հանդարտ, հրաշալի դէմքը անմահ գեղեցկութիւն էր պատկերացնում և ոտքերը այնպէս թեթև էին հպւում այրող գետնին, որ Նա ամբողջովին մի պայծառ ամպ էր երևում, որը միամտաբար վայր էր իջել երկնքից: Աշխարհը, երկինքը, օդը և արեգակը, բոլորովին Նորա մասնը երևալով, գաղտնաբար զգում էին Նորա ներկայութիւնը: Եթէ որ Նա մի խօսք արտասանէր, մի հրամայական բառ, տարերքը պիտի դողար Նորանից: Բայց այդ ոյժը յայտնի էր միմիայն Աստծուն և հրեշտակներին,—իսկ Նա շարունակում էր լռել և Նորա լուսաճաճանչ աչերը՝ կարծես թէ՝ հանդարտութեամբ ասում էին.

—Ես գնում եմ, որպէսզի մահուան վարագոյրը բարձրացնեմ, որից բոլորը վախենում են: Ես կը անցնեմ չարչարանքի միջից և՝ տանջանք կրելով՝ պիտի խրախոյս կարդամ թոյլ մարդկութեանը: Եւ ես վայր կը իջնեմ գերեզմանի մէջ, ինչպէս մարդ, որ հաստատեմ՝ թէ մարդս, թէպէտ ըստ երևոյթին, և մեռնում է, բայց նաև յարութիւն է առնում նոր՝ յաւիտենական՝ կեանքի համար:

Մինչ այդ, կեղեքիչ հառաչանքները, որոնք այնքան վախեցրին Բարաբբային, սկսեցին աւելի ուժեղ և յաճախ կրկնուել: Ճչում էր պատժի ենթարկուած աւազակներից մէկը,—միւսը լուռ էր: Հիւանդոտ հետաքրքրութեան զգացմունքով և ջղային վախով, Բարաբբան մօտեցաւ այն տեղին, որտեղ դահիճներն էին գործում, և մարդընչող այլայլուած յանցաւորի դէմքը տեսնելով, չը կարողացաւ իւր զարմացական աղաղակը պահելու:

—Գանի՜ն:

Յանցաւորը ճիշտ որ Գանիանն էր,—նորա բանտում եղած ժամանակուայ ընկերակիցը, որի հետ նա առաջին օրուայ երեկոյեան կռւում էր երկաթի վանդակագանի միջից, և որը հէնց այդ առաւօտ այնքան բարձր ձայնով կոչում էր նորան: Բարաբբայի ձայնը լսելով, անբաղդը յառեց նորա վերայ իւր աչքերը չարութեան և նախանձի արտայայտութեամբ:

—Դու ես, Բարաբբա: Եւ դու ազատ ես: Ծո՜ւն: Անիծեա՜լ սատանայ: Որպիսի չարաբաստիկ խորհուրդ ես դու չարժել, որ քեզ արձակելով՝ ինձ են պատժում: Ես ի սէր քո մեղքեր գործեցի: Դու

ես մեղաւոր, որ ես այս դրութեանս համա՜յ: Վախկո՜տ: Թքո՜ւմ եմ քեզ վերայ: Արդարադատութի՜ւն: Ես արդարադատութիւն եմ պահանջում, դատո՜ւել ցանկանալով: Դու խաբեբայ ես և երեսպաշտ: Մի՞թէ դու չը երդուեցիր, որ ընկերներիդ օգնութեան համար պատրաստ ես ամեն ինչ անելու: Թողեցէք ինձ, գազաննե՜ր.—գոռաց նա կատաղի, դուրս կորզելով իւր ձեռքը դահիճներից, որոնք պատրաստւում էին գամելու խաչի երեսին նորան, որի վերայ արդէն պարկած էր նա:—Դու, դու, Բարաբբա, նոյնպիսի գող ես, որպիսին ես եմ,—դու դեռ վատ ես ինձանից,—չէ թէ դու մարդասպան ես: Այստեղ արի և իմ փոխարէն մահուան պատիժը կրէ: Այս առաւօտ դու ինձ ձգեցիր բանտի մէջ, որտեղ անօթութիւնից մեռնում էի, իսկ ինձ դուրս կոչեցին միմիայն նորա համար, որ այստեղ բերեն մահի տանջանքով պատժելու, մինչդեռ դու, դու այստեղ ես, և թանկագին հագուստի մէջ կանգնած՝ ազատութիւն ես վայելո՜ւմ: Ազա՜տ: Աւա՜ղ: Ահա՜ թէ ինչ տեսակ է լինում հրէաների վերայ գործ դրած հռովմէական արդարադատութիւնը՜:

Եւ նա անխելքութեամբ բղաւեց. մի քանի զինուորներ ամուր, հաստ թոկերով նորա ձեռքերը խաչաձև տախտակին կապեցին, իսկ դահիճները ձեռնամուխ եղան ուժով բաց արուած ձեռքերի ափերի մէջ ահագին գամեր խփելու:

—Ահա՜, վերցրէք Բարաբբային և խաչեցէ՜ք նորան.—ճչաց նա թանկաչարանենգութեամբ:—Նա սպանեց Գաբրիասին և Ճագինից թանկագին քարեր գողացողն—նա՜ է:—Այդ նա է միշտ խառնակում ամբո՜խը: Բերեցէք դարձեալ մի խաչ ես և թող նա խաչուի...

Նորա կոկորդից արիւն հոսելով, խանգարեց խօսակցութիւնը, և դէմքը տանջանքի ու խեղդուելու ազդեցութիւնից շառագունեց:

Զինուորները ծիծաղեցին:

—Վախկոտ շուն,—ասաց նոցանից մէկը:—Մեռիր այրաբար, եթէ կայ գէթ մի կաթիլ քաջութիւն ջհուդի երակների մէջ: Հռովմայեցին գոնէ չէր սկսիլ այդպէս գոռալ. իսկ Բարաբբայի մասին հանգստացիր: Նա ազատուած է օրէնքով և ներուա՜ծ:

Գանիանը լռեց և նորա աչքերը արիւնով լցուեցին:

—Ներուած է՜, ներուած է՜.—մռթմռթաց նա խուլ ձայնով:—Ուրեմն նզովեալ լինիք դժոխքով թէ դու և թէ քո բողաբարոյ կինը...

Բայց նա իւր խօսքը չը վերջացրեց, քանի որ հէնց նոյն րոպէին բարձրացնելով նորա խաչը, դրեցին վաղուց պատրաստուած փոսի մէջ: Այրող արեգակը փայլուն այրող բոցով կիզեց նորա

գլուխը և մերկացրած մարմինը։ Նա անասելի տանջանքներ ճաշակելով, քաշքշւում էր և բանի ույժ էր գործ դնում խաչի վերայից պոկելու իւր մեխած ձեռքերը, բայց նորա այդ ճիգնթափութիւնը ի զուր էր. նորա ձեռքերը չափից դուրս ամուր էին կապկպուած։ Սարսափելի է նորա վերայ նայելը։—Արիւնը թանձրացել և սևացել էր նորա երակների մէջ,—այդ տեսնելով՝ Բարաբբան շուռ եկաւ, որի ազդեցութեան տակ ամբողջ մարմնով սառչում էր։

—Ի՞նչ, միթէ բոլորն էլ այդպիսի տանջանքներ են կրում, որոնք այս տեսակ վախճան են ունենում,—դողդոջ ձայնով դարձաւ նա դէպի Մելխիօրը։

—Բոլորն էլ, որոնք կաւից են ստեղծուած,—լոկ կաւից,—պատասխանեց Մելխիօրը, սառնութեամբ նայելով տանջուող չարագործի վերայ, որպէս թէ ուսումնասիրելով նորան։—Նորան բաղդ էր շնորհուած իւր կեանքի մէջ, ինչպէս և բոլորին, բայց նա չը կարողացաւ օգտուել այդ բաղդից։ Սոսկ նա ինքն է մեղաւոր իւր ներկայ դրութեան մէջ ընկնելու համար։

—Պիտի նոյնը ասե՞ս դու և Նազովրեցոյ վերաբերութեամբ։

Մելխիօրը աչքերը դէպի երկինք բարձրացրեց, որպէս թէ որ և է հրաշք նկատելու համար։

—Այո՛, նոյնը կասեմ և Նազովրեցուն վերաբերեալ։ Նա ինքը ընտրեց իւր ճանապարհը, այն պայմանները ընտրելով, որոնց մէջ գտնուում է նա, և այդ փառք է նորա համար յաւիտեանս յաւիտենից։ Ժամանակը—նորա գերին է, ճակատագիրը՝—ստրուկը, իսկ նորա խաչը—մարդկութեան փրկութիւնն է,

—Եթէ այդպէս է քո տեսողութիւնը,—շշնջաց Բարաբբան, մինչ հոգու խորքը երկիւղով ցնցուած,—արդեօք լաւ չէ՞ր լինիլ խօսել նորա հետ մինչ նորա մահը, և նորանից օրհնութիւն խնդրել…

—Նորա օրհնութիւնը սոսկ ինձ համար չէ, այլ բոլորի, կըտրեց նորա խօսքը Մելխիօրը լրջութեամբ։—Ես նորա հետ խօսել եմ վաղուց, երբ նորա կեանքը կայտառ էր դեռ։ Բայց այժմ ժամանակ չէ խօսելու, այլ ժամանակ ամրապնդուելու և աղօթելու. սպասիր ինձ հետ և լսիր. այս դեռ հրաշքների սկիզբն է։

Մինչ այդ ժամանակ դահիճները վերջացրին երկրորդ գողի խաչելու գործողութիւնները։ Միմիայն այն ժամանակ, երբ նորա ոտքերի մէջ ահագին մեխեր էին խփում, նա անխելք ցաւից ակամայ հառաչեց, բայց յետոյ, համարեա գերբնական ճիգով, նա ամրապնդեց իրեն և երբեմն երբեմն խոր, բայց հանդարտ հառաչում

էր։ Նորա աչքերը րոպէ առ րոպէ Նազովրեցուն փնտռելով, դորա մէջ թեթևութիւն էին գտնում։ Ամբոխի դրութիւնը աւելի ևս բորբոքուեց, երբ երկրորդ խաչի բարձրանալը տեսաւ. Ժողովուրդը զգաց, որ այժմ շուտով կը սկսուէ այդ զարհուրելի եղերերգութեան ամենամեծ գործողութիւնը,—խաչումն նորա, Ով աստուածանենգութիւն էր անում՝ որպէս թէ՝—իրեն Որդի Աստուծոյ կոչելով։ Ամբոխի մշտական դէպի յետ և առաջ շարժմունքի մէջ Բարաբբան վերջապէս նկատեց մի խումբ կանանց, որոնք մի քանի հոգուց բաղկացած լինելով, կանգնած էին մի որոշ հեռաւորութեան վերայ. Նոցա փարթամ զգեստները ծածկուած էին թանկագին քարերով, որոնց շնորհիւ նոքա նկատելի զանազանուում էին իրենց շրջապատող չքաւորութիւնից։ Դոցա միջից աւելի աչքի էր ընկնում մէկը՝ իւր շլացուցիչ գեղեցկութեան շնորհիւ,—ինչպէս աստղը բոցի մէջ. Նորա դէմքը ծանրացնող և չորս կողմը շրջանակ կազմող մազերը կարմրագոյն ոսկու փայլ ունէին, իսկ թիկնոցը, որ ձգուած էր նորա վերայ, փայփլուն կրակով էր ցոլում։

Նորան աչքերով լափելով, Բարաբբան առաջ ընկաւ, ինչպէս մի խելացնոր, ձգտելով դէպի այն փայլուն, երկիւղալի պատկերը, որը չարաբաստիկ գեղեցկութեան տէր լինելով, մոտիկից այնպէս էր երևում, որպէս թէ վառում էր ամեն ինչ, անգամ օդը, և խելագարի աչքերով, բաց գլխով ու բանուած շնչով կոչեց նա.

—Յուդիթ…

XII.

Նա, որին այդպէս կոչում էին, շուռ եկաւ դէպի Բարաբբան գոռոզութեամբ, անարգուածի հարցական ակնարկ ձգելով նորա վերայ. Յուդիթի դէմքի զմայլեցուցիչ գեղեցկութիւնը կանգնեցրեց նորա դէպի իրեն ձգտելու ույժը, մերձաւորութիւնից խուսափելով Բարաբբան, ինչպէս նախկին ժամանակներում, մխուեց իւր տեղում՝ լուռ անուժութեան և անկարողութեան մէջ։

Ոչ մի կնոջ պատկեր՝ ոչ մի ժամանակ՝ այդքան աննման գեղեցկութիւն չէր պարունակում իւր մէջ։—Նա մարմնացումն էր այն հազուագիւտ տիպի, որը ամեն ժամանակ գերելով տղամարդկանց, խլում է նոցանից և՛ դատողութիւնը և թէ խելքը, վառելով նոցա

մէջ ամենաուժեղ բուռն ցանկութեան տենչանք։ Եւ Յուդիթը գիտէր իր սովորականից դուրս զմայլելիութիւնը ու իր գաղտնի ոյժի գնահատութիւնը չէր կորցնում, որով նա կարողանում էր բռնկեցնել բոլոր իրեն շրջապատողներին և անպատիժ տանջել իրեն անյաղթելի զմայլելիութեան զոհերին։

Յուդիթ Իսկարիոտացին՝ փարիսեցի աղանդից մի ամենախիստ և յարգելի անդամի աղջիկն էր որ յարգելի էր Երուսաղէմի մէջ։ Ծննդով և կրթութեամբ նա պէտք էր՝ որ Հրէաստանի աղջիկներից ամենապարկեշտը և բարեբարոյ վարքի տէր մէկը լինէր,—բայց ներկայ դէպքում բնութիւնը կրթութեան դէմ առաւելութիւն կրեց։

Բնութիւնը՝ իրաւացի՝ նորա համար շատ բան էր արել—և ուղղակի այն, ինչ շատ մարդկանց կողմից հոգու մաքրութիւնից և պարկեշտութիւնից առաւել է գնահատւում։ Եթէ ոչ, կը նշանակէ, որ բնութիւնը մեղաւոր էր, քանի որ նա մրրկածուփ արեգակային մուտքի փայփլուն լոյսի բրոնզեայ անդրադարձումը ձգել էր նորա մազերի հիւսկէնների մէջ, հալել էր միասին գիշերային մթնութիւնը և աստղային փայլը նորա աչերի համար, քամել էր կարմրայօն նռանենու հիւթը՝ շրթունքների համար և վերցրել էր մատղաշ նշենու ծաղիկների նուրբ վարդային սպիտակութիւնը, նորա կրծքի գոյնը ստեղծելու համար։

Զարմանալու ոչինչ չը կար, որ նորա գեղեցկութիւնը յաղթում էր բոլոր նորան մօտեցողներին. նորա խիստ հայրն անգամ կորցնում էր իր հեղինակաւորութիւնը և կծու ոճը ու թոյլ լինելով աղջկայ վերաբերութեամբ, դառնում էր մի անկամք գործիք վերջինիս ձեռքերի մէջ։ Ուրեմն ինչպէս էր կարող Բարաբբան, մեղագործ Բարաբբան, նորա առջևը չը խոնարհուել, ինչպէս մի ամենաանպէտք, խղճալի գերի։ Ծեծուած շունը, պատժուած երեխան, նոքա եւ՝ հաւանական է՝ աւելի մեծ կամքի տէր էին, քան թէ նա, այն րոպէին, երբ Յուդիթի անմատնակից, բայց այնքան սիրելի ու փայլուն ակնարկը կանգ առաւ նորա վերայ; ինչպէս պարզկայ երկնքից աստղային շողքը։ Նորա հոգին ակամայ դողաց։

—Յուդի՛թ.—բացականչեց նա նորից և կանգ առաւ՝ շփոթուած. Յուդիթի մեծկակ, մթնագոյն աչերը, սառն, ինչպէս ծովի յատակ, անհոգութեամբ նորա վերայ էին նայում,—ինչպէս յանդուգն, ձանձրացուցիչ անծանօթի։

—Յուդի՛թ,—կրկնեց նա դողդոջ ձայնով։—Մի՞թէ դու ինձ չես ճանաչում։—Ես Բարաբբան եմ։

Յուդիթի դէմքի վերայից տխրութեան արտայայտութիւնը փոխուեց. կարմիր շրթունքները թեթևակի բացուեցին մանրիկ ատամների վերայ, որոնք կուրացուցիչ սպիտակութիւն ունէին, ապա ուրախութեան շուաքը անցաւ դէմքի գծերի վերայից, ուղիղ բերանի մօտ փոսիկներ գոյացնելով ու բարակ, որպէս թէ վրձինով քաշած, յօնքերի անկիւնները բարձրացնելով.—Նա լցուեց անփոյթ, փափուկ, դիւրասահ ծիծաղով։

—Դու՝ Բարաբբա՞ն,—ասաց նա, և նորից քրքջաց։—Դո՞ւ։ Ոչ, այդ անկարելի է. Բարաբբան շատ չէ, ինչ բանտի մէջ էր և այնտեղ նա անկարող էր գողանալ մի այնպիսի թանկագին հագուստ, որպիսին դու ունիս։ Դու Բարաբբա լինել չես կարո՛ղ։ Հէնց երկու ժամ սորանից առաջ ես նորան տեսայ. նա կանգնած էր Պիղատոսի մօտ—կիսամերկ և անպաճոյճ։ Բայց չը նայելով դորան՝ նորա դէմքը քո տեսքից բարելաւ էր։

—Նորից լսուեց արծաթահնչիւն խայթիչ ծիծաղ և նորա աչքերը փայլեցին ու հեգնաբար Բարաբբայի վերայ դարձան։ Բայց Բարաբբան կարողացել էր արդէն փոքր ինչ ուշքի գալու։ Նա Յուդիթի ակնարկին դիմացաւ նկատելի վստահութեամբ և մի տեսակ տխրութեամբ. նորա մութ երեսը յանկարծ դժգունեց և ամբողջ ջերմութիւնը և հիացմունքը մեռան նորա ձայնից, երբ նա նորից խօսեց.

—Այո՛, ես Բարաբբան եմ,—կրկնեց նա հանդարտութեամբ։—Եւ դու՝ Յուդիթը,—այդ գիտես դու։ Մի՞թէ ես չէի, որ քեզ համար տանջուեցի։ Իսկ այժմ դու ծիծաղում ես ինձ վերա՛յ։

Յուդիթը նորան՝ ներքևից մինչև վերև՝ չափեց աչքերով, մի տեսակ հեգնական և խղճալի տեսք ընդունելով։

—Ես քեզ վերայ չեմ ծիծաղում։ Յիմար,—դու զառանցանքի մէջ ե՞ս։ Դու ինչպէ՞ս ես համարձակւում ասելու, որ ինձ համար տանջուեցիր։ Այդ յանդգնութեանդ համար, ես կարող եմ հրամայել մտրակելու քե՛զ։ Իսկարիոտացի աղջիկը ինչ գործունէ քեզ հետ, անարգ եղեռնագործ։ Դու շատ հեշտ ես մոռանում քո մեղքե՛րը։

—Յուդիթ,—շշնջաց նա. նորա դէմքի դժգոյնութիւնը զգալի աւելացաւ և գծագրութիւնը մռայլուեց. նորա ձեռքերը խոր յուսահատութեան շարժմունքից ակամայ սեղմուեցին.—Մտածի՛ր, ինչ ես խօսում։ Յիշիր անցկացած օրերը, խղճացի՜ր...

Յուդիթը կանգնեցրեց նորան արհամարհական նշանով և, դառնալով դէպի իր աղջիկները, բացականչեց.

—Սիրելիներս, ահա ձեզ Բարաբբա՛ն։ Դուք յիշում էք, երբ նա մեր սիրելի՝ արմաւենիներով շրջապատուած՝ ջրհորի մօտից շատ շատ անցնում էր, քանի որ պիտի անցնէր այդ ճանապարհը Զաքէնի

մօտ գնալու կամ վերադառնալու համար. յիշում կը լինէք՝ թէ ինչպէս նա ուշացնում էր մեզ արևի բոլորովին մայր մտնելը, մեզ հետ քաղաքային բամբասանքներ ջոկելով, մինչդեռ կարող էր աւելի պէտքական բաներով անցկացնելու իւր սրտնեղութիւնը: Սա նոյն ծառան է, որը ինձ համար մի ցանց գործեց, որը կախ էր տուած հայրական այգու թզենիներից, և որը իմ յիմար Ագլայի՝—յոյն աղջկայ՝—համար ծաղիկներ էր քաղում: Ահա այն բոլորը, ինչ ինձ թւում է, որ նա գործել է մեզ համար: Մինչդեռ՝ այն ու տես՝ որ նա բանտի մէջ մեծ քանակութեամբ սնափառութիւն է հաւաքել: Ժողովրդի կամքով նորան ընծայուած անսպասելի ազատութիւնը չափից դուրս պարծենկոտեցրել է իրեն: Միթէ դուք նորան այս հարուստ հագուստեղէնի մէջ և այսպիսի հանդարտուած տեսքով կարողանում էք ճանաչելու: Ճշմարիտն եմ ասում, սա ես կարող էր զարդարել խուցը: Շատ եմ ցաւում, որ սորան չեն խաչում Նազովրեցու չարքում:

Կանայք, որոնց դիմեց նա, ծիծաղեցին, Յուդիթին դուր գալու և նորան շահելու համար. բայց նոցանից մի երկուսը՝ ըստ երեւոյթին՝ խղճալով Բարաբբային, կարեկցութեամբ նայում էին նորա վերայ:

Իսկ նա, իւր անխիղճ գեղեցկուհու խօսքերը լսելիս, ոչ բարկութիւն արտայայտեց և ոչ էլ անհամբերութիւն, այլ շարունակեց փորձողական և վշտաբեկ ակնարկով չափել նորան: Յուդիթի այտերը շառագունեցին, դէմքը կաս-կարմիր դարձաւ. Նա՝ ըստ երևոյթին՝ շփոթուած էր այդ թափանցիկ ակնարկով և Բարաբբան, նորա վայրկենական շփոթութիւնը նկատելով, վճռականապէս դէպի նա յառաջանալով, բռնեց նորա ձեռքից:

—Այդպէս ես վիրաւորում դու ինձ, Յուդիթ.—ասաց նա մեղեդնաթար:—Դու չես կամենում այն տանջող տխրութիւնը ըմբռնել, որը ճաշակում էի ես քեզնից հեռու: Ուրացիր, եթէ կամենում ես, բայց՝ այնու ամենայնիւ՝—ես քեզ համար մեղք գործեցի, քո պատճառով տանջուեցի, և հէնց այդ միտքն էր, որ փոքր ինչ մխիթարում էր ինձ: Ծիծաղիր ինձ վերայ, տապալիր ինձ,—բայց դորանով դու չը պիտի կարողանաս յետ դարձնել ինձ քեզ՝ անզուսպ սիրելուցս: Սպանիր ինձ, եթէ դա քեզ մխիթարութիւն կը պատճառէ, սպանիր հէնց այդ խանչալին դաշոյնով, որ կախ է ընկած քո գօտիից: Քո ոտքերի տակ՝ թաւալվոր ընկած՝ ես կը մեռնեմ—բաղդաւոր. այդ չը պիտի խանգարէ ինձ մինչև վերջ սիրել քեզ, անխիղճ կոյսդ իմ հոգւո՛յ:

Նորա ձայնի մէջ անկեղծութեան կախարդիչ երաժշտութիւն էր հնչում և մոլեռանդ կրքի զգացմունքից նորա աչքերը սիրոյ տենչով վառուեցին, իսկ շրթունքները դողում էին յամր աղերսանքի ազդեցութեան տակ:

Յուդիթը լսում էր, և նորա դէմքի արհամարհողական արտայայտութիւնը պարզուեց հանդարտ ժպիտով. Բարաբբան դեռ ևս բռնել էր նորա ձախ ձեռքը, իսկ նա չէր հակառակում: Աջ ձեռքով Յուդիթը փնտռում էր այն դաշոյնը, որի մասին խօսք ընկաւ. այդ սովորաբար մի խաղալիք էր, որի պատեանը ընդելուզուած էր թանկագին քարերով, բայց սայրը, թէպէտ և փոքրիկ, բայց բաւականին ամուր և սուր էր սպանելու համար:

Ինքնակամ զգացմունքից դրդուած՝ Յուդիթը դաշոյնը բարձրացրեց: Բարաբբան չը նահանջեց և իւր դմայլմունքի տակ գտնուած ակնարկը ոչ մի վայրկեան չը կտրեց Յուդիթի գերօրինակ գեղեցկութիւնից:

Յուդիթը րոպէաչափ կանգնած էր՝ մերկացրած դաշոյնը բարձրացրած. սքանչելի ժպիտը նորա շրթունքների վերայ խաղում էր —ինչպէս արեգակի ճառագայթը՝ գոհարաշող ծաղիկի վերայ, յետոյ անսանձահարելի ուրախութեան տակ քրքիջ արձակելով, դաշոյնը յետ դրեց պատեանի մէջ:

—Այս անգամ կեանքդ քեզ եմ ընծայում,—արքայական ներողամտութեամբ ասաց Յուդիթը:—Մահուան յաղթանակը կատարել անելու համար խարդախ Նազովրեցին և այն երկու ստոր գողերն թող բաւական սպասին: Միմիայն—խնդրում եմ—թո՛ղ տուր ձեռքս քո կոպիտ սեղմած ափից, հակառակ դէպքում՝ ես պիտի տանեմ քեզ: Նայիր՝ ինչպէս ցաւեցրիր ձեռքս, յիմա՛ր: Դու ներողամտութեանս արժանի չես անգամ:

Նորա բարակ յօնքերը կիտուեցին: Բարաբբան նայեց իւր մատներից առաջացած Յուդիթի ձեռքի վերայի կարմիր բծերին, որից չը խուսափեցին նորա ձեռքերը զարդարող հազուագիւտ ադամանդները, որոնք աստղերի նման փայլում էին, բայց ոչ մի խօսք չը արտասանեց. Նորա սիրտը չափից դուրս շուտ շուտ և ցաւալի էր խփում:

Մինչ այդ ժամանակ Յուդիթը իւր ցաւեցրած ձեռքին էր նայում, վերջապէս, նա,—աչքերը ցած ձգելով և ժպիտը երեսին,—ասաց.

—Գարբիասը համբուրէր պիտի այս ձեռքը, քան թէ ցաւ պատճառէր:

Եթէ որ գետինը պատառուէր ոտքերի տակ, կամ յանկարծակի կայծակը խփէր, Բարաբբան անկարող էր աւելի զարմանք զգալու քան ներկայումս:

Գաբրիէլը... Այն գարշելի, երեսպաշտ, խաբեբայ փարիսեցին, որին Բարաբբան սպանելով, հէնց այդ պատճառով այնքան երկար մնաց բանտի մէջ: Նա՝—Յուդիթը արդեօք նորա մասին այդպէս խօսեց: Նորա զատողութիւնը պղտորուեց, յանկարծակի կատաղութիւն եկաւ վրան, և նա փայլատակող աչքերով ու այլայլուած դէմքով Յուդիթին նայեց:

—Գաբրիէլը,—խուլ ձայնով արտասանեց նա:—Ի՞նչ ասացիր դու: Գաբրիէլը...

Բայց նախ քան նա կարող եղաւ վերջացնել իրեն համար անտանելի նախադասութիւնը, ամբոխը առաջ ընկաւ, որպէս զի կարող լինէ կարգապահ զինուորների գիծը բաց անելու, նազովրեցու մահուան համար առաջացող պատրաստութիւնները աւելի լաւ տեսնելու նպատակով:

Բարձրացաւ խլացուցիչ աղաղակ, մինչ՝ վերջապէս՝ կարգապահութիւնը նորից վերականգնուեց: Նոյն ժամուն մի քանի ճոխ հագնուած մարդիկ դէպի այն կողմը յառաջացան, որտեղ Յուդիթն էր կանգնած իւր ընկերուհիներով, և կանգնեցին նորա շարքին: Կայիափան գտնւում էր նոցա մէջ: Բարաբբային տեսնելիս նորա երկար մռայլ երեսը չարութիւնից շառագունեց:

—Ի՞նչ գործ ունիս դու այստեղ, շուն.—շշնջաց նա կատաղաբար, դէպի Բարաբբան ընթանալով:—Միթէ՞ քեզ չը զգուշացրի ես: Դուրս այստեղից: Քեզ շնորհուած ազատութիւնը դեռ չէ մաքրում քո եղեռնագործութիւնը. դու չը պիտի համարձակիս տեղիս ճշմարիտ և յայտնի մարդկանց հետ խօսելու: Կորչիր, ապա թէ ոչ՝ պիտի նզովեմ, քեզ բոլորի աչքի առջև,—ինչպէս նզովուած են խեղաթիւրնե՛րը:

Նորա բարձր իրանը դողդողաց և նա բարձրացրեց իւր ձեռքը կատաղի սպառնալիքի նշանով:

Բարաբբան դժգոյն շրթունքներով դեռ ևս ամբողջովին ճօճւում էր կասկածանքից և սարսափից, որ առաջացել էին Յուդիթի տարօրինակ խօսքերի ազդեցութիւնից. բայց, չը նայելով դորան, նա քահանայի իւր դէմ տածած սպառնալիքին դիմաւորեց հանդարտ և սառն:

—Լիրբ քահանայ,—ասաց նա:—Սպառնացիր քո նզովքներով նոցա, որոնք վախենում են, իսկ ես՝—Բարաբբաս՝ արհամարհում եմ

քո անէծքնե՛րը: Ինչո՞ւ համար, դու, երեսպաշտ, կարող ես մխիթարուել օրիորդ Իսկարիոտացու ընկերակցութիւնից, իսկ ես,—նորա հին ընկերակիցը, քո հրամանով՝ չը պիտի համարձակեմ նորան մօտենալու: Ճշմարիտ որ լոյսը արդէն սկսում է թափանցել իմ յիմար ուղեղի մէջ. ես արդէն տեսնում եմ թէ ումնից եմ խաբուած: Այլ ես կարողանում եմ կարդալ քո մտքերդ, չար և արիւնարբու Կայիափա: Զգոյշ կաց քեզնից, քանի որ դու, այլ ոչ թէ Յուդան, սոյն անմեղ նազովրեցուն մինչ սպանատեղին բերեց,—և դու քո նենգ չարագործութեան շնորհիւն ես թափել տալիս նորա անպարտ արի՛ւնը: Հսկողութիւն ունեցիր վրադ, քանի որ, ինչպէս Աստուած սուրբ է, նոյնպէս և վրէժը անխուսափելի, որը թէ քեզ է սպասում և թէ քո միախորհուրդ գործակիցների՛ն:

Բարաբբան խօսում էր տաքացած, համարեա թէ իւր ասելիքը չը զգալով. Նա տարուած էր մի այդպիսի ուժեղ տենդային տենչով, որ չը գիտենալով թէ ինչ է խօսում, ամբողջովին դողում էր:

Կայիափան, անոյժ կատաղութեամբ և անհասկանալի ապշութեամբ նորա վերայ նայելով, նահանջեց:

Յուդիթը, Բարաբբային լսելով՝—ծիծաղեց:

—Սա էլ է մարգարէ դարձե՛լ.—ասաց նա ուրախութեամբ: —Սորան էլ խաչեցէք:

Նորա անխիղճ, չարաբաստիկ առաջարկութիւնը առանց դիմադարձութեան մնաց, քանի որ ամբոխը դարձեալ կատաղութեամբ առաջ խաղաց և նորից զսպուեց զինուորների կարգապահութեան տակ:

Բարաբբան ստիպուած էր կռիւ մղել նոցա դէմ, որոնք կամենում էին նորա բռնած տեղին տիրանալու, մինչ յանկարծակի մէկի առուժեղ ձեռքերը բռնելով նորան, ազատեցին մաքառելուց: Նորա առջև կանգնած էր Մելխիորը: Խորհրդաւոր և քնքոյշ արտայայտութիւնը լուսաւորում էր նորա աչքերը—սովորական սառն հանդարտութեանը մեղմացրել էր խորունկ կարեկցութիւնը:

—Դու, հէգ մարդ, զատողութիւնից զուրկ մեղաւոր,—ասաց նա քնքշութեամբ,—ահա քո հաւատացող սրտին ուղղած առաջին հարուածը: Հիասթափութեանդ սկիզբն է այդ: Մնացիր այժմս ինձ մօտ, մոռանալով կրածդ ցաւի մասին: Թո՛ղ աշխարհս և նորա ճանապարհները այլևս չը անհանգստացնեն քեզ: Եթէ հոգիդ ծարաւի է սիրոյ, գնանք, դու նորան կը տեսնես խաչուած իւր բոլոր փառքի մէջ, որպէս զի գոհացումն ստանայ ամեն բան լափող մարդկութեան ատելութի՛ւնը: Նորա միշտ խաղաղ ձայնը այս անգամ դողաց, կար-

ծես թէ չը թափուող արցունքների ազդեցութիւնից։ Անհանգիստ, մաշուած և ցնցուած իւր անձնական անպատուութիւնից Բարաբբան, ըստ երևոյթին, առ երես հնազանդուեց նորան։ Նա իւր ընկերոջ վերայ բարձրացրեց աչքերը, որոնք լի էին անբացատրելի տխրութեան արտայայտութեամբ։

—Այժմ ինձ ճշմարիտը ասա՛,—դու ճանաչում ես նորան,—ասաց նա խռպոտ, անճանաչելի ձայնով։ —Նա փոխե՛լ է ինձ սրբով։ Բայց ո՛չ։ Աւելի լաւ է՝ լռի՛ր։ Լսել այդ անգամ անկարող, անկարող եմ։ Թո՛ղ մեռնեմ ես՝ հաւատս դէպի նա չը կորցնելո՛վ։

Մելխիօրը ոչինչ չը պատասխանեց. նա նորանով էր զբաղուած, որ քարշ էր տալիս Բարաբբային ամբոխի միջից։ Վերջապէս նոքա հասան իրական տեղին, ուղիղ այն խաչերի հանդէպ, որոնց վերայ արդէն կերկերում էին՝—սարսափելի տանջանքների տակ՝—երկու աւազակները։

Նազովրեցու բարձր սպիտակ կերպարանքը աչքի էր ընկնում դահիճների միջից, որոնք շրջապատելով նորան, պոկում էին վերայի գամուած հանդերձները։

Մինչ այդ՝ ցենտուրիօն Պետրօնիան, կռթնած իւր սրի վերայ, մտախոհ դիտում էր,—որի ակնարկից ոչ մի անցք չէր վրիպում։

—Պիղատոսը խելքը թռցրել է,—ասաց մի սպայ, մօտենալով նորան ձեռքի մէջ բռնած մագաղաթի ահագին փաթեթով։—Նայի՛ր, ինչ մտքի մակագրութիւն է արել նա Գալիլէալի Մարգարէի խաչի համար։

Պետրօնիան բաց արեց փաթեթը և հանդարտ ու դանդաղ, քանի որ նա սակաւ էր գրագէտ, դժուարութեան մէջ՝ սկսեց կարդալ։ Երեք անգամ շարէշար՝ միևնոյն խօսքերն էին մակագրուած,—թէ յունարէն, թէ իտալերէն, և թէ հրէաներէն.

«Յիսուս Նազովրեցի, Թագաւոր Հրէի՛ց»։

—Ինչի՛ց ես դու եզրափակում,—որ մեր կառավարիչը խելքը կորցրել է.—հարցրեց Պետրօնիան.—սոյն մակագրութեան մէջ ոչ մի այնպիսի բան չըկայ, որ խօսելու առիթ դառնա՛յ։

—Ո՛չ՝ կայ,—իւր կարծիքի մէջ մնաց սպան։—Նորան արդէն դորա մասին նկատողութիւն էլ են արել. քահանայապետ Կայիափան Պիղատոսին ասաց. «Մի՛ գրիր—Թագաւոր Հրէից, այլ թէ՝—Նա ասաց՝ «Թագաւոր եմ Հրէից»,—իսկ Պիղատոսը, որը՝ դեռ իւր առաւօտեան յանկարծակի պատուհասից՝ տկարութեան մէջ է, բարկացաւ և կոպտութեամբ պատասխանեց Կայիափային. «Զոր ինչ գրեցի՛

գրեցի՛։» Եւ նոքա բաժանուեցին աւելի թշնամաբար, քան թէ բարեկամական զգացմունքի տակ։

Պետրօնիան ոչինչ չը հակառակեց, բայց դարձեալ նայեց մակագրութեանը վերայ և տուեց պահապաններից մէկին։ Այդ մարդը, ալտոտ և կոպիտ, հէնց նոյն ժամոյն սկսեց բևեռել նորան խաչի գլխին։

Մուրճի մի քանի ճարպիկ հարուածներով մեխեց մակագրութիւնը, ապա՝ իւր աշխատանքի տուած պտուղից՝ ինքնագոհ, սկսեց ջոկել նորան հանգերով, ինչպէս մի երեխայ, որը դեռ նոր է սովորում կարդալ։ Տարուբերելով իւր արիւնոտ մատը մէկ տառից դէպի միւսը, նա դժուարութեամբ էր ջոկում խորհրդաւոր խօսքերը, որոնք ապագայում յայտնի եղան համայն աշխարհիս.—Նա կըրկնեց նոցա կամացուկ. դարմանքի և անհասկացողութեան տեղատուանքի մէջ.

«Յիսուս Նազովրեցի

«Թագաւոր Հրէից»։

XIII.

Այժմս անցնող տեսարանը յոյժ բազմակողմանի և գեղարուեստական էր։

Ամբոխը նկատելով, որ 'ի զուր է չարչարում, և որ իւրն չէ կարող յաջողուել կոտրելու հռովմէական զինուորների շարքը, մնաց արգելանքի յետևի կողմի վերայ ճնշուած և սկսեց, տաղտկացուցիչ լռութեան մէջ, անցնող գործողութիւններին նայել։ Մի քանի խումբեր էլ կային, որոնք իշխանութիւնից առանձին թոյլտուութիւն ունէին որոշեալ տեղեր բռնելու։ Այդ խումբերից մէկը կազմում էին այն աղքատիկ հագնուած կանայքը, որոնց Բարաբբան պատահելով լեռան ստորոտում, ճանաչում էր և որոնց հետ խօսակցութեան մէջ էր մտած, թէպէտ կանգնած էր նոցանից շատ հեռու։ Ձոխ մազերի ոսկեհուռ փայլից նա զանազանեց Մագդաղենացուն, որի դէմքը ծածկուած էր ձեռքերովը։ Նա կարող պիտի լինէր տեսնելու նոյնպէս Յուդիթ Իսկարիօտացու դիւրութեք իրանը, կարմիր թիկնոցի մէջ սեղմուած, որը նորան մի մեծ մեկօննայ ծաղկի տեսք էր տա-

լիս, ընկած արեգակի կիզող ճառագայթների տակ. և Նորա մօտ բարձրաստիճան Կայիափայի՝ շրջապատուած Երուսաղէմի պատուաւոր քաղաքացիներով. ապա մի երկու հռոմայեցի ձիաւորների, որոնք թողնելով իրենց ձիաներին, Յուդիթի վերայ նայելու պատրուակով, մօտեցել էին Նոցա:

Բարաբբան Յուդիթի վերայ նայեց, իւր սրտի սեղմուիլը նկատելով: Մի տեսակ հիասթափումն զարհուրելի ուժով ճնշում էր նորա շունչը, գրգելով Բարաբբային դէպի կատաղութիւն, որպիսին կորցրել էր իւր նշանակութիւնը: Նա տանջւում էր յուսահատութեան և անտանելի դրութեան մէջ:

Յանկարծ գետինը նորա ոտքերի տակ շարժուեց, ինչպէս ծովային ալիք. նա տատանուեց և կը ընկնէր անշուշտ, եթէ Մելխիօրը՝ իւր ժամանակին՝ չը բռնէր Նորան:

—Այդ ինչ էր,—հարցրեց նա, բայց Մելխիօրը ոչինչ չը պատասխանեց: Նա իւր ակնարկը դէպի զինուորները դարձրեց, որոնք նոյնպէս զգացել էին գետնի տատանուելը, բայց վարժ կատարեալ անվախութեան մէջ, միմիայն հարցական ակնարկ ձգեցին իրենց չորս կողմը, դարձեալ նախկին անխռով դիրքը բռնելով: Գետինը ամրացաւ նոյնպէս արագ, ինչպէս տատանուեց, իսկ այլայլուած և անհամբեր ժողովուրդը ոչինչ չը նկատեց:

Յանկարծ կատաղի հիացմունքի մի ուժեղ ձայն բարձրացաւ. դահիճները արդէն կարողացել էին դատապարտուածի վերայից հանդերձները հանելու, որոնք զբաղուելով Նորա հագուստի փափկութեամբ և գործուածքի բարեկաւութեամբ, սկսեցին վիճակ ձգել, իմանալու համար, Նոցանից ով ինչ պիտի ստանայ:

Նոքա բարձր ձայնով և բարկութեամբ վիճում էին՝ գլխաւորապէս՝ պատմուճանի վերայ, որը կարուած չէր, այլ ամբողջովին վերէն վայր գործուած,—այն Նոցա բոլորից շատ դուր եկաւ ու Նոցա բոլորից շատ դուր գալով ձեռքից ձեռք էր անցնում, շնորհիւ իւր բրդեայ փափուկ անկուածին, նախանձ և գնավաճառութիւն առաջացնելով, ինչպէս անում են այդ ծնողները անբաղդ մեխայի մահից յետոյ: Մինչ Նոքա խռովութեան տակ, անհամբերութեամբ մէկզմէկու վերայ էին գոռում,—անմահ Նազովրեցին կանգնած էր համարեայ թէ մերկացրուած՝ Նոցա կամքին սպասելով: Նորա սիգապանծ իրանը փայլում էր գերթ սպիտակ մարմարիօն՝ լուսաւորուած արեգակի ուժով. Ներքին լոյսը, կրակի նման, թափանցելով կապոյտ երակների միջից, աւելի փայլ էր տալիս մարմնի անախեղծ սպիտակութեանը: Նորա ձեռքերը ար-

ձակուած էին, և կիսաթեթևութեան ու կիսայոգնածութեան զգացմունքով, Նա Նոցա լայն բաց արեց ուրախալի ազատութեան տպաւորութեան տակ, Նոցա ստուերը նկատելի կերպով գետնի վերայ ընկաւ, նոյնպէս, ինչպէս և անդրադարձումը այն խաչի, որի վերայ Նա պարտաւոր էր շուտով մեռնելու: Ո՛չ մի ամպի կտոր չը կար երկնքում—արեգակը անդադար և կուրացուցիչ փայլում էր, իսկ խաչաձև կազմուած ձեռքերի խորհրդաւոր ստուերը հանդարտ տատանւում էր և ընդլայնանում...

Բարաբբան նկատեց այդ: Նա տեսաւ, որ Մելխիօրը ևս հետաքրքիր էր այդ հրաշքին, բայց Նոքա մէկզմէկու ոչինչ չը ասացին:

Եղեռնագործական ողբերգութիւնը մօտենում էր իւր վախճանին. զինուորները դատապարտուածի հանդերձը արդէն բաժանել էին, որոնցից իւրաքանչիւրը գոհ էր երևում իւր կողոպուտից: Գըլխաւոր դահիճը, դէմքի կարեկցական արտայայտութեամբ. Նազովրեցուն մօտեցաւ, և կոպիտ ուժ գործ դնելու փոխարէն, հանդարտ ձայնով առաջարկեց Նորան իւր տեղը բռնել խաչի վերայ ու ընդդիմութիւն չը ցոյց տալ օրէնքի կատարման դէմ *).

Նոյն ժամուն իսկ ահաւելի հրամանը կատարուեց: Տիեզերքի Տէրը, կատարեալ հանդարտութեան տեսքով, հնազանդութեամբ դիմեց իրեն սպասող մահուան գիրկը: Ուրախութեամբ, յոգնաթըշուառ ճանապարհորդի նման, դարերի Ստեղծիչը տանջանաց փայտի

---

*) По общепринятому преданію православной церкви, согласно древнимъ свидѣтельствамъ, сначала водружали на землѣ крестъ, а потомъ уже пригвождали къ нему преступника. Отсюда и выраженія въ церковныхъ пѣснопѣніяхъ: «восходить, быть подняту, вознесену на крестъ». «Вознесься еси на древо (крестное) посредѣ двои разбойнику»... (Ioseph Bell Iуд. 7, 10. Cic—Verr 5). Сочиненія Иннокентія архіеп. Херсонскаго, т. IX, изд. 1872 г. ш)

Цензоръ.

Ա.)—Թարգմ.՝ —Ուղղափառ եկեղեցւոյ ընդհանրապէս ընդունուած աւանդութեամբ, հին վկայութիւնների համաձայն, գետնի վերայ նախ խաչն էին կանգնեցնում, իսկ յետոյ արդէն բևեռում էին Նորա վերայ յանցաւորին: Այստեղից է յառաջացել և այն արտայայտութիւնը եկեղեցական երգեցողութեան մէջ, թէ. (восходить, быть подняту, вознесену на крестъ». «Вознесься еси на древо (крестное) посредѣ двои розбойнику)... (Ioseph Bellk. Iуд. 7, 10. Cic Verr. 5) Сочиненія Иннокентія архіеп. Херсонскаго. т. IX, изд. 1872 г. Գրաքննիչ (Ցենզոր):

գերանների վերայ տարածեց իւր անդամները մեծ պատրաստականութեամբ և աննման համբերատարութեամբ։ Եթէ որ Նա խօսում լինէր այդ հրաշալի րոպէին, ահա թէ ինչ պիտի ասէր.

—Մանկունք Հօրն Իմոյ, տարածուեցէք, ինչպէս ես, աշխարհիս տանջանքը և նորա արհամարհանքը ընդունելու համար։ Եթէ դուք կամենում էք Աստուածային ոյժ ստանալ,—տարածեցէք ձեր անդամները, որ ձեր թշնամիները և բարեկամները կարող լինեն նոցա մէջ սուր գամեր խրելու։ Փշեայ պսակ կրեցէք, մինչ ձեր երեսը արիւնով կարմրէ. ձգեցէք ձեր հագուստ զգացողութեան և մերքի հեգնող ակնարկի դէմ։ Թո՛ղ թշնամիները մտածեն, որ նոքա ձեզ տանջեցին, սպանեցին և թաղեցին, որպէս թէ ջնջելով աշխարհիս երեսից։ Այն ժամանակ յարութիւն առէք, ով մանկունք Հօրն Իմոյ, յարութիւն առէք արշալոյսի թևերի վերայ, կատարելագործուած ոյժով—կենդանի, յաւիտենական և անյաղթելի։ Այն ժամանակ համայն աշխարհը ձեր ոտքերի տակ կը լինէ,—և ձեր առջև կը բացուէ երկինքը՛։ Ամբողջ տիեզերքը ձեր անունները կը կրկնէ և ձեր հաւատարմութիւնները կը հռչակէ։ Հրեշտակների անհամար ժողովը պիտի հրճուէ ձեր փառքի՛ց։ Որովհետև այդ օրից՝ յաւիտենական դարերով՝ Ես և նոքա, որոնց Ես իմս կը կոչեմ, մահը կեանքի կը փոխենք, իսկ ժամանակաւոր կեանքը—յաւիտենական երջանկութեամն։

Բայց այդ խօսքերը չը արտասանուեցին։ Աստուածային շըրթունքները խփուած էին և լուռ, ինչպէս նոյնատեսակ երկինքը։ Ուշադիր ամբոխի միջից զարմացական և գովասանական շշունջ անցաւ, երբ ակամայից առաջացել էր այն հանդիստ հերոսութիւնը տեսնելով, ում շնորհիւ այդ երիտասարդ Գալիլէացի Մարգարէն հնազանդում էր իւր ճակատագրի հետ։ Սքանչանում էին նոյնպէս նորա մարմնի անդրիի տպաւորութիւն թողնող գերակատար գեղեցկութեան վերայ։ Վախկոտութեամբ և անվճռականութեամբ դահիճները դէպի Նա մօտեցան։

—Մարդ ակամայ մտածում է, որ Նա մարմարիոնից է ստեղծուած,—քրթմնջաց նոցանից մէկը, բարձրացրած մուրճը ձեռքին, կանգ առնելով։

—Մարմարիոնից արիւն չէ գնում յիմար ասաց նորա ընկերը կոպտութեամբ, կատաղի զգացմունքով, խոստովանելով իւր մէջ, որ հէնց ինքն ես ձեռնամուխ է եղել այդ չար գործին դողալով ու զզուանքով։ Մնացեալները լուռ էին։

Ճոխ հագուստների մէջ մտած հարուստ անձերի ընկերութիւնը, մի կողմի վերայ առանձնացած, շրջապատելով քահանայապետ Կայ-

իափայէն, այժմ փոքր ինչ առաջ նետուեց, և Յուդիթ Իսկարիովտացին, փայլուն ինչպէս ճաճանչափայլ ճառագայթ,—կնոջ կերպարանք ընդունած, աճապարանօք դէպ՝ յառաջ անցաւ, երևակայական դէմքի ուրախ արտայայտութեամբ,—որին խոստացել էին մի հաւ-ուագիտ և հրճուելի տեսարանի ներկայ գտնուելու արտօնութիւնը։

Նորա սև աչքերը նայում էին խաչի վերայ պարկած Պատկերի վերայ անտարբերութեամբ և սառնութեամբ. Նորա, թանկագին քարերով ընդելուզուած և ասեղնագործութեամբ ծածկուած, բաճկոնակը թեթև և միաչափ բարձրանում ու իջնում էր բարձր կուրծքի վերայ։ Նա նայում էր և ոչինչ չէր խօսում, երևում էր, նա արդէն մխիթարւում էր այն տանջանքով և արհամարհութեամբ, որոնք դեռ սպասում էին ապագայում։ Յանկարծ՝ հակառակ կողմից մի ուրիշ կին ես յառաջացաւ, գեղեցիկ և թարմ, ինչպէս և Յուդիթը, բայց երկարատև արցունքներից թուլացած, գունատ ու այլայլուած դէմքով, որը յատուկ էր տխուր տանջուող հրեշտակի։ Բողոքի և աղերսանքի ոյժգնութեան մէջ, նա դէպի բարձր տարածելով իւր ձեռքերը, վստահ քայլերով դէպ յառաջ վազեց, ապա կանգ առաւ ու դողացող հառաչքով ծնկների վերայ ընկնելով, արձակուած մազերի ոսկեհուռ ալիքներով ծածկեց իւր վշտաբեկ երեսը։

Ներկայ եղողներից և ոչ մէկը մօտեցաւ նորան օգնելու կամ մխիթարելու նպատակով։ Ոմանք նորա վերայ նայում էին հետաքըրքրութեամբ, բայց մեծամասնութիւնը—հեգնաբար և արհամարհելով։ Ոչ ոք չը շարժուեց... Բացի մի կնոջից՝ փաթաթուած խիտ ծածկոցի մէջ։ Նա թեթև, կայսերական քայլերով դէպի ծնկաչոգը եկաւ և, նոյնպէս ծնկների վերայ ընկնելով, գրկեց նորան և ընկնողի գեր-նական տխուր գլուխը հանդարտութեամբ իւր բազուկի վերայ դրեց։ Այդ դրութեան մէջ մնացին նոքա անշարժ։

Յուդիթ Իսկարիովտացին, թանկագին մատանիներով ծածկուած ձեռքը արեգակի փայլունութեանը դէմ տալով ու այդպիսով իւր աչքերը ազատելով նորա ծակծկող ոյժից, զզուանքով լի այդ փոքրիկ խմբի վերայ նայեց։

—Ահա այն յանցաւորները, որոնց հետ խելացնոր Գալիլէացի Մարգարէն միաբանուել էր,—բացականչեց նա,—դէպի Կայիափան դառնալով։—Դեղնահեր անպարկեշտ Մագդաղենացին է նա,—նորան պարտական էին այստեղից քարերով վանել։

—Ճիշտ որ, նորան հարկաւոր է հեռացնել այն ամեն տեղից, որտեղից անցնում ես դու, զմայլելի Յուդիթ,—ասաց Կայիափան,

բայց՝ միևնոյն ժամանակ՝ նորա բարակ դժգոյն շրթունքների վերայ փայլեց հեգնական ժպիտի ստուերը։—Հասարակութեան վառ ներկայացուցիչները պէտք է հալածուեն քեզանից, և այդ էր պատճառը, որ ես լկտի Բարաբբայիս դուրս արեցի այս տեղից։ Բայց ինչ որ վերաբերում է չուայտ Մագդաղենացուն,—դեռ այդ մասին ոչ մի կարգադրութիւն անել չէ կարելի. նորան գրկող կինը—Գալիլիացւոյ մայրն է։ Նա այստեղ է եկել, որպէսզի ներկայ գտնուէ նորա մահուանը։ Եթէ որ մենք խլէինք նորանից այդ իրաւունքը, խանգարելով նորան իւր մտերիմներով ողբալու իւր որդուն,—այն ժամանակ ամբոխը կը գրգռուէր մեր դէմ՝ արդարացի կերպով։ Օրէնքը միշտ պէտք է ողորմածասիրութեան հետ ձեռք ձեռքի տուած առաջ ընթանայ։ Այդպէս ուրեմն, համբերութիւն ունեցիր, բարի Յուդիթըս, մինչ վախճան, թէպէտ և ես կը ցանկանայի գիտենալ, թէ ինչու դու այստեղ եկար. եթէ որ յանցաւորների տեսքը այդքան անպատուաբեր է քեզ համար։ Այս տեսակ խառնիճաղանճի մէջ դու չը պիտի սպասէիր միմիայն արդար դէմքեր տեսնելո՞ւ։

Մի ինչ որ հեգնական բան էր հնչում Կայիափայի ձայնի մէջ, որից յանկարծակի կարմրութիւնը Յուդիթի այտերը ծածկեց. նորա աչքերը չարաբաստիկ փայլատակեցին։

—Ես եմ, Նազովրեցու մօր նման, եկայ, որ նորա մահը տեսնեմ, պատասխանեց Յուդիթը չարանենգ ժպիտով։—Մայրը նորա տանջանքներին արցունքներով կը նայէ, իսկ ես—ծիծաղո՜վ։ Երբ նա մահուան դէմ մաքառել սկսէ՝ հրճուանքս է այդ։—Չէ թէ ես նորան ատում եմ։ Նա մեր ընտանիքի մէջ երկպառակութիւն ցանեց, նա եղբօրս սիրտը ինձնից բաժանելով, իւր մոլեռանդն ուսմունքին գերի չինեց նորան։ Ասա՛, արդեօք Յուդայի նման բաղդաւոր մարդ կա՞ր։ Հայրենիս սիրում էր նորան, իսկ ինձ համար նա աշխարհիս ամեն բանից թանկ էր—մինչ յանկարծ, մի չարաբաստիկ օր, այդ փառասէր Գալիլէացի Մարգարէի ույժի մասին եղած խօսակցութիւնները դուրս քարշեցին նորան տնի՜ց։ Ինչերուս են պէտք նոր հաւատ, նոր ուսմունք. մենք, որ երկրպագութիւն ենք տալիս ու պաշտում Աբրահամի, Իսահակի և Յակովբի Աստծուն, որոնք դեռ օրօրոցից օրէնքները սրբութեամբ էին կատարո՞ւմ։ Մի՞թէ ամօթալի չէ թէ մտածել և թէ խօսելը, որ Յուդան, բարեծնունդ տոհմից սիրուած ու արտաքին գեղեցիկ տեսքով, հօրս միակ որդին և ժառանգը, թափառական լինելով, շրջէր Նազովրեցի հիւսնի որդու հետ, ապրուստ չարունակէր ձկնորսներով շրջապատուած, յաճախէր աղքատներին և արատաւորներին կամ խեղաթիւրներին. ինչու պիտի

նա աղքատիկ կերակրուէր, մինչ կարող է ապրել բաւականութեան մէջ։ Չգեց բոլորն էլ. իւր տունը, ինձ՝—քրոջը, հօր կամքի հակառակ գործեց, և այդ բոլորը ի սէր մի ինքնակոչի, որին վերջապէս աստուածանենգութեան մէջ բռնելով, մահուան դատապարտեցին, որին նա վաղուց արժանի էր։ Դատիր ինքդ,—ինչ չափով պիտի ես ատեմ այդ մատնիչի՜ն։ Այո՛, իմ ատելութիւնը ամեն տեսակ սէրից ուժեղ է։ Ես այսօր վաղ վեր կացայ, որ դատաստանատուն յաճախեմ բոլորից վաղ։ Երբ ժողովուրդը թեքւում էր դէպի ողորմածասիրութեան, ես նոցա այնպիսի խօսքեր էի շշնջում, որոնք նորից վառում էին նորանց մէջ բարկութեան կրակը,—ես օրինակ տալով՝ կոչում էի.—՚Ի խաչ հան զԴա՛։ Լսեցիր, թէ ինչպէս ապա նոյնը նոքա խլեցին խմբով։

Կայիափան մի տեսակ անհանգստութեամբ դէպի ցած ձգեց աչքերը, ապա մեղմութեամբ պատասխանեց.

—Այո՛, ես քո ձայնը նկատեցի. նա մի տեսակ կախարդական արծաթահնչիւն երաժշտութիւն էր, խառնիճաղանճից դուրս եկած, խառն ի խուռն ձայների մէջ մտած։ Ես ի սրտէ ցաւում եմ և քեզ հետ վշտակից եմ Յուդայի մասին։ Քո եղբայրը ինձ համար միշտ սիրելի էր և թանկ,—որին Գալիլիայի այդ հրաշագործը փըչացրեց։ Յուդան փախչել է քաղաքից. գոնէ ասում են այդպէս, իսկ նորա ուր լինելը յայտնի է քեզ։

Յուդիթի հրաշալի դէմքը տխրութեան քօղով ծածկուեց։

—Ոչ, ես ոչինչ չը գիտեմ,—պատասխանեց նա դողդոջ ձայնով։—Երէկի երեկոյեան նա ինձ մօտ եկաւ, այդ նորանից յետոյ պատահեց, երբ նա պահապաններին դէպի Գեթսեմանի այգին տարաւ, որտեղ և բռնեցին Նազովրեցուն։ Նա խելակորոյսի նման էր,—որովհետև անիծում էր թէ իրեն և թէ ինձ։ Ես նորան չը ճանաչեցի—նա կատաղութեան մէջ էր։ Ես աշխատում էի հանգստացնել նորան՝—նա հեռացրեց ինձ։ Ես սկսեցի կոչել նորան այն բոլոր փաղաքշական անուններով, որոնք թէ յայտնի չէին ինձ և թէ կարող էի մտածել,—բայց նա սիրոյս մէջ խուլ էր։ Վերջապէս՝ ես նորա հետ մեր մօր մասին խօսելով, յայտնեցի թէ ինչպէս էր նա իւր որդուն փայփայում,—նա այնպէս ճչաց ու գոռում գոչում բարձրացրեց, կարծես թէ ես դաշոյն ցցած լինէի նորա սրտի մէջ։ Հայրը աղերսեց նորան յիշել իւր պարտքը ընտանիքի և հայրենիքի դէմ,—նա միմիայն աւելի վատ ճիչ արձակեց, և միևնոյն ժամանակ կուրծքը ծեծելով՝ բացականչեց ամուր ձայնով.—մեղանչեցի, մեղանչեցի՜։ Երկնքի և երկրիս ծանրութիւնը ընկած է իմ հոգու վերայ, անմեղ

արիւնը ձեռքերիս վերայ կարմրում է տալիս։ Ես մեղք գործեցի, մեղանչեցի ես։ Յետոյ յանկարծակի նա դուրս պրծնելով մեր գրկից, խաւար գիշերին անից փախչեց։ Ես վազեցի նորա յետեւից, այն յոյսով, որ դեռ ես մեր այգու մէջ գտնեմ, բայց նա այնպիսի արագութեամբ անյայտացաւ, որ ես այլեւս անկարող եղայ գտնելու նորան։ Հանդարտիկ լուսինը լոյս էր սփռում պարտէզի չորս կողմը,—բայց նա չը կար և մինչ այս ժամուն՝ ես դեռ ես չեմ տեսել նորան։

Երկու կաթիլ արցունքներ դողալով նորա երկար արտեւանունքների վերայ, ընկան նորա կրծքի թանկագին քարերի մէջ։ Քահանայապետի դէմքի վերայ անհանգստութիւնը աւելի ևս նկատելի դարձաւ։

—Տարօրինակ բան է,—քրթմնջաց նա։—Դա շատ անբնական է։ Նա ժողովրդի վերաբերութեամբ՝ իւր պարտքը կատարեց, և այժմ պարտաւոր է ուրախանալ, այլ ոչ թէ վշտակոծ լինել։ Բայց, այնուամենայնիւ,—հաւատացիր ինձ,—այդ ժամանակաւոր դրութիւն է միմիայն, թէպէտ և ես հասկանում եմ, որ դու, նորա քոյրը լինելով, անհանգիստ ես լինում։ Մխիթարուիր այն մտքով, որ ապագայում բոլոր ինչ լաւ կը լինէ, և բաւականութիւն՝ տուր վրէժխնդիր ծառային։—Նայիր—յանցաւորին արդէն բեւեռելու վերայ են։

Նա այդպէս խօսեց, կամենալով Յուդիթին մխիթարել եղբօր մասին արած մտքերի վերաբերութեամբ. և այդպէս վարուեց այն ժամանակ, երբ տեսաւ նա՝ թէ ինչպէս տուեց Պետրոնիան տանջանք սկսելու չարաբաստիկ նշանը։

Պետրոնիան—գիտակցաբար—դանդաղեցնում էր պատիժը, որքան կարելի էր, բայց այժմ այլեւս անկարելի էր յետաձգել այդ գործողութիւնը։ Նա իւր երկաթի թաթպանի մէջ սեղմուած ձեռքը բարձրացրեց, կամենալով դորա շարժմունքից հասկացնելու, որ արդէն ժամանակ է ձեռնարկելու զզուելի տանջանքին, որը իւր վերայ միշտ խոր սարսափ էր թողնում, բայց նոյն ժամօյն դարձեալ Աստուածային աչքերի համբերող և խաղաղ ակնարկին հանդիպեց։ Ո՜հ, ինչ տեսակ աչքեր էին դոքա։ Ինչպէս երկնային յօնքերի տակից փայլող երկու աստղեր—նոքա լի էին մեծախորհուրդ, անհասանելի գաղտնիքով, որը ամենաանվախ մարդու հոգին ևս կարող էր շարժել։

Պետրոնիան այդ աչքերի ակնարկը չը կարողացաւ տանել, որոնք ճառագայթացող ու աննման լինելով հանդերձ, մի տեսակ ամեն ինչ ընկճող ոյժ էին պարունակում իրենց մէջ, որոնց ազդե-

ցութեան տակ նա իւր հանդարտ անտարբերութիւնը կորցնելով, մի տեսակ կամքի տպաւորութեան տակ էր ընկնում։ Ամբողջ մարմնով դողալով, թոյլ կնոջ նման, նա շուտափոյթ շուռ եկաւ։

Սպառնող ամբոխի խուլ աղաղակը տակաւ առ տակաւ լռեց, ինչպէս կատաղի ծովի փրփրադէզ ալիքների տեղատուութիւնը։ Խորունկ խաղաղութիւնը թագաւորեց. ջերմ ու անշարժ օդը աւելի սաստիկ բորբոքուեց. կիսամերկ դահիճները, դէպի իրենց ուղղած հրամանի նշանը ստանալով ու խեղդելով իրենց մէջ այդ քստմնելի գործի ակամայ զզուանքը, դէպ՝ խաչը մօտեցան, որի վերայ բոլոր ժամանակների Հրաշքը տարածուած լինելով, խաղաղ սպասում էր գործի վախճանին.— Նոքա—ծնկների վերայ ընկնելով—իրենց դաժան գործին ձեռնամուխ եղան։ Նոցա ջըղային, մթնագոյն ձեռքերները՝ երկու աւազակների արիւնով ծածկուած և կեղտոտ, զգալի զանազանւում էին Նորա առջեւը պառկած Մարտիրոսի սպիտակաթոյր մարմնից։ Նոքա կանգ առան՝ մի վայրկենաչափ, բռնելով ահագին սուր բեւեռները...

Մի՞ գուցէ Նազարէթից եկած այդ Մարդը սկսէ կռուել ու պաշտպանուել։ Գուցէ՞ լաւ լինէ Նորան ես կապել չուաններով, ինչպէս այն երկու նախկին յանցաւորներին։ Փորձողական, զարհուրելի ակնարկով, սպանողների կողմից ամենավայրենի ընդդիմութեան սովորած,—նոքա սկսեցին իրենց անշարժ Զոհին ուսումնասիրել... Ո՛չ մի շարժմունք չը անցաւ Նորա ամուր, հանդարտ անդամների միջից... անհանգստութեան կամ երկիւղի ոչ մի ստուեր չը արտացոլեց Նորա Հրաշալի դէմքը... միմիայն աչքերը, որոնք դէպի վեր էին բարձրացուած և երկնքի կուրացուցիչ գեղեցկութիւնն էին դիտում, մտայոյզ էին և գթոտ... Այլ ես, այս բոլորից զ՚կնի, ոչ մի տեսակ կապանքի կարիք չէր պահանջւում... Գալիլիացին առնական զմայլեցուցիչ սրտապնդութեամբ էր տիրանում։ Բոլորն էլ, դահիճներից սկսած, զգալով այդ, ակամայ խոնարհուեցին այդ անվիճելի փաստի ազդեցութեան տակ։

Առանց յետագայ տատանմունքի, նոքա ձեռք առան իրենց աշխատանքը... և շարժուած, վախեցած գետինը անխիղճ մուրճերի հարուածներին պատասխանեց հազարաւոր խուլ արձագանգներով*).

---

*) Փրկչի խաչի վերայ բեւեռուելու մասին երկու տարբեր կարծիքներ են թագաւորում՝—կանգուն կամ գետնի վերայ տարածուած,—վերջին տեսակ էլ նկարագրում է տաղանդաւոր Մարիա Կորելլին։ Մեր եկեղեցական երգեցողութիւնների և կրօնական գրքերի մէջ ես երկուստեք բացատրութիւն և օրինակներ կարելի է

այդ հարուածները հռչակման նշանի տեղ էին ծառայում, որոնք Աստուածութեան մասին ներկայ գտնուելով, աւետում էին աշխարհիս ազատութեան մասին։ Միևնոյն ժամանակ հեռու, դէպի փայլուն աստղային Աթոռը Ամենաբարձրեալի, թռչեց քնքոյշ, հազիւ լսելի աղերսը մեռնող Որդւոյ Աստուծոյ.

—Հայր, թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն։

XIV.

Ամեն ինչ լռեց։ Մթնոլորտի անշարժ ջերմութիւնը այնքան ծանր էր երևում, այնքան ճնշող,—ինչպէս մի հրաշէկ երկաթի ծանրկեկ ղանգուած։

Բնութեան ոյժերը թուլացել էին, որպէս թէ նորա կարևոր զգայարանքների արատաւորութիւնից՝ իսկ երկիրը, թւում էր, կանգ

բերել, ինչպէս. «Այսօր եկեալ կամաւ տէրն 'ի խաչ։ Եւ տարածեաց զբազուկս իւր ի նմա»—Գալստեան ողողմեան,—Ժամագիրք. կամ՝—«...Խաչն սանդուխն էր զոր եսես յակոբ. պնդում էր ոտիւքն ելանել 'ի վեր...»—Գիրք քարոզութեան, արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն եօթնալոյս վարդապետի, թուին ԱՃՁԹ։ Բաց է թողնուած և Քրիստոսի ինքեամբ խաչ բառնալու տեսարանը, որ այնքան վառ նկարագրում է Ներսէս Շնորհալին՝—«Սոսկալին քերովբէից բառնայր ինքեամբ ըղ՝ փայտ խաչին. մինչ 'ի տեղի Գողգոթային»։ Կամ՝—«Եւ որդին Աստուծոյ յոյժ և յերկար տանջեցեալ եղև. զի ծանր էր խաչն, ոչ կարէր տանիլ. և քարշէին զնա չուանօք։ Եւ կալան պահակ զՍիմոն Կիւրենացի՝ զի բարձցէ զխաչըն»։ (Գիրք քարոզութեան, տես վերևում)։ Բայց չը նայելով այդ բոլոր աննշան՝ իրար հակասող մանրամասնութիւններին, Մարիա Կօրելլին, ինչպէս վիպագիր, անկարող էր բազմակողմանի կրօնի տեսակ տեսակ առնուած շրջանակներից չը դուրս գալու, քանի որ նորա ընտրած զանազան անցքերի տարբեր տեսարանները անշուշտ անցած պիտի լինէին՝ ամբողջ իրականութիւնը երևան հանելու համար։ Օրինակ. Մարիա Կօրելլին վերցրել է անշուշտ ոչ այն վայրկեանը, երբ Փրկիչը բարձած ունէր խաչը, այլ այն՝—երբ անկարող լինելով այլ ևս կրելու նորան, Սիմոն Կիւրենացին օգնութեան կոչուեց. կամ՝ ի նկատի ունենալով գետնի վերայ խաչին գամելու առաւելութիւնը, թէկուզ մուրճերի հարուածների դիւրութեան համար, նա մի այդպիսի վայրկեան է ընտրում։ Անշուշտ Մարիա Կօրելլին հմուտ աստուածաբան է՝ և եթէ նա իւր ոճանն է նկարագրում մի քանի աննշան և կասկածելի դէպքեր, անշուշտ վստահ է, որ կասկածելի իսկութեան դէմ մեղանչելով անգամ,—ոչ մի զգալի վնաս չը պիտի հասցնէ մեր կրօնական զգացմունքին։

Հայ թարգմանիչ։

էր առել իւր արեգակի շուրջը կատարող յաւիտենական ճանապարհորդութիւնից։ Տախտակացուցիչ հանդարտութեանը ոչ մի ձայն չէր խանգարում. միմիայն մուրճերը անդադար շարունակում էին իրենց մահաբեր գործը։ Այժմ այլ ևս ոչ ոք չէր համարձակուիլ այդ ժամոյն Դատապարտուածի համար ներողամտութիւն խնդրելու. Ժողովուրդը ինքը ցանկացաւ այդ մահուան պատիժը, իսկ այժմ նորա կամքն էր կատարւում։ Ուրեմն պարզ է, որ նոքա գանգատուել կամ յետ դարձնել իրենց վճիռը՝ անկարող էին։

Բայց մի ինչ որ անբնական և զարհուրելի բան կար անցնող գործողութեան մէջ. օդը լցուած էր մի տեսակ անբացատրելի ծանրութեամբ, և չը նայելով նորան, որ մարդիկ և կանայք մէկըդ-մէկու հրում էին այն ցանկութեամբ, որ աւելի լաւ նկատեն Գալիլէացուն, Որը պարկած էր խաչի վերայ,—այնու ամենայնիւ բոլորն էլ մի տեսակ ակամայ երկիւղ էին կրում—մի տեսակ վախ, որի ինչից կամ ումից լինելը նոքա չէին կարող ասել,—և որը՝ այնուամենայնիւ՝ թէ անհասկանալի էր և թէ սարսափածին։

Եւ այդ անբացատրելի շփոթութիւնը ստիպում էր նոցա լռութիւն պահելու, այնպէս որ խղճահարութիւնից առաջացած ոչ մի շշունջ անգամ չը լսուեց մահուան պատիժը իրագործելու ժամանակ։ Վերջապէս՝ դահիճները Աստուածային Նահատակի բարակ և սպիտակ ոտներն կոպտութեամբ շարժելով, նոցա հարկաւոր եղած դիրքը տուին. այդ ժամանակ նոցանից մէկը մուրճի ծանր թախումներով, որոնք մի քանի անգամ կրկնուեցին, ահագին սրածայր երկաթի բևեռները հանդարտութեամբ նորա ոտների մէջ խփեց։ Խոցուած երակներից անմեղ արիւնը ցայտեց։ Բարակ և ձիւնափայլ մաշկի վերայ երկու հատ կարմիր, պարզ նկատելի, բծեր առաջացան, բայց Նա, Որին այդպէս վիրաւորում էին, չը շարժուեց և ոչ մի ձայն չը հանեց։ Նորա մարմինը միմիայն, այդ կարմրայօն կենսական կաթիլներով, լուռ բողոքում էր մարդկային անարդարութեան դէմ, բայց այդ մարմնի մէջ ապրող անյաղթելի հոգին խաղաղ դիմադրում էր մահուան տանջանքներին, պատրաստ իւր դէմ հանած մահը յաղթանակով ընդունելու։ Իսկ ոտները, որոնք իրենց Տիրոջը տանում էին տխուր, բոլորից ձգուած տեղեր, որտեղ վշտաբեկ խեղճութեամբ ապրում էին աղքատները և հալածուածները,—որոնք կանգ էին առնում դաշտային շուշանների մէջ, մինչ Նա զմայլելի ու անմոռանալի խօսքեր էր խօսում, այդ հասարակ ծաղիկների միջից յաւիտենական Թալիսման ընտրելով ողորմածասիրութիւնը,—որոնք փափկութեամբ և քնքշութեամբ անցնում էին դաշտերից և ձիթենի-

ների այգիներից, գիւղերից ու քաղաքներից, վշտաբեկներին մխիթարութիւն, տանջուողներին՝—յոյս և թոյլերին՝—ոյժ տանելով,—այժմ այդ ոտները տանջւում էին և սեփհական արիւնով ողողւում ’ի սէր անզգայ, խաբեբայ, անհաւատ և անգոհ մարդկութեան։

Ատելը որքան դիւրին է, բայց որքա՛ն դժուար է սէրը—իսկական -սէրը։

Նոցանից շատերը, որոնք այդ անմոռանալի օրը ազատութեամբ կանգնած էին այնտեղ, լսել էին Նորա անվախ և սուրբ ուսմունքը, իսկ այժմ եկել էին սառնասրտութեամբ Նորա տանջանքներին ներկայ գտնուելու. ականջ էին դրել Նորան դաշտում, լեռան վերայ կամ ծովափնեայ տեղում, երբ Նա նոցա դեռ չը լըսուած ու նոր դասեր էր տալիս, թէ Աստուած Հոգի է—և նոքա, որոնք պաշտում են Նորան, պարտական են հոգւով և ճշմարտութեամբ երկրպագել։ Անհարկու և վրիժառու Եհովան չէր. Նորա քարոզած Ամենաբարձրեալ Արարիչը,—այլ մի գթառատ Հայր, անմեղ երեխաներին դէպի դրախտ կոչող, ինչպէս ասում էր այդ երիտասարդ Մարգարէն։

«Զի այդպիսեաց է արքայութիւնն երկնից»։

Նա՝—այդ խաչուած Մարդը, մի նշանաւոր առաւօտ իւր շուրջը հաւաքելով աղքատների, հիւանդների և վշտաբեկների մի ամբողջ խումբ, քնքոյշ ժպիտով լուսաւորելով բոլորին, ինչպէս ամառնային արեգակ, ասաց. «Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձե՛զ»։

Եւ այդ վշտախոհները, այդ անբաղդ մարդիկը գնում էին Նորա մօտ. նոքա ծունկ էին իջնում Նորա դէմ, արտասւում էին Նորա ոտների տակ. նոքա համբուրում էին Նորա հանդերձները և գետինը, որի վերայ կանգնած էր Նա. նոքա Նորա մօտ էին տանում իրենց փոքրիկ երեխաներին, և իրենց վշտերը չէին ծածկում Նորանից։ Իսկ Նա դնում էր իւր ձեռքերը նոցա գլխի վերայ օրհնութեամբ—և այդ հրաշալի սպիտակ ձեռքերը, որոնք տիրում էին խորհրդաւոր բուժիչ ոյժով և միմիայն բարի էին գործում, ներկայումս բաց ափերով բեեռուած էին սպանութեան գործիքի՛ն։ Բարձրահաս հոգիներին աշխարհային վարձատրութեան որպիսի չքնաղ հաստատութի՜ւն։

Արիւնը դանդաղ, կաթ-կաթ արտաթորում էր ափերի միջից և, ինչպէս միշտ պատահում էր խաչելութեան տանջանքների ժամանակ, լցւում էր բաց արուած ձեռքերի մէջ. մկանունքները ամրացել էին և երակները լցուել, իսկ անխիղճ փորձողութիւնը դեռ ևս չը վերջացաւ։

Խաչը դեռ չէր բարձրացրած *)։ Ամբողջ տիեզերքը, երևում էր, սպասում էր այդ նշանաւոր վայրկեանին—երկնային ուժերը կանգ էին առել և հրեշտակները լուռ ուշադիր էին։

Դահիճները իրենց գործը վերջացնելով, հարիւրապետին մօտ կոչեցին, որ նա անձամբ փորձելով Մարտիրոսի մարմնի մէջ ցցուած գամերի ամրութիւնը,—օրէնքի ուղիղ կատարումը վկայէր։

Պետրոնիան մօտեցաւ հանգող սրտով, որի տեսողութիւնը պղտորուեց, խելքը խաւարեց ու կոկորդը ցամաքեց, այնպէս, որ նա ոչ մի խօսք արտասանել չը կարողացաւ։ Այս անգամ Վշտի մարդը չէր նայում նորա վերայ։ Նորա աստուածային աչերը բարձր, դէպի երկինք էին նայում, կարծես թէ փայլուն արեգակի ամբողջ հրային փառքը ուսումնասիրելով։ Եւ—այդ երևակայութիւն էր, թէ տեսողութեան պատրանք—Նորան պարզ երևաց, որ երկինքը յանկարծակի մթնեց ու արեգակը կորցրեց իւր փայլը։ Նա իւր աչքերը շփեց, կասկածանքով չորս կողմը նայելով,—բայց խորհրդաւոր շուքը, կարծես թէ բացուած թևերից, փռուել էր համայն գետնի վերայ։

Իսկ ամբոխը, զինուորները,—մի՞թէ նոքա ոչինչ չը նկատեցին։ Ըստ երևոյթին՝ ո՛չ։ Նոցա ուշադրութիւնը մահաբեր աշխատանքն էր կլանել և ընդհանուր շարժմունք եղաւ դէպի առաջ, խաչի բարձրացումը տեսնելու համար։

Պետրոնիան, շփոթուած և կուրացածի նման, յետ յետ գնաց, իսկ դահիճները,—որոնք վեց հոգի էին,—բոլորն էլ ուժեղ, ջղապինդ մարդիկ, կռացան, իրենց գործը մինչև վերջ տանելու համար։ Բայց ի զո՜ւր։ Նոքա ընդհանուր ճիգն թափելով, Աստուածային Տանջուողին չը կարողացան և ոչ մի մատնաչափ (վերշոկ) շարժել գետնի վերա՛յից։ Դարձեալ և դարձեալ նոքա տքնեցին բարձրացնել խաչը, քրտինքը առուակի նման թափւում էր նոցա երեսներից, բայց անզին ծանրութիւնը՝—ծանրութիւն Աստուած մարդի Մեծութեան և Սիրոյ, բոլորովին և ոչ մի կերպով չը հնազանդուեց նոցա։

—Ասացի, որ նա Հերակլէսի **) ուժ ունէ,—ասաց Նոցանից մէկը, իւր մօրուքի վերայից քրտինքը սրբելով։—Միմիայն խաչը անսովոր մեծութեան է, իսկ նա՛—հերոսական կազմուածքի տէր։ Սիմո՛ն։ Սիմոն Կիւրենա՛ցի։ Ո՞ւր ես դու։

---

*) Смотри примѣчаніе выше. ա) Цензоръ.

ա) Թարգմ.՝—Նայիր վերև դրուած նկատողութիւնը։ Գրաքննիչ (Ցենզօր)

**) Հերակլէս՝ էր հսկայ ումն ահաւոր և ուժեղ՝ որդի Արամազդայ...

Բառգիրք Հայկազեան լեզուի Հ. Բ. Վենետիկ։

Ամբոխը պատառուեց, և Սիմոնը հանդարտ դէպ՝ յառաջ անցաւ:

—Ի՞նչ ունիք ինձ հետ,—հարցրեց նա՝ բարկացած:—Պամ գուցէ մտածում լինիք, որ ես եւս օգնեմ ձեզ սպանութիւն գործելու մէջ:

—Լիբիայի *) աւանակ,—վրայ բերեց դահիճը:—Քեզ հետ ո՞վ է սպանութեան մասին խօսում: Մենք ինքներս էլ մեր սեփհական կամքով չենք սպանում, այլ օրէնքի սահպմամբ: Քո ձեռքերը մեզ զիջիր մի րոպէաչափ: Դու գիւցազնական կազմուածքի տէր ես՝ և քո ոյժը մեծ է: Եթէ դու կամաւոր չը օգնես,—աւելացրեց նա կիսաձայն,—այն ժամանակ մնում է, որ մենք խիստ միջոցների դիմենք:

Սիմոնը տատանւում էր, ապա ակամայ մի բանի ստիպուած մարդու տեսքով, խաչի ներքին ծայրին մօտեցաւ: Նորա աչքերը ցած էին ձգուած և նա շրթունքները կրծոտելով՝ աշխատում էր իւր ջղային դողողը ծածկելու:

—Դուք գերանների վերին ծայրերը բռնեցէք,—մեղմութեամբ ասաց նա դահիճներին, ներքին յուզմունքից և յարգանքից ցածրացնելով ձայնը:—Իսկ ես ներքին ծայրով կը զբաղուեմ:

Նոքա անհասկացողութեամբ նորա վերայ նայեցին.—Նա կամաւորապէս մեծկակ ծանրութիւնը ընտրեց, որը անշուշտ սոսկ նորա վերայ պիտի ընկնէր խաչը տեղից շարժելիս, բայց այդ կարգադրութիւնը չը արգելեցին նոքա, Նոքա քաջ գիտէին, որ նա առիւծի չափ ոյժ ունէր, ուրեմն թող ցոյց տար իւր ո՛յժը: Այդպիսի մտածմունքի տակ դէպի այն կողմը շարժուեցին, որ կողմը նոցա ցոյց էր տուած:

Ամբոխի զզռմունքը սահմանից անցել էր. բոլորն էլ այնքան էին զբաղել այդ մահուան պատժով, որ ոչ ոք անգամ նկատեց այն սարսափելի դրութեան տպաւորութիւնը, որը անցնում էր շատ պարզ և ամենաըմբռնելի ձևով: Այդ մի տեսակ կիսախաւարի խորհրդաւոր տարածումն էր, աղջամղջային սկսուածքի նման, որի տակ տակաւ առ տակաւ հանգում էր ամբողջ երկնքի փայլուն, պարզ կապուտակութիւնը: Այդ՝ կարծես թէ՝ մի տեսակ գաղտագողի և համարեա աննկատելի էր առաջ գնում, և ամբոխը դեռ ես ոչինչ չէր նկատում—այլ հետևում էր Սիմոնի մութ, ահագին պատկերին,

*) Լիբիա—Լիբէացիք կամ Ղիբէացիք—ազգ քաջասիրտ. է անուն բնակչաց գաւառին Լիբիայ: Բառգիրք Հ. Լ. Հ. II. Վենետիկ, Թ. 1769.

որը կռացել էր Խաչուածին բարձրացնելու համար: Քնքոյշ, հեզ տեսքով՝ կոպիտ Կիւրենացին նորից դրեց իւր ձեռքերը խաչի վերայ, —այն խաչի, որը նա այնքան թեթևութեամբ մինչ Գողգոթա բարձրացրեց. և՝ վճռողական շարժուածքով՝ հանդարտ, բայց յաջողակ դէպի վեր կալաւ այնպէս, որ Քրիստոսի արիւնոտած ոտքերը նորա լարուած կուրծքին մօտեցան: Առատ շնչառութեամբ և ջերմագին ոյժով, որը աւելի սիրոյ էր նման, քան կարծրսրտութեան, նա կտրեց գետնից խաչը և վերցրեց միշտ դէպի բարձր և բարձր՝ այնքան, մինչ նորան օգնող դահիճները այլ ես անկարող եղան խաչի վերին կտորները պահելու,—և նա միայնակ, սրտի սարսափելի տրոփիւնով և կտրուող ջղերով՝ Փրկչին մի ամենակարճ վայրկեան իւր ձեռքերի վերայ պահեց:

Նա տատանուեց և հառաչեց. արիւնը դէպի նորա երեսը խըփելով, խստութեամբ սևացրեց և ճակատի երակները զարհուրելի կերպով ցցուեցին, բայց նա չը ընճուեց... վայրկենաբար բոլորը նորա վերայ թափուեցին օգնելու, և խաչի ահագին ծայրը, վերան Խաչուած Ողորմածասիրութեամբ, լեռան ամենաբարձր կատարի մէջ փորուած փոսի մէջ մտցրուեց:

Խաչը ընկաւ խուլ ձայնով, որպէս թէ երկրագնդից առանցքին դիպչելով և տատանում էր փոթորիկից բռնուած ծառի նման. ապա երբ ամրապնդեցին խաչը, նա երկու աւազակների խաչերի միջից զգալի բարձրացաւ. այդ խաչերի վերայ մեխուած աւազակները, թէպէտ բաւականին ժամանակ կախուած էին, այնու ամենայնիւ դեռ չէին մեռել: Ազատութեան սիմվոլը (նշանաբան) կանգնած էր ուղիղ, և Սիմոն Կիւրենացին այն բոլորը անելով, ինչ պահանջւում էին նորանից, գանգազկոտութեամբ հեռացաւ, սայթաքելով, և միմիայն մի բան զգալով, որ նորա կուրծքը արիւնոտել էր Զոհի արիւնով, և որ այդ արիւնը այրում էր նորան ինչպէս մի ուժգին կրակ: Նա իւր վերարկուն հաւաքեց, որպէսզի ծածկէ այդ բիծը, որը կարծես թէ հրաշալի թալիսման լինէր, որին ցոյց տալ անկարելի էր: Այդ նորան մի տեսակ տանջանք էր պատճառում, որպէս թէ նա ինքն լինէր վիրաւորուած, և միևնոյն ժամանակ, այդ տանջանքը նորա հոգին գոհունակութեամբ էր լցնում: Նա ոչինչ չէր տեսնում. նորան երևում էր, թէ գետինը իւր շուրջը պտտւում է, ինչպէս մի ջրապտոյտ, և նա տատանուելով, անընդհատ առաջ էր գնում. զարմացած ամբոխը նորա համար ճանապարհ էր բաց անում, իսկ նա Աստուածային նահատակի վերայ գամուած մակագրութեան խօսքերն էր կրկնում խուլ ձայնով.

«Յիսուս Նազովրեցի, Թագաւոր Հրէից»։

Դահիճների գործը վերջացած էր. դէպի մահը առաջնորդող ծանր տանջանքները սկսեցին Անմեղ Զոհի համար, և խառնիճաղանճը յաղթանակում էր։

Յաղթանակի և հիացման կատաղի աղաղակը խլացուցիչ ձայնով տարածուեց հեռու ու հեռու, բռնելով ամբողջ լեռը և նորա ստորոտի այգիները, մինչ Սողոմոնի ամենափայլուն տաճարն անգամ, որի վերայ, ինչպէս նախահամբաւաբեր փոթորկի և կրակի, փոշու և ծխի ամպերն էին կախուած։

Բարբարոսական կոծը կամաց կամաց մեռնելով, յանկարծ, որպէս թէ, անսպասելի շարունակուեց, բայց՝ այս անգամ մի ուրիշ անբնական աղմուկով,—հեռաւոր որոտմունքի խուլ, սպառնացող հարուածով։ Խիստ և սպառնալից ձայնով նա գլորուեց երկնքի վերայ և այդ անտանելի ձայնից դողացող ամբոխը նախ և առաջ խստասիրտ տանջանքի ու արիւնահեղութեան տեսարանից իւր լարուած ուշադրութիւնը կտրեց, իսկ յետոյ, անսպասելի, նկատեց, որ երկինքը մթնել է և արեգակը համարեա թէ ամբողջովին ծածկուած է շարաբաստիկ սև ամպով։ Մթնոտ արեգակի և ահարկու ամպի տակ, օդի մէջ նկատելի ջոկնուում էր խաչը, և նորա վերայ խաչուած Պատկերը՝—իւր ձիւնափայլ սպիտակութեամբ՝—պարզ և վառ՝ երեւում էր մթնութեան մէջ։ Իսկ ամբոխը՝ ապշած անհասկանալի զարհուրանքից սպասում էր և ականջ դնում, կարծես թէ, որևէ անբնական կախարդիչ ոյժի ազդեցութեան տակ, մեխուած իւր կանգնած տեղում։ Վախենալով շարժուելու և մի ինչ որ բանի սպասելով, բոլորն էլ ուշադրութեամբ նայում էին այդ բարձր խաչին, իւր վերայ կախուած Աստուածային Մարտիրոսով, և կիսաձայն խօսում էին փոթորկի, անձրևի մասին, խօսում էին նոցա վերայ, կասկածանքով, թէ մի գուցէ մեծ հեղեղ բարձրանայ. բայց նոցա խօսակցութիւնը դանդաղ էր և անկապ, որովհետև ուղեղները չէր գործում։ Անանց երկիւղը, սառն քամու նման, նոցա ջղերը տանջելով, ամբողջ մարմինների մէջ ակամայ սարսուռ էր ձգում։ Իսկ երկինքը աւելի և աւելի էր մթնում և, չը լռելով, կրկին և կրկին, աւելի բարդ ոյժով, հնչում էին որոտմունքի ահարկու հարուածները։

XV

Ցածր և աւելի ցածր էր ընկնում մոխրագոյն, անտեսանելի մշուշը, ամեն ինչ ծածկելով, ինչպէս մի մթնշաղ վարագոյր։ Ամբոխի զարհուրելի խաղաղութիւնը, օդի ծանր անշնչելի դրութիւնը և այդ երեք խաչերի ահռելի տեսքը, նոցա վերայ տանջուող կերպարանքներով (фигура),—սոքա բոլորը՝ 'ի միասին խառնուած՝ բաւական էին ամենասառնասիրտ, անվեհեր ականատեսին անգամ զարհուրանքի զգացմունքներ շնչելու։

Որոտմունքի ուժեղ, անընդհատ հարուածները նմանութիւն էին տալիս թաղման զանգակի երկաթահնչիւն ղօղանջիւնի, և ամբողջ բնութիւնը մի տեսակ ուրուականի տեսք էր ստացել։ Հռովմէական զինուորների շարքը անյայտացաւ, հազիւ միմիայն երեւում էր նոցա վերայ փայլող պողպատի բարակ թելը. ամբոխի սեղմուած շարքերը միաւորուեցին մի ընդհանուր մութ բծի. վերջապէս այդ փոխուող լոյսի մէջ տեսանելի մնաց միմիայն միջին խաչը։

Նկատելի և պարզ գծագրուած՝ նա հսկայական մեծութիւններ էր ընդունում, ընդլայնանալով արեւելքից մինչև արեւմուտք,—երկրից մինչև ամենաբարձր երկինքը, այն ինչ Աստուածային Խաչեցեալի ուղիղ գլխի վերայ հանգող արեգակի ոսկեճաճանչ ճառագայթը շողում էր, ինչպէս անդրափայլումն մի դեռ նոր ծնուած աշխարհի։ Մի րոպէաչափ այդ տարօրինակ լոյսը տեւեց,—ապա կայծակը, երկինքը պատառելով, լուսաւորեց նորան յատակ երկնային ցոլմունքով, և նոյն ժամուն գոռաց խլացուցիչ, ահռելի ճայթրտող որոտմունքը։ —Մարդիկ գունատուեցին, կանայք—ճչացին, անգամ հռովմէական զինուորները եւ՝—իրենց սովորական սառնարիւնութիւնը կորցնելով՝—իրար վերայ նայեցին մի տեսակ նախապաշարմունքի երկիւղով։ Չէ թէ նոքա եւս իրենց աստուածները ունէին,—նոքա հաւատում էին Եուպիտերի *) բարկութեանը, և եթէ ահռելի չ'աստուծոյ կառքը այդքան սոսկալի էր թաւալուում երկնքի վերայ,—ակնյայտնի էր, որ նորա բարկութիւնը անցել էր ծայրահեղ սահմանից։ Արդեօք նա նորա համար չէր բարկացել, որ Նազովրեցուն խաչեցին։ Նոցա վախկոտ դէմքերի գծագրութիւնը ցոյց էր տալիս իրենց հոգեկան

*) Եուպիտեր (Юпитеръ)—հին Յունաստանի ամենամեծ աստուածը՝ միւս աստուածների հրամանատարը և թագաւորը։

դրութիւնը, և զգայուն ժողովրդի տրամադրութեան հետ քահանայապետ Կայիափան ևս փոխուելով՝ մտայուզութեան մէջ ընկաւ։ Այդ փոթորիկը, սկսուած խաչելութեան վայրկեանից, կարող էր հզօր ազդեցութիւն թողնել անկիրթ ամբոխը վերայ. ժողովուրդը, հաւանական է, կը մտածէ, որ երկնային ոյժերը կամենում են վրէժխնդիր լինել Գալիլիայի Մարգարէի մահուան վերաբերութեամբ։ Նա իւր երկիւղածութեան մասին շշնջաց Յուդիթ Իսկարիոտացու ականջին։ Յուդիթը նոյնպէս դժգունեց և ջղային երկիւղ զգաց, թէպէտ և նա շատ հպարտ էր իւր այլայլմունքը յայտնելու վերաբերութեամբ։ Մինչ Կայիափան կամացուկ Յուդիթի ականջի մէջ շշնջում էր, յանկարծակի լոյսը, ինչպէս վառվռուն կրակից, ամբողջ Գողգոթան լուսաւորեց. արեգակի վերայից կորչեց ահռելի սև ամպը, և փայլուն ճառագայթները, հրաշէկ կարմիր, ինչպէս վառուող հրաբուղխից, կուրացուցիչ լոյսով փայլատակեցին այս ու այն կողմերում։

Սրտապնդուած՝—այդ վայրկենական լուսաւորութեան շնորհիւ՝ —մարդիկ թօթափեցին իրենցից ակամայ երկիւղը, դէմքերը՝ ուրախ տրամադրութեան տակ բացուեցին, իսկ Կայիափան, այդ դրութիւնից օգտուելով, հպարտութեամբ առաջ տնցաւ, և մարդկանց ամբողջ խումբի դիմացը կանգնելով, ինքնավստահ և չքով խաչին մօտեցաւ, որի վերայից «Հրէից Թագաւորը» նորա վերայ էր նայում։

Ձեռքը բարձրացնելով, փայլուն կարմիր լոյսից աչքերը պաշտպանելու համար, որը փայլում էր հեզ Մարտիրոսի գլխի շուրջը, նա հնչիւն ձայնով կոչեց.

—Վա՜հ ո՛ր քակէիր զտաճարն եւ զերիս աւուրս շինէիր. ապրեցո զանձն քո, եթէ Որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ։

Ամբոխը լսեց և գոհունակութեամբ ծիծաղեց։ Անգամ մռայլ զինուորները բարբանջեցին.— Եթէ այս Գալիլիացի Մարդը իսկական հրաշագործ է, — ահա իսկական ժամանակը սոյն հազուագիւտ դէպքի ժամանակ ցոյց տալու իւր ոյժի ներգործութիւնը։

Կայիափան ինքնագոհ ժպտաց, նորան յաջողեց բարեպատեհ սկսուածք վերցնել և ամբոխի ուշադրութիւնը հեռացնելով սեփհական երկիւղից, նորից հետաքրքրել նորան անցնող քստմնելի տեսարանով։ Դեռ ևս խաչի առջև կանգնելով, նա սառնարիւնութեամբ ուսումնասիրում էր իւրաքանչիւր գալարումն այդ հրաշալի Մարդկային մարմնի, որի մէջ Աստուածային Մեծութիւն էր պահուած. գիտնականի ուշադրութեամբ զննում էր իրեն զոհին տանջանք պատճառող արիւնի դանդաղ ծորումը. ափերից և ոտքերից կաթ կաթ

թորող կենսական հեղուկի նուազումը, համբերող ճիկով չնչառութեան ստէպ ստէպ կրկնուելուն էր ուշադիր լինում. լի գոհունակութեամբ նայում էր դժգոյն շուրթերին, անկենդան, կիսախուփ աչերին։

Աննան,—խորամանկ և գարշելի, երեսպաշտութեամբ և կարեկցական ձևով, նոյնպէս մօտեցաւ և այդ սարսափելի տեսարանին նայեց։ Ապա, փափկութեամբ ձեռքերը շփելով, նա հանդարտ ձայնով, բայց արհամարհութեամբ ասաց.

—Զայլս ապրեցոյց, զանձն ոչ կարէ ապրեցուցանել, Քրիստոսդ արքայդ Իսրայէլի, իջցէ այժմ ի խաչէ այտի, զի տեսցուք եւ հաւատասցուք Դրա։

Մեռնող գող Գանանը, այժմ վերջին հոգեվարքի մէջ, ուշադիր եղաւ այդ խօսքերին և դէպի առաջ ձգուելով—որքան կարող էր—հառաչեց, վայրենաբարոյ հայհոյանքներ թափելով։ Նորա կոկորդը արիւնով լցուեց. նորա գործ դրած սարսափելի ճիգից, լեզուն դուրս ցցուեց. նա կրկնակի ոյժ գործ դրեց, որ խօսէ,—ապարդիւն ջանքից յետոյ՝ վերջին ճիգ. Նորա ամբողջ դէմքը այլայլուեց, իսկ նորա կատաղի շարժուածքից և կապկպուած ու մխուած մարմնի ծանրութիւնից խաչը դողդողաց։

—Հայհոյիչդ Աստուծոյ,—հառաչեց նա վերջապէս և իւր կատաղի ակնարկը սեւեռեց փշեայ պսակով Փայլուն Գլխի վերայ, որը միշտ դէպի խոնարհ և խոնարհ էր ընկնում։—Լաւ է, որ դու մեռնում ես, թէպէտ ես հրճուանքով կը նայէի և Բարաբբայի վերայ, եթէ որ նա քո տեղումդ լինէր։ Բայց այնու ամենայնիւ դու խաբեբայ ես և չար մարգարէ։ Ո՛չ դու ես Քրիստոսն. փրկեա զանձն քո եւ զմե՛զ։

Միւս խաչուած աւազակը, համարեա մեռնելու մօտ, ծանր և հազիւ շունչ քաշելով, յանկարծակի կծկուեց իւր խաչի վերայ, բռնադատելով իրեն բարձրացնելու ծանրացած գլուխը։

—Գանա՜ն,—շշնջաց նա խուլ ձայնով։ —Չերկնչի՞ս դու յԱստուծոյ... Զի ի նմին պատժի կաս...

Նա կանգ առաւ՝ խեղդուելով, ապա դժուարութեամբ բացականչեց.

—Եւ մեք յիրաւի... զի արժանի որոց գործեցաքն՝ առնումք զհատուցումն... եւ սա ապիրատ ինչ ոչ գործեաց...

Դարձեալ լռեց նա. յանկարծ զարմանք, զմայլմունք և ակնկալութիւն լուսաւորեցին նորա մեռելատիպ դէմքը ու հանգող աչքերը վայրկենապէս փայլեցին։

Մի ուժգին ձայն դուրս թռաւ նորա կուրծքից, և բոլոր իւր մնացեալ ոյժով՝ նա լուիկ շուռ եկաւ դէպի Քրիստոսը:

—Յիշեա զիս, Տէր, յորժամ գայցես արքայութեամբ քով:

Հանդարտ, տանջուող ճկնաթափութեամբ, բայց դարձեալ նոյն քնքոյշ հեզութեամբ, Աստուածային Գլուխը դանդաղ բարձրացաւ, ճառագայթայեղց աչերը յաւիտենական սիրոյ արտայայտութեամբ՝ նայեցին նորա վերայ և խաղաղ ձայնը, անհուն սրտաճմլիկ, տխուր մեղեդիով արտասանեց.

—Ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս լիցես ի դրախտին*):

Զմայլելի խոստումն լսելով, տանջուող, բայց զղջացած մեղաւորը ժպտաց: Զարատանջ մաքառման նշոյլը կորչեց նորա դէմքից, նորան բոլորովին հանգստութիւն շնորհելով. թոյլ հառաչքով նորա գլուխը ծանրութեամբ կրծքի վերայ ընկաւ, անդամները դադարեցին դողալուց... Նա հանգստացաւ: Գանանը դեռ ևս տանջւում էր. նորա չարչարանքների վախճանը դեռ ևս չէր նկատւում,—այդ մի անվերջանալի, սարսափելի մաքառումն էր կենսական և նիւթական ոյժերի հետ մահուան տագնապը. և բոլորն էլ շուռ եկան այդ յուզիչ, սարսափելի տեսարանից:

Դարձեալ որոտմունքի խիստ ճայթիւն անցաւ. այս անգամ երկիրը՝ 'ի պատասխան՝ տատանուեց, և նոր երկիւղ տիրեց բոլորին էլ:

Կայիափան, չը կորցնելով իրեն, վստահ իւր սոփեստական հեղինակաւորութեան զգացմունքի վերայ, կանգնած էր նոյն տեղում, պատրաստ մրցելու այդ նոր սարսափի դէմ ևս, և իւր տեսքով որպէս թէ ամբողջ աշխարհիս վկայ էր կոչում դատապարտուածի դէմ արձակուած դատավճռի ճշմարտութեան վերաբերութեամբ: Խաչի վերայ ցոյց տալով, նա բարձր ձայնով բացականչեց:

—Եթէ յուսացաւ յԱստուած, փրկեսցէ այժմ զդա՝ եթէ կամի զդա. քանզի ասաց եթէ Աստուծոյ Որդի եմ:

Բայց խուժախումբը ոչ այնքան ջերմեռանդութեամբ նորից հաւատաց նորան. նա երկիւղածութեան մէջ էր և անբացատրելի իրեն համար թէ ինչից—սաստիկ վախենում էր: Բոլորն էլ աչքերները ձգել էին ոչ այնքան խաչուած Նազովրեցու վերայ, որքան արեգակի, որը այժմ մի նոր մոլորակ էր երևում,—ներկուած խիտ կարմիրերանգ, համարեա թէ սև գոյնով: Նոքա զարմանքով լի, նոյնպէս դիտում էին մի փոքրիկ մեկոնագոյն թռչնիկի շարժուածքներին, որը վայր իջնելով խաչի գագաթի վերայ, իւր բարակ կտուցով «Արքայի» գլուխը շրջափակած փշեայ պսակն էր փրցնում:

*) Ցերանուէտ կայանս արդարոց, ի վայելս հանգստեան և յաւիտենից կենաց:

Վարք Քրիստոսի. Հ. Գ. Վ. Այվազովսկի: Ցաւելուած Հ. թարգմ.

Մի զինուոր նորա վերայ քար ձգեց,—նա թռչեց, բայց շուտով նորից վերադարձաւ և նորոգեց իւր գերիմաստ աշխատութիւնը: Դարձեալ վախեցրին նորան, բայց նա դարձեալ նորից վերադարձաւ Քրիստոսի գլխի մօտ, ցանկութիւն զգալով, ինչպէս երևում էր, նորա գլխից փշեայ թագը պոկել: Նորա թոյլ, բայց առնական փորձերը վարձատրուեցին նահատակի մի ակնարկով,—միմիայն այդ ժամանակ փոքրիկ թևաւոր արարածը, տխուր ծլվլոցով՝ վերջնականապէս թռչեց՝—արիւնատարած կրծքով, բայց առանց մի ուրիշ վնասի:

Այդ աննշան անցքը ամբոխի մէջ շփոթմունք պատճառեց, ինչ որ յուզմունք արտափայլեց այդ փոքրիկ արարածի ճկնթափութիւնից, և թռչնիկի կրծքի վերայի արիւնոտ բիծը աւելի ցաւակցութիւն զարթեցրեց, քան թէ լուելեայն երկար տանջանքը Աստուածային Մարդի: Ցաւակցութիւն և կարեկցութիւն դէպի թռչունները և կենդանիները շատ անգամ ունենում են սառն, եսական մարդիկ, և դէպքեր են եղել, երբ մարդս ջերմեռանդութեամբ սիրելով շանը,—արհամարհել և ատել է ազգականներին և ծանօթներին:

Դարձեալ կայծակը լուսաւորեց երկինքը և փայլակի հարուածները կրկնուեցին: Ամբոխը սկսեց անհանգստութեամբ այս ու այն կողմ, դէպի յետ և առաջ շարժուել և դէպի քաղաքի կողմը նայել, կարծես թէ շուտով կամենում էր այնտեղ վերադառնալ: Յանկարծ Յուդիթ Իսկարիոտացին, բոլորովին լուսաւորուած շառագոյն արեգակի կարմիր փայլով, առաջ վազեց: Փայլուն ծածկոցը հազիւ էր պահւում նորա կրակափայլ մազերի վերայ. կիսաբաց շրթունքները խաղում էին ժպիտով. զմայլեցուցիչ գեղեցկատեսիլ դէմքը դէպի վեր էր նայում, իսկ նորա կրծքի թանկագին քարերը փայփլում էին և թափթփւում, ինչպէս օձի պարանոցի փոխուող գոյնզգոյն շուքաձիգ նշանները: Կարծես թէ ճախարակի վերայ քաշուած մարմարիոնի կտոր մի ձեռքը,—սպիտակ և փափուկ,—նա բարձրացրած ունէր, որը ծածկուած էր ամբողջովին հազուագիւտ զարդերով, որով նա արհամարհութեամբ Քրիստոսի վերայ ցոյց տալով, ծիծաղեց, ապա սիրուն բերանը թեթևակի երկու ձեռքերով ծածկելով, որպէս զի ձայնը դէպի հեռուն հնչէ, նա ծաղրական ձայնով կոչեց.

— Եթէ Որդի ես Աստուծոյ՝ էջ ի խաչէդ։

Բառերը պարզութեամբ իրարից բաժանուած էին, ինչպէս արծաթաձոյլ զանգակի ղօղանջիւնը, և Բարաբբան, որը բաւականին հեռու էր կանգնած, ըմբռնեց նոցա և ճանաչեց Յուդիթի ձայնը։

Անասելի երկիւղով և տխրութեամբ լցուած, նա ջղաձգաբար, ինքն իրեն հաշիւ չը տալով, դէպի Յուդիթը դիմեց, միմիայն այն զգալով, որ պարտական է նա կանգնեցնել, վերջացնել այդ անխիղճ, ոչ կանացի արհամարհանքը և ծաղրը. պարտական է, թէկուզ ուժով, հեռացնել Յուդիթին այն տեղից, որտեղ որ կանգնել էր նա, ուղիղ խաչի դիմաց։

Յուդիթի բարձր հրաշալի իրանը մի տեսակ սադայէլի յատուկ անդրխագործութեան էր նմանում, կարմիր թիկնոցը փայլատակում էր կրակի ցոլմունքներով, իսկ նորանից վերև՝ Աստուած—Մարդի տանջանաց մաշուած անդամները փայլում էին կուրացուցիչ սպիտակութեամբ, մինչդեռ Նորա խոնարհուած Պատկերը պօղուած էր մի տեսակ զաղանախորհուրդ շուքով յաւիտենական, յանդիմանութեան և անփոփոխելի դատավճռի։

Բայց կանացի աչքերի հեգնող չարութիւնը նորից փայլեց և դարձաւ դէպի մեծափառ Տանջուողի կողմը. և աւելի բարձր, աւելի հնչիւն, արծաթաձայն Յուդիթը նորից աղաղակեց.

— Լսում ես դու ինձ, պարծենկոտ և հայհոյիչդ Աստուծոյ։ Եթէ Դու Որդի ես Աստուծոյ, էջ 'ի խաչէ՜դ։

Զարմանեդ ծաղրը դեռ ևս չը կարողացաւ նորա շրթունքներից հեռանալ, ինչպէս կուրացուցիչ կայծակը, խորտակուած մոլորակի բեկորի նման, նորից լուսաւորեց ամեն ինչ, և արեգակի կարմիր գունդը ճեղքելով, կարծես թէ, ամբողջ խաչը վառեց։

Գարգ-կապոյտ, ոսկեգոյն ցոլմունքներով փայլելով, կայծակը չարաբաստիկ արտացոլումներ ձգեց չորս կողմերի վերայ և լուսաւորեց Աստուածային Մարդի մեռելային գունատ կերպարանքը. ապա անյայտացաւ՝ կարծես թէ փախենալով որոտմունքի ահեղ, խլացուցիչ և աշխարհցնցող հարուածների՜ց։ Թւում էր, որպէս թէ հազարաւոր աշխարհներ դղրդեցուցիչ ընդհարումներով իրար էին չփւում երկնքի մէ՜ջ։

Հէնց նոյն վայրկեանին երկիրը բարձրացաւ և տատանուեց, ինչպէս մի նաւ՝ կատաղի ծովի ալիքների վերայ, ապա միանգամից ցածրացաւ։ Ինչպէս ահեղատեսիլ արծիւ, որը ընդթափ թռչում է անհուն բարձրութիւնից, մթին խաւարը ամեն ինչ ծածկեց. անտեսանելի, խաւար գիշերը մի վայրկեանի մէջ ամբողջ տեսարանը փո-

խեց.—կանաչազարդ ամառնային բնութիւնը տեղի տուեց կոյր, անկարգ խառնակութեան. մի անբնական քաոս (хаосъ) տարածուեց տեղի գագաթանի վերայ։

XVI.

Կոծ, հառաչանք, աղաղակ և տրտունջներ, օգնութեան հասնելու վայրենի աղերսանքներ, լոյս պահանջող կոպիտ ճչոցներ. հազարաւոր վախեցած մարդիկ դէպի աջ և ձախ ընկնելով,—իրենց առջևը ոչինչ չէին տեսնում.—ահա՛ առաջին հետևանքը պայծառ օրուայ անտեսանելի գիշերուայ շուտափոյթ տեղատուութեան։ Լո՛յս։ Ո՜հ, Աստուած, լոյս պարգևիր մեզ.—աղերսում էր մի կանացի ձայն, խաւարի մէջ խարխափելով։ Լո՛յս, լո՛յս.—կրկնուեց այս ու այն կողմից, որ դուրս էր գալիս անթիւ ձայներով անբախտ, յուսահատ և վախեցած խառնիճաղանճի այլայլուող կուրծքերից։ Դէպի յետ ու առաջ էին շարժւում մարդկանց և կանանց խմբեր, իրար չփուելով, մէկը միւսից բռնելով, որոնք անկարող էին իրարու կազմուածքի կամ դէմքի ամենաթոյլ գծագրութիւնը զանազանել։ Ոմանք աշխատում էին լեռան իջեանատեղին հասնելու, քաղաք վերադառնալու նպատակով, միւսները կատաղի կռւում էին պատահող մարդկանց հետ, իսկ ամենավախկոտները իրենց տեղերում մնացին, որոնք, իրենց կրծքին խփելով, արտասւում էին և անդադար կրկնում.

— Լո՛յս, լո՛յս։ Ո՜վ մեր Հայրերի Աստուած, լոյս տո՛ւր մեզ։

Բայց նոցա աղերսանքը առանց պատասխանի մնաց։ Խիտ խաւարը տիրում էր շարունակ. անգամ կայծակը ևս չը կրկնուեց, թէպէտ որոտմունքը դեռ նոյնպէս սաստիկ, անընդհատ ուժով ճաթրտելով, հնչեց մօտիկում և պարբերաբար դղրդաց հեռուում կրկին և կրկին անգամ։

Իւր ընկերների միջից ամենասրտապինդ և իրեն չը կորցնող մի զինուոր, չախմախի և պողպատի օգնութեամբ մի կտոր տաշեղ վառեց. հէնց թոյլ կայծերը երևալուն պէս, հարիւրաւոր ձեռքեր դէպի նա մեկնուեցին, նորանից լոյս ձեռք ձգելու համար։ Սկսեցին վառել ճղներ և այն բոլորը, ինչ ձեռք էր անցնում։ Յանկարծ մի երկչոտ ճչիւն հնչեց, որից արիւնը սառոյց էր կտրում։

— Մեռելների դէմքե՜ր.—վախեցած աղաղակում էին չորս կողմից։—Այստեղ, խաւարի մէջ հանգուցեալներ են երևում։ Արտաքսեցէք ննջեցեալներին։

Այդ խելագար բացականչութիւնները կանանց մէջ իստերիկական (ջղաձգական) ծիծաղ, լաց և ողբ յառաջացրեց. շատերը գետնի վերայ ընկան. անյաղթելի երկիւղի ազդեցութեան տակ՝ երեսները ծածկելով, իսկ այն գլուխը, որը նախ լոյս էր տուել, երկիւղից թուլացած՝ իւր ձեռքի տաշեղը գետին ձգեց: Վառուած ճրները թափան և հանգան, ու նորից անբնական, անտեսանելի գիշերը ծածկեց ամեն ինչ:

Ոչ մի կարգ ու կանոն չը կար: Զինուորները շփոթուեցին, ամբոխը խլրտում էր զանազան կողմեր, և «լո՛յս, լո՛յս» էին աղաղակում չորս կողմից:

Իրաւ որ, այդ զարհուրելի խաւարում Նոքա Իսրայէլի տան մոլորած ոչխարներն էին—Նոքա առանց իրենց դատողութիւն տալու՝ լոյս էին խնդրում, երբ աշխարհիս միակ Լոյսը իրեն մահուան ընթացքն էր կատարում և համայն աշխարհը ու բնութիւնը՝ Յանուն Ամենաբարձրեալի՝—պարտական էր Նորա յետևից գնալու:

Որոտմունքը հնչում էր. երկիրը դողում. թռչունները դադրեցին երգելուց. ծառերը կորել էին իրենց խորհրդաւոր շշունջը. առուակները իրենց արծաթահնչիւն կարկաչումը գաղեցին. արեգակը իւր հրային դէմքը ծածկեց. քամիները անգամ հանդարտեցին,—միմիայն մարդս իւր վախկոտ հառաչքով և գանգատով չարժում էր ընդհանուրի խաղաղութիւնը:

Երկնային ույժերը՝ այս անգամ՝ խուլ էին այդ բողոքին, և լոյսի մասին անխելք աղերսանքը անպատասխան մնաց:

Դողդոջ մոլորակը, սարսափով և վախի տակ տատանուելով, Փրկչի հետ զգում էր տանջանքները, և կամաւոր լիովին պահուեց քայքայման և մահուան գրկի մէջ,—գրկի, որը պարտաւոր էր շուտով բացուելու, յաղթուելով յաւիտենական, անվախճան կեանքից:

Ծանր րոպէները անցնում էին, դանդաղ, երկար, ինչպէս ամբողջ ժամեր, և ոչ մի չնչին լոյսի շիթ չը ընկաւ աւելի եւ աւելացող խաւարի մէջ, որը պատել էր Գողգոթա սարին:

Շատերը միմիայն պարկել էին գետնի վերայ փոշու մէջ և, պատժուած երեխաների նման, հեկեկում էին. միւսները՝ փոքրիկ խմբիկներով՝ անմռունչ նստել էին, չափից դուրս վախեցած խօսելու համար. մի կողմից տրտունջներ և նզովք էին լսւում, իսկ բոլորը 'ի միասին վերցրուած—դժողքի տեսարան էր երևում, որը լցուած էր տանջուող մեղաւորներով:

Յանկարծ հնչեց, ներքին վախից խուլտ, Կայիափայի ուժեղ ձայնը, որը զգալի ելևէջներով տարածուեց մթնութեան մէջ:

— Ժողովուրդ Երուսաղէմի,—կոչեց նա,—ծունկ իջէք և աղօթեցէք:

Երկրպագութիւն տուեցէք Աբրահամու, Իսահակայ և Յակոբի Աստծուն, աղաղակեցէք Նորան, որ այս մրրկի պատուհասը և երկրաշարժը անցնեն: Եհովան ո՛չ մի ժամանակ իւր որդկերանցը չի թողնում, այժմս էլ Նա մեզ չը պիտի ձգէ, թէպէտ Նա իւր բարկութեամբ կամեցաւ տխրեցնել մեզ: Երկիւղ մի ունենաք. Դուք Տիրոջ ընտրեալ ժողովուրդն էք, այլ կոչեցէք Նորան սրտով և արդար ձայնով, որ Նա ազատէ մեզ այս խաւարից ու աղջամուղջի՛ց: Մենք Նորա բարկութիւնը մեզ վերայ Նորանով դարձրեցինք, որ մեր մէջ այսքան ժամանակ համբերեցինք այս պատիր մարգարէին և աստուածանենգին, որը եկել է Գալիլիայից, և այժմ Նա այս անընդհատ կայծակով ցոյց է տալիս մեզ իւր դժգոհութիւնը: Եւ այս խաւարը, որ պատել է մեզ, հաւանական է լի է սատանաներով, որոնք՝ անշուշտ՝ եկած են այս պարծենկոտ Նազովրեցու հոգու յետևից. այնու ամենայնիւ, ասում եմ ձեզ, կռացրէք ձեր գլուխները, որդիք և դստերք Երուսաղէմի, և աղօթեցէք միաձայն ձեր հայրերի Ադոնային, որ Նա, իւր բարկութիւնը ողորմածութեան փոխելով,—փրկէ մեզ վտանգի՛ց:

Նորա կոչը, թէպէտ և արտասանուած դողդոջ և վախկոտ ձայնով, այնու ամենայնիւ իւր նպատակին հասաւ և բոլորը լսեցին Նորան: Ամբողջ ամբոխը ծունկ իջաւ և միաձայն աղօթել սկսեց՝—ոմանք բարձր, միւսները կիսաձայն:

Զարհուրելի էր լսել այն զանազան աղերսանքները, որոնք դարձրուած էին դէպի Ամենաբարձրեալի գա՛հը: Կոչում էին յունարէն, եբրայերէն, լատիներէն և Եուպիտերին, Ապօլոնին [1]) և Դիանային [2]) ուղղուած աղօթքները խառնուեցին հրէաների տխրահնչիւն երգեցողութեան հետ:

— Ո՜հ, Աստուած մեր,—Աստուած մեր հայրերի՛: Լսի՛ր մեր աղօթքը, Ադօնա Տէր, որ սիրում էիր մեր նախահայրերի՛ն: Մի՛ մերժիր մեր աղերսանքը: Մենք մեղաւոր ենք մեր գործած յանցանքների մէջ, որովհետև քո հրամանագրութիւններին չը հետևեցինք, և ահա դորա համար էլ մենք պատժուած ենք: Ներիր մեզ, Աստուած, և ողորմեա՛: Մի՛ ջնջիր մեզ Քո ցասումո՛վ: Ողորմած եղիր և ուղարկիր

---

[1]) Ապօլոն՝ չ'աստուած օրուայ, գեղագործութեան, որդի Եուպիտերի և Լատոնի:

[2]) Դիանա՝ (լատ.) չ'աստուածուհի անտառների, որսորդութեան, լուսնի և կուսութեան. Եուպիտերի և Լատոնի աղջիկը—քոյր Ապօլոնի: Ծան. Հ. Թարգմ.

մեզ Քո օրհնմա՜նքը։ Վերադարձրո՛ւ մեզ մեր կեանքը, որից ահա զրկւում ենք մե՜նք։ Յիշի՛ր Քո խոստումը ազատելու մեզ և ներողամիտ լինելո՜ւ։ Խղճացի՛ր մեզ, ո՜վ Աստուած։

Մինչ նորա մրմնջում էին սոյն կցկտուր բառերը, կիսավախ և կիսայոյս, որոտմունքը, նոր ուժով հաւաքուելով, ինչպէս հազարաւոր սլացող կառքեր, որոնք իրար հետ ընդհարում են ունեցել երկնքի մէջ, որոտաց՝ 'ի պատասխան նոցա՝ այնպիսի յանկութեամբ, այնքան խլացուցիչ և բարկացայտ, որ նոր երկիւղ տիրեց ամբոխին, հրէաների և օտարականների ձայները երկար, անխզելի անօգուտ աղմուկի փոխելով։

— Աղօթքները անկապ, դողդոջ շշուկի փոխուեցին, իսկ անդադար ճայթող հարուածներով՝ որոտմունքը՝ ամբողջ մթնոլորտը լցնելով՝—Աստուծոյ իրեն ձայնն էր երևում, որը՝—կարծես թէ՝—արտասանելիս լինէր անլսելի, զարհուրեցուցիչ սպառնալիքներ։

Բարաբբան իրեն դէպի Յուդիթը ձգեց այն ժամանակ, երբ մութը պատեց, և չը նայելով, որ նորան շրջապատող խաւարը աւելի և աւելի անտեսանելի էր դառնում, նա այնուամենայնիւ միևնոյն ուղղութեամբ էր գնում, ձեռքերը դէպի առաջ տարածելով, լիայոյս այն կնոջը գտնելու վերաբերութեամբ, որին սիրում էր։

Նորա ենթադրութիւնները ճիշտ դուրս եկան, որովհետև նորա ձեռքերը, որոնցով շօշափում էր նա մթնութեան մէջ, նախ մի գլխի հանդիպեցին, որը նորա ծնկների հաւասարութեանն էր հասնում, ապա հպուեցին մի մետաքսեայ գործուածքի, որը պատել էր գետնի վերայ ընկած մի քաշքշուող կերպարանքի։

— Յուդիթ, Յուդի՛թ.—շշնջաց նա։—Աս՛մ, այս դո՛ւ ես։

Պատասխան չը ստացուեց. նա կռացաւ, շօշափեց կծկուած մարմինը. նորա այս ու այն կողմում զանազանեց զարդեղէնները, ապա թէ յիշեց, որ Յուդիթը գօտիից կախուած դաշոյն ունէր։ Զգուշութեամբ ձեռքերը շարժելով, նա վերջապէս գտաւ և այդ խաղալիքանման զէնքը, և՝ թեթևութիւն զգալով՝ հասկացաւ, որ այդ անտեսանելի կինը իրաւացի Յուդիթն էր, որը երկիւղից և շփոթմունքից կորցրել էր իւր միտքը ու ուշաթափութեան մէջ ընկել։ Նա շտապով դէպի Յուդիթը ընկնելով՝—գրկեց և բարձրացրեց նորան, իւր կրծքի վերայ սեղմելով, որի տակ նորա սիրտը ուրախութիւնից և յուսահատ կացութիւնից թնդում էր։ Նա Յուդիթի ձեռքերը չփելով, աշխատում էր ընդթափ անցնել խաւարի միջից, իւր աչքերով թափանցել ձգտելով դէպի մութը, իբրև արձակ ճանապարհ ընտրելու մտքով, բայց այնպէս, որ խոյս տուած լինէ երեք խաչերից էլ, որոնց մերձաւորութիւնը զգալով, վախենում էր նոցա հետ ընդհար-

ուելուց։ Յուդիթը ուղիղ միջին խաչի հանդէպ էր կանգնած, որի վերայ Նազովրեցին այժմ հանդարտիկ մեռնում էր։ Բայց նա չը կարողացաւ երկու քայլից աւելի անել, մինչ սև գիշերուայ խաւարը ամէն ինչ ծածկեց։ Ուրեմն Բարաբբան ուղիղ Արքայի մօտ էր գտնւում, փշեայ պսակով Արքայի մօտ լինելու միտքը նորան անչափ վախ պատճառեց։ Այդ Նազարէթից եկած խորհրդաւոր Մարդու մօտ գտնուել, գիտենալ, որ կարող ես շօշափել նորա վիրաւորուած արիւնլուայ ոտքերը, զարհուրելի խաւարի միջից զգալ նորա աչերի գաղտնախորհուրդ տխուր ակնարկը և, կարող է պատահել, և լսել նորա վերջին հառաչանքը,—այդ Բարաբբայի ուժից բարձր էր, քանի որ զգում էր իւր եղեռնագործ և յանցաւոր լինելը, և այն որ նա ինքը, Բարաբբան, պիտի մեռնէր և պարտական էր մահուան դիմելու այդ Անմեղի և Սրբի փոխարէն։

Աշխատելով այդ կերպով բացատրել իրեն յուզիչ այլայլումն, որը ամբողջովին տիրել էր նորան, Բարաբբան դանդաղ և զգոյշ սկսեց դէպի յետ քաշուել, առաջ գնալուց փախուստ տալով, բոլոր ժամանակ Յուդիթի տեղը մտաբերելով այն րոպէից, երբ գտնում էր Յուդիթը, Բարաբբայի աչքից՝—մութ գիշերային խաւարի պատճառով՝—կորչելիս։ Յուդիթին զգուշութեամբ իւր բազուկների մէջ առնելով, նա քայլ քայլ նահանջեց յառաջ և յառաջ, մինչ վերջապէս վճռեց, որ իւր և խաչելութեան մէջ եղած տարածութիւնը բաւականին մեծ էր։

Միմիայն այդ ժամանակ նա կանգ առաւ, ձեռքերը քնքշութեամբ տանելով դէպի Յուդիթի մետաքսանման, անուշահոտութիւններով օծուած մազերը, ու աշխատեց իւր դրութեան մասին ինքն իրեն բացատրութիւն տալ։

Քանիցս նա իւր ամբողջ կեանքը կը տար, որպէս զի Յուդիթին այդպէս ամուր սեղմած լինէ իւր սրտին, իսկ այժմ.—այժմ մի ինչ որ զարհուրելի բան կար այդ երջանկութեան մէջ, որը ուրիշ հանգամանքների տակ, նորա հոգու մէջ սոսկ սքանչելիութիւն պիտի առաջացնէր։

Այդ քաօսի (խառնափնթորութիւն) մէջ անկարելի էր ջոկել այն կնոջ զէթ թոյլ գծագրութիւնը, որին գրկած ունէր Բարաբբան։ Մի սառն սարսուռ անցաւ Բարաբբայի երակների միջից։ Մետաքսեայ հագուստը, անուշահոտ մազերը, Յուդիթին զարդարող թանկագին քարերի սառն հպումն. այդ չնչին առարկաները այժմ նորա վերայ զզուեցուցիչ տպաւորութիւն ունեցան, և մի անբացատրելի ծանր զգացմունք տիրեց նորան մի դեռ անյայտ յանցանքի վերա-

բերութեամբ, մինչ հոգու խորքը թափանցելով: Մեղքը և նա—հին բարեկամներ էին: Մի անգամ չէր, ինչ նորա 'ի միասին չարագործութիւններ էին արել. ինչո՞ւ—արդեօք—այժմս մեղքը նորան անտանելի դարձաւ: Նա ինքը այդ չը գիտէր, բայց դա այդպէս էր, և երբ, վերջապէս, նա կրակոտ շուրթերը դրոշմեց այդ դեռ ոչ վաղ տարփալի սիրուած կնոջ շուրթերուն,—նա ամբողջովին դողաց մի անսակ անբացատրելի, անբնական սարսափից:

Բարաբբայի համբուրելուց Յուդիթը շարժուեց, նորա մարմինը Բարաբբայի կրծքի մէջ դողաց.—գիտակցութիւնը վերադարձաւ: Նա ուղղուեց, թէպէտ և չը փոխեց իւր դիրքը:

Խոր հոգւոց հանեց Յուդիթը և, որպէս թէ քնի մէջ, շշնջաց.

— Այդ դու ե՞ս, Կայափա:

Անթարթի մէջ մի սուր ցաւ բռնեց այն մարդու սիրտը, որը դեռ ես այնքան մոլեգին սիրում էր Յուդիթին: Նա տատանուեց և հազիւ՝ Յուդիթի հետ 'ի միասին՝ վայր չը ընկաւ:

Ապա, զարհուրելի ճիգնթափութեամբ զսպելով իրեն, խուլ ձայնով պատասխանեց.

— Ո՛չ, այլ թէ ես եմ—Բարաբբա՛ս:

— Դո՛ւ—և Յուդիթը կախ ընկաւ նորա պարանոցից և ամուր դէպի իրեն սեղմեց Բարաբբային:—Դու միշտ այրական քաջ սիրտ ունէիր. փրկի՛ր ինձ, թանկագինդ իմ,—փրկի՛ր: Դուրս հանիր ինձ այս խաւարի միջից,—քաղաքում, հաւանական է, թագաւորում է լոյսը: Դու բաւականին խոհուն և ճարպիկ ես, ու կարող պիտի լինիս այս նզովեալ լեռնից դէպի ցած տանող ճանապարհը գտնել:

— Ես չեմ կարող, Յուդիթ,—պատասխանեց նա, Յուդիթի փափուկ ձեռքի սիրտանենչ հպումից դողալով:—Համայն աշխարհը ծածկուած է այս սև գիշերով, փոթորիկը, մրրկածուփ երկրաշարժը չորս կողմից սպառնում են, և քաղաքը չէ՛ երևում: Ամբողջ մարդկութիւնը աղօթում է, ոչ ոք չէ շարժւում. ո՛չ մի ելք չէ մնում, բացի այստեղ սպասելուց. որտեղ պիտի կանգնենք մենք՝ մինչ լոյսի վերադարձը:

— Ի՞նչ: Այնպէս է երևում, որ ես սխալ կարծիք ունեի՛մ քո մասին.—դու երկչոտ մէ՛կն ես,—բացականչեց Յուդիթը, նորա գրկից դուրս պրծնելով:—Յիմա՛ր: Քաղաքում կարելի է կերոն վառել, կրակներ կպցնել և կռուել այս խաւարի դէ՛մ: Եթէ դու քաջ լինէիր, կամ եթէ սիրէիր ինձ,—դու կը կենդանացնէիր քո կամքը, ուժը և առնական սրտապնդութի՛ւնը: Դու՝ առանց երկիւղի՝ ինձ այս խաւարից հանէիր պիտի, ինչպէս կանէր անշուշտ սիրահարը, առաջնորդ ունե-

նալով ջերմաջերմ սէ՛րը: Բայց դու նոյնն ես, ինչ միւս մարդիկը՝—եսական (էգօիստ) և վախկո՛տ:

— Վախկո՞տ: Եւ այն ո՞վ, Յուդի՛թ:—Ես:—Եւ նա յոգւոց հանեց ամբողջ կրծքով:—Քո մեղադրանքը 'ի զո՛ւր է: Դու լաւ գիտես, որ ես ոչնչից չեմ վախենո՛ւմ...

— Ապացոյց տուր, եթէ այդպէ՛ս է.—կտրեց նորա խօսքը Յուդիթը, սեղմուելով նորան և գուրգուրանքով նորա վիզը առնելով երկու բազուկների մէջ:—Տեսնում ես, ես քեզ աւելի եմ հաւատում, քան թէ ում և իցէ՛: Դէպի դուրս առաջնորդիր ինձ այս տեղից. մենք ծանր և զգոյշ կը գնանք. դու ինձ սրտիդ մօտ կը պահես,—նեղ ճանապարհը տանում է ուղղակի սարի կատարից. յանցաւորների խաչերը ուղիղ գագաթի վերայ են կանգնած,—մեզ միմիայն մնում է այդ ճանապարհը գտնել,—այն ժամանակ ինքներս կը զգանք մեր դէպի վայր իջնելը:

— Իսկ ամբոխը ինչ պիտի լինէ,—ասաց Բարաբբան:—Դու դեռ չը գիտես, Յուդիթ, թէ ինչպէս է նա ցրուած. մենք իւրաքանչիւր քայլափոխի մէջ կպչելու ենք մարդկանց ստուար խմբերի.—դա միևնոյնը կը լինէր, ինչ մենք աշխատէինք՝ առանց լուսնի և աստղերի օգնութեան՝ կէս գիշերին ծովի յատակից անցնելու:

— Այնու ամենայնիւ,—եթէ սիրում ես ինձ, պիտի առաջնորդես,—կրկնեց Յուդիթը հրամայողական ձայնով:—Բայց դու ինձ չես սիրո՛ւմ:

— Չե՞մ սիրում ես քեզ: Ե՞ս:—Բարաբբան լռեց, ապա Յուդիթի խտղտող ձեռքերը խլելով, ամրութեամբ սեղմեց նոցա:

— Ես այնքան եմ սիրում քեզ, Յուդիթ, որ եթէ դու ինձ սիրոյդ մէջ փոխելու և խաբելու լինիս, ուրիշին պատկանելով,—ես քեզ կարող եմ արհամարհել և՛ս: Դու սիրոյ մէջ միատեսակ չես: Իսկ ես, —քեզ միայն սիրեցի: Բայց դու՝ գուցէ՝ մինչ ես բանտի մէջ էի շղթայակապ,—ուրիշներին սիրեցիր: Միթէ սածս ճիշտ չէ: Խօսի՛ր:

Պատասխանի փոխարէն Յուդիթը նորից նորան կպչելով աղիողորմ լաց եղաւ:

— Խստասիրտ Բարաբբա՛ս: Միթէ քար է քո սիրտը.—ասաց նա հեծկլտալով:—Դու այստեղ՝—խաւարի մէջ կանգնած՝—վայրախօսում ես սիրոյ մասին, մինչ մեզ մահն է սպառնում: Տար ինձ, խնդրում եմ քե՛զ: Տուն գնանք,—և դու վարձատրուած կը լինի՛ս: Դու այս անիծեալ տեղից շարժուել չես կամենում, որտեղ՝ 'ի խաչ գամուած Նազովրեցու շնորհիւ՝—որը կախարդել է ամեն ինչ, խաւարն

է թագաւորում, որովհետև քո կեանքին աւելի գին ես տալիս, քան թէ իմ։

— Յուդի՛թ, Յուդի՛թ.—յուսահատութեամբ բացականչեց Բարաբբան։—Դու սպանում ես ի՛նձ։ Դու իմ հոգին ես տանջում ե՛ս։ Մեռնող Գալիլիացի Մարգարէի մասին ոչինչ մի՛ խօսիր։ Դու Նորա տանջանքների վերայ ծիծաղեցիր, և մինչ քո կոպիտ խօսքերն կը հնչէին, սարսափելի խաւարին ճարակ եղանք մե՛նք։ Գնա՛նք, եթէ գնալ պէտք է. բայց յիշիր, որ ամբոխը, որի միջից պէտք է ճանապարհ բաց անենք, ոչինչ չէ տեսնում և ոչըքի լսել չէ կամենում։ Աւելի աներկիւղ կը լինէր այստեղ մնալ և միասին աղօթե՛լ։

— Ես Աստծուն չեմ աղօթիլ, մինչ Նա մեզ այսպէս անխոհեմաբար պատժո՛ւմ է.—բացականչեց Յուդիթը ուժգին և հպարտութեամբ։—Թող Նա խաւար, կոյր ամբոխին վախեցնէ՛։ Բայց ինձ այդպիսով Նա չի վախեցնի՛լ։ Եթէ դու ինձ չը պիտի օգնես,—ես ինքս ինձ կը օգնե՛մ։ Ես այստեղ չեմ մնալ, որ զոհ գնամ որոտմունքի շանթերին, մինչդեռ ես կարող եմ հասնել մի որ և է ապահով տեղի՛։

— Նա մի քայլ առաջ փոխեց, Բարաբբան Նորա թիկնոցից բռնեց։

— Թող ասածդ լինէ, Յուդիթ,—ասաց նա՝ Յուդիթի խօսքերից յուսահատութեան մէջ ընկած,—միմիայն թո՛յլ տուր ինձ պահելու քեզ,—և մի ձեռքով Նա Յուդիթի իրանը ամուր գրկեց։ Հետամուտ եղիր իւրաքանչիւր քայլափոխիս, որպէս զի սայթաքելով՝ անգիտակցութեան և ուշաթափութեան մէջ պարկած որ և է մէկի վերայ չը ընկնես, իսկ ձեռքերովդ շօշափիր օդը։ Վտանգը մեծ է՛։

Յուդիթը լիակատար հնազանդութիւն Նկատելով, վառ քնքշութեամբ և սիրատենչ Բարաբբային սեղմուեց—իւր երեսը դէպի Նա մօտեցնելով։ Բարաբբան, իւր ենթադրութիւնները, կասկածանքը, վիշտը, երկիւղը և Նախազգացմունքը մոռանալով, Յուդիթի հետ դէպի հեռու խաւարը առաջացաւ, ծածկուելով Նորա մէջ և գնալով ինչպէս մռայլ, անտեսանելի ու խորքերով լի դժոխքի միջից։

XVII.

Նոքա դանդաղ և զգոյշ անցնում էին իրենց չորս կողմը շօշափելով, դեռ ես ո՛չ մի կողմից որ և է արգելքի չը հանդիպելով։

Յաղթանակը Յուդիթի կողմն էր և Նա իւրաքանչիւր աւելացող քայլափոխում իրեն աւելի և աւելի ապահով էր զգում։

— Մի՞թէ չը ասացի ես քեզ, որ այսպէս պիտի լինէ.—ասաց Նա հրճուանքով, և աւելի ամուր Բարաբբային կրթնեց։ Վտանգը քաջերից խոյս է տալիս, և մենք լեռան ստորոտը կը հասնենք շուտով, ինքներս էլ այդ չը Նկատելով։

— Իսկ այն ժամանա՞կ.—շշնջաց Բարաբբան կասկածելի ոճով։

— Այն ժամանակ մենք թէ յոյս կը գտնենք և թէ օգնութի՛ւն։ Ես քեզ հօրս տունը կը տանեմ, կը պատմեմ Նորան՝ թէ ինչպէս դու ինձ փրկեցիր, և Նա կը յիշէ, որ դու բանտից ազատուած ես ժողովրդի կամքով, քո յանցանքները կը մոռանայ, և քեզ արժանաւոր պատւով կը ընդունէ՛։ Մի՞թէ այդ չի բաւականացնիլ քեզ և գոհ չես լինիլ այդ պատւով։

Բարաբբան դողաց և ծանր հառաչեց։

— Աւա՜ղ, Յուդիթ։ Պատիւը և ես—վաղուց է ինչ իրարից բաժանուել ենք, և այս աշխարհում ես այլ ես ոչնչով չեմ կարող պարծենալ։ Վիշտը ընկած է սրտիս վերայ. մի ծանր վիշտ, որին ես ինքս չեմ կարողանում հասկանալ։ Կարող է պատահել, որ այդ ծանրութիւնը—իմ դէպի քեզ տածած սէրն է. գուցէ իմ սեփհական անդատողութիւնը և մեղքերը, ո՞վ գիտէ։ Բայց թող դա ինչ կուզէ լինի, ես վշտի տակ կորած եմ այնքան, որ խօսքով արտայայտել չէ կարելի՛։—Չէ թէ ես, Յուդիթ,—ես պիտի մեռնէի այսօր, այլ ոչ թէ այն սուրբ Նազովրեցի՛ն։

Յուդիթը արհամարհական բացականչութիւն արաւ և ծիծաղեց։

— Դու Նորան սուրբ ես կոչում. հեգնաբար ասաց նա։—Ուրեմն դու կամ խելագար ես, կամ թէ դիւահա՛ր։ Ոճրագործը և աստուածանենգը յանկարծ սուրբ դուրս եկա՜ւ։—Եւ նա Նորից ծիծաղեց, որը անմիջապէս կտրուեց, որովհետև Բարաբբան երկու ափերով Նորա բերանը ծածկեց։

— Լռի՛ր, լռի՛ր,—շշնջաց նա։—Աղաչում եմ քեզ, խղճացի՛ր։ Մէկը լաց է լինում... լսո՞ւմ ես... այնտեղ խաւարի մէջ... Հանդա՛րտ։

Յուդիթը բարկութեամբ դուրս թռաւ Նորա բազուկների միջից։

— Ինձ ինչ՝ թէ լաց են լինում կամ ծիծաղո՛ւմ.—բացականչեց Նա։—Ինչո՞ւ կանգնեցիր։ Կամ չը լինի թէ շարժուելու ընդունակութիւնդ կորցրե՞լ ես։

Բայց Բարաբբան չը պատասխանեց։ Նա այն տխուր հեծեծանքին էր ականջ դնում, որը մի մօտիկ տեղից տարածւում էր, ինչ-

պէս կանգնի սպանուած սրտի վշտաբեկ խորտակումն, և որը պատեց
նորան զարհուրելի տխրութեամբ։
— Գնա՛նք,—անհամբեր բացականչեց Յուդիթը։
Բարաբբան մեծ դժուարութեամբ զսպեց իրեն։
— Ես չեմ կարող. այլ ևս քեզ հետ գնալ անկարելի է, Յու-
դիթ,—ասաց նա տխրութեամբ,—ինքս էլ չը գիտեմ, թէ ինչն է
ինձ միշտ դէպի յետ դարձնում։ Գլուխս պտոյտ է գալիս և ես թու-
լանում եմ... Ես շարժուել անկարող եմ։
— Երկչո՛տ,—ճչաց Յուդիթը։—Մնաս բարեաւ, ես առանց քեզ
կը գնա՛մ։
Յուդիթը շուտափոյթ դէպի առաջ շարժուեց, բայց Բարաբբան
նորից՝ նորա շորերից բռնելով՝ կանգնեցրեց։
— Ո՛չ, համբերութիւն ունեցիր. սպասիր փոքր ինչ,—աղեր-
սում էր Բարաբբան խռպոտ ձայնով։—Ես ճիկն կը թափեմ գնալու,
անգամ եթէ կեանքիս գինը նստէր այդ։ Նախկին յանցանքս ես քեզ
համար գործեցի։ Միևնոյն չէ, եթէ քո պատճառով ես նորից մեղք
գործե՛մ։ Բայց 'ի սրտէ աղաչում եմ քեզ, այլ ևս Նազովրեցու վերա-
բերութեամբ չար բան մի՛ խօսիր։
— Դու ո՞վ ես, որ, համարձակւում ես խրատելու ինձ.—հարց-
րեց Յուդիթը արհամարհաբար։—Կամ թէ ի՞նչ գործ ունիս դու Նա-
զովրեցու հետ։ Բացի նորանից, միայն, որ նա քո փոխարէն մահ-
ուան պատժի արժանացաւ և կրե՛ց։ Անարգ գերի։ Դու, դու որ մար-
գարիտ գողացար սոսկ այն պատճառով, որ ես ասացի, թէ դորան
սիրո՛ւմ եմ։ Պատկառելի Բարաբբա, որը ընկել է կնոջ ցածր ինքնա-
կամութեան համա՛ր։ Եւ դու Գաբրիէլին սպանեցիր միմիայն նորա
համար, որ նա սիրում էր ի՛նձ։
— Յուդի՛թ.—բարկութեան կրակը տիրեց նորան. նա կոպտու-
թեամբ սեղմեց Յուդիթին, ինչպէս երկաթի ճանկերի մէջ։—Այժմ
կատակի ժամանակ չէ՛։ Եւ երբ այս խաւարը (լինէ դա երկնքից կամ
դժոխքից), պատել է մեզ,—դու չը պիտի վստահանաս սուտ խօսե-
լու, քանի որ մահը պատել է մե՛զ։ Զգուշացիր, եթէ ճիշտը չը ասես,
—ես կը սպանեմ քե՛զ։ Թո՞յլ ես կոչում դու ինձ։ Ո՛չ—ես ուժեղ եմ։
Սաստիկ սիրում և չափից դուրս արհամարհում ու ատում եմ, իսկ
իմ մոլի տենչանքներս անզսպելի են՝ ինչպէս և միւս մարդկանցը։—
Ես պէտք է իսկութեանը հասնեմ և ճշմարիտը գիտենամ նախ, քան
թէ կը շարժուէի այստեղից, կամ թէ պիտի 'ի բաց թողնեմ քեզ ձեռ-
քերիս միջի՛ց։ Գաբրիէլը սիրում էր քեզ, ասում ես դու, խոստո-

վանօրէն յայտնիր իսկութիւնը—դու էլ էիր սիրում վատթար Գաբ-
րիէլի՞ն։
— Յուդիթը բոլոր ուժով ջանում էր նորանից ազատուելու։
— Ես ոչ ոքի չե՛մ սիրում.—կոչեց նա բարկացած և կատա-
ղեցուցիչ ձայնով։ Իսկ ինձ բոլո՛րն էլ սիրում են։ Մի՞թէ ես առա-
ջին գեղեցկուհին չեմ ամբողջ Հրէաստանի մէջ։ Եւ դու մի սիրակա-
նի մասին ես խօսում, մի՛։ Եւ այդ մէկը դու ինքդ ես կամենում լի-
նե՛լ։ Յիմա՛ր։ Քեզ ինչ է պէտք։ Չէ թէ դու կարող ես գրկել և
համբուրել ինձ՝ ինչքան էլ որ կամենաս, ինձ համար այդ միևնոյն է,
միայն թէ մենք չը դանդաղէինք այս սարսափելի մթնութեան մէջ։
Ահա քեզ իմ շրթունքները, գոհ եղիր և ուզածդ բաւականութիւնը
ստացիր. իմացիր, որ քեզ այդքան մեծ բաժին է ընկնո՛ւմ։ Գաբ-
րիէլը ինձ սիրում էր, և կրկնում եմ, մոլեգնաբար, բայց ծածուկ,
իսկ այժմ կան մարդիկ, որոնք նորանից անհամեմատ երևելի են,
որոնք նոյնպէս ինձ գուրգուրում են, բայց չեն կարողանում իրենց
զգացմունքները ծածկե՛լ։
— Ինչպէս՝ օրինակ՝ քահանայ Կայիափան,—նա չը հրապուրեց
քեզ,—ընդհատեց նորան Բարաբբան կատաղի ձայնով։
Յուդիթը ծիծաղեց, մեղմ քրքիջներ արձակելով, բայց խորա-
մանկ յաղթանակով։
— Գնա՛նք.—ասաց Յուդիթը, բաւականութիւն չը տալով նորա
կարծիքին։—Գնա՛նք, և մի՛ վրդովիր ուրիշների վերաբերութեամբ.
այս ժամուս ես քոնն եմ, կամքիդ հնազանդ—և միմիայն քոնը։ Ու-
րախացիր այդ առաւելութեան վերայ, որ ընծայել է քեզ մթախաւ-
նութիւնը, չէ թէ ես քեզ չեմ արգելո՛ւմ։ Գնանք միմիայն և ժամա-
վաճառ մի լինիլ յիմար հարցերի պատճառո՛վ։
Բարաբբան յանկարծ նորան բաց թողեց, լռութեամբ կանգնե-
լով նորա դէմ։
— Գնա՛նք,—կրկնեց Յուդիթը։
Բարաբբան չը պատասխանեց։
Յուդիթը մօտ խաղաց դէպի Բարաբբան, բռնեց նորա թիկնո-
ցից, ապա, իւր նրբենի երեսը նորան մօտեցնելով, ծածկեց իւր մոլի
համբոյրներով։
— Բարաբբաս, գնանք,—շշնջաց նա նորա ականջին։—Դուրս
հանիր ինձ այստեղից, և ես քեզ այնքան շատ սէր ցոյց կը տամ և
կը շնորհեմ, որ շուտով կը բաւականացնէ տարփանքի՛դ։
Նա հրեց Յուդիթին զզուանքի զգացմունքով։
— Կորչի՛ր,—որոտաց Բարաբբան.—Հրէաստանի առաջին գե-

դեցկուհիդ, ինչպէս ինքդ ես կոչում քեզ. և որպէս դրախտապէս գտնուում ես։ Մի փորձիր ինձ, գայթակղեցուցիչ, եթէ չես կամենում, որ այս դժոխքի խաւարում սպանեմ քե՜զ։ Այո՛, հէնց այնպէս, ինչպէս Գաբրիէլին սպանեցի՜։ Եթէ գիտենայի ես, որ նորա պարծենկոտութիւնը՝ քո վերաբերութեամբ՝ ճշմարտութիւն էր պարունակում իւր մէջ,—նա կենդանի պիտի մնար, իսկ դու մեռնէի՜ր։ Կորչիր այս տեղից՝ աւերիչդ մարդկա՜նց։ Գնա՜ միայնա՜կ։ Չը պիտի գամ քեզ հե՜տ։ Ես դուրս եմ կորզում սրտիցս աւելնս, սէրս դէպի քեզ, և եթէ ես այլևս թոյլ տամ, որ քո նենգ, բայց հրաշալի պատկերը ապրէ յիշողութեանս մէջ, այն ժամանակ թող Ամենաբարձրեալը անիծէ իմ հոգի՜ն։ Ես ամաչում եմ, որ սիրեցի քե՜զ։ Դու դժոխքի մարմնացումն ե՜ս։ Խաբի՜ր ուրիշներին, որքան կամենաս, իսկ ինձ, Բարաբբայիս, դու այլևս անկարող ես խաբելո՜ւ։

Յուդիթը նորից ծիծաղեց քնքոյշ ու զուարթ արծաթահնչիւն դայլայլիկներով. նա պատրողական քրքիջով և օձի դիւրաթեքութեամբ կպչեց Բարաբբայից։

— Չե՞ս կամենում,—հարցրեց նա քաղցրաբարբառ ձայնով։—Ցանկութիւն չե՞ս զգում, որ քեզ խաբեն, խեղճ Բարաբբա։ Մերժո՞ւմ ես սէրս և իմ գիրկն չես դառնում։ Աւա՜ղ, դու քո մասին պատասխանատու չես կարող դառնալ, թոյլ ընկերս. ես զգում եմ, որ դու ամբողջովին դողում ես։ Լսում եմ քո հառաչա՜նքը։ Գնա՜նք։ Գնանք,— և Յուդիթը Բարաբբայի թևքից ձգեց.—դու, յոյս ունեցիր որ այնպիսի յաղթանակ պիտի տանես, որի մասին անգամ չես էլ երազո՜ւմ։

Մի կարճ վայրկեան Բարաբբան ընկճուեց և թոյլ տուեց իրեն քարշ տալ տեղից, ինչպէս ջերմից և զառանցանքի ազդեցութիւնից թուլացած մի մարդ. ապա նորա նախկին զգացմունքը տիրեց նորան տասնապատիկ բարդուած ոյժով՝ և նա կանգ առաւ։

— Ոչ, հազարիցս ո՛չ,—բացականչեց նա։—Բաւէ՜, ես չեմ կամենում, ես չեմ կարող գալ։ Բաւական է։ Ես հետդ չեմ գնա՜լ։

— Ուրեմն մեռի՛ր, դատողութիւնից զուրկ յիմա՛ր,—գոռաց Յուդիթը և առաջ ընկաւ մթին խաւարի մէջ։

Մինչ նորա անյայտանալը, որոտմունքը երկինքը ճեղքեց և հրբային գունդը շառաչմամբ գետնի վերայ ընկաւ։ Նոյն ժամուն խուլ գետնայատակի շռինդով, գետինը յանկարծ պատառուեց, լայն անդունդ գոյացնելով, որից դուրս էին գալիս փայլուն կրոցի օձապըտոյտ հրավառ լեզուներ։ Սարսափից կարկամած Բարաբբան՝ այդ զարհուրելի երևոյթին նայեց և յանկարծ հէնց նոր անյայտացող Յուդիթին տեսաւ, որը լուսաւորուած էր պարզ հրաբուղխային լոյսով.

Յուդիթի կերպարանքը, կրակից բռնուած, կուրացուցիչ փայլ էր արձակում. նա կանգնած էր անդունդի ամենամօտ ծայրի վերայ և՝ թուում էր՝ թէ վառուում է ինչպէս մի անդրաշխարհային բոնկող հոգի։ Եթէ որ նա մի քայլ ևս առաջ արած լինէր, այն ժամանակ յանկարծակի երկրաշարժը պիտի կլանէր նորան։ Նորա չը կորչիլը մի իսկական հրաշք կարելի էր համարել։

Մի վայրկենաչափ Բարաբբան Յուդիթին կանգնած տեսաւ այդ տեղում, ինչպէս մի փայլուն ուրուական փաթաթուած խիտ ամպերով և մխի տարափով. ապա, երկրորդ սոսկերկրեայ շառաչիւնից և դողոցից,—չարաբաստիկ լոյսը հանգաւ, դարձեալ տիրապետեց խաւարը և ամեն ինչ անյայտացաւ անտեսանելի խաւարի մէջ, որի անխղելի խորութեան մէջ միմիայն անբաղդ ազգի վայնասուն ու ախ ու վախն էր ականջի դիպչում, խառնուելով բիւրաւոր հեծեծանքների հետ։

XVIII.

Երկիւղը ընդհանրական էր։ Կատաղած ամբոխը՝ խումբ խումբ եղած՝ մթութեան մէջ յետ և առաջ դառնալով, ալէծուփ ծովի կատաղի ալիքների նման, իրար հետ կռուում էին, լաց լինում և անդադար գոռում-գոչում ձգում, այս ու այն կողմերի վերայ թաւալելով։

Ծանր օդը վայրի կաղկանձանքներով և անէծքներով էր լեցըուած, որի մէջ մի տեսակ կատաղի ծիծաղ հնչեց, ապա ցաւի ճիչ կամ երկիւղի բացականչութիւն և անվերջանալի աղօթքի տաղտկացուցիչ երգեցողութեան եւէջների ձայնը։

Բոլորն էլ մի նոր անբաղդութիւն էին նախագուշակում։

Անսպասելի երկրաշարժը ամենաքաջերին անգամ վախեցրեց, որոնք իւրաքանչիւր րոպէ սպասում էին, որ ամբողջ Գողգոթա լեռան ահա կը խորտակուէ և հրային փլատակները կուլ պէտք է տան բոլորին էլ։

Բարաբբան նոյն տեղում էր կանգնած, որտեղ թողել էր նորան Յուդիթը։ Նորա բոլոր անդամները դողացին,—սառն քրտինքը դուրս թորեց մարմնի երեսից։ Նա աւելի սարսափ, քան թէ վախ էր զգում,—սարսափ և ամօթ ինքն իւր և շրջապատող մարդկանց դրութեանը նայելով։ Անեղծելի յանցանքը ընկած էր բոլոր մարդկու-

թեան վերայ: Նա այդ հասկանում էր, ինքն ևս չը գիտենալով, թէ ինչպէս պէտք է գալ այդ անշուշտ եզրակացութեան:

Վերջապէս նա վճռեց շարժուել և դէպի յետ մի քանի քայլ փոխելով, նոյն պահուն նորա վերայ էր խորհում, թէ Յուդիթը գնաց արդեօք դէպի առաջ, թէ ո՛չ: Նա ակնյայտնի էր, որ զգում էր դրութեան ամբողջ վտանգաւորութիւնը:—Հազիւ թէ Յուդիթը կը վստահանար յառաջ խաղալ, գիտենալով հէնց նոր գոյացած ճեղքուածքի մասին, որի մէջ նա հազիւ չը ընկաւ:

Նա բարձր ձայնով կոչեց.—«Յուդիթ»,—բայց պատասխան չը ստացուեց:

Կասկածանքի և երկիւղածութեան զգացմունքով լի, նա քայլում էր սայթաքելով, որի ոտքերը յանկարծակի դիպան մի պարկած կերպարանքի (фигура), թեթևակի հրելով նորան: Նա կռացաւ և ձեռքով շօշափեց սառ պողպատը:

— Զգո՛յշ կաց, ով կուզէ դու լինիս,—ասաց մի խուլ ձայն,— իմ սուրս կարող պիտի լինէ վիրաւորել քե՛զ: Ես—Պետրօնեան ե՛մ:

— Մի՞թէ մտածում ես, որ դու այստեղ ապահով տեղ ես, զինուոր.—հարցրեց Բարաբբան դողդոջ ձայնով: Այս խաւարի մէջ գիտե՞ս դու, թէ ո՛ւր ես գտնւում:

— Ես այստեղից չեմ շարժուիլ,—պատասխանեց Պետրօնեան:— Ես այս տեղում երկնքի հարուածից ընկայ,—և մնացի այնտեղ, ուրտեղ ձգուած էի: Ի՞նչ օգուտ պիտի ունենայր իմ այս ու այն կողմ ընկնելս: Բացի այդ, բոլոր ծառայողները, ինչպէս և ես, պարտաւոր են մեռնելու իրենց պահնակատեղիում,—իսկ իմ պահնակս այստեղ է,—Նազովրեցու խաչի մօտ:

Բարաբբան դողաց և նորա արիւնը սառոյց կտրեց:

— Ի՞նչ: Նա մեռա՞ւ.—հարցրեց նա կամացուկ և երկչոտութեամբ:

— Ո՛չ, դեռ նա շնչում է,—պատասխանեց հարիւրապետը ոչ պակաս վրդովմունքով,—ծանր շնչում է և տանջուո՛ւմ:

Մի տեսակ ներքին բռնադատող ույժի ազդեցութեան տակ, Բարաբբան շօշափելով մի քանի քայլ արաւ, ապա կանգնեց և ձեռքերը լայնութեամբ տարածեց.

— Ո՞ւր ես Դու,—շշնջաց նա թոյլ ձայնով:—Ով Դու՝ մեռնողդ իմ փոխարէ՛ն: Ո՞ւր ես գտնւում դու:

Նա ականջ դրեց, բայց, բացի հեծեծանքից, ոչինչ չը կարողացաւ լսել: Դեռ ևս նոյնատեսակ ձեռքերը տարածելով, միմիայն օդի հանդիպեց:

—Այս ո՞վ է լաց լինում.—հարցրեց նա մեղմութեամբ, խոնարհեցնելով ձայնը:—Պատասխանիր ինձ, աղերսում ե՛մ: Կին թէ՞ մարդ, պատասխանիր: Չէ թէ ես էլ յանցաւորների մէկն եմ, և նոյնպէս անխելացի տանջւում ե՛մ:

Երկար, տխուր յոգւոցը հնչեց մթին տարածութեան մէջ,— հառաչք համբերող տանջանքի, և Բարաբբան, բնազդաբար զգալով, թէ Ով կարող էր այդպէս արտայայտել իւր ահռելի տանջանքների ազդեցութիւնը,—բռնուած էր մի այնպիսի անյաղթելի զարհուրանքով, որ հազիւ թէ չը կօրցրեց իւր գիտակցութիւնը:

—Ո՞ւր ես Դու.—բացականչեց նա նորից, աւելացող անհանգստութեամբ:—Ես չեմ կարողանում Քեզ գտնե՛լ: Մութը պատել է ամբողջ աշխարհը, և նորա մէջ ես կորած եմ: Քո տանջանքները, Նազովրեցի, ծածկում են բոլորը, ինչ կարելի է երևակայե՛լ: Թէպէտ ես և յանցաւոր եմ, բայց երդւում եմ, սիրտս պատրաստ է յօշոտուել Քոնի հետ միասի՛ն:

Սոյն անկապ խօսքերով նա ընկաւ ծնկների վերայ. այրող արցունքներ թափուեցին նորա աչքերից:

Յանկարծ մի դողդոջ կանացի ձեռք շարժեց նորան.

—Հանդարտ,—շշնջաց այդ ձայնը՝ կտրուող ելևէջներով:— Խղճաշարչար մեղաւոր, հանդարտիր և աղօթի՛ր: Մի երկնչի՛ր: Մեղքերդ մի համարիր,—եթէ նոքա այնքան բազմաթիւ լինելու լինին, որքան աւազի հատիկները անապատի վերայ,—այնուամենայնիւ քո արցունքները և տանջանքները կարող են գնել նոցա՛: Մեզ հետ ծնկներիդ վերայ կաց, եթէ ցանկանում ես—և քաջալերուիր. վախճանը մօտենում է, խաւարը կորչում է և լոյսը մօտ է:

—Եթէ այդ ճիշտ է,—ասաց Բարաբբան, քնքշութեամբ պահելով փոքրիկ ձեռքը, որը հպուեց նորան,—ինչո՞ւ ուրեմն շարունակում ես դու հեծկլտոցդ: Հապա ինչո՞ւ ես այդքան արցունքներդ վատնում:

—Ես սոսկ կին եմ,—պատասխանեց հեզ, սիրելի ձայնը:—Եւ՝ ինչպէս կին՝ ես արտասւում եմ այն չարիքի վերայ, որը հասցրուած է մարմնացած ամենախոր սէրին:

Կանացի ձեռքը յետ քաշուեց և Բարաբբան մնաց նոյն տեղում, ծնկների վերայ ընկած:

Նազովրեցու խաչի և նորան շրջապատողների մերձաւորութիւնը զգալով, Բարաբբան այլ ևս իրեն միայնակ չէր զգում. բայց գաղտնի վշտի ծանրութիւնը, որպիսին ճաշակում էր, նա, քանի գնում

աւելանում էր ընդմիշտ։ Այդ միշտը նորա սիրտը լցնում էր երկիւղածութեամբ և ուղեղը տանջում. խաւարը պատում էր նորան համարեա թէ մի տեսակ շօշափելի սաւանով, և նա անորոշ զգում էր, որ լաւ կը լինէր, եթէ ինքը եւս մեռնել կարողանար Գողգոթայի վերայ այդ Թագաւորի հետ։

Ինչո՞ւ պիտի այլեւս ապրէր նա։ Նա սրտաքաւած էր հասարակութեան միջից, 'ի պատիւ իւր ոճրագործութեա՜ն։ Զօկելով ու դասաւորելով իւր մեղքերը,—մտքի անընդհատ գործողութեամբ,— նա զարհուրեց իւր մէջ պահուած չարութեան ոյժերից ու մեծաքանակութիւնից։ Գողութիւնը և սպանութիւնը, որ գործել էր նա, հետեւանք էին նորա կէպի Յուդիթ Իսկարիովտացին տածած մոլի սիրուն։ Այդ կոյր մոլեգնութիւնը նորան վատթարագոյն էր երեւում բոլոր իւր ունեցած յանցանքներից։ Այդ էր պատճառը, որ նա, իւր անունը և պատիւր կորցնելով, անգամ իւր սեփհական աչքերի առաջ հրէշ դարձաւ։—Այն ժամանակուայ ընթացքում, երբ նորան Պիղատոսի մօտ տարան, և այդ րոպէի, երբ նա խաւարի մէջ անտեսանելի Նազովրեցու պատկերի առջև ծունկ էր իջած,—մի ամբողջ յաւիտենականութիւն անցաւ.—յաւիտենականութիւն, որը հոգու և խղճի անցքերով աւելի հարուստ է Աստուծոյ աչքերի առջև, քան թէ ամբողջ թագաւորութիւնների պատմութիւննե՜րը։ Ժողովուրդը ազատեց նորան, նոյն ժողովուրդը դիմաւորեց նորան—գողին և խաբեբային՝ ուրախ աղաղակներով, բայց ի՜նչ օգուտ դորանից։ Ի՞նչ պիտի արժենար խաւար ամբոխի այդ բոլոր դմայլմունքը, մինչդեռ նա ինքը խոստովանում էր, որ մեղաւոր է իւր անվերջանալի յանցանքներով և որ նա արդէն աններելի մեղանչել է։ Սարսափելի և քստմնեցուցիչ է մեղքի ծանրութի՜ւնը։ Ինչպէս կապարեայ (արճիճ) բեռն, ծանրութեամբ ընկած էր նա անմահ հոգու վերայ, որը անուժ տքնում էր—ըստ կարելոյն—կատարելագործութեան հասնելո՜ւ։

Վշտաբեկութիւնը, որի գերին էր դարձել Բարաբբան, մտատանջութիւնից առաջ եկած տխրութիւն էր, որպիսին նա ոչ մի ժամանակ դեռ չէր զգացել։ Ահա՛ ինչու համար նա չատ մօտ էր նախանձելու Գանանին անգամ, որին յաջողւում էր մեռնել Նազովրեցու հետ 'ի միասին, մի կարգում նորա խաչի հետ։ Նորա այս բոլոր մտքերը բնազդաբար առաջ եկան. նա դատել նոցա վերաբերութեամբ և ինքնորոյն մեկնել—չէր կարող. այդ զգացմունքները բոլորովին նոր և անհասկանալի էին։

Գետ եւ ծնկների վերայ չոգած՝ նա ջերմեռանդութեամբ ա-

ղօթում էր իրեն մահ պարգեւելու վերաբերութեամբ. կեանքը նորան հարկաւոր չէր։

Ցանկարծ ծանր մթնոլորտի մէջ թափանցեց մի խուլ զօղանջիւն.—քաղաքի միջի մեծ և փոքր զանգակների ձայնը*)։

Այն ժամանակից, որ մութը ընկել էր, նոցա առաջին անգամ դեռ պարզ կարելի էր լսել—մթնոլորտը մաքրւում էր։ Նոքա խփում էին արեգակի մայր մտնելի ժամը—չը նայելով, որ նա չը կար արդէն։

Բարաբբան ականջ դրեց, ապա զգաց, որ իւր կարգում կանգնածներից մէկը շարժուեց և բարձրացաւ։ Զընայելով գործ դրուած բոլոր ճիկնթափութեան, նա չը կարողացաւ այդ նոր արարածի դէթ մշուշապատ գծագրութիւնը զանազանել։ Մի առ ժամանակ անցած, նա տեսաւ մի թոյլ լոյս և, խորին զարմացմամբ, որ այդ լոյսը հանդարտութեամբ տարածուելով, ամբողջովին ամփոփւում էր մի կնոջ մեծափառ իրանի շուրջը. այդ կնոջ դէմքը,—աստուածամի կնոջ մեծափառ...

*) Մարիա Կորելլին սխալւում է. այն ժամանակ զանգակներ չը կային։
Նկատողութիւն թարգմանչի (Ռուս) ա)

ա) Արդեօք Համեստափայլ Կոմսուհի Ե. Փ. Կրապոտկինան ինքը չէ՞ վրիպում «Բարաբբայի» նման վէպ գրելու համար տաղանդաւոր Մարիա Կորելլին՝ հարկաւ՝ աւելի լաւ ուսումնասիրած պիտի լինէ հին պատմութիւնը, որից՝ իւր ռուս թարգմանչի հետաքրքրութեան համար՝ պարզ երեւում է, որ զանգակները, որից՝ իւր ռուսաց թարգմանչի հետաքրքրութեան համար՝ պարզ երեւում է, որ զանգակները Քրիստոսի ծննդից շատ և շատ առաջ եւս գործածական էին, անգամ կռապաշտական տաճարներում, և՝ մինչև անգամ՝ Բելլօնի քրմապետը,—ինչպէս երեւում է նորա անտիք խորաքանդակից,—փորագրուած է զանգակը ոտքերի տակ. իսկ նա գոյութիւն ունէր 83—78 թ. նախ Ք. Ծ. իսկ Բելլօնի տաճարը Սուլլա կոնսուլի օրերում տիրում էր (130—63 թ. նախ Ք. Ծ.) Միհրդատի (Տիգրանի ժամանակ) Օսքա քաղաքի դրամի վերայ նոյնպէս փորագրուած է՝ ճրագ, զանգակ և մուրակ՝— (առաւելութիւններ, որոնք քուրմերին են պատկանում)։ Անտօնիայի, Սերտօրիայի, Լուկուլլի, Յուլիոս Կեսարի (ծայրագոյն քուրմ, որը մեռել է 44 թ. նախ Ք. Ծ.) ժամանակները Հռոմում գործածական էր զանգակը, իսկ ներուաղէմը չէ թէ Հռովմայեցիներից նուաճուած լինելով, լի էր նոցա կռատներով եւս։ Իմ հնագիտական ժողովածուիս մէջ կան դրամներ, որոնք զանգակի պատկեր են կրում և պատկանում են Ն. Ք. Ծ. թուերին։ Տասնեակ դարեր Ք. Ծ. առաջ՝ զանգակը, անգամ փոքրիկ զանգակներով քօղերը, որոնք այնքան շատ են գտնւում հնագիտական պեղումների ժամանակ գերեզմանների մէջ, ինչպէս յայտնի է, փառքի և մեծութեան նշան էին ուրիշ ազգերի մէջ եւս։ Բացի այդ զանգակների միջոցով, ի հընումն եւս, ցոյց էին տալիս օրուայ և գիշերուայ ժամանակները,—այդ մտքով էլ՝ շատ իրաւացի՝ գործ է ածուած և «Բարաբբայի» մէջ, որ, ի հարկէ, ոչ մի ընդհանուր կապ չունէ քրիստոնէական զանգակների ներկայ գործածութեան հետ։ Աւելի մանրամասն տեղեկութիւն կարելի է քաղել հետեւեալ գրքից. «Древняя исторія К. Ф. Беккера ч. Ш, изд. 1893 г.». Նկատողութիւն՝ Հայ թարգմանչի։

բարձր բռնուած ձեռքերը տարածուած էին դէպի անտեսանելի խաչի կողմը, կսկծեցուցիչ աղերսանքի արտայայտութեամբ։

Լոյսը քանի գնում տարածւում էր. կարմրագոյն հրային պատառուածքը երկնային ամպերի ամբողջ ահռելի զանգուածը ճեղքեց։ Տակաւ առ տակաւ մեծանալով, նա մի փայլուն շրջան գոյացրեց, ուղիղ Նազովրեցու գլխավերևում, լուսաւոր կայծեր ձգելով նոյն մակագրութեան վրայ. «Յիսուս Նազովրեցի, Թագաւոր Հրէից», ապա վայրկենապէս լուսաւորեց Խաչուածի, փշեայ պսակի մէջ առնուած գլո՛ւխը։

Ո՛րքան անասելի մեծութիւն կար, քանի քանի գաղտնախորհուրդ տանջանք—այդ Աստուածային Պատկերի վերա՛յ։ Զզուանք աշխարհիս մեղքերից, ողորմածութիւն—նորա դահիճների փոխարէն, սէր դէպի նորա բոլոր հէգ արարածները, անփոփոխելի աստուածային կամք—ամեն ինչ ներել և գրախտի լոյս տալ—այս բոլոր մեծ մտքերը անդրադառնում և ցոլում էին հրաշալի դէմքի գծերից և դէպի վերամբարձած ուշադիր աչերի նայուածքի՛ց։

Բարաբբան, այդ մեծ տեսիլքի վերայ ուշադրութեամբ նայելով, զգաց, որ իւր սիրտն ու հոգին անվերջանալի արցունքների մէջ կը հալուէին՝ այդ արքայական տանջանքը տեսնելիս։ Կրակի ճեղքը երկինքում երկարացաւ և լոյսի ամբողջ հիւսուածքներ և շերտեր ցրուելով այս ու այն կողմերի վերայ, մի արտակարգ գեղաշուք պատկեր ներկացրեց։ Գողգոթայում գտնուած ամբողջ խառնիճաղանճ խումբը, դէպի հեռուն տարածուելով, Խաչուած Քրիստոսի առաջև ծնկաչոք ընկած էր։ Բոլորն էլ իրենց դէմքերը մեռնող Փրկչին էին դարձրել. բոլորն էլ երկիւղի մէջ էին, իւրաքանչիւրի դէմքի վերայ անհանգստութեան և յուսահատութեան կնիքն էր դրոշմուած. բոլորն էլ, ինչպէս մի մարդ, անգիտակցաբար խոնարհել էին միակ Նորա փրկութեան առջև։

Կորչող խաւարի միջից՝ ամենայաղթ երկնային լոյսը յանկարծ լուսաւորեց երկրպագող մարդկութեա՛նը։

Բայց միմիայն մի վայրկեա՛ն։ Լոյսի վերադարձի հետ, վերադարձաւ և առօրեայ կենսական շարժմունքը. ծունկ իջած ամբոխը իսկոյն ոտքի կանգնեց ուրախութեան աղաղակներով և զուարթ թեթևութեամբ. վտանգը անցաւ,—մահը այլ ևս անխուսափելի չէր երևում,—և, ինչպէս՝ այդպիսի դէպքերում՝ մշտական վախճան,— Աստուած մոռացուա՛ծ էր։

Ամպրոպը դեռ ևս շառաչում էր, որոտմունքը գոռում,—բայց արդէն հեռուում, և ժողովուրդը, աւելի և աւելի գրգռուելով, ցըր-

ուեց՝ դէպի զանազան կողմեր. ընկերակիցները, իրար պատահելով, սկսեցին համբուրուել և իրենց անձնական սրտասփելի տպաւորութիւնները մէկմէկու հաղորդել։

Բարաբբան նոյնպէս նոյն տպաւորութեան տակ բարձրացաւ։ Հէնց ուղիղ նորա հանդէպ Նազովրեցու խաչն էր, իսկ իւր շարքում կանգնած էր Մագդաղէնացին։ Ուրեմն նա չոքած էր Բարաբբայի հետ, երբ տիրում էր խաւարը, նորա ձեռքը պիտի որ հպուած լինէր Բարաբբային և նորա ձայնն էր, որ այնքան հեզութեամբ մխիթարում էր Բարաբբային։ Բարաբբան դողաց։ Մագդաղենացին ցոփ վարքի տէր էր և յայտնի պոռնիկ կին,—բայց՝ արդեօ՞ք՝ նա Յուդիթից վատ էր։

Բարաբբայի հոգին այդ համեմատութիւնից տխրեց։ Նա, չը նայելով իւր բոլոր ճկնթափութեան, չը կարողացաւ այդ մտքից բաժանուիլ։—Յուդիթ Իսկարիոտացին—հպարտ էր, գեղեցիկ և յաղթանակող իւր գիտակցութեամբ, որոնց շնորհիւ նորա շատ մեղքերը ծածկուած էին մնում,— իսկ Մարիամ Մագդաղենացին,—նոյնպէս գեղեցիկ, բայց խորտակուած վշտով, արհամարհուած բոլորից, բայց համբերող և զղջացող ու սարջացող.—երկուսից որն էր արժանի աւելի խիստ դատավճռի տակ ընկնելու հարցի մէջ։

Խոր հառաչը դուրս թռաւ Բարաբբայի կրծքից,—հառաչիւն, որի սահմանը աղի տնքոցն էր կազմում։ Նա՝ ինքը մեղաւոր մարդ էր—ի՞նչ իրաւունք պիտի ունենար յանցաւոր կանանց դատելու։

Նոյն պահուն Մագդաղենացին բարձրացրեց իւր արտասուաթոյր աչերը և նայեց Բարաբբայի վերայ։ Մագդաղենացու ճոխ և սքանչելի մազերը թափթփւում էին, խիտ խիտ դիզուած, ոսկի ծածկոցի նման. Նորա շրթունքները դողդողում էին, որպէս թէ որևէ բան ասելու համար, բայց պատահելով Բարաբբայի խիստ, փորձողական և սառն ակնարկին, Մագդաղենացին տատանուեց, և իւր երեսը լայն ծածկոցի ծալքերի մէջ պահելով, դէպ առաջ ընկաւ, շատ մօտ խաչի պատուանդանից, ու կծկուելով այնտեղ, առանց շարժողութեան մնաց։ Իսկ այն կինը—նա, միւսը, որի համար, ինչպէս մտածում էր Բարաբբան, բաղձալի լոյսը յանկարծ երևաց,— ու՞ր էր նա։ Նա այլևս այնպէս պանծալի կանգնած չէր, ինչպէս Բարաբբան հէնց այդ նոյն ժամուայ մէջ տեսել էր նրան. այդ կինը նորից ծնկի վերայ իջաւ և նորա դէմքը սքողուած էր։

Յանկարծ մի ձայն, անծայր վշտալի, բայց պարզ և քնքոյշ, հնչեց.

—Է՛լի էլի *) լա՛մա սաբաքթանի։

Այլայլուած ամբոխը վայրկենապէս և միահոգի կանգ առաւ. բոլորի ակնարկը դէպի խաչը դարձաւ, որի վերայից այդ հրաշալի ձայնը տարածուեց։

Երկինքը ոսկի շերտերով էր ծածկուած, վաղուց կորած արեգակը հրային, համաշխարհային հրդեհի նման, բոցերով նորից ճաճանչափայլ լոյս ձգեց ուղիղ Գողգոթայի վերայ։

—Է՛լի էլի, լամա սաբաքթանի.—կրկնեց հնչուն կերկերուող ձայնը և—ի սրտէ աղերսանքը, բարձր և բարձր թռչելով, բանուեց ամպերի մէջ և կորչեց պատասխանող որոտմունքի հետ։

—Նա զԵղիա կարդայ**),—ասաց մի մարդ, որը կանգնած էր առաջնակարգ տեղերից մէկում։—Տեսցուք, գա՛յ Եղիա իջուցանել ըզդա,—և արհամարհաբար ծիծաղեց։

Ցենտուրիօն Պետրօնեան բարձրացրեց գլուխը և տեսաւ, որ մահը մօտ է և հոգեվարքի տանջանքը արդէն սկսուեց Նազովրեցու համար։

Մա՛հը, մինչ կեանքը դեռ նոր էր ծաղկում, մինչ ամեն մի ուժեղ նեարդ և մկանունք, իւրաքանչիւր անգամ, արեան ամեն մի կաթիլից, բողոքում և խռովում էին վաղաժամ քայքայման դէմ, մա՛հ այնպիսի տանջանքների մէջ, որոնց երևակայել անգամ չէ կարելի,—ահա թէ ինչպիսի ճակատագիր էր ընկած Աստուածային Անարատութեան և Երկնային Սիրուն, ի պարգև։

Այժմ սարսափելի դողոց բռնեց այդ հրաշակերտ մարդկային մարմնին. ճառագայթացոյ աչերը որպէս թէ կանգ առան. շրթունքները կիսաբաց էին և շնչառութիւնը ջղաձիգ ու կցկտուր։

Երկնքի կրակին յատուկ կարմրութիւնը՝ համարեա թէ՝ ամբողջ արևմուտքը բռնել էր. արեգակը դանդաղ մայր էր մտնում։

Իւր ամբողջ գոյութեամբ՝—խորին. կարեկցութեամբ բռնուած՝ —Պետրօնեան իւր մօտ կանգնած զինուորին մի ինչ որ բան շշնջաց, որը թացացնելով սպունգը բացախի մէջ, յարմարեցրեց երկար եղեգնի ծայրին, որը լարեց դէպի Աստուածային Նահատակի շուրթերը, նոցա բորբոքումը փոքր ինչ զովացնելու նպատակով։ Բայց այլ ևս

---

*) Քանզի հոռոմք էին զօրականքն՝ ոչ իմացան զբանն, այլ զէլի էլին (որ է Աստուած իմ, Աստուած իմ), լուան իբրև Էլիահ, այն է Եղիա։
Վարք Քրիստոսի—Հ. Գ. Ղ. Այվազովսկի։ Բացատր. Հ. Թ..

**) Տես նկատողութիւն հայ թարգմանչի—վերևում։

ոչ մի նշան չը կար նորա գիտակցութիւնը չը կորցնելու վերաբերութեամբ, և մինչ զինուորը սպունգը շարժում էր արիւնոտած գծերի վերայով,—գէթ փոքր ինչ ամոքելու յօշոտուած մաշկը,— քսու բահանայ Աննան դուրս պրծաւ ամբոխի միջից և մէջ մտաւ.

—Թո՛յլ տուր, թո՛յլ տուր,—ասաց նա փափկութեամբ և անոյշ ժպիտով։—Տեսցուք՝ գա՞յ Եղիա իջուցանել զդա։

Ամբոխը զուարճական ձայներ արձակեց և աղաղակ բարձրացրեց։ Զինուորը եղեգը ձգեց. և Պետրօնեային նայելով, հեռացաւ և կանգնեց մօտակայ տեղի վերայ։

Պետրօնեան խռժոռուեց. նա նայեց անխիղճ քահանայի վերայ և, ինչպէս իսկական հռովմայեցի, խորին արհամարհանք զգաց դէպի այդ՝ վարմունքով անարժան՝ քահանան։ Նա դարձեալ բարձրացրեց աչքերը՝—լի տխրութեամբ և խղճի խայթով, դէպի Խաչուածի տանջուող կերպարանքը։—Աւելի և աւելի արագաճեպ էր շնչառութիւնը և, հնազանդուելով մի անհասկանալի բնազդմունքի ներշնչման (стимулу--побужденіе инстикта) բռնադատութեան տակ,—բոլոր զինուորները և ամբողջ ժողովուրդը մօտեցան, որքան կարելի էր, և սկսեցին անտխեղծ մարմնի.—որբափայլ հոգու հետ, մահուան մաքառմունքին ուշադիր և ականատես լինել։

Արեգակը ծածկուում էր։ Վերջին ճառագայթները։ հրային շերտերով, դեռ ևս հեռուում արտացոլում էին և, թուում էր բոլոր չարաբաստիկ սև ամպերին դէպի Երուսաղէմ էին հալածում, որտեղ նոքա սպառնալիքով կախուում էին՝ ուղիղ Սողոմոնի տաճարի վերևում։ Նազովրեցու ծանր շնչառութիւնը վերջացաւ։ Մի շքնաղ լոյս ցոլաց բարձրացրած կերպարանքի (Ликъ) վերայից. հոգեվարքի ժամանակ բացուած շրթունքները՝ ամենակատարեալ հանգստութեան մի հրաշալի ժպիտի փայլմունք ստեղծագործեցին,—և ոսկի նման բոցը, որի միջից հանգող փոթոթիկը և արեգակի մայր մտոցն էին արտացոլում, ամբողջ խաչը բռնեց, հրեշտակի թևերի տպաւորութիւն թողնելով։ Այդ հսկայաձև, ճառագայթացոլ ամպի սև ամպի մինչ վերին կատարը բարձրանալով, 'ի մի գիզուեց. այդ ամպի և մեռնող Քրիստոսի մէջ փայլում էր արեգակը, ինչպէս մի զարտնի խորհրդաւոր պատարագի սկիհ, որը ընդելուզուած էր կարծես թէ՝ թանկագին քարերով մի տեսակ օդային մեծակառոյց տաճարի մէջ կախուելով։

Այդ եթերեան ճառագայթացոլութեամբ շրջապատուած, Փրկչի դժգոյն Պատկերը հեզափայլ լուսաւորուեց Իրնով փրկուած աշխարհիս

վերայ,—ամբողջովին խորհրդաւոր շքեղութեամբ ծածկուած, և Նորա ձայնը, թոյլ, յաղթական և մեղեդիական, ինչպէս դրախտային նուագածութիւն, խաղաղութիւնը խզեց.

—Հայր ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ:

Սոյն խօսքերը արտասանուած վայրկեանին՝ Պետրոնեան և այն զինուորը, որը բացախ էր բերել, երկուստեք խղճահարութեան սրնթաց ակնարկներ փոխեցին, և բանիւ ուժով ու անհամբերութեամբ զինուորը վճռողաբար գեղարդը բարձրացրեց, Նազովրեցու կողի մէջ խրելով Նորան*):

Արեան շիթը ցայտեց, խառնուած ջրի հետ, և զինուորը, որին կարեկցութիւնը ստիպել էր փափուկ և հրաշակերտ մարմինը խոցելու, Նորան ապագայ տանջանքներից ազատելու համար,—ցատքեց՝ վախեցած Նորանով,—ինչ գործեց: Մինչ Նորա խոցերը, փշեայ պսակով գլուխը յանկարծակի խոնարհեց, աչերը, որոնք մինչ այդ ժամանակ դէպի երկինք էին դարձրուած, վերջին անգամ Նայեցին աշխարհիս վերայ՝—խաչի վերայից և կանգ առան ամբոխի վերայ այնպիսի խոր ցաւակցութեամբ, այնպիսի անսահման սիրով և վշտաբեկ տխրութեամբ,—որ բոլորն էլ լռեցին, ակամայ վախից և ամօթից թուլուցած: Այլ ես ոչ մի ժամանակ, բոլոր առաջիկայ դարերի երկար ու ձիգ ընթացքների մէջ, աշխարհս ականատես չը պիտի լինի դոյնանման վսեմ սիրուն և այդ երկնային սիրոյ անդրադարձումը, այդպիսի սքանչելակերտ մարմնի մէջ պարունակուած, այլ ես չը պիտի նայէ մարդկութեան վերայ: Այլ ես աշխարհս չը պիտի

*) Прободеніе ребра Спасителя, по сказанію Еванг. Іоанна, совершилось нѣсколько позднѣе, именно—когда воины, по просьбѣ іудеевъ и по распоряженію Пилата, пришли къ распятымъ пребитимъ голени для ускоренія ихъ смерти, чтобы снять ихъ тѣла съ крестовъ до наступленія субботы. Но такъ какъ Христа нашли уже умершимъ, Ему не перебивали голеней, но одинъ изъ воиновъ копьемъ пронзилъ Ему ребро, и только распятымъ съ Нимъ, какъ еще живымъ, пребили голени (Ев. Іоан. 19, 31—34). Ա)

Ա) Թարգմ.՝—Փրկչի կողը խոցելը, Յովհ. Աւետար. պատմուածքով, փոքր ինչ ուշ կատարուեց, այսինքն—երբ զինուորները հրէաների խնդրով և Պիղատոսի կարգադրութեամբ, եկան խաչուածների մօտ «զի խորտակեսցին զբարձս նոցա», խաչուածների մահը շուտ հասցնելու համար, որպէսզի նոցա մարմինները վերցնեն մինչ շաբաթ օրը: Բայց քանի որ Քրիստոսին արդէն մեռած գտան, «ոչ խորտակեցին զբարձս Նորա», բայց զինուորներից մէկը տէգով խոցեց, և միմիայն Նորա հետ խաչուածներին, ինչպէս դեռ կենդանի, «խորտակեցին զբարձս»: Աւետ. Յովհան. 19, 31—34):

ստանայ այնքան մեծագին ներողամտութիւն, թողութիւն, որքան բաժին ընկաւ Նորան այժմս, ու այդպիսի քնքոյշ անդրաշխարհային օրհնութիւն բնաւ տեսնելու չէ: Չքնաղ ժպիտը դեռ ևս դողում էր խամրած շրթունքների վերայ և ամեն մի արեգակային փայլից աւելի գեղաշուք լոյսը՝ գերբնական Աստուածային դէմքի գծերը պայծառափայլեցրեց:—Միակ վերջին, յստակ ակնարկ Անմահ Աստուածութեան՝—հրաժեշտ տուող մահկանացուներին: Ցնծաւէտ քնքշութեամբ և գերբնական, արփիափայլ փառաւորութեամբ, Աստծուն յատուկ երփնաջինջ աչերով, որոնք մարելու մօտ էին, Նա՝ հրեշտակային ընարերգութեամբ՝ կնքեց Իւր վերջին խօսքը.

—Ամենայն ինչ կատարեալ է*):

Լուսափայլ գլուխը ծանրութեամբ ընկաւ կրծքի վերայ, խանջացած անդամները դողային մէկ... դարձեալ մի անդամ... ապա անշարժ մնացին:

Մահը իրենը վերցրեց: Ոչ մի նշան չը երևաց, հաստատելու համար, որ մահը ինքն էր յաղթուած:

Ամեն ինչ վերջացած էր:

Աստուծոյ առաքումն յանձնուած էր և Արարչի ուղարկուածը՝ սպանուած: Արդարադատութիւն գործելով՝ օրէնքը բաւականութիւն էր ստացել... Աստուածութիւնը չէ թէ չէր կարող մեռնել,—իսկ Նա, ով իրեն Որդի Աստուծոյ էր կոչում—մեռաւ: Կը նշանակէ՝

*) Աւետարանիչներից՝ Մատթէոսը և Մարկոսը վկայում են այսպէս. «Յիսուս աղաղակեաց 'ի ձայն մեծ՝ և արձակեաց զոգին». Ղուկասը՝—«Կարդաց Յիսուս 'ի ձայն մեծ, և ասէ. Հայր. ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ: Զայս իբրև ասաց, էհան զոգի», իսկ Յոհաննէսը աւելացնում է. «Ամենայն ինչ կատարեալ է». Փրկչի Աստուածապատգամ խօսքերի ամփոփումն Իւր երկրաւոր կեանքի վերաբերութեամբ, ապա թէ կցում է՝—«և խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին»:—Այս բոլորը անշուշտ 'ի նկատի է ունեցել քանքարաւոր Մարիա Կորելլին, քանի որ նա հէնց դոցա մէջ էլ խարխափելով, այդ ծանր հարցից դուրս է գալիս սպասածին յաջող կերպով,—այն է հետեւում է հենց Յոհաննու աւետարանին, անգամ՝ ակնյայտնի է՝ իւր ձեռքի տակ ունենալով այդ: Բայց նա, միևնոյն ժամանակ, ուշադրութիւնից բաց չէ թողնում և միւս Աւետարանիչներին, ու կցելով Ղուկասու «Հայր. ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ», խօսք է տալիս երեք Աւետարանիչներից յայտնած Փրկչի «զայս իբրև ասաց էհան զոգի» վերջին խօսքերից և կցում է դորան Յոհաննու ճշգրտապատում պատկերը, ապա Փրկչի կողը խոցելու նկարագրութեան մէջ ևս, համերաշխութիւն գտնելով «զի լցցի գիրն...հայեսցին նա՝ յոր խոցեցինն» և «Ամենայն ինչ կատարեալ է»—ծայրագոյն վերջաւորութեան հետ,—Դիլլեմայի (մի տեսակ հաստատութիւն, որ առաջանում է երկու հակադիր դրութիւններից, որոնք միևնոյն եզրակացութեան են հասցնում),—մէջ է ընկնում և հետևեալ խօսքերով է նկարագրում տեգով խոցելու վայրկեանը. «մինչ Նորա (զինուորի՝

բոլորը «կատարուեց»։ Խաչի չորս կողմը շրջապատող թխաւոր ամպը հանդարտութեամբ բարձրացաւ և անյայտացաւ. կարմիր արեգակը, ինչպէս մի հանգած կերոն (факелъ), գիշերային անդունդի մէջ ընկաւ։

XIX.

Դադարման մէջ կարճ ժամանակամիջոց անցաւ։ Մահուան բոպէին յաջորդող յաղթական խաղաղութիւնը՝ մինչև անգամ անխիտ ամբոխին եւս տիրեց։ Ապա մէկը շարժեց, մի ուրիշը խօսեց, և լռութիւնը աղաւաղի տպաւորութիւն թողնող խօսակցութեան փոխուեց։ Մարդիկ շտապեցին այս ու այն կողմ ցրուել, մինչ մութը կոխելը քաղաք վերադառնալու դիտաւորութեամբ։ Մի տեսակ կարեկցութիւն էր արտայայտւում դէպի այն կանայքը՝ որոնք իրենց տեղերը չը թողեցին, բայց և այնպէս,—ոչ ոք չը մօտեցաւ նոցա մխիթարելու համար։

Բարաբբան—անգիտակցաբար—աւելի վաղ հեռացաւ. Նա ոյժ չունէր այլ ևս նայելու Աստուածային Նահատակի հոգեվարքին, և

խոցելը (տեգով) փշեայ պսակով գլուխը յանկարծ խոնարհեց» և «Ամենայն ինչ կատարեալ է» հնչում է համարեա դեռ վաղ կողը խոցելուց, Յովհաննու վկայութեան համապատասխանելով։—Վէպերը պատմական ամենանեղ շրջանակի տակ չեն կարող առնուել, աւելի ևս բազմախորհուրդ «Բարաբբան», և եթէ՝ մինչև անգամ՝ թիւրիմացութիւններ էլ առաջ գան՝—բնական է։ 'Ի դէպ ինչ կլինէր աշխարհահռչակ վիպասան Հ. Սենկևիչի նոյնանման «Յո՞ երթաս» հռչակաւոր վէպի արժէքը, եթէ 'ի նկատի ունենայինք այն, ինչ ներկայիս գիտութեան և պատմութեան մի քանի ներկայացուցիչները պնդում են.—իբր թէ Պետրոս Առաքեալը երբէք Հռոմում չէ եղել։ Ինչպէս օրինակ Պ. Էդուարդ Գելլերի սոյն նիւթի վերայ հրատարակած աշխատութեան առթիւ «Revue politique et litérature (Հանդէս քաղաքական և գրական) ֆրանսիական շաբաթաթերթի մէջ լոյս տեսած տեսութիւնից երևում է՝ որ Պետրոս Առաքեալը երբէք Հռոմ չէ եկել, որպիսին հաստատւում է բազմաթիւ պատմական և գիտական փաստերով. մինչ դեռ «Յո՞ երթաս» Հռոմում գործող գլխաւոր հերոսներից մէկը Պետրոս Առաքեալն է։—Անգամ Րենանի, Ճորատսի, Գարլեյլի նման գիտնականներ այդպիսի խորին հարցերի մէջ մոլորւում են, ուր մնաց վէպի համար ընտրուած պատմական մի քանի փաստերը, որոնք այնուամենայնիւ յաջող են ընտրուած «Բարաբբայում»։

Նկատողութիւն Հայ-թարգմանչի։

այժմ կանգնած էր դեռ ևս մի կողմի վերայ՝ խոնարհ ձգած աչքերով և ամբողջովին դողալով թէ այլայլմունքից, և թէ յոգնաթախիծ տանջանքից։ Երևում էր, որ ամբոխը մոռացել էր նորան. բոլորը անցնում էին նորա մօտից խօսելով և բարձր աղաղակներով, իսկ ոմանք՝ մինչև անգամ ուրախութեան քրքիջներ էին արձակում։ Այդ օրուայ զարհուրելի տպաւորութիւնները արդէն հալածւում էին յիշողութիւնից։

Մութ խաղերը խառնւում էին խաւարապատ երկնքի հետ։ Դահիճները Գանանի մարմինը բարձրացրին, որի մէջ կեանքի կայծը դեռ ևս չէր հանգել։

Աջ և ձախ նայելով՝ Բարաբբան ոչ մի ծանօթ դէմք չը կարողացաւ գտնել. Աննա և Կայիափա քահանայապետները անյայտացել էին, Յուդիթ Իսկարիովտացու յետքը անգամ չը կար, իսկ նորա ընկերակից խորհրդաւոր Մելխիորի անբնական պատկերը, որը այնքան աչքի էր ընկնում,—ոչ մի տեղ չը երևայ։

Միակ մարդը, որին ճանաչեց նա, ցենտուրիոն Պետրոնեան էր, որը դեռ ևս կանգնած էր իւր պահակատեղիում—ուղիղ Նազովրեցու խաչի մօտ և՝ երևում էր՝ խորասուզուած որևէ ներքին անմոռաց մտածմունքի մէջ, յափշտակուած էր մտքով։

Բարաբբան, դէպի նա մօտենալով, նկատեց, որ նորա կոշտ մօրուքը արցունքներով թրջուած էր։

—Արդարև,—շշնջաց նա, իւր զէնքը պատեանի մէջ դնելով,—Աստուծոյ Որդի էր սա։

Բարաբբան այդ խօսքերը լսելով, երկիւղածութեամբ նորա վերայ նայեց։

—Դու այդպէս ես մտածում.—շշնջաց նա։—Այն ժամանակ ինչ կանեն Նորա սպանողներին։

—Ես ինչ գիտեմ,—պատասխանեց Պետրոնեան։—Ես մի յիմար ու անտաշ մարդ եմ։ Բայց՝ գուցէ՝ այնքան էլ կոպիտ չը լինիմ, ինչքան նոքա, որոնք քո կեանքը աւելի գնահատեցին, Բարաբբաս, Նազովրեցու կեանքից։ Ոչ, ինձ վերայ այդպէս ցասկոտ մի նայիր,—այդ քո մեղքը չէ, և դու չես ընտրողը։ Դա մինչև անգամ ժողովրդի ընտրութիւնն էլ չէր,—այլ քահանաների կամքը։ Նզովեալ լինին նոքա—այդ քահանանե՛րը։ Նոքա հէնց սկզբնականն չարով են առաջ տանում և, իրենց սեփհական նպատակներին հասնելու համար, Տիրոջ անունն են վերցնում։ Այդ խաչուած Մարդը երեսպաշտ քահանայութեան ընդդէմ էր,—դորա համար էլ Նա զոհուեց։ Եւ ես ասում եմ քեզ, որ դա ինքն է «Հրէից Թագաւորը», ինչպէս էլ որ կո-

չում էին Նորան, և Նա Աստուածաբան էր, քան թէ բոլոր աս-
տուածնե՛րը: Յիշէք իմ խօսքերը,—մենք դեռ պիտի տեսնենք Նորան
և պիտի դեռ ես լսենք Նորա ձա՛յնը:

Նա շուռ եկաւ բարկացկոտ և անհամբեր, որպէս թէ իւր
այլայլմունքից ամաչելով, ու իւր պարտականութիւններին դարձաւ.
Նա պարտաւոր էր հսկելու՝ մինչ երեք խաչուածներին խաչերի վե-
րայից վերցնէին: Բարաբբան խոր հոգւոց հանեց, և, միշտ մի և նոյն
տեղում կանգնելով, վշտաբեկ և անվճռականութեան մէջ՝ սկսեց իւր
չորս կողմը անցնող տեսարանի հետ գնալ:

Գիշերային ստուերները շուտափոյթ ընկնում էին, և մեռած
Քրիստոսի մարմինը ուրուապէս աչքի էր ընկնում,—խղճալի իւր ան-
օգնական դրութեան մէջ.—բայց՝ այնուամենայնիւ... ինչպէս մի ան-
նման գեղեցկութեան տէր անկենդան մարմին... և ուրիշ ոչի՛նչ:

Հիասթափութեան դառն զգացմունքը տիրեց Բարաբբային:

Նա հասկացաւ, որ այդ ահռելի եղեռնագործութեան ժամա-
նակ, նա, իրեն համար անգիտակցաբար, ընդ միշտ համոզուած էր,
որ այդ Նազովրեցի Մարդը կարող չէ մեռնե՛լ: Նորա մտքի մէջ խոր
արմատ էր ձգել այն երևակայութիւնը, թէ վերջին րոպէում մի տե-
սակ շլացուցիչ հրաշք պիտի խաղացուի ամբողջ խառնիճաղանճի
առջև, բայց թէ ինչպէս,—դորա մասին նա ինքն իրեն հաշիւ տալ
չէր կարողանում. Նորա կարծիքով կամ խաչը պիտի հրաժարուէր
իւր բեռնից, կամ թէ որոտմունքով և երկրաշարժով առաջնորդուած
մի որևէ գերբնական պատուիրակ յանկարծ վայր պիտի իջնէ երկին-
քից ու փառաւորապէս յայտարարէ, որ այդ տանջուող Մարգարէն—
իսկապէս Մեսիան էր: Եթէ որ Նա ստուգապէս Աստուծոյ Որդու
իրաւունք ունենար, Նորա ուժը պիտի երևար դեռ, ինչպէս Պետրո-
նեան ասաց: Ներկայիս վախճանը Բարաբբային անհամապատասխան
էր երևում:—Չ՞ թէ մահը բոլորի համար էլ սովորական վախճան էր
կազմում: Նա պղտոր կերպով խղճում էր Նազովրեցուն Նորա համար,
որ Նա ես ընդհանուրի ճակատագրին արժանացաւ և շատ էր ցա-
ւում Դորա վերաբերութեամբ: Եւ մինչ Նա այդպէս կը մտածէր—
վշտացած և մռայլ, մի փափուկ ձայն հնչեց՝ ուղիղ Նորա ականջի
մօտ.

—Կատարեալ է:

Նա զողաց և, շուռ գալով, իւր բարեկամին,—խորհրդաւոր
Մելխիօրին,—տեսաւ, որի սևագոյն երեսը մահատիպ գունատութիւն
ունէր, չը նայելով, որ մի տեսակ յաղթանակող և քնքոյշ ժպիտ էր
խաղում Նորա շուրթերի վերայ:

Մելխիօրը կրկնեց.

—Կատարեալ է: Դու ես, ինչպէս և բոլոր աշխարհը, այդ գերբ-
նական հաստատութիւնը ստացար: Նորանից յետոյ ոչ մի մարդ մահ-
ուան երկիւղ չը պէտք է կրէ: Գնանք, այստեղ մենք այլևս ոչինչ
չունինք անելու,—մեր ներկայութիւնը սրբապղծութիւն է դառնում:
Մեռած Քրիստոսին, կանանց, արցունքներին և հեկեկանքներին թող-
նենք,—որոնք Նորան աւելի էին սիրում: Մենք—մարդիկս, արդէն
մեր դերը կատարեցինք.—մենք սպանեցինք Նորա՛ն:

Եւ Նա, չը նայելով Բարաբբայի ընդդիմութեան, տարաւ նորան
իւր հետ:

—Ասում եմ քեզ,—ասաց Մելխիօրը,—որ դու կը տեսնես այդ
«բոլոր ժամանակների հրաշքը» մի այնպիսի ժամի մէջ, որի մասին
չես էլ ցնորում դու: Իսկ այժմ հետևիր ինձ և այլ ես մի ուշացիր,
որպէսզի կատարած լինիս քո ճակատագրի պահանջը:

—Իմ ճակատագրի՛,—կրկնեց Բարաբբան:—Անծանօթ, դու ինձ
վերայ ծիծաղում ես: Եթէ քո մէջ մի գաղտնի ուժ կայ, կարդա՛ իմ
հոգին և հասկացիր նորա խեղճութիւնը: Ես բաղդ չունիմ, ոչ էլ
ճակատագրի սփոփեցուցիչ ուղիղ վախճան,—բացի լիակատար յու-
սահատութիւնի՛ց:

—Յուսահատութիւնը—փուչ յանցանք է,—հակաճառեց նորա
ճանապարհորդակիցը հանդարտութեամբ:—Այն, ինչ մի կին դրժել է
իւր սէրը դէպի քեզ և ուրիշին քեզ հետ փոխել, որից դու քո հո-
գուդ հետ հաշտուել չը կարողանալով,—անոյժ ես կոչում նորան,—
դեռ զօրաւոր պատճառ չէ յուսահատութեանդ վերաբերութեամբ:
Ի՞նչ: Դու քո Յուդիթին կարողացար խաւարի մէջ բռնել, թէ ո՞չ:

Բարաբբայի սևագոյն աչքերը բարկութեամբ փայլեցին, և Նա
վշտախոհ պատասխանեց.

—Այո.—ես գտայ նորան և—կորուսի՛:

—Ոչ մի ժամանակ կորուստը այդքան օգտակար չէր կարող
լինել,—ասաց Մելխիօրը,—ես նորան տեսայ, երբ լոյսը սկսեց թա-
փանցել որոտմունքապատ ամպերի միջից. այդ ժամանակ նա շտա-
պով իջնում էր լեռան ստորոտից, դէպի քաղաք բռնելով իւր ուղին:

—Կը նշանակէ, ոչ մի վտանգ չէ՞ պատահել նորան.—բացա-
կանչեց Բարաբբան, չը կարողանալով իւր ուրախութիւնը ծածկե-
լու՝ այդ լուրի վերաբերութեամբ:

—Իրաւացի նա անփորձ է, կամ կարող է անփորձական հա-
մարուիլ, — պատասխանեց Մելխիօրը. — Նա աննման և սուրբ

պաշտպանութեամբ է օգտւո՛ւմ։—Քահանայապետ Կայիափան նորա հետ էր։

Բարաբբան հայհոյանքներ թափելով, բռնցունքը սեղմեց։

Մելխիօրը ուշադիր նորա վերայ նայեց.

—Ինձ այնպէս է թւում, որ դու դեռ ես Ցուդիթի ցանցի մէջ ես գտնւում,—ասաց նա։—Դու վայրենաբարոյ և անկիրթ մէկն ես,—և դեռ անզգամ ես գազանային ցանկութիւններդ ու մոլեգնոտ տռփանքդ սանձահարելու։ Բայց—այնու ամենայնիւ—ես դեռ ես համբերատար պիտի լինիմ՝ քո վերաբերութեամբ։

—Դու ինձ հետ համբերութեամբ կը վարուիս,—մռմռաց Բարաբբան՝ անզուսպ կատաղութեան մէջ։—Բայց ո՞վ ես դու։ Կամ թէ՝ դու ինձ հետ ի՞նչ գործ ունիս, թէ այժմս և թէ ապագայում։

—Ի՞նչ գործ ունիմ ես քեզ հետ.—կրկնեց Մելխիօրը։—Եւ ոչ մի գործ, այո՛։ Միթէ այն միայն, որ մարդկանց ուսումնասիրելու համար ժամավաճառ լինելով,—քեզ ես ընտրեցի քննադատելու։ Դու քո ցեղի էմբլեման (նշանաբան) ես, Բարաբբա, ինչպէս և վաղուց ասել եմ ես քեզ. դու նոյն տեսակ նշանաբան ես Իսրայէլի ազգութեան համար, ինչպէս և այն Նազովրեցին—նորահրաշ հաւատքի ու լուսաւորութեան սիմվո՛լը (նշանաբան)։ Միթէ ես քեզ չը ասացի, որ դու այժմ, այլ ոչ թէ նա, «հրէաների թագաւոր» պիտի լինիս...

—Ես քեզ չեմ հասկանում,—ասաց Բարաբբան՝ վշտաձայն։—Դու միշտ հանելուկներով և առակներով ես խօսո՛ւմ։

—Այդ արևելքի սովորութիւնն է,—պատասխանեց Մելխիօրը՝ հանդարտ։—Մի ուրիշ անգամ ես քեզ այդ առակը կը բացատրեմ, իսկ այժմ գիշերը մօտ է և, ի պարմանս աշխարհի, դեռ ես շատ բան պէտք է կատարուէ։ Բայց սպասի՛ր։ Ո՞վ կայ այստեղ։

Բարաբբայի թևքից բռնելով, նա յանկարծ կանգ առաւ։ Նոքա մի պարկած մարդու կպչեցին, որը իւր ամբողջ երկարութեամբ ձգուած էր գետնի վերայ, երեսը դէպի ներքև կեանքի որևէ նշան չէր ցոյց տալիս, բացի սեղմուած ձեռքերի ջղաձգական շարժումներից։ Մելխիօրը կռացաւ նորան բարձրացնելու, որի անդամները, ոսկրուտ կազմուածքի հետ, չէին ծալւում,—կարծես թէ նա մեխուած լինէր գետնի վերայ։

—Նա կախուածահարի կամ ընկնաւորի մէկն է,—ասաց Բարաբբան։ Մինչև անգամ՝ կարող է պատահել՝ որ նա յանկարծակի երկրաշարժից ընկած լինէ։

Նոքա կրկին և կրկին ույժով իրենց ճիգը նորոգեցին, նորան բարձրացնելու վերաբերութեամբ, բայց յանկարծ այդ տարածուած

մարդը իւր մեռելատիպ դէմքը դէպի նոցա դարձրեց, կարծես թէ իրեն համար քամմնեցուցիչ մի ուրուական տեսած լինէր։ Իւր անհանգիստ մասների օգնութեամբ գետնից հողի և խոտի կտորտանքներ պոկոտելով, նա նոցա վերայ մի տեսակ կատաղի և անսովոր ակնարկ ձգեց, որից նոքա ակամայ սարսուռ զգացին։

—Ի՞նչ ունիք ինձ հետ,—հարցրեց նա խռպոտ ձայնով։—Ի՞նչ տեսակ տանջանքների տակ մահ էք մտածում։ Լաւ կը լինէր, որ տարածէիք ինձ չեկացած երկաթի ցանցի վերայ, պոկոտէիք ոսկորներս մէկը միւսից յետոյ, յօշոտելով մարմինս և դուրս կորզելով նոցա միջից մկանունքներս. թո՛ղ իմ թունաւոր և խաբուսիկ արիւնը երակներիս միջից կաթկաթ ծորելով, ողողէ ամեն ինչ։ Այս բոլորը ի կատար ածեցէք դուք և գործանով դեռ ես չէք կարող պատժել ինձ ըստ չափու գործածս յանցանա՛ց։ Ո՛չ գոյ ինձ արժանի լլկա՛նք։ Արժանաւոր և խիստ ու բաւարար տանջանք դուք չը պիտի կարողանաք ճարել այնպիսի մէկի համար,—որպիսին ես ե՛մ։

Եւ զարհուրելի աղաղակով նա յանկարծ ոտքի կանգնեց։

—Վախկոտ, վախկոտ, վախկո՛տ.—հեծկլտաց նա, կատաղութեամբ կատրտելով ձեռքերը։—Վախկո՛տ։ Խարակեցէք այս խօսքը երկնքի վերա՛յ։ Ահա՛ միակ կոչումը, որը մնացել է ինձ—վախկո՛տ։ Ուրացող, խաբեբայ և վախկո՛տ։ Փորեցէք այդ խօսքը վիմաքարի վերայ, աղաղակեցէք փողոցներում, ընդհանուր աշխարհին պատմեցէք իմ մասին,—շուառիս, անիծեալ մարդուս, Քրիստոսի աշակերտիս,—անհաւատ ծառային, որը իւր Տիրոջը ուրացա՛ւ։

Եւ նոր՝ աւելի զարհուրելի՝ ողբ ու կոծով, նա գետնի վերայ ընկաւ և, երեսը ձեռքերով ծածկելով, բարձր ձայնով սկսեց հեկեկալ այն անզսպելի վշտի ազդեցութեան տակ, որպիսին թողնում է անխիթար մտատանջութիւնը նոյն իսկ ամենաուժեղ մարդու վերայ։

Մելխիօրը և Բարաբբան լուռ կանգնած էին նորա առջև։

Վերջապէս Մելխիօրը խօսեց։

—Եթէ դու Պետրոսն ես...—սկսեց նա։

—Ո՛ւր է թէ ես նա չը լինէի,—աղաղակեց անբաղդը։—Երանի կը լինէր, որ ես կարողանայի լինել ամեն բան,—ինչ ցանկալի չէ. շուն, քար, գետնի կաւը,—միմիայն ոչ այն, ինչ եմ իսկապէ՛ս։ Ասացէք, ինչ արժէք կարող է ունենալ այն մարդը, որը կարևոր ժամանակ ձգում է իւր ընկերոջը։ Եւ ո՞րպիսի ընկերակցի. «Թագաւորին, Աստծո՛ւն»։

Արցունքները խեղդում էին նորան, նա կանգ առաւ, ապա, գը-

լուխը դանդաղութեամբ բարձրացնելով, խղճալի կերպով խօսողների վերայ նայեց, հէգ մարդուն յատուկ կարեկցութիւն զարթեցնելով։

—Դուք անծանօթ էք ինձ.—ասաց նա։—Ինչո՞ւ էք այստեղ կանգնել և իմ դրութեանս վերայ խղճում։ Դուք ոչինչ չը գիտէք «Նազարէթից եկած Մարդու» հետ պատահած անցքերի մասի՞ն։

—Մենք բոլորը գիտենք,—պատասխանեց Մելխիորը քնքոյշ և մեղմ ձայնով։—Նազովրեցուն մի՛ ողբալ, քանզի Նորա տանջանքները վերջացած են,—Նա մեռա՜ւ։

—Դուք ստոյգը չը գիտէ՛ք.—գոչաց Պետրոսը՝ յուսահատութեան մէջ։—Թէ Նա մեռել է—ակնյայտնի է, քանի որ, առանց Նորան, աշխարհը խաւար է, ինչպէս դժո՜խքը։ Այո՛։ Նա մեռաւ, բայց դուք չը պիտի գիտենաք, թէ ինչպէս մահը Նորան հասաւ։—Ես նայում էի Նորա վերայ, մինչ մեռնում էր Նա. ես կանգնած էի հեռուում, ամբողջ ժամանակ հեռու տարածութեան վերայ, վախենալով Նորան մօտենալու և ներումն խնդրելու,—Նորա բարութիւնից և իմ մեղքերից քաշուելով։ Երէկ՝ գիշերը Նա ինձ վերայ նայեց—ընդթափ և չէշտակի,—երբ ես ուրացայ և հրաժարուեցի Նորանից։—Երիցս ստութեամբ երդուեցի ես, թէ Նորան չեմ ճանաչում. քանիցս կրկնեցի—ո՛չ գիտեմ զնա, իսկ Նա... Նա ո՛չ մի խօսք չը ասաց, միմիայն՝ ինձ վերայ նայելով՝ անոյշ ժպիտով պատասխանեց դրժածս ուխտին. — ո՜ւֆ, անյուսութի՜ւն։ Ինչու, ինչո՞ւ, — հեծեծում էր եղկելի մարդը և նորից հեկեկում,—երբ ես ուրացայ Նորան, Նա չը սպանեց ինձ։—Ինչո՞ւ՝ Նորա հրամանին հլու՝ գետինը չը պատառուեց ինձ կլանելու համար։ Ո՞չ, վրէժը ինձ բաժին չը ընկաւ։—Մի միա՜յն մի ակնարկ—քնքոյշ և սիրայեղց։ Բա՜րէ...—Ո՞հ, Աստուած... Աստուած։ Ես դեռ այժմս էլ զգում եմ Աստուածային աչերի այդ ակնարկը—հոգւոյս թաքուցեալ գաղտնիքները կարդացո՞ղ։ Նորանոր արցունքների տարափի տակ ընդ միշտ պիտ' յիշեմ այդ ակնարկը, բայց ուշ է արդէն—մեղքը գործուած է։

Արցունքների տեղատուութեան տակ՝ Նա ծածկեց իւր երեսը։ Նորա վիշտը այնքան խորն էր և անկեղծ, որ ամենասառնասիրտ վկան անգամ պիտի խղճար Նորան։

Բարաբբան, որ նախ արհամարհում էր նորան,—երբ նա խոստովանուեց իւր խաբեբայութեան և վախկոտութեան մէջ,—այժմ փոքր ինչ մեղմացաւ. իսկ Մելխիորի վարմունքը մի տեսակ փաղաքշանքով և քնքուշ էր այն ժամանակ.—երբ նա քաղցրալուր խօսքերով վշտացեալ աշակերտին համոզում էր ոտքի կանգնելով, յենակէտ ընտրել իրեն դէպի աշակերտը լարած ձեռքը։

— Ինչ եղել է—անցել է արդէն,—ասաց Մելխիորը՝ փափկութեամբ։—Դու, հէք Պետրոս, այլ ես անկարող ես ոչնչացնել այն—ինչ գործել ես. քո սուտը յայտնի պիտի լինէ, անընդհատ ժամանակամիջոցում, բոլոր աշխարհին, սոսկ ճշմարտութիւնը ցոյց տալու համար—այն սարսափելի իրականութիւնը, թէ՝ բաւական է մի չնչին գործողութիւն, մի սովորական խօսք, բառ, որ փոխել կարողանայ մարդուս ճակատագիրը։ Աւա՜ղ, անբաղդ Պետրոս, մի՛թէ քեզ համար վիշտ չը պիտի սեպուի, որ դու ես նշանաբանի տեղ պիտի ծառայես, յէ։—Սիմվօլ (նշանաբան) սխալականութեան, որովհետև միմիայն քո անճշդութեան վերայ մարդիկ ստի ամբողջ շինութիւններ պիտի կառուցանեն, որի մէջ Մեծ Վարդապետը, որին ուրացար դու,—չը պիտի մասնակցէ։ Ես գիտեմ, որ քո զղջանքը այնքան է մեծ—որքան և գործածդ յանցանքը,—բայց զղջումն անգամ չէ կարող օրէնքին փոխե՜լ։ Աշխարհիս վերայ կատարուած իւրաքանչիւր լաւ կամ վատ գործողութեան համար—արժանի հատուցումն է լինում։ Այնուամենայնիւ դու քո ընկերակից Յուդայից քիչ ես մեղաւոր։

— Այդ մի՛ ասիլ, քանի որ Նա կարողացաւ մեռնել.—գոռաց Պետրոսը, իւր գունատ, տանջանաւոր դէմքը դէպի երկինք դարձնելով։—Յուդան կարողացաւ մեռնել, իսկ ե՞ս,—ես վախկոտ ե՛մ։ Ես—երկչոտս՝—դեռ ես ինձ թոյլ եմ տալիս ապրելո՜ւ։

Բարաբբան դողաց։

— Մեռնե՞լ,—բացականչեց նա։—Դու ի՞նչ ես ասում։ Յուդա՞ն։ Յուդա Իսկարիովտացի՞ն։ Չէ՞ թէ նա մեռած չէ՞։

Պետրոսը կատաղի յուսահատութեան մէջ՝ ձեռքերը տարածեց։ Մեռած չէ, մեռած չէ՞.—կրկնեց նա կծողական ձևով։—Եթէ ինձ չէք հաւատում, կարող էք նայել։ Գնա՜նք։ Գէթսեմանի *) մօտ դուք կը գտնէք նորան. Գեթսէմանի պարտէզի այս կողմի վերայ, մի քարայրի մէջ—մութ՝ ինչպէս գերեզման, ձիթենիների ամենախիտ ըստուերի տակ։ Հէնց ուղիղ այն տեղի մօտ, որտեղ Նա իւր Վարդապետին մատնեց. այնտեղ դուք կը տեսնէք նորան—և նորա վշտալի, կերկերուող ձայնը մեղմացաւ ու դողդոջ շշունջի փոխուեց։—Նորա մարմինը մի մերկ ճղնից կախուած լինելով, կարծես թէ դժոխքից բերուած լինէ և յատուկ Սադայէլի ձեռքով ստեղծուած։ Օդը ամբողջովին զարշահոտել է նորա մարմնի՛ց... Սարսափելի է... Սարսափելի... Դուք չը գիտէք, թէ նա ինչ բանի նմանութիւն ունէ... մե-

*) Գէթսեմանի—հնձան ձիթոյ, կամ ձոր՝ կամ հնձան պարարտութեանց։ (Բառգիրք Հ. Լ.)։

ուած… անտերև ոստի տակ կախ ընկա՛ծ։ Նա երէկ երեկոյեան ինքնասպանութիւն գործեց—ցերեկուայ լոյսից վախենալով. տա՛ր Աստուած, որ ես ևս նոյնը գործած լինէի, քանի որ այժմ՝ ես ևս, ինչպէս և նա պղծած, անկենդան գտնուելով, ազատուած պիտի լինէի զարհուրելի յիշողութիւնից։

Այդ նոր, անսպասելի սարսափից զարհուրած և իրեն կորցրած, Բարաբբան այնպէս կարծեց, որպէս թէ գետինը իր տակից կորչում է։ Նա տատանուեց և կը ընկնէր անշուշտ, եթէ որ Մելխիօրը բռնած չը լինէր նորան։

— Յուդի՛թ.—հեծկլտաց նա խուպտ ձայնով։—Յուդիթ—նորա եղբայրը մեռել է, ձեռք դնելով իր վերա՛յ։ Ինչպէ՞ս պիտի տանէ նա այդ։ Ո՜հ, Աստուած, Արարիչդ իմ,—այդ բօթը Յուդիթին ո՞վ կարող պիտի լինէ յայտնելու։

Պետրոսը այդ անկապ խօսքերը լսելով, կատաղի, անբնական ձայնով ճչաց.

— Ո՞վ կարող պիտի լինէ յայտնելու.—աղաղակեց նա։—Ես՝— ես կարող պիտի լինեմ ասելու, ես կարող եմ այդ կանացի պատեանի մէջ բռնուած սատանային բռնել.—այդ խնդացող, դմայլեցուցիչ, որսացող և նզովեալ սադայէլին, որը մեզ՝ բոլորիս՝ դէպի մատնութիւնը մղեց։ Յուդի՛թ, ասում ես դու։ Ինձ նորա մօտ առաջնորդի՛ր, երես առ երես կանգնեցրի մեզ՝ մէկզմէկու հանդէպ,—և ես կը հռչակեմ ճշմարտութիւնը։ Ես երկինքը կարող պիտի լինեմ պատռելու իմ մեղադրանքի ոյժո՛վ։

Նա սպառնաց սեղմուած ձեռքերով, և նորա վշտաբեկ դէմքը բարկութեան մի այնպիսի մեծափառ արտայայտութիւն ընդունեց, որ այդ համարեա թէ գերմարդկային էր երևում։

— Ո՞վ կասէ նորան.—կրկնեց նա։—Ոչ միայն ես,—նոյն իսկ ինքնասպան Յուդան կասէ նորա՛ն. նորա պղծած, ապակեայ*) աչքերը պիտի նզովք կարդան Յուդիթին. նորա անկենդան մարմինը իր մոլի,

*) Հին պատմութեան քաջ ուսումնասիրութեան արդիւնք, ոչ թէ թիւրիմացութեան արգասիք պիտի սեպել՝ ապակւոյ գործածութիւնը Քրիստոսի ժամանակ. քանի որ ապակւոյ գիւտի մասին զանազան ենթադրութիւններ կան,—ոմանք այդ գիւտը վերագրում են Փիւնիկեցիներին և ոչ այնքան վաղ ժամանակուայ ծնունդ, մինչդեռ այդ գիւտը աւելի հին է և Եգիպտացիներին է պատկանում, որոնց հնադարեան (նախ քան Ք. Ծ.) գերեզմանների մէջ գտնուած են ապակեայ անօթներ և բաժակներ։ (Древняя исторiя Беккера ч. 1—1890 г.) Անգամ Աւետարանի մէջ սոյն վկայութիւնը կայ՝—«...եկն կին մի, որ ունէր շիշ իւղոյ նարդեան ազնուի մեծագնոյ. և բեկեալ զշիշն եհեղ 'ի վերայ գլխոյ նորա (Քրիստոսի)»։ (Մարկ. ԺԴ,

անարգ քրոջ վերայ կը ընկնէ ահագին ծանրութեամբ, մինչ կեանքի վերջը. նորա խամրած շրթունքները անսահման վրէժի լուռ սպառնալիքներ կը կարդա՛ն։ Թո՛ղ նա նզովեալ լինէ դարէ դա՛ր։ Անէծք Յուդիթին 'ի տրիտուր իւր չար գործքերի. ընդմիշտ նզովք այդ հրէշաբարոյ կնո՛ջը։—Նա շատ լաւ գիտէր, թէ ինչպէս մենք, մարդիկս, թոյլ ենք, ինչքան կոյր, որքան անհասկացող,—երբ բանը կնոջ գեղեցկութեանն է վերաբերում։ Նա այն քնքշութեամբ օգտուեց, որը տածում էր դէպի նա իր եղբայրը, և՝ մինչ անգամ՝ իւր դիւթիչ լեզուով—ինձ ևս գրաւե՛ց։ Միթէ դորանով ես պիտի ներողամիտ գտնուեմ դէպի իմ չարագործութիւնը։—Ո՛չ, որովհետև իմ մեղքը նորա միջոցով չէ՛ր ներշնչուած։ Աշխարհիս բոլոր յանցաւորներից՝ ես վատթարագոյնն եմ, բայց կրկնում եմ՝—Յուդիթը այր-մարդկանց թուլութիւնը գիտէր, և գիտենալով այդ—անխիղճ է՛ր։ Նա՝ մինչև անգամ՝ իւր եղբօրը ինքնասպանութեան հասցրեց,—համոզելով նորան իւր Վարդապետին մատնելո՛ւ։ Այո՛, իսկութիւնը այդ է՛ր։ Ես այդ Յուդիթի երեսին կասե՛մ։ Ոչ ոք չը պիտի կարողանայ արգելք լինելու, և ես, նորա հետ խօսելիս, ամեն մի խօսքս պիտի ցցեմ նորա օձապատիր, խորամանկ և խաբեբայ սրտի մէջ, ընդմիշտ կեղեքեմ պիտի հէնց այդ պատիր սիրոյ աղբիւրը և անվերջանալի մորմոքներ հասցնե՛մ։

Նորա դէմքը՝ որպէս թէ՝ մի տեսակ ներշնչումն ստացաւ. մի տեսակ խիստ և սպառնալից բոց էր խաղում նորա վառվռուն աչքերի մէջ, որոնք միևնոյն ժամանակ—և վշտալի էին, որոնց ազդեցութեան տակ՝ Բարաբբան, բուռն աղերսանքի ձևով, կոչեց.

— Պետրոս, յետ վերցրի նզո՛վքդ։ Յուդիթը չէ թէ կին է՝ սոսկ,—և ես նորան սիրում էի՛։

Պետրոսը՝ համարեայ խելագար ժպիտով՝ նորա վերայ նայեց։

— Սիրո՞ւմ էիր նորան։ Այս մահուան օրերում ո՞վ է սիրոյ մասին խօսում։ Ասում եմ ձեզ, որ այլես սէր չը կայ ընդհանուր աշխարհում. նա խաչուած է։ Դու սիրում էիր Յուդիթին։ Ուրեմն գընանք և նորա գործի վերայ նայենք,—գնա՛նք։ Այդ քո սիրոյդ ամուր հաստատութիւնը կը կազմէ։ Գնա՛նք։

Պետրոսը խորհրդաւոր կերպով նոյա գլխով արեց՝ ու սկսեց դէպի առաջ վազել։

Մելխիօրը կանգնեցրեց նորան։

— Ո՞ւր ես շտապում, Պետրոս.—քնքոյշ ձայնով հարցրեց նա։—

3.)։ Ուրեմն Պետրոսին յայտնի էր ապակին, ապա թէ ոչ, նա չը պիտի կարողանար Յուդայի աչքերին ապակւոյ փայլ տալ, նորա գոյութիւնից անտեղեակ լինելով։

Ծան. Հայ թարգմանչի

Մեծ վշտի տակ՝ դու կորցրել ես քե՛զ։ Դէպի ու՞ր ես առաջնորդում մեզ։

— Դէպի Գեթսէմանէ.—փայլատակող ակնարկով՝ պատասխանեց Պետրոսը։ Գէթսէմանի մէջ,—բայց ոչ թէ ուղիղ դէպի այգին։— Ո՛չ։ Ո՛չ.—որովհետև հէնց այնտեղ, դեռ երէկ երեկոյեան, Աստուծոյ Ընտրեալը, Երկնային Առաքեալն էր աղօթում. և աղօթում էր միայնակ. իսկ մենք, մենք՝—Նորա աշակերտներս, միթէ նոյնպէս աղօթում էինք։—Ոչ, մենք քնած էի՛նք.—և նա վայրենաբարոյ ու խելակորոյսի յատուկ քրքիջ արձակեց։—Մենք, մարդ գոլով, աւելի լաւ ոչ մի բան չը գտանք, քան թէ քնե՛լը։ Բացի քնելուց, ոչինչ չը արեցինք մե՛նք։ Անզգայ, ինչպէս այն հողի կոյտերը, որոնց վերայ պարկած էինք, մենք անտարբերութեամբ անձնատուր եղանք քնի, ու մրափած էինք, մինչև անգամ ուշադրութիւն չը դարձնելով Մեծ Ուսուցչի ներկայութեանը։ Նորա ձայնին մենք խուլ էի՛նք։ Ո՞չ կարացիք ժամ մի արթուն կալ,—քաղցրութեամբ և համբերութեամբ Նա ասաց մեզ։ Ո՛չ, մի ժամ՝ անգամ՝ մենք անկարող եղանք մնալու մեզ, անգամ Նորա վշտի ժամանակ, մինչև անգամ այդքան սուղ ժամանակամիջոցի մէ՛ջ։ Մենք քնել էինք կամենում—և քնեցի՛նք։ Մենք Նորա համար մի ժամ հանգստութիւնը չը զոհեցի՛նք։ Իսկ չէ թէ պարզ էր՝ որ երկինքը անգամ արթուն դիտում էր և մինչ տերևները և բոյսերը անսօսափիւն Նորան էին հետևում, Նորա վերայ հսկելով։ Բայց միմիայն մենք,—Նորա ընկերները և աշակերտները,— քնած էինք. այո՛, միմիայն մենք էինք քնա՛ծ։ Որքա՜ն սրտոտ այլականութիւն մեր կողմից։ Որպիսի անձնդիւրութի՞ւն։ Ահա՛ ձեզ երկրային սիրոյ ապացո՛յցը։ Չէ թէ մենք երդուեցինք, որ սիրում ենք Նորան, բայց այնուամենայնիւ միայնակ ձգեցի՛նք։ Երբ պահապանների գունդը մեզ պատահեց, մենք բոլորս էլ, թողնելով Նորան, ցրուեցինք. միմիայն ես գնացի Նորա յետևից և այն էլ հեռու պահելով ի՛նձ։ Ահա թէ ինչի՛ն են մարդիկ անձնազոհութիւն կոչում և ինչպէս են Նոքա անձնատուր լինո՛ւմ։ Իսկ մենք չէ թէ մեր Վարդապետին մեր անձն ուրանալ ուխտեցի՞նք։

Նա կանգ առաւ՝ ամբողջովին դողալով, ապա—անհամբերութեամբ—նորից խօսել սկսեց.

— Գնանք, գնանք, միմիայն ոչ թէ ուղղակի պարտէզը, այնտեղ՝ անշուշտ՝ հրեշտակները պահապան են կանգնած, այլ դրսեր,— այնտեղ, որտեղ Յուդան է սպասո՛ւմ։ Նա համբերութեամբ կը սպասէ, մինչ Նորան կը տանէին։ Արդեօք չէ՞ք կամենում տուն տանել Նորան։ Դէպի տուն առաջնորդեցէք Նորան,—տարէք իւր հօր մօտ,

Դրեցէք Նորան ուղղակի իւր քրոջ ոտքերի մօտ,—բայց, անշարժ աչքերով, որոնք նայում են վշտակտուռ յաւիտենական տանջանքի՛ն։ Նորան՝ տուն տանելով, դրեցէք այն ճիւաղի մօտ, որը Նորան այնքա՛ն անխղճաբար դէպի կորուստ դրդեց։ Թո՛ղ նա այնքան լաց լինէ, այնքան ողբ կարդայ,—մինչ Նորա գեղեցկութեան ամենաչնչին հետքը կորչէ։ Բայց ինչ տեսակ էլ լաց լինէ նա, նա՛՝ այնուամենայնիւ՝ չը պիտի ազատուէ յաւիտենական չարից, որի չարապատահ ծնունդը, հէնց ինքն՝ Յուդի՛թն է։

— Հոգի չունես դո՛ւ.—յուսահատութեամբ կոչեց Բարաբբան։— Ի՞նչ հաստատութիւն ունես դու, որ այդ բոլորի մէջ ճիշտ որ Յուդիթն է մեղաւոր։ Ի՞նչ պատճառ ունես դու, որ չարաչար նզովք ես կարդում Նորա գլխին։ Դու զառանցում ե՛ս։ Քո խօսքերը կոպիտ և անխելք ե՛ն։ Ինչպէս փոքրոգի մի վախկոտ, դու քո Ուսուցչին ուրացար և այժմ, նեղսրտութեամբ դու մի կնոջ վերայ արատ ես ձգում,—մեղսակից կոչելով Նորան անազորոյն անցքերի մէ՛ջ։ Դու ի՞նչ իրաւունք ունես դատելու Նորան, մինչդեռ ինքդ, սեփհական խօսքովդ, այնքա՛ն դժնեայ յանցանքի տէր ես։

Պետրոսը յուսահատութեամբ Նորա վերայ նայեց։

— Յանցաւոր մէկն եմ ես—յիրաւի. այդպէս ասացիր, յէ՞։ Վախկոտ ես ինքս կոչեցի ինձ։ Բայց դու—ինքդ—ո՞վ ես։ Սխալանք չեմ համարիլ, եթէ ասած լինեմ, որ դու կալանաւոր ես, որին ազատել է ժողովուրդը և որին Բարաբբա է կոչում։ Միթէ դու գողերի և մարդասպանների մէկն չես ու նոյնպէս երկչոտի մէկը։ Ես քեզ չեմ նախատում քո յանցանքների մէջ, որովհետև գիտեմ թէ ո՛վ վառեց քո մէջ այդ կրակը, ո՛վ քննեց և գտաւ քո և իմ վատթարագոյն կողմերը և ո՛վ Յուդայից մատնիչ պատրաստեց. հանգստացի՛ր այժմ։ Բոլորը, բոլորը շատ ճարպիկութեամբ ու խելամտութեամբ էր պատրաստուած և այնպէս, որ մի շատ գեղեցիկ և իրաւացի գործ էր երևում։ Կամենո՞ւմ էք, որ ճշմարտութիւնը երևա ելնէ, եկէք իմ յետևից, և ես կասեմ ձեզ բոլորը, բոլորը. գուցէ Աստուծոյ ողորմութեամբ ես երկար չը ապրեցի, ուստի ես բուռն ցանկութիւն եմ ըզգում արդար ճշմարտութիւնը յայտնած լինել, ապա թէ մեռնե՛լ։

Նա հանդարտեց. այժմ նորա խօսքերը աւելի կապուած էին իրար հետ. Մելխիօրը Բարաբբային նայեց, և երկուսն էլ լուռ ու մունջ նորա յետևը ընկան։

Ճանապարհին նոցա մօտից մի բարձրահասակ, պատկառելի դէմքով մի մարդ անցաւ, որը, ըստ երևոյթին, չափից դուրս շտապում էր։ Պետրոսը յանկարծ կանգ առաւ և նորա յետևից նայեց։

— Այդ հալածեալ անցնողը Յօսէփ Արիմաթեացին էր,—շշնջաց նա, խաւարի մէջ աւելի լաւ տեսնելու համար, աչքերը կծկելով: Այր բարեգործ և արդար: Աշակերտ Յիսուսի 'ի ծածուկ: Այսքան ուշ ժամանակ նա ո՞ւր պիտի ճանապարհ ընկնէ:

Նա խորին մտածմունքի մէջ ընկաւ: Մելխիորը՝ նորա ուշադրութիւնը գրաւելու համար՝—թևից բռնելով, դէպի իր կողմը քաշեց: Նա, կարծես թէ երազից յետոյ զարթնելով,—հանդարտ ժպիտով դէպի նոյա եկաւ:

Հէնց նոյն րոպէին լուսինը դուրս եկաւ և, ամպերի միջից ուղիղ Գողգոթայի վերայ լողալով, իւր փայլուն արծաթագոյն լոյսը ձգեց ուղիղ երեք խաչերի վերայ, որոնք դեռ լեռան գագաթին էին կանգնած:

Այդ խաչերի վերայ այլ ևս ոչ ոք կախուած չէր երևում:

Գունատ, մաշուած դէմքով և արտասուաթաց աչքերով՝ Պետրոսը դէպի վեր նայեց և հասկացաւ, որ իւր Տիրոջ մարմինը խաչի վերայից բարձուած էր: Երեսը իւր վերարկուի տակ առնելով, նա շուռ եկաւ և հանդստութեամբ առաջ խաղաց: Նորա յետևից գնացող ճանապարհորդակիցները խուլ և անմխիթար հեկեկանքի աղիողորմ հեծեծանքներ լսեցին:

XX.

Սարից վայր իջնելով, նոքա կանգ առան:

Դէպի ձախ, մի քանի բարձր արմաւենիների և նոցա լայնատերև խիտառխիտ ոստերի ստուերի տակ սառնասոյր ջրի մի ջրհոր էր գտնուում, իսկ նորա մօտ քարեայ նստարան էր դրուած:

Անթիւ աստղերը արդէն փայլում էին կապուտակ և ջինջ երկինքի վերայ, իսկ փառահեղ և փայլուն լուսինը, դեռ նոր բարձրանալով, փայլում էր, գերթ օրուայ լոյս,—բովանդակ բնութեանը լոյսի շեղջեր բաժանելով:

Պետրոսը, իւր մեռելատիպ գունատ երեսը բանալով, դէպի ջրհորը նայեց:

— Այստեղ,—ասաց նա՝ դողդոջ ձայնով,—երեք օր սորանից առաջ մեր Վարդապետն էր նստած: Նա զանազան հրաշքների վերաբերութեամբ խօսք բացանելով, խօսում էր աշխարհիս վերջաւորութեան և ապագայ փառքի վերայ, չափելով բոլորիս մի տեսակ գերաշխարհային, արփենի նայուածքով: Աստուածազան Վարդապետը, հէնց այստեղ, գերափայլ ակնարկ ձգելով մեզ վերայ, ասաց. «Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի՛ անցցեն»: Այո՛, այստեղ, ուղիղ այս նստարանի վերայ, և երեք օր առաջ, կրկնում եմ ես:

Նա խորունկ հառաչեց և թուլութեամբ նստարանին մօտենալով, ամբողջովին դողաց և նորա վերայ ընկաւ:

— Փոքր ինչ դադար առեցէք, պարոններ,—շշնջաց նա՝ հազիւ լսելի ձայնով.—մշուշապատ աչքերս չեն հնազանդուում ինձ, և ես հանգստանալու կարիք եմ զգում. նախ քան հեռու գնալս, թո՛յլ տուէք փոքր ինչ հանգստանալու:

Նորա ճանապարհորդակիցները ոչինչ չը պատասխանեցին: Բաբրան, ամբողջովին տխուր մտածմունքների մէջ խորասուզուած,—նստեց պատի դուրս ցցուած ծայրի վերայ, և, աղէտալի, նայեց ջրհորի մէջ, ուր ջրային մակերևոյթի վերայ՝ թոյլ կերպով՝ անդրադառնում էին աստղերը. Մելխիորը, կռնակը բարձր և բարակ արմաւենուն տալով, չարունակ կանգնած էր: Նորա շորերը, դեղին, ինչպէս քրքում (шафранъ), լուսնի խորհրդաւոր փայլի տակ, համարեա թէ սպիտակ էին երևում: Նորա ոսկեպղնձի յատուկ մութ գոյնը և սևափայլ բրոնզի նման դէմքը աչքի ընկնող և հանդարտ էին, իսկ աչքերը փոքր ինչ բարկացկոտ:

Պետրոսը իւր դատարած աչքերը՝ լի կասկածանքով, նորա վերայ յառեց.

— Դու անշուշտ Եգիպտոսից պիտի եկած լինես,—ասաց նա:—Քո դէմքի վերայ այն կողմի կնիքը կայ,—ուրտեղ մարդիկ գըլխաւորապէս պատմութիւններ և դարագրութիւններ են կազմում:

Մելխիորը, անվրդով այդ ակնարկից, անթարթ աչքերով Պետրոսին էր նայում:

— Հանգիստ կաց իմ վերաբերութեամբ, ճշմարիտ Աստուծոյ ընկա՛ծ աշակերտ,—պատասխանեց նա: Ո՛ր կողմից եմ ես, կամ ո՞ւր եմ գնում, այդ նոյնքան աննշան է, ինչպէս աւազի հատիկի յանկարծակի փոփոխութիւնը, որին քամին այս կամ այն կողմն է ձգում: Թո՛ղ այժմ ոչ ոք իրեն ոչ մի նշանակութիւն չը տայ, մինչ ինքը՝—Աստուածութիւնը մահ ընդունեց, համաձայն իւր կամաց:

Պետրոսը աւելի ուշադիր նորա վերայ նայեց:

— Դու ևս նորա աշակերտն էի՞ր.—հարցրեց նա:

— Լաւ կը լինէր, եթէ հարցնէիր ինձ. զգում եմ ես արևգակի տաքութիւնը և նորա փա՞յլը.—պատասխանեց Մելխիորը:—Բայց

կան գաղտնիքներ, որոնք քո ժողովրդի համար չեն, Կեփաս [1]), և ոչ ժամանակակից բան։ Կը խնդրէի քեզ, եթէ ունիս ինչ ասելու մեզ, անդորր լինել իմ մասին և ո՛չ մի կասկած չը տանել իմ վերաբերութեամբ,—քանի որ ես էի, կամ, և ընդմիշտ օտարերկրացի մէկն պիտ յիշուեմ Հրէաստանի մէջ։

Նորա խօսքերը թէ փափուկ էին և թէ հաստատուն, այնպէս, որ այլ ես տեղիք չէր մնում հետաքրքրութեան, և ոչ ոք չը պիտի վստահանար անտեղի հարցմունքներով ծանրաբեռնել նորան։

Պետրոսը երկար դիտեց նորան և ապա հառաչալիր հեծեծանք արձակեց։

— Թո՛ղ քո կամքը լինի՛.—ասաց նա։—Բայց, ճշմարիտը, քեզ վերայ նայելիս, ակամայ, ես մի տարօրինակ պատմութիւն եմ մտաբերում. այդ պատմութիւնը նորա մասին է, թէ ինչպէս հեռու երկրներից ոմանք դէպի Բեթղեհէմ եկան ուղիղ այն գիշեր, երբ Տէրը պիտի ծնուէր—Նորան երկրպագելու։ Իրաւացի, անսովոր պատմութի՛ւն։ Ես շատ անգամ եմ մտածել, թէ ինչպէս կարող պիտի լինէին նոքա ճշգրիտ գիտենալ թէ օրը և թէ ժամը. բացի այդ, նոցա մէջ և Արևելքից եկած մոգեր ևս կային…—նա լռեց, իսկ յետոյ շտապով աւելացրեց.—կարող է պատահել, որ դու նոցանից մէկը լինես. ինչ կասես։

Մելխիօրը, հազիւ նկատելի ժպիտով, գլուխը շարժեց։

— Այնուամենայնիւ,—շարունակեց Պետրոսը, նկատելի այլայլմունքով.—եթէ դու այս օրերիս անցքերի մասին գրելու լինես,—խնդրում եմ, որ քեզ նպատակ ընտրելով ճշմարտութիւնը, գրի անցկացնես այն՝ ինչ արդար է և իրաւացի։ Ճշմարտութիւնը գրի՛ր։ Թո՛ղ իսկութիւնը վերականգնուի [2])։ Քանի որ ինձ այնպէս է թւում, թէ

[1]) Կեփաս—Պետրոս, յունարէն նշանակէ գլուխ, իսկ ասորերէն՝ վէմ։ Մատթ. 16. 18։ Զայս անուն եդ Քրիստոս սրբոյ առաքելոյն Պետրոսի, յորժամ ընտրեաց զնա… Բառգ. Հ. Լ.
Ծան. Հ. Թարգմ.

[2]) Ստրասբուրգի համալսարանի երեք պրոֆեսորներ՝—Շպիգելբերգ, Շմիդտ և Յակօբի շատ նշանաւոր գիւտ են արել։ Յիշատակուած պրոֆեսորները Կայիրայում բաղդ ունեցան գտնելու հինգերորդ Աւետարանից երկու կտոր։ Պրոֆ. Շմիդտի կարծիքով՝ այդ ձեռագրների մէջ ς գտնւում կոպտական (КОПТСКІЙ) թարգմանութիւնը (հինգերորդ դարի մէջ արուած՝ Քրիստոսի ծննդեան թւով), որի յունարէն բնագիրը գրուած է երկրորդ դարում։ Այդ նոր գտնուած կտորները կարող են պատկանել մեզ չը հասած Աւետարանական բնագրներից մէկին։ Պրոֆ. Յակօբին ենթադրում և մտածում է, որ ներկայ կտորները հէնց պատկանում են «Եգիպտացիներից մնացած Աւետարանին», որի մասին խօսում են՝ փառաւորեալ

հրէաները բազմաթիւ սուտ և սխալ բաներ պիտի մտածեն այս անօրինակ եղեռնագործութիւնը իրենց պատմութիւնից ջնջելու համար։

— Պետրոս, դո՛ւ ես պարտական գրելու,—դու պիտի գրես,—ասաց Մելխիօրը, փորձողական ակնարկ ձգելով նորա վերայ։—Եւ այդ պատմուածքի մէջ չը մոռանաս յիշելու և քո յանցանքներիդ մասին։

— Ես գրող չե՛մ.—տխրութեամբ պատասխանեց աշակերտը։—Ես ուսմունք և գիտութիւն չեմ սովորել։ Բայց եթէ ես գրելու լինէի, մի՞թէ կարծում ես, որ ես բաց կը թողնէի իմ թուլութեանս մասին խոստովանութիւնս։ Հրային տառերով պիտի պատմէի ես դոցա վերաբերութեամբ։

Նա կատաղի նայուածքով կանգ առաւ սակաւ ինչ, ապա շարունակեց.

— Պարոն, այդ ոչ մի ժամանակ չի լինիլ։ Ես անկիրթ մարդ եմ, և ոչինչ չը գիտեմ, բացի այն, ինչ ինձ Նազարէթից եկած Մարդը սովորեցրեց, այն ևս ես հասկանում էի բոլորից յետոյ, ուշ ըմբռնելով միտքը։ Եւ ահա այդ պատճառով եմ ասում, որ պատմես դու ճշգրտիւ, և եթէ կը կամենայիր անաչառ լինել,—պէտք է պատմես և մեր մեռած Յուդայի մասին ևս, որը թէ հպարտութիւնից և թէ սիրուց՝ դէպի իւր Վարդապետը,—Նորան մատնե՛ց։ Այո՛, սէրից առաջացաւ այդ յանցանքը, սէրից, այլ ոչ թէ դաւաճանութիւնից *)։

Բարաբբան խոր ջրհորի ջրի մակերևոյթի նայուածքը թողնելով, ակնարկը խօսեցողի վերայ դարձրեց լի և խորին մտածմունքով սկսեց ուշադիր լինել։

Մելխիօրը շարունակ կանգնած էր և ուշադրութեամբ ականջ էր դնում։

Իերօնիմը (Іеронимъ), Օրիգէնը (Оригенъ) և յունացի պատմաբան Թէօֆիլակտը (Феофилактъ)։—(Отрывн. календ. Сытина.)
Ծանօթ. Հայ թարգմանչի։

*) И въ словѣ Божіемъ, и въ преданіи церковномъ Іуда изобра-
жается только мрачными чертами: какъ истый еврей, одержимый стра-
стью сребролюбія. неблагодарный ученикъ, измѣнившій своему Учителю
и Господу, рабъ и льстецъ, невѣжникъ и неправедникъ, носившій въ ду-
шѣ злосмрадную злобу противъ Господа, наставникъ соборища безза-
конныхъ… «шедъ рече священникамъ: что ми подаете и предамъ вамъ
Онаго»… (Стих. св. вел. Пятка), и Іуда тамъ бы, и ковчежецъ имѣяше, хо-
тяше продати Господа Іисуса… (Ев. Іоанн. 12, 4—6). Ա)

Ա) Թարգմ.՝—Թէ Աստուծոյ խօսքի և թէ եկեղեցական աւանդութեան մէջ Յուդան պատկերացնում է միմիայն աղօտ գծերով. ինչպէս իսկական հրէայ,

— Ցուդիթը՝ ինքն ըստ ինքեան՝ մարմնացած մատնողութիւն էր,—ասաց Պետրոսը,—բայց Յուդան ո՛չ *)։ Ինքն ըստ ինքեան գեղեցիկ և երիտասարդ, որպիսին Յուդան էր,—նորա միտքը ևս դէպի բարին էր դարձրուած։ Նա աշխարհիս մաքրութեան համար էր մտածում և ամբողջ մարդկութեան երջանկութիւնը փնտռո՛ւմ։ Նա Ուսուցչին սիրում էր, սիրում էր բուռն սիրով, խորունկ և բոլորից յառ. նա հաւատում էր Նորա Աստուածութեա՛ն և երկրպագում էր Նորան։ Նա իւր տունը, երկիրը, ընկերներին կամաւոր ձգեց, որպէս զի Նորա յետևից գնայ. և այժմ,—Նորա դէմ մեղանչելով, նա մտածեց բոլորը գնել, իւր կեանքը զոհելով։ Այլ ևս ի՞նչ էր մնում անել. ոչ ոք աւելին չէ կարող անել։ Աստուած դատաւոր է՛։

Նա նորից իւր խօսքը ընդհատեց. նորա ստէպ ստէպ շնչառութիւնը ջղային էր։

— Երբ մենք, մի շաբաթ առաջ, Երուսաղէմ մտանք,—հանդարտութեամբ նորից սկսեց նա,—Յուդան արդէն վաղուց էր՝ ինչ հայրական տանը չէր եղել և շատուց չէր տեսել իւր քրոջը,—որին նա չափից դուրս սիրում էր։ Գիտէք դուք, թէ մենք ինչ տեսակ մտանք քաղաք։ Ինչպէս բոլոր ժողովուրդը առաջ անցաւ դիմաւորելու և ողջունելու «Յիսուս Նազովրեցուն», կոչելով Նորան «Թագաւոր». չորս կողմից «Ովսաննա» աղաղակելով, Նորա ճանապարհի վերայ մարդիկ ծաղիկներ և արմաւենւոյ ճղներ էին տարածում։ Այդ յաղթական մուտքի ականատեսներից մէկը ասաց ինձ. «Ինչու չէք արգելում այդ ցնորական գործողութիւնները։ Կարծում էք, որ քահանաները քաղցրութեամբ պիտի նայեն այդ գնացքի վերայ և նորան, որին «Թագաւոր» են կոչում կամ գալիլէացի Մարգարէ, չը պիտի հալածեն։ Ո՛չ, պարզ է, որ կը սպանեն Նորան, որպէս դժբաղդի՛»։ Երբ ես այդ խօսքերը յայտնեցի Յուդային, նա ուրախութեամբ ծիծաղեց և ասաց. «Ճշմարտապէս մեր Ուսուցիչը «Արքայ է», «Թագաւոր երկրի» և «Տէր երկնքի», և նոյն իսկ դժոխքի բոլոր ուժերը կարող չը պիտի լինին

արծաթասիրութեան մոլեգնութեամբ բռնուած, անշնորհակալ աշակերտ, մատնող իւր Ուսուցչին և Տիրոջ, գերի և չողոքորթ, փչացած և ոչ արդարադատ. Տիրոջ դէմ հոգու մէջ չարանենգ չարութիւն կրող, հրահանգիչ անիրաւների խմբի... «шедъ рече священникамъ: что ми подаете и предамъ вамъ Онаго»... (Стих. св. вел. Пятки, и Іуда тамъ бы, и ковчежецъ имѣяше, хотяше продати Господа Іисуса... (Աւետ. Յոհանն. 12, 4—6)։

*) См. примѣч. цензора выше. Թարգմ.՝—Նայիր գրաքննիչի նկատող. վերև։

նորան յաղթել ո՛չ» *)։ Տեսնելով, թէ ինչ աստիճանի նա վստահ էր և անսասան հաւատք ունէր դէպի Վարդապետը, ես ոչինչ չը ասացի, չը նայելով, որ սիրտս մի տեսակ ոչ բարի ապագայ էր նախավկայում, իսկ ինքս այդ բոլորից ոչ մի բարի վախճան չէի սպասում։—Եւ նա դէպի գետին նայեց՝ սաստկացող վշտի արտայայտութեան տակ։—Այն գիշերը, ուղիղ այն գիշեր, երբ մենք Երուսաղէմ մտանք, Յուդան իւր քրոջ հետ տեսակցութիւն ունեցաւ։ Նա շատ անգամ դմայլմամբ էր խօսում իւր քրոջ մասին, պատմում էր մեզ նորա հրաշալի գեղեցկութիւնից՝—համեմատելով նորան արեգակի ճառագայթների տակ գտնուած գեղապաճոյճ վարդերի հետ։ Նա կամենում էր իւր քրոջը բերելով, Վարդապետի ոտքերի տակ նստել ու բացատրել նորան Ուսուցչի ուսմունքը, այն հրաշքների մասին խօսել, որ գործում էր Նա. պատմել իւր քրոջը Նորա քնքոյշ սիրոյ մասին դէպի վաստակեալ և բեռնաւոր մարդիկ։ Թեթև սրտով թողեց նա մեզ,—բայց երբ նա վերադարձաւ, այլ ևս ճանաչել նորան անկարելի էր։ Նա մի կողմի վերայ նստելով, մտածկոտ և մռայլ դէմքով մեր Տիրոջ վերայ էր նայում—վշտալի և փորձողական, որպէս թէ կամե-

*) Թէ ժողովրդի և թէ Քրիստոսի աշակերտների մէջ երկդիմի կարծիք էր տարածուած Նորա Աստուածութեան վերաբերութեամբ, ինչպէս Յոհաննէս Աւետարանիչն է վկայում. «... մեք լուաք յօրինացն՝ եթէ Քրիստոսն յաւիտեան կայ. արդ դու զիա՞րդ ասես՝ եթէ պարտ է բարձրանալ Որդւոյ մարդոյ. ո՞վ է այն որդին մարդոյ»։ (Յոհանն. ԺԲ, 34)։ Աւետարանական գիտութիւնների քաջահմուտ Մարիա Կորելլին աշխատել է ժողովրդի այդ տագնապը և աշակերտների կասկածը նկատելի կացուցանել, որպիսին Յուդային աւելի ևս վերագրելով՝—ինչպէս առաւելագոյն թերահաւատի Փրկչի ոչ անմահութեան վերաբերութեամբ՝—Յուդայի մատնութեան յենակէտը այդ է ընտրում։ Յուդայի արծաթասիրութեան մասին պարզ ոչինչ չը կայ Ս. Գրքում. ըստ Մարկոսի՝—«Նոքա (քահանայապետները) իբրև լուան՝ խնդացին. և խոստացան տալ նմա (Յուդայի) արծաթ»։ (Մարկ. ԺԴ, 11)։ Իսկ Մատթէոս Աւետարանիչը Յուդայի մասին այսպէս է վկայում, «Յայնժամ տեսեալ Յուդայի որ մատնեաց զնա՝ պարտաւորեցաւ՝ զղջացաւ. և դարձոյց զարծաթն (ոչ արծաթասիրութեան կենդանի օրինակ) առ քահանայապետսն, և առ ծերս ժողովրդեան։ Եւ ասէ՝ մեղայ, զի մատնեցի զարիւն արդար։ Եւ նոքա ասեն. մեզ չէ փոյթ՝ դու գիտես։ Եւ ընկէց զարծաթն 'ի տաճարն՝ և գնաց։ Եւ չոգաւ խեղդեցաւ»։ (Մատթ. ԻԷ, 3—6)։ Մի՞թէ այս բոլորը Յուդային այնպէս չեն նկարագրում,—ինչպէս և «Բառարան», և չեն բռնադատում՝ անխուսափելի մատնութիւնից յետոյ («Այս եմուտ սատանայ 'ի յուդայ»—Ղուկ. ԻԲ, 3) մեղմ խօսել տասնեակ դարերի ընթացքում նզովեալ այն հէգ աշակերտի վերաբերութեամբ, որի անունն իսկ՝—«Յուդա կամ Յուդաս»—գովութիւն կամ խոստովանութիւն կը նշանակէ (Բառգիրք Հ. Լ. Վ. թ. 1769), և որին 'ի վերուստ ճակատագիրը մատնիչի քստմնելի դերի մէջ էր դրել։

Հայ-Թարգմանիչ։

նալով ինքն իրեն մի մեծ խորին գաղտնիք բացատրելու։ Օրերը անցնում էին, և միմիայն երկու օր էր մնում մինչ այն երեկոն, երբ մենք մեր Տիրոջ հետ պասեքը պիտի ուտէինք։ Այն ժամանակ Յուդան ինձ մօտ եկաւ և ինձ բոլորը, բոլորը բացատրեց,—ինչ որ տանջում էր նորան։

Այդտեղ Պետրոսը, կարծես նորից խղճի խիստ խայթոցից յուսահատ,—անյուսութեան և բարկութեան զգացմունքով՝ իւր կրծքին խփեց։

— Վկայ է Աստուած,— ասաց նա,—որ ես երբ այդ ծրագիրը լսեցի, մտածեցի, որ լաւ կը լինէ։ Ես մտածեցի որ համայն աշխարհը պիտի տեսնէ, որ մենք Աստուածեղէն Մարդուն 'ի զուր չէինք երկրպագո՛ւմ։ Հպարտութիւնը՝ Նորա փառքի վերաբերութեամբ, Նորա անուան սէրը և ապագայի անգիտակցութիւնը—ահա Յուդա Սկարիովտացու մեղքե՛րը։ Նորանում չարութիւն չը կար, դորա մէջ ես երդւում եմ։ Փառասիրութիւն—ահա թէ ինչը դահավիժեց անբաղդ պատանեակին, բայց մեր երկսից ուրացողը—ես եմ։ Յուդան, թէպէտ և մեղանչեց, բայց միշտ անձնուիրութիւն ունէր։ Լսո՛ւմ ես ինձ, Եգիպտոսի լաւիկ մտածող.—և նա անընական Մելխիօրի վերայ նայեց։ Լսո՛ւմ ես դու։ Գրի՛ր այս՝ եթէ կամենաս՝ հաստաքարեայ (գրանիտ) տախտակների վերայ, որոնք գտնւում են քո խորհրդաւոր երկրում։ Ես կամենում եմ, որ գիտենային ա՛յդ։ Յուդան անձնուէր էր, կրկնում եմ ես, և նա Ուսուցչին մեր բոլորից աւելի էր սիրո՛ւմ *)։

— Խօսքերդ լսում են, Պետրոս,—ասաց Մելխիօրը՝ փափուկ ձայնով և ես կը մտաբերեմ նոցա։

Այդ պատասխանով հանգստացած՝ անբաղդ աշակերտը ուշքի եկաւ և իւր պատմութիւնը շարունակեց աւելի շաղկապուած թէ մտքով և թէ դարձուածքներով։

— Այո՛, Յուդան չը ուրացա՛ւ։—Երբ նա առաջինը ինձ մօտ եկաւ, ասաց, որ թէ քահանաները և թէ ծերակոյտը կատաղած էին

*) Ап. Петръ, хотя и согрѣшилъ отрекшись отъ своего Учителя, не можетъ быть сопоставляемъ съ Іудою, какъ покаявшійся и горько оплакавшій свой грѣхъ, и за это прощенный Господомъ.

Цензоръ. ա.)

ա.) Թարգմ.՝—Պետրոս Առաք. թէպէտ և յանցանք գործեց, հրաժարուելով իւր Ուսուցչից, չէ կարող համեմատուել Յուդայի հետ, ինչպէս զղջացած և դառնութեամբ այդ մեղքը լացող, և դորա համար էլ Տիրոջից ներումն ստացած։

Գրաքննիչ (Ցենզոր)։

այն ազդեցութեան տպաւորութիւնից, որով մեր Վարդապետը ընդհանուր ժողովրդի մէջ օգտւում էր և պատճառ էին փնտռում Նորա սպանութեան համար։ Ուրեմն հեռանանք շուտով, ասացի ես։ Գալիլեայի լեռները և ափերը վերադառնանք նորից, որտեղ ջերմագին սիրում են մեր Տիրոջը, և որտեղ Նա կարող է, առանց երկիւղի և ազատ, քարոզել ըստ կամաց։ Ո՛չ,—պատասխանեց Յուդան՝ յաղթական ձայնով։—Մի՞թէ դու չը գիտես, որ՝ եթէ Նորա խօսքերը ճշմարտութիւն են՝—Նա, մեր տէրը, չէ՛ կարող մեռնել։ Ինչո՞ւ փախչենք քաղաքից և կարծել տանք թէ մենք վախեցանք և անզօր չենք Նորա անվեհերութեան վերաբերութեամբ։ Բայց նախ քան այդ, լսի՛ր թէ ինչ է ասում ինձ քոյրս՝ Յուդիթը։—Եւ ես լսեցի։

Բարաբբան Նորա վերայ խիստ և անհանգիստ ակնարկ ձգեց, Պետրոսը անասելի տխրութեամբ այդ ակնարկը տարաւ։

— Յուդիթը, ինչպէս ես յետոյ իմացայ, իւր եղբօրը այնքան քնքշութեամբ էր դիմաւորել, որ նորան մինչ սրտի խորքն էր շարժել։ Յուդիթը նորան ոչ մի նախատինք չը տալուց բացի, մինչև անգամ համբերութեամբ և լի ու լի հետաքրքրութեամբ էր լսել Նորա ամբողջ պատմութիւնը թէ Նորա տարագրութիւնների մասին և թէ Վարդապետին վերաբերեալ հարցերի նկատմամբ։ Ապա Յուդիթը մեղմութեամբ ասել է, որ երբէք չէ կասկածում այն բանի մէջ, որ այդ յայտնի Նազովրեցին իրաւացի Աստուածութիւն է, բայց Նորանից անհրաժեշտ է ապացոյց պահանջել Իւր Աստուածութեան վերաբերութեամբ։ Յուդան անհանգիստ հոգով պատասխանել է.—այդ արդէն ապացոյց ունէ և շատ անգամ ու զանազան հրաշքներով կընքուել է այդ իրականութիւնը։—Միայն թէ ո՛չ Երուսաղէմի մէջ քահանաների և կառավարիչների առջև,—հակաճառել է Յուդիթը։—Նոքա քո Գալիլեացի Մարգարէի վերաբերութեամբ ոչինչ չեն հաւատում, բացի այն, որ Նա թէ աստուածանենգ է և թէ մի անբաւական յեղափոխիչ։ Իսկ եթէ իրաւ որ Նորա մէջ մի այդպիսի ուժ կայ, ուրեմն դու, Յուդա՛, կարող ես Նորան միջոց տալ մի վայրկեանի մէջ տէր հանդիսանալու ամբողջ հողագնդին, որով սուկ ցոյց տըւած պիտի լինիս թէ քո սէրը և թէ—անձնուիրութի՛ւնը։ Յուդան, հիացած այդ մտքի վստահութեամբ, հարցնում է, թէ ինչպէս պէտք է իւր Տիրոջ համար համաշխարհային փառք գտնելու միջոցներ որոնէ։—Ոչ մի ժամանակ այդքան հասարակ հարց չէ եղել, պատասխանել է Յուդիթը։—Յանձնի՛ր Նորան օրէնքին, տո՛ւր Նորան քահանաների ձե՛ռքը։ Ա՛յն ժամանակ երկնքի ամբողջ յաղթանակով պիտի իւր Աստուածային ուժը յայտնէ՛։ Մենք Նորա անձնաւորութեան մէջ

անշուշտ խնկական Մեսիայըն գտնելով, կը երկրպագէնք, բայց մեզնից օրինակ պիտի վերցնեն ընդհանուր աշխարհիս բոլոր ազգերը ու Նորա Աստուածութիւնը կատարեալ լինելով, անթիւ և անհամար երկրպագուներ պիտի ունենայ։ Մտածիր, սիրելի եղբայր, եթէ որ Նա իրաւացի Աստուած է,—մահկանացու թշնամին չը պիտի կարողանայ սպանել Նորան։ Ահա,—շարունակեց Պետրոսը,—թէ ինչ յայտնեց ինձ Յուդան իւր քրոջ խօսքերից։ Այդ ինձ արդարացի և ճշմարիտ երևաց, քանզի ինչպէս պէտք է մեր Տէրը տանջուէ և համբերող լինէ աղքատութեան, մինչ ամբողջ թագաւորութիւններ կարող էին Նորան պատկանել։ Ուրեմն ինչու պիտի թափառական լինէր Նա այս աշխարհում, առանց ծածքի, երբ երկրիս բոլոր ապարանքները պատրաստ էին Նորա առջև բացուելու։ Այդպէս էր մտածում Յուդան. այդպէս մտածում էի և ես։ Մեր Ուսուցիչը միշտ փառաւորեալ էր և մենք Նորա փառքը 'ի ցոյց հանելու ցանկութեան վերաբերութեամբ ոչ մի վատ բան չէինք գտնում։

— Բնութեան գաղտնիքները դժուար է կարդալ, Պետրոս,—յանկարծ ասաց Մելխիօրը,—և դու չես կարող հասկանալ թէ ինչ գաղտնի նշանակութիւն ունին նոքա։ Փառքը ոչ մի ժամանակ այլ խոն ճանապարհից չէ երևում, բայց տանջանքի դնացքից։ Ինչու համար դու կեղծ—ղաւեկլի գեղափայլութիւն ուզեցիր տալ, որ յատուկ է աշխարհային թագաւորութիւններին, Աստուածային Հոգուն, որը մարդկային պատկեր է ընդունել։ Միթէ կար ամեն ինչի տիրող ամենահարուստ արքայ, որը ազատել կարողանար աշխարհս իւր մեղքերի ծանրութեան չնչին մասնիկից։ Ազգերով գովասանուած մի անունը կարողացաւ գէթ մի հոգու փրկութիւն ընծայել։ Ձեր ազգի բոլոր Մարգարէները 'ի զուր մարգարէացան, քանզի քո խելքի համար ամենահին նախագուշակութիւններն անգամ ոչինչ չեն արժենում։ Միթէ նոյն իսկ քո Վարդապետը քեզ իւր ճակատագիրը չէր նախայայտնել, ինչու գէթ Նորան չը հաւատացիր դու *)։

*) Պետրոս Առաքեալը Քրիստոսի միւս աշակերտների մէջ յայտնի տեղն է բռնում թէ իւր առաւելութիւններով և թէ թուլութիւններով։ Պետրոսը Աւետարանական ամենայայտնի տիպն է՝ մարդկային առաւելութիւններով պակասութիւններով համակուած, որին այնքան սիրում էր Քրիստոս և որը՝ այնուամենայնիւ՝ մի քանի անգամ խստիւ մեղանչելով Տիրոջ դէմ, իւր թերութիւններով անցաւ միւսներից իսկ. և եթէ մտածող Մարիա Կորելլուն պէտք է եկել նորան զուգընթաց տանելու Յուդայի հետ, շնորհիւ Պետրոսի բարկացկոտ բնաւորութեան, թերահաւատութեան և անհաստատակամութեան—դա շատ բնական, պարզ և հասկանալի է։

Ծան. Հ. Թարգմ.

Պետրոսը սարսափելի կերպով գունատուեց և գլուխը դէպի կուրծքը թեքեց։

— Այո, Նա ինձ ասաց,—պատասխանեց Նա՝ տխրութեամբ,—և ես հակառակեցի Նորան։ Ես ասացի.—քաւ լիցի քեզ՝ Տէր, մի եղիցի քեզ այդ։ Անսպառուած արքայի բարկութեամբ Նա դէպի ինձ դարձաւ և ասաց. «Երթ յետս իմ սատանայ, գայթակղութիւն իմ ես, զի ոչ խորհիս զԱստուծոյն այլ զմարդկան *)։ Եւ ես դէպի յետ տատանուեցի Նորանից՝ լի երկիւղով և ամբողջ օրը տխրութեան մէջ մնայ։

Մելխիօրը հեռացաւ ծառից, որին կռթնել էր, և իւր ձեռքը աշակերտի ափի մէջ դրեց։

— Եւ դու տակաւին չը հասկացար, կարճամիտ և թերահաւատ, թէ ինչն է Աստուածային.—հարցրեց Նա լրջութեամբ և ձայնի խորամիտ խաղով։—Դու՝ այնուամենայնիւ՝ երկրայինը դուրս չը ձգեցիր քո մտքից և աշխարհային չնչին կամքը և յիմար մնապարծութիւնը մեծ ուժ կարծեցիր, այնպէս չէ։ Խղճում եմ քեզ, քանի որ քո հոգին դեռ կապուած լինելով աշխարհային ցանկութիւններին և առարկաներին, քեզ միշտ պիտի խանգարէ թէ ուխտադրութեանդ և թէ քարոզչութեանդ ժամանակ, փչացնելով ընտրածդ լայնատարած նպատակը։

Պետրոսը, տեղից վեր թռնելով, սկսեց երկիւղով և զարմանքով խօսեցողի վերայ նայել։ Լուսնի լոյսը նոցա երկուսին էլ լուսաւորում էր. Մելխիօրի դէմքը խաղաղ էր, և՝ միենոյն ժամանակ՝ խիստ ու վճռողական, իսկ Պետրոսի դէմքի վերայ, խորին անհանգստութեան արտայայտութեան հետ, անօրինակելի թախծութիւն կարելի էր կարդալ։

— Յանուն Աստուծոյ, ո՞վ ես դու.—հարցրեց նա՝ վախեցած։ Ո՞ւմ իրաւակատարութեամբ ես մարգարէանում ինձ վերայ։

Մելխիօրը ոչինչ չը պատասխանեց։

— Ոչ ոք ինձ առաջնորդող չը պիտի վերցնէ.—շարունակեց Պետրոսը՝ դեռ ես մեծ զրգռմունքով։—Միթէ ես ինքս չեմ խոստովանում, որ ես թոյլ մարդ եմ՝ թէ հոգեպէս և թէ մարմնապէս, ու՝ միենոյն ժամանակ՝ և մեղաւոր։ Բացի դա, ես փորձութիւնների տակ եմ ընկած—Նա դողաց—բազմաթիւ և ծանր փորձութիւնների։ Վար-

*) Չառնուս 'ի միտ զխորհուրդսն Աստուծոյ որ զփրկութենէ ազգի մարդկան, այլ խուսափել և ես ի վշտաց խորհիս մարդկօրէն։

Վարք Քրիստոսի Հ. Գ. Վ. Այվազովսկու։ Բացատր. Հ. Թ.

դապետը դորա մասին գիտէր, քանի որ դեռ երէկ Նա ինձ ասաց. «Սիմոն, Սիմո՛ն, ահա սատանայ խնդրեաց զձեզ խարբալել իբրև զցորեան. այլ ես աղաչեցի վասն քո զի մի պակասեսցէն հաւատք քո»:

— Եւ չի պակասի՛լ.—կարեց Մելխիօրը յաղթական ձայնով:—Քո ձեռքով շինուած ամբողջ և չքնաղակերտ շինութիւնը կանգուն պիտի մնայ ու միմիայն հաւատքով ապրէ: Բայց քո վախկոտութիւնը և կասկածանքներդ նոյնպէս կը ապրին, քո սուրբ սերմն պիտի լինէ և շատ ու շատ անուղղութեան հնձաններին վերայ ցանուէ: Վարձատրութեան օրէնքը ընկած է քեզ վերայ, ինչպէս և բոլորի վերայ, իսկ միակ քո հրաժարումն և բացասութիւնը, Պետրոս, պատճառի տեղ կը ծառայէ շատերին և՛ս:

Պետրոսը Մելխիօրի սևագոյն և խորհրդաւոր դէմքին նայեց և դէպի նա տարածեց իւր ձեռքերը, կարծես թէ դէպի յետ հրելով մի սպառնացող ճակատագրի փորձութիւնները: Նա ամբողջ մարմնով սարսռում էր:

— Մարգարէ,—շշնջաց նա,—դու իմ հոգուս մէջ սարսափ ես ձգո՛ւմ: Ես ինչ գործ ունեմ նոցա հետ, որոնք ինձնից յետոյ պիտի լինեն: Մի բան միմիայն իրաւ է,—որ երբ կը սկսեն այս օրերը յիշել, այն ժամանակ և իմ մեղքս յայտնի կը լինէ ու նզովուած երկար դարերի ընթացքում, մինչ յաւէտ: Եւ ո՞վ է կարող որևէ շինութիւն կերտել ստի վերայ, ինչպէս դու ես ասում: Ոչ, ո՛չ, մարգարէացիր, եթէ կամենում ես, չար կամ բարի, բայց—միմիայն—ոչ այստեղ, որտեղ, այնքան չէ անցել, որ Ուսուցիչն էր նստա՛ծ: Ինձ այնպէս է երևում, որ Նա լսում է մեզ: Հէնց նոյն իսկ օդի մէջ զգալի է Նորա գոյութի՛ւնը: Նորա ներկայութիւնը, հէնց այստեղ, սոյն նստարանի վերայ, այս բոպէիս մէջ, իրականութիւն է, հէ, այնպէս չէ՞ մի...

Նա չորս կողմի վերայ երկչոտ ակնարկ ձգեց, ապա վեր կացաւ և շտապով առաջ անցաւ այնքան, որքան նորա թուլութիւնը թոյլ պիտի տար:

Երեքն էլ լռանով պարզ լուսաւորուած ուղին բռնեցին: Բարաբբան՝ ակամայ՝ աշակերտի մաշուած և անհանգիստ դէմքին էր նայում:

— Տարօրինակ բան է, որ այս մարդը կարող եղաւ իւր Ուսուցչին ուրանա՛լ.—մտածեց նա և արհամարհանքի ստուեր անցաւ նորա դէմքի վերայից:—Իսկ ես, թէպէտ և ստորադաս յանցաւոր եմ ու այդ Ուսուցչին մի անգամ միայն տեսայ,—այնուամենայնիւ ուրախու-

թեամբ կեանքս Նորան կը տայի, եթէ այդ միմիայն կարելի լինէ՛ր:

Մակաւ ինչ լռութիւնից յետոյ, Պետրոսը նորից սկսեց խօսել.

—Երբ Յուդան իւր քրոջ խօսքերը յայտնեց ինձ, ինձ այնպէս թուաց, որ մի նոր լոյս թափանցեց մեր կեանքի մէջ: Աշխարհը դրախտ պիտի դառնայ, բոլոր մարդիկ պիտի միակ եղբայրական սիրով շաղկապուին, ու սէրը, միմիայն սէրը թագաւորէ, միայն թէ ցանկանայ Աստուած երկրիս վրայ բացարձակ երևա՛լ: Բայց ես մի տեսակ սարսափում էի իմ դատողութիւնը յայտնելու. տեսնելով այդ, Յուդան համոզեց ինձ իւր հետ Յուդիթի մօտ գնալ,—լսելու, թէ նա ինչ է ասում: Դու այն ժամանակ կարող պիտի լինիս առողջ դատողութեան գալ, անտարբերութեամբ և դանդաղութեամբ ասաց նա ինձ:

Այստեղ նա իւր կոպիտ ձեռքը օդի մէջ շարժեց:

—Ա՜խ, երանի կը լինէր, որ ես ոչ մի ժամանակ չը տեսնէի Յուդիթին.—գոչեց նա:—Որպիսի՜ գեղընական պատկերի մէջ էր փաթաթուել դա, ինձ խաբելու համար:—Իսկ ես այնպէս երևակայեցի, որ նա բարւոյ և լոյսի հրեշտակ է: Նորա չքնաղ գեղեցկութիւնը, նորա դայլայլիկներով լեցուն թրթրակ ձայնը, նորա դիւրըմբռնելի ու փափուկ համոզմունքները,—իմաստուն առաջարկութիւնները—այդ բոլորը՝ 'ի մի հաւաքուած իմ լաւագոյն մտքերը գերեցի՛ն: Յուդիթը կանգնած էր մեր առջև իւր հօր այգու մէջ, ճերմակ. լուսեղէն հագուստներով պճնուած—խոնարհութեան և խաղաղութեան իսկական մարմնացումն, նա, ինչպէս մեզ երևաց, չափից դուրս ուղիղ և աննման արդարութեամբ էր խօսո՛ւմ: Ճշմարիտը ասած, ես բոլորովին չեմ կասկածում, որ ձեր Տէրը թէ Աստուածէ և թէ Հրաշագործ,—ասաց նա:—Բայց քանի որ քաղաքիս ներկայացուցիչները մտածում են, որ Նա սոսկ միայն խաբեբայ և աստուածանենգ մէկն է,—ուրեմն դուք, որ այնքա՛ն սիրում էք Նորան, պարտաւոր էք ստիպելու, որ Նա իւր Փառքը ցոյց տայ: Որովհետև եթէ Նա Աստուածութիւն չէ, ինչպէս ասում է,—ուրեմն դուք լաւ չէք անում, որ գնում էք մի որևէ խաբեբայի յետևից: Այդ պա՛րզ է: Եթէ Նա Աստուած է, ուրեմն մենք բոլորս էլ Նորան կը երկրպագենք, իսկ եթէ Նա մարդէ լոկ, պիտի նշանակէ, որ դուք միամտաբար խաբուած էք մի հասարակ ձեռնածուի (фокусникъ) աչքակապութիւններից:—Ահա՛ Յուդիթի խօսքերը և ես, ողորմելիս, հաւատացի Նորան. Նրա խօսքերը ճշմարտութեան տեղ էին ընդունում: Այդ ճիշտ է,—պատասխանեցի ես,—մեր Ուսուցիչը—Աս-

տուած է և Նա կարող է և իր հաստատել մեզ։—Յուդիթը ժպտաց և թողեց մեզ, իսկ Յուդան, դէպի ինձ դառնալով, գոչեց. Ի՞նչ ես մտածում դու, Սիմոն Պետրոս։ Ես պատասխանեցի. Արա այն, որը քո կարծիքով լաւ է, Յուդա։ Մեր Տէրը—աշխարհի և երկնքի Հրամանատարն է և ոչ ոք չը պիտի կարողանայ մնասել Նորան կամ խլել Նորա փառքը։

Պետրոսը նորից կանգ առաւ, դէպի երկինք բարձրացնելով իւր վշտալի աչքերը. լուսնի գունատ ճառագայթները նորա մաշուած, վշտատեսք երեսը սառնութեամբ լուսաւորեցին։

—Ի՞նչ խորհուրդ կարող էի տալ ես, հէ՜.—գոչեց Նա, որպէս թէ անտեսանելի ունկնդիրի առջև պաշտպանուելով։—Ինչ կարող էի գիտենալ ես։ Ինձ հետ չէ երկնային գաղտնիքների բալանի՜ն։ Խղճուկ, անկիրթ ձկնորս եմ ես, Գալիլիայի մէջ ուռկան ձգողներից մէկը—ահա թէ ով և ինչ էի ես, երբ այն գերիմաստ Մարդը չափեց ինձ հրամայողական ակնարկով և ասաց. «Եկ զկնի Ի՛մ»։ Անդրէաս եղբայրս ինձ հետ էր։ Նա կարող է դորան վկայ լինել։ Մենք շատ չքաւոր էինք և անուս,—մենք գիտէինք և զգում էինք մի բան միայն, որ այդ Նազովրեցի Յիսուսին պէտք է հնազանդիլ. որ մի որևէ խորհրդաւոր ազդեցութիւն ստիպում է մեզ գնալ Նորա յետևից. որ թէ տուն և թէ ազգական ու բարեկամ մեզ համար ոչինչ էին, Նորա մի ակնարկի, կամ հեզ ժպիտի հետ համեմատած։ Գեղեցկութեամբ, մեծութեամբ և ամեն բանով Նա իսկական արքայի էր նմանում։ Ինչու համար ամբողջ աշխարհը չը գիտենայ այդ։ Դա բնական և ճշմարիտ մի բան էր երևո՜ւմ։ Բայց այնուամենայնիւ—երէկ երեկոյեան, երբ Յուդան ընթրիքի սեղանից վեր կացաւ և գնաց,—ես չը գիտէի թէ նա ուր գնա՜ց։ Ես չը իմացա՜յ։ Ես չը իմացա՜յ...

Նա բուռն այլայլմունքից հեծեծանք արձակեց, ապա ձեռքի խիստ շարժմունքով, հզօրագոյն ձայնով աղաղակեց.

—Ես նզովք եմ կարդում դէպի կինը. նզովում եմ կնո՜ջ։ Միմիայն նորա պատճառով թէ մեղք և թէ մահ երևա՜ց։ Ի սէր նորա և դժոխքն է ստեղծուած, և այժմ նորա միջոցով է մատնուած այն Աստուծոյ մօտից եկած Սուրբը՜։ Թո՛ղ կինը դարերով նզովեալ լինէ. անիծեալ լինին նորա հետ նորա արհամարհելի գեղեցկութիւն սիրողները ու նորա խաբուսիկ հոգուն հաւատացողնե՜րը։

Կատաղի բարկութիւնից նորա գունատ դէմքը ձգձգուեց։ Մէլխիօրը հանդարտիկ կարեկցութեամբ ուշադիր էր նորան։

—Քո անէծքը անզօր և նզովքդ 'ի զուր է, Պետրոս,—ասաց

Նա։—Դորա միմիայն դատարկ և խուլ օդի մէջ ձայն պիտի տան, որոնց համար օդը պիտի ուշադիր լինէ։ Նա՝ ով անիծում կամ արհամարհում է կնոջ—անիծեալը և արհամարհուածը ինքն է՜։—Որովհետև, հէնց ներկայումս իսկ, մինչդեռ մի կին անարատ և կուսածաղիկ էր,—համայն աշխարհը փրկուած է 'ի սէր նորա քնքշութեան և համբերատարութեան, յաւիտենական սէրը կապում է մեր երկիրը բարձրաշուք երկնքի հե՛տ։ Իրաւոր նշանաբանների մեկնութիւնը և բարձրագոյն կամքերի լուծմունքը ծածկուած է քեզնի՜ց։ Միթէ իրաւունք ունիս դու կնոջը անիծելու, երբ կնոջից իսկ քո Ուսուցիչը ծնուեց, ապա թէ երկրիս վերայ երևաց։ Թէկուզ միլիոնաւոր խաբուսիկ կանայք լինէին, որոնք արժանի են քո նզովքին, ոչ մի նշանակութիւն չունէ, քանի որ այն ժամանակից, երբ գիտենք մենք նորան, որին Նազովրեցոց Մայր են կոչում, և 'ի սէր այդ երկնաժառանգ կնոջ,—կինը սրբութիւն է անգամ Ամենաբարձրեալի առջև՜։

Նա կանգ առաւ սակաւիկ, ապա աւելացրեց.

—Բացի այդ, դու անկարող ես մատնութեան ամբողջ յանցանքը Յուդիթ Իսկարիօտացու վերայ ձգել։ Նա մասամբ մեղաւոր է, որովհետև Նա ևս մի աննման գործիք էր իսկական մատնիչի ձեռքին։ Եթէ դուք կամենում էք այդ մատնողութեան ծննդավայրը գտնել,—փնտռեցէք նորան հասարակութեան բարձր խաւերում. քահանաների, կառավարիչների, սուրբ ձևացողների և արդար կոչուածների խմբի մէջ անշուշտ պիտի գտնիք նորա աղբիւրը։

Բարաբբան միջամտեց։

—Դու Կայիափայի մասին ես խօսո՜ւմ.—բացականչեց նա այլայլուած։—Այդ լուրը իմ հոգու համար մի տեսակ մխիթարութիւն է երևում Այո, Քրիստոսին դաղանային սպանութեան մատնելու առաջին միտքը նա յղացաւ։

Մելխիօրը ուշադրութեամբ նորա վերայ նայեց։

—Ճիշտ այդպէ՜ս.—ասաց նա։—Առաջին մեղաւորը Կայիափան է։ Բայց դու դորան մի զարմանալ, Բարաբբաս։ Աստուածութիւնը իսկ և իսկ խաչուած է Աստուծոյ յանձնապաստան քահանայի ձեռքո՜վ։

XXI.

Երբ նա արտասանում էր այդ խօսքերը, Թեթև քամին, որպէս շրջմոլիկ հոգու հառաչանք, փչեց ծառերի և Թփերի միջից, որոնք գտնւում էին ճանապարհի երկու կողմերում։ Անբնական կասկածանքի մէջ Նախկին աշակերտ Պետրոսը նորա վերայ նայեց։

—Այդ ինչպէ՞ս կարող էր լինել.—հարցրեց նա։—Ճիշտ է, Յուդան իջել է Կայիափայի մօտ, բայց միմիայն աւելի ուշ, մինչ նա հաստատապէս արդէն վճռել էր ինչ կերպով մատնողութիւն անելու ձեր. այո՛—ամեն ինչ կարգի դնելուց յետոյ, նա գնացել է Կայիափայի մօտ։

—Դու բոլոր մանրամասնութիւնները չըգիտես, Պետրոս.—պատասխանեց Մելխիորը։—Եւ նոյնպէս, ինչպէս որ դու բոլորը չը գիտես, չեն կարող գիտենալ և նոքա, որոնք քեզ են հետեւում։ Մի՞թէ լսած չը կաս մարդու և կնոջ մէջ եղած սիրոյ վերաբերեալ, կամ մոլեգնոտ տափանքի մասին, որը նոյն տեսակ անուան տակ գտնուելով, նոյնատեսակ դեր է խաղում մարդկանց պատմագրների մէջ։ Չէնց մի այդպիսի փաւաչոտական ցոփութիւն կայ հպարտ Կայիափայի և մեղսաճաշակ Յուդիթի մէջ։ Մի՛ վիճաբանիր, Բարաբբա, քանզի իրականութիւն է ասածս։ Ցանկամոլ քահանան վաղուց ՚ի վեր Յուդիթին յայտնել էր բոլոր գաղտնիքները. նա էր սովորեցրել Յուեւիթի դերը, որը պէտք է խաղար նորա հրամանով և նորա՝ Կայիափայի իսկ՝ խօսքերով։ Յուդիթը հրապուրեց իրեն հաւատացող եղբօրը, Թէպէտ—միևնոյն ժամանակ—նա իւր անձնական նպատակը ևս ունէր. Յուդային իւր տունը ու հայրերի հաւատքին վերադարձնելու։ Բացի այդ, նա իւր այդ օգնութեան համար (միաւորուած իւր սիրոյ հետ), Կայիափայից շատ ոսկի, Թանկագին քարեր և ճոխ անկուածներ ստացաւ,—այնպիսի բաներ, որոնց նշանակութիւնը և իրենք այդպիսի կանանց համար աւելի Թանկ են, քան բարեգործութիւնը և որոնց մոլի կանայք համեստափայլութիւնից բարձր են գնահատում։ «Ըմբռնիր ՚ի սէր իմ Նազովրեցուն, գեղանի Յուդիթս, բայց այնպէս, որ այդ վարմունքը քո սորջացող եղբօր գործը երևէ, որը, որպէս Թէ, ցանկութիւն է զգում դէպի իւր հաւատքը դառնալու, և ես քեզ կը տամ այն բոլորը, բոլորը, ինչ միմիայն կարող ես ուզել դու, անփոխարինելի սիրուհի՛ս»։ Յուդիթը աքանչելի իմն կերպով նորա հրամանը կատարեց, և ինչու չը պիտի

կատարած լինէր,—չէ Թէ վաղուց է, ինչ Կայիափան Յուդիթի սիրականն է։

Բարաբբան ամբողջովին դողում էր։ Բնազդմամբ նա հասկանում էր, որ այդ բոլորը ճիշտ է, բայց նորան անտանելի ծանր էր, երբ այդքան պարզութեամբ էին խօսում իրեն ցաւ պատճառող հարցի վերաբերութեամբ։

Մինչդեռ, միաժամանակ դսրան, անբաղդ Սիմօն Պետրոսը, յուսահատութեան նոր գրոհի տակ, ձեռքերն էր սեղմում։

—Ո՞վ էր կարող կասկածել ստորաքարշ տեղեկագրի գոյութեան մասին,—ասաց նա։—Եթէ գիտէիր դու այդ, Թշուառ անծանօԹ, և Երուսաղէմում էիր գտնւում, ինչո՞ւ համար մեզ չը նախազգուշացրիր։

—Ինչ՞ օգուտ պիտի լինէր իմ խօքերից,—ասաց Մելխիորը խորին արհամարհութեամբ։—Դուք ձեր Ուսուցչի խօսքերին չը հաւատացիք, միԹէ իմ ասածին կը հաւատայիք։ Դուք մարդկութեան իսկական էմբլիման (նշանաբան) էիք և էք. ինքնահաւան, անհաւատ և կեղծաւոր և որքան էլ որ դուք չը աշխատեցիք ստուերաձգել և կեղծել,—այնուամենայնիւ վերջում բոլորդ էլ անհաւատ և երկչոտ դուրս եկաք։ Իսկ ինչ ինձ է վերաբերում,—ճակատագրի փոփոխութեան դէմ չը պէտք է աշխատել, որովհետև սին ժամավաճառութիւն է այդ։ Ես կրկնում եմ, որ քահանաները սպանեցին Քրիստոսին և այդ ահարկու և մեծ սպանութիւնը դեռ ևս վերջացրած չէ։ Շատ ժամանակ պիտի անցնէ, մինչ նորա առաքման ամբողջ փառքը մեր երկիրը լիովին հասկանայ և ըստ արժանոյն գնահատէ։

Նա լռեց և նորա սևուկ աչքերը պայծառ կրակով վառուեցին։ Ապա նա նորից խօսեց աւելի հանդարտ.

—Այդպէ՞ս է դատավճիռը։ Բայց ահա և Գեթսեմանէի ծառերը։ Եթէ որ դու դեռ այլ ևս ինչ ունիս ասելու Յուդայի վերաբերութեամբ, աւելի լաւ կը լինէր բոլորն էլ աչժմ և այստեղ ասել, նախ քան մենք դէպի հեռուն կը գնանք։

Բնազդմամբ նա իւր ձայնը ցածրացրեց, նոյնպէս բնազդմունքի ազդեցութեան տակ երեքն էլ մէկզմէկու մօտեցան. մինչ այդ ժամանակ՝ լուսինը նոցա երկար ստուերները, ամբողջ ճանապարհի վենակ՝ լուսինը... ...ձգում էր զառիվայրի մօտ գտնուած ձիթենի ծառերի փոքրիկ ծառատունկի մօտ, ուրի կասաը լուսաւորուած էր աղօտ արծաթափայլ ստուերարկութեամբ։ Պետրոսը դողում և անհանգիստ ակնարկներ էր ձգում չորս կողմի վերայ, կարծես Թէ դարձեալ մի ականատեսի յանկարծակի երևումն գուշակելով։

—Այո, 'ի սէր ճշմարտութեան պէտի միտածները,—շշնջաց նա հազիւ լսելի ձայնով,—դուք պարտական էք Յուդայի մասին բոլորը գիտենալ, ինչ իմ լեզուն ընդունակ է ձեզ բացատրելու։ Նա յաւ պատանեակ էր. գեղեցիկ, կայտառ, քնքուշ և տարփալի, և մեռնել այդպէս—միայնակ, այնտեղ, ներքևում, խաւարի մէջ...

Ձեռքերը ամուր սեղմելով, նա աշխատեց ինքն իրեն զսպել և յոգնած ջղերին հանգստութիւն տալ, որոնք քանիցս ցնցուել էին, ապա՝ աւելի եւ մեղմ ձայնով, շարունակեց.

—Ես ձեզ ասացի, որ նա Կայիափայի մօտ գնաց, այդ երկու գիշեր առաջ էր, երբ մենք վերջին անգամ մեր Տիրոջ հետ էինք, երբ պատահեցինք Նորան Գեթսէմանէի մօտերքը։ Կայիափան բարկացած և սառնասիրտ էր ձևացել։

—Մենք չենք վախենում ձեր խելաթափու խեղաթիւր Գալիլէացի ֆանատիկոսից (մոլեռանդ), ասել է նա,—բայց եթէ խիղճդ անհանգստացնում է քեզ, Յուդաս, որ շատ բնական է, քանի որ դու քո ազգի օրէնքը և հաւատքը դրժեցիր,—քո ծառայութիւնը մենք չը պիտի մերժենք։ Բայց չը մտածես, որ քո օգնութեան համար ամբողջ սինեդրիոնը պարտական է շնորհակալիք արտայայտել քեզ. մեր քահանաներից շատերը չը պիտի կամենան օգտուել այն մարդուց, ով Աստծու սուրբ ծիսակատարութիւնները ձգելով, իւր նախահայրերի և հայրերի կրօնը թողեց։ Լաւ լսիր ինձ. մեզնից շնորհակալութիւն մի սպասիր, քանի որ դու ինքնակամութեամբ անջատուեցիր մեզնից և արհամարհեցիր մեր իշխանութիւնը։ Այդպէս, եթէ որ դու անշուշտ կամենում ես մատնել մեզ Գալիլէացի մարդին, անուանիր դորա վճարը։

Իսկ Յուդան այդ մասին առաջուց չէր մտածել. նա սաստիկ վշտանալով, մերժում է և տխրած տուն վերադառնում։ Նա բոլորը պատմում է իւր քրոջը և կցում. «Ես իմ Տիրոջս անարգ փողի չեմ ծախիլ, թէկուզ հէնց Նորա փառքի համար՞»։ Բայց քոյրը նորա վերայ ծիծաղելով, կատակի տակ է ձգում նորա խօսքերը։

—Միամիտ մարդ, ասում է նա։ Չէ՞ թէ դու քո Տիրոջդ չես ծախում. այդ տեղ վաճառ հանելու բան չը կայ։ Դու այդ կապակցութեանը միմիայն սովորաբար օրինական ձեռն ես տալիս։ Փարիսեցիների պատիւը չէ թոյլ տալիս նոցա այն մարդու չը վճարուած ծառայութեամբ օգտուել, ով բացարձակ ուրանում է նոցա հաւատքը, դաւանութիւնը, ծիսակատարութիւնը։ Վերցրու, ինչ քեզ առաջարկում են, միթէ դու կարող չը պիտի լինիս այդ փողերը հիւանդների և չքաւորների վերայ ծախսելու։ Յիշիր, որ դու քո Տիրոջդ ես ծառայում, որի մասին մատնութեան կամ վաճառման մասին խօսք լինել կարող չէ՞։ Քո աշխատանքդ այն կը լինէ միայն, որ դու փառքի ուղի կը պատրաստես Նորա համար, մտածիր,—իսկ համայն աշխարհիս հրաշք կը ընծայեմ։ Անիշան ձեւականութեան համար մի տանուիր և 'ի զուր ժամավաճառութիւն գործ մի դնիր։—Եւ Յուդան, նորից համոզուած, Կայիափայի մօտ է վերադառնում, ասելով.

—Դուք օրէնքներ ունիք, որոնց գոյութիւնը ինձ անհասկանալի է, իսկ եթէ օրէնքով այդպէս պէտք է վարուել, ուրեմն ինչ կը տաք ինձ, եթէ ես Նորան ձեզ մատնելու լինիմ.

Նոյն ժամայն Յուդայի աչքի առջևից երևան արծաթի դարսեցին, որպիսի վարձը նա բանադատուած և ակամայ ընդունեց։

—Աւա՜ղ։ Ո՞ւր է թէ գիտենար նա...—Այդ փողերը, օրէնքի հիման վերայ, օրինական հաստատութիւն էին կազմում, որ նա ոչնչով մեղաւոր չէ,—այդ Կայիափան, որոնք միևնոյն Կայիափայի համար մի տեսակ քօղի (ширма) տեղ էին ծառայում,—ծածկելու իւր միամտութիւնը այդ դէպքում, և հաստատելու համար,—որպիսին վաղուց անտի գործածական է,—թէ քահանայապետը կամաւոր մատնչին, ըստ նորա իսկ—մատնող և կամաց մատնութեան գինը վճարեց։ Ո՞վ պիտի մեղադրէր Կայիափային նորա դաժանութեան, չարութեան կամ սպանութիւն գործելու կարողութեան մէջ։ Կայիափային ոչ ոք չը կաշառեց։ Բոլոր յանցանքը միմիայն Յուդայի վերայ էր ընկած, և նա միմիայն պարտաւորուած պիտի լինէր այդ դարհուրելի ոճրագործութեան ամբողջ անտանելի ծանրութիւնը քարշ տալու, որպիսին, քանիցս վատ լինելով ամեն տեսակ ծանրեկ բեռնից, ծանրաբեռնեց Յուդային մինչ դժոխքի ուղիղ անդունդի մէջ։

Նա՝ Պետրոսը՝ երկու ձեռքով ճակատը սեղմեց և լռեց։

Բարաբբան տխրութեամբ նայում էր նորա վերայ, նորա իւրաքանչիւր շարժմունքները դիտելով և ամեն մի խօսքի վերայ խորին ուշադրութիւն դարձնելով։ Մելխիօրի աչքերը ցած էին ձգուած, նորա դէմքը խիստ ուշադրութիւն էր արտայայտում, չը նայելով որ այդ պատմութեան իւրաքանչիւր կէտը և ամեն մի շարժառիթը վաղուց յայտնի էր իրեն։

—Բոլորը շուտափոյթ կատարուեց—դարձեալ շարունակեց աշակերտը, տխուր և կարճ ժամանակամիջոց անցկացնելուց յետոյ։ —Ամբողջ անիրաւութիւնը, բոլոր չարութիւնը և համայն յուսահատութիւնը միանգամից մեզ վերայ ընկան մի հատ ծանրեկ հարուածով։ Օրէնքի շտապողութիւնը և կատաղութիւնը այնպէս բռնեցին

մեզ, ինչպէս սաստիկ փոթորիկը, որոնց հետ մաքառելու մենք ո՛չ առնութիւն ունէինք, ո՛չ էլ ուժ։ Գեթսեմանէ պարտիզի մուտքի մօտ կերոններով և զրահաւորուած պահապաններով, սպասում էր Յուդան, և երբ Ուսուցիչը ծառերի խիտ շուաքների տակից դուրս եկաւ, Յուդան գնաց Նորան ընդ առաջ։ Սէրից, երկիւղից և ակնկալ ու յաղթանակից գունատ, բացականչեց նա. «Ուրախ և ո՛ղջ լեր, Ռաբբի» և համբուրեց Նորան*)։ Մեր շուրջը մեռելային լռութիւն տիրեց. Թւում էր, որ երկիրը և աստղերը՝ լուռ մնջիկ՝ ուշադիր էին մեզ։ Ահա՛, մտածեցի ես, կը երևի Աստծու փառքը, և անշուշտ այնպէս, ինչպէս Նա մեր դէմ պայծառակերպուեց այն լեռան վերայ… ճիշտ այդպէս Նա պիտի փայլէ այստեղ ես նոյն շքեղութեան մէջ, որպիսին այնքան, յատուկ է Նորան։ Ամենակարող և անհարկու Նա ակնթարթի մէջ կը ոչնչացնէ ու կը կործանէ բոլոր թշնամիներին։ Բայց Վարժապետը ոչնչով չը փոխուեց և ոչինչ չը ասաց. հեզ և լռելեայն Նա մի առ ժամանակ Յուդային նայեց, ապա մեղմ ձայնով ասաց.

—Ընկեր, վասն որո՞յ եկերդ. Յուդա, համբուրելո՛վ մատնես զՈրդի մարդոյ։

Յուդան, երկիւղի մէջ, կատաղի աղաղակ բարձրացրեց, ապա տատանուելով-ռանեց իմ հագուստներից և թոթուեց.

—Յաւանական է, որ ես մեղանչեցի, կամ թէ Նա խաբում է մե՛զ**)։

Նոյն պահուն զրահաւորուած պահապանները, չը համարձակելով ձեռք տալ Տիրոջ, խոնարհութեամբ կանգնած, էին մինչ Նա ինքը

---

*) Предательское лобзаніе Іуды (Ев. Мѳ. 26, 48—49, Лк. 22, 47—48) Ա.) Ա.) Թարգմ՝—Յուդայի մատնող համբոյրը (Աւ. Մթ. 26, 48—49. Ղկ. 22, 47—48)։

**) Յուդան իբր մատնութեան նշան չէր կարող համբոյրը ը ընտրել, որովհետև ըստ ճշմարտանման նկարագրութեան «Բարաբբայի», Նա դեռ Քրիստոսի և իւր մէջ եղած կապը խզուած չէր կարծում, քանի որ դեռ նոր էր սպասում իւր Տիրոջը փառքի կատարեալ սահմանին հասած գտնելու, շնորհիւ, իւր մատնութեան հետևանքից առաջացած, մօտակայ կատարուելիք հրաշքի, որպիսի կարծիքին 'ի վկայութիւն կարելի է բերել Աւետարանիչների Յուդային վերագրած խօսքերը «Ողջ՛ր վարդապետ»։ Պետրոսն անգամ, երբ հիասթափւում է Յիսուսի հրաշքով ազատուելու վերաբերութեամբ, միևնոյն ժամանակ անկարող լինելով չը սիրել Նորան և այդ դէպքում (ապա թէ), դիմում է սրի օգնութեան։

Նմեթադր. Հայ թարգմ.

ձը դարձաւ Նոցա սոյն խօսքերով. «Զո՞ խնդրէք»։ Իսկ նոքա՝ շփո-
թուելով՝ պատասխանեցին. «զՅիսուս Նազովրեցի»։ Ուսուցիչը Նոցա
վերայ նայեց և ասաց. «Ես եմ»։ Զինուորները, կայծակից խփուածի
նման, այդ խօսքերից տարածուեցին և երեսների վերայ դէպի գե-
տին ընկան։ Ես շփոթութեան մէջ մտածեցի, որ այն ժամը, որին
մենք սպասում էինք,—հասաւ, քանի որ այնքան մեծութիւն, այն-
պիսի արժանաւորութիւն և այնչափ ուժ, որ նոյն րոպէին յուսաւո-
րում էին Տիրոջը,—չէին երևացել մահկանացուի դէմքի վերա։
Դարձեալ Նա դէպի գունդը դարձաւ սոյն խօսքերով. «Զո՞ խըն-
դրէք»։
Եւ նորից դողդոջ ձայնով պատասխանեցին նոքա. «զՅիսուս
Նազովրեցի»։
—Ասացի ձեզ՝ թէ ես եմ. արդ եթէ զիս խնդրէք, թոյլ դուք
դոցա երթալ։ —Եւ դանդաղութեամբ դէպի մեզ դառնալով, Նա իւր
ձեռքը շարժեց, այդ տատանմունքով մեզ հետ մնաս բարեաւի նշա-
նը տալով։
Ուշադրութեամբ Նորա վերայ նայելով, որպէս թէ մի ուրուա-
կանի, մենք նոյն ճանապարհով գնացինք դէպի մի կողմ, իսկ Նա,
վեհութեամբ դէպի զինուորները մօտենալով, ինքնակամ նոցա մատ-
նուեց։ Նոքա փոքր ինչ վստահութիւն ձեռք ձգելով, վերցրին նորա
և… տարան։ Մենք, մենք—նորա աշակերտներս—նայեցինք նորա յե-
տևից, ապա, մէկզմէկու նայելով սկսեցինք լաց լինել և հեկեկալ։—
Նա Աստուած չէ, այլ մարդ։ Ապա մենք բոլորս էլ զանազան կողմե-
րի վերայ վազեցինք և միմիայն ես, կամենալով այդ չարիքի վախ-
ճանը տեսնել, գնացի Ուսուցչի յետևից, բայց ինձ Նորանից հեռու
պահելով մինչ Կայիափայի տունը՛։
Այդտեղ Պետրոսը կանգ առաւ բուռն այլայլմունքի ազդեցու-
թեան տակ։ Նորա աչքերը արցունքով լցուեցին, շնչառութիւնը
կտրուեց։ Նա իւրն ուժ տալով, տակաւ առ տակաւ ուշքի եկաւ ու
խռպոտ, ամօթահար ձայնով մրմնջաց։
—Եւ այդ տեղ ես ուրացայ Նորա՛ն։ Խոստովանում եմ—ես
ուրացայ՛։ Այո, այդ արդար և իրաւ է։ Երբ քահանայապետի խօս-
քամոլոր սպասուհիները և ծառայողները յայտնեցին, որ ես էլ նորա
աշակերտն եմ,—ես բարկացայ և ասացի՝ չեմ ճանաչում ես այդ մար-
դուն, և կրկնեցի դարձեալ. ոչ գիտեմ զայրն զորմէ դուքդ ասէք։
Բայց, 'ի միջի այլոց, այդ ճիշտ էր, քանի որ ես կարծում էի, կամ
այնպէս էի մտածում, որ Աստծուն եմ ճանաչում, այլ ոչ թէ հասա-
րակ մարդու։

Մելխիօրը իւր թափանցիկ աչքերը բարձրացնելով, զննողական ակնարկ ձգեց Պետրոսի վրայ։

—Դու սոփեստ *) ես,—ասաց նա սառնութեամբ։ Դու 'ի զուր ժամավաճառ ես լինում պատճառներ և ներման միջոցներ. ձեռք ձգելու թէ քո յանցանքների և թէ անզգուշութիւններիդ վերաբերութեամբ։ Եթէ որ դու ճշմարիտ սրտով ճանաչէիր Աստծուն, դու Նորանից բաժանուել չը պիտի կարողանայիր, բայց եթէ ճիշտ խօսենք, Պետրոս, դու Նորան այնպէս էիր հաւատում, ինչպէս երկրային Թագաւորի, որը կարող պիտի լինէր Երուսաղէմին տիրելու, որին դու կարճ ժամանակ էիր որոշել, Նորա հզօր կարողութեան վերայ ակնածելով։ Այդ յոյսի վերայ սիրահարուելով, երկնային իրերի վերայ այլ ևս չը մտածեցիր դու։ Տիրանալ աշխարհին—ահա թէ ինչ էր քո ցնորքը։ Կարող է պատահել, որ դու և քեզ հետևողները, գուցէ քեզնից յետոյ, և տիրանան էլ նորան...

Պետրոսի երեսը շառագունեց, իսկ աչքերը բարկացայտ փայլատակեցին։

—Դու շատ խիստ ես դատում ինձ, անծանօթ.—ասաց նա։—Բայց, կարող է պատահել, որ ճշմարտութեան մի մասնիկ ևս լինէ քո խօսքերի մէջ. շատ բնական է փառք սպասել Նորանից, ով գերագոյն և փառաւորեալ է։ Եթէ Աստուած—Աստուած է, այն ժամանակ ինչո՞ւ չը պիտի Նա փառաւորէ Իրե՞ն։ Եթէ Նա աշխարհիս տէրն է, հապա ինչո՞ւ Նորա իշխանութիւնը ընդհանրական չը պէտք է լինէ և բոլորին ևս տեսանելի։

—Նա Իրեն փառաւորեց, և Նորա իշխանութիւնը անվիճելի և տեսանելի է,—ասաց Մելխիօրը։—Իսկ դու, Կեփաս, Նորա միջնորդը չես—և Նա երկնքից վայր չի իջնիլ, որ քեզնից աշխարհային օրէնքներ սովորէ։

Պետրոսը լռեց։ Բարաբբան աւելի ևս մեծ հետաքրքրութեամբ սկսեց նորա վերայ նայել, նա արդէն հասկանում էր այդ մարդու անբարդ և անհաստատ բնաւորութիւնը, որի մէջ երկչոտութիւնը և արժանաւորութիւնը, երկիւղը և բարկութիւնը, զղջումն և հպարտութիւնը դեռ ևս կռւում էին իրար մէջ։

—Ինչ ուզում ես, ասա,—շարունակեց նա վստահ տեսքով,—

*) Софистъ—софизмъ'—Սոփեստ (իմաստակ)—Յին Յունաստանի փիլիսոփաներ և նոցա ուսմունքը, որով օգտւում էին նոքա մի որևէ ենթադրութիւն գիտմամբ սուտ սկզբունքով կատարելու համար։ Յ. Յ. Թ.

բայց իմ հոգու վիշտը և հիասթափութիւնը պատճառ եղան, որ ես մարդկութեան մէջ պտտիւ չը ունեցող և դժգոհ եմ երևում։ Այո, Աստծուն փառաբանելու համար և դա իրագործելու ցանկութեամբ, ես ամբողջովին այրւում էի։ Նորան այնքան դիւրին էր իւր մեծութիւնը ցոյց տալ, իսկ Նա ժողովրդի ներկայացուցիչների մօտ լռում էր։ Նորա հնազանդութիւնը ինձ խելագարութեան էր հասցնում, և երբ Նա, պահապաններով շրջապատուած, անցաւ իմ մօտից և ինձ վերայ նայեց,—ես հեկեկացի ոչ միայն իմ անփական թուլութեան համար, այլ աւելի ևս Նորա չկամութեան համար փառաբանուել այն մարդկանց առջև, որոնք յանդգնում էին մօտ գնալ դէպի Նա։—Աստուածութիւնը միթէ թոյլ պիտի տար այդքան համարձակ քայլ անել դէպի իւր Ստեղծողը *)։ Մինչ Նորան Պոնտացի Պիղատոսի մօտ կը տանէին, Յուդան, յուսահատ և կատաղի Կայիափայի մօտ վազեց. այնտեղ էին միւս քահանաները ևս։ «Մեղայ,—կոչեց նա ահարկու ձայնով,—զի մատնեցի զարիւն արդար»։ Իսկ նոքա միայն ծիծաղ բարձրացնելով, պատասխանեցին. «Մեզ չէ փոյթ, դու գիտես»։ Նա յատակի վերայ ձգեց բոլոր երեսուն արծաթն, որ տուել էին նորան, և դուրս եկաւ. ես տեսայ նորան, երբ Նա վազում էր քահանայապետի ապարանքից, խելքը կորցրածի նման և կանգնեցրի. «Յուդա, Յուդա, ո՞ւր ես վազում դու»,—կոչեցի ես Նորան։ Նա ինձ մի կողմ հրեց։ «Տուն, տուն.—աղերսեց նա ինձ։—Թո՛ղ տուր ինձ։ Տուն նորա մօտ, միակ քրոջս որին ես սիրում էի և որը համոզեց իմ հոգուն մատնութիւն գործելու այս գիշեր։ Թոյլ տուր ինձ։ Որովհետև ես պէտք է անիծեմ նրան նախ քան մահս. Նորա հոգին պէտք է իմ հոգու յետևից շրջմոլիկ շրջէ, մինչև յաւիտենական դատապարտութեան արսորավայրը, ց'յաւէտ տանջանքների մատնուելու համար։

Այստեղ Պետրոսը իւր ձեռքերը բարձրացրեց գեղեցկադէպ

*) По Евангелію ап. Петръ горько заплакалъ именно надъ своею слабосьтю, высказанною въ отреченіи отъ своего Господа и Учителя (Ев. Лк. 22,56–62; Мѳ. 26,69–75): Цензоръ. Ա)

Ա) Թարգմ.' —Ըստ Աւետարանի Պետրոս առ. դառն արտասուեց միմիայն իւր թուլութեան վերայ, որ առաջ էր եկել նորա ուրանալուց թէ իւր Տիրոջը և թէ Ուսուցչին (Աւետ. Ղկ. 22,56—62. Մթ. 26,69—75)։

Դրաքննիչ (Ցենզոր)։

շարժմունքով, որպէս թէ այն յուսահատ մարդու անյայտացող կերպարանքը նորից տեսած լինէր նա։

—Անցած գիշեր, ամբողջովին,—շարունակեց նա, ցածրացնելով ձայնը,—ես 'իզուր տեղը փնտռեցի նորան։ Ես անվերջանալի անգամ թափառեցի Իսկարիովտացու տան չորս կողմը, բայց ոչ ոքի չը տեսայ, որ համարձակուէի նորա մասին տեղեկութիւն քաղել. այն չարաբաստիկ այգին, որի մէջ մենք խօսում էինք Յուդիթի հետ, ամայի և անձայն էր։ Ապա ես քաղաքի խառնիխուռն փողոցներով շրջեցի. գնացի դէպի Բեթանիա տանող ճանապարհով, մինչ՝ վերջապէս մի որ և է չար հոգի-մտաւորապէս դէպի Գեթսեմանէ և շրջակայքը չը դարձրեց իմ քայլերը։ Եւ այնտեղ, այնտեղ՝ վերջապէս՝ ես գտայ նորան։

Նա յանկարծակի կանգ առաւ, ապա շուտափոյթ սկսեց դէպի առաջ շարժուել։

—Գնանք,—ասաց նա, նայելով Մելխիօրի և Բարաբբայի վերայ։

—Գնանք, գիշերը առաջանում է, նա միայնակութեան մէջ շատ երկար ժամեր է անցկացրել։

Ձառիվայր ճանապարհը շուռ էր տալիս դէպի խիտ ծառաստանը, լուսնի թոյլ լոյսով աղօտափայլ տարածութիւնը խորհրդաւոր տպաւորութիւն էր թողնում։

—Հանդարտ։ Հանդարտ.—շշնջաց նա։—Նա մեռած է, բայց նորա աչքերի մէջ տարօրինակ արտայայտութիւն կայ, որպէս թէ պատրաստ է ամեն բան լսելու։ Չէ թէ մենք չը գիտենք հաստատապէս գուցէ, մեռած մարդիկ ես յսում են։ Զգոյշ քայլեցէք, ահա այնտեղ Գեթսեմանի այգին է, իսկ նա պարտէզի մէջ չէ, նա դրսեւում է մնացել, համարեա նոյն տեղում, որտեղ մատնեց իւր Ուսուցչին։ Գնանք, մենք կը համոզենք նորան հեռանալ մեզ հետ, երեւս էլ կը տանենք նորան տուն և մեծ քնքշութեամբ. կարող է և այնպէս պատահել, որ Յուդիթը զարմացած է նորա բացակայութեամբ և սիրեցեալ եղբօր վերադարձին է սպասում։ Ո՜հ, ինչպէս պիտի ուրախանայ նա. ինչ քնքուշիկ ժպիտ փայլեցնէ շուրթերի վերայ, տեսնելով, թէ որպէս և ինչ կերպով վերադարձաւ իւր եղբայրը...

Եւ նա նորից առաջ խաղաց։ Բարաբբան սարսափից դունատուելով, Մելխիօրի ձեռքից բռնեց։ Աշակերտի կոպիտ կերպարանքը կիսախաւարի մէջ ինչպէս մի մութ, դողդոջ ստուեր էր երեւում. նա ճանապարհից շեղուեց մի փոքրիկ անտառի մէջ, որտեղ հնադարեան ձիթենի ծառերը, իրենց նիհար սև ճղները ցած ձգելով, որոնք ուրուական ձեռքերի նման էին երեւում, անցորդներին լռիկ խորհուրդ

էին տալիս չը մտնել այդ տեղ։ Այդ սպառնալից մութ մուտքի դէմ կանգ առնելով, Պետրոսը խորհրդաւոր նշան արաւ իւր ճանապարհորդակիցներին և անյայտացաւ ճղների տակ*)։

Դանդաղ, անձայն քայլերով, երկիւղի զգացմունքի տակ,—Մելխիօրը և Բարաբբան հետեւում էին նորան։ Խիտ տերեւները ծանր և ծանր ընկնելով, ծածկում էին նոցա որ և է օտարապատկան ակնարկից։ Համարեա թէ քամի չը կար, բայց տերեւները մի տեսակ գաղտնախորհուրդ սօսափիւն էին տարածում այն խորհրդաւոր տեղում. այդ սօսափիւնը նմանում էր ուրուականների ձայների, 'ի մի հաւաքուած առասպելական ողբանքի, որը մի ինչ որ զարհուրելի բան էր շշնջում, իրենց՝ սեսիլքներին՝ միայն յայտնի։ Գուցէ այդ տերեւները շշնջում էին տանջող հոգու անվախճան խայթոցների գաղտնիքի մասին, կամ մեռնող մեղաւորի անասելի երկիւղի վերաբերութեամբ, այն յանցաւորի, որը իւր սեփհական ձեռքով խեղդամահ էր արել իրեն, և որը կախուած էր մնացել խորին հանգըստութեան մէջ ու անթափանցիկ խաւարում.....

XXII.

Մինչ այդ Երուսաղէմ քաղաքը արթուն էր և ուրախ. իւրաքանչիւր տան լուսամուտի մէջ կրակներ էին երեւում, իսկ բացուած դռներից և հոտաւէտ այգիներ միջից երաժշտութեան և ուրախ

*) Պետրոս առ. Ս. Գրքից յայտնի է մի քանի իրար հակասող տիպերով, օրինակ անչափ սիրելով Քրիստոսին—երեքս ուրանում է, եկեղեցու վէմ կոչուելով, անմիջապէս և սատանայ է կոչւում Յիսուսից, կամ «դու ես Քրիստոսն որդի Աստուծոյ կենդանւոյ»-է կոչում և կամ Տիրոջից՝ «թերահաւատ՝ ընդէր երկմտեցեր» լսում և այլն։ «Բարաբբան», այդ բոլորը 'ի նկատի ունենալով, աւելի ես Պետրոսի Տիրոջը բարձր գիրքի մէջ տեսնել ձգտումը, ինչպէս՝ օրինակ՝ պայծառակերպութեան ժամանակ, որ կոչում էր. «Տէր՝ բարւոք է մեզ աստ լինել. եթէ կամիս՝ արասցուք երեք տաղաւարս...», կամենում է նորա այդ բնութեան թերութիւնը շեշտել, ուստի մի քիչ վերև ասում է՝ թէ նա միմիայն իւր ուրացումն 'ի նկատի չունէր, այլ արտասւում էր Տիրոջ փառքը չը ցոյց տալու վերայ ևս։

Ծան. Հ. Թարգմ.

պարերի ձայներ էին լսում, որոնք խաղաղ օդի մէջ կարծես թէ լողում էին։

Նոքա, որոնք հէնց նոյն օրը մեռնելու մօտ էին երկրաշարժի և անսպասելի խաւարի երկիւղից,—այժմ իրենց աներկիւղ դրութեան մէջ գտնուելու և ազգականների փրկութեան համար ցնծում և ուրախ խնջոյքներ էին կազմում։

Սպառնական երևոյթներ այլ ևս չը կային. գիշերը թագաւորում էր. անամպ երկինքը սքանչելի տպաւորութիւն էր թողնում. ամպի ոչ մի կտոր չէ պղտորում համարեա թէ լուսնի լրման հանդարտիկ փայլը. տեղ տեղ ընկերակիցների ուրախ խմբեր էին հաւաքուած, որոնք իրար հետ խօսակցութիւն էին մղում, թէ ազատ և թէ անկախ պահելով իրենց։

Խօսակցութեան գլխաւոր նիւթը՝ ի հարկէ՝ Գողգոթայի տեսարանն էր,—բոլորն էլ միաձայն գովում և զարմանում էին Նազովրեցու այլական մահի վերաբերութեամբ։ Բոլորն էլ իրար հետ համաձայնուեցին, որ այնքան զմայլելի, մարդկային պատկերից դուրս, գեղեցկութիւն, այնքան մեծափառ արքայական իրան, որպիսին Նորանն էր, նոքա դեռ ոչ մի ժամանակ չէին տեսել. բայց միաժամանակ և գտնում էին նոքա, որ Նրան անշուշտ հարկաւոր էր մահուան արժանացնել։ Նա երկիւղալի գիրք էր բանել, Նա կամենում էր համայն աշխարհս վերանորոգել, Նորա ուսմունքը՝ գլխաւորապէս՝ քահանաների և ծերակոյտի ներկայացուցիչների դէմ էր ուղղուած։ Նա մի տեսակ գաղտնի, ներքին ուժ էր պարունակում Իւր մէջ, Նա հրաշքների էր տիրում և հանճարեղ ու ակնյայտնի պաշտպան աւելի ևս թոյլերի համար, որոնց Իւր խելքով աւելի շատ էր գերում,—ուրեմն իմաստնաբար և լաւ վարուեցին, որ խաչեցի՜ն Նորան։ Այն մարդիկ, որոնք Յունաստանում կամ Հռոմում ժամանակ անցկացնելով,—նոցա վարք ու բարքերից տեղեկութիւն ունէին, խորամտութեամբ տատանում էին իրենց գլուխը և աղօտ կերպով պատմում ինչ որ փիլիսոփաների վերաբերութեամբ, որոնք սկզբմունքով դէպի ճշմարտութիւնը ձգտելով,—արհամարհում էին խաբեբայութիւնը և կեղծի՜քը։

—Այդ Գալիլէացին այդպիսիներից էր,—ասաց մի մտածկոտ ծեր դպիր, որը կանգնած լինելով իւր բնակարանի սեամի վերայ, խօսում էր իւր ծանօթներից մէկի հետ։—Նա, բացի այդ, դեռ ապագայ կեանքի և յաւիտենական աշխարհի գոյութեան մասին էր

խօսում։ Սոկրատէսի *) մասին ևս մենք բաւականին պատմութիւններ էինք լսել—նա նոյնպէս պատկառելի մարդ էր, ճշմարտութիւնը սիրող—և հէնց նորան էլ սպանեցին։ Բայց նա մի ծերունի մարդ էր,—իսկ այդ Նազովրեցին՝ երիտասարդ։ Մահը՝ երիտասարդութեան մէջ, դեռ վաղ ժամանակ խղճալի է։ Բայց՝ ի հարկէ՝ այս դէպքում լաւ է, քանի որ նա, խելակորոյսի նման, ընդ միշտ յաւիտենական կեանք էր մարգարէանում։ Երկինքը բոլորիս էլ ազատեց այն ուրիշ աշխարհից, իսկ ես կասեմ ձեզ, որ մեզ հէնց այս աշխարհն էլ բաւական է, մինչև անգամ, եթէ մի ուրիշ աշխարհ գոյութիւն էլ ունենար,—մեզնից ոչոք արժանի չէ ժառանգելու նորան. մենք մեռանք,—և ամեն ինչ վերջացած է. ննջեցեալներից դեռ ո՛չ մէկը յարութիւն չէ առե՛լ։

—Իսկ դու լսեցիր թէ ինչեր են անում,—զգուշութեամբ ասաց նորա բարեկամը,—ասում են, որպէս թէ նոյն այդ Նազովրեցին յայտարարել է, որ նա ինքը յարութիւն կառնէ։

Ծեր դպիրը արհամարհութեամբ ծիծաղեց։

—Ես շատ եմ լսել,—պատասխանեց նա,—բայց ես պատրաստուած չեմ ամեն մի բանի հաւատալու, և բոլոր, երբ և իցէ արտասանուած, յիմարաբանութիւններից այդ ամենածանր տպաւորութիւն է թողնում և ամենամեծն է՜։ Ոչ մի կարծիք չը կայ, որ Գալիլէացու հետևողները պիտի գողանային նորա մարմինը, եթէ միմիայն այդ կարելի լինէր, և անգամ պատրաստ պիտի լինէին երդուելու, որ նա մեռելների միջից կանգնեց. բայց Կայիափան նախազգուշացրուած է և նա իւր միջոցները ձեռք պիտի առնէ այդպիսի-պատահել կարօղացող խաբեբայութիւնների առաջն առնելու համար։ Այդ տեսակ ձայներից անհանգիստ մի լինիր։—Մեռած մարդը,—թող մինչև անգամ Աստծու մարգարէ լինէ նա,—ընդ միշտ մեռած է՜։

Եւ նա ներս մտաւ իւր տունը։ Նորա ծանօթը, խոր մտատանջութեան մէջ ընկղմուած, հեռացաւ։

Երուսաղէմի բոլոր փողոցները ողողուած էին խորհրդաւոր լուսնի արծաթանման լոյսով,—օդը փափուկ էր և ամբողջովին վարդերի անուշահոտութեամբ համակուած, որոնց օգնութեան էին հաս-

*) Սոկրատէս (Сократъ) յոյն փիլիսոփայ, որը բանականութեան այնպիսի օրէնքին էր հաւատում, որը որոշում էր ճշմարտութիւնը։ Նորա մտածմունքը հիմնուած էր բարձր բարոյականութեան վերայ։ (энциклопедич. словаръ Филипова. բաց. Հ. Թարգմ.

նում դեռ նա նոր բացուող նարնջի ծառերը. երիտասարդների և երիտասարդուհիների խմբերը ման էին գալիս բազմաթիւ այգիների զով ծառուղիների մէջ. նոքա թէ ծիծաղում էին և թէ խօսակցում, բայց լինում էին և երգեցիկ խմբեր, որոնք ուրախ կամ թախծելի երգերով ընդհանուրի ուշադրութիւնը իրենց վրայ էին դարձնում.

Երուսաղէմը, ինչպէս անվերջանալի երջանկութիւն պարգևող կախարդական աշխարհ, արևելեան գիշերի փափուկ ճառագայթացոլութեան մէջ էր գգւում։ Այդ բոլոր թեթևամիտ ամբոխի վերայ ոչ մի ցաւակցութիւն չէր նշմարւում. նոցա դէմքերի վերայ դրոշմուած չէր Փրկչի աշխարհային մահուան տագնապի կնիքը, Որը իւր կեանքն իսկ չը խնայեց՝ մարդկութիւնը փրկելու համար։

Այդ փողոցներում թագաւորող շարժմունքի և զբզման հետ մեծ հակապատկեր էր կազմում այն խորին խաղաղութիւնը, որը տիրում էր հռովմայեցի կառավարիչ Պիղատոսի տան վերայ։ Միակ առաջացող ձայնը շատրուանին էր պատկանում, որը խաղում էր պալատի արտաքին կամարների տակ, և որից ջուրը մարմարեայ աւազանի մէջ թափելով, երաժշտական թեթև պատկեր էր տալիս իւր կենդանի քըքջոցի շնորհիւ և այդ բոլորը՝ կարծես թէ՝ իւր սեփհական մխիթարութեան համար։ Ոչ մի թեթև քամի, անգամ զեփիւռ, չէին փաղում սպիտակ վարդի թերթիկների վերայից, որոնք գունատ մետաքսի փունջեր էին երևում—մութ պատին խփուած. այդ տեղ մինչև անգամ ծղրիդը ևս իւր միատեսակ և տաղտկացուցիչ սուլոցը կտրեց, տեղի տալով խորհրդաւոր լռութեան զգացմունքին։

Հազիւ երբեմն ծառան, անձայն քայլերով, որևէ յանձնարարութեան համար, անց էր կենում գաւիթի միջից, այս կամ այն կողմը ընկնելով թէ յանձնարարութիւն կատարելու և թէ պատուէր տալու համար։ Մի հռովմայեցի պահապան ևս հանդարտութեամբ յետ և առաջ էր քայլում։ Նորա սանդալների մէջ առնուած ոտքերը համարեա թէ ձայն չէին հանում, մինչ նա համաչափ և փսեմաբար կը քայլէր միևնոյն տեղով. Նորա տէգը իւր յետևից երկար և օձանման ստուեր էր ձգում։ Պիղատոսը հէնց վաղ առաւօտից ջղային ամենալուրջ քայքայումն ունէր, որից նորա մտերիմ մերձաւորները սաստիկ անհանգիստ էին լինում։ Հպարտ, հրամանատէր տան տիկնոջ պատուէրի հիման վերայ, լռիկ հանդարտութիւն էր տիրում տան մէջ։ Երբ գիշերը ընկաւ, այնպէս էր երևում, որ նոյն խաղաղութիւնը ոչ ոք չը պիտի խզէ մինչ ամենաուշ առաւօտ և աւելի նա հանդարտութեամբ։ Յանկարծ մի ուժգին, բռնադատող բախիւն

հնչեց դէպի գաւիթը տաջնորդող դռների մօտ։ Պահապանը, այնտեղ վազելով, կատաղութիւնից և շտապելուց, համարեա թէ դժուարանում էր խօսել։

—Կը խնդրէի քեզ, որ կտրէիր քո այդ կոպիտ դուռ ծեծելու ձևը,—ասաց նա, երբ փոքրիկ լուսամուտից նայելով՝ զանազանեց, որ դրսում պատկառելի տեսքով և լաւ հագուստների մէջ մի մարդ կայ կանգնած։—Դու—միևնոյն է—չը պիտի կարողանաս ներս մտնել։ Ողորմած մեր կառավարիչը տկար լինելով՝ ոչ ոքի չէ ընդունում։

Բայց՝ այնուամենայնիւ՝ անկարելի է, որ ես չը խօսիմ նորա հետ,—պատասխանեց նորաեկը։—Այո, պարտաւոր եմ ես տեսնել կառավարչին, և այդ անշուշտ։—Խնդրում եմ քեզ, ընկեր, մի յապաղիր,—իմ գործս շտապողական է։

—Ես ասացի քեզ, որ նորան անկարելի է տեսնել,—պատասխանեց դռնապանը։—Միթէ կամենում ես, որ մեր գլուխը կտրեն անհնազանդութեան և անունկնդրութեան համար, կամ թէ չէ խաչեն, ինչպէս այն Նազովրեցուն։

—Իմ գործս էլ հէնց Նազովրեցուն է վերաբերում։—Յայտնիր այդ կառավարչին և ասա, որ Յովսէփ Արիմաթեացին սպասում է դրան մօտ։

Դռնապանը դադարեց վիճելուց, և ամբողջ գաւիթը անցնելով, մտաւ տան մէջ։ Քիչ անցած, նա վերադարձաւ մի բարձր ծառայողի ուղեկցութեամբ, որի վզի շուրջը արծաթէ ծանրիկ շղթայով էր զարդարուած, որը ընկնում էր մինչև նորա կուրծքը։

—Յարգելի խորհրդական,—ասաց այդ վերջինը, խոնարհութեամբ ողջունելով Յովսէփին։—Շատ ուշ է և դու չես կարող Պիղատոսի հետ խօսակցութիւն ունենալ, որը,—միևնոյն ժամանակ,—առաւօտեան անցքերից յետոյ մի տեսակ ջղային և հիւանդոտ դրութեան մէջ է գտնւում, բայց ինձ տիկին Յուստիցիան հրամայեց իւր կողմից ասելու քեզ, որ նա ինքն է պատրաստ քեզ ընդունելու, քանի որ գործը Նազարէթից եկած Մարդուն է վերաբերում։

—Այո, այո,—Յովսէփը անհանգիստ,—աղերսում եմ քեզ, տար ինձ շուտով քո հրամայողուհու մօտ, քանի որ կորցրածս իւրաքանչիւր րոպէին պիտի իմ գործիս կատարումը բարդէ և, զանազան վտաթար գործողութիւնների պատճառ դառնալով, ծանրացնէ նորան։

Ծառայողը այլ ևս ոչինչ չասաց, այլ նշան տուեց դռնապանին, որ դուռը բանայ, բայց միմիայն՝ որքան կարելի է՝ զգուշութեամբ և առանց ձայնի։ Ապա նա գաւիթից անցնելով, կանգ առաւ, մի

ինչ որ բան բացատրեց պահապանին, և, վերջապէս, առաջնորդեց յաճախորդին դէպի կամարապատ բարձր ապարանքը, որը զարդարուած էր բազմաթիւ ծաղկափթիթ բոյսերով, որոնք զովութիւն էին տանում ջրի կայծոտ, երփնագեղ շիթերից. այդ ջուրը քանդակածոյ առիւծի ահռելի բացուած բերանից թափուելով, մասամբ լցւում էր գեղին մարմարից ձևակերտուած խոր աւազանի մէջ և՛ շատ թոյլ մասամբ՝ ցնդում էր օդի մէջ, նորա թեթև ցրտութիւնը զգալի զովացնելով, մանաւանդ արեգակնակէզ օրերում։ Այդ տեղ ծառան անյայտացաւ, և Արիմաթեացին միայնակ մնաց։ Նա սկսեց անջաղել անհամբերութեամբ յետ և առաջ քայլել, տխուր մտատանջութիւնների մէջ խորասուզուած լինելով և աւելի ու աւելի նեղուելով համբերատարութիւնից. Նա սաստիկ դողաց, երբ մի հանդարտիկ ներդաշնակաւոր ձայն տարածուեց, հէնց ուղիղ նորա մօտից սկսուելով.

—Քրիստոսի մասին՝ ինչ։—Մի՞թէ դուք ճշմարտապէս սպանեցիք Նորան։

—Տիրուհի,—թոթովեց նա և դէպի Պիղատոսի կինը դարձաւ, որը՝ անլսելի քայլերով՝ հէնց նոր էր ներս մտել։ Մի րոպէաչափ նա բոլորովին այլայլուեց ու խօսք չը գտաւ պատասխանելու.—Յուստիցիայի մութ աչերի թափանցիկ ակնարկը շփոթում էր Նորան։ Այդ կինը աննման գեղեցկութեան տէր էր. Նորա գեղեցկանաղ դէմքի խիստ գծերը և կնճռոտ յօնաճօճութիւնը 'ի մի խառնուելով, աւելի խստութիւն, քան թէ մեղմութիւն էին արտայայտում, որի շրթունքները, մի որևէ ներքին յուզմունքի պատճառով, դողում էին, երբ նա նորից խօսել սկսեց.

—Չէ՞ թէ դու էլ ես հրէա, ուրեմն կը նշանակէ, մասնակից ես այդ սպանութեան։

Այդքան խիստ մեղադրանքից առաջացած ցաւը ստիպեց Յօսէփին ուշքի գալու։

—Պարկեշտասուն Յուստիցիա, յանուն Աստուծոյ աղաչում եմ քեզ, իմ մոլորած ազգի եղեռնագործներից մի կարծիր ինձ և դասակից մի անիր խաչահաններին,—ջերմաձայն ասաց նա։— Եթէ ես կարող լինէի այն Երկնային Նազովրեցուն ազատելու,—ուրախութեամբ և ինքնակամ, անգամ կեանքիս գնով, պիտի յաջողեցնէի այդ։ Այդ պիտի անէի ես, որովհետև Նորա սուրբ ուսմունքով օգտուում էի, որի հարազատ աշակերտն եմ, չը նայելով, որ այդ ծածուկ եմ պահում, բանի որ չեմ կարող հայրենակիցներիս խստութիւնից երկիւղ չը կրել, որոնք անշուշտ կը արտաքսէին ինձ իրենց

շրջանի միջից, եթէ գիտենային, թէ ինչպէ՜ս է փոխուել իմ հոգին և ինչ սկզբունքի եմ ծառայում։ Բացի դա, ես մարգարէների բոլոր նախագուշակութիւնները ջերմեռանդութեամբ ուսումնասիրեցի և այդ է պատճառը, որ ես ընդունում եմ այն բոլորը գրական կերպով, ինչ պատահեց և անցկացաւ այսօր,—որոնց միմիայն Ամենաբարձրեալի գործք և խօսքերի կատարումն պիտի համարել։ Հոգուս չափ խորին շնորհակալիքս վեր առաքելով դէպ Աստուած, շնորհակալ եմ, որ Նա գթառատ ողորմածասիրութեամբ թոյլ տուեց ինձ տեսնելու այս իմ մահացու աչքերով Նորան,—որին ինքը Ադօնան ճշմարիտ Մեսիա է վերառաքել մեզ համար։

—Դա, նշանակում է, Նորան ընդունում ես, ինչպէս մի Աստուածութիւն.—փորձողական ակնարկ ձգելով նորա վերայ, ասաց Յուստիցիան։

—Ճշմարտապէս ընդունում եմ։ Եթէ երբ և իցէ Աստուած ապրել է երկրիս վերայ, ուրեմն այդ Աստուածը —նա՛ է։

—Կը նշանակէ, Նա դեռ ապրում է։

Յօսէփը անհասկացողութեամբ և անհանգստութեամբ նորա վերայ նայեց։

—Ո՛չ, Նա մեռել է—չէ՞ թէ խաչեցին Նորան։

—Մի՞թէ Աստուածութիւնը մեռնում է,—հարցրեց Յուստիցիան, որի մութ աչերը տարօրինակ և գեղափայլ կերպով փայլեցին.—Ի՞նչ ուժ պիտի ունենան մահուան տանջանքները հոգու վերայ։ Մտածիր և դատիր հանդիստ սրտով. դու հաւատացա՞ծ ես, որ Նա մեռած է։

Յուստիցիայի խօսքերը և ձևական շարժմունքները այնքան ներշնչող և յաղթական էին, որ Արիմաթեացի խորհրդականը աւելի ես կորցրեց իրեն թէ՛ նորա գեղապարոյր կազմուածքի գեղեցկախաղ փոփոխութիւնից և թէ նորա գեղեցկախօս գեղգեղանքներից. այդ դիւբաբորբոք մարդը աւելի ես չը հասկացաւ և չը ըմբռնեց ինչպէս և ինչ պատասխանելու ձևը։ Վերջապէս մի տեսակ վարանմունքից յետոյ ասաց նա.

—Գերապանծ տիրուհի, որքան կարող է գտնել մահկանացուի խելքը և աչքը,—կեանքը իրականապէս ձգել է Նորան։ Նորա մարմինը խաչի վերայից վեր գնելու պատրաստ է. զինուորները Նորան մեռած գտան և այդ իսկ պատճառով—ո՛չ խորտակեցին զբարձս Նորա, զի լցցի գիրն, եթէ ոսկր նորա մի՛ փշրեսցի։ Իսկ Նորա հետ խաչուած երկու աւազակների անդամները դուրս կորզեցին և ոսկորները փշրեցին, երկիւղ կրելով, որ կարող է նոցա մէջ կեանքի մի չնչին կայծ մնացած լինի։ Օրէնքը 'ի կատար ածողները երբ

համոզուեցին, որ Նազովրեցու հրաշալի մարմնի մէջ արիւնը բոլորովին կանգ է առել, աւելի խոհեմ վարուեցին Նորա վերաբերութեամբ և գթածութեամբ վճռեցին, այդ հրաշակերտ մարմինը Նորան յանձնելու, ով ծնել էր այդ Մարտիրոսին, այն է—Մարիամին,—Նորա դժբախտ մօրը, որը դեռ այժմ էլ՝ անշուշտ՝ Նորա մօտ հեկեկում է։

Յուստիցեան լսում էր և Նորա գունատ ու խիստ դէմքը աւելի ևս դժգոյն ստուեր ստացաւ։

—Միթէ կարելի է, որ Աստուածութիւնը մեռնէ,—կրկնեց Նա հանդարտ ձայնով։ Եւ Նա ընդ թափ և զննողական ակնարկ ձգեց արիմաթացւոյ մտածկոտ և վշտահար դէմքի վերայ, ապա՝ սովորական հպարտութեամբ և սիգաքայլ շարժուածքով, որպիսի ժամանակ դողում ու խոնարհում էին Նորա բոլոր ծառայողները, Նա ասաց.—Եթէ քո խօսքերը ճշմարիտ են, խորհրդական Յօսէփ, եթէ իրականապէս գալիլէացի Մարգարէն այլևս կենդանի չէ,—ուրեմն այլևս ինչ գործ ունիս դու այստեղ։

—Միմիայն հասարակ պարտքս դէպի Մեռածը, Որը դէպի ինձ ողորմած էր,—պատասխանեց Նա շտապով և անհանգստութեամբ։—Ես կը կամենայի Տիրոջս մարմինը թաղել մի այնպիսի տեղ, որտեղ Նա պատուի և հանդարտութեան մէջ կարող է պարկել և ընդմիշտ ազատ լինել Իրեն դէմ լարուած չարութիւններից։ Քաղաքս պատած ժայռերի մէջ, այնտեղ՝ Գողգոթայի մօտ, Գեթսէմանէի կողմը, մի նոր փորուած վիմափոր է գտնւում։ Նշանակուած էր իմ գերեզմանատեղիի համար, քանի որ տարիքս բաւականին թեքուած է։ Բայց միմիայն Աստուած գիտէ՝ թէ երբ կը մեռնեմ ես, ուստի եթէ ես կարող լինեմ Տիրոջս մարմինը այնտեղ դնել, ապագայում վստ տեղի մէջ անկենդան պարկելս աւելի հանգստութիւն պիտի համարեմ և նպատակիս հասած՝ յաւիտենական խաղաղութիւն գտնեմ։ Մենք չէինք կամենալ, որ Նորան ևս միւս յանցաւորների հետ թաղէին. այդպէս ուրեմն, մեծապայծառ ակին,—ես եկայ թոյլտուութիւն խնդրելու, որպէսզի կառավարիչը հրամայէ ինձ պատկանեալ և իմ ձեռքով գնուած նոր գերեզմանի մէջ ամփոփել այն Մարդու սուրբ մարմինը, Ով, իմ կարծիքով, Քրիստոսն էր, թէպէտ և խաչեցին Նորան։ Ահա իմ գործս—ես այստեղ շտապեցի, որպէսզի Պիղատոսի բարեացակամ համաձայնութիւնը ստանամ, որի համար, Հռոմի ողորմածասիրութեան վերաբերութեամբ, ես միշտ պարտական պիտի մնամ։

Յուստիցիան «Հռոմի ողորմածասիրութեան» քաղաքավարի մի

դարձուածքի վերայ թեթև կերպով ժպտաց, ապա Նորա յօնքերը Նորից կուտակուեցին բարկութեան սպառնալիքով։

—Ճիշտը, ընկեր, չը գիտեմ թէ քեզ ինչպէս պէտք է օգնել,—վերջապէս ասաց Յուստիցեան դանդաղութեամբ, որպէս թէ մտածելով։—Ես քեզ այդ թոյլտուութիւնը տալու իրաւունք չունիմ, իսկ իմ տէրս յոգնաշարչար և անհանգիստ դրութեան մէջ է և տանջւում է զարհուրելի երևակայութիւններով—երազներով,—խռովայոյզ և անհանգիստ տեսիլքներով,—կրկնեց Նա հանդարտ և այլայլուած։ Բայց սպասիր, սպասիր մի րոպէ, ես Նորա կամքը իմանամ. գուցէ յանկալի է Նորան քեզ հետ խօսել և իւրովսանն բացատրել իւր կամքը։

Նա անլսելի քայլերի օգնութեամբ հեռացաւ։ Նորա սիգաճեմ կերպարանքը, որ առնուած էր երկար և սպիտակ հագուստի մէջ, մի երկու անգամ ևս փայլեց մուտքի մօտ կանգնած մարմարիոն կոթողների մէջ և անյայտացաւ։ Արիմաթացի Յօվսէփը խոր հառաչանք արձակեց և, անգիտակցաբար, քարեղէն առիւծների բերանից ցայտող և, ընդունարանի մէջ տեղ գտնուած մարմարիոն աւազանի կուրծքը թափուող ջրին սկսեց Նայել. լի ուշադրութեամբ թափանցիկ հեղուկի սիրտը դիտելով, Նա աշխատեց հասկանալ, թէ ինչու Նորա սիրտը այնպէս ակամայ կծկուեց և անխելքութեամբ թնդաց, թէ ինչու համար պիտի խառնուէին թէ Նորա միտքը և յժէ յիշողութիւնը, երբ Նա լսեց. «Դու հաւատացած ես, որ Նա մեռած է» խօսքերը։ Բայց Նա երկար մտածել չը կարողացաւ։ Յուստիցեան համարեա նոյնքան շուտ վերադարձաւ, որքան և անյայտացել էր, և կանգ առնելով, մի որոշեալ հեռաւորութիւնից Յօսէփին դէպի ինքը կոչեց։

—Պիղատոսը կամենում է քեզ տեսնել,—ասաց Նա, երբ Արիմաթացին շտապով մօտեցաւ Նորան։—Բայց եթէ դու Նորան դիւրագրգիռ կը գտնես, կամ եթէ Նկատելու կը լինիս, որ Նա կորցնում է իւր խօսքը և բառերը շփոթում, խնդրում եմ դոցա Նշանակութիւն մի տալ։ Եւ Նորա հոգու տարօրինակ դրութեան մասին քաղաքիս հետաքրքիր բամբասասէրների մօտ, լուռ կաց։ Ես չեմ ցանկանում, որ մի որևէ մէկը գիտենայ, որ Նա ամբողջ օրը, ջղերի քայքայման պատճառով շփոթուած դրութեան մէջ է և դէպ առ դէպ ինքն իրեն չէ կարողանում ճանաչել.—այստեղ Յուստիցիայի սէգ աչերը յանկարծ աղի արտասուքով լցուեցին։—Նա տկար էր—շատ տկար, ես միայնակ էի խնամում Նորան, և թէպէտ Նա այժմ փոքր ինչ հանգիստ է և աւելի զգաստ,—այնուամենայնիւ՝ դատող եղիր խօսակցութեան մէջ, խուսափելով թէ

գրգիռ տալուց և թէ բառերը իրար հետ շփոթելուց։ Այո, դոքա գործադրելի և անհրաժեշտ են։

—Վստահ եղիր իմ վերաբերութեամբ, բարեհայեաց տիկին, —խոր զգացմունքով ասաց Յօսէփը։—Ես բոլոր ճիգս գործ պիտի դնեմ, որ ոչ մի բանում չը սխալիմ և ոչնչով չը պիտի տխրեցնեմ քո տիրոջդ։

Յուստիցիան գեղածուփ շարժմունքով թեքեց գլուխը, որպէս թէ այդ խօսքերի համար շնորհակալութեան նշան անելով. խոշոր արցունքները փայլում էին նորա երկար ու ծփծփան արտևանունքների վերայ. այլ ես ոչինչ չը ասաց նա և նաղաճեմ քայլերը դէպի իւր ամուսնու բնակարանը ուղղեց, խորհրդականին իւր հետ ունենալով։

Խորին լռութեան մէջ, զգոյշ, անլսելի քայլերով, Արիմաթիա*) խորհրդականը յետևեց Յուստիցիային։

ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ

*) Արիմաթիա—Արիմաթիա՝—բառախաղութիւն է արած. կը նշանակէ 1՝ [illegible] տեառն. կամ լոյս մահուան տեառն։ Տես բառգիրք Հ. Լեզ. Վ. —[illegible] Հայ Թարգմ.

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

I.

Նեղ ու երկար գաւիթի միջից անցնելով, նորա մտան մեծ ու բազմացածր կամարներով զարդարուած մի շինութեան մէջ, որը, բազմաթիւ կրակների օգնութեամբ, պարզ լուսաւորուած էր. երկաթէ ընդունարանների վերայ դրուած կանթեղները բոլոր հեռու անկիւններն էին լուսաւորում, իսկ մեղրամոմերը վառւում էին ամեն տեղ։ Օդը այրուող խնկելի նիւթերի անուշահոտութեամբ էր լցուած, չը նայելով լայն լուսամուտի բացուած լինելուն։ Այդ լուսամուտից, մի քանի սանդուխքների օգնութեամբ, կարելի էր անցնել հրաշալի այգին, որտեղ լուսինը, իւր խորհրդաւոր, արծաթափայլ լոյսով, ձևացընում էր այն բոլորը, ինչ կայ այդ տեղ, մարդուս վերայ մի տեսակ զմայլելի տպաւորութիւն թողնելով։

Հէնց այդ պատուհանի մօտ, ցածր գահաւորակի վերայ, պարկած էր Պիղատոսը. Նա գունատ, անշարժ, կիսախուփ աչքերով և ուժասպառ, մետաքսեայ վերմակի վերայ ընկած, ձեռքերով, խղճալի տպաւորութիւն էր թողնում։ Նա երկար ժամանակ պարկած տկարի կերպարանք ունէր,—այնպիսի տկարի, որի միակ ելքը, ինչպէս մեռնողի, մահն է միմիայն պատկերանում։ Յովսէփ Արիմաթեացին դժուարութեամբ խեղդեց իւր մէջ կարեկցական և զարմացական բացականչութիւնը, երբ տեսաւ նորան։ Յուստիցիայի աղերսական հեշտալի ակնարկը կանգնեցրեց նորան և նա իւր այլայլմունքը ծածկեց։ Մինչ այդ Յուստիցիան, իւր ամուսնու անկողնին մօտենալով, նորա հանդէպ ծնկների վերայ ընկաւ։

—Խորհրդակցմնը այստեղ է, Պոնտիոյ,—ասաց նա մեղմ, գորովալից ձայնով,—բաւականին ուժ ունիս դու, որ կարողանաս լսել նորան։

Պիղատոսը աչքերը լայն բաց անելով և ուշադրութեամբ բայց պինդ, դատողաբար, յաճախորդի վերայ նայեց, ապա, ձեռքը կամացուկ

բարձրացնելով, որը անուժութիւնից դողում էր, Արիմաթացուն մօտենալու նշան արաւ։

—Անց՛իր մօտ... աւելի մօտ,—հառաչալից շշնջաց նա՝ հիւանդոտ դիւրագրգռութեամբ։—Դու այդքան հեռաւորութեան վերայ ստուերի տպաւորութիւն ես թողնում. ամբողջ բնակարանս լի է ստուերներով։ Դու Յօսէփը չէ՞ս։ Կարծեմ՝ յարիմաթեայ քաղաքէ։

—Ճիշտ այդպէս, պարոն,—պատասխանեց Յօսէփը հանդարտ ձայնով չը մոռանալով կառավարչի տանջանքի տակ գտնուած դրութիւնը, որը ցաւալի տպաւորութիւն թողեց նորա վերայ։

—Քանի որ դու հրէայ ես, ուրեմն այլ ես ինձնից ինչ ես ցանկանում դու.—շարունակեց Պիղատոսը,—դատարած աչքերի կոպերը նորից կիսախուփ անելով։—Ես կարծում եմ, որ այսօր ես լիովին բաւականացրի Իսրայէլի որդւոց արեան ծարաւը։

—Բարձրապատիւ կառավարիչ,—պատասխանեց խորհրդականը մեղմութեամբ և խոնարհաբար.—հաւատացիր ինձ, որ ես նոցա հետևողներից չեմ, որոնք ստիպեցին քեզ այն կատարելու, որի դէմ քո ամբողջ հոգին դողում էր։ Եւ թէպէտ իմ ազգակիցներից կան ոմանք, որոնք՝ քեզ լաւ չը ճանաչելով, ասում են, որ դու խիստ բռնակալ ես, բայց ես համոզուեցի քո փափկասրտութեան մասին, դէպի խեղճերը ունեցած բազմաթիւ բարեգործութիւններդ գիտենալով։ Իսկ այժմ եկայ՝ քեզանից Քրիստոսի մարմինը խնդրելու։

Մեծ յուզմունքի տակ գտնուած շատ շարժմունքով, Պիղատոսը իւր վերայից վայր ձգեց մետաքսեայ ծածկոցը և վեր թռաւ տեղից. նա դողդոջ ոտքերի վերայ կանգնելով, իւր կնոջ ձեռքը խլեց։

—Քրիստոսի մարմի՞նը.—բացականչեց նա վայրենաբար։—Դու լսում ես, Յուստիցիա։ Քրիստոսի մարմի՞նը...

Ծիրանի զգեստները անկարգութեամբ ընկած էին նորա ուսերի վերայից, իսկ կիսաբաց թիկնոցից մերկ կուրծքն էր երևում, որը՝ անսովոր շնչառութիւնից՝ անբողջովին և սաստկութեամբ դողում էր, աչքերը տենդային փայլով վառուելով, անկարգ և դէպի ցած թափուած մազերի տակից, փայլփլում էին անհանգիստ կերպով։ Յօսէփը, նորա տեսքից վախենալով, կանգ առաւ. Յուստիցիան Յօսէփի վերայ նայեց. նշանացի հրաւիրելով նորան շուտով իւր խնդիրը բացատրելու։

—Այո, ես քեզնից Քրիստոսի մարմինն եմ խնդրում,—սկսեց նա անհանգիստ, բայց վճռողական ձայնով։—Իրաւ է, այսպիսի ուշ ժամանակ, ես քեզ անհանգիստ չը պիտի անէի, Պիղատոս, բայց դու, Հրէաստանի կառավարիչը լինելով, ինքդ միմիայն կարող կը լինիս

յայտնել ինձ նորան, որին օրէնքը մահուան պատժի է ենթարկել։ Ես կը ցանկանայի նորա սուրբ մարմինը իմ նոր վիմափոր գերեզմանի մէջ դնելու, կը փափագէի թաղել նորան արցունքներով և աղօթքներով,—ինչպէս այդ արժանի է մի մեռած մեծ հերոսի։

—Մեռա՞ծ,—անխելք նայուածքով կրկնեց Պիղատոսը։—Արդէն մեռա՞ծ։ Եւ դու հաւատացած ես դորա մէջ։

Արիմաթացւոյ անդամների միջից սառն դողոց անցաւ։ Դարձեալ միևնոյն հարցը, քիչ առաջ նորան առաջարկել էր և Յուստիցիան, և անբացատրելի երկիւղը նորից տիրեց նորան։ Սակայն նա ոչինչ չը կարողացաւ պատասխանել։ Յանկարծ Պիղատոսը վեր թռաւ և ձեռքերը դէպի վերև բարձրացրեց, կարծես թէ կատաղեալ անխելքութեան հոսանքի տակ գտնուելով։

—Նա մեռա՞ւ,—գոռաց նա դարձեալ։—Ո՛վ տխմար ու կոպիտ մարդիկ, որոնց ակնարկը այդքան թեթևութեամբ կարելի է պատրել։ Աշխարհային ուժը չպիտի կարողանայ սպանել նազովրեցուն։ Նա ապրում է՛, նա ապրել է միշտ,—նախասկզբից մինչև վախճանը, եթէ միայն վերջ կա՛յ։ Ի՞նչ։ Դուք նորան խաչեցի՞ք։ Նորա խոցուած մարմինը տեսա՞ք դուք. նորա անմեղ արիւնը վիժեցի՞ք։ Դուք շօշափեցի՞ք նորա՞ն։ Դուք տեսաք, թէ ինչպէս էր նա մասնակցում աշխատանքներին։ Դուք համոզուեցիք, որ նորա մարմինը միևնոյն մահկանացու նիւթն է, նոյն կանգուածը, որոնց կարող պիտի լինիք տանջել և ոչնչացնե՞լ։ Ո՛հ, անբաղդ յիմարներ։ Դուք բոլոր դարերի ամենահրաշալի արարմունքը 'ի կատար ածեցի՞ք։—Դուք Աստուածային Երևոյթը խաչեցիք։ Անմահի ըստ երևոյթին մահը տեսնելով, յաղթանակը տարաք դուք։ Աստուած ձեր մէջին է՞ր։—Աստուած—մարդկային հագուստի մէ՞ջ։ Նոքա, որոնք մի տանջուող «Մարդու» են տեսել, երևակայում են, որ իրենք ինչ որ է մի բան տեսած են։ Ես հեռուն նայեցի։ Ես, Պիղատոս—ես տեսայ...

Այդտեղ նա կանգ առաւ մի որ և է նահանջման մէջ, նորա երկիւղալից աչքերը մի ինչ որ է բան էին փնտռում դէպի հեռու տարածուած այգու մէջ, որը ծածկուած էր լուսնի փայլով...

Յուստիցիա, Յուստիցիա՛.—աղաղակեց նա։

Յուստիցիան շտապով դէպի նա վազեց։ Պիղատոսը բռնեց նորան և ջղաձգութեամբ նորա գլուխը իւր կրծքին սեղմեց, կարծես թէ նորան իւր գրկից բաց թողնելուց երկիւղ կրելով։

—Հանդարտ, հանդարտ.—շշնջաց նա։—Յուստիցիա, չը պիտի լաց լինենք, որովհետև ամեն բան վերջացած է. զղջումն այլ ես չը պիտի օգնէ մեզ։ Անիծեալ հրէայք։ Նոքա բռնադատեցին և միմիայն

ռաքան հարկադրեցի՛ն։ Նոքա և նոցա կատղած քահանան սպանեցին Նորան—ոչ թէ ես։ Ահա՛ Սա է մարդ (Се—человѣкъ)—կոչեցի ես նոցա։ Ես կարծում էի, որ նոքա միևնոյնը պիտի տեսնեին,—ինչ որ ես տեսայ. բոլոր փառքը, ամբողջ երկինքը և հիացմունքը, այն Մարդկային Պատկերի գերագարդ—ճառագայթացումն—այնքան գերբնական, այնքան սքանչելի, որ ես, համաստեղութեան մէջ, Նորա անյայտանալուն էի սպասում։ Նա փայլում էր՝ ինչպէս կայծակ։ Նորա մարմինը թափանցիկ զգեստաւորութիւն էր, որի միջից արեգակն էր երևում։ Բայց չը պիտի լաց լինե՛նք։ Արցունք 'ի զուր է և խելքից դուրս մի բան, քանի որ Նա մեռած չէ։ Նա չէր կարող մեռնել, թէպէտ և խաչեցին Նորա՛ն։ Նա մահուան գաղտնիքի վերայ է իշխում. գաղտնիքի, որը անլուծանելի էր մեզնից։ Մենք չը գիտենք, թէ ինչ են աստուածները իսկապէս, և թէ նոքա ինչ են պահանջում, թէ որնէ նոցա կամեցողութիւնը, կամ թէ ինչէ կատարել աշխարհը. բայց թո՛ղ աշխարհը պատասխանատու լինէ—ես անմեղ եմ։

Նա նորից կանգ առաւ և քնքշութեամբ սկսեց փայփայել իւր կնոջ ճոխապաճոյճ և հարուստ ու մութ մազերը։

—Թանկագինդ իմ,—ասաց նա ընքոյշ կարեկցութեամբ,—դու իմ հէք տառապեալ։ Ո՛չ, լաց մի լինիր, Ցուստիցիա, խնդրում եմ քեզ, մենք այն օրը կը մոռանանք,—այս անցքը մեզ չէ վերաբերում—այդ հրէաների գործն է, ուրեմն թող նոքա իսկ պատասխանատու լինին. ես մեղաւոր չեմ ո՛չ Աստուծոյ և ո՛չ Կեսարի մօտ։ Ես ասել եմ և նորից կասեմ. քաւեալ եմ ես յարենէ Արդարոյդ այդորիկ. դուք գիտասջիք։

Այդտեղ Նա բաց թողեց կնոջը իւր գրկից, և, լայնատարած ու վսեմութեամբ շարժելով ձեռքերը, բողոքի շարժմունք գործեց, ապա Նորա ակնարկը Յովէփ Արեմաթացւոյ վերայ ընկաւ, որը դեռ ևս լռելեայն կանգնած էր ու անհանգստութեամբ այս ու այն կողմն էր նայում, անցնող տեսարանից շփոթուած։ Պիղատոսը դէպի նա մօտեցաւ և փափկութեամբ հարցրեց.

—Ընկեր, դու ի՞նչ կը կամենայիր ինձնից։

Արեմաթացին յուսահատութեամբ Ցուստիցիայի վերայ նայեց, որը, դեռ ևս այտերի վերայից թափուող աղեղորմ արցունքխոշորկեկ կաթիլները սրբելով և շտապով իւր շփոթութեանը տիրելով, որ դեռ ևս արտայայտւում էր Նորա գունատ և անհանգիստ դէմքի վերայ,—շուտափոյթ խորհրդականին օգնութեան հասաւ։

—Իմ սիրեցեալ տէր, դու մոռացա՛ր, — ասաց Ցուստիցիան

փայփայանքով և հեզութեամբ, միևնոյն ժամանակ փաղաքշաբար նստեցնելով Պիղատոսին իւր նախկին տեղում, որ գտնւում էր լուսամուտի մօտ։—Դու առողջ չես և ծանր աշխատանքը յոգնեցրել է քեզ։ Այս մարդը Նազովրեցու մարմնի թաղման համար է խնդրում, Նա ինքն է կամենում թաղելու Նորան, եթէ միայն թոյլ կը տաս դու։ Կատարիր նորա խնդիրը, խնդրում եմ քեզ և արձակիր նորան. քեզ հանգստութիւն է հարկաւոր և խաղաղ քնի կարիք պիտի զգաս դու,—քեզ չափից դուրս նեղութիւն են պատճառել, որի շնորհիւ ջղերդ քայքայուել են։

Պիղատոսը ծանրութեամբ բարձերի վերայ ընկաւ, նորա ակնարկը դարձեալ ոչինչ չէր արտայայտում։

—Դու կամենո՞ւմ ես Քրիստոսին թաղել.—հարցրեց Նա վերջապէս և մեծ դժուարութեամբ, քանի որ լեզուն չէր հնազանդւում նորան։

—Այո՛, ցանկանում եմ։—պատասխանեց Յովէփը, փոքր ինչ վստահացած նորանով, որ Պիղատոսը, ինչպէս երևում էր, սկսել էր հասկանալ բանի եղելութիւնը։

—Ուղիղ վիմափոր գերեզմանի՞ մէջ։

—Այո՛։

—Քո գերեզմանատեղին մեծ է։

—Տէ՛ր,—քրթմնջաց արեմաթացին, նորից վախենալով։

Ցուստիցիան, ամուսնու գլուխը գրկելով, մի ինչ որ բան շշնջաց նորա ականջին. ըստ կարելոյն սիգալով ու քնքշաբար։ Պիղատոսը, ցաւագին ժպիտ արտայայտելով, կնոջ ձեռքը իւր շրթունքներին տարաւ։

—Այս սիրալի մատրօնան (տիկին), ազնիւ ընկեր, ասում է, որ իմ մտածմունքը խառն և միտքս շփոթուած է. այնքան՝ որ ես չը գիտեմ, թէ ինչպէս պէտք է պատասխանեմ քեզ։ Ներողութիւն եմ խնդրում, խորհրդական։ Դու՝ խորհրդական գոլով, պարտաւոր ես մոլորուածի դէմ համբերութիւն և թոյլերի համար իմաստութիւն ունենալ։ Դու Նազովրեցուն թաղե՛լ ես կամենում։ Խաչեցեալի մարմինը ցանկանում ես մեռեալների թուին կցե՞լ։ Այո՛, թող այդպէս լինէ։ Վերցրե՛ այն, որին դու մեռած մարմին ես համարում։ Եւ այդպէս, ես քեզ թոյլ եմ տալիս Խաչեցեալին պատուարժան թաղման յանձնելու։ Իմ թոյլտուութի՞ւնը,—եւ նա վայրենաբար ծիծաղեց։ Իմ թոյլտուութիւնն է՝ գերեզմանի մէջ դնելու Նորան, Որին ոչ մի գերեզման չի տանիլ, ոչ մի ծածկուած այր կամ վիմափոր չի պահիլ, և ժամանակը չի փչացնիլ... Գնա՛։ Արա՛ ինչպէս կամենում ես և ինչպէս գիտես։ Քո խնդիրը կատարուած է։

Հանգստացած և խորին շնորհակալական զգացմունքով արիմաթացին խոնարհ գլուխ տուեց և արդէն հեռանալ էր կամենում, երբ ամենախիստ խռովութեան զարհուրելի աղաղակ տարածուեց, նախագաւթից աւելի և աւելի դէպի Նոյա մօտենալով։ Յուստիցիան զզուանքով իր տեղից վեր թռաւ. այդքան աններելի վարմունքի պատճառը գիտենալու համար նա առաջ անցաւ, բայց այն ժամանակ, երբ կացարանի դուռը, յանկարծակի բացուելով, տեղի տուեց քահանայապետ Կայիափային, որը, կատաղի և ցասկոտ դէմքի այլայլուած գծերով ու դողդոջ քայլերով դէպ առաջ անցաւ։

—Դու դաւաճան ես, Պիղատո՛ս.—ճչաց նա։—Դու ձեռնածուների (фокусникъ) հետ ես խորհրդակցում, ուպէս զի Նազովրեցու խաբուսիկ Յարութիւնը իրագործել կարողանաս։

Պիղատոսը դանդաղութեամբ ոտքի կանգնեց։ Յուստիցիան նորա մօտ կանգնած մնաց։ Պիղատոսը բոլորովին հանդարտ էր, որի դէմքը շնչում էր սառն, բայց դէպի բաց հրող սէգութեամբ։

—Ո՞րին ես դաւաճան կոչում, հպատակդ Հռոմի.—հարցրեց նա։—Միթէ չը գիտես դեռ, որ թէպէտ դու և հրէական հաւատքի քահանայապետ ես, բայց՝ այնուամենայնիւ՝ պատասխանատու ես Կեսարի պէմ, Նորա անձնափոխանորդին անպատուելուդ համար։

Կայիափան, չարութիւնից ամբողջովին դողալով, անշարժ կանգնած էր։

—Դու ես պատասխանատու քո Կեսարի առջև, եթէ ընկճւում ես ստոր խաբեբայութեան տակ,—ասաց քահանայապետը։—Միթէ դու չես հասկանում, որ այն Գալիլիայի մոլորեցուցիչն, որին խաչեցին այսօր, ասաց, «Յետ երից աւուրց յառնեմ» *)։ Իսկ այժմ դու Նորան հետևողներից մէկի հետ ես խորհրդակցում, որի մօտ Նա չուտ չուտ լինելով,—քարոզում էր։ Այս խորհրդականը,—և Կայիափան յանդուգն ու նենգ ակնարկ ձգեց Յօսէփի կերպարանքի վերայ,—քեզնից Նորա մարմինն է խնդրում, որ վիմափորի մէջ թաղէ, որի գաղտնիքը միմիայն իրեն է յայտնի։ Իսկ գիտես դու, թէ ինչո՞ւ է նա այդպիսի մի ծառայութիւն առաջարկում։

—Նորա համար, որ երկրորդ օրը, մի որ և է տեղ, նա մար-

*) Ոչ եթէ յետ երից աւուրց ասացեալ էր Փրկիչն, այլ յաւուր երրորդի մինչև լրացեալ աւուրց երից։ Վարք Քրիստոսի Հ. Գ. վ. Այվազովսքի։

Ծան. Հայ թարգմ.

մինը պահելով, անշուշտ պիտի գոռայ, որ Քրիստոս յարեաւ։ Եւ վերջինը յետին մոլորութիւնն չար քան զառաջինն։ Այո, խաւարամիտ ամբոխի վերայ զա առաջինից վատ պիտի ազդէ, եթէ միայն դու այդ բանին արգելք չը կանգնելու լինիս։

Յօսէփը, իւր խիստ և խաղաղ աչքերը բարձրացնելով, մի թափանցիկ ակնարկ ձգեց քահանայապետի վերայ։

—Քո մեղադրանքը ինձ չը պիտի անհանգստացնէ, Կայիափա,—հանգստութեամբ ասաց նա.—ինքդ լաւը գիտես, որ այդ սուտ է և միմիայն քո չարամիտ խելքի պտուղը։ Դու երկչոտ ես դարձել։ Կարելի է կարծել, որ երբ տեսար դու վարագոյր տաճարին ցելաւ յերկուս ի վերուստ մինչև ի վայր*), և քեզ առացին, որ այդ կատարուեց այն միևնոյն վայրկեանի մէջ, երբ Նազովրեցին աւանդեց հոգին, դու իրաւացի զարհուրեցիր և այժմ իսկ ուշքի գալ չես կարողանում։ Խելքի արի և ամաչիր, քանի որ ոչ ոք մեռածի մարմինը չի գողանալ, եթէ մարդ է միայն, իսկ այն մարմինը, որը ես Պիղատոսից խնդրեցի—աւելի ես չը պիտի պահուի. ամենաանխիղճ մարդիկ անգամ մեռեալներին հանգստութեան մէջ են թողնում—եւ այդ միևնոյն հանգստութիւնը ես ես կարող եմ տալու Նորան, Ով, թող լինէ Նա Մարդ կամ Աստուած, այնուամենայնիւ անմեղ էր ու՝ անիրաւացի և մատնողաբար՝ մահուան պատժի ենթարկուած։

Արիւնը Կայիափայի երեսին խփեց. նա, անուժ կատաղութեան ազդեցութեան տակ, իւր ձեռքերը սեղմեց։

—Լսում ես դու, Պիղատոս.—բացականչեց նա։—Ինչպէ՞ս ես կարողանում դու Նորա համարձակութեանը համբերելու։

—Ի՞նչ համարձակութիւն.—հարցրեց Յուստիցիան։—Բոլորովին ճշմարիտ և արդար է, որ Նազովրեցի Մարդը անմեղ էր և դուք Նորան մահուան պատժի ենթարկեցիք միմիայն երկիւղի զգացմունքից դրդուած։

Կայիափան կատաղութեամբ Նորա վերայ նայեց։

—Ես կանանց հետ չեմ վիճում,—ատամները կրճտելով, ասաց նա։—Կանայք մեր խորհրդակցութիւններին չեն մասնակցում և նոքա այդպիսի հարցեր դատելու մէջ իրաւունք չունին խառնուելու։

*) Պատառումն վարագուրի տաճարին յայտ առնէր զդադարել ստուերական օրինացն Մովսիսի, և եւ զուգ տեղւոյն սրբութեան ընդ անարգաբարն տեսանել Տեառն իւրոյ և թագաւորի։ Վարք Քրիստոսի. Հ. Գ. վ. Այվազովսքու Փարիզ, 1854.

Ծան. Հայ թարգմ.

Յուստիցիան ժպտաց։ Նորա գեղաշուք սև աչքերը Կայիափայի թափանցիկ ակնարկը այնպիսի արհամարհութեամբ տարան, որ նա ակամայ դողաց և Յուստիցիայի նայուածքից խուսափեց։ Նա նորից դէպի Պիղատոսը դարձաւ։

—Լսի՛ր ինձ, կառավարիչդ Հրէից,—ասաց նա,—և այս գործը լաւ կշռի՛ր, որ քեզ վերայ քո թագաւորի դժգոհութիւնը չը ձգես ու նորա բարկութիւնը քեզ վերայ դարձնես։ Հռովմայեցի զինուորները, մի տեսակ տարօրինակ տկարութեամբ բռնուելով, ծծկեր երեխաների նման, մի ինչ որ ողորմածասիրութեան վերայ են խօսում։ Ճշմարիտ որ, շատ տարօրինակ է տեսնելու, թէ ինչպէս այդ մօրուքաւոր մարդիկ յանկարծ կանացի բարեգործութեամբ լցուեցին. Նոքա աստուածանենգ Նազովրեցու անդամները մերժեցին խորտակելու, ասելով, որ նա առանց այդ էլ՝ մեռած է։ Նոքա ինչ գործ ունին այդպիսի բաների մէջ։ Նոքա նորա մարմինը պիտի մաս մաս անէին, եթէ որ իմ կամքի համեմատ վարուած լինէին։

Նա կանգ առաւ, չարութիւնից ամբողջովին դողալով, և ծանր շունչ քաշեց։ Պիղատոսը անխօս հետաքրքրութեամբ նորա վերայ էր նայում։

—Քո հարիւրապետն է մեղաւոր,—դարձեալ սկսեց Կայիափան,—քանի որ մարմինը նա իւր իշխանութեամբ տուեց կանանց, որոնք մի այնպիսի խնդրով նորան էին դիմել, որոնք այժմ մի այդպիսի լաց ու հեծեծանք են բարձրացրել, որ իրաւացի շատ մարդիկ պիտի հաւաքուէին, եթէ որ այնպիսի ուշ ժամանակ չը լինէր։ Նոցա մէջ է գտնւում և յայտնի ցոփուհի Մագդաղինացին։ Նա մեզ թոյլ չը տուեց Խաչեցեալի մարմինը միւս յանցաւորների հետ ձգելու, ասելով, որ այս մարդը,—և նա արհամարհութեամբ արիմաթացի խորհրդականին մատնացոյց արաւ,—քեզնից իրաւունք է ստացել, որ իւր նոր վիմափոր գերեզմանի մէջ լի պատուով Նազովրեցուն թաղէ։ Պատիւ ձեռնածուին և աստուածանենգ սրբապղծի՛ն։ Եթէ դու նորան թոյլտուութիւն տաս, երդւում եմ, Պիղատոս, դու, խորին մտածմունքի ծնունդ, չարաբաստիկ դաւադրութիւն պիտի պահպանես, և 'ի կատար ածես մի այնպիսի չարութիւն, որի նմանը դեռ ես տեսնուած չէ։

Պիղատոսը իւր թափանցիկ ակնարկը շարունակ նորա վերայից չէր կտրում։

—Իմ հարիւրապետն է մեղաւոր, ասո՞ւմ ես դու, մեղաւոր է նա,—խաղաղասիրտ և սառն ձայնով, վերջապէս նկատեց նա։—Ո՞ր հարիւրապետը։

—Պետրոնեան։ Նա առաջնորդում էր պահապաններին։ Ես նո-

րան բերել եմ ինձ հետ և այժմ նա սպասում է ձեր հրամանին այնտեղ—դրսևը կանգնած։

—Ներս կոչի՛ր նորան, Յուստիցիա,—ասաց Պիղատոսը, հանդարտութեամբ դարձեալ իւր գահաւորակի վերայ նստելով։ Յուստիցիան նորա հրամանը կատարեց։

Պետրոնեան ներս մտաւ, խոնարհութեամբ գլուխ տուեց ու լուռ կանգնեց դռների մօտ։

—Նազովրեցի՞ն մեռել է,—դէպի նա դառնալով, դանդաղ և մաշուած ձայնով, հարցրեց Պիղատոսը, ինչպէս թէ դատաստանական նիստի ժամանակ։

—Տէր, աւելի քան երկու ժամ է անցել, ինչ մեռել է նա։ Եւ մինչ մեզնից մէկը նորա կողը խոցելու պատրաստուեց տանջանքներին վերջ տալու համար,—արդէն համարեա թէ մեռած էր։

—Դու ճի՞շտը գիտես այդ։ Քեզ չե՞ն խաբել,—և Պիղատոսը խորհրդաւոր ժպտաց, երբ այդ հարցը առաջարկեց։ Պետրոնեան զարմացած կառավարչի վրայ նայեց։

—Իշխան, մենք բոլորս տեսանք, ինչպէս մեռաւ նա և մեզնից մէկը, ինչպէս ասացի, նորա կողը խոցեց, տանջանքներից թեթևացնելու համար։

—Ի՞նչը ստիպեց քեզ այնքան կարեկցութիւն ցոյց տալու։

Խիստ անհանգստութիւնը մթնեցրեց զինուորի ազնիւ դէմքը։

—Հրամանատար, այսօր երկիրը և օդը անգամ զարհուրանքով լի էին, և Խաչեցեալը անմեղ մարդ և անսովոր քաջութեան տէր էր երևում։

Պիղատոսը դէպի Կայիափան դարձաւ։

—Այժմ անցքի պատճառը և նորա շարժառիթը տեսնո՞ւմ ես դու.—հարցրեց նա։—Այդ հռովմայեցի Պետրոնեան, ինչպէս և բոլոր հռովմայեցիք, պաշտում է քաջութեան։ Հրէան չէ հասկանում թէ ինչ է քաջասիրտ վարմունքը։ Եթէ որ այդ հասկանար նա, Կեսարին հարկ չը պիտի տար և նորա իշխանութեան տակ չէր լինիլ։

Քահանայապետը արհամարհաբար ծիծաղեց։

—Հէնց նոյն Մարդը, որի դիւցազնութիւնը գովաբանում է քո զինուորը, Հրէայ էր,—պատասխանեց նա։

—Ոչ բոլորովին,—յանկարծ իր խօսքը դրեց Յովսէփ Արիմաթացին,—Նորա մայրը Եգիպտոսից է։

—Իսկ Յովսէփը՝—Նորա հայրը—Նազարէթից, հակաճառեց Կայիափան,—հայրն ինչպէս է՝ որդին նոյնն է։

Այդ խօսքերից յետոյ լռութիւնը թագաւորեց։ Յուստիցիան

մեռատիպ գունատունելով, իր ամուսնու գահաւորակին կռթնեց. Նորա շնչառութիւնը կցկտուր և ջղային էր, և նա մի ձեռքը կրծքի վերայ սեղմեց կարծես թէ այնտեղ մի սուր, անտանելի ցաւ խեղդել կամենալով: Պիղատոսը ոտքի կանգնեց: Նորա աչքերը փայլում էին. Նա մտադրուեց մի ինչ որ բան ասելու, բայց որոշմունքը փոխելով, դարձեալ նստեց, ու սկսեց Պետրօնիայի վերայ մի այնպիսի ակնարկ ձգել, որ վերջինս ակամայ դողաց:

—Դու քաջութեամբ գործ անեսր և բարի վարուեցիր,—վերջապէս ասաց նա ճիգնժափութեամբ, խոր, լռութիւնը խանգարելով:— Ողորմածասիրութիւն դէպի գլուցաղն մի Մարդ—արժանի և գնահատելի զգացմունք է: Ես քեզ ոչ մի բանի մէջ չեմ մեղադրում: Իսկ դու, մեծդ Կայիափա,—այստեղ նա զննողական ակնարկ ձգեց քահանայապետի վերայ,—դու բացարձակապէս ես բացայայտում քո զգացմունքները, որոնք բոլորից առաւել քո կոչմանդ պէտք կը գան. վրէժ, արիւնարբութիւն և երկիւղ: Լսիր, խօսքս մի կարճ,—ես գիտեմ, թէ ինչքան ես վախենում դու Նորա մարմնից անգամ, Որին սպանեցիր դու, այո, դու սպանեցիր: Բայց քո խոստասիրտ լինելու ցանկութիւնը, անգամ մահից յետոյ, այլ ես ուշացաւ: Նազովրեցուն իւր նոր վիմափոր գերեզմանի մէջ թաղելու թոյլտւութիւնը Արիմաթացին ստացել է արդէն, և կը թաղէ Նորան մեծ պատւով: Իսկ եթէ դու Նորան կասկածում ես որևէ գաղտագողի նպատակների մէջ, ուրեմն գիր քո կնիքը հէնց ուղիղ գերեզմանի վերայ և պահապաններ դիր որքան մարդիկ կամենաս քաջ և աչալուրջ պահնակներից՝ որոնց ինքդ ընտրիր, ում և կամ ինչ ցեղից՝—ինքդ որոշիր: Թող Նոքա պահպանեն գերեզմանախորը, մինչ քեզ համար չարաբաստիկ երեք օրը կը անցնէ... Այդպիսով մենք իրաւացի ենք վարւում բոլորի համար էլ նոյնպէս՝ թէ քեզ համար, Յովսէփ, և թէ քեզ համար, Կայիափա: Մինչև անգամ, եթէ դու Պետրօնեային չափից դուրս ողորմածասէր գտնելու լինես, եթէ կամենաս,—քեզ թոյլ եմ տալիս մի ուրիշ հարիւրապետ ընտրելու: Այլ ես աւելի ես չեմ կարող անել, ձեզ դուր գալու համար...

Այստեղ նա կանգ առաւ, նորա ձայնի մէջ սաստիկ յոգնածութիւն էր լսւում:

—Բաւական է, մռայլ դէմքով ասաց Կայիափան: Բայց՝ այնուամենայնիւ Պիղատոս, եթէ դու իմաստուն լինէիր, պիտի մերժէիր խորհրդականին այն Յանցաւորի մարմինը տալու հարցի մէջ:—Եւ նա բարկացկոտ և արհամարհական ակնարկ ձգեց արիմաթացու վերայ, որը ուշադիր և անվրդով Նորա վերայ էր նայում:

— Բաւական չը եղաւ, Կայիափա,—ասաց նա:—Իրաւ եմ ասում, որ եթէ հին ծագումս չը լինէր, ես պիտի ամաչէի այսօր, որ ես հրէայ եմ, տեսնելով, թէ ինչպէս դու՝—քահանայապետդ, տաճարի ներկայացուցիչդ, չարութիւնից և երկիւղից դողում ես այդպէս: Բայց ես չը պիտի սկսեմ նորից քեզ հետ վիճաբանութիւն սարքելու: Ես մեր իմաստուն կառավարչի խորհրդին ուրախութեամբ հնազանդւում եմ, ուստի հրաւիրում եմ քեզ Նազովրեցու թաղմանը ներկայ գտնուելու: Դու կարող պիտի լինիս քարայրը նայելու թէ ներսից և թէ դրսից, համոզուելու համար, որ ոչ մի գաղտնի անցք չը կայ նորա մէջ, որով ես կարող լինէի օգտուել, կամ ուրիշ՝ քեզնից մտածուած մեռելների գողերը: Վերցրի կնիքներդ, և պահապաններ դիր,—ես ոչ մի բանի մէջ քեզ արգելք չը պիտի լինիմ:

Կայիափան սեթևեթաբար և մի տեսակ չոր ու ցամաք խոնարհուեց, գլուխ տալու ձևով ու շուռ եկաւ. Նա կամեցաւ գնալ, ապա ուսի վերայից Պիղատոսին նայելով, նորա դատրած դիրքը և հիւանդոտ տեսքը 'ի նկատի առնելով, հեգնական ձայնով ասաց.

— Քեզ կատարեալ առողջութիւն եմ ցանկանում, Պիղատոս:

— Շնորհակալ եմ քեզնից, քահանայ,—պատասխանեց Պիղատոսը, չը բարձրացնելով գլուխը,—իսկ ես քեզ համար աւելի ես առնական կամք ու քաջասրտութիւն եմ բարեմաղթում:

— Կայիափան անփոյթ կերպով գլխով արեց, դէպի մուտքը դիմելով: Բայց երբ նա տեսաւ, որ Պետրօնիան էլ է դուրս գալիս, կանգ առաւ և նորան ձեռքի նշանով կանգնեցրեց:

— Դու, ինչպէս ես քեզ հրամայել եմ, երիտասարդ Իսկարիոտացու մասին տեղեկութիւն քաղել ես:

— Տէր,—պարկեշտութեամբ պատասխանեց Պետրօնիան,—քաղաքում ձայներ են պտտում, որպէս թէ Իսկարիոտացին մեռել է:

— Մեռե՞լ է:

Կայիափան տատանուեց և, վայր չը ընկնելու համար, Պետրօնիայից բռնեց: Ապա շարունակեց նա հազիւ լսելի ձայնով.

— Նա մեռա՞ւ, ասում ես դու:

Նորա աչքերի առջևը մթնեց,—նա ոչինչ չէր հասկանում: Երբ նա ուշքի եկաւ, տեսաւ, որ Պիղատոսը և Յուսաիցեան, մօտ կանգնած, իւր վերայ էին նայում՝ մեծ ուշադրութեամբ, Իսկ Արեմաթացի Յովսէփը բռնել էր նորա ձեռքից:

— Քեզ ինչ պատահեց, Կայիափա,—հարցրեց խորհրդականը:

—Ասա՛, ինչ մի անցք անցաւ:

— Ոչինչ, ոչինչ,—և հպարտ քահանայապետը, զսպելով իրեն,

դարձեալ սկսեց աչքերով հարիւրապետին մանգալ:—Դու ասացիր, որ քաղաքի մէջ խօսում են իբր թէ Յուդայի մահուան վերաբերեալ բաներ: Այդ չէ կարող պատահել: Նա ինչպէս էր կարող մեռնելու:

— Հրամանատար,—նա ինքնասպանութիւն գործեց—գոնէ այդպիսի ձայն է տարածուած:

Կայիափան ձեռքը աչքերին սեղմեց, որոնց առջև հրային գունդեր էին պտտւում: Ապա կեղծ հանգստութեամբ և չինծու սառնասրտութեամբ բոլորի վերայ նայեց. նորա դէմքը սարսափելի գունատ էր:

— Ինձ միմիայն մի միտք է զարմացնում,—ասաց նա դողդոջուն ձայնով,—որ երէկ Յուդան առողջ էր և կենդանի, իսկ այսօր նա մեռած է: Նա մի խելատար երիտասարդ էր, վայրենի, խաբուսիկ ցանկութիւններով օժտուած, բայց՝ այնուամենայնիւ՝ հայրը ջերմ սիրում էր նորան: Իսկ նորա քոյր Յուդիթը...

Այստեղ նորա ձայնը կտրուեց, տեղի տալով անզուսպ բարկութեան և կատաղութեան. նա կոպտութեամբ արիմաթացու ձեռքից բռնելով, գոռաց.

— Գնանք, նենգագործ մարդ, բայց արդարադատ խորհրդական: Գնանք շուտով. բաց արա քո վիմափոր գերեզմանը, որ կարող լինենք շուտով նորա մէջ ամփոփել այս բոլոր թշուառութիւնների պատճառը: Մնաս բարեաւ, Պիղատոս, օրհնում եմ քեզ և կատարեալ առողջութիւն ցանկանում: Դու—այնուամենայնիւ—արդարադատ վարուեցիր, թէպէտ ուշ և ոչ առանց ստիպողական միջոցների: Եւ քո թոյլտուութեամբ ես այնպիսի պահապաններ կը դնեմ այն սրբապիղծ և աստուածանենգի գերեզմանի վերայ, որոնք իրենց աչալըրջութեամբ գերազանցած պիտի լինին աշխարհիս երեսին գտնուած բոլոր պահապաններից: Նորա մարգարէութիւնը խաբեբայութիւն կը երևայ, և երրորդ օրը.... Ոչ, և ոչ հազար ու երրորդ: Թո՛ղ որոտմունքի ուժը շանթէ, երկիրը խորտակուէ, լեռները տատանուին ու իրենց տեղից շարժուին: Նազովրեցին մեռեալների միջից չը պիտի յարութիւն առնէ:

Եւ սպառնալիքի կալիտ նշանով նա կայարանից դուրս թռչեց, իւր հետևից Արիմաթացուն, Պետրոնիայի հետ, քարշ տալով, որը ամբողջովին խորասուզուած էր անհանգիստ, տարօրինակ մտածմունքների մէջ:

Պիղատոսը և նորա կինը, լուռ, մէկը միւսի վերայ նայելով, միենոյն տեղում կանգնած մնացին: Բազմաթիւ լապտերների դողդոջուն լոյսը, լուսնի գունատ շողքերի հետ միախառնուելով, որոնք

ներս էին թափանցում լուսամուտից, նոցա դէմքերին մեռելատիպ գունատութիւն էր տալիս. այդ դէմքերի վերայ անդրադառնում էին թէ սաստիկ անհանգստութիւն և թէ տանջող մտքեր: Վերջապէս Պիղատոսը, շարժելով, թուլութեամբ գահաւորակին մօտեցաւ: Նորան հետևեց և Յուստիցիան:

— Շատ թանկ կը վճարէի, եթէ ազատուի և կարողանայի հանգիստ լինել այս սարսափից,—քրթմնջաց նա, ուժասպառ բարձերի վերայ ընկնելով և կիսախուփ աչքերով:—Նա բոլորին էլ յաղթեց, անգամ Կայիափային ևս: Երկիւղ անյայտնի, անասելի, անտեսանելի, անմահի կողմից: Թէ ինչ կատարուեց այսօր, մենք հասկանալ չենք կարող, բայց մենք զգում ենք, որ բուն օդի մէջ մի տեսակ գաղտնիք կայ, խոր գաղտնիք, այս ու այն կողմն ենք ընկնում, բայց ոչինչ չենք տեսնում, ոչինչ չենք հասկանում և ոչնչի չենք հաւատում.... բայց երկիւղը մնում է: Նորանից ենք մենք վախենում, թէ հէնց մեզնից: Մենք Այն Մարդուն ծեծեցինք, որը այսքա՜ն զարհուրեցնում է մեզ: Այլ ևս ինչ: Ոչինչ: Նա մեռաւ, և քանի որ նա մեռած է, այլևս ինչից պէտք է վախենալ:

Պիղատոսը խոր յոգւոց հանեց: Յուստիցիան նորա դէմ ծնկների վերայ ընկաւ:

— Սիրելի տէր իմ,—քնքշութեամբ սկսեց նա, այլայլուած ու դողդոջ ձայնով: Պիղատոսը իւր գլուխը դէպի նա դարձրեց:

— Ի՞նչ կը կամենայիր ասել, Յուստիցիա՛.—հարցրեց նա քաղցրալի ձայնով: Ինձ այնպէս է թւում, որ դրութիւնս քեզ անհանգըստացնում է: Բայց հոգիս խաւար է, և մինչև անգամ քո փափագով սէրը չը պիտի թեթևացնէ այդ: Դու նոյնպէս արտասուել ես. քո գեղեցիկ աչքերի մէջ դեռ ևս խոշոր արցունքներ կան լճացած: Այդպիսի թուլութիւնը ինչո՞ւ համար է: Չէ՞ թէ դու ամուր սրտի տէր ես: Այժմս Հռովմում քո մասին ինչ պիտի ասէին: Քո մասին, որ վաղուց յայտնի ես թէ քո արքայական սեզութեամբ, և թէ հաստատամտութեամբ:

Յուստիցիան ոչինչ չը պատասխանեց, նա գլուխը խոնարհեց իւր ամուսնու կրծքին և, ամրութեամբ սեղմելով նորան, անզսպելի և կիզիչ արցունքի հեղեղով լցուեց: Պիղատոսը փայփայանքով գըրկեց նորան և իւր դողդոջուն ձեռքերը նորա ալեծածան մազերի գողտրիկ խոպոպիքներին տարաւ, մի ինչ որ անկապ խօսքեր շշնջալով: Բայց և այնպէս, նա ինքը ևս չը հանդարտեց. նորա ակնարկը միշտ սենեակի մութ անկիւններին էր դառնում, կարծես թէ այն

տեղերում որևէ անտեսանելի վկայ լինէր պահուած։ Ապա, երբ կնոջ հեկեկանքը փոքր ինչ հանդարտեց, նա ասաց.

— Պատմիր ինձ, Ցուստիցիա, այն բոլորը, ինչ քեզ անհանգստացնում է։ Ի՞նչ տեսակ գաղտնի վիշտ է կեղեքում քեզ։ Միթէ փոթորիկը կամ երկրաշարժը քեզ վախեցրին. ես էլ եմ քեզ անհանգիստ անում, ուրեմն ինչո՞ւ չը պիտի բաց և արձակ մտքիդ եկածը պատմես։ Իսկ ես, ես սիրում եմ քեզ, Ցուստիցիա, կեանքիցս աւելի. անուշիկ Ցուստիցիա, ես իրաւունք ունիմ քեզ հետ բաժանելու քո վիշտը։ Հոգիս քո հոգուց ուժեղ է կամ, ծայրայեղ դէպքում, այդպէս պէտք է լինէ։ Նայիր ինձ վերայ,—և նա երկու ձեռքով կնոջ արտասուաթաթախ երեսը բարձրացրեց։—Թեթևացրո՛ւ քո հոգին, Ցուստիցիա,—երազդ պատմիր ինձ։

Ակամայ ճիչ արձակելով, Ցուստիցիան յանկարծ դուրս թռաւ տեղից. մազերը փոքրիկ խոպոպներով փռուում էին նորա ճակատի և այտերի վերայ, իսկ աչքերը մի ինչ որ բան էին փնտռում այնտեղ,—հեռու ընկած գաղտնախորհուրդ այգու մէջ, որը լուսնի խորհրդաւոր փայլով էր սփռուած։

— Ոչ, ո՛չ,—շշնջաց նա երկիւղի մէջ։—Ես չեմ կարող, ես չը պիտի համարձակվիմ։ Այդ երազը նոյն չափով ահուելի է, ինչ չափով սարսափելի են այսօրուայ բոլոր անցքերը։ Նա չէ կարող մխիթարել։ Այդ բոլոր կատարուելիք անցքերի նախագուշակութիւնն էր։ Դու բաւականին ամրապնդուած չես, որ կարող լինես դարձեալ լսելու նորա նոր բօթաբեր զրոյցներ, որոնք դէպի ամբաղդութիւնն են առաջնորդում։

Նորա ձայնը կտրուեց, ապա նոյնատեսակ շշունջով կցեց նա.

— Պօնտի, դու հասկացար, թէ ինչ ասաց Պետրօնիան։—Նա Իսկարիովտացու մահուան մասին էր խօսում։

— Ի հարկէ հասկացայ ես,—պատասխանեց Պիղատոսը։—Ի՞նչ կայ այդտեղ զարմանալու։ Դա նա է, որ մատնեց իւր Ուսուցչին նորա թշնամիներին, ակնյայտնի է, հէնց այդ պատճառով իսկ՝ նա չէր կարող ներել՝ ինքն իրեն՝ իւր վարմունքը։ Ես նորան այս առաւօտ դատաստանատուն կոչեցի, բայց նա չը գտնուեց։ Նա խղճի խայթմունքից՝ ինքնասպանութիւն գործեց, այդպէս եմ, յամենայն դէպս, ենթադրում ես. արժանի մահ մատնչին։ Դու չե՞ս ցաւում նորա մասին։

— Ես չէի ճանաչում նորան,—դողալով պատասխանեց Ցուստիցիան,—բայց՝ միևնոյն է՝ եթէ մինչև անգամ ես և ճանաչէի նորան,

դարձեալ չը պիտի խղճայի։ Բայց Յուդիթը սիրում էր նորան։

Պիղատոսը անհամբերութեան շարժմունք գործեց։

— Ես չափից դուրս զարմանում եմ, թէ ինչու համար պիտի հետաքրքրուես դու այդ ճարպիկ ու դատարկաձև աղջկանով,—ասաց Պիղատոսը։—Որ նա աննման գեղեցկութեան տէր է, այդ ես թոյլ եմ տալիս կարծելու, բայց ինքնասիրութիւնը նորա գեղեցկութեան բոլոր քաղցր տպաւորութիւնը սպանում է։ Ի՞նչպէս կարողացար դու մի այդպիսի ընկերուհի գտնելու։

— Նա ինձ ընկեր չէ,—պատասխանեց Ցուստիցիան. Նա մնացել է առանց մօր խնամակալութեան, առանց մի որ և է հսկողութեան, և այդ պատճառով ես երբեմն նորան խորհուրդներ էի տալիս, թէպէտ—ճիշտն ասած—իմ խորհուրդները պէտք էլ չէին գալիս։ Չարը արմատ էր ձգել նորա հոգու մէջ։ Բայց և այնպէս, Պօնտի, հաւատացի՛ր ինձ, նորա պարծենկոտութեան վերջը հէնց այսօր է։ Եթէ նորանում զգայուն սիրտ կայ, ուրեմն այդ սիրտը տանջուում է այսօր։

Պիղատոսը ոչինչ չը պատասխանեց։ Երկար լռութիւն տիրեց։

Այդ ժամուն երգեցողութեան մի ուրախարար ձայն հնչեց, սքանչելի ելևէջներ տարածելով. մի քանի երիտասարդ մարդիկ և աղջիկներ անցնում էին այգու մօտից. գիշերային խաղաղութեան մէջ ձայները զգալի զանազանուում էին միմեանցից։

— Էֆրի՛, յիշում ես, անցած շաբաթ,—ասաց տղամարդկային մի ձայն,—երբ ժողովուրդը գնում էր ընդունելու այն Նազովրեցուն, որ այսօր մեռաւ, այն ժամանակ մենք մի երգ էինք երգում. դու նորա եղանակը յիշում ես։ Այդ երգը հիանալի խաղ ունէր և լաւ եղանակ ու վերջանում էր այս խօսքերով. «Ովսաննա» *)։

Եւ մաքուր, հնչուն թենօրով (теноромъ) **), կրկնեց նա այդ խօսքը. նորա ընկերակիցները նոյն ժամուն լսելով նորա ձայնը, գեղգեղուն եղանակով կցեցին. «Ովսաննա՛, օրհնեալ որ գաս յանուն Տեառն. խաղաղութիւն յերկինս, և փա՛ռք ի բարձունս»։

Այդ դիւթական մեղեդիայի մեծայաղթ և չնաշխարհիկ ձայնը, կարծես թէ, Ցուստիցիային վախեցրեց. Նա բռնեց ծանրկեկ վարա-

*) Ձայն մաղթողական յեբրայեցի լեզու, այսինքն է Կեցո Տէր, կամ թէ Փրկեա Տէր, և կամ Կեցցես, Կեցցէ։ (Վարք Քրիստոսի—Հ. Գ. Վ. Այվազովսկի)։ Ծ. Հ. Թ.

**) Теноръ գ. ա. Բարձրագոյն ձայն առն. միջին ձայն ընդ մէջ բամբ և մեղմ ձայնից։—(Բառ. Երէցփոխ.) Ծան. Հ. Թարգմ.

գոյրից, որը լուսամուտի մի մասն էր ծածկում, նորան ջղաձգութեամբ երկու ափերի մէջ սեղմելով, որպէս թէ մի տեսակ ննջուկ գտնելով նորա մէջ, իր վրդովմունքի դէմ։ Յանկարծ երգեցողութիւնը կտրուեց և նախկին ձայնը ծիծաղով կոչեց.

— Զգուշացէք քահանաներից։ Եթէ նոքա լսեն մեր երգեցողութիւնը, ուրեմն և մենք խաչուած պիտի լինենք։

Դարձեալ ծիծաղ հնչեց, բայց աւելի թոյլ և փոքր ինչ հեռաւորութիւնից եկող։

Յուստիցիան վարագոյրը ձեռքից բաց թողեց, որպէս թէ ներքին ցրտից՝ ամբողջովին դողալով։ Պիղատոսը անհանգստութեամբ նորա ամեն մի շարժմունքներին ուշադիր էր լինում։ Նա դանդաղութեամբ մօտեցաւ Պիղատոսին, քայլ առ քայլ, ընկաւ նորա շարքում նստարանի վերայ. Յուստիցիայի ձեռքերը ակամայ ցած ընկան, իսկ ակնարկը անմտացածին յառեց տարածութեան վերայ։

— Մի այս տեսակ մեղեդի կար և իմ երազի մէջ,—շշնջաց նա վերջապէս։—Ինձ թւում էր, թէ մեռեալները յարութիւն էին առել և «Ովսաննա» էին երգում։

Պիղատոսը լուռ էր, նա վախենում էր Յուստիցիայի մտքի ընթացքը խանգարելու։ Յուստիցիան բարձրացրեց դէպի նա իր գլուխը և իր վշտալի աչքերը ձգելով նորա դէմքին, հարցրեց.

— Դու անշուշտ ցանկութիւն ունիս գիտենալ իմ երազը։ Քեզ այդ չը պիտի՞ յոգնեցնէ։

— Ոչ, աւելի շատ դա պիտի հանգստացնէ ինձ,—պատասխանեց Պիղատոսը, և իր կնոջ ցուրտ ու թոյլ ձեռքը իր շրթունքներին տարաւ։—Եթէ մի բան կայ, որ կարող է մխիթարել ինձ, ինչ կարծիք, որ այդ նա է, որ ես բաժանել կարողանամ քեզ հետ քո վիշտը։ Ասա ինձ բոլորը, քանզի այն րոպէից, ինչ դու ինձ մօտ դատարան մարդ ուղարկեցիր, քո ընթացքը անհանգստացնում է ինձ, քանի որ այդ ժամուց դու քեզ չես նմանում և ընթացքդ չէ համապատասխանում նախկին դրութեանդ։

Յուստիցիան հառաչանք արձակեց։

— Այո, այդ ինձնից չէր և ես ինքս այս ամբողջ օր ինձ նման չեմ։ Երազը ես տեսայ առաւօտեան, քո դատարան գնալուց յետոյ։ Ես մահիճիցս վեր կացայ, բայց դեռ նաժիշտներիս չէի դիմել. շորերս կիսով չափ վերաս ձգած, ես նստեցի հայելու դիմաց, մազերս կարգի բերելու համար։ Աչքերս մի տեսակ ծանրացան, և ես չը կարողացայ միտքս 'ի մի ամփոփելու։ Յանկարծ հայելու մակերևոյթը որպէս թէ սևացաւ, ինչպէս պարզ երկինքը, յանկարծ ծածկուած ո-

րոտմունքի ամպով։ Ապա մի տեսակ ձայն լսուեց, որպէս թէ ամեհնակատաղի ու կործանիչ ալիքներից, և ես չը գիտեմ, թէ ինչ պատահեց ինձ հետ, բայց ինձ այնպէս էր երևում, որ ես քնած չեմ, այլ միայնակ թափառում եմ որ և է խաղաղ տեղի վերայ, յաւիտենական աստղերի տակ։—Նա կանգ առաւ, նորա ձայնը դողաց, ապա նա նորից սկսեց։—Գաղտնախորհուրդ խաղաղութիւն էր ընկած ամեն բանի վերայ։ Ո՛չ օդ կար, ո՛չ լոյս։ Ինձ թւում էր, թէ ես կանգնած եմ մի բարձր ժայռի վերայ և դէպի ներքև եմ նայում, իսկ այնտեղ—ներքևում, պարկած են միլիօնական մեռեալներ—թէ մարդիկ և թէ կանայք, սպիտակ ինչպէս մարմարը։ Նոքա կողք կողքի վերայ էին պարկած, իսկ նոցա վերևում տարածւում էր մի լայն ստուեր, կարծես թէ ամենակարող լայն թևերից ընկած լինէր այդ, որոնք բացուած էին։ Մինչ ես նոցա վերայ էի նայում և զարմանում էի նոցա անծայր թւին, մի տեսակ կախարդական երաժշտութեան ալիքներ էին անցնում, կարծես թէ անհամար քնարների ձայն լինէին, և ահա, որտեղ որ է, հեռու, շատ հեռու մի ձայն հնչեց. «Ովսաննա»։ Մինչ յանկարծ գաղտնամիտ ստուերը, որ թագաւորում էր մեռեալների վերայ, անյայտացաւ և մի ահագին փայլուն խաչ երևաց, իսկ նորա յետևից սպիտակ, ամառնային ամպի նման, հրաշալի, ինչպէս ինքը արեգակը,—Նազովրեցին։ «Զարթեցէք մեռածներ,—կոչեց նա,—արթնացէք, քանզի մահը վերջացած է։ Զարթեցէք և յաւիտենական կեանքի մէջ մտէք դուք»։ Եւ նոքա կատարեալ ուժով զարթեցին և առաջ անցան գերբնական գեղեցկութեան մէջ մտած,—այդ վաղուց կորած մեռելների միլիօնական խումբը։ Նոքա անթիւ շարքերով կանգնեցին, բացուած ծաղիկների նման. լոյսի ճառագայթներով լուսաւորուած, նոքա կանգնած էին, ինչպէս մեծ հրեշտակներ, և բարձրաձայնով կոչում ու աղաղակում էին. «Փառք քեզ, ով Քրիստոս, Առաքեալ Աստուծոյ։ Փառք Քեզ, ներողիդ մեզ մեր յանցանքները և մեզ յաւիտենական կեանք տուող։ Փառք Քեզ, Փրկիչ աշխարհի։ Մենք երկրպագում ենք Քեզ դարէ դա՛ր»։ Եւ ես երազիս մէջ վախեցայ ու աչքերս շրջեցի, ուժ չը ունենալով տանելու բոլոր շրջապատողների հրային փայլը։ Երբ ես նորից նայեցի, ամեն բան փոխուած էր արդէն…

Այստեղ Յուստիցիան կանգ առաւ, և աւելի մօտ շարժուելով դէպի ամուսինը, նորա երկու ձեռքը բռնելով, մի թափանցիկ և զըննողական ակնարկ ձգեց նորա դէմքին։

— Ճշմարիտ—շշնջաց նա—որպիսի տարօրինակ տեսիլք։ Եւ իմ ինչի՞ս է այդպիսի տեսիլը։ Ի՞նձ, որ միշտ կասկածել եմ աստուած-

ների գոյութեան մասին և որ հաւատում էի, որ ամեն բանի վախճանը—մահն է։ Ինձ ահռելի և անտանելի է այն գաղափարը, թէ՝ մեռած մարդիկ կարող են յարութիւն առնել։

Պիղատոսը սիրալիր և կարեկցաբար նայեց ՚ի պատասխան նորա ակնարկին։

— Այո՛, սարսափելի է և անդուրեկան,—ասաց նա,—ես չէի կամենալ դարձեալ ապրելու, եթէ որ ինձ հարցնէին, քանի որ մենք այնպիսի բաներ ենք գործում, որոնց չը մտաբերելը լաւ կը լինէր, իսկ մեղք գործելով, մեր միակ փրկութիւնը մահուան մէջ է կայանում—յաւիտենական մահուան, մոռացման մէջ՝ թէ մենք երբ և իցէ գոյութիւն ենք ունեցել։ Իսկ, կարող է պատահել, որ ինքնամոռացութիւն չը կայ,—գուցէ մեր մէջ յաւիտենականութեան մի մասնիկ կա՞յ։

Նա կանգ առաւ, կասկածանքով իւր չորս կողմը նայելով։

— Դու ինձ բոլորը պատմեցիր։ Այլ ես երազիդ մէջ ոչինչ չը տեսա՞ր դու։

— Աւաղ, այդ բոլորը չէր,—և Յուստիցեան խիստ այլայլմունքից բռնադատուած, տեղից վեր թռաւ։—Ա՜խ, երանի դա լինէր բոլորը։ Այն բոլորը, ինչ տեսայ ես դրանից յետոյ, բոլորն էլ գաղտնիքի մէջ թաղուած սարսափ է ու անսահման տանջա՛նք։ Այն, ինչ ես յետոյ տեսայ, հէնց այդ դրդեց ինձ քեզ մօտ այսօր մարդ ուղարկելու, այն էլ առաւօտեան պահուն։ Ես մտածեցի, որ կարող պիտի լինիմ անբաղդութեան առջեն առնելու և քո ճանապարհից չարը հեռացնելու։ Սիրելի ամուսինս, եթէ որ երազները իրաւացի աւետողներ են ճըշմարտութեան, ուրեմն քեզ անլսելի սարսափ է սպասում։

Պիղատոսը նորա անհանգիստ դէմքին նայելով, աշխատեց ժպիտ ցոյց տալ։

— Երկիւղ մի կրիր իմ փոխարէն և իմ վերաբերութեամբ, Յուստիցեա,—ասաց նա։—Հաւատացիր, այլ ես ուրիշ վիճակ չը կայ, քան մահը ծանր, իսկ նորանից ոչ ոք կարող է փախուստ տալ։ Ես զարմանում եմ քո երկիւղիդ վերաբերութեամբ. դու միշտ այնքան անվախ էիր։ Քաջալերուիր։ Չէ թէ չեմ կարող ես միմիայն քո անբաղդ երազիցդ մեռնելու։ Ասա՛։ Այլ ես ինչ տեսար դու։

— Ես մի մեծ ովկիանոս տեսայ,—մրմնջաց Յուստիցեան, ձեռքը յաղթական կերպով բարձրացնելով։—Ովկիանոս մարդկային արիւնի, որ ծածկել էր բոլոր աշխարհը։ Եւ այնպէս էր երեւում, որ այդ արիւնային ծովի իւրաքանչիւր կաթիլը մի մի առանձին ձայն ունէր, որ գոռում էր. «Ողջունում եմ քեզ, Յիսուս Նազովրեցի, Որդի Յաւի-

տենական Աստուծոյ»։ Իսկ այդ ահռելի ալիքների վերայ, գերթ մի կտրուկ նաւ, մի հիաչքնաղ և սքանչելակերտ տաճար էր լողում, ամբողջովին ոսկով և թանկագին քարերով փռուած, որի ամենաբարձր կատարում փայլում էր մի խաչ—ամբողջովին ադամանդների մէջ կորած՝ գեղատեսիլ ու շնաշխարհիկ։ Եւ ես հասկացայ երազիս մէջ, որ բոլոր կայսրները, թագաւորները և խորհրդականները, որոնք գտնուում են այս աշխարհում, կառուցել էին այդ տաճարը ՚ի յիշատակ Նազովրեցու և Նորան երկրպագելու համար։

— ՚Ի յիշատակ Նազովրեցու և Նորան երկրպագելու համար.—կրկնեց Պիղատոսը դանդաղ։—Տաճար՝ արեան ծովի վերայ։ Ապա՛, դեռ դարձեալ ինչ։

— Ապա,—արտասանեց Յուստիցեան, ամբողջովին կլանուած իւր պատմութեան մէջ և անբնական լայնացած բիբերով,—ապա երկինքը պատառուեց և բազմաթիւ հրաշալի, բայց անսահման վշտալի դէմքեր նայեցին դէպի ներքև, իսկ արիւնային ալիքներից յուսահատութեան և աղերսանքի վայրենի ձայներ բարձրացան։ Այդ ձայները լսելով, ես հասկացայ, որ այդ սքանչելակառոյց տաճարը սեղմեց իւր տակ դուրս պրծնելու ուժ գործ դնող մարդկային հոգիներին։ «Ո՜հ, Տէր,—դեռ երկար ժամանակ աղաղակում էին նոքա դարձեալ,—դեռ երկար պիտի տեւէ. օգնիր մեզ, Տէր, քանզի մենք կորչում ենք»։ Եւ յանկարծ սարսափելի որոտմունքի դղրդիւն հնչեց ու ձայն բարձրացաւ և մի ահագին սուր ընկաւ երկնքից շեշտակի, և տաճարը ուղիղ երկու մասի կիսեց, այնպէս, որ այդ երկու կտորն էլ ըսկըսեցին առանձին և առանձին լողալ արեան ծովի վերայ։ Իսկ երբ տաճարը խոնարհուեց, այն ժամանակ ես տեսայ բոլոր սարսափիս գաղտնիքը.—մի սեղան, մեռելների արիւնով ցնցուած և ննջեցեալների ոսկորներով շրջապատուած, իսկ նորա չորս բոլորը տոպրակներ կախուած, որոնք պատառուում էին կեղտոտ ճանապարհներով ձեռք ձգուած ոսկու լեցունութեամբ,—իսկ ուղիղ սեղանի դիմաց, ծնկաչոք, որպէս թէ աղօթքի մէջ, սուրբ խօսքեր ՚ի շրթունս և ոսկի դրամներ ջուխտակ ափերի մէջ, չար հոգին էր կանգնած—քահանայական հագուստի մէջ։

Յուստիցեան կանգ առաւ, ապա, ծանր շունչ քաշելով, շարունակեց նա.

— Ես միշտ տաճարի երկու մասերին էի հետեւում, որոնք պըտոյտ էին գալիս արփինային անեզրութեան և անտակ խորութեան վերայ, ինչպէս արհաւիրքի վախճանի վերայ—և հնչեց յանկարծ անռելի մի ձայն.—«Բազումք ասիցեն ցիս յաւուրն յայնմիկ. Տէ՛ր, Տէ՛ր,

ո՜չ յանուն քո մարգարէացաք, եւ յանուն քո դեւս հանաք, եւ յանուն քո զօրութիւնս բազումս արարաք: Եւ յայնժամ ասացից ցնոսա՝ եթէ Ոչ երբէք գիտէի զձեզ. ի բաց կացէք յինէն ամենեքեան ոյք գործէիք զանօրէնութիւն»: Եւ մինչ ձայնը դեռ հնչում էր, տաճարը անդունդի մէջ խորասուզուեց—և ոչինչ չը մնաց, բացի վերին խաչից,—միայնակ ջրի վրայ լողացող:

— Դարձեալ խաչ,—ասաց Պիղատոսը՝ անհանգստութեամբ:—Գուցէ Նա սպառնում է յաւիտենական սիմվոլ (նշանաբան) մնալու:

— Չը գիտեմ, — պատասխանեց Յուստիցիան՝ մտածկոտութեամբ:—Իմ երազիս մէջ Նա բոլոր ժամանակ կար և գոյութիւն ունէր: Բայց վերջաւորութիւնը լսիր: Ինձ այնպէս երևաց, որ ես խաչի հետևից եմ շտապում, որը միայնակ տատանւում է ալիքների մէջ, և մտածում եմ, նոյնպէս էլ արդեօք և դա կը սուզուէ յատակը, ինչպէս և սքանչելագործ տաճարը: Նա լողում էր թէ դէպի յետ և թէ դէպի առաջ, և ինչ տեղից նա անցնում էր,—շառագոյն ալիքները լոյսի շողջերի էին փոխւում ու հրաշէկ փայլ ստանում: Ապա թէ մի ինչ որ սքանչելի բան պատահեց. ոտեղից որ է շտապով մի նաւակ մօտեցաւ,—փոքրիկ, թեթև, համարեա թէ օդային, սպիտակ գերթ ծովի փրփուր և նորա վրայ, բոլորովին միայնակ, կայտով քաջութեամբ կառավարելով, այդ փրփրադէզ անդունդի վրայ, մի կին էր նստած: Նորան ճանապարհին զանազան այլանդակ ծովային հրէշներ էին սպառնում, իսկ խեղդուողների գունատ ձեռքերը նորանից էին բռնում. և երբ որոտմունքի մօտեցող ձայնը գոռաց, նա—այնուամենայնիւ—անվեհեր ընդմիշտ դէպի առջև էր լողում—ժպտելով և մի ինչ որ գեղահիւս երգ երգելով: Ես հետևում էի նորան, զարմացմամբ նկատելով, որ նա ուղղակի դէպի խաչն էր լողում: Միշտ մօտ և աւելի մօտ էր շարժւում նա նաւակը, մինչ վերջապէս հասաւ խաչին, բռնեց նորան երկու ձեռքով ու հրճուանքով դէպի երկինք բարձրացրեց. «Յիսուս, առաքեալ Աստուծոյ,—կոչեց նա,—'ի սէր Քո անսահման սիրոյ, մենք յաւիտենական փառք ենք պահանջում»: Կայծակի արագութեամբ նորան պատասխան տուող եղաւ: Արինային ծովը կենդանի կրակի կերպարանափոխուեց—նորա նաւը սպիտակ լուսափայլ ամպի փոխուեց, իսկ նա ինքը նոյն գիրքով հրեշտակի փայլուն թևեր ստացաւ, իսկ այդ խաչից, որ նա ընդմիշտ յաղթական ձևով բռնել էր, մի այնպիսի պարզ գերբնական լոյս էր ցոլում, որ ամբողջ երկինքը նորանով լուսաւորուեց: Հնչեց որոտմունքը, ապա լսուեցին մի տեսակ կախարդական նուագածութեան ձայներ, և դարձեալ Նազովրեցին երևաց, որին առաջնորդում էին

հազարաւոր փայփլուն հրեշտակներ, իսկ Նազովրեցու հետևից մի նոր աշխարհ, յարութիւն առած հին աշխարհից և ինչպէս մի առաւօտեան արեգակ: Արծաթահնչիւն ձայնով և անյաղթելի փառքով Նա տարաձայնեց. «Երկինք և երկիր անցցեն, եւ բանք իմ մի անցցեն»:

Յուստիցիան շունչ քաշեց, յետոյ վրդովմունքից կտրուող ձայնով շարունակեց.

— Նազովրեցին, հէնց Նազովրեցին ինքը երևաց ինձ—այդպիսի փայլուն տեսքով և փառքով շրջապատուած: Նոյն ինքը, որին դու, Պօնտիյ, պարտաւոր էիր դատելու և որին մահուան պատիժ պիտի վճռէիր: Զարմանալի չէ, որ ես քեզ մօտ ուղարկեցի ծառայիս: Իմ գրութեան մէջ ես կը գրէի քեզ, որ Նա երազիս մէջ ինձ ինչպէս Աստուած երևեցաւ, բայց վախեցայ, որ մի որ և է ուրիշը կարդայ իմ ուղարկած գրութիւնը: Դորա համար էլ, գրեցի ես. «Չկայ ինչ քո եւ արդարոյն այնորիկ. զի բազում անցք անցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորա». այժմ ես տեսնում եմ, որ դա յիմարութիւն էր, դու չէիր կարող կանացի խնդրի վրայ ուշադրութիւն դարձնել, երբ գործը օրէնքի կատարումից էր կախուած, բայց ես այդ հասկացայ միմիայն այն ժամանակ, երբ ծառաս վերադարձաւ: Դեռ ևս ես աշխատում էի զգուշացնել քեզ:

— Ինչո՞վ,—կտրեց նորան Պիղատոսը խռպոտ ձայնով:—Ինչի՞ մէջ: Իրաւ է, որ Նա արդար էր և 'ի զուր էր Նորան մահուան դատապարտելը: Բայց միթէ դու չը գիտես, որ միշտ արդարներն են տանջւում: Իսկ եթէ դու երազիդ մէջ տանջուեցիր, այդ հարիւրերորդական մասն է այն բոլորի, ինչ տեսայ ես և ինչքան տանջուեցի,—այդ բոլորը արդէն երազ չէր:

Նա խոր ու ծանր յոգւոց հանեց: Յուստիցիան նորա կարգին նստելով, մօտեցաւ նորան և իւր գլուխը նորա ուսերի վրայ դրեց:

— Ես դեռ բոլորը չը պատմեցի քեզ,—սկսեց նա դողդոջ ձայնով,—մնացածը քո վիճակին է վերաբերում:

Պիղատոսը, աչքերը բանալով, իւր կնոջ վրայ հարցական նայուածք ձգեց:

— Իմ վիճակին,—կրկնեց նա սառնասրտութեամբ.—ինչ տեսակ էլ լինէ նա, բայց ես մտածում եմ, որ ես ուժ պիտի ունենամ տանելու նորան:

Յուստիցիան նորա երկու ձեռքը բռնեց, ջղաձգաբար սեղմելով նոցա:

— Ես գիտեմ, որ քո ուժը շատ է,—ասաց նա,—հակառակ

դէպքում դու հռովմայեցի չէիր լինիլ։ Բայց կորչել, ինչպէս Իսկա-րիովտացին...

Նա դողաց։

— Ինչպէս Իսկարիովտացի՞ն.—բացականչեց Պիղատոսը՝ զըզ-ուանքով։—Ո՛չ, ես մատնիչ չեմ։

Կինը նայեց ամուսնու վերայ, Յուստիցիայի երեսը սարսափելի գունատուեց, շրթունքները դողացին։ Նա՝ ակնյայտնի էր՝ ամբա-պնդում էր մի ծայրայեղ ու չափից դուրս անդուրեկան բան ա-սելու։

— Աստուածները կարող կը լինէին յանդիմանել քեզ վախկո-տութեանդ մէջ, Պօնտիյ,—ասաց նա վերջապէս խեղդուկ ձայնով և երկիւղածութեամբ։

Նա դէպի կինը շուռ եկաւ բարկացկոտ և կասկածանքով.

— Դու ինչ ասացիր, Յուստիցիա.—բարկութեամբ հարցրեց նա։—Կամ թէ լաւ չը լսեցի ես քեզ։ Դու չը պիտի համարձակուէիր ինձ վախկոտ կոչելու. այդպէս չէ՞։

Յուստիցիայի սիրտը ուժգին բաբախեց, բայց աներկիւղ ակ-նարկը նորա դէմքից չը հեռացաւ։

— Եթէ որ դու տեսար Նազովրեցու այն բոլոր չնաշխարհիկ ու անսահման փառքը,—շշնջաց նա մեղմութեամբ, և նորա ձայնը կտըր-ուեց...

Պիղատոսը խոնարհեց գլուխը ու բոլոր մարմնով կծկուեց, կար-ծես թէ մի անտեսանելի ձեռքի ուժեղ հարուածով կարկամած։

— Շարունակիր,—ասաց նա թոյլ ձայնով։—Թէպէտ ես գիտեմ այժմ, թէ դու ինչ ես ուզում ասել։

— Եթէ որ դու տեսար, որ Նազովրեցին գերագոյն փառքի տէր է,—շարունակեց նա աւելի հաստատուն ձայնով,—եթէ դու ճա-նաչեցիր Աստծուն Մարդի մէջ, քանզի դու 'ի զուր ուշաթափութեան մէջ չը ընկար, ուրեմն դու պարտական էիր ամբողջ ազգի առջեւ ճշմարտութիւնը հռչակելու։

— Նո՞քա չը պիտի հաւատային ինձ,—պատասխանեց նա խըռ-պոտ ձայնով, որը աւելի շշնջոցի էր նման.—նոքա պիտի մտածէին, որ ես խելագուրկ եմ եղած, որ ես անընդունակ եմ դարձել կառա-վարելո՛ւ։

— Ի՞նչ կայսր.—պատասխանեց Յուստիցիան չը շփոթուելով։ —Ինչ կը արժենայ քահանաների կարծիքը և խաւար ամբոխի խօսքը համեմատած «Ճշմարտութեան» հետ։ Եթէ որ դու ասէիր նոցա...

— Քեզ ասում եմ, որ ինձ խելացնորի մէկը պիտի հաշուէին և

ցնորուածի տեղ ընդունէին,—ասաց Պիղատոսը.—նա կանգ առաւ և մի վրդովմունքով սկսեց սենեակի մէջ ման գալ։—Ինձ պիտի ասէին, որ տեսողական պատրանքը խաբում է ինձ ու մտքերս մոլորուած են և այս ու այն կողմ են թափառում, վայր ի վերոյ երեւակայութիւն-ների ազդեցութեան տակ։ Ի՞նչպէս ես կարող համոզել դու թեթե-ւամիտ ամբոխին անբնական մի որ և է գոյացութեան մէջ։

— Հապա երբեմն նոքա իւրենք իրենց ինչպէս են հաւատաց-նում.—հարց տուեց Յուստիցիան։—Այդ նոյն հրէաներն են, որոնք երդւում են, որ հրաշքներ եղել են, որոնց դժուար է հաւատալ նոյն-պէս։ Միթէ նոքա հէնց իւրենք չեն ասում, որ Աստուած ինքը յան-ձնեց Մովսէսին տասն պատգամները և այն Սինա լեռան վերայ։ Միթէ նոքա խորապէս համոզուած չեն, ու չեն հաւատում, որ ինքը —Եհովան սովորեց Յեփթայէ դատաւորին սպանել իւր հարազատ աղջկան—երդման պատճառով *)։ Այդպիսով՝ ինչո՞ւ նոքա մի դէպ-քում հաւատում են անբնական անցքերին, իսկ մի ուրիշ դէպքում՝ չը պիտի հաւատան նոյնանման արտասովոր անցքերին։

— Չը գիտեմ, չը գիտեմ,—պատասխանեց Պիղատոսը, միշտ միևնոյն անհանգստութեամբ սենեակի մէջ ման գալով։—Մարդկանց անհետեւողականութեան պատճառներ մի պահանջիր ինձնից։ Ինչ կարողացայ անելու, արեցի ես։ Բայց եթէ ես նոցա ասելիս լինէի, թէ ինչ էի տեսել ես, ինձ դէպի դատարան քարշ պիտի տային, ինչպէս մի խելաթափ խեւուկի,—իսկ Կեսարը տեղից պիտի զրկէր ինձի։

— Բոլոր կորուստն էլ թեթեւ պիտի լինէր,—ասաց Յուստի-ցիան մտածկոտութեամբ,—միայն թէ մարդուս խիղճը անդորր և մաքուր լինէր։

Պիղատոսը ոչինչ չը պատասխանելով, իւր ման գալը շարու-նակեց։

Յուստիցիան դէպի լուսամուտը մօտեցաւ, այգու խորհրդաւոր գեղեցկութեամբ գգուելով։

— Գունատ լոյսը, ինչպէս ահա այս լուսինը, լուսաւորեց ինձ երազիս վերջում,—սկսեց նա դարձեալ։—Ինձ թւում էր, որ ես կանգնած եմ մի ամենավայրի, ամայի, բոլորից բարձր թողի արած մի տեղի վերայ, որը աշխարհիս—այնուամենայնիւ—մի մասն էր

*) Յեփթայէ դատաւոր, Յեփթայէ—բացող։ Է անուն դատաւորի Իսրայէլի որդւոյ Գաղ'աղու։ Դատ. 11, 30—40։ (Բառգիրք Հ. Լեզ. Վ. 1763.) Սա՝ համա-ձայն երդման՝ սպանեց իւր աղջկան։

Ծան. Հ. Թարգմ.

կազմում. ահագին լեռնային գագաթները—սառն և փայլուն, շրջապատում էին ինձ, իսկ իմ ոտքերի տակ մի լիճ կար—մութը, հրնացած, անշարժ ու մռայլատիպ: Եւ յանկարծ քեզ տեսայ ես, Պօնտիյ: Դու թափառում էիր, ինչպէս մի հոգի, մի ուրուական, ՝լերկ ժայռերի վերայ ու այդ վայրենի լեռների մէջ. դու ծերացած ու մաշուած էիր երևում. քո դէմքը մեռելատիպ գունատութեամբ էր ծածկուած: Ես կոչեցի քեզ,—դու չը պատասխանեցիր, բայց այնքան մօտեցար, որ ես ցանկացայ գրկել քեզ, բայց չը կարողացայ: Ակընթարթի մէջ,—այստեղ Յուստիցիան շունչ եկաւ, նորա աչքերը սևացան սարսափից,—ինչպէս քամիով քշուած ամպ, դու բարձր ապառաժի վերայ քշուեցիր, ու կախ ընկար այն նոյն մութ, անայլելի լճի ուղիղ վերևից, քամնեցուցիչ ապառաժի բեկորներից բռնած. այդտեղ դու կանգ առար, ապա ամպրոպային գոռոցով—որից ամբողջ հոգիս փշաքաղուեց—բացականչեցիր դու. «Յիսուս Նազովրեցի, Որդի Աստուծոյ, ողորմեա՛ ինձ»: Եւ նախ, մինչ ես կարող լինէի կանգնեցնել քեզ, դու ներքև, դէպի անդունդ ընկար,—այդ սառն, մութ, անձայն լիճը, որը կլանեց քեզ անհետ, դերթ յաւիտենական գերեզման: Սարսափը պատեց ինձ, և զարհուրելի ճչոցով զարթեցի ես:

— Այդպիսի երկիւղի մէջ զարթնելով, դու միևնոյն ժամուն ինձ մօտ մարդ ուղարկեցիր, այնպէս չէ՞,—հարցրեց Պիղատոսը՝ գըգուանքով և մեղմութեամբ իւր կնոջը մօտենալով, և լի փաղաքշանքով գրկելով նորան:

Յուստիցիան դրական ձևով գլուխը խոնարհեց:

— Այո՛: Իսկ փոքր ինչ ուշ, երբ ուղարկածս մարդը վերադարձաւ, ես լսեցի, թէ ինչպէս էր ամբոխը աղաղակում. «Խաչեցէ՛»... «Բա՛րձ ի մէնջ, բա՛րձ ի մէնջ»... «Ոչ զԴա, զ'Բարաբբա»... «ԶԲարաբբա»... Ո՞վ է այդ Բարաբբան:

— Նա գող է և մարդասպան,—ասաց Պիղատոսը,—բայց նորան ամբոխը համակրում է: Նա նախ պարսկաստանցի յայտնի առևտրական Ճագինի մօտ ծառայութեան մէջ էր, և այնտեղ իսկ հէնց իրեն հաւատացողի արկղիկից անգին մարգարիտ գողացաւ: Բացի դա, նա խառնակիչների մի ամբողջ խմբի մէջ յայտնի տեղ էր բռնում, որը և սպանեց փարիսեցի Գաբրիասին. այդ բոլորը տասն և ութն ամիս սորանից առաջ էր անցնում,—դու այն ժամանակ Հռոմում էիր՝ քո ընկերակիցների մօտ, և դորա համար էլ այդ մասին ոչինչ չը գիտես: Ես կամեցայ Բարաբբային խաչի մատնել,—բայց ամբոխը նորան կատարեալ ազատութիւն շնորհեց: Նոքա յաւէրժացրին իրենց տօնը մարդասպա-

նին ազատութիւն տալով, իսկ Անմեղին—սպանելով: Ընտրութիւնը մշտականի նման է,—և ես այդտեղ մեղաւոր չեմ:

— Իսկարիովտացին նոյնպէս Ճագինի մօտ էր ծառայում.—նկատեց Յուստիցիան:

— Մի այդպիսի բան լսել եմ ես:

— Քեզ երազս չէ՞ անհանգստացնում, Պօնտիյ.—հարցրեց նա:—Դու նորա մէջ նախազուշակումն չե՞ս տեսնում նոյնպիսի մահուան, ինչպէս Իսկարիովտացունը:

Նա դողաց, բայց բռնի կերպով ժպտաց:

— Ինձ անհանգստացնում է նա, այո, Յուստիցիա, բայց միմիայն նորա համար, որ դորա մէջ ես քո անհանգստութիւնն եմ տեսնում: Բացի այդ, այսօր կարծես բոլորի վերայ էլ մի տեսակ վրդովմունք կայ: Հաւատա՛ ինձ, հրէաները նոյնպէս լի են երկիւղով. յետ այնու, երբ նոցա տաճարի մէջ վարագոյրը պատառուեց և խաւարը յանկարծակի ծածկեց ամեն ինչ: Այդ բաւական է, որ ամենաքաջերին վախեցնէ, բայց՝ երևի՝ այժմ բոլոր չարութիւնը դուրս վանուեց, քանի որ տակաւ տակաւ մթնոլորտը բացուած է ահա ու մաքրուած: Նայի՛ր, որքան լոյս և ինչքան գեղահրաշ է երկինքը, ինչպէս պայծառ և ազուոր է լուսինը. ինչպէս հրաշալի և արծաթափայլ գիշեր է Նազովրեցուն հանգիստ քուն տալու համար:

Յուստիցիան նայեց նորա վերայ զարմացական ձևով, լայն բաց արած աչքերը Պիղատոսին յառելով:

— Դու այդ կատարեալ դատողութեամբ ես ասում, Պիղատոս, ու կատարելապէս խելահա՞ս ես դորան,—հարցրեց նա:—Դու շարունակում ես հաստատել, որ նա չէ մեռել, թէ նա չէ կարող մեռնել: Միթէ մտածում ես դու, որ նա միմիայն քնած է:

Պիղատոսը աւելի ամուր գրկեց նորան:

— Հանգիստ, հանգիստ,—ասաց նա հազիւ լսելի ձայնով, որը դողում էր,— ես ոչինչ չեմ կամենում մտածել և չեմ էլ ցանկանում խօսել այդ հարցի մասին: Թո՛ղ լռենք ու ապրենք, այնպէս՝ ինչպէս աշխարհն է կամենում, որ ապրենք մենք, հպարտ երևակայութեան մէջ, որ որպէս թէ համայն տիեզերքի մէջ մեզնից գեղանի ոչինչ չը կայ, և որ մենք ենք զարդը այս աշխարհիս: Եւ այդպիսով մենք կեանքի նիւթական կողմը կը գոհացնենք, իսկ եթէ կայ և մի ուրիշ կողմ—հոգևոր, ուրեմն մենք կարող ենք խփել աչքերներս և երդուել, որ մենք դեռ չենք տեսնում: Մեզ իմաստունների տեղ պիտի ընդունեն ու առողջ կարծեն, և մենք ոչ ոքի չենք վիրաւորել, բացի միայն Աստծուն, եթէ որ Աստուած իրաւ որ կայ:

Նորա ձայնը աւելի թուլացաւ և աչքերը խելատարութեամբ դէպի վեր և էին նայում,—դէպի գեղաշուք, լոյս ու խորհրդաւոր երկինքը։ Ապա նորա ակնարկը խոնարհեց և նա ուշադրութեամբ սկսեց ճանապարհի կողմն նայել, որը տարածւում էր պարտէզի միւս կողմում, և որտեղից կարելի էր զանազանել մի խումբ մարդկանց, որոնք հանդարտութեամբ դէպի առաջ էին շարժւում։

— Այնտեղից ո՞վ է գալիս.—հարց տուեց նա։—Նայի՛ր, Յուստիցիա, նոքա փոքրիկ ճանապարհի կողմն շուռ եկան,—այդ ճանապարհը դէպի Իսկարիօտի տունն է տանում։ Նոքա, կարծես թէ, մի ինչ որ ծանր բան են տանում։

Յուստիցեան դուրս ցցուեց լուսամուտից՝ աւելի լաւ նայելու համար և թոյլ ձայնով աղաղակեց։

— Հեռանանք, հեռանանք այս տեղից,—շշնջաց նա դողդոջ ձայնով,—մի՛ մնալ այստեղ և մի՛ հետաքրքրուիր նոցանով, որոնք մեռած մարդու են տուն տանում։

— Մեռած մարդո՞ւ,—կրկնեց Պիղատոսը։—Ուրեմն այդ Յուդայի մարմինն է։

— Լռի՛ր, լռի՛ր։ Եթէ դա այդպէս է, ուրեմն ոչ մի խօսք մի ասիլ, մի նայիր նոցա վերայ,—և նա— այլայլմունքի տակ—վարագոյրով լուսամուտը ծածկեց, խորհրդաւոր գիշերի գեղեցկութիւնը բռնելով։

— Ես սարսափից սառոյց եմ կտրում, Պօնտիկ։ Ես այլ ևս տանել չեմ կարող։ Ես մեռած Յուդային չէի կամենալ երազիս մէջ տեսնել։ Գնանք այստեղից, հանգստանանք, աշխատենք քնել և—եթէ կարելի է—մոռանալ։

II.

Հէնց նոյն գիշերը, Յուդիթը յղկած արծաթի հրաշակերտ հայելւոյ առաջ նստած, իւր գեղանի դէմքին էր նայում, միևնոյն ժամանակ դուրալի մտածմունքի մէջ ընկղմուած։ Իւր նաժիշտներին արձակելով, նա միայնակ էր մնացել։ Իւր դէմքի սիրունութիւնը, լուսնի փափուկ ճառագայթների տակ, զմայլեցնում էր նորան. նա ոչ մի ճրագ չը վառեց, վախենալով իւր չքնաղ դէմքի գեղեցկութեան ներգործութիւնը փչացնելու. նա հայելւոյ միջից անդրադարձուած իւր սքանչելի դէմքը գերադասեց լման լուսնի արծաթափայլ ճաճանչքի տակ թողնել, որը մի տեսակ խորհրդաւոր փափկութիւն էր առաջացնում։

Քանդակածոյ աթոռի մէջքին յենուելով, նա իւր ձիւնափայլ, կարծես թէ փղոսկրից ճախարակած ձեռքերը ծուլութեամբ գլխի յետևը ծալեց և, ինքնագոհ ժպիտով, սկսեց ինքն իւր վերայ նայել։ Նա դէն ձգեց այն բաց կարմիր թիկնոցը, որի մէջ էր գտնւում ամբողջ օրը,—և մնաց թեթև մետաքսանման սպիտակ հարթ հաւասար շորերի մէջ, որը մօտիկից նորա ճոխ իրանը գրկելով, գեղաշուք ու դիւրաթեք մարմնի իւրաքանչիւր-փափուկ թեքուածքն էր գեղանկարում. բաց ոսկեգոյն մազերը արձակուած էին, և խիտ ու ծփծփան ալիքներով մինչ յատակն էին ընկնում, իսկ նոցա սիրայեղց ու սիգաշարժ գիլֆերը ժպտում էին կամարակապ, որպէս թէ վրձինով քաշած յօնքերի վերևից, որոնց տակից սևսևուկ աչքերը փայլփլում էին թէ կիսաուրախութեան և թէ կիսաարհամարհութեան արտայայտութեամբ։

— Ինչ տեսակ վախկոտներ են եղած՝ այնուամենայնիւ՝ տղամարդիկ,—կիսաձայն ասաց նա,—ամենաքաջերը անգամ։ Սուտ Բարաբբան հազիւ թէ չէր հեկեկում, Նզովեալ Նազովրեցու մահը տեսնելով։ Ես կարծում եմ, որ նա իւր համար էլ էր վախենում և երկիւղ կրո՛ւմ։ Իսկ Կայիափա՜ն։ Նա քիչ էր մնում, որ կաթուածահար լինէ, երբ իմացաւ, որ վարագոյրը տաճարի մէջ պատառուել է։

Նա ծիծաղեց, նորա շրթունքները մի այնպիսի դիւթիչ ժպիտ կազմեցին, որ նա աւելի մօտ շարժուեց դէպի հայելին, նորան աւելի լաւ նայելու համար։

— Ճշմարիտը, ոչ մի զարմանալու բան չը կայ նորա մէջ, որ բոլորն էլ սիրահարուած են ինձ վերայ,—շշնջաց նա, իւր դէմքի աննման գծերը և այտերի քնքուշ կարմրութիւնը ուսումնասիրելով և բաւականութիւն ստացած փառամոլութեան զգացմունքով։—Այս տեսակ հեշտալից ժպիտով ես կարող եմ ստիպել Կայիափային անելու այն բոլորը—ինչ ցանկալի է ինձ, նա իմաստուն քահանայի հռչակ է վայելում, իսկ եթէ ես նորա վերայ այսպէս նայելու լինիմ,—և նա կիսախուփ արեց աչքերը, անսահման հեշտասիրութեան արտայայտութեամբ,—և քահանաս գունափոխ է լինում ու իսկոյն՝ գունաթափ,—իսկ այսպէս,—և նա լայն բաց արեց իւր աչքերը, նոցա բոլոր չքնաղ պատրանքով,—և նոյն քահանան սիրատենչ տափանքի տակ խեղդւում է ու, արեգակնային հարուած ստացողի նման, ինձ վերայ է նայում ու գալարուո՛ւմ։ Իսկ Բարաբբան։ Ես պէտք է հեռու կենամ Բարաբբայից, չը նայելով որ նորա մէջ մի տեսակ վայրենի բնաւորութիւն կայ և մի ինչ որ կոպիտ զգացմունք, որ ես սիրում

եմ։ Այսօր, ասենք թէ, նա ինձ սակաւ ինչ սէր ցոյց տուեց—նա ահից ամբողջովին դողում էր։

Նա սանտրը վերցնելով, սկսեց իւր հիւսքնաղ ծամերը սանտրել, որոնք հրավառ օձապտոյտ զլֆերով գրկել էին նորան։ Նորա դէմքը սակաւիկ դժգունեց և յօնքերը խառնուեցին։

— Բայց և այնպէս, մի ինչ որ զարհուրելի բան կար այն փոթորիկի մէջ,—շշնջաց նա,—և՛ անգամ՝ այժմ իսկ, սիրտս անհանգիստ է, ես շատ կուզէի, որ Յուդան տանը լինէր։

Նա սիգապանծ վեր թռաւ տեղից և մնաց հայելու առջև, ոսկեհուռ ծանր մազերի կէսը ձեռքում բռնած ունենալով։ Նորա շուրջը լուսինը իւր արծաթափայլ ճաճանչը ձգելով, զանազանում էր այս ու այն կողմում գտնուած հազուագիւտ ու թանկագին քարերը, որոնք նորա կրծքի կամ ձեռքերի վերայ կայծակնայայտ բոցեր էին արձակում։

— Կայիափան պարտական էր ժողովրդին հէնց այն անելու, ինչ որ ես էի խորհուրդ տուել նորան,—շշնջաց նա,—այն ժամանակ, երբ Նազովրեցու չար կախարդութեամբ ու նորա հմայական պատրանքների ազդեցութեան տակ՝ փոթորիկ էր բարձրացրել։ Նա չարքերով էր բռնուած, որոնք ամեն ինչ խիտ խաւարի տակ ծածկելով, գետինը՝ անգամ՝ պատառեցին։ Կայիափան պարտական էր բացատրելու այն բոլորը, բայց նա ևս այդ բոպէին շփոթուեց ու վախեցաւ։

Նա կանգ առաւ, անհանգստութեամբ իւր մազերի հետ խաղալով։

— Ի՞նչի մէջ պիտի կայանար Նազովրեցի Մարդի կախարդութիւնը.—յանկարծ հարցրեց նա, որպէս թէ այդ հարցը հայելու մէջ գտնուած իւր սեփհական պատկերին ուղղած լինէր։—Ես բացի աննման գեղեցկութիւնը, ոչինչ չը նկատեցի։ Թէ նա չքնաղ գեղեցկութեան տէր էր, այդ անվիճելի է, բայց այդ սիրունութիւնը այն չէ, որ դուր է գալիս կանանց։ Նա չափից դուրս խիստ էր և անարատ, լուրջ, անաւին, թէպէտ և նորա աչքերի մէջ մի տեսակ սարսափելի լոյս էր ցոլում, որը—մինչև անգամ—վախեցրեց և ինձ։ Իսկ դորանից յետոյ այն որոտմունքը, խաւարը...

Նա դողաց, ապա, դարձեալ ծիծաղելով, լուսնի վերայ նայեց, որը մեծափառութեամբ թագաւորում էր հէնց ուղիղ նորա լուսամուտի վերևից։

— Նա մի տեսակ չար կախարդութիւն գործ դրեց,—ասաց նա։—Բայց այժմ ամեն ինչ վերջացած է և բոլոր երկիւղը չքացաւ։ Շատ լաւ եղաւ, որ նա մեռած է. այդպիսի մոլեռանդ—ֆանատի-

կոսները երկիւղալի են, և Յուդան, յամենայն դէպս, այլ ևս մոլորուած չէ, ու գիտէ այժմ, որ այդ Մարգարէն, որին նա իրեն Ուսուցիչ էր կոչում, Աստուած չէ, այլ մի սովորական ու հասարակ մարդ։ Նա այժմ կը զղջայ իւր վարմունքի մէջ ու նորից մեզ հետ ապրել կը սկսէ։ Հէնց երբ նորա կատաղութեան առաջին փոթորիկը անցնէ, նա պէտք է վերադառնայ թէ զղջման և թէ տխրութեան մէջ և ներումն խնդրէ երէկուայ չարութեան համար։ Մենք նորան կատարեալ ներողամտութեամբ կը դիմաւորենք և ուրախութեամբ խնջոյք պիտի տանք ու դարձեալ բաղդաւոր պիտի լինինք։ Այո, Կայիափան ինձ բարի խորհուրդ տուեց, և սրբապիղծ ու Աստուածանենգ Նազովրեցւոյ մահուամբ Յուդան ապագայ չար ընթացքից փրկուած է։

Նա իւր փարթամ մազերի հիւսկէն դէպի յետ ձգելով, ուրախաձայն քրքիջ արձակեց։ Ապա, միապաղաղ ու բրօնզով զամուած արկղիկը բանալով, նա մի բուռն թանկագին զարդարանքներ ու պաճուճանքներ հանեց և մէկը միւսին կցելով ու անփոյթ կերպով այս կամ այն կողմ ձգելով, վերջապէս խոշոր յակինթներից (рубинъ) մի հիանալի աստղ ընտրեց։

—Գեղեցիկ ընծայ է,—ինքն իրեն շշնջաց նա, մի որոշեալ հեռաւորութեան վերայ բռնելով այդ առարկան և քարերի խաղերից ու փայլփլմունքից գգուելով.—այնպէս է թւում, որ ես աւելի գեղահրաշ բան, քան այս, չեմ տեսել։ Կայիափան իրաւացի վարուեց, որ իւր հիւանդոտ կողակցին չը ընծայեց այս. Աննայի աղջկայ գունատ կաշին այս զարդից ոչինչ չը պիտի շահուէր։

Նա ուշադիր բոլոր քարերին նայեց, ապա, դարձեալ արկղիկի մէջ փնտռելով, այնտեղից մի հրաշալի մարգարտեայ մանեակ հանեց, որի իւրաքանչիւր մարգարիտը ամենամեծ եգիպտացորեան հատիկից խոշոր էր։

—Ինչքան սքանչելի է այս երկուսը միասին.—ասաց նա, մարգարիտը յակինթների հետ խառնելով,—այս երկուսը պէտք է միաժամանակ ձգել՝—քահանայապետի յակինթները և Բարաբբայի գողացած մարգարիտները։

Նորա կարմրալար ու դողդոջ շրթունքները միաւորուելով՝ մի արհամարհական ժպիտ կազմեցին, և նա—զարդի բաները ափերի մէջ սեղմելով—յանկարծ մտածմունքի մէջ ընկաւ։ Ապա, մարգարիտը դանդաղկոտութեամբ ձիւնափայլ ու փափուկ պարանոցի վերայ ձգելով, աստղը նորից արկղի մէջ դրեց ու սկսեց հայելու առջև իւր վերայ նայել. իւր աննման գեղեցկութեան ամբողջ անյաղթելի

ուժը ըմբռնելով նա, դէպի բարձր ու յաղթական ձեւով, բարձրացրեց ձեռքերը։

—Հէնց ինձ նմանների համար է ստեղծուած աշխարհս.—բացականչեց նա։—Այնպիսիների համար, որպիսին ես եմ, անգամ թագաւորներն և իշխաններն են խեղճահան լինում ու մեռնում։ Ինձպէսների համար գոռոզ հերոսները այնպէս են խոնարհւում, ինչպէս գերիները կը ընկճուեն իրենց տիրոջ ոտքերի տակ։ Ինձնից գեղանիկին չը կայ այլեւս, բայց ներկայումս ինչիս է պէտք իմ սիրունութիւնը, երբ բոլոր սիրահարները և նոյա նման յիմարները արդէն զզուեցրել են ինձ։ Ես կը պսակուեմ մի ամենակարող աշխարհակալի վերայ և՞ թագուհի ու հրամանատար պիտի լինեմ բոլոր ազգերի գլխին։

Ու արբշիռ փառամոլութեան ազդեցութեան տակ, նա՝ ամբարտաւանացած՝ իր գլուխը բարձրացրեց, կարծես թէ երեւակայական թագը արդէն պսակելիս լինէր նորա գլուխը, և մի քանի քայլ յետ յետ գնաց, դեռ ևս, հայելւոյ մէջ անդրադարձութեան տակ ընկած, իր սիգապանծ պատկերին նայելով։ Բայց, գաւիթից լսուող, շտապ քայլերի յանկարծակի ձայնը՝ նորա ուշադրութիւնը շտապով գրաւեց։ Նա, սպասողական դիրքի մէջ, կանգ առաւ. ծփծփան մազերը ծածանուում էին կիսամերկ բազուկների վերայ, իսկ նորա գեղեցկաձեւ ու ցմայլեցուցիչ պարանոցի վերայ խաղալից իմն կերպով ու պայծառութեամբ փայլում էր մարգարիտը, որի մեծկակ հատիկները ցոլում էին լերկ ու փափկին վզի շուրջը։ Քայլերը մօտենում էին և հէնց ուղիղ նորա դռան հանդէպ դադար տուին. «Տիրուհի, տիրուհի». լսուեց դրսի կողմից։ Անբաղդութեան մի տեսակ ահռելի նախազգացմունքից դրդուած, նա շտապ քայլերով դէպ առաջ շարժուեց և բոլոր ուժով ու լայն բաց անելով դռները, իր հօր ծառաներից մէկին գտաւ, որը վայրենաբարոյ ձեւով հէնց իր վերայ էր նայում ու, յուսահատ դրութեան մէջ գտնուածի նման, շարժմունքներ գործում։

—Ի՞նչ է պատահել.—հազիւ լսելի ձայնով արտասանեց Յուդիթը։ Նորա շրթունքները յանկարծ խամրեցան ու ծանրացան այնպէս, որ նա դժուարութեամբ էր խօսում։ Նորա սիրտը սարսափելի ամուր էր զարկում, իսկ մարգարտեայ մանեակը, ինչպէս թուաց նորան, խանգարում էր իրեն ազատ շունչ քաշելու։

Եկող մարդը մի ինչ որ բան էր աշխատում պատասխանել, բայց չը կարողացաւ։ Յուդիթը բռնեց նորա ձեռքից։

—Խօսիր,—շշնջաց նա,—ինչ մի վատ գոյժ ունիս դու։

—Տիրուհի,—հառաչեց ծառան,—ես չը պիտի համարձակիմ

քեզ բան ասելու, բայց, խնդրում եմ գնանք Ձեր։ հօր պահանջն է այդ. ձեր հայրն է ստիպում, համբերեցէք։ Չը պիտի վախենաք։

Նա շուռ եկաւ և դէմքը ծածկեց։

—Յուդա՞ն.—գոռաց Յուդիթը։—Նա վիրաւորուա՞ծ է։ Հիւա՞նդ է։ Նա վերադարձա՞ւ։

—Այո՛, տիրուհի, նա վերադարձել է,—պատասխանեց ծառան՝ խռպոտ ձայնով, յետոյ, որպէս թէ մի ուրիշ խօսք արտասանելուց երկիւղ կրելով, նա յետ վազեց, նշանացի անելով, որ Յուդիթը հետեւէ իրեն։

Մի վայրկեան Յուդիթը կանգ առաւ. նորա փայլուն կենսական գոյնը՝ մեռելատիպ գունատութեան տեղի տուեց ու դէմքի թարմութիւնը թօշնեց. նա ձեռքը սրտի վերայ դրեց, այդպիսով փոքր ինչ հանդարտուելու ձգտելով։

—Նա վերադարձաւ,—մտմտաց նա։—Յուդան տա՞նն է։ Հայրս կոչում է ինձ։ Պարզ է, որ ամեն ինչ լաւ է, շատ լա՜ւ։ Ոչ մի ուրիշ կերպ չէ կարող լինել այդ և՞ս։

Նա ուսի վերայից մի ակնարկ ձգեց դէպի ետև՝ իր սենեակը, որը փայլում էր լուսնի լոյսի տակ և որտեղ արծաթեայ հայելին ճաճանչներ էր ձգում զերթ փայփայուն ջլահան, և դանդաղ ու տկամայ դէպ հեռուն շարժուեց։ Ապա, յանկարծ մի ձեռքով իր երկար սպիտակ հագուստը բռնելով, նա սրնթաց դէպի այն կողմը վազեց, որտեղ ծառան էր անյայտացել, և մի բաց գաւիթի առջև կանգ առաւ, որպիսի շէնքին նորա հայրը եգիպտական ճաշակ էր տուել և որտեղ Իսկարիոտը սովորութիւն ունէր իւր ընկերակիցների հետ երեկոներ անցկացնել։ Այդ գաւիթը կռածոյ սիւներով շրջապատուած լինելով, կտուր չունէր։ Հէնց նոյն վայրկեանին, մինչ Յուդիթը հերարձակ և երկիւղից լայն բացուած աչքերով վազում էր, նորա առաջը մի բարձր կերպարանք ելաւ, որը, ըստ երեւոյթին, աշխատում էր Յուդիթին թոյլ չը տալ յատակի վերայ պարկած, և, մի ինչ որ կտաւներով փաթաթուած բանի մերձենալու։ Յուդիթը զարմացած նորա վերայ նայեց. դա Բարաբբան էր։

Բայց Յուդիթը կոպտութեամբ նորան մի կողմ հրելով, դէպի իր հայրը վազեց, որը, սիւներից մէկի մօտ կանգնած լինելով, մի ձեռքով դէմքը ծածկելով, կռթնել էր կոթողին։

—Հա՛յր.—գոչեց Յուդիթը։

Հայրը գլուխը բարձրացնելով, աղջկայ վերայ նայեց։ Նորա դէմքի խիստ գծերը աննկարագրելի վշտի ներգործութեան տակ՝ այլայլուած էին։ Նա դողդոջուն ձեռքով ցոյց տուեց իր

մօտ պառկեցրած ու ծածկուած, բայց անշարժ, մարմնի վերայ։ Յուդիթը յետամուտ էր նորա նշանին և իր ակնարկը նորանից չէր զատում, ուստի, դանդաղ և զգուշութեամբ շունչ քաշելով ու առաջ շարժուելով, նա իր ճակատի վերայից դէպի ցած թափուած մազերը հեռացրեց, ապա ուշադիր սկսեց այն բանին նայել, որը այնպէս անշարժ պառկած էր յատակի վերայ։ Յետոյ նա յանկարծ հասկացաւ և, ծնկների վերայ ընկնելով, սկսեց ծածկոցը մի կողմի վերայ ձգել, որ կարող լինէ համոզուելու այն բանի մէջ, որից նա այնքան վախենում էր։

—Յուդա́.—աղաղակեց նա։ Յուդա́։

Նորա ձայնը կերկերուն ճչոցի փոխուեց, և նա յանկարծ յետ քաշեց ձեռքերը ու լի սարսափով նոցա վերայ նայեց. նա ամբողջ մարմնով դողաց, կարծես թէ նոքա մի ինչ որ զարհուրելի բանի հպուած լինէին։ Նա նայեց և միևնոյն ժամանակ նկատեց, որ իր շուրջը մարդիկ էին կանգնած։ Նորա հայրը շարժմունք գործեց, իսկ Բարաբբան հէնց նոյն տեղի վերայ էր գտնւում։ Անխելքի ժպիտով Յուդիթը մեռածին ցոյց տուեց։

—Ինչո՞ւ համար դուք նորան փաթաթուած տուն բերեցիք.—խստութեամբ հարցրեց նա։—Նա գուցէ քնած է, կամ ուշաթափ։ Նորա երեսը բաց արեցէք։

Ոչ ոք չը լսեց նորան։ Ծածկուած մարմինը, լուսնի խորհրդաւոր լոյսի տակ պառկած լինելով, մի տեսակ գաղտնի ուժ էր պարունակում իր մէջ։ Խոր լռութիւն տիրեց։

Անակնկալ՝ Յուդիթի ձայնը հնչեց դարձեալ։ Նա շշնջում էր, բայց շուտ շուտ ու այլայլմունքով.

—Յուդա, Յուդա́, զարթի́ր։ Վերջապէս այդպէս պառկելը և ինձ վախ պատճառելը—յիմարութիւն է, չէ թէ դու մեռած չես, անկարելի է դա, դու չը պիտի կարողանայիր այդքան յանկարծ ու անսպասելի մեռնե́լ։ Երէկ երեկոյեան դու ինձ դէմ չարացած տուն եկար և անխելացի կասկածութեանդ մէջ անիծեցիր դու ինձ։ Իսկ այժմ պարտական ես դու այդ նզովքը վերցնել իմ վերայից, այսքան երկար ժամանակ դու չես կարող ինձ առանց քո ներման և օրհնութեան թողնելու։ Միթէ ես երբեւիցէ վնասել եմ քեզ։ Ես միմիայն խորհուրդ տուեցի քեզ համոզուել Նազովրեցու խաբեբայութեան մէջ։ Եւ դու համոզուեցիր։ Ապա ինչու պիտի դու այդքան վշտանաս այդ մասին։ Վե́ր կա́ց, բարձրացի́ր շուտո́վ։ Եթէ տկար ես, քեզ վերայ ես խնամք կը տանեմ. զարթիր, այլ ես մի բարկանար։ Ես եմ պարտաւոր բարկանալու քո ինքնասածութեան և կամակորու-

թեան համար. գիտեմ ես, որ դու իմ ձայնը լսում ես, բայց նեղացնում ես դու ինձ և, այդ պատճառով իսկ, պատասխան չես տալիս։

Եւ նորից նա իր ձեռքերը դէպի անշունչ մարմինը կարկառեց դողալով ու ակամայ։ Վերջապէս, մեծ ուժ գործ դնելով իր վերայ, նա սաւանի վերին մասը մի կողմ քաշեց։ Երկիւղած ու դանդաղ դէպի յետ ձգելով արգելառիթ կտորը, նայեց նա. և նորա աչքերի մէջ աննկարագրելի սարսափ պատկերացաւ։—Միթէ դա նորա եղբօր դէմքն էր։—Այդ մարմարեայ գունատ դիմակը, դէպի դուրս թռած զարհուրելի աչքերով։ Այդ անշարժ ու անթափանցիկ աչքերը, կարծես թէ, ուշադիր նորան էին նայում։ Նա իր գլուխը խոնարհեց մինչ նորա դէմքի մօտ. Յուդիթի ամուր սեղմուած շրթունքների վերայ՝ որպէս թէ՝ մի տեսակ չարաքաշտիկ ժպիտ էր խաղում։ Քոյրը նորա սառն ճակատն շփեց ու խառնափնթոր մազերը փայփայել սկսեց։ Այո́,—Յուդան էր դա, կամ չափից դուրս նորան նմանող մի սառած ու սպիտակ կերպարանք—երիտասարդութեան և գեղեցկութեան սիպարի մէջ մտած։

Յուդիթը տակաւիններին հաշիւ չէր տալիս այն բաների մէջ—ինչ որ տեսնում էր։ Յանկարծ նորա անվճռական ակնարկը եղբօր պարանոցին ընկաւ,—որը պարանով էր շրջապատուած ու այնքան ամուր էր ձգուած, որ մաշկը պատառուել էր և չորացած արիւնը մի տեսակ շառագոյն շաղախ էր գոյացրել, ինչպէս դանակի կամ դաշոյնի վէրքից գոյացած մի սպի։ Տեսնելով այդ, նա արագութեամբ վեր թռաւ տեղից և, ձեռքերը լայնութեամբ գլխի վերայ տարածելով, մի այնպիսի սրտաճմլիկ ու յուսահատ ողբ բարձրացրեց, որ տան բոլոր ծառայողները կերոնների օգնութեամբ դէպի այդ կողմ վազեցին՝ շփոթուած և վախեցած։ Հայրը աղջկան գրկի մէջ առաւ, աշխատելով փոքր ինչ հանգստացնելու նորան,—բայց ՚ի զուր. աւելի հեշտ էր փոթորիկը կանգնեցնել, որ անապատի վերայ էր տարածուում։ Նա կենդանութիւն ունող Ֆուրիայի *) կերպարանափոխուեց և այս ու այն կողմ ընկնելով, անձնատուր եղաւ ամենավայրենի, անսանձ յուսահատութեան պատրանքին։

—Նայեցէք, սպանել են նորան.—մռնչաց նա։ Յուդային Նազովրեցու աշակերտները սպանեցին. Նորա կեանքը խլեցին։ Չարագութ, չարաբաստ գո́րծ։ Բայց վրէժխնդրութիւն կը լինէ։ Խիստ և

---

*) Ֆուրիա—фурія—չար կին. չարութեան չաստուածուհի. դժոխքի մէջ հոգիները կործանող։ Ծան. Հ. Թ.

սարսափելի վրէժառութիւն, քանի որ Յուդան, բացի ազնուութիւնից, ուրիշ մեղք չունէր։ Կայիափա՛։ Ո՞ւր է Կայիափան։ Թո՛ղ նա այստեղ գայ և իր գործքի վերայ նայէ։ Ասացէք նորան՝ որ բռնէ և սպանել տայ մարդասպաններին։ Հռովմայեցի կառավարչի մօտ գնանք, —ես արդարադատութիւն եմ պահանջո՛ւմ։

Այստեղ նորա խելաշուրջ աղաղակը կտրուեց, նա յուսահատութեամբ եղբօր մարմնու վերայ ընկաւ, և, դողդոջ մատներով, չուանի մահակալ կապը փորձեց բանալու։

—Բաց արեցէք հանգոյցը, արձակեցէք կապը,—հեկեկալով աղերսում էր նա։—Ո՜հ, Աստուած, մի՞թէ ձեզնից և ոչ մէկը չը պիտի յետ անէ այս չուանը, որը թոյլ չէ տալիս նորան շունչ քաշել։ Գուցէ նա ապրում է դեռ. Նորա աչքերը կեանքի կայծով և յիշողութիւններով լի են։ Բաց արեցէք այդ տանջանաց գործիքը, խնդրում եմ ձեզ, ընկերներ, իմ բարեկամնե՛ր... Հայր, օգնիր ինձ։

Եւ նա շարունակեց պարանի արձակելու փորձը։ Յանկարծ նորա դէմքը սարսափելի կերպով փոխուեց։ Նա նկատեց, որ իր ձեռքերը արիւնով էին ծածկուած։ Մի տարօրինակ լոյս վառուեց նորա աչքերի մէջ ու շրթունքների վերայ դժգոյն ժպիտ խաղաց։ Նա իր արիւնոտ մատները բարձրացրեց։

—Նայեցէք, նորա արիւնը թափւում է դեռ,—ասաց նա.—կեանքը իմ հպուելուց յարութիւն է առնում,—նա մեռած չէ։

—Մեռածները շատ անգամ արիւնաքամ են լինում, — երբ կպչում է նոցա սպանիչը,—յանկարծ որոտաց մէկի ձայնը,—դու, Յուդիթ, Յուդային մինչ մահու դուռը հասցրեցիր, և նորա արիւնը բողոքում է քո դէմ և մեղադրում է քեզ։

Պետրոսի մռայլ և ցասկոտ կերպարանքը դէպ յառաջ շարժուեց, որը, լուսնշաղ փայլի խորհրդաւոր գեղեցկութեան տակ, ամբողջովին լուսաւորուած էր։

Բարեկազմ և բարձրահասակ Իսկարիոտը վիրաւորուած հպարտութեան շարժմունքով, կանգնեցրեց նորան։

—Ինչպէս ես համարձակւում դու այսպիսի ժամանակ այդ տեսակ վարուել աղջկանս հետ.—սկսում էր նա, բայց կանգ առաւ, աշակերտի դաժան տեսքի ազդեցութեան տակ՝ զարհուրած։

—Հեռու կաց, հրէա՛յ,—ասաց Պետրոսը։—Դու, որ դեռ չես մկրտուած ոչ հոգւով և ոչ ջրով, և չըվերածնուած Իսրայէլի փչացած արիւնին ես պատկանում, մի վիճիլ ինձ հետ։ Խղճիս խայթը ուժ է տալիս ինձ։ Ես նոյն Պետրոսն եմ, որը ուրացաւ իր Ուսուցչին, բայց զղջմամբս ես իշխանութիւն գնեցի։ Մի վիճիլ ինձ հետ,

ես քեզ հետ չեմ խօսում. այլ նորա հետ, որը շուտափոյթ սպանութիւն է պահանջում՝ իր եղբօր սպանիչների դէմ։ Եւ ես նոյնպէս աղերսում եմ ճշմարտութեան անունով, ես էլ՝ նոյնպէս՝ պատիժ եմ պահանջում նորա դէմ, ով ձգեց նորան այս դրութեան մէջ։ Յուդան իմ ընկերն էր, և նա ինքնասպանութիւն գործեց։ Այդ յուսահատ գործողութեան մէջ ոչ ոք մեղաւոր չէ, բացի այն անձնաւորութիւնը, որը ներկայումս այդքան բարձր ձայնով հեկեկում է։ Ձեր ճարպիկութեամբ քոյրը եղբօր վերայ ազդեց։

—Դու խիղճ չունիս,—երկիւղածութեամբ կոչեց Բարաբբան,—խղճմտանքից զուրկ՝ մինչև անգամ մի այսպիսի հազուադէպ րոպէո՞ւմ։

—Ոչ այս րոպէի մէջ և ոչ միւս կամ մի ուրիշ ժամանակամիջոցում,—պատասխանեց Պետրոսը և՝ համարես թէ մի տեսակ կատաղի վճռականութիւն արտայայտուեց նորա դէմքի վերայ։—Թո՛ղ Աստուած փրկէ, որ ես անարդարներին կարեկցութեան գէթ մի աննշան մասնիկ ցոյց տամ։

—Այդպէս է խօսում առաջին քրիստոնեան,—քրթմնջաց մի խաղաղ հեգնական ձայն, և Մելխիօրի ուշադրութեան արժանի կերպարանքը փոքր ինչ դէպի առաջ շարժուեց։—Ճշմարիտ որ, Պետրոս, դու մարդկանց մի տարօրինակ իմն ձևով ես տալիս Աստուածային սիրոյ առաքումն։

Բայց աշակերտը նորա խօսքերը չը լսեց։ Նա կոպտութեամբ դէպի Յուդիթը առաջացաւ, որը մեռած եղբօր մարմնի վերայ կիսաթաք ընկած, ճիգնթափ էր լինում արիւնոտած պարանը յետ արձակելու համար։

—Ի՞նչ ես գործում այստեղ, Յուդիթ Իսկարիոտացի.—հարցրեց նա։ Դու չը պիտի կորողանաս այդ կանեփեայ մանեակը արձակել, նա մարգարտից չէ, թանկագին ակներից չէ, որոնց ծարաւի է քո հոգին, Յուդան քեզ համար այդ հանգոյցը չափից դուրս ամուր է կապել։ Թող տուր, թող այդ, այլ լաց եղիր և հեկեկանք բարձրացրու սեփհական ամենողութեանդ վերայ, քանզի այս օրից նզովուած ես դու ամբողջ կեանքիդ ընթացքի մէջ։

Յուդիթը լռեց և, նորա վերայ իր տենդոտ և գոգաւոր աչքերը բարձրացնելով, հանդարտ ժպտաց։ Նա այնքան աննման էր այդ վայրկեանի մէջ, որ Պետրոսը անգամ, չը նայելով, որ բարկութիւնից ամբողջ մարմնով դողում էր, ակամայ տատանուեց, նորա հրաշալի դէմքի աղուորութիւնից զմայլած, որը խիտ հրավառ ու

ոսկեգոյն մազերից ծանրացած, սիրոյ ճաճանչներ էր արձակում. Նրբոյլքը Պետրոսի շուրթերի վերայ մարեց։

—Ամբողջ կեանքիդ մէջ, ամբողջ կեանքիդ մէջ և ընդ միշտ,—կրկնեց Յուդիթը անըմբռնողութեամբ։—Նայիր,—և Յուդիթը ցոյց տուեց նորան իւր արիւնոտ մատները,—Յուդայի մէջ կեանքը գաղում է դեռ. ընկերս, խնդրում եմ քեզ,—և Յուդիթը աղերսանքով Պետրոսի վերայ նայեց,—այս անագորոյն չուանը բաց արա։ Միթէ Յուդան է կապել այդ... չէ՞ թէ դու ասացիր ինձ, որ Յուդան է կապել այդ... Բայց դա ինչպէս կարող էր պատահել։

Յուդիթը մտայոյզ տեսքով կանգ առաւ, նորա յօնքերը կիտուեցին, ապա մի նոր սարսափ բռնեց նորան յանկարծ։

—Հա՛յր,—կոչեց նա։

Նա շտապով դէպի աղջիկը մօտեցաւ, բարձրացրեց նորան և, նորա երեսը իւր կրծքի վերայ սեղմելով, դառնութեամբ արտասուեց։

—Այս ինչ է նշանակում.—շշնջաց աղջիկը, երկիւղածութեամբ հօր վերայ նայելով։—Ասա՛ ինձ, չէ՞ թէ ճիշտ չէ այդ, այդ ճշմարիտ լինել կարող չէ, Յուդան միշտ քաջ էր և ուժեղ ու աւելի ևս քաջասիրտ... Նա չէր կարող ինքնասպանութիւն գործել, նա ձեռքը իւր վերայ չէր դնիլ։

Իսկարիօտը կամենում էր պատասխանել, բայց չի կարողացաւ։ Նորա խիստ, գեղեցիկ դէմքի սովորական հանդարտութիւնը յուսահատութեան արտայայտութեան և խորունկ վշտի նկարագրութեան փոխուեց։ Յուդիթը ուշադիր նորա վերայ նայեց և միանգամից ամեն բան հասկացաւ. նորա գրկից դուրս պրծնելով, նա վայրկենապէս կանգ առաւ՝ գունատ, անշարժ, ինչպէս մի գեղեցիկ հաղթաքանդակ մարմարիօն արձան. ապա, շառագունած ձեռքերը բարձրացնելով, նա մի ուժգին, խլացուցիչ ու խելատար ծիծաղ արձակեց, ապա խեղաթիւր ծիծաղով բռնուեց։

—Բա՛րէ, զարհուրելի Նազովրեցի,—բացականչեց նա,—այս քո գործքդ է։ Քո կախարդութիւնը յաջողեց։ Յաղթանակը դու տարար։ Վրէժդ լուծեցիր դու։ Ո՛հ, անխիղճ, անագորոյն Նազովրեցի։

Եւ խելատար աղաղակով, որպէս թէ դանակի անսպասելի հարուածից, նա յատակի վերայ փռուեց ու ուշաթափ եղաւ. Յուդիթը այդ դրութեան մէջ մնաց՝ անշարժ և անզգայ,—ինչպէս և իւր եղբայրը՝ Յուդան, որը խելացնոր ու լայն բացուած աչքերով միենոյն տարածութեան վերայ էր նայում ու ժպտում.

III.

Յուդիթին սենեակ տանելով, իւր կանանց ձեռքը յանձնեցին, որոնք սկսեցին լաց լինել նորա վերայ, ինչպէս կանայք կարեկցաբար լաց են լինում, շատ անգամ իրենք ոչ մի վիշտ չըզգալով։ Նորա հրամայողական և հպարտ բնաւորութիւնը շատ քիչ ընկերուհիներ էր վաստակել իւր համար, իսկ գեղեցկութիւնը միշտ նախանձի պատճառ էր դառնում նոցա կողմից, որոնց բնութիւնից քիչ բաժին էր ընկել զորանից։ Եւ այդպէս՝ հէնց նոյն աղջկերքը, որոնք այժմ նորա վերայ նայելով, շարունակում էին լաց լինել, աւելի երկիւղից, քան սրտէ. իսկապէս դէպի նա շատ սակաւ ցաւակցութիւն էին զգում, և բաւականին սառնասիրտ կերպով էին շրջապատում նորան ու չորս կողմում կանգնած՝ նայում էին նորա վերայ ու շշնջում այն բանի վերաբերութեամբ, թէ ինչ դրութեան մէջ կը ընկնէ նա այն ժամանակ, երբ՝ վերջապէս՝ ուշքի գայ։ Մինչ այդ ժամանակ, նորա եղբօր մարմինը բարձրացրուած էր ու մեծ խնամքով դրուած ոսկեզօծ մաքանդակագործ պատուանդանի վերայ, որը վարագուրուած էր մանուշակագոյն ծանր կտորով, ոսկեթել անգուածքով պատած։ Խստութեամբ և բռնադատուած հանդարտութեամբ անբաղդ հայրը իւր հրամանները էր տալիս, մանրակրկիտ այն բոլոր պարտականութիւնները կատարելով, որոնք ընկած էին իւր վերայ։ Երբ ամեն ինչ ըստ պատկանելոյն կատարուած էր, նա դէպի այն երեքը դարձաւ, որոնք նորան իւր անբաղդ որդու մարմինը բերեցին, այն է. Բարաբբային, Մելխիօրին և աշակերտ Պետրոսին, որոնց խաղաղ, բայց այլայլուած ձայնով ասաց.

—Պարոններ, ես պարտաւոր եմ ձեզ շնորհակալիքս յայտնել այն տխուր ծառայութեան համար, որը դուք ինձ ցոյց տուեցիք, թէպէտ և սիրտս խորտակուած ու տունս յաւիտենական սգի մէջ է ընկղմուած։ Ես ձեզնից մէկին միմիայն փոքր ինչ ճանաչում եմ—Բարաբբային, որը շատ ուշ չէ, ինչ բանտի մէջ էր։ Նախկին օրերում նորան ազնիւ մարդու տեղ էին դնում և լաւ ընդունում, և այժմ իսկ, նորա վերջին չարագործութիւնները ի նկատի չունենալով, ես կը յիշեմ միմիայն այն, որ նա մի ժամանակ իմ որդու հետ Ճաղինի տանն էր և ընկերակից էր Յուդային։

Այստեղ նորա ձայնը դողաց, բայց նա, նորից զսպելով իրեն, շարունակեց.

—Այսպիսով, թէպէտ ես նորա ընթացքը չեմ արդարացնում, բայց՝ միեւնոյն ժամանակ՝ չեմ էլ կամենում դատել նորան, որովհետեւ ժողովուրդը ազատեց նորան, ուստի ես աւելի ես չը պիտի դատապարտեմ նորան իսկ, և շատ մեծ չափով պիտի ներողամիտ գտնուիմ, քանի որ նա՝ ակնյայտնի է՝ որ ըմբռնում է իմ վիշտը, քանզի պաշտպանել էր կամենում իմ անբաղդ, ջերմագին սիրածս աղջկան անխիղճ անծանօթի յարձակմունքներից։

—Այո, իրաւ ասացիր, այս ժամանակից ի վեր ես Հրէաների համար անծանօթ կը լինիմ,—ասաց աշակերտը,—ոչ մի ընդհանուր կապ չէ շաղկապում ինձ նոցա կեանքի հետ և ոչինչ ընդհանուր բան չունիմ ես այլեւս այդ ազգի վերաբերութեամբ, մի ազգի, որը նուիրուած է կեղտոտ ոսկի հորթի երկրպագութեանը և վաշխառութեան նոր տեսակներ է փնտռում։ Բայց այնուամենայնիւ—ես խղճում եմ քեզ, մտնում եմ դրութեանդ մէջ, Իսկարիոտ. խղճում եմ քեզ այնպէս, ինչպէս կը խղճայի ամեն մի մարդու դժբաղդ ճակատագրի վերայ, որ տանջւում և հեծում է շատ ու շատ նեղութիւնների տակ հէնց իւր սեփհական յանցանքի և անհաւատութեան պատճառով. իսկ դու ինձ անխղճութեան մէջ ես մեղադրում. ուրեմն գիտէիր դու, որ ճշմարտութիւնը անկարեկից է միշտ, ինչպէս մի սուր զէնք։ Երբ դու, կաթոգին սիրածդ աղջկայ մասին ես խօսում, դորանով քո կեանքի բոլոր թերութիւններն ես մերկացնում ու թուլութիւնը բաց անում, քանի որ նորան անարժան սիրոյ բոյնից, որի մէջ դու փայփայեցիր ու խնամեցիր նորան գգուանքով,—մի օձ վերածնուեց—խայթելու և սպանելու պատրաստ։ Առանց խնամքի և հսկողութեան ձգուած կինը նման է ամեն ինչ կլանող մի դևի, կատարեալ ազատութեամբ պարգևաբաշխուած կոյսը—արատաւորուած կը լինէ։ Միթէ չը գիտես դու, որ քո Յուդիթը թեթևաբարոյ մի կին է և որ քահանայապետ Կայիափան հրապուրելով նորան, նորանից մի աւելի ստոր արարած շինեց, քան մինչև անգամ ամբողջ քաղաքին յայտնի պոռնիկ Մագդաղենացին։ Ների՛ր ինձ, եթէ կամենում ես, Իսկարիոտ, բայց ես միմիայն արդարը և ճշմարիտն եմ խօսում։ Դուրս կորզիր իմ լեզուն, իսկ ճշմարտութիւնը կը մնայ ընդ միշտ։

Կատաղի բարկութեան զգացմունքի տակ՝ Իսկարիոտը մի շտապ քայլ արաւ դէպի առաջ և ձեռքը բարձրացրեց այն մարդուն խփելու համար, որը համարձակութիւն էր ունեցել այնքան անարգ մեղադրանք արտասանելու, բայց մռայլ աշակերտի խիստ ու անշարժ ակնարկը կանգնեցրեց նորան, որի ձեռքը անուժութեամբ վայր ընկաւ։

—Ճշմարտութիւն, արդարութի՛ւն.—աղաղակեց Պետրոսը,
յափշտակութեան մէջ ձեռքերը տարածելով։—Այս ժամանակից ըս-
կըսած, ես նորա համար պիտի զոհամ, նորա համար կը ապրեմ և
'ի սէր նորա—մեռած կը լինիմ։ Երեցս երդմամբ իսկ ուրացի, որով
ստութեան ամբողջ ստորութիւնը և անճշտութեան սարսափը չափե-
ցի։ Ես գիտեմ այժմ սուր բարձրութիւնը, լայնութիւնը, խորու-
թիւնը, նորա նշանակութիւնը և հետևանքը, նորա զարհուրելի
և անտանելի պատիժը, որ մարդուս ամբողջ հոգին է
ճնշում։ Ես նորա բոլոր յատկութիւնները գիտեմ,—դա կա-
տարեալ և ամբողջ դժոխք է հէնց մի խօսքի մէջ, դա միակ «այո»
է կամ «ոչ», որի վերայ յաւիտենականութիւնն է տատանուո՜ւմ։ Ես
տանել նորան այլ ևս չեմ կարող, ես ճշմարտութիւն եմ պահանջում,
—ճշմարտութիւն մարդկանց մօտ, արդարութիւն կանանց մէջ. վաշ-
խառուին այլ ևս ազնիւ չեն կոչել, իսկ անառակին—անտխեղծ։ Ոչ,
ոչ, ես այլ ևս չեմ կամենում այդ, այլ միայն ճշմարտութիւն, ճըշ-
մարտութիւն, որը փայլում է, ինչպէս դաշոյնի սայրը, Աստուծոյ տա-
ջի մէ՜ջ։ Ես, անուանեալս Պետրոս, պիտի տարածեմ ա՜յդ։ Ես, որ
երեք անգամ երդուեցի և խաբեցի, այժմ երեք հազար անգամ ճշմարիտը
կը խօսեմ, որպէսզի գ՚ուխ կտրողանում մե՜ղքս։ Լաց եղիր, հեկեկանք ար-
ձակէ, գլխիդ սպիտակ մազերը պոկոտիր. Հրէայ, պարկեշտաբարոյ
փարիսեցի, որը զգոյշ բարեգործութեան և ինքնագոհ սրբութեան մէջ
ընտելացել է,—իսկ այժմ ինչո՞ւ չես հաւատում և յուսահատութեան
մէջ ես գտնո՞ւմ։ Դու մինչև անգամ ամբողջ աշխարհով կը երաշխա-
ւորէիր աղջկանդ պատուի համար։ Մի՛, երաշխաւոր մի լինիր, քա-
նի որ նորա պատիւը գնելի է—այդպիսի պատուի գինը ոսկին է և
թանկագին քարերը՜։ Այդ նենգ կնոջ պատճառով, որին դու ես ծը-
նել, այսօր Աստուած կորաւ Հրէաստանի մէ՜ջ։ Քեզնից ծնուած
չարայոյզ կինը ամենամեծ երկպառակութիւն ցանե՜ց։ Ո՞ւր է նա
—մեր Աստուածը։—Նորա խօսքերը թօթափուած են։ Նորա պատ-
ուիրանը ընդունուած չէ, նորա կեանքը դուրս է կորզուած դատա-
պարտութեան տանջանաւոր մահուամբ։ Եւ այդ պատճառով Իսրա-
յէլի ազգը և երկիրը նզովեալ կը լինէ դարէ ց'դար բարձրագոյն ա-
նէծքով։ Ինչպէս ստոր գերիներ, նոքա թագաւորների և կառավա-
րիչների համար պիտի գործեն. բանող անասունների նման՝ նոցա
կեանքի անիւին պիտի լծեն և նոքա թագաւորութեան ամենածանր
տուրքը պիտի քաշ տան՝ տանջանաց և մտրակի երկիւղի տակ։ Ար-
համարհուած և անտանելի, նոքա կը գործեն ուրիշների համար...
Բազմաթիւ կողմերի վերայ ցրուած, նոքա ոչ մի ժամանակ չը պի-

տի կարողանան 'ի մի հաւաքուել: Միշտ, յաւիտեանս յաւիտենից, Աստուծոյ Առաքեալի անմեղ արիւնը անջնջելի բծով արատաւորած կը լինէ ամբողջ Հրէաստանի անունը և կը ծանրանայ նորա վրայ: Միշտ, ց'յաւէտ, Իսրայէլի որդիքը զրկուած պիտի լինեն յաւիտենական կեանքի խոստմունքից ու արժանի լինեն տէնդերքի արհամարհանքին և ատելութեանը:

Նա հանգիստ առաւ, շունչ քաշելով և ձեռքերը դէպի վեր տարածելով, որպէս թէ անէծք կոչելու պատրաստակամութեամբ: Նորա բիրտ ու կոպիտ վերարկուն լայն թիկունքից ու հզօր բազուկներից ցած էր իջնում համարեա արքայական ծիրանու ծալքերով. Նորա տակից ձկնորսի աղքատիկ հագուստն էր երեւում. Նորա կերպարանքը, այնպէս թուաց, որպէս թէ յանկարծ բարձրանալով ոսկէ խորհրդաւոր մեծափայլութիւն ընդունեց, լման լուսնի գաղտնախորհուրդ լոյսի ազդեցութեան տակ: Աչքերը դէպի աստղերը բարձրացնելով, որոնք փայլում էին նորա վերեւում, հազարաւոր թափթփուած կրակների նման,—նա ժպտաց մի տեսակ տարօրինակ ու մոլորուած ծիծաղից զրդուած:

—Բայց դեռ ես վախճանը չը կայ,—ասաց նա: Տակաւին նոր երկիւղ է սպառնում աշխարհիս: Դուք Քրիստոսին սպանեցիք, բայց կեանքը չը խլեցիք նորանից: Դուք Նորան մահ ընդունել ստիպեցիք,—բայց Նա մեռած չէ: Այսօր, գիշերուայ մօտ, Նա թաղուած է, ձգուած գերեզմանի խոր խաւարի մէջ. . Ի՞նչ պիտի անէք դուք, որ այն ահագին քարերը, որոնց տակ ծածկուած է Նա, անընդունակ լինին ճնշելու Նորան: Ի՞նչ կանէք, եթէ գետինը հրաժարուէ իւր սրտի մէջ պահելու Նորան: Ի՞նչ պիտի լինէ ձեր զրութիւնը, եթէ երեք օրից յետոյ, ինչպէս ասաց Նա, իրաւացի յարութիւն առնելով, նոր կեանքի մէջ մտնէ: Ես ոչինչ չեմ հաստատում. երկրորդ անգամ խաբեբայութիւն չեմ սկսիլ, ես հոգուս մէջ եմ պահում թէ բոլոր կասկածանքներս և թէ ամբողջ սարսափս և աւելի ես ոչինչ չեմ ասիլ,—բայց դորա մասին մտածեցէք, Իսրայէլի ցեղի անշեղջ հոգիներ: Ի՞նչ կը գործէք դուք այն սարսափելի ժամին, երբ Խաչեցեալը և Մեռեալը յանկարծ յարութիւն առնէ վերածին կեանքի համար:

Նորա ձայնը ցածրացաւ. Նա երկիւղածութեամբ իւր չորս կողմը նայեց, ապա, յանկարծ երկիւղով բռնուած, ծածկեց իւր դէմքը թիկնոցով և դանդաղ ու ոտքերի մատների վերայ դէպի մուտքը դիմեց:

—Մտածեցէք դորա վերայ,—կրկնեց նա, անհանգիստ ակնարկ ձգելով դէպի Իսկարիոտի կողմը:—Նա, կարող է և այնպէս պատա-

հել,—որ ներէ Յուդային: Ո՛չ, ես ոչինչ չը գիտեմ և չը պիտի երդուեմ, բայց աշխարհս բոլորովին ուրիշ կերպ կը լինէ ու հրաշալի տրօփհետև վերածնութիւն կը կրէ, եթէ միմիայն նա պահէ իւր խօսքը ու խոստումն չը մոռանայ, և երեք օրից յետոյ, ոչ աւել և ոչ պակաս,—յարութիւն առնէ:
Եւ կամացուկ ու անձայն քայլերով հեռացաւ նա: Իսկարիոտը
նայեց նորա յետեւից տխրած և զարմանքի տակ:
—Դուք ինձ մօտ մի խելագար մարդ էլ էք բերել,—ասաց
նա,—Նա չար հոգիներից բռնած մէկն է անշուշտ և սատանայլին գերի:
—Նա խղճի խայթոցի սարսափով է բռնուած,—պատասխանեց
Մելխիորը զանգազութեամբ,—այդ դևը սաէպ սաէպ մարդուս սա-
րօրինակ խօսքեր է ներշնչում և անբնական գործողութիւնների մէջ
ձգում: Այն դևը, որով այս ձկնորսն է բռնուած, համայն աշխարհի կը
չուռ տայ:
—Ձկնո՞րս,—զարմացման մէջ կրկնեց Իսկարիոտը:—Մի՞թէ
նա հասարակ ձկնորս է:
—Այո.—պատասխանեց Մելխիորը,—և նորա աչքերը տարօրի-
նակ կերպով լայնացան:—Նա ցածր դասակարգից է, ամենակոպիտ
սիկից (ցեխ) ստեղծուած. դորանից առաջ պիտի գան թէ նորա անհանջողութիւնները և թէ նորա իսկ յաղթանակը: Ծովի օդը հան-
չել է նորա վերայ նոյն իսկ ի ծննդենէ. դեռ փոքր երեխայութիւ-
նից նա մրցել է քամու և ալիքների հետ.—և իւր ամբողջ կեան-
քում նա պիտի կռուէ անհնազանդ տարերքների հետ: Հեռուից արքանեք չեկան, որ ծունկ իջնէին նորա օրրանի առջև, մոգերը ըն-
ծաներ չբերեցին նորան,—հրեշտակները ցնծալից նուագներ չը երգեցին նորա համար,—այդ բոլորը միմիայն Նազովրեցու համար էր
և միակ Նորան էր պատկանում, Որից հրաժարուեց Պետրոսը և Ո-
րին նոյն Պետրոսը այժմ ջերմեռանդութեամբ պիտի ծառայէ: Մինչդեռ նա տակաւին Սիմոն Պետ-
րոս է կոչւում, որը դեռ նա Գալիլէացի ձկնորս է հաշակուած և
երը բօ մեռած որդու՝ Յուդայի ընկերն է:
Յուսահատ հառաչանք դուրս թռաւ Իսկարիոտի կրծքից:
—Անբաղդ երիտասարդ,—բրթմնջաց նա,—զարմանալու ոչինչ
չըկայ, որ դու մի վայրենի ֆանատիկոս գարձար, քանի որ դու այդ
տեսակ ընկերներ ունէիր:
Նա որդու ծածկուած դիակին մօտեցաւ, ապա չուռ գալով, իւր եկաւորների վերայ նայեց և հանդարտ, դէպի վերջը հեղգանեղ արտայայտութեամբ՝ ասաց.

—Դուք չըպիտի վիրաւորուիք ընկերներ, եթէ ես ձեզ խնդրեմ ինձ այժմ միայնակ թողնել։ Վիշտս համարեա ուժիցս վեր է, հոգիս վշտանում է, ուստի յոգնեցայ ես։ Իսկ ինչ վերաբերում է աղջկանս, ես չը պիտի սկսեմ հաւատացնելու քեզ, Բարաբբա, որ այդ բոլորը ճշմարտութիւնից դուրս է։ Դու գիտես Յուդիթի անմեղութիւնը, նորա հպարտութիւնը, նորա անարատ բարութիւնը—և ընկերոջդ ինքդ կը բացատրես բոլորը. դու նորա կուսութեան և պատուին ջատագով կըհանդիսանաս։ Լսում ես դու ինձ։

—Ես լսում եմ, այո,—խուլ, խեղդուկ ձայնով պատասխանեց Բարաբբան,—և իմ սիրտը լիովին տանջւում է քեզ համար, Իսկարիոտ։

Իսկարիոտը փորձողական ակնարկ ձգեց Բարաբբայի վերայ և ամբողջովին դողաց...

—Շնորհակալ եմ քեզնից, բարեկամ,—պատասխանեց նա և շտապով աւելացրեց.—քեզ վերայ զարհուրելի յանցանքներ են կիտուած, բայց՝ այնուամենայնիւ՝ գիտեմ ես, որ դու բաւականին այրասիրտ ես և այնքան քաջութիւն ունիս, որ կարող ես քաղաքի մէջ տարածած, այդ խելացնոր գալիլէացու, իմ աղջկայ դէմ խօսակցութիւնների առջև առնես և դադարեցնես։

Նա կանգ առաւ, որպէս թէ մի ինչ որ բանի վերայ խոր մտածելով, ապա Բարաբբային աւելի իրեն մօտ կոչեց։ Երբ Բարաբբան մօտեցաւ, Իսկարիոտը մի ձեռքը որդու վարագոյրերի մէջ առնըուած մարմնի վերայ դրեց, իսկ միւսը—Բարաբբայի ուսին։

—Լաւ հասկացիր,—ասաց խռպոտ շշնջոցով,—եթէ որ ճշմարտութեան գէթ մի չնչին մասնիկ լինէր այն կեղտոտ բամբասանքի մէջ,—ես կը սպանէի Կայիափային, այո, երդւում եմ մեռած որդուս մարմնով, որ պիտի սպանէի նորան ժողովրդի ներկայութեամբ, ամբոխի աչքի առջև և հէնց ուղիղ տաճարի մէջ։

Նորա դէմքը սարսափելի այլայլուեց։ Բարաբբայի մութ աչքերը բոցավառուեցին 'ի պատասխան նորա. մի վայրկեան նոքա ընդթափ՝ մէկը միւսի վերայ՝ նայեցին, և, շնորհիւ Բարաբբայի գրգռուած երևակայութեան, նորան այնպէս երևաց, որպէս թէ Յուդայի մարմինը՝ 'ի պատասխան՝ դողաց։ Ապա անբաղդ հայրը դէպի ցած թեքեց իւր գլուխը, 'ի նշան հրաժեշտի։

—Ցտեսութիւն, պարոններ,—ասաց նա, թեթևակի Բարաբբային հրելով, իրանից հեռացնելու նպատակով,—իսկ այն բանի փոխարէն, որ դուք ինձ իմ ննջեցեալին բերեցիք,—ամենաջերմ շնորհակալիքս ընդունեցէք։ Ես մի քանի օրից՝ դեռ ևս կը տեսնուեմ

ձեզ հետ, երբ նախկին տխրութեանս դառնութիւնը փոքր ինչ կը պակասէ և վիշտս սակաւիկ կը թեթևանայ, երբ ես աւելի ուժեղ կը լինեմ, աւելի ընդունակ խելացի խօսակցութեան համար, քան թէ այժմ, իսկ ներկայ ժամանակ...

Եւ անյուսութեամբ ձեռքերը շարժելով, նա ամուր կերպով իւր վերարկուի մէջ փաթաթուեց, իւր որդու դագաղի մօտ նստելով։

Նոյն ժամոյն՝ Բարաբբան հեռացաւ, Մելխիորի հետ 'ի միասին։ Ճանապարհին նա կանգ առաւ, իւր մօտից անցնող ծառայից հարցնելու համար, թէ՝ ուրքի եկաւ արդեօք Յուդիթը այն ժամանակից 'ի վեր, ինչ ուշաթափ էր եղած։ Գլխի բացասական շարժմունքով նորան պատասխան տուեցին, որի ազդեցութեան տակ, նա՝ ծանր սրտով՝ տնից բոլորովին դուրս եկաւ փողոց, որը լուսնի տակ փռուած լինելով փայլփլում էր ամեն կողմից։ Նոքա արդէն մի որոշեալ տարածութիւն էին անցել, երբ Մելխիորը յանկարծ կանգնեց և մտածկոտ, բայց ադամանդի նման փայլող աչքերով, իւր ընկերոջ տխուր դէմքին նայեց։

—Դու դեռ միշտ՝ կորած Յուդիթի գեղեցկութեան վերայ ես մտածում.—հարցրեց նա։—Խոստովանում եմ ու ծածկաբար յայտնում եմ քեզ, որ ես ինքս նորանից աւելի գեղեցիկ կին երբէք տեսած չեմ։ Իսկ նորա յուսահատութիւնը մի նոր սքանչելիութիւն է տալիս նրա չքնաղատիպ դէմքին։

Բարաբբան դողաց։

—Ինչո՞ւ համար դու հէնց այժմ ես խօսում ինձ հետ նորա գեղեցկութեան մասին.—լի վշտով՝ ասաց նա։—Միթէ՞ նա բաւականին փորձանք չը բերեց։ Աւելի լաւ է մեռնող Յուդայի վերայ մտածել, որը նորա զոհերից մէկն պէտք է որ եղած լինէ։

—Այո, ես հէնց նորա մասին եմ մտածում,—համեստաբար պատասխանեց Մելխիորը։—Համայն աշխարհս նորա մասին պիտի մտածէ, ոչ մի ժամանակ չը պիտի մոռանան նորան։ Անբաղդ պատանեակ, դէպքը բերում է՝ նորան պատմութեան առջև պատասխանատու լինել այն մեղքի համար, որպիսին միայն նորա միջոցով չը կատարուեց։ Բայց մարդկանց պատմութիւնները Աստուծոյ պատմամարանութիւնը չեն,—և Յուդան—մինչև անգամ—արդարութիւն կը ստանայ վերջերքում։ Ես—և նա տխրութեամբ ժպտաց—անհանգիստ եմ եղած մի շատ տարօրինակ նախազգացմունքի ազդեցութեան տակ։—Երդւում եմ քեզ, որ այսօր ես չէի համարձակիլ

անգամ մի չնչին լումայ *) գրաւ դնելու այն հարցի դէմ,—թէ Կալիփան դեռ կարող է ապրել։ Դու ինչպէս ես մտածում։

Բարաբբան վախեցած նորա վերայ նայեց և սկսեց ծանրութեամբ շունչ քաշել։ Մի վայրկեան նոքա այդ դրութեան մէջ մնացին, լուսնի խորհրդաւոր փայլի տակ՝ մէկմէկու վերայ նայելով, ապա իրենց քայլերը դէպի տուն ուղղեցին, դանդաղ և խորին լռութեան մէջ։

IV.

Գիշերուայ ժամի երկքին, հրէական շաբաթի լուսաբացին, Իսկարիոտացի Յուդիթը իւր երկարատև ուշաթափութիւնից զարթնեց։ Երբ աչքերը բաց արեց նա ու իւր չորս կողմը մի տեսակ կասկածելի ու աննպատակ ակնարկ ձգեց, ապա թէ իրեն շրջապատող դրութիւնը իմացաւ։ Նա իւր սենեակի մէջ էր գտնւում. պատուհանների փեղկերը ծածկուած էին և լապտերները վառ. մահճակալի ուղիղ պատուհանդանի մօտ նորա մօտ պահապան դրուած կանանցից նստած էին երկուսը, որոնք խոր քնի մէջ էին մտած։ Զգուշութեամբ իւր մօտ դրուած բարձերի վերայ կթնելով, նա ապշութեամբ նոցա վերայ նայեց, ապա հետաքրքրութեամբ չորս կողմը նայեց, ուրիշ որևէ անձնաւորութեան ներկայ գտնուելը ստուգելու համար։ Բացի այդ երկու քնած նաժիշտներից—ոչ ոք չը կար։ Իւր անկարգ հագուստը սակաւ ինչ կարգի դնելով ու թափթփուն մազերը հիւսելով, նա կամացուկ վեր կացաւ և, առանց ձայն հանելու, հայելուն մօտեցաւ։ Այդ տեղ նա դադար առեց և անհանգիստ կերպով իւր պատկերին ժպտաց... Ինչքան անբնական փայլ ունէին նորա աչքերը և տարօրինակ տեսք... Բայց—այնու ամենայնիւ սիրալիր և չքնաղագեղ։ Մարգարիտը, որը վաղուց արդէն ընծայել էր նորան Բարաբբան, զարդարում էր նորա պարանոցը,—Յուդիթը աննպատակ շօշափեց այդ զարդարանքը, իւր մարմարիոն ձեռքը դէպի նա տանելով... Խեղճ Բարաբբա, որքան էր սիրում նա Յուդիթին և

---

*) Ռուսերէն թարգմանութեան մէջ գործ է ածուած «полъ—грошъ»—կէս—գրօշ, ներկայիս դրամական չափը, մենք աւելի արդար և հարազատ համարեցինք այն ժամանակուայ գործածելիք դրամի չնչին արժէքաւորը գործ ածել այդ խօսքի փոխարէն։ Ծ. Հ. Թ.

ինչքան վաղուց։ Բայց այն ժամանակից ի վեր այնքան շատ բան պատահեց և բազմաթիւ անցքեր մէկմէկու յաջորդեցին—տարօրինակ, խառնափնթոր բաներ,—որոնցից այժմ հարկաւոր էր միմիայն մի բան յիշելու,—որ երկար խռովկանութիւնից ու բացակայութիւնից յետոյ, Յուդան դարձեալ տուն է վերադարձել։ Այո, Յուդան տանն է, նա՝ Յուդիթը այժմ իսկ նորա մօտ կը գնայ և կը բացատրէ նորան այն բոլոր յիմար ու խոչընդոտ չփոթութիւնները։ Յուդիթի գլուխը պտոյտ էր գալիս և նա իւր բոլոր անդամների մէջ սարսափելի թուլութիւն էր զգում. նորա բոլոր երակների միջից սառնասոյդ ցուրտ էր անցնում, որը ապա զարհուրելի ջերմութեան ալիքների փոխուեց,—նա թուլանում էր, բայց աշխատում էր ուշադրութիւն չը դարձնել այդ հիւանդոտ զգացմունքի վերայ. Յուդայի հետ տեսակցութեան բուռն ցանկութիւնը ամրապնդում էր նորա սպառող ուժը և տոկունութիւն էր տալիս։ Նա աւելի ամուր փաթաթուեց իւր սպիտակ զգեստի մէջ, սաւանագործ և ոսկով բանուած գօտին կապեց, և, մօտիկ սեղանի վերայ ընկած, իւր դաշոյնը նկատելով, զորան էլ իւր սիգապանծ ու նազական մէջքից կապեց, որը նազաշուք իմն կերպով կպաւ նորա դիւրաթեք իրանից։ Ապա նա անհանգստութեամբ երկու կանանց վերայ նայեց,—բայց նոքա հանգիստ քուն էին մտել, և կամացուկ, ոտների մատների ծայրով, դուրս եկաւ սենեակից։ Սենեակի դուռը բաց էր թողած, նորան մնում էր բարձրացնել և նորից վայր ձգել վարագոյրը։ Հազիւ թէ լսելի ձայնով նա անցաւ նախագաւիթից, ինչպէս մի սպիտակ շուաք—մեռելանման գունատ դէմքով և փայլատակող աչքերով։ Նա իրեն համարեա բաղդաւոր էր զգում, նա այդ տեսակ երջանկութեան մէջ պատրաստ էր մինչև անգամ ուրախ երգ էլ երգելու,—այնքան թեթև էր նորա հոգին։ Բաց գաւթին հասնելով, նա կանգ առաւ և կասկածանքով իւր շուրջը նայեց։ Իւրաքանչիւր առարկայի մօտից, ամեն մի բանի վերայ մութ ստուերներ էին ընկած,—լուսինը անյայտացել էր, երկնքի երեսին սոսկ գունատ արծաթագոյն հետքեր թողնելով,—ի նշան իւր եղելութեան։ Ամեն ինչ խաղաղ էր։ Բացի փոքրիկ բուից. ոչ մի կենդանի արարած չը կար, իսկ նա կիթողների մէջ յետ և առաջ էր թռչում, միենոյն ժամանակ իւր վշտալի ճիչը արձակելով։ Անբաղդ Իսկարիոտը, վշտահար և թախծալի, շատ ուշ չէր, ինչ հեռացել էր այդ տեղից, փոքր ինչ հանգստութիւն գտնելու համար։ Մանուշակագոյն ծածկոցի տակ՝ միայնակ պարկած էր նորա որդու մարմինը, հեռացող գիշերուայ ու զարթնող առաւօտածագ ցերեկուայ, գունափոխ ժամէ

ժամին։ Թեթև սանդալների մէջ առնուած Յուդիթի ոտքերը մարմարեայ յատակին խփուելով, վայր թափուող տերևների ձայն էին հանում. Նա անվճռողական և դանդաղ շարժումներ էր գործում, ձեռքերով շօշափելով օդը, կարծես թէ յանկարծ բռնուած լինէր կուրութեամբ։ Բայց նորա շրջմոլիկ ակնարկը գտաւ այն, ինչ փընտռում էր—ծանր վարագոյրների մէջ փաթաթուած մի մութ գունդուած, որի տակ հանգչում էր այն բոլորը, ինչ որ մնացել էր թէ նորա եղբօրից, թէ մեծ ընկերակցից և թէ երեխայութեան խաղակցից, որը այնքան՝ անսահման ու փափուկ սիրով՝ սիրում էր իրեն՝—Յուդիթին։ Նա շտապեցրեց իւր քայլերը ու, համարեա թէ վազելով, առանց մի որևէ երկիւղի, դուրս թափեց բոլոր ծածկոցները, այնպէս, որ Յուդայի երեսը և ամբողջ մարմինը պակերացաւ նորա աչքի առջև։ Պարանը դեռ ևս շրջապատում էր նորա պարանոցը, ինչպէս քստմնեցուցիչ գործողութեան մի ահռելի վկայ։ Այդ կիսալոյսի մէջ Յուդան նորան շլացուցիչ գեղեցկութեան մէջ երևաց, մի տեսակ արհամարհանքի ստուեր էր ընկած նորա գծերի վերայ, իսկ դէպի երկինք ցարձած աչքերի մէջ ջերմնատագնապ անպատասխան հարցերի մի ամբողջ աշխարհ էր արտայայտւում։ «Ինձ մատնի՞չ էք կոչում դուք».—Թւում էր, որ այդ էր ասում նա լռիկ ատամներին,—«Յառաջիկայ օրերի մէջ սրբի տեղ դրուած մարդկանց խաւերում աւելի չար մարդիկ կը դուրս գան, քան թէ ես էի»։

Քոյրը ուշադրութեամբ, և մի տեսակ վայրենի հետաքրքրութեամբ, իւր ակնարկը եղբօր վերայ ձգեց, բայց նա ո՛չ արտասւում էր և ոչ էլ դողում։ Մի անմռւաց նպատակ տիրել էր նորա մտքին, մի տեսակ ազօտ երևակայական-ֆանտաստիքական միտք, բայց, այնուամենայնիւ, նա ցանկութիւն զգաց ի կատար ածելու այդ։ Վայրենի հիացմամբ նա դուրս քաշեց իւր դաշոյնը պատեանից և զգուշութեամբ կտրեց պարանոցը պատած չուանը։ Նա հանդարտ քաշեց պարանի կտորը և արիւնը նորից սկսեց ցայտել։ Դա մի տեսակ խորհրդաւոր և քստմնեցուցիչ երևաց Յուդիթին,—որը փոքր ինչ երկիւղ կրեց և ամբողջ մարմնով սարսափահար եղաւ։ Ապա դարձեալ ժպտաց և, հաւաքելով արիւնաներկ ու խոնաւ պարանը, գօտու մէջ խոթեց, իսկ դաշոյնը դէպի մի անկիւն ձգելով, հիացմամբ ծափ տալ սկսեց, ապա լի գոհունակութեամբ՝ ձեռքերը իրար շփեց։

—Յուդա,—կոչեց նա,—ես կտրեցի այն հաստ պարանը, որով կապուած էիր դու, այժմ դու կարող պիտի լինիս ազատ շունչ քա-

շելու։ Խնդրում եմ, վեր կաց, խօսի՛ր ինձ հետ։ Բոլորը պատմիր ինձ, ես կը հաւատամ նոյն իսկ քո ամենաանուղիղ պատմութիւններին։ Ես չը պիտի ասեմ քեզ, որ դու մոլորուում ես,—եթէ միայն ժըպտաս դու և խօսել սկսես,—իսկ ես կը ներեմ քեզ քո դէպի Նազովրեցու ուսմունքը ունեցած յիմար զմայլմունքիդ վերաբերութեամբ։ Դու արդէն գիտես, որ ես չեմ կամենում քեզ մինչ յուսահատութեան հասցնել,—իսկ կամաւոր քեզ ոչ մի ժամանակ չը պիտի նեղեմ, ես քո փոքրիկ քոյրն եմ, որին այնքան սիրում ես դու։ Յուդա, լսի՛ր։ Այն Կայիափան էր, որը հրամայեց ինձ ասելու քեզ, որ դու քո Ուսուցչին մատնես և Կայիափան արդար էր.—քո անխելք Մարգարէն մեր հաւատքին հակառակ կանգնեց, նա մեր կրօնի դէմ մեղադրանքներ բարձրացրեց։ Ուրեմն ինչու պիտի հակառակես դու մեզ հետ և ինչ հիման վերայ թող պիտի տաս քո նախահայրերի հաւատքը։ Խնդրում եմ քեզ, վեր կաց, գիտակցութեան ձայնին խուլ մի ձևանար,—և յուսահատութեան անբնական ուժով մարմնի վերին մասը բարձրացրեց նա, ննջեցեալի դէմքի վերայ նայելով թէ սիրով և թէ,—միևնոյն ժամանակ,—և սարսափով։—Բայց ինչ տեսակ ես նայում դու ինձ վերայ, որքան սառն և անկարեկից աչքերով՞։ Ես քեզ ինչ եմ արել։—Ոչինչ, բացի այն, որ բարի խորհուրդներ տուեցի։ Իսկ Կայիափան,—նա քեզ համար դեռ շատ բան պիտի անէ, եթէ դու փոքր ինչ դարձի գաս և սակաւիկ ինչ զղջումն ցոյց տաս։

Այստեղ նա կանգ առաւ և մի զարհուրելի ճիչ արձակեց. մեռած մարմնի ծանրութիւնը չափից դուրս անտանելի էր նորա համար, նա ձեռքերը բաց արաւ և դիակը խուլ ձայնով ընկաւ իւր նախկին տեղը։ Յուդիթը սկսեց երեխայի նման լաց լինել.

—Յուդա, Յուդա, խօսի՛ր ինձ հետ։ Համբուրի՛ր ի՛նձ։ Ես գիտեմ, որ դու լսում ես ինձ, բայց պատասխան տալ չես կամենում, որովհետև դեռ բարկանում ես դու և Նազարէթից եկած Մարդը աւելի թանկ է քեզ համար, քան թէ ես։

Նա սպասեց, ըստ երևոյթին, պատասխանի ակնկալութիւն ունենալով, յետոյ,—քանի որ լռութիւնը ուրիշ բանով չը խզուեց,—նա սկսեց արիւնոտ չուանի հետ խաղալ, որը նորա գօտիից քարշ ընկած տատանուում էր։

—Է՛հ, ինչ արած,—հառաչեց նա,—ես ցաւում եմ, որ դու այդքան ժանտ բնութիւն ունիս։ Կայիափան կարող պիտի լինէր քեզ համար շատ բան անելու, եթէ միմիայն կամենար նա։ Ինչո՞ւ ես դու այդքան մռայլ բնութեան մէջ մտել և յուսահատուել այն բանի համար, որ փոփոխիչին սպանել են։ Նազարէթից եկած այն Մարդու

մէջ ինչ մի զարմանալու բան կայ որ։ Նա մի հասարակ գործաւոր էր, խեղճ մոլեռանդութեամբ բռնուած. և մի այդպիսի փոքրիկ բանի համար յանկարծ մենք խռովութիւն պիտի պահենք և դա երկպառակութեան պատճառ պիտի դառնանք։ Բայց և այնպէս, Նորան ես դարձեալ զիջում եմ քեզ համար, եթէ որ դա քեզ կարող է բաւականութիւն պատճառել։ Խաչը և պսակը բոլորովին ինձ համար սրբութիւն պիտի չլինին, եթէ միայն դու ցանկանաս այդ։ Ես այլ ես ոչինչ չեմ կարող անել, որ կարող լինեմ քո զայրոյթը դադարեցնել։ Ախր դու բոլորովին ի զուր ես շարունակում քո բարկութիւնդ. քո Նազովրեցին մեռաւ և մինչև անգամ, քեզ հաճոյք պատճառելու համար իսկ, չը պիտի կարողանայ յարութիւն առնել։

Դարձեալ նա դադար առաւ, ապա սկսեց գաւիթի մէջ դէպի յետ և առաջ քայլել։

Իր դաշոյնը նկատելով, որին քիչ վաղ դէպի անկիւնն էր ձգել, նա բարձրացրեց այդ և իր պատեանի մէջ դրեց, ապա սողացող վարդերի մի երկար ճիւղ քաղելով, դոցա անպատասխան մեռածի վերայ դնելու ցանկութիւն զգաց։ Բայց երբ նա դէպի դին մօտեցաւ, յանկարծ փայլող մի լոյս վախեցրեց նորան, նա տատանուեց, անգիտակցաբար մի ձեռքով աչքերը պաշտպանելով։ Հորիզոնական ձևով մի մութ-կարմիր հրային խաչ էր հանգչել ուղիղ Յուդայի մարմնի վերայ, դէպի հեռուն փայլուն ճառագայթներ ձգելով։ Նա նայում էր հիացմամբ։ Այդ երևոյթը նորա առջև աւելի պարզ փայլեց, քան ամենափայլուն արեգակային ճառագայթ, և թէպէտ նորա միտքը արդէն խառն էր իսկ ինքն տենդային իմն կերպով գրգռուած, նա՝ այնուամենայնիւ՝ հասկացաւ, որ այդ մի հրաշք էր—մարդկային բանականութեան համար անհասկանալի մի անցք։ Նա ակամայ տարածեց իր ձեռքերը, որոնք հէնց նոր քաղուած վարդերով դեռ լեցուն էին, այն փայլուն բոցին հպուելու համար, որը այնքան կենդանի և գերբնական էր։ Յանկարծ նորա վերայ մի շառագոյն ստուեր ընկաւ։ Նա մի տեսակ կարմիր մառախուղի մէջ բռնուած երևաց, որը նորա շորերի ճերմակութիւնը և երեսի սպիտակութիւնը փոխելով, մի տեսակ հրավառ սրտափայլումն առաջ բերեց, ապա արձակահեր գլխի վերայ ցոլալով, արփիագեղ լոյսի տակ առաւ ամեն ինչ։ Անգամ նորա ձեռքի մէջ վարդերը ստուերաձիգ և գունատ երևացին, իսկ մեռեալի դժգոյն մոմային պատկերը վերադարձող կեանքի ստուերը ընդունեց։ Խորհրդաւոր և չնաշխարհիկ լուսաւորութիւնը մօտ երկու րոպէ շարունակուեց,—ապա թէ անյայտացաւ։ Յուդիթը՝ երկիւղից սառած՝ ուշադիր եղաւ այդ լոյսի չքանալուն։ Երբ այն

վերջացաւ, նա նոր նկատեց, որ իր եղբօր դէմքի վերայ փոփոխութիւն էր առաջացել։—Շրթունքները, որոնք նախ բացուած էին սարսափելի հոգեվարքի մասին վկայելով,—այժմ միաւորուելով, մի խորհրդաւոր և խաղաղ ժպիտ էին կազմել. այն աչքերը, որոնք առաջ այնպէս հարցական դէպի վեր էին նայում, այժմ խփուած էին։ Այն բոլորը տեսնելով, նա սկսեց իստերիկական լաց ու ծիծաղ բարձրացնել, և, փռթուած վարդերը մեռելի կրծքի վերայ դնելով, թեքուեց ու նորա սառն ու ժպտուն շրթունքները համբուրեց։

—Յուդա, Յուդա,—ասաց նա հեկեկոցի մէջ,—այժմ քնեցիր դու, ոչ մի խօսք չը ասելով և չը օրհնելով ինձ։ Դու նայել անգամ չես կամենում ինձ վերայ։ Ա՜խ, քաղասիրս։ Բայց այդ բոլորը նեղում եմ ես քեզ. դու—հաւանական է—սարսափելի դադարած ես, եթէ ոչ չը պիտի մնայիր այս բաց երկնքի տակ՝ ննջելու։ Ես չը պիտի խանգարեմ քեզ. ես կը զարթեցնեմ քեզ այն ժամանակ, երբ կը սկսէ առաւօտը։ Այո, այն ժամանակ կը վերադառնամ ես, քեզ վերայ նայելու համար, իմ վշտաբեր, բայց սիրելի եղբայր։ Մնաս բարեաւ և բարի գիշե՛ր.—և նա իր եղբօրը օդային համբոյրներ յղեց, իրեն խեղդող արցունքների միջից։—Խաղաղ, անդորր, երջանիկ գիշեր, եղբայրս, ես քեզ համար Կայիափայից լաւ համբաւներ և բարի լուրեր կը բերեմ... քնիր, լաւ քնիր... հանգիստ գիշեր անցկացրո՛...

Եւ դեռ ես ճօճելով իւր ձեռքը, նա ոտքի մատների վերայ կամացուկ հեռացաւ, ապա դէպի ետ դարձաւ, մեռածի հանգստացած ու հրաշալի դէմքը մի անգամ ևս տեսնելու համար։ Այժմ նա անցաւ բարձր կամարների միջից, զգուշաբար բաց արեց դռները և խենթական քայլուածքով, իր ամբողջովին խառնակ գիտակցութեամբ, դուրս թռաւ դէպի քաղաքի խաղաղ փողոցները։

V.

Շաբաթ օրուայ եղանակը հիանալի էր։ Երուսաղէմի բոլոր մարդիկ Մօրիա սարի վերայ գտնուած փառաւոր տաճարի մէջ հաւաքուելով, շնորհակալական աղօթքներ էին մատուցանում Եհովային իրենց նախկին օրուայ բոլոր չարիքներից զերծ պահելու համար։ Նոցա մէջ և այնպիսիները կային, որոնք իրենց աղօթքներին անգիտակցական սրբապղծութիւն ևս կցեցին,—աղերսելով Աստուծուն—ամենաողորմածապարգևներեն Նոցա այն բանի համար, որ նոքա այնքան

երկար ժամանակ թող տուեցին Նազովրեցուն իրենց շրջանի մէջ գործելու։ Բայց և այնպէս, այդ առաւօտեան աղօթքի ժամանակ մի տեսակ կրօնական թերութիւն էր աչքի ընկնում, թէպէտ և՝ ժողովրդի կարծիքով՝ չատ բան կար, որի համար հարկաւոր էր շնորհակալ լինել։ «Սրբութիւն Սրբոցի» պատռուած վարագոյրը ժողովի առջև կախ էր ընկել, ինչպէս նախկին բոլոր սարսափների մի պարհուրելի յիշատակ. տաղտկացուցիչ և անվերջանալի աստուածապաշտութեան ժամանակ, Կայիափայի ձայնը խուլ և կերկերուն էր հնչում։ Մի ինչ որ բան էր պակասում. թւում էր, որ այլ ևս ոչ մի միտք չը կար օրէնքի մշտական մեծափառ ընթերցուածի մէջ, մի տեսակ դատարկութիւն և ձանձրոյթ է տիրում ամբողջ ծիսակատարութեան ժամանակ, որը ներկայ եղողների վերայ չափից դուրս ճնշող տպաւորութիւն թողեց։ Երբ ամբոխը, վերջապէս, տաճարից դէպի դուրս ընկաւ, այն ժամանակ շատերը դէպի այն կողմը դիմեցին. որտեղ Նազովրեցի Մարգարէն էր թաղուած, այն համբաւը, որ Յովսէփ Արիմաթացին Պիղատոսից մարմինը խնդրեց և այն, որ Կայիափան պահանջել էր քաջարի պահնակ դնել նորա փոր վէմը պահպանելու համար, արդէն տարածուել էր ամբողջ քաղաքի մէջ։

—Բնաւին մենք այդքան իմաստուն և իւր գործերին արի քահանայապետ չենք ունեցել,—կանգ առնելով «Արքայական Դռնակի» մօտ, իւր գլխի կտաւեայ սպիտակ ծածկոցը ուղղելու համար, նկատեց նոցանից մէկը։—Նա մեծ հմտութեամբ ու զարմանալի ճարպկութեամբ առաջ տարաւ այդ գործը, քանի որ Նազովրեցու աշակերտները, կարծիք չը կայ, պիտի գողանային նորա մարմինը, իրեն մարգարէութիւնը գորանով ճշմարիտ և հաստատ կացուցանելու համար։

—Այո, ճիշտ ես ասում դու,—պատասխանեց նորա ընկերը։ Դոցա ամբողջ խումբը այժմ Երուսաղէմումն է գտնւում,—Գալիլեայի վատթարագոյն մարդկանց վայրենի ու երկիւղ ազդող խառնիճաղանճ մի խումբ են դոքա։ Եթէ ես Կայիափայի տեղ լինէի, նոցա քաղաքի սահմաններից արտաքսելու միջոցներ ձեռք կառնէի։

—Նոցանից մէկը ինքն իրեն վանդել է արդէն,—նկատեց առաջինը.—դու երևի տասարդ Իսկարիովտացու մասին ու նորա վախճանի վերաբերութեամբ լսել ես։

Նա, որին վերաբերում էր այդ հարցը, գլխով դրական շարժումն գործեց։

—Յուդան խելագարի մէկն էր,—ասաց նա,—նա ոչ մի բանից գոհ չէր. նա պոռոտախօսութեամբ միշտ մի տեսակ կատարելագոր-

ծութիւնների վերայ էր զատում, մի անքննելի ճշմարտութիւն փընտռում։ Այդ տեսակ մարդիկ այս աշխարհից չեն։

—Ճշմարտապէս և նա ինքն էլ հէնց այդ համոզմունքին եկաւ,—ծածկամիտ ժպիտով նկատեց նորա բարեկամը, և զանդագութեամբ վայր իջաւ սանդուղքներից, որոնք մարդկանց տաճարից դէպի դուրսն էին առաջնորդում.—անօրինակ վճռականութեամբ նա ձգեց այս աշխարհը։ Նորան ծառի ճիւղից կախուած գտան՝ հէնց ուղիղ Գեթսեմանի այգու ձիթենիների անտառում, և երէկ գիշեր նոքա մարմինը իւր հօր տունը տարան։

—Բայց, միթէ դուք յետին նորութիւնները չէք լսել.—խօսակցութեան մէջ խառնուեց մօտ կանգնած մի մարդ։—Այժմ Իսկարիովտը մի նոր վիշտ ևս ունէ, որի ազդեցութեան տակ նա համարեա թէ խելքը կորցրել է։ Նա մի ամենաթանկ գանձի կորուստ է ունեցել, —իւր անկարգ և քնքուշ պահած աղջկան բոլորովին ձեռքից տուել է. նա արդէն եղել է իւր բոլոր դրացիների մօտ, աշխատելով նոցանից իւր աղջկայ մասին մի որևէ բան իմանալու,—բայց և ոչինչ չէ հասկացել։ Յուդիթը գիշերուայ մի ժամանակը դուրս է եկել տնից ու անյայտացել յանկարծ, իսկ թէ ուր է թագնուած նա այժմ,—ոչոք չը գիտէ։

Այդ ժամանակ խօսակիցներին դարձաւ մի քանի մարդ խառնըուեց, որոնց թիւը դգալի աւելացաւ։ Նոքա բոլորն էլ, զարմացման և անհասկացողութեան մէջ, իրենց ձեռքերն էին շարժում։

—Նորա աղջիկը.—կրկնեց մէկը։—Այդ չէ կարող լինել։ Ի՞նչու համար պիտի փախչէր նա։

—Ո՞վ գիտէ։ Երէկ մեռած եղբօրը տեսաւ նա թէ չէ, ուշաթափութեան մէջ ընկաւ, նորան ուշագնաց իւր սենեակը տարան և մահճի վերայ դրին. այնտեղ, նորա մօտ, երկու աղախին մնացին, բայց քնեցին նոքա և, զարթնելով, նկատեցին, որ նա այլեւս սենեակումը չէ.

Լսողները իրենց գլուխը շարժեցին, կարծես թէ, ոչինչ չը հասկանալով, և ցաւակցութեան զանազան նախադասութիւններ մըրմնջացին Իսկարիոտի հասցէին, որպէս լաւ և հարուստ մարդի, որը արժան չէր այդպիսի մի վշտի, և ապա նոցանից իւրաքանչիւրը՝ իւր ճանապարհով՝ դէպի տուն գնաց։

Իսկ Նազովրեցու գերեզմանի մօտ հետաքրքիր մարդկանց մի ամբողջ խումբ էր հաւաքուել։ Քարայրը բաւականին գեղեցիկ, բայց ամայի տեղի վերայ էր գտնւում. նա երկու ոչ բարձր սարերի մէջ էր ընկած ու արեգակի ջերմութեան տակ այրուած մեկօնագոյն

գետնի վրայ, որից խուսափում էր բուսականութիւնը։ Նա իւր տեսքով հէնց նոյն ժայռի մէջ փորուած քարանձաւի էր նմանում։ Դէպի արտաքին պարզարանքը մի քանի կոպիտ նշաններ կային, օրինակ՝ գագաթում դարսուած էին սպիտակ հատաքարի (гранитъ) մի քանի փայլուն կտորներ, որոնց բուրգի ձև էր տուած և որոնք միջօրեայ արեգակի փայլուն լուսաւորութեան տակ պէծպէծ էին տալիս ու կայծոտ ճաճանչներ սփռում, կարծես թէ բիւրեղեայ կտորներ լինէին՝ սքանչելակերտ, բնութեան զարդարած, անթիւ անկիւններով։ Քառանկիւնի կառուածքը, որը նրքի տեղ էր ծառայում, պիրկ ծածկուած էր ահագին վիմաքարով, որի մեծութիւնը և չափը սերտ կապուած էր անցքի տարածութեան հետ, իսկ այդ քարի և իրեն գրկած ժայռի մէջ՝ պարանների մի ամբողջ ցանց էր գտնւում, հարիւրաւոր տեղերում սինէդրիօնի ահագին կնքով կնքուած։ Խիտ ցանցի ամեն մի ծայրը մեծածաւալ դրոշմի հետքն էր կրում։ Այրի շուրջը, իւրաքանչիւր կողմից, դասաւորուած էր պահնակը. այդ տեսակ պահնակը տասն և հինգ ընտիր ու քաջարի զինուորներից էր բաղկացած, ազդեցիկ հարիւրապետի իշխանութեան տակ առնուած, որը ջլապինդ կազմուածքով ու խիստ դէմքով մի մարդ էր, և որը, ըստ չափու, երբ հետաքրքիր դատարկապորտները աւելի և աւելի էին մօտենում,—բացարձակ զզուանքով քննում էր նոցա։

—Ինչ վատազգ ու անարգ ցեղին կազմում այդ հրէաները,—ասաց նա սեղմած ատամների միջից։—Նոքա երկչոտութեամբ են մօտենում և մի ինչ որ փսփսում են։ Ո՞վ գիտէ, նոքա՝ մինչև անգամ՝ մտածում են, որ նոյն իսկ մենք ինքներս Խաչեցեալի մարմինը մի որևէ տեղ պիտի տանենք։ Նոքա՝ բոլորն էլ՝ միատեսակ վախկոտներ են, հէնց նոյնանման, ինչպէս և իրենց քահանայապետը։ Ոչ մի ժամանակ այսքան սրտնեղութիւն չէր անցել, և այն՝ մի հասիկ մեռած մարմնու պատճառով։

Եւ նա մռայլադէմ սկսեց յետ և առաջ քայլել, դէպի ցած ձըգելով իւր աչքերը, որպէս թէ այդ բոլոր ծոյլերին չը կամենալով իւր ակնարկին արժանացնել։ Իսկ ամբոխը աւելի և աւելի բազմաբար դարձաւ. քարայրը հրաշալի լաւ էր պահպանւում, խառնակութիւն չը կար. դոքա իսկական զինուորներ էին,—պաղարիւն, անտարբեր, որոնց համար Նազովրեցին ոչ այլ ինչ, և ոչ այլ ոք էր, եթէ ոչ՝ օրէնքի հիման վերայ մահու պատիժ տարած մի հրէական Քարոզիչ։

Արեգակը արդէն սկսել էր սաստկութեամբ այրել, և մարդկանց խմբերը ցրուեցին, ճանապարհին իրար մէջ այն բոլոր արտա-

կարգ պատմութիւնները կրկնելով, որոնք Նազովրեցի Մարգարէի հրաշագործութիւններին էին վերաբերում։

—Որքան քաջութեամբ էր կանգնած նա Պիղատոսի առջև,—ասաց մէկը։—Այո, և ինչ տեսակ փառաւոր ու սքանչելի իմն կերպով մեռաւ նա։

—Այդ տեսակ մարդիկ միշտ այդպէս են լինում,—նկատեց միւսը։—Նոքա մտածմունքներից տարուած՝ կորցնում են իրենց իմացականութիւնը, և դոքա անտարբեր են դէպի մահը, որովհետև հաւատում են, որ նորից պիտի ապրեն։

Նոյն նիւթի վերայ խօսակցելով և նախկին օրուայ զստմնեցուցիչ տեսարանները մտաբերելով, նոքա դէպի քաղաք դիմեցին։ Գերեզմանի մօտ միմիայն մի մարդ մնաց, հասակը անցկացրած, կորաքամակ, դողդոջ և ցնցոտիների մէջ։ Փայտը իրեն նեցուկ ունենալով՝ նա ուղիղ քարայրի մօտ էր կանգնած, միևնոյն ժամանակ երկիւղած ու աղերսական ակնարկ ձգելով զինուորների վերայ։ Ցենտուրիոն Գալբուսը՝ նորան նկատելով,—յոնքերը կիտեց։

—Ի՞նչ գործ ունիս այստեղ, հրէական կմախք.—կոպտութեամբ հարցրեց նա։—Կորչիր այստեղից, մուրացկանի մէկը ու մի համարձակուիր հռովմէական լէգիոնին մօտենալ։

—Տէր և իշխան,—վրդովմունքից դողդոջ ձայնով՝ պատասխանեց այդ մարդը.—ես ողորմութիւն չեմ խնդրում։ Ես միմիայն աղաչում եմ բարի լինել և թոյլ տալ ինձ ձեռքս այն քարի վերայ դնելու, ահա այն քարայրի մօտ... անգամ մի... մի անգամ միայն, բարի պարոն,—աղջիկս շատ տկար է և ես լիայոյս եմ, որ եթէ չօշափեմ այն քարը, ձեռքս նորա վերայ դնեմ և աղօթեմ, հէք երեխաս ապրէ պիտի։

Նա կանգ առաւ, ամբողջովին դողալով և աղերսանքի ձևով իւր երկու ձեռքերը տարածեց։

Գալբուսը արհամարհաբար նորան նայեց։

—Ինչ ես վայրախօսում դու.—հարցրեց նա։—Աղջի՞կ։—Ի՞նչ աղջիկ։ Իսկ մի՞թէ քարին կպչիլը քեզ որևէ օգուտ պիտի բերէ։ Դու երևակայութեան մէջ ես մտել, ծերո՛ւկ։ Հեռացիր այստեղից ու խելքիդ դարման տար։ Ահա այդ, իրաւօք, աւելի օգտակար կը լինէր։

—Պարոն.—կոչեց ծերունին ու արցունքը խեղդեց նորան։—Աղջիկս պիտի մեռնէ։ Մտածիր, բարի զինուոր, մի շաբաթ սորանից առաջ, նա, ով այժմ այն գերեզմանի մէջ է պառկած, սիրուն երեխայիս իւր գրկի մէջ առաւ, փայփայեց ու օրհնեց. աղջիկս այժմ դեռ երեք տարեկան է ու արդէն դմայլելի գեղեցկութիւն ունի։

Բայց նա հիւանդ է, և ես մտածում եմ, որ եթէ գէթ մի վայրկեանի ընթացքում ձեռքս քարայրի վրայ դնեմ և ասեմ. «Վարդապետ, աղերսում եմ քեզ, բժշկիր երեխաս»,—նա պիտի լաւ լինի և խնդիրս կատարէ։ Որովհետև խեղճերի համար նա միշտ ցաւում էր, իսկ երեխայիս գուրգուրեց նա։

Գալբուսը շառագունեց. նա ինքն իրեն սրտնեղեց և գոհ չէր իր դրութիւնից, որովհետև զգաց, որ մի ինչ որ բան սեղմում է իր կոկորդը և աչքերին արցունք է մօտենում։ Այդ անբաղդ ծերունու տեսքը և լի սրտէ պարզութիւնը ու ջերմեռանդ հաւատքը կոպիտ զինուորին մինչև հոգու խորքը շարժեցին, չը նայելով, որ նա իր զգացմունքից ամաչում էր։

—Մօտեցիր, վաղուցվայ անխելք,—խիստ ձևանալով, ասաց նա։ —Մի հեռանալ ինձնից, ես իմ նիզակը քեզ վերայ կըբարձրացնեմ և թոյլ պիտի տամ քեզ քարայրին ձեռք տալ, բայց այդ միմիայն մի րոպէի մէջ—զգուշութեամբ, որպէս զի սինեդրիոնի կնիքները չը կոտրես։ Եւ թող աղօթքդ աղջկանդ համար շատ կարճ լինէ, թէպէտ պարտաւոր եմ յիշելու և իմ խօսքը, որ դու խեղճ ու խելառ մէկն ես. մեռածը ականջներ չունէ, քո խնդիրդ լսէ։ Բայց և այնպէս՝ քայլենք։

Կաղալով և յուզմունքից խեղդուելով, ծերունին դէպի առաջ շարժուեց։ Նա ուղղակի դէպի այրը մօտեցաւ և՝ նուաստացուցեալ՝ ծնկների վերայ ընկնելով, ծունկ իջաւ ահագին քարի հանդէպ ու իր չորացած կարկամ ձեռքերը նորա վերայ դրեց։

—Տէր, եթէ ցանկանաս Դու,—ասաց նա,—հէնց ինքդ կարող ես փրկել աղջկաս։ Մի խօսքդ միայն բաւական էր աղջկանս ազատելու համար։

Մի րոպէ ծնկաչոք մնալուց յետոյ, նա, իր ծերունական պղտոր աչքերի մէջ երջանկութեան արտայայտութեամբ, ոտքի կանգնեց։

—Խոնարհաբար շնորհակալ եմ քեզնից, պարոն,—բաց անելով իր սպիտակ մազերը և խոնարհութեամբ գլուխ տալով, դէպի հարիւրապետը դարձաւ նա։—Տէր, թող Աստուած վարձատրէ քեզ՝ ողորմածասիրութեանդ փոխարէն։

Գալբուսը կախուած մութ ու թաւ յօնքերի տակից հետաքրքրութեամբ նորա վերայ նայեց։

—Որտեղից ես դու,—հարցրեց նա։

—Սամարիայից։

—Եւ դու իրաւացի մտածում ես, որ հրաշք պիտի դուրս տանէիր այդ գերեզմանից։

—Տէր, Աստուածային դաղտնի մտածողութեան մասին գաղափար չունիմ ես, բայց հաւատացած եմ, որ աղջիկս փրկուած է։ Աստուած քեզ հետ, զինուոր... Եւ թող նա քո նիզակը կորովական ու քեզ կորովաձիգ պահէ, սիրտդ կառավարելով ու ընդ միշտ չարից զերծ պահելով քեզ, տէր իմ։

Եւ, բազմաթիւ շնորհակալական գլխակոր շարժմունքներով օժտուած, նորից ու նորից գլուխ տալով, ծերունին հեռացաւ։

Գալբուսը մտածկոտ ակնարկ ձգեց նորա ետևից մինչ այն ժամանակ, երբ վերջնականապէս ծածկուեց նորա նիհարկեկ և փուք կերպարանքը, ապա խորամտութեամբ շարժեց իր գլուխը ու ծիծաղեց, ապա դարձեալ մռայլուեց և՝ վերջապէս՝ ողորմածասիրութեան զգացմունքի տակ ընկճուելուց ու ակամայ նորան հետևելուց ազատուելով, նա խիստ ու արհամարհաբար դէպի խորին տարածութիւնը նայեց, կարծես թէ համոզուել ցանկանալով, թէ՝ արդեօք՝ իր իշխանութեան տակ գտնուած մարդիկ դեռ ես կանգնած են իրենց տեղերի վերայ։

Միջօրեայ տապը ստիպել էր նոցա իրենց վրանների մէջ պահուել, որոնք ուղիղ այրի շուրջն էին կազմակերպուած, հաւասար ու բոլորակ շրջան կազմելով գերեզմանի հանդէպ։ Գալբուսը ևս, նոցա օրինակին հետևելով, մտաւ միմիայն իր համար պատրաստուած վրանը։ Այդ վրանը ուղիղ այն վիմաքարի առջևն էր փռուած, որը խորհրդաւոր գերեզմանի անցքն էր ծածկում. մտայոյզ հարիւրապետը, ուղիղ յատակի վերայ տեղաւորուելով, իր սաղաւարտը հանեց, իր տաք, քրտնաթոր երեսը սրբելու համար ու ակամայ նզովք արձակեց, մտքի մէջ Հրէաստանի աւազուտ ու անբեղմնաւոր գետինը Հռոմի գեղեցկածաղիկ շրջակայքի և բուսականութեամբ ճոխ երկրի հետ համեմատելով, ու հոգու մէջ և իր բոլոր ուժով՝ շուտով դէպի հայրենիք վերադառնալու բուռն ցանկութիւն զգաց։

«Այս յիմարների աշխարհ է,—ինքն իրեն դատում էր նա,—մինչև անգամ աւելի վատ—վախկոտների երկիր մի է սա. տեղիս հրէաները երկիւղ էին կրում Նազովրեցուց, ինչպէս կոչում էին Նորան, մինչ ապրում էր նա, իսկ այժմ՝ երեւում է՝ որ նորա դեռ աւելի ես մեծ չափով են վախենում նորանից, երբ մեռած է նա։ Է՛հ, ինչ արած, գոնէ մի բան կայ, որի վերայ կարելի է ծիծաղել։ Հռովմայեցին, ի հարկէ, կը սպանէ իր թշնամուն, բայց երբ սպանուած է նա,—նորա մարմնին երկրպագութիւն կը տայ և դէպի աստուած-

ների կը ուղղէ նորան, և այդ բոլորը—առանց երկիւղի կամ զայրոյթի»:

Բայց յանկարծ գաղտագողի մերձեցող մէկի քայլերի ձայնը չփոթեց նորան: Նա վեր թռաւ իր տեղից, սուինը բարձրացրեց և վրանի մուտքի դէմ կանգնեց ու պատրաստ արձանացաւ: Նորան մի բարձրահասակ մարդ մօտեցաւ, ծիրանի ծածկոցի մէջ փաթաթուած:

—Այդ մարդը Կայիափան էր:

-Արդեօք քաջարի ես դու հսկողութեանդ մէջ, հարիւրապետ՝ գլխաւորդ Լէգէօնի.—խիստ ձայնով հարցրեց նա:

—Իմ աչալրջութեան մէջ դեռ ոչ մի ժամանակ և ոչ ոք չէ կասկածել,—մեծամտութեամբ պատասխանեց Գայբուսը:

Կայիափան շարժեց ձեռքը, որպէս թէ ներողութիւն խնդրելով:

—Ես չը կամեցայ անպատուել քեզ, քաջարի զինուոր, բայց խարդախ մարդիկ շատ են թափառում այս կողմերը, իսկ ես կը ցանկանայի, որ դու շատ զգոյշ լինես:

Նա բացեց վերարկուն. նորա երեսը աւելի նիհար էր և գունատ, ինչպէս կեղեքիչ տանջանքներից յետոյ անքուն անցկացրած գիշերների հետևանք: Քարայրին աւելի մօտենալով, նա սկսեց ուշադիր բոլոր կնիքները նայել: Նոքա նոյնն էին, ինչպէս թողել էր նա երէկ երեկոյեան—անձեռնմխելի ու չը աւրուած:

—Դու ոչ մի ձայն կամ շշուկ չես լսել.—փսփսաց նա:

Գայբուսը հաստատուն նորա վերայ նայեց:

—Գեթսեմանից,—ասաց նա, տիգով դէպի կափարիչի տակ առնուած վիմափորը ցոյց տալով:—Ոչ,—դեռ ոչ մի ժամանակ մեռած մարդու ձայն լսած չը կամ:

Կայիափան բանի իմն կերպով ժպտաց, բայց՝ այնուամենայնիւ՝ ականջը քարին մօտեցնելով, լսեց:

—Իսկ գիշերը ինչպէս անցաւ: Ո՞չ ոք չը անհանգստացրեց ձեզ:

—Գուցէ թէ միմիայն շները, որոնք լուսնի վերայ էին հաջում, և բոցփետուր բուէճները, որոնք—ըստ սովորութեան—ճչում էին,—արհամարհաբար պատասխանեց Գայբուսը.—այդ թէպէտ և անդուրեկան է, բայց այնքան էլ նողկալի ու գարշելի չէ:

—Ես այդ մասին չը հարցրի,—սրտնեղած նկատեց Կայիափան:—Ես մտածում էի, որ գուցէ կանայք խառնուէին, որոնք շարունակէին լաց լինել և հեծկլալ...

—Կանայք շատ քիչ յաջողութիւն են գտնում, երբ ինձ հետ են կամենում գործ բռնել,—մրմռաց Գայբուսը:—Արդարև, նոքա այստեղ յապաղում էին, բայց ես դուրս վանեցի նոցա: Ես նոցա

հետ անընտելաբար չը վարուեցի. շատ պառն էին լաց լինում այդ անբաղդները ու չափից դուրս խղճալի էին: Մահուան պատկերը միշտ նոցա վերայ զարհուրելի տպաւորութիւն է թողնում ու թախիծ առաջացնում, բացի այդ, միևնոյն ժամանակ և այն Հանգուցեալը, Որի վերայ այնչափ յուսահատ ողբում ու հեծեծում էին նոքա, աննման գեղեցկութիւն ունէր: Բայց ես այն մարդկանցից չեմ, որոնք պիտի աշխատէին մխիթարելու նոցա, ես նոցա խորհուրդ տուեցի իրենց տան մէջ սուգ պահել. կանանց արցունքը ինձ ծայրահեղութեան է հասցնում:

Կայիափան խոր մտածմունքի մէջ մտաւ, ապա դարձեալ դէպի այրը մօտենալով, սկսեց ականջ դնել:

Գալբուսը, նորա շարժմունքներին ուշադիր լինելով, ծիծաղեց:

—Երդւում եմ բոլոր աստուածներով, տէր,—ասաց նա,—շատ հեշտութեամբ կարելի է մտածել, որ հէնց դու ինքդ էլ նոցանից ես, որոնք Նորա սին պարծենկոտութեանն են հաւատում,—որպէս թէ նա յարութիւն պիտի առնէ: Ի՞նչ ես ուշադիր լինում: Ի՞նչ մի լսելու բան ես նկատում դու: Խնդրում եմ, ասա ինձ կարծիքդ: Գերեզմանական առաքումն անչափ հետաքրքիր նորութիւն կը լինէր:

Կայիափան արժանի չը համարեց պատասխան տալ նորան: Նորից իր թիկնոցի մէջ փաթաթուելով, նա հարցրեց.

—Պահնակը երբ է փոխուելու:

—Մի ժամ անցնելուց յետոյ:—Ես և իմ մարդիկը սակաւ մի հանգիստ առնենք. այս տեսակ տաք եղանակին լիովին արժանի է այդ:

—Իսկ երբ կը վերադառնաս դու:

—Երեկոյեան, լուսնի ծագելուց առաջ:

—Լուսինը ծագելիս,—մտածմունքի մէջ կրկնեց Կայիափան.—խօսքերս լաւ մտաբերիր, Գայբուս, ուշադիր եղիր մարդկանցդ վերայ, որ չը քնեն: Այս գիշեր կրկնապատիկ արթուն կաց: Որովհետև այս գիշերը իւր հետ պիտի տանէ և մեզ համակած բոլոր երկիւղը, և երբ վաղուայ արեգակը զարթնէ, Նա՝—Նազովրեցին, նորից, հոծ բազմութեան առջև, հրապարակաւ կը բանուէ թէ խաբեբայութեան և թէ աստուածանենգութեան մէջ: Այն ժամանակ այլևս ոչինչ չի մնայ՝ պահնակին անելիք: Դու շատ լաւ վարձատրուիս պիտի: Եւ այդպէս. անթարթ աչքով հսկիր այս գիշեր ես: Գիշերը օրուայ բոլոր ժամերից երկիւղալի է: Լսո՞ւմ ես դու ինձ:

Գալբուսը գլխով դրական նշան տուաւ:

—Հռովմայեցի զինուորների անվեհերութեան և կատարելու-

թեան մասին ես շատ բան եմ լսել,—շարունակեց Կայիափան՝ կեղծ ժպիտով,—աւելի ես այնպիսիների, որպիսին դու ես պատկերացնում, և որպիսի մարդկանց իրաւունքի տակ հարիւր մարդիկ են գործում։ Արդարացրի այսօր այդ ձայնը և քո կոչման ու հայրենիքիդ պատիւը պահիր. հաւատացած կաց, որ անունդ գովասանքով մինչ իրեն Կեսարին պիտի հասնէ։ Մնաս բարեաւ։

Նա հեռացաւ, բայց տակաւին կանգ առաւ,—լի կասկածանքով,—ամեն մի ձայնի ուշադիր լինելու համար։

—Հաւատացած ես դու, որ ոչ մի ձայն չես լսել.—դարձեալ հարցրեց նա։

Գալբուսը համբերութիւնից դուրս եկաւ։ Նա իր սառնասրտութիւնը կորցրեց։

—Այն մեծ արքայի անունով, որին ծառայում եմ ես, և սոյն սուրինով, որ աներկիւղ կրում եմ ես,—պոռաց նա, ոտքը գետին խփելով,—երդւում եմ քեզ. քահանայ, ոչինչ և ոչինչ չեմ լսել ես։

—Դու տաքարիւն մէկն ես, զինուոր—ասաց Կայիափան՝ հանդարտ ձայնով,—ուշադիր եղիր, որ այդպիսի վրդովմունքը քեզ փորձութեան մէջ չը ձգէ,— և նա դանդաղ քայլերը դէպի փոշոտ ճանապարհը ուղղեց։ Գալբուսը, անթագչելի զզուանքի արտայայտութեամբ, նորա հետքին նայեց ու դէմքի վրայ արհամարհանք պատկերացնելով, իր գլուխը շարժեց։ Զինուորներից մէկը մօտեցաւ նորան։

—Քեզ հետ այդքան երկար խօսողը քահանայապետը չէ՞ր։

—Այո, նա էր,—ամփոփ պատասխանեց նա։—Կամ ես նորա ներկայութիւնից փղձկեցի, կամ թէ նորա սուրբ սանդալների (հողաթափ) փոշին. կոկորդս մտնելով, շորացրել է, բայց ես սարսափելի ծարաւ եմ զգում։ Մի բաժակ գինի բեր ինձ։

Այդ մարդը, նորա պատուէրը կատարելով, գինին, պաշարի հետ դուրս հանեց։

Այս հրէայից թողած բոլոր մնացորդները կը ողողէ բերնիցս,—ասաց Գալբուսը, ախորժաբար գինին խմելով։ — Ինձ այնպէս է թւում, որ մեր թագաւորը միմիայն մի աղքատ երկրի կողոպուտ ունեցաւ, երբ Հրէաստանը ընկճեց։ Մտածիր. եթէ պատմութիւնը չէ խաբում, ուրեմն այդ ազգը յաւէտ յաղթահարուած և գերութեան մէջ է վաճառուած։ Ինձ այնպէս է թւում, որ իմ ամբողջ հարիւր մարդկանց մէջ դու, Վօրսինի, ամենապիտանին ու լաւ հասկացողութիւն ունեցողն ես։ Ասա, միթէ հրէաները միշտ ստրուկ չեն եղած։

—Դրականապէս ես այդ չը պիտի կարողանամ ասելու, բայց

Գալբուս,—յարգանքով պատասխանեց նա,—բայց ես կարծում եմ, որ նոքա ոչ մի ժամանակ հերոսներ չեն ծնել ու դիւցազներ չէին։

—Ոչ և ոչ մի ժամանակ չեն էլ կարող լինել,—ասաց Գալբուսը, իր բաժակը քամելով։—Այն տեսակ խօսքերը, ինչպէս հրէայ և հերոս՝—իրար չեն յարմարում։ Ինչ մի ուրիշ ազգ կը պնդէր այն բանի մէջ, որ պէտք է գերեզմանի վրայ պահապաններ շարուի, ու չորս կողմը մարդիկ աչալուրջ պահպանեն, այն երկիւղից, թէ մեռեալը յարութիւն կառնէ։

Նա ծիծաղեց, իսկ զւարթադէմ Վօրսինեան կրկնեց նորա ծիծաղը։ Ապա նոքա դարձեալ իրենց պատկանեալ տեղերը բռնեցին ու չը շարժուեցին մինչ այն ժամանակ, երբ չը փոխուեցին պահնորդները։ Խորին լռութիւն և խորհրդաւոր խաղաղութիւն էր թագաւորում գերեզմանի շուրջը, որպիսին ոչնչով չէր խանգարւում, միայն թէ զէնքերի շաչիւնից, և այդ այն ժամանակ միայն, երբ զինուորների մի պահնակին զօրքերի միւս հատուածն էր փոխարինում, դեռ խաղաղ ու անկենդան գերեզմանը պահպանելու համար։

VI.

Մինչ այդ ժամանակ Բարաբբան, իր ընկերակից Մելխիօրի հետ, իշխանի ամենալաւ սենեակներից մէկի մէջ նստած, որտեղ իջեանել էր նորա խորհրդաւոր ընկերը, աշխատում էր նորան իր շնորհակալիքը արտայայտելու, այն լայն ու ազատ հիւրասիրութեան համար, որը ցոյց էր տրւում նորան այդտեղ։ Նա լաւ ընթրեց, անուշ ու հանգիստ քուն մտաւ, ընտիր նախաճաշ արաւ, և այդ բոլորը իր այդ նոր ընկերոջ հաշուին, որի հետ այնքան քիչ էր ծանօթ նա,—մինչև անգամ իր վերայի զգեստները իսկ Մելխիօրին է պատկանում, այլ ոչ թէ իրեն համար սեփհականութիւն պիտի կազմէին։

—Եթէ քեզ համար աշխատող մարդ է հարկաւոր, վերցրի ինձ,—անհանգստութեամբ իր սև աչքերը այդ անսպասելի բարերարի արևակէզ երեսին ձգելով ու վստահութեամբ նայելով նորան, ասաց նա։ Իսկ եթէ դու իմ ուժը ոչ մի բանի համար չը կարողանաս գործ դնել, այն ժամանակ այլևս ես ոչինչ ունիմ վճարելու քեզ և ոչ մի ժամանակ կարող չը պիտի լինիմ վարձահատոյց լինել քեզ։ Ազգականներ չունիմ ես, հայրս էլ, մայրս էլ վաղուց են մե-

ել, ասենք, 'այդ աւելի լաւ է նոցա համար, որովհետև ես նոցա
միմիայն վիշտ պատճառել կարող էի։ Առաջ ես իմ ազնուութեամբ
կարող էի պարծենալ. բայց այն ժամանակից, երբ ես Ձայինի մօտ
բանւոր էի—նորա ամենաթանկագին քարերը և ոսկու ձուլուածքն
էի կշռում. այդ ժամանակ ես չէի օգտուում ամենաչնչին համար-
ուած գոհարի փշուր հիւլէով իսկ, մինչ վրայ հասաւ վերջին փոր-
ձութիւնը։ Եթէ դու նորան հարցնելու լինես, հաւատացած եմ, որ
նա ևս նոյնը պիտի ասէ, քանի որ նա էլ աւելի տխրեց քան ես
ինքս, երբ մեղաւորուեցի ես, գոնէ ես այդպէս եմ համոզուած։
Ես գրագիտութեան հետ փոքր ինչ ծանօթ եմ, ուսումնասի-
րել եմ մի քանի փիլիսոփաների, մինչև անգամ տիրում էի պերճա-
խօս ճառասացութեան ձիրքով, բայց այդ բոլորը կորչեց արդէն.
այժմ ձեռքերս թէ արիւնոտ են և թէ պղծուած՝ գողութեամբ, և,
թէպէտ ժողովուրդը արձակեց ինձ բանտից և ազատեց պատժից,
բայց ես ինքս շատ լաւ եմ հասկանում, որ կատարեալ անարժան
եմ ազատութեան։ Բայց դու պատսպարեցիր ինձ, կերակրեցիր, հա-
գուստ շնորհեցիր. բազմաթիւ զարմանալի ու ճարտար բաներ պատ-
մեցիր, և ես շնորհակալութեան զգացմունքից, կամ, աւելի ես ուղիղ
ասած, պարտաւորութիւնից, կը ցանկայի ծառայել քեզ և յետ
վճարել երախտիքիդ գէթ չնչին մասը, եթէ միայն բացատրես դու
ինձ, թէ ինչպէս կարող եմ այդ անել ես։

Մելխիօրը, լուսամուտի մօտ դրուած բազկաթոռի վերայ ըն-
կած, կիսախուփ արտևանունքների տակից հետևում էր նորան, որի,
Մելխիօրի, գեղեցիկ շրթունքների վերայ թեթև ժպիտ էր խաղում,
միևնոյն ժամանակ։

— Ընկերդ իմ՝ Բարաբբա,—ծուլաբար պատասխանեց նա,—
դու ոչինչ պարտ չես ինձ,—դեռ՝ աւելի շատ՝ պարտաւորը ես եմ։
Դու մարդկութեան մի յայտնի տիպն ես կազմում նոյնպէս, ինչպէս
և ես,—որի շնորհիւ ես քեզնից արդէն մեծ օգուտ եմ ստացել, քո
բնաւորութեան զանազան կողմերը ուսումնասիրելով, մինչև անգամ
գուցէ էլ աւելի, քան թէ դու քո փիլիսոփաներին կը ուսումնասի-
րէիր, որոնց երևակայում ես, թէ ճանաչել գիտես։ Մեր մէջ եղած
զանազանութիւնը նկատիր. թէպէտ ինձ այնպէս է թւում, որ մենք
միևնոյն մահացու կաւից ենք. դու չքաւոր ես, դու ոչ աւելի ուշ,
քան թէ երէկ առաւօտեան թողեցիր բանտը—մերկ և վրդովմունքի
տակ,—իսկ ես հարուստ եմ՝ և այն ոչ մարդկանց պարգևների շնոր-
հիւ, որոնց արհամարհում եմ ես, ոչ մեռածների ժառանգութեամբ,
—այլ սեփհական խելքիս աշխատանքով, հարստութիւն գտնող միակ

ազնիւ միջոցով։ Ես ոչ մի ժամանակ դէպի բանտ տանող ճանապար-
հը չեմ գտել, քանի որ ջատագով չեմ այն ընթացքին, որը այդտեղ
է առաջնորդում։—Այդ ուղին կեղտի մէջ թաղուած է, իսկ ես մաքրա-
սէր եմ, ահա դորանից փախուստ տալու պատճառը։ Դու կենդանական
յատկութեան տէր մարդ ես և չը գիտես, որ նիւթն է պարտական
բանականութեան. դու կոպիտ ցանկութեան ետևից ընկած, քո պա-
տիւը մի կնոջ գիջեցիր,—ես խոհական մարդ եմ, իմ պատիւս սեփ-
հական ինձ համար եմ պահպանում, պաշտպանում եմ դորան և այն
մեծ օրէնքների կատարման համար, որոնք գոյութիւն ունեն։ Բայց՝
այնուամենայնիւ՝ դու աւելի իսկական մարդ ես, քան թէ ես։ Դու
բիրտ մարդկութեան տիպարն ես, որի դէմ ընդմիշտ կռիւ է մղում
Աստուածային Հոգին…—Նա կանգ առաւ, գլուխը բարձրացրեց և
դարձեալ ժպտաց։

— Ի՞նչ պիտի անես դու ինձ համար, Բարաբբա.—ուրախու-
թեամբ շարունակեց նա։—Ջուր կը կրէյիր, կամ գետինը կը վարէյիր,
պիտի չորերս մաքրէյիր և՝ ստրուկի յատուկ՝ ամեն տեսակ ծառայու-
թիւններ մատուցանէյիր։ Թո՛ղ տուր։ Քո ապագան փչացնելու ցան-
կութիւն չունեմ ես։ Հետևիր իմ խորհրդին. Հռօմ գնա, քսակդ ես
ոսկով կը լցնեմ, այնտեղ լումայափոխ եղիր, Կեսարին իսկ պարտք
տուր։ Բաց և արձակ ահագին ծաւալով աւելացող տոկոսների տակ
դիր գումարդ և այդ բոլորը Կեսարի կամայականութեան համար.
պատերազմական զինուորների գեղեցկաշէն շինութիւնների և սիրու-
հիների։ Հարստացիր և ազնուութեամբ ապրի,—ոչ ոք չը պիտի հար-
ցնէ քեզ, թէ դու գող էիր կամ մարդասպան։ Ոչ, քանի որ Կեսարն
իսկ սանդալներդ պիտի համբուրէ ու քեզ վերայ ամենափառաւոր
քղամիդը ձգէ. քեզ հարկաւոր է միմիայն նորա անունը բարձրացնել
ու՝ միևնոյն ժամանակ՝ միմիայն հարկաւոր է և նորա անունը քո գըր-
քերի մէջ պահպանել միշտ և ոչ մի ժամանակ բաց չը թողնել։ «Ave
Caesar Imperator» *)—ահա յաւիտենական հռոմէական բացական-
չութիւնը, բայց Կեսարի շշնջոցը քո ականջի մէջ աւելի նշանակիչ
կը լինէ։ Դիմաւորում եմ քեզ, Բարաբբա, թագաւորդ Հրէաստանի։
Հարուստ Բարաբբա, ինձ դրամ պարտ տուող, ազնուատոհմ Բարաբ-
բա, որ բարեացակամ մուրհակներ ես արտագրում, կարող Բարաբբա,
ձեռքերիդ մէջ թէ գահը և թէ ազգութիւնը բռնող պարտամուրհակ-
ներ հանող, և սոսկ միայն դոցա շնորհիւ ամեն ինչ գործող։

---

*) Ողջոյն քեզ,—ինքնակալ կայսեր։

Հ. Թ։

Նա ծիծաղեց։ Բարաբբան չփոթուած և անհասկացողութեամբ նորա վերայ նայեց։

— Կամ թէ,—շարունակեց Մելխիօրը,—(կարող է այդ ես պատահել), որ դու զայրացել Պետրոսին մօտենալը ես գերադասում ու Նազովրեցու միւս աշակերտների հետ ընկերանալ կը տքնես։

— Միայն թէ ոչ Պետրոսի հետ,—ոչ,— բացականչեց Բարաբբան շտապով,—ես նորան չեմ կարող սիրել, նա իւր հաւատի մէջ դեռ ես համոզմունք չունէ։ Իսկ Նորա Գալիլէացի միւս աշակերտների մասին ոչինչ չեմ լսել և ոչ մի տեղեկութիւն չունեմ դեռ ես, բացի այն, որ նոքա բոլորն էլ թողել են Նորան։ Ես Նազովրեցուն կը հետևէի մինչ, մինչ ամենամռայլ դժոխքի խորքը, բայց նորա հետևողները վախկոտ մահկանացուներ են, մինչդեռ Նա...

— Աստուած էր, մտածում ես դու.—հարցրեց Մելխիօրը, Բարաբբայի վերայ խիստ ու հարցական ակնարկ նետելով։

Բարաբբան տարաւ այդ ակնարկը, ապա գլուխը ցած ձգեց ու աչքերը խոնարհեց և մի խորին հառաչանք արձակեց։

— Ես չը գիտեմ թէ ինչ մտածեմ անգամ,—վերջապէս ասաց նա։—Երբ առաջին անգամ ես տեսայ Նորան, Նա իրաւացի Աստուած էր երևում. ապա անընական փառքը անյայտացաւ, մնաց միմիայն մի խեղճ, հանդարտ տանջուող մարդ, և այդ այնտեղ, որտեղ ես, մաշուած քաղցից և հիւանդոտ երևակայութեամբ, մտածում էի թէ մի հրեշտակ է կանգնել։ Յետոյ, երբ մեռնում էր Նա, ես ամբողջ հոգւովս դողում էի, որովհետև մինչ ամենավերջին շունչը դեռ յոյս ունէի (թէպէտ և գիտէի, որ յոյս չը կայ),—որ Աստուած չէ կարող մեռնե՜լ։ Իսկ այժմ, եթէ կամենում ես գիտենալ, ես մտածում եմ, որ Նա մի տանջուած Մարդ է, բայց անհամեմատելի գեղեցկութեան տէր ու ամուր բնաւորութեան վերայ իշխող, և թէ Նա արժանի է, որ հետևէյին Նորան, սիրէյին և ծառայէյին... բայց... եթէ որ Նա իրաւացի Աստուած էր, Նա չէր կարող մեռնել։

Մելխիօրը ամբողջովին դէպի առաջ կռացաւ, հետաքրքրութեամբ նորան հետևելով։

— Իսկ դու գիտես, հիանալիդ իմ, Բարաբբա, թէ ինչ է մահը.—հարցրեց նա։—Այն փիլիսոփաների մօտ, որոնց ուսումնասիրել ես դու, արդեօ՛ք չը գտար դու, այդ հարցի վերաբերութեամբ, և ոչ մի բացատրութիւն։

— Բոլորն էլ գիտեն, թէ ինչ է մահը,—պատասխանեց Բարաբբան՝ տխրութեամբ.—շնչառութիւնը կտրւում է, աչքերը կուրանում են—խաւար, լռութիւն, և վերջ, վախճան ամեն ինչի...

— Ո՛չ,—ոչ թէ վերջ կամ վախճան,—այլ սկիզբն ու սկսուածք,—ասաց Մելխիօրը, վեր կենալով և դէպի նա մօտենալով։ Նորա աչքերի մէջ մի տեսակ անսովոր զմայլմունքի կայծ վառւեց։—Շնչառութեան խզումն, աչքերի կուրութիւնը—դոքա ծննդեան աւետաւորներն են, այլ ոչ թէ մահուան։ Ինչպէս նորածին մանուկը ողբնում է շնչել և չէ կարողանում ցերեկուայ լոյսի կատարեալ փայլը միանգամից տանել, նոյնպէս և նորածին հոգին, դուրս կորզուելով մահացու փաթեթից և իրեն ճնշած մարմնական պատեանից, նախկին յաւիտենական կենսական ուժը դժուարութեամբ է շնչում իւր մէջ։ Խաւար և լռութիւն, ասո՞ւմ ես դու։ Այդպէ՞ս չէ։ Ճառագայթաւորումն և հմայական նուագածութիւն, հրեշտակային ձայների սքանչելի ներդաշնակութիւն, անվերջ օդային տաւիղների (арфа) գերբնական մեղեդինե՜ր։ Եւ այդ ձայները, հէնց նոր երկիրը ձգած հոգուն, հարցնում են.—ինչ ես բերում դու հետդ։ Ի՞նչ մի առաքումն ունիս դու։—Երջանկութեան, իմաստութեան կամ գեղեցկութեան գէթ մի չնչին մասնիկ աւելացրի՞ր արդեօք վշտալից աշխարհիս վերայ։ Եւ այդ բոլոր ձայների միջից մի անմահ չքնաղ ձայն կը որոտայ։—Հոգի մարդոյ, ինչ ես գործել դու։ Եւ այդ մեծ հարցին պատասխան պիտի տրուի,—իսկ խաբէբայութեան շնորհիւ ոչ ոք չը պիտի կարողանայ ազատուել։

Բարաբբան երկիւղածութեամբ, և անհաւատալի խոր կերպով, նորա վերայ նայեց։

— Այդ Եգիպտոսի հաւատքն է.—հարցրեց նա։

Մելխիօրը, մի տեսակ արհամարհութեամբ, նորա վերայ նայեց։

— Եգիպտոսի հաւատքը,—կրկնեց նա։—Ո՛չ, դա հաւատք չէ—դա մի գիտութիւն է։ Գիտութիւն—հաւատով գտնուած։ Այդ Եգիպտոսից էլ չէ, և ոչ մի ուրիշ կողմից. դա ճշմարտութիւնն է, և ինչպէս ճշմարտութիւն—համաշխարհային արդարութիւն է, որի հաստատութեան համար Նազովրեցին իսկ ծնուած էր։ Աշխարհը պատրաստ չէ ճշմարտութեան համար. բայց և ինչպէս կարող է նա պատրաստ լինել, երբ նա ինքնին համաձայն է խաբեբայութեան վերայ հիմնելու իւր ամբողջ կազմակերպութիւնը և սկզբմունքը։

Նա դադար տուեց, իւր ոչ վաղուայ վրդովմունքն ընկճել կարողանալով, ապա դարձեալ խօսել սկսեց—այս անգամ—խաղաղ և հեզնական ձայնով.

— Պատուելի Բարաբբաս, դու, ինչպէս և համայն աշխարհս, դեռ պատրաստուած չես ամենատարրական ու սկզբնական գիտութեան հետ, անգամ չը նայելով և նորան, որ դեռ փիլիսոփաներ ես

ուսումնասիրած կաս։ Այնպիսի հասարակ փաստեր, ինչպէս՝ օրինակ՝ այն, որ միլիօն ու բիւր բիւրեակ յաւիտենական աշխարհներ, միլիօն ու միլիօն կերպեր զանազանահաւաք կեանքեր գոյութիւն ունեն,— դու չափից դուրս զարմանք պիտի ցոյց տայիր ու ապշութեան ՞տակ՝ տարակուսէյիր։ Դու կենսական նիւթի մի շաղախ ես, հոգևոր կրակով չը մաքրուած։ Եթէ ես ասէի քեզ, որ Նազովրեցին մահացել է միմիայն Նորա համար, որ հաստատած լինէ կեանքից զրկող մահու անկարութիւնը, քո բարբարոսական խելքը զարհուրելի չափով բռնաւորուած կը լինէր։ Դու դեռ մեր մոլորակի գոյութեան և Նորա օրէնքների գաղտնիքներին չես հասել, դու կիսագազան ես, կիսամարդ, թէպէտ և այժմ դու աւելի կատաղի վագրի ես նմանում, որը զրկուած է իւր էգից, որովհետև այլ ես դու չը պիտի կարողանաս Յուդիթին քեզ կնութեան վերցնել։

Կատաղի շարժմունքով Բարաբբան կտրեց Նորա խօսքը։

— Այժմ ես չէի ամուսնանալ Նորա վերայ։

— Ոչ։ Ուրեմն դու աւելի շուտ Կայիափային կը սպանէիր։

Բարաբբան դողաց։ Նա կիտեց իւր մուխ յօնքերը ու, ամուր սեղմելով շրթունքները, շառագունեց. Նորա աչքերը՝ համարեա թէ՝ ցած թողած յօնքերի տակ կորչեցին։

— Իմ ձեռքերի վերայ արդէն արիւն կայ,—քրթմնջաց նա։— Այն մարդը, որին սպանեցի ես՝—Գաբրիասը՝ անմեղ էր... Ո՞հ, Աստուած, անմեղ՝ ինչպէս աղաւնի, այն զզուելի քահանայի հետ համեմատած, որը իւր չարախենթ ու ռւփաւոր դիտաւորութիւնները խորամանկութեամբ ու ճարպիկութեամբ է առաջ տանում։ Այնուամենայնիւ, այն ժամանակից, երբ ես Նազովրեցուն տեսայ...

— Նազովրեցին քեզ վերայ ինչ մի ազդեցութիւն պիտի ունենար.—հանդարտութեամբ Նորա խօսքը կտրեց Մելխիօրը։—Տանջուած մի մարդ, ինչ դու կոչում ես Նորան։ Դու կարող ես միմիայն խղճալ Նորա վերայ, ինչպէս կը վարուէիր և ուրիշ շատերի վերաբերութեամբ, իսկ յետոյ և մոռանալ։

Բարաբբան իւր աչքերը բարձրացրեց։

— Ես չեմ կարող մարդու զրկել իւրեն կեանքից,—ասաց նա դողդոջ ձայնով,—այն ժամանակից սկսեալ, երբ Նորա դէմքը տեսայ ես։

Մելխիօրը լռեց։ Քիչ ժամանակից յետոյ, Բարաբբան զարմանալ խօսեց և արդէն աւելի հանդարտ ձայնով.

— Եթէ թոյլ տաս դու ինձ, ես կը գնամ իմանալու, թէ ինչ է պատահել ծերունի Իսկարիօտի և նորա աղջկայ հետ, քանզի թէ-

պէտ և ես չեմ կարող ու չեմ կամենում Նորա աղջկայ հետ ամուսնանալ,—քանի որ իմ ծանր յանցանքներս, ասենք, նոյնպէս և Յուդիթինը ես, մեր մէջ յաւիտենական պատնէշ են կանգնեցրել,—բայց՝ այնուամենայնիւ՝ ես անսահման սիրում եմ նորան։ Ես այսօր ուշ քընեցի, և ոչինչ դեռ չեմ լսել։ Գնամ և իմանամ՝ թէ նա ինչպէս է կառավարուում։ Ա՞խ, ինչպէս կը ցանկանայի ես մեռած Յուդայի դէմքը մոռանալու։

Նա դողաց և՝ լի այլայլմունքով՝ սկսեց սենեակի մէջ անց ու դարձ անել։

— Դա մի ուշադրութեան արժանի դէմք էր,—մտածկոտ ասաց Մելխիօրը.—ծառերի խորհրդաւոր ստուերով շրջապատուած,—նա ամբողջ աշխարհիս համար մի տեսակ աղոտ նախազուշակութեան տեղ էր ծառայում։ Այնուամենայնիւ, չը նայելով երկիւղի սառուցեալ կաղարտայայտութեան, որ պատկերացնում էր նորա կարկամած կազմուածքը, նորա վերայ միմիայն յուսահատութիւնը չէր անդրադառնում։ Նորա բաց մնացած աչքերի մէջ խղճի խայթ և զղջման արտայայտութիւն էր պատկերանում, իսկ անկեղծ դարձի համար Աստուծոյ մօտ սոյն պատասխանը կայ միմիայն. ողորմութիւն և ներողութիւն։

— Դու իրաւացի մտածում ես, որ Նորա յանցանքը կը ներուէ,—սաստկապէս բացականչեց Բարաբբան։

— Միմիայն ոչ աշխարհիս միջոցով, որը Նորան այդ գործքի մէջ ձգեց,—դանդաղութեամբ պատասխանեց Մելխիօրը։—Աշխարհը, որը հետամուտ է լինում մարդկանց և Նոցա մինչ յուսահատութեան է հասցնում, ապագայում նա ոչ մի կարեկցութիւն չէ ցոյց տալիս։ Բայց Աստուածային սէրը չի տատանուիլ և մինչև անգամ Յուդայի դողդոջ հոգին իսկ կարող է ապաստանարան գտնել այդ անհուն սիրոյ մէջ։

Նորա ձայնը փաղաքշանքով էր հնչում և՝ միևնոյն ժամանակ՝ հեզաբար, Բարաբբայի աչքերը արցունքով լցուեցին։

— Քո խօսքերը մխիթարում են ինձ,—ասաց նա՝ հանդարտ ձայնով ու իւր վրդովմունքից ամաչելով,—թէպէտ և ասել էին ինձ, որ Աստուած, ամեն բանից առաջ, դեռ նախ վրիժու Աստուած է։ Բայց Յուդան այնքան երիտասարդ էր... իսկ Յուդիթը...—Նա կանգ առաւ և շնչոցով աւելացրեց.—ես մոռացայ, Յուդայի արիւնը Յուդիթի հպուելուց երևաց, այդ սարսափելի է, սարսափելի և քստմնեցուցիչ,—արեան բիծը Նորա սպիտակ մատերի վերայ։

Մելխիօրը ոչինչ չը պատասխանեց, իսկ Բարաբբան դէպի մուտքը շարժուեց։

— Ես պարզ օդ շնչելու կարիք եմ զգում,—զգացուած և աւելի նկատելի ձայնով ասաց նա,—տան մէջ անտանելի տաքութի՜ւն է տիրում։ Ես կը հարցնեմ ու կիմանամ՝ թէ ուտեղ են Նազովրեցուն թաղել և այնտեղ կը գնամ։

— Ինչո՞ւ,—հարցրեց Մելխիօրը։—Երբ դու Նորան չես հաւատում, ուրեմն էլ ինչու համար գնալ այնտեղ։

— Չը գիտեմ,—և Բարաբբան դանդաղութեամբ գլուխը շարժեց։—Մի ինչ որ բան ինձ դէպի այնտեղ է ձգում, ես ինքս էլ չը գիտեմ թէ ինչից է այդ. ես միշտ Նորա վերայ եմ մտածում։ Եթէ ես Նորան՝ ինչպէս Աստծու չեմ հաւատում, այդ միմիայն Նորա համար է, որ այն բոլորը, ինչ ես լսել եմ Նորա մասին,—չափից դուրս անբնական է։ Մինչև անգամ քո պատմածները ես խառնում են ինձ. Նորա ծնունդը, մինչդեռ Նորա մայր Մարիամը կոյս մնաց... ինչպէս կարող եմ ես դորան հաւատալ։ Այդ անխելքութիւն է, իմ հոգին չէ ընդունում այն, ինչ բանականութիւնս չէ կարող ըմբռնել ու համոզել ինձ։

— Միթէ չը ասացի քեզ, թէ ինչ ես դու,—ասաց Մելխիօրը։—Դու ոչ հոգևորապէս ստեղծուած մարդու տիպ ես կազմում և դորա համար էլ, միմիայն կիսով չափ կրթութիւն ես ստացել։ Եթէ դու ստում ես այն բոլորը, ինչ որ չես հասկանում, ուրեմն պարտաւոր ես դու թօթափել տիեզերքի ամբողջ ահագին գործողութիւնը։ «Ո՞ւր էիր՝ հարցրեց Աստուած Յոբին՝—մինչ ես հիմունս արկանէի երկրի։ Պատմեա ինձ. եթէ խելամուտ իցես հանճարոյ։ Ո՞վ եդ զչափ դորա, թէ գիտիցես. կամ ո՞վ էարկ ի վերայ դորա զլար։ Զե՞ր վերայ հաստատեցան աղխք դորա. ո՞վ է՝ որ էարկ զվէմն անկեան ի դմա։ Յորժամ եղեն աստեղք ծերք՝ կամ հրեշտակք ստեղաց օրհնեցին զիս մեծաձայն... Փակեցի զծով դրամբք. յորժամ ծնաւ յորովայնէ մօր իւրոյ ելանել։ Եդի նմա զմեգ 'ի հանդերձ. և զմառախուղ' նմա 'ի խանձարուրս։ Եդի նմա սահմանս՝ եդեալ փականս, և դրունս։ Ասացի՝ ցայդ վայր եկեսցես՝ և այլ մի անցանիցես. այլ այդրէն 'ի քեզ խորտակեսցին ալիք քո։ Եթէ առքե՞ կարգեցի զլոյսն առաւօտուն. արուսեակն եսես զկարգ իւր...» *)։ Միթէ դու հրամայեցիր,

*) Գիրք Յոբայ, գլ. ԼԸ։ Ռուսերէն թարգմանութեան մէջ ամփոփ իմն կերպով են յիշատակուած այդ խօսքերը։ Կը ներուի մեզ, որ մենք բնագրից դուրս հկանք այն նպատակով միայն, որ ընթերցողն աւելի լաւ ըմբռնէ խօսքերի իմաստը։
Հայ թարգմանիչ։

որ առաւօտ լինէ՝ այն ժամանակ. երբ ծնուեցիր ու աշխարհ եկար։ Աւա՜ղ, խորաքննիչ, խեղճ Բարաբբա, եթէ դու կը սպասես, մինչ Աստուածային Կամքի գաղտնիքները իմանաս, այն ժամանակ քեզ մընում է անվերջանալի զարմանքի ամբողջ յաւիտենականութեան միջից անցնելու, անյետաձգելի ամեն ինչին հասնել, իսկոյն բոլորը ըմբռնել և՝ այնուամենայնիւ՝ վերջ 'ի վերջոյ—գաղտնախորհուրդ հանելուկը չը գտնել։ Կարո՞ղ ես հասկանալ դու, թէ ինչպէս է լոյսը գետնի խորքը թափանցում ու չոր հատիկին պտուղ տալու օգնում, կամ ինչպէս մարմնանալով ջրի կաթիլի կամ փոշու հիւլէի, այդ հասարակ իրերը ադամանդների է փոխում, որոնք թագուհիներին են արժան։ Դու այդ սովորական ու հասարակ երևոյթները, որոնք այնքան են բնութեան մէջ, չես կարող հասկանալ, իսկ բնութիւնը միմիայն արտաքին անդրադարձումն է Աստուծոյ մտքի, ուրեմն ինչպէս պիտի կարող լինես Նորա Հոգու ներքին գործքը և նպատակը հասկանալու։ Եթէ ցանկալի է Նորան, Նա իշխանութիւն ունէ աշխարհ ստեղծելու, կամ իւր Աստուածութեան կենդանարար ուժը փչելու անարատ Կոյսին Նորա համար, որպէս զի Նա Մարդու ծնունդ պարգևէ։ Դու հրաշքների մասին ես խօսում։ Չէ որ դու ինքդ իսկ հրաշք ես, դու հրաշքով ես ապրում, համայն աշխարհս էլ հրաշք է և՝ քեզնից անկախ՝ Նա ես գոյութիւն ունէ։ Գնա՛ քո ճանապարհով, մարդ, փնտռիր ճշմարտութիւնը սեփհական միջոցներովդ, և եթէ չես հասնիլ դու դորան, ճշմարտութեանը մի մեղադրիր, որը գոյութիւն ունէ, այլ մեղադրիր քո վատթար բանականութիւնը ու խելքը, որոնք չեն կարողանում հասնել Նորան։

Բարաբբան անշարժ կանգնած էր, հիացած և ընկճուած իւր նոր ընկերոջ տեսութեան (թէօրիա) լայն ու խորին իմաստութեամբ։

— Ինչպէս կը ցանկանայի մի այնպիսի Աստուծոյ հաւատալ, որպիսին դու ես նկարագրում,—հանդարտութեամբ ասաց նա.—այն Աստծուն, Որը մեզ իրաւացի սիրում է և Որին մենք կարող էինք սիրել։

Նա կանգ առաւ և հառաչեց, ապա յանկարծակի զգացմունքի ուժգնութեան հնազանդուելով, Մելխիօրին մօտեցաւ, վերցրեց նորա ձեռքը և համբուրեց։

— Ես չը գիտեմ ո՛վ ես դու,—ասաց նա,—բայց քո խօսքերը համարձակ-են ու վստահութեամբ առնուած, իսկ դէպի ինձ դու աւելի քան բարեհոգի ես։ Դու պարտաւոր ես ինձ քո ծառայի տեղ հաշուելու, որովհետև, ինչպէս ասացի ես, ուրիշ միջոցներ չունիմ պարտաւճար լինելու քեզ։ Թոյլ տուր ինձ ծառայել քեզ, ծայրայեղ

դէպքում, մինչ ես չեմ գտել մի որ և է ուրիշ պարապմունք: Դու համաձայն ես, այնպէս չէ՞:

Մելխիօրը ժպտաց:

— Ինչպէս կամենում ես, այնպէս արա, Բարաբբա, թէպէտ ես և ոչ մի ծառայութեան կարիք չունիմ: Ես ինքս եմ ծառայում ինձ՝ ահա քանի տարի է և աւելի մաքրիմ ու անձնուէր սիրելու չը պատահեցի ու չը գտայ ինձ համար, քան ինքս—ինձ: Այնուամենայնիւ, քո քնքշութեանդ գոհութիւն տալու համար, ես չեմ մերժում քո ծառայութիւնը և օգնութիւնը:

Թեթևութիւնը, ուրախութեան հետ սահմանափակուած, Բարաբբայի մութ դէմքի վերայ արտայայտուելով, նորա՝ 'ի բնէ գեղեցիկ՝ գծագրութեան մի առանձին խին անուշութիւն շնորհեց:

— Շնորհակալ եմ,—պարզ կերպով ասաց նա:—Արդեօ՞ք քեզ համար մի որ և է բանի պէտք գալ կարող եմ ես այս քաղաքի մէջ:

— Դու կարող ես ինձ համար նոր լուրեր բերել,—պատասխանեց Մելխիօրը, ուշադիր նորա վերայ նայելով.— կարող է պատահել և անշուշտ մի ինչ որէ յայժ հարկաւոր բան կը լինէ ինձ հաղորդելիք: Բացի այդ, եթէ դու Նազովրեցու գերեզմանը գնալու լինես, զգոյշ եղիր. Նորան շատ խիստ են պահպանում: Պահնակների հետ խռովութիւն մի ձգիր, որ քեզ կարող չը լինեն մեղադրելու քո որպէս թէ մարմինը գողանալու ցանկութեան մէջ: Իսրայէլի քահանաները դեռ ես դողում են, որովհետև Նազովրեցին երդուել է, որ երրորդ օրը, այսինքն վաղը,—յիշի՛ր—վաղը՝ նա յարութիւն կառնէ:

Բարաբբան կանգ առաւ ուղիղ շեմքի վերայ և բացականչեց.

— Անկարելի է, այդ Պետրոսի խեւուկ ենթադրութեան սուտ կրկնումն է: Յարութիւն առնե՛լ: Գերեզմանի միջից կենդանի կանգնե՛լ:—Անկարելի բան է:

Մելխիօրը նորա վերայ համարեա թէ դէպ առաջ կռացող մի ակնարկ ձգեց, որը ցոյց էր տալիս, թէ իւր խօսքերը անվիճելի ճշմարտութիւն էին:

— Եթէ մահը—չքութիւն է, այն ժամանակ դա անկարելի է,—պատասխանեց նա:—Բայց եթէ մահը—կեանք է, այն ժամանակ այդ լիովին կարելի է:

VII.

Այդ տարօրինակ խօսքերից յետոյ, որոնք դեռ հնչում էին նորա ականջի մէջ, Բարաբբան դուրս եկաւ և, առանց իւր անելիքի մասին իրեն հաշիւ տալու, սկսեց փողոցների մէջ թափառել, աշխատելով մի կերպ իւր մտատանջութիւնից ազատուել և 'ի մի ամփոփել խառնիխուռն ըմբռնուած գաղափարները, որպէս զի մի կերպ մխիթարուել կարողանայ գէթ շրջապատող առարկաների տպաւորութեամբ: Բայց այդ շատ դժուար էր: Նորա գլխի մէջ կարծես մի տեսակ փոթորիկ էր անցնում և նա իրեն հաշիւ տալ չէր կարողանում բոլոր այն անցքերի մէջ, որոնք պատահեցին նորա հետ մի որև է քսան և չորս ժամուայ ընթացքում: Նորան այնպէս էր թուում, որ ամբողջ յաւիտենականութիւն է անցել երէկ առաւօտեան պահուց, երբ ազատել էին նորան բանտից—և Նազովրեցուն մահուան պատժի ենթարկել: Նա բանտից դուրս եկաւ, անխելքութեամբ ուրախանալով ենթադրած ազատութեան վերայ, Յուդիթ Իսկարիօտացու անկեղծութեանը հաւատալով և սիրելով նորան, ինչպէս մի այնպիսի մարդ, որը կեանքի մէջ միմիայն մի անգամ կարող է սիրել: Այժմ նա գիտէր Յուդիթի արատաւորութիւնը, խաբեբայութիւնը և դեղխութիւնը, և թէպէտ նա դեռ ես սիրում էր Յուդիթին, բայց և լիովին հասկանում էր, որ միմիայն մարմնապէս է սիրում նորան, նորա աննման մարմնի դիւթիչ գեղեցկութեան համար: Այդ սիրուց, աւելի շատ՝ այդ մոլեգին հեշտութիւնից նա աղօտ կերպով ամաչում էր: Նա՝ գողը և մարդասպանը, մի ինչ որ բանից ամաչում ու քաշւում: Ո՞ր ժամանակից: Այս, միմիայն... միմիայն այն ժամանակից, երբ նա Նազովրեցուն տեսաւ: Այդ տարօրինակ մի բան էր. բոլոր իւր անսանձ, բայց հզօր կամքը լարելով, նա աշխատում էր հասկանալու, ինչ տեսակ կախարդիչ ուժի տէր էր այն Նազարէթից եկած մարդը, որի մերձաւորութիւնը, չը նայելով, որ Նորան արդէն խաչել էին և նա մեռել էր, այնուամենայնիւ զգալի էր Բարաբբային, ու այդ մերձաւորութիւնը խորհրդաւոր էր ու գաղտնածածուկ միտք ունէր, որից իւրաքանչիւր յանցանք անասելի զզուելի ու անտանելի էր դառնում:

Անհանգստութեան մէջ հառաչելով և ինքն իւր վերայ բարկանալով, որ չը յաջողեց իրեն իւր զգացմունքները ցրուել, նա, այնուամենայնիւ, աննպատակ թափառում էր փողոցների մէջ. ապա յանկարծ իւր նախկին մտադրութիւնը յիշելով, նա դէպի Իսկարիօտի տունը

դիմեց։ Այնտեղ նա առաջին անգամ լսեց Յուդիթի ծածուկ տնից հեռանալու և անյայտանալու լուրը։ Տրոփող սրտով լսեց նա այն մարդու պատմութիւնը, որի ասելով 'իզուր տեղը փնտռել էին Յուդիթին ամբողջ քաղաքի մէջ, թէ ինչպէս ծերունի Իսկարիոտը այժմ դէպի հռովմայեցի կառավարիչ Պիղատոսն է դիմել, որ նա հարկաւոր եղած միջոցներ ձեռք առնէ՝ փախած աղջկան գտնելու համար։ Երկչոտ շշնջոցով աւելացրեց ծառան, որ Յուդայի գլխակը բացուած են գտել, որի վերայ սողուն վարդերի մի ոստ է եղել,—այն պարանը, որ նորա վզի չորս կողմն էր փաթաթել, անյայտացել է։ Նա, երևի, թոկը իւր հետ է վերցրել,—աւելացրեց նա։—Նա վշտից խեղդուել է։ Բայց թէ ուր է գնացել նա, մենք չը գիտենք,—մենք նորան չը կարողացանք գտնել։

— Ես կը գտնեմ նորան,—ասաց Բարաբբան։—Նորա հօրը յայտնիր, որ ես չեմ հանգստանալ, մինչ նորան չը գտնեմ։ Նորան ես ամեն տեղ պիտի փնտռեմ և կենդանի կամ մեռած—Յուդիթին ես ինքս իսկ տուն պիտի հասցնեմ։

Նա մեռած բառը արտասանելիս դողաց, իսկ ծառան, որի հետ խօսում էր նա, նորա մաշուած դէմքի վայրենաբարոյ արտայայտութիւնից զարմացած մնաց։ Նա՝ տխրութեամբ լի՝ պատասխան տուեց, որ ծանր և սուղ ժամանակ է և որ տան ժառանգը—ինքնասպան Յուդան՝ վաղը պիտի թաղուէ։

— Վա՜ղը,—անխելքներին յատուկ ակնարկ ձգելով, կրկնեց Բարաբբան, ինքն իսկ իւր խօսելիքը չը հասկանալով։—Վաղը, ասում են, Նազովրեցին յարութիւն պիտի առնէ։ Ինչու՞ թաղել Յուդային։ Եթէ մի մեռեալ կարող է յարութիւն առնել, ինչու համար և միւսը չէ։

Վախեցած ծառան շտապով դուռը ծածկեց, միևնոյն ժամանակ նորա մտքից անցաւ, որ բացի հոնից, բոլորն էլ խելքից դուրս էին եկած,—իսկ Բարաբբան էլ աւելի։ Բայց Բարաբբան, բոլորովին չփոթուելով, գնաց արեգակ ընկած փողոցով, սայթաքելով, իւր առջևը ոչինչ չը տեսնելով, բացի Յուդիթի երեսից, ինչպէս էր նա երէկ երեկոյեան, երբ իւր տենդային հրափայլ աչքերը բարձրացնելով, ժպտաց մռայլ աշակերտ Պետրոսի երեսին իւր հրավառ փարթամ մազերի ոսկեհուռ ծածկոյթի տակից։

— Փախչել է, փախչել է, բայց ու՞ր,—բրթմնջաց նա։ Կայիափայի մօտ։ Նա գուցէ Կայիափայի մօտ է գնացել։

Նա կանգ առաւ։ Քահանայապետի ապարանքը մօտ էր. նա արդէն պարզ կարող էր ջոկել թէ բարձր արմաւենիները և թէ խառ-

տերև թփերը այն այգու, որի մէջ ոչ ոք, բացի քահանայապետից, չէր մտնում։ Մինչև անգամ տան դրսի դուռը իսկ, առանց որ և է կարևոր գործի, կրօնական կամ քահանայական յատկութեամբ, անկարելի է մտնել։ Բացի այդ, միմիայն նորա անունը՝ Բարաբբա,—ընդունելութեան որ և է յոյս ունենալը արգելում էր նորան։ Նա ճանապարհին կից նստարանի վերայ նստեց և մտածմունքի մէջ ընկաւ։ Ոչ ոք չէր անցնում. շաբաթուայ խաղաղութիւնը տիրում էր ամբողջ քաղաքի վերայ։ Գլուխը խաչած ձեռքերի վերայ դնելով, նա Կայիափայի մօտ մտնելու միջոցներ էր մտածում։ 'Ի նանիր։ Ամրոցը աւելի մատչելի կարող էր լինել, քան թէ քահանայապետի բնակարանը, և ոչ ոքի մօտ մուտք գործելը այնքան դժուար չէր, որքան հէնց նոյն քահանայապետի մօտ։

— Բայց՝ այնուամենայնիւ՝ գիտէ նա։—Բարաբբան այդ խօսքերը բարձր ձայնով արտասանեց։—Նա Յուդիթի սիրեկանն է։ Եւ թող նզովեա՛լ լինէ նա։ Նա գիտէ թէ ուր է փախչել Յուդիթը։ Կարող է պատահել, որ հէնց ներկայումս էլ Յուդիթը նորա հետ է։

Եւ նա գլուխը բարձրացրեց։

Նորա դէմ մի կին էր կանգնած և ուշադիր հէնց նորա վերայ էր նայում։ Բարաբբան նոյն ժամուայ մէջ ճանաչեց նորան նորա խարտեաշ մազերից, տխուր դէմքից և կապոյտ կտաւեայ զգեստից, հասարակ գօտիի մէջ առնուած.—դա Մարիամ Մագդաղենացին էր։ Բնազդմամբ ոտքի կանգնեց նա, ու սկսեց թափանցիկ ակնարկ ձգել դէպի Մագդաղենացին, ճիշտ այնպէս, ինչպէս և Մարիամը նորան։

— Դու Բարաբբան պիտի լինես,—ասաց նա կերկերուն ձայնով։—Դու իսկ այն մարդն ես, որը պարտաւոր էր երէկ մեռնելու մեր Սիրեցեալի փոխարէն։

Մագդաղենացու ձայնը նորա հոգու խորքը թափանցեց։ Մի ինչ որ տխուր ու զարմանալի քնքշութիւն կար այդ ձայնի մէջ, մի ինչ որ ուժ,—որը խլում էր նորանից ընդդիմութեան բոլոր կարողութիւնը։ Նա ինքն իրեն մտաբերեց, որ իւր դէմ կանգնողը մի թեթևաբարոյ կին է, արտաքսուած, բայց մինչ կը մտածէր նա այդ, միևնոյն ժամանակ, չէր կարող չը սքանչանալ նորա երկնագոյն աչքերի գիւթիչ աղուորութեամբ և աննման յստակութեամբ։ Նոքա՝ ինչպէս աստղ՝ փայլփլում էին, և այդ արտակարգ լոյսը չը թափուած, անվերջանալի արցունքների ցոլացումն էր երևում։ Մեռնելը քո պարտականութիւնն էր և դու պիտի ընդունէիր մահը, վշտահար և ողորմագին Բարաբբաս,—կրկնեց նա և թոյլ ժպտաց։

Բարաբբան նորա վերայ նայեց թէ զարմացմամբ և թէ անըմբռնողութեամբ։

— Իրաւ է, որ տխուր եմ ես,—ասաց նա,—բայց միթէ դու իմ տխրութեան պատճառը գիտես։ Ես—ընդհակառակ—ուրախանալու շատ պատճառներ ունեմ, որովհետև դարձեալ ազատ եմ, ազատ —ամբողջ կեանքիս ընթացքում։

— Իսկ դու կեանքը և ազատութիւնը սիրում ես.—փափուկ ձայնով հարցրեց Մագդաղենացին.—դու աշխարհս գեղեցիկ ես գըտնում, Դու երէկ այնքան էլ ուրախ չէիր, երբ խաւարի մէջ, ինձ մօտ կանգնած, ընկած էյիր ծնկներիդ վերայ, արցունքի հեղեղ թափելով։

Նա շուտով չը պատասխանեց, այլ շարունակեց ուշադիր Մագդաղենացուն զննել։ Վերջապէս շարժուեց նա դէմքի մի այնպիսի արտայայտութեամբ, որ՝ կարծես թէ՝ դէպի Մագդաղենացին թէ կարեկցութիւն էր զգում և թէ վշտանում էր նորա վերաբերութեամբ։

— Ո՛վ դու կին,—կոչեց նա՝ սիրալիր ձայնով,—դու չնաշխարհիկ գեղեցկութիւն ունիս ու աննման լաւ ես, հապա ինչո՞ւ մոլի կրքերի և անպատիւ զեղխութիւնների ես ծառայացնում քեզ։ Ես քեզ ճանաչում եմ։ Ասենք թէ՝ ով չէ ճանաչում քեզ և ո՛վ չը գիտէ քեզ։ Անիծեալ հալածակա՛ն։ Հեռացիր այստեղից, գնա՛ մեռիր, ինչպէս Յուդան մեռաւ, որովհետև աւելի լաւ է այդ, քան թէ այն տեսակ ապրել, ինչպէս որ դու ես ապրո՛ւմ։

Մագդաղենացին ժպտաց մի տարօրինակ, տխուր ժպիտով, որը, ինչպէս և նորա աչքերի փայլը, այնպէս էր երևում, որ երկար լացելու արգասիք էր։

— Ընկեր, ես մեռել եմ,—ասաց Մարիամը,—իմ Տիրոջ ոտքերի տակ ես իմ կեանքս դրեցի։ Մարդիկ ինձ այն կարողացան անել, ինչ որ էի ես նախ։ Իսկ Աստուած այն արաւ ինձ, ինչ որ այժմ կամ ես։

— Դու Մագդաղենացին ես, —կոպտութեամբ պատասխանեց Բարաբբան,—ո՛չ Աստուած, ո՛չ էլ մարդիկ քեզ չեն կարող փոխել։

Մագդաղենացին իւր փոքրիկ գունատ ձեռքերը կրծքի վերայ դրեց և գլուխը կրծքի վերայ թեքեց։

— Ես Մագդաղենացին էի,—և նա իւր աչքերը դէպի պայծառ երկինքը ուղղեց, որին փայփլուն արցունքներով օժտուած աչքերով նայել սկսեց,—կամ՝ աւելի շուտ՝ ես այն անբաղդ, վախկոտ, չարքերի ազդեցութեան տակ ընկած արարածն էի, որին տղամարդիկ մինչ այն տեղը հասցրին, որ նա Մագդաղենացի եղաւ։

— Որին մարդիկ հասցրի՞ն.—բարկանալով կրկնեց Բարաբբան։ —Կին, բոլոր մեղքերիդ համար էլ դու ինքդ քեզ մեղադրիր միմիայն և միայնակ քեզ։

Մարիամի շրթունքները դողացին։

— Դու այր մարդ ես,—պատասխանեց նա,—և այնպէս ես դատում, ինչպէս տղամարդիկ դատել գիտեն միայն։ Ամբողջ ծանրութիւնը կնոջ վերայ ձգիր,—մեղքի բոլոր ծանրութիւնը, անբաղդութեան, ամօթի և արցունքի ծանրեկեկ անտանելի բեռը. սովորեցրի նորան կատարեալ սիրոյ մասին ցնորել, ապա ոչնչացրի նորան զգացածին մոլութեամբ ու մոլեխինդ բարքերով. բազմաթիւ դանդաղ տանջանքներով սպանիր նորան, ձգիր նորան ոտքիդ տակ, և ինչպէս մի գետնի սողուն որդ, կոխկրտիր, ոտքի տակ առ, և երբ նա բոլորովին կորչելու վերայ է ու մինչ կը անյայտանայ նա, անարգ ամօթի տակ թաղուելով, կանգնիր նորա գերեզմանի վերայ և անիծիր նորան՝ «դու ես մեղաւոր» ասելով։ Դու ինքդ՝ սիրող, յիմար, հաւատացող հոգի, միմիայն դու ես մեղաւոր։ Ես ոչինչ չեմ արել։

Նորա ջերմագին բացականչութիւնը մի տեսակ խայթեց Բարաբբային ու մի ինչ որէ յանդիմանութեան ու նախատանքի ուժ զգաց նա։ Ամօթի զգացմունքով Բարաբբան գլուխը քաշ ձգեց և լռեց։

— Միթէ դու իրաւունք ունիս դատելու, կամ ինձ քննադատելը միթէ քեզ է մնացած,—փափուկ ձայնով շարունակեց Մարիամը։— Միթէ դու ինքդ առանց մեղքի ես։ Բայց աւելի լաւ կը լինէ, որ մէկ մէկու 'ի զուր տեղը չը յանդիմանենք։ Բայց ես պէտք է ասեմ քեզ—Մագդաղենացին, ինչպէս Մագդաղենացի, մեռել է, իսկ ես՝ Մարիամս *)—ապրում եմ։

— Ի՞նչ մի զանազանութիւն ես գնում դու մեռնողի և կենդանու մէջ,—քրթմնջաց Բարաբբան, հառաչանք արձակելով։

— Ի՞նչ զանազանութիւն, —կրկնեց Մագդաղենացին։ — Ի՞նչ մի տարբերութիւն է տիրում խաւարի և Լոյսի մէջ։ Մագդաղենացին մոլեգին ու չարաբարոյ մի Փուրիայ էր՝ դժոխքի չաստուած, դեռ էլ աւելի խենթաբարոյ, դժոխային կրակով բռնուած մի խեւուկ էր և նորա դևերից բռնուած դիւալլուկ,—**) յոյսից զրկուած

*) Մարիամ—բարձրացեալ, դորա մտքով շեշտում է Մագդաղենացին և իւր վերաբերութեամբ։ Ծ. Հ. Թարգմ.

**) Սա է կինն այն, յորմէ Քրիստոս եհան զեօթն դևս. և յանմ հետէ ընդ այլոց ոմանց կանանց երթայր զհետ նորա, և պաշտէր զնա։ Մարկ. 16, 9։ Ղուկ. 8. 2։ (Բ.)։ Ծան. Հ. Թարգմ.

մէկը և չէր ճանաչում Աստծուն. մի անբաղդ, թշուառ հոգի՛: Նա մեռաւ, բայց առանց տանջանքի, Ամենաներողամիտ Մարդու թողութեան մի խօսքով սփոփուած: Ո՜հ, ես չեմ կարող լաց չը լինել, մտաբերելով այդ: Իսկ Մարիամը ապրում է,—որը դժոխքը խորտակուած սրտի մէջ գտաւ, որը զղջման արցունքների լոյսով է ապրում, որը թողիչ ու մեղեդուց անուշ ձայն է լսել—Ուսուցչի ձայնը՝ որը ամենաքնքուշ երգից աւելի կարևոր է: Գնա՛, ասաց Նա: Մի՛ մեղանչեր այլ ևս: Ո՜հ, բարձր հրաման: Այլ ևս ինչպէս պիտի կարողանայի մեղանչել ես, յիշելով այդ: Ո՞վ կարող էր Նորան տեսնել և այդ լոյսից յետոյ խաւարի մէջ ընկղմել և դէպի չարը վերադառնալ: Ես իրաւացի դեռ նոր ծնունդ առայ և այդ նոր կեանքի մէջ դողում եմ—արտասուելով և երկիւղ կրելով, բայց սիրով լի, սիրով՝ դէպի իմ Ուսուցիչը և Թագաւորը, որը ինձ ներեց և օրհնաբանեց:

Նորա գեղգեղուն ձայնը թէ յաղթական և թէ վշտալի կերպով դողաց: Բարաբբան հմայուած և զմայլած նորան էր լսում: Մարիամը աւելի մօտ շարժուեց՝ դէպի նա:

— Դու չես ասում ինձ, Բարաբբա, ինձնից երկիւղ չունես կրելու:

Բարաբբան ուշադիր նորան նայեց:

— Նորան, որին Նազովրեցին օրհնել է, ես անկարող եմ արհամարհելու և նորանից երկիւղ կրելու ոչինչ չունեմ:

Հրաշալի ժպիտը Մագդաղենացու դէմքը լուսաւորեց, նա Բարաբբայի ամեն մի բառը արտասանելու ժամանակ, մտայոյզ հրեշտակի նման, նորան էր հետևում:—Դու Նորան Նազովրեցի ես կոչում, ինչպէս կոչում են Նորան և ուրիշները,—ասաց Մարիամը,—այն պատճառով, որ Նա Նազարէթից եկաւ: Բայց—այնուամենայնիւ—Նա Աստուած էր: Գիտես դու, ասում են, որ Նա յարութիւն կառնէ, բայց դորան ես չեմ հաւատում: Նորա հոգին՝ այո՝ կարող է յարութիւն առնել, բայց Նորան այլևս մենք այնպէս չը պիտի տեսնենք, ինչպէս նախկին ժամանակ տեսել էինք: Ահա թէ ինչ պատճառի հիման վերայ էի ես երէկ լաց լինում, երբ Նորա չքնաղակերտ մարմինը գերեզմանի մէջ ամփոփեցին: Մարմինը չէ կարող յարութիւն առնել, մտածում եմ ես, թէպէտ և անշուշտ Աստուածային Նորա Հոգին պիտի դէպի երկինք սաւառնայ. ինչպէս Մարդ, Նա այլևս մեզ չի երևալ: Ահա թէ մահուան դառնութիւնը ինչի մէջ է կայանում և միմիայն ինչով է զգալի. մահից յետոյ, մեր սիրեցեալ մարդկանց այլ ևս մենք այնպէս չենք տեսնիլ, ինչպէս որ գիտէինք նոցա,—այո, դրախտի մէջ նոցա կերպարանքը ուրիշ է:

Նա զրգռուեց Մագդաղենացու խօսքերից և դարձրեց գլուխը: Մարիամը շունչ քաշեց, ապա դարձեալ շարունակեց.

—Պատմիր ինձ, Բարաբբա, տխրութեանդ մասին, որովհետև պարզ երևում է, որ մտատանջութեան մէջ ես ընկած: Ես գիտեմ Յուդայի և նորա մահուան մասին պատմած լուրերի աղբիւրը,—դու նորա վերայ ես տխրում:

Նորա հարցական ակնարկը Բարաբբան լռութեամբ տարաւ, բայց յետոյ, անկեղծութեան և բաց սրտութեան ազդեցութեան տակ, Յուդիթի յանկարծակի անյայտանալու լուրը պատմեց նորան: Մարիամը ուշադրութեամբ լսեց նորան:

—Ես արտաքին տեսքից Յուդիթին շատ լաւ եմ ճանաչում,—ասաց Մագդաղենացին.—գեղանի, հպարտ աղջիկ չափից դուրս դուրեկան է, բայց նա և անման լաւ է ու արհամարհող. ես յիշում եմ, թէ ինչպէս նա՝ մի անգամ՝ շտապով իւր հանդերձը բարձրացրեց, երկիւղ կրելով, որ ես կը կպչեմ իրեն, անցնելուս ժամանակ: Դու սիրում ես նորան, Բարաբբա:

—Նա՝ անշուշտ՝ գաղափարական կին պէտք է որ լինի.—շարունակեց Մարիամը կիսահարցական և վշտալի ձայնով:—Ողջախոհ, կուսածաղիկ, սուրբ, անմեղ և հաւատարիմ:

Մագդաղենացու խօսքերը խայթեցին Բարաբբային և նա մի տեսակ սուր և բարոյական ծակոց զգաց:

—Ա՜հ, եթէ նա այդպէս լինէր, կցկտուր ձայնով բացականչեց նա ու վրդովմունքից սկսեց դողալ:—Բայց և այնպէս, ես քեզ չը պիտի խաբեմ: Նա—ոչնչութիւն է: Նա նոյնպիսի դևով է բռնուած ու լլկուած, որպիսի սատանայով—մի ժամանակ—դու էիր բռնուած, ով Մագդաղենացի:

Մարիամը դողաց և սարսափելի կերպով գունատուեց:

—Աւաղ, Բարաբբա,—ասաց նա,—որքան անբաղդ պէտք է լինէ նա... անպայման թշուառ ու քեզնից աւելի ես եղկելի: Ես կը օգնեմ, որ դու կարող լինես փնտռել նորան. բայց նա՝ երևի՝ քաղաքի մօտ սահմաններից դէպի այն կողմն է անցել: Դու Գեթսեմանէյում եղել ես, այնտեղ, որտեղ նորա եղբայրն է մեռել:

—Ո՛չ, դեռ ես չեմ գնացել,—պատասխանեց նա դառը ձայնով:—Այժմ իսկ ես այնտեղ կը գնամ: Բայց, միևնոյն ժամանակ, ասա ինձ. Նազովրեցուն որտեղ են թաղել: Ո՞ւր է նա այժմ:

Մագդաղենացին դէպի արևմուտք ցոյց տուեց:

—Ահա այնտեղ, Գագաթան տեղից ոչ հեռու,—ասաց նա,—Յովսէփ Արեմաթացու գերեզմանի մէջ, որը բարայրի մէջ է գտըն-

ուում, իսկ վերջինս երկու հատ անպտուղ սարերի մէջ։ Եթէ դու այնտեղ գնալու լինես, անշուշտ Նորա գերեզմանի մօտ պահնակներ պիտի գտնես, այն ես շատ հզօր և բազմաթիւ։ Կայիափան պահապաններ է դրել։

Բարաբբան դողաց, այդ անունը լսելով։ «Կայիափա,—սեղմուած ատամների միջից շշնջաց նա,—ամեն տեղ էլ Կայիափա»։ Բայց նա ոչինչ չը խօսեց ոչ Յուդիթի և ոչ քահանայապետի վերաբերութեամբ, մինչև անգամ իւր ենթադրութիւնը իսկ, թէ կորած աղջիկը՝ կարող է պատահել, որ այդ հպարտ պաշտօնեայի ու բարձրաստիճան քահանայապետի մօտ է գտնուում, որը Յուդիթի գաղտնի սիրեկանն էր։

—Ես Գեթսեմանի կը գնամ,—կրկնեց նա,—բայց Յուդայի մարմինը այգու մէջ չէր գտնուած, այլ դրսում, իսկ Նորա քոյրը չը գիտէ, թէ ուր է նա մահացել։ Բայց և այնպէս, ես այնտեղ ես կը գնամ ու կը փնտռեմ, նոյնպէս և Նազովրեցու գերեզմանը կը տեսնեմ, և այդ բոլորը—մինչ արեգակի մայր մտնելը։ Եթէ դու մի բան կը լսես Յուդիթի մասին, կը յայտնես ինձ, այնպէս չէ՞։

—Քեզ ես ուրտե՞ղ պիտի գտնեմ.—հարցրեց Մարիամը։ Բարաբբան յայտնեց, որ Նորա ընկերակից Մելխիօրը մի հիւրանոցում է իջևանել, ուրտեղ և իրեն՝ Բարաբբային է հիւրասիրել, յայտնելով նորան և հիւրանոցի ուր գտնուելը։

—Ես կը յիշեմ՝ անշուշտ,—ասաց Մարիամը։—Եթէ ես ուր և իցէ փախուստի դիմած աշկերտ գտնելու լինեմ, կը գնամ նորա հետևից, իսկ եթէ որևէ տեղեկութիւն լսեմ,—այդպիսին պիտի ստուգեմ։ Մինչ այդ ժամանակ առողջ եղիր։ Իսկ եթէ դու իրաւացի Տիրոջ գերեզմանը տեսնելու կըգնաս՝ մինչ արեգակի մայր մտնելը,—իմ փոխարէն աղօթք արա, որովհետև պահապանները նոյնը անելու արգելում են ինձ. ես չը պիտի համարձակիմ այնտեղ գնալու, մինչ վաղուան առաւօտը։

—Մինչ վաղը առաւօտ,—կրկնեց Բարաբբան, և անբնական կերպով Նորա վերայ նայեց։

—Իրաւ այդպէս,—մինչ վաղը,—ասաց նա։—Երբ լոյսը կը բացուէ, ես ծաղիկներ և անուշահոտութիւններ կը տանեմ, որ դոցանով մեռնողին օծեմ։ Ասում են, պահապաններին լուսաբացին վերցնեն պիտի։ Մնաս բարեաւ։ Եւ թո՛ղ Աստուած մխիթարիչ լինէ քեզ։

Եւ սիրաբար շարժելով իւր գլուխը, նա իւր շրջազգեստի մէջ փաթաթուեց և անլսելի, փափուկ քայլերով՝ հեռացաւ։

Մի րոպէաչափ Բարաբբան կանգ առաւ, Մագդաղենացու յետևից

նայեց և խորին մտատանջութեան մէջ ընկաւ. ապա նորա շրթունքները ակամայ միևնոյն խօսքը կրկնեցին. «Վաղը»։

Ապա ցած թողնելով իւր կտաւեայ պատմուճանը ու նորա մէջ փաթաթուելով, որպէսզի ոչոք չը կարողանայ ճանաչել նորան և իւր նպատակից հեռացնել կամ արգելք հանդիսանալ ու կանգնեցնել, նա խաղաղ փողոցներով դէպի ճանապարհը հասաւ, որը նորան Գեթսեմանի պիտի տանէր։

VIII.

Խորին ստուերի զովութիւնը ողջունեց նորան, երբ նա ամայի այգուն մօտեցաւ, որը համաշխարհային պատմութեան մէջ այնքան հռչակ է ստացել։ Զեփիւռը սաղարթախիտ թզենու տակ խորհրդաւոր ձայներ էր հանում. թափանցիկ առուակը, օձապտոյտ գալարուելով, երկու գոգերի մէջ մեղմութեամբ քրքջում էր. Հէնց այդ տեղ էլ պառաւ ձիթենիներն էին կանաչած։ Այդ տեղ երէկ գիշեր, խիտ ծառերի մութ ստուերի տակ՝ մեռած Յուդային գտան։ Նոր ամբաղդութեան ակամայ երկիւղով և զգացմունքով, Բարաբբան այդ տեղին մօտեցաւ։ Նա դէպի ցած ընկած ոստերը բաց արեց. ո՛չ, ոչ ոք չը կար այդ տեղ։ Նա փափուկ քայլերով դէպի առաջ շարժեց, ամբողջ ժամանակ Յուդիթին փնտռելով՝ և այնուամենայնիւ՝ նորան այդպիսի ժամանակ այդքան մի ամայի տեղում գտնելու վերայ կասկածելով։ Վերջապէս նա վճռեց ուղղակի այգու մէջ մտնել։ Նա վանդակաւոր սողնակը բարձրացրեց, այդպիսով դէպի մուտքը առաջնորդող դռան արգելանքից ազատուելով ու ոռոգող վարդերի և արմաւենիների մի ամբողջ անտառի մէջ գտնուեց, որոնք այդտեղ ոչ սովորական բանակութեամբ էին կանաչում։ Խոտով կանաչած ուղիներից նա զգուշութեամբ քայլելով, կանգ առաւ ու սկսեց ունկնդիր լինել։ Ոչ մի տեղ այդպիսի խորին լռութիւն չէր տիրում. առուակի քրքջոցը այլ ևս չէր լսւում, քամին նոյնպէս խաղաղ էր, այնքան, մինչ տերևների սօսափիւնը չէր լսւում. այնքան խորհրդաւոր և՝ միևնոյն ժամանակ՝ նշանաւոր խաղաղութիւն էր թագաւորում, որ—կարծես թէ—Աստուածային հրամանի հետևեալ կատարումն լինէր. «Այստեղ, որ իմ Սիրելի Որդիս աղօթեց և արտասուեց, աւելի քան հոգեվարքի տանջանք կրելով, այլ ես և ոչ մի ժամանակ չէ կարող ոչ մի աշխարհային հնչիւն մարդուս ուշադրութիւնը իւր վերայ դարձնելու»։

Յանկարծակի երկիւղով բռնուած Բարաբբան կանգ առաւ. Նոյն իսկ իւր այգու մէջ գտնուիլը նորան սրբապղծութիւն էր երևում և նա հեռու գնալու ոչ ոյժ և ոչ վստահութիւն ունէր: Նա՝ մասծկոտ՝ իրեն շրջապատող ծաղիկներին նայեց. կարմիր ու սպիտակ վարդերը մի տեսակ գեղեցրանքի մէջ՝ կարծես՝ լինէին, որոնք տարակուսանքով էին նայում նորա վերայ. Ճոխարմատ հնդկաթզենին (кактусъ) աչքի ընկնող հպարտութեամբ նորա առջև իւր պայծառ ծաղիկներն էր բաց արել, և իւրաքանչիւր առանձին տերև, ամեն մի ցօղուն կարծես թէ նորանից հարցնում լինէին իւր այդ տեղ ներս խուժելու պատճառը,—այդ խորհրդաւոր խորշը, որը տխրութեամբ, վշտով և պզօթքով էր սրբուած և այն—Աստուած—Մարդու: Բառ բառի հետևից նա այն բոլորը յիշեց, ինչ աշակերտ Պետրոսը պատմել էր նորան Նազովրեցու Գեթսեմանի այգու մէջ անցկացրած վերջին գիշերուայ մասին:

—Մի՞թէ նա տխրեց բոլորին,—կիսաձայն շշնջաց նա:—Նազարէթից եկած այդ հասարակ Մարդը—խաչուած և մեռած: Մենք չենք կարողանում այս պարտէզից անցնել, առանց նորա մասին մըտածելու:

Եւ նա՝—կամենալով շուտով թողնելու այդ տեղը՝—շտապեցրեց իւր քայլերը: Ոչ հեռու նորանից, հրաշալի վարդերի և ճոխ հնդկաթզենիների հետև, փափուկ հողը դեռ ևս սրբութեամբ պահել էր Աստուածային Պատկերի ծնկների նիշը, այն Կերպարանքի, որը ծնկաչոք համայն աշխարհի համար ողբում և արտասուում էր, լաց էր լինում այնպիսի այրող արցունքներով, որպիսի վշտի գոհարներ մահկանացուների աչքերից չեն թափել, և որոնք «հոսեին ՚ի նմանէ իբրև զկայլակս արեան, ոլոռն, հեղեալ յերկիր»: Այդ նոյն տեղում մխիթարութեան մեծ Հրեշտակը վայրկենապէս երևաց—և հէնց այդ ժամանակից, ինչպէս Աստուած—Թագաւոր, մեծ և կատարեալ սիրոյ խոնարհութեամբ լցուած,—դէպի մահը գնաց. Նոյն պահուց սկսած՝ ոչ ոք այդ տեղ ոտք չէր կոխել:

—Չէ՞ թէ Յուդիթը չէ կարող այստեղ լինել,—բրթմնջաց Բարաբբան,—թողնելով այգին ու դէպի վանդակափեղկը դիմելով ու այնտեղից դանդաղ դուրս գալով:—Նա ոչ մի ժամանակ չի եկել այստեղ, ուրեմն ինչո՞ւ այժմս գայ նորան այստեղ:

Նա կանգ առաւ. Նորա սիրտը անհանգստութեամբ խփում էր:

—Ոչ, ո՛չ, նա այստեղ չի գալ,—կրկնեց նա:—Եթէ նա վշտից խելքահան է եղել, այդ դէպքում, ամենից շուտ նա դէպի գագաթնատեղին է գնացել, որտեղ երէկ ամբողջ զարհուրանքը անցաւ: Նա

Նազովրեցու գերեզմանը գնամ և պահապաններից հարցնեմ, արդեօք նա այնտեղ գնացել է թէ ո՛չ:

Եւ այս ևս իւր մտքի մէջ չը տատանուելով, նա շուտ եկաւ ու, դէպի յետ, նոյն ճանապարհը բռնեց, խորին մտատանջութեան տակ ընկնելով: Այն հարցը, որը աւելի շատ էր գրաւում նորան,—ոչ թէ Յուդիթի անյայտանալն էր կազմում,—այլ Նազովրեցու գոյութիւնը: Ո՞վ է այդ Նազովրեցին: Ինչո՞ւ համար Նորա պատկերը, ամեն տեղ թագաւորելով, այնպէս էր երևում, որ համայն տիեզերքն էր լըցնում: Նա միւսներից ինչով էր զանազանւում, որ անկարելի էր մոռանալ նորան: Նա նոր հաւատքի Ուսուցիչ էր, բայց և նախ քան թէ Նա, նոր կարծիքների քարոզիչներ դարձեալ եղել էին, այդ իրաւ է և դարձեալ ու անընդհատ դեռ կը լինեն... Նա անսովոր գեղեցկութեան տէր էր և շատ քաջ, բայց՝ այնուամենայնիւ՝ միմիայն Նա չէր, որ այդպիսի յատկութիւններ ունէր: Նա և ոչ մի այնպիսի հերոս էր, ինչպէս սովոր է աշխարհս հերոսներին պատկերացնելու. Նա ոչ մի յաղթանակ չը տարաւ, ոչ մի երկիր չը նուաճեց, գահ դարձեալ չունէր Նա: Նա անշուշտ մի շատ աղքատ Մարդ էր, կամ այդպէս էր երևում, բայց բարի և տանջուած. Նա մի քանի տկարներ բժշկեց, քանի մի հիւանդների հաւատքով օգնեց և անբաղդներին մխիթարեց, յոյսերները դէպի դրախտ դարձնելով: Այս բոլորի մէջ մի անբնական բան չը կայ, այնպէ՞ս չէ: Այնքան մի սովորական և հասարակ կեանք,—ուրեմն ինչի՞ մէջ էր կայանում Նորա Աստուածութիւնը: Այդ բանը Բարաբբան ինքն իրեն բացատրել չը կարողացաւ. Նա չէր կարող հասկանալ, որ ամենամեծ հրաշքը այս աշխարհիս մէջ հէնց սովորական և հասարակ կեանքն է կազմում, որը իրականապէս հասարակ չէ, ոչ էլ սովորական, այլ թէ դժուար և թէ բարդ ու բազմակողմանի: Աշխարհիս երեսին ոչինչ անսովոր բան չը կայ, այն չափով, ինչ որ բարութիւնն է կազմում, այլ ևս հազուագիւտ ոչինչ չը կայ, բացի ցածրահոգի բնութիւնից, հեզութիւնից և համակրութիւնից, ոչ մի բան աւելի զարմանալի ու Աստուածային, ինչպէս անկաշառ, անձնուէր, անփոփոխ սէրը, իրեն համար ոչինչ չը պահանջող, այլ թէ ինքը ամեն բան տուող: Այն՝ ինչ մարդիկ սէրն են կոչում, այն ժամանակ միմիայն նորա մասըն է և միևնոյն է՝ թէ եսականութիւն է կազմում. այլ այն, ինչ Աստուած է ընդունում սիրոյ փոխարէն, — այդ ինքն իրնից բոլորովին ու կամաւոր հրաժարումն է:—Եթէ դու քո անձը ուրանաս,—ասաց Նա,—Ինձ կը գտնես, իսկ Ինձ հետ դու ամեն բան կը գտնես:—Որ կորուսէ զանձն իւր վասն Իմ, գտցէ զնա:

Բնութեան հոգևոր կողմը Բարաբբան անընդունակ էր գիտենալու։ Նա միմիայն այն կարող էր զանազանել, ինչ որ կեանքի մակերևոյթի վերայ կար.—իսկ այն բոլորի մասին, ինչ խորքում կար,—նա հասկացողութիւն չունէր։ Նորան շատ ծանր էր գալիս և այն, որ գաղտնամիտ Մելխիօրը, լինէր նա Եգիպտացի, յոյն կամ մի ուրիշը, այն մտքի հետ, թէ Յիսուս Նազովրեցին իրաւացի Աստուած է,—անդիմադրելի համաձայնւում էր։ Ինչո՞ւ պիտի նա Նորան հաւատայ։ Եթէ՝ իրաւացի՝ Նա Աստուած է, ուրեմն ինչպէս կարող է Նա մեռնել։

Ես պարտաւոր եմ բոլորը, բոլորը գիտենալ, ինչ որ Նորա մասին խօսւում է,—հառաչեց Բարաբբան,—ես չը պէտք է տարածուած ձայներով բաւականանամ, այլ գործքով իսկ։ Երբ Յուդիթը գտնուած կը լինէ, և ներկայիս բոլոր տարակուսանքները կը ամոքուեն, ես Նազարէթ պիտի գնամ և ամեն ինչ ճշմարտապէս գիտենամ։ Ես բացառապէս զօրանով էլ զբաղուեմ պիտի։ Եթէ Նա Մեսիան է, ուրեմն մեր ազգը նզովեալ պիտի լինի Աստուծով՝ յաւիտենական դարերի մէջ։ Ես բոլորը պիտի հետազօտեմ, ամեն ինչի հետախոյզ լինեմ և հաստատութիւններ ու փաստեր պահանջեմ։ Այլ ինչ վերաբերում է այն բանին, որ ասում են թէ Նա մեռածների թւում չը պիտի մնայ և յարութիւն պիտի առնէ,—դա արդէն ճիշտ չէ կարող լինել, այդ տեսակ բան անկարելի է, որ պատահէ։

Եւ Բարաբբան փոքր ինչ հանգստութիւն զգաց՝ իւր որոշմունքից մխիթարուելով և չուրջը նայեց։ Այնտեղ, որտեղ գտնուում էր նա, շատ պարզ կերպով կարելի էր այն սպիտակ վրանները զանազանել, որոնք Նազովրեցու գերեզմանն էին շրջապատել։

—Իրաւ որ պահապաններ են դրել,—քրթմնջաց նա,—այն էլ բազմաթիւ։ Այստեղ ոչ մի քմահաճութիւն չէ կարող լինել—քահանաների երկիւղը իրաւացի է և անկեղծ, չը նայելով, որ նոքա վախկոտ արարածներ են և սկեպտիկների*) կարգին են պատկանում, բայց՝ այնուամենայնիւ՝ երևի և հաւատում են, որ այդ Մարդը կարող է յարութիւն էլ առնել։

Բազմաթիւ վրանների տեսքը հիացրեց նորան. նա մի կամ երկու զինուոր էր կարծում գտնել այդ տեղ։ Ծայրայեղ կերպով նորան զարմացրեց և այն, որ Նորա գերեզմանի չուրջը հարկաւոր էին գտել

*) Մարդիկ, որոնք ամեն բանի մէջ կասկածում են, ինչ չէ հաստատուած՝ գրական փաստերով։ Հ. Թ.

իսկական պատերազմական պահնակներ դնելու, այն Մարդու գերեզմանի մօտ, որը, օրէնքի վճռով, պարզ առ պարզ յանցագործի մէկն էր—իւր չար գործողութիւնների պատճառով՝ խաչուած։ Ժամանակը արդէն կէսօրից անց էր և նա շտապեցրեց իւր քայլերը, կամենալով այդ քարայրը նայելու, բայց զինուորներից մէկը կոպտութեամբ նորա ճանապարհը կտրեց, այդպիսով գերեզմանին մօտենալը արգելելով։ Բարաբբան քաղաքավարութեամբ պատասխանեց նորան, իւր գալստեան նպատակը բացատրելով և հարցրեց, արդեօք Յուդիթ անունով մի աղջիկ չէ՞ եղել այնտեղ։ Զինուորը նախ ուշադիր նորան զննեց, ապա ծիծաղեց։

—Չէ՞ թէ դու Բարաբբան ես,—գոռաց նա.—իսկ ես այն զինուորներից մէկն, որոնք քեզ բանտից դէպի դուրս առաջնորդեցին. դու միանգամից, գինովցածի նման, ազատ և պարզ օդից արբեցար, բայց, այնուամենայնիւ, երևի կատարեալ ազատութեան ակնկալու չէիր։ Իսկ այժմ դու ուրիշ մարդու նման ես դարձել,—մաքուր և լաւ հագնուած. գուցէ այս աշխարհիս մէջ հէնց այդքան շուտ այնքան փոփոխութիւն գտար, որ բանտարկեալութեանդ ժամանակից քիչ անց—արդէն այդ ես։ Այնպէս չէ՞։

—Ո՛չ, շատ քիչ փոփոխութիւն, պատասխանեց Բարաբբան՝ մի տեսակ դառնութեամբ։—Դարձեալ յաղթանակը չարի կողմն է, իսկ բարին և արդարը՝ առաջուայ նման՝ կորչում է. միթէ ինքս կենդանի վկայ չեմ դորան։ Չէ՞ թէ ինձ պէտք է խաչէին, այլ ոչ թէ Նազովրեցուն։

—Բայց ես քո կողմից պատասխանատու կարող եմ կանգնել, որ դու այդ տեսակ վախճանի վերաբերութեամբ չես ափսոսում, իսկ փրկութեանդ՝ շատ և շատ ուրախ ես,—հակաճառեց զինուորը՝ ծիծաղելով։—Դեռ երկու օր չը կայ, ինչ նկուղից դուրս ես եկել, հէնց այդքէն իսկ կին ես փնտռում։ Այդ՝ գիցուք՝ բոլոր աւազակների արիւնի մէջ էլ կայ, և ինչ դու ես, նոքա էլ՝ նոյնն են,—բայց և այնպէս—ինչքան էլ որ ես քեզ խղճալու ես լինեմ, այնուամենայնիւ, չը պիտի կարողանամ թոյլ տալ քեզ մօտիկից անցնելու. մեզ արձակած հրամանները շատ և շատ խիստ են։

—Հաւատում եմ քեզ,—ասաց Բարաբբան, քարայրի կնքուած մուտքը հեռուից մտայուզութեամբ նայելով,—և չեմ ուզում պատճառ դառնալ քո պատուիրազանցութեանդ։ Իսկ ինչ որ այն կընոջն է վերաբերում, որի մասին հարցրեցի ես քեզ, նորան ես թէպէտ և փնտռում եմ, բայց ոչ ինձ համար—Նա Իսկարիոտի աղջիկն է, որը անսպասելի կերպով փախչել է, նոյն Իսկարիոտի, որի որդին՝

Յուդան Նազարէթից եկած Մարդուն մատնելու ամօթից խեղդամահ եղաւ: Կարծում են, որ այդ աղջիկը խելքից դուրս է եկել և թափառում է քաղաքի մէջ, ինքն էլ չը իմանալով, թէ ուր է գնում:

—Ինչ տխուր պատմութիւն է,—ոչ առանց մի տեսակ կարեկցութեան՝ ասաց Հռովմայեցին:—Այդ չուառ Իսկարիովտը իրաւ որ սարսափելի դրութեան մէջ է: Բայց ոչ մի կին, գեղեցիկ կամ տգեղ, մեզ մօտ չէ եկել այսօր: Այնուամենայնիւ, պահնակներին փոխելիս, ես քո պատմութիւնը ցենտուրիօն Գալլուսին կը հաղորդեմ,—նա ինքը երկու աղջիկ ունէ, և՝ այն դէպքում՝ երբ նա այդ մոլորած աղջկանը տեսնէ, անշուշտ նորա վերայ կարեկից է յոյս կապել. որը այդ աղջկան անշուշտ համոզէ պիտի դէպի տուն վերադառնալ: Բայց քեզ խորհուրդ չեմ տալիս այս տեղ կանգ առնել. բոլոր այստեղից անցնողներին կասկածում են այն բանի մէջ, թէ նոքա եկել են մարմինը գողանալու, իսկ դու, առանց այդ էլ, ճարպիկ գողի հռչակ ես վայելում: Գուցէ դու և մեռեալի դիակով չը հետաքրքրուես էլ ու այդպիսին չը գրաւէ քեզ, բայց, աւելի լաւ է, հեռացիր: Մի բարկանայ. ես քեզ բարի եմ ցանկանում:

—Շնորհակալ եմ քեզնից,—հեգնութեամբ պատասխանեց Բարաբբան և մի րոպէաչափ կանգ առաւ, մտածելով թէ ինչ անէ նա այժմ:

Արդէն բաւականին ուշ էր և արեգակը մայր էր մտնում: Կարմրագոյն ամպերը, ինչպէս հսկայաձև վարդերի թերթիկներ, ուղիղ Գողգոթա լեռան վերայ դանդաղութեամբ լողում էին, փոքր ինչ ցածր, մի գունաթափ կանաչ շերտ էր տարածուում, կարծես թէ թափանցիկ երկնային լիճ լինէր, որի մէջ պարտական էր՝ շուտով՝ ճառագայթացոլ հրաշալի գունտը ընկղմելու: Բնութիւնը, թէպէտ և պերճ ու հանդարտ թէ ամեն տեսակ բռնականութիւնից զերծուած, այնուամենայնիւ դուրկ չէր, արևելեան արեգակի տաք լուսաւորութեան տակ գտնուած, մի տեսակ վայրի գեղեցկութիւնից: Յամենայն դէպս, գոնէ այդպէս էր մտածում Բարաբբան, մինչ նորա անհանգիստ աչքերը, մտայուզութեան և տխրութեան արտայայտութեամբ, այս ու այն կողմն էին շուռ գալիս: Ամեն բանի կենտրոնը կերպուած և պահպանուած քարայրն էր թւում: Հռովմայեցի զինուորի համարձակ և քաջ կերպարանքին նայելով, որը փոքր ինչ կասկածանքով էր հետևում իրեն,—Բարաբբան իր ձեռքը դէպի սպիտակ վրանների կողմը կարկառեց, որոնք երկնագոյն գերեզմանի չուրջն էին փռուած, ու հարցրեց.

—Ժամանակի այսքան կորուստը ինչու համար է, և 'իզուր

ժամանակավճառութեան արգասիք չէ: Առողջ դատողութեան տէր ոչ մարդը կարող է թոյլ տալ իրեն ենթադրելու, թէ մեռեալը յարութիւն կառնէ:

—Դու չես հասկանում թէ բանը ինչումն է կայանում,—պատասխանեց զինուորը:—Կայիափան այնքան էլ յիմար չէ, որ մեռեալների յարութեանը հաւատայ: Ո՛չ, պահնակը միմիայն կենդանի մարդկանց համար է դրուած.—Նազովրեցու աշակերտները թափառում են չրջակայքում. նոքա շատ զմայլելի կերպով կը գողանային իրենց Ուսուցչի մարմինը, նորա նախագուշակութեան ճշմարտութիւնը հաստատելու համար: Բայց նոցա ճիգնթափութիւնը իզուր կը լինէ. նոքա այլևս չը պիտի կարողանան քարայրին մօտենալ, և եթէ նոյնիսկ մեռեալը կը ցանկանայ դէպի կեանքը դառնալու. այն ժամանակ նա պարտաւոր պիտի լինէ իր սեփհական ուժով ժայռերը խորտակելու, որովհետև և ոչ մի մարդկային ձեռք կարող չը պիտի լինէ այդ հրաշքին օգնելու:

—Այդ իրաւացի հրաշք պիտի լինէր,—շշնջաց Բարաբբան:

—Այո, բայց այդ չի լինիլ,—ծիծաղեց Հռովմայեցին:—Մենք բոլորս էլ գիտենք այդ:—Եւ վաղը՝ փառք աստուածներին, փորձը վերջացած կը լինէ և պահապաններին կը փոխեն, որովհետև այս երրորդ օրն է արդէն, և եթէ նա այդ ժամանակամիջոցի մէջ յարութիւն չը առնէ, ուրեմն գործը վերջացած է, և մեզ այլևս ունայն խօսքերով չեն կարող պատրել: Վաղը դու կարող ես այստեղ գալ ու այնքան մնալ, որքան ցանկութիւնդ կը տանէ, իսկ այս օր՝ խնդրում եմ քեզ տուն գնալ:

—Ես հնազանդուում եմ քեզ,—ասաց Բարաբբան, յետ դառնալով:

—Դու հարիւրապետի հետ պիտի խօսես՝ Իսկարիովտի աղջկայ վերաբերութեամբ:

—Միամիտ կաց, բոլորը կը յայտնեմ:

—Մնաս բարեաւ:

Զինուորը իր դանդաղ յետ և առաջ գնալը նորոգեց, իսկ Բարաբբան, գերեզմանի կողմը մի վերջին եւ քննողական ակնարկ ձգելով, ակամայ՝ դէպի քաղաք տանող ճանապարհը բռնեց: Նա այն երկրորդ լեռան մօտ, որոնց մէջ գերեզմանն էր, գետնի մէջ մի մեծ փորուածք նկատեց, որին մի որևէ գազանի որջի տեղ կարելի էր ընդունել: Այդ փոսը բաւականին խոր էր և ազատ կարող էր մի մարդու ծածկել որև է կողմնակի ակնարկից: Յանկարծ յանդուգն մի միտք յղացաւ նա. գիշերը այդտեղ դարանակալ լինել և տեսնել

թէ արդեօք ինչ որէ մի բան չի պատահիլ քարայրի չուրջը։ Եթէ մի որևէ հրաշք պատահելիս լինէ, մտածեց նա, ես վկայ պիտի լինեմ. իսկ եթէ Նազովրեցու աշակերտները կը ցանկանան մարմինը գողանալ, այն ժամանակ ես նոցա և հռովմայեցի պահնակախմբի մէջ եղած մրցումն ու կռիւը կը տեսնեմ։ Այո, անշուշտ այստեղ պիտի վերադառնամ, ինչ էլ որ կուզէ՝ թող պատահէ. այս գիշերը չափից դուրս մի նշանաւոր ժամանակամիջոց է, և չի արժէր, որ մի այդքան խորհրդաւոր գիշեր քնի մէջ մտնեմ ես։ Ես կարող պիտի լինեմ արթուն մնալ, այնպէս ինչպէս և մի ուրիշը. բացի այդ, եթէ որևէ հրաշալի երևոյթներ ես լինեն, ինձ շատ լաւ մխիթարութիւն պիտի կազմէր նոցա տեսնելս։ Եթէ մեռնողը յարութիւն առնէ, այն ժամանակ ես պիտի գիտենամ, որ Նա մարդ չէ, այլ Աստուած, իսկ եթէ ես սեփհական աչքերովս չը տեսնեմ,—ոչ մի ժամանակ չը պիտի հաւատամ դորան։ Խորին համոզմունքիս համար, այս գիշեր ես այստեղ պիտի գամ,—ինձ ոչինչ չէ խանգարում։ Միտքը և սիրտը կարող են խաբուել, բայց ականջը—ոչ մի ժամանակ։ Ինձ գաղտնածածուկ պահնակի դերը դուր է գալիս. երդւում եմ կեանքովս, որ ոչ մի ուժ չը պիտի շարժէ ինձ այս ընտրածս տեղից—մինչ արևագալ իսկ։

IX.

Վերջնականապէս վճռելով իւր դիտաւորութիւնը ի գործ դնելու, նա կանգ առաւ, այն փոս տեղի դրութիւնը, որի մէջ կամենում էր նա գիշերը անցկացնել, մանրամասնաբար նայելու և իւր մտքի մէջ դրոշմելու համար։ Մոխրագոյն փոշին խիտ խաւով ծածկում էր ամբողջ ճանապարհը. երկինքը մայր մտոցի կրակով կարմրանում էր նորա վերայ։ Ոչ մի տեղ և ոչ մի մարդկային կերպարանք կար, Երուսաղէմի սպիտակ տանիքները հեռուից պղտոր կերպով զանազանւում էին և խորին հանգստութիւնը և խաղաղութիւնը յաղթական կերպով սաւառնում և իշխում էր բոլորի վերայ։ Անդորր տեսարանի խորհրդաւոր դիրքով ամբողջովին բռնուած՝ Բարաբբան շփոթուեց,—յանկարծ մի կնոջ նկատելով, որը դանդաղ դէպի ինքն էր մօտենում, այդ կինը անցնում էր քաղաքից, ձեռքերի մէջ սպիտակ շուշանների մի մեծ փունջ բռնած։ Այդ կինը, ինքն ևս, ինչպէս և ձիւնափայլ ծաղիկները, ամբողջովին սպիտակների մէջ էր. մինչ նա դանդաղութեամբ առաջ կը ընթանար, Բարաբբան, անբա-

ցատրելի բնազդմունքի ազդեցութեան տակ, ուղիղ նորա ճանապարհի վերայ կանգնելով, կարծես ուղին, հրամայա ու քննողական ակնարկ ձգելով այդ կնոջ վերայ։ Նորա դէմքը գունատ էր և անդրաշխարհային գեղեցկութեամբ օժտուած, Դա նոյն կինն էր, որին Բարաբբան երէկ տեսել էր Գողգոթայի վերայ ճառագայթացոլ փայլմունքի մէջ,—և որի դէմքը ոչ մանկութիւն և ոչ էլ ծերութիւն էր մատնում, այլ և նորա դէմքից որևէ ժամանակի հետք անկարելի էր գուշակել։ Նորա դէմքի անարատ և չքնաղ գծերի մէջ կուսութեան և մայրութեան զուգաւորութիւնն էր անդրադառնում, հրեշտակային գեղեցկութեան, իմաստութեան և վշտի, անմեղութեան ու սիրոյ սաւերագծով։ Աշխարհիս երեսին դեռ ոչ մի կին այդքան անհամեմատելի զուգադիպութեամբ դեռ չէր տիրացել։ Նորան տեսնելով, Բարաբբան բոլորովին ափշեց. մի ինչ որ կայսերական ու չնաշխարհիկ ուժ կար այդ պատկերի մէջ, որը ներշնչում էր Բարաբբային այդ կերպարանքի դէմ ծունկ իջնել ու երկրպագութիւն տալ ի նշան պաշտելութեան, բայց նա իւր զգացած ցանկութեանը չը ընկճուեց, այլ շարունակեց կանգնած կենալ, ամբողջ մարմնով դողալով, բայց վճռելով իւր բռնած դիրքը չը թողնել, որպէսզի այդպիսով ստիպէ այդ պատկերին իւր վերայ նայել կամ մի խօսք ձգել դէպի ինքը։

—Դա Խաչեցեալի Մայրն է,—շշնջաց նա.—Ես կը խօսեմ նորա հետ, կը հարցնեմ նորանից, թէ արդեօք ճշմարիտ են այն զարմանալի պատմութիւնները, որոնք նորա Որդու մասին են տարածուած,—անշուշտ կը պատասխանէ նա։ Նա պարտաւոր է պատասխանել, քանի որ այդ հարցը կենաց կամ մահու հարց է և ոչ թէ սոսկ ինձ միայնակ մի մարդուս համար—այլ ամբողջ աշխարհիս։

Նա կանգնեց իւր տեղում՝ սպասող դրութեան մէջ։ Երկու ձեռքով շուշանները կրծքին սեղմելով—նէ դանդաղ մօտենում էր։ Բարաբբայից մի քանի քայլ հեռաւորութեան վերայ նէ կանգ առաւ և որպէս թէ սառչեց, առանց չնչին մի շարժմունք գործելու. նէ այնքան հանգիստ էր և անշարժ, որ նէրան մարմարիոն անդրիի տեղ կարելի էր ընդունել. Նէրա հագուստի ոչ մի ծալքը չէր շարժւում, շուշանի ոչ մի թերթիկը նորա ձեռքի մէջ չը դողաց, հանդարտ աչքերը,—պայծառ ինչպէս ինքը՝ երկինքը, ուշադիր Բարաբբայի վերայ էին նայում. սպիտակ կրծապատի տակից խարտեաշ հերերի գիսակները թափուելով, փափկութեամբ նէրա պարանոցի վերայ էին փռուած. գողտրիկ ու մեղմ ժպիտի ստուերը հանգստանում էր նէրա երկնագեղ շրթունքների վերայ։ Նէրա հետեւից վերջալոյսն էր

վառում. Նէրա շուրջը, կարծես, օդը փայլում էր, ինչպէս ոսկեայ փոշիով ցօղուած, իսկ ոտքի մօտ ընկած շուշանը իւր թաւշեայ թերթիկներն էր բաց արել, ոսկեայ սրտիկը ցոյց տալով:

Այդպիսի անխօս հանդարտութեան տեսքով զմայլած, Բարաբբան սքանչացած կանգ էր առել, որ և է խօսք արտասանելու սիրտ չը ունենալով.—կասկածոտ, անհանգիստ, յանդուգն երես առ երես Աստուածամօր հետ: Արեգակի կարմիր ճառագայթները, նորա հանդերձի սպիտակութեան հետ խաղալով, կուրացնում էին Բարաբբային. Նա՝ թւում էր՝ թէ ծաղկում և թէ շրջապատում էր նորանոր մեծութեամբ և շքեղութեամբ և այդ աւելի ևս այն ժամանակ, երբ Բարաբբան դէպի նէ էր նայում. տանջանքի հառաչանքով, երկիւղի և խորին յարգանքի զգացմունքով, Բարաբբան դէպի նէ տարածեց իւր ձեռքերը:

—Մարիամ՝ Նազարէթից:

Նէրա շուրթերի վերայ ժպիտի ստուերը փափկեց անսահման կարեկցութեան արտայայտութեամբ: Բայց նէ ոչինչ չը ասաց և անշարժ մնալով, Բարաբբային նայեց:

—Մարիամ, Մայրդ Նազովրեցւոյ,—շշնջաց նա, աւելի և աւելի դողալով նէրա պարթեւական հասակի չնաշխարհիկ մեծափայլութեամբ և նէրա տարօրինակ իմն կերպով գերբնական սքանչելիութեան ներգործութեան տակ:—Լսիր ինձ, աղերսում եմ քեզ: Դու գիտես ով եմ ես, Բարաբբաս—մի մեծ յանցաւոր, եթէ ժողովրդի ձայնը արդարադատ լինէր, ես երէկի մեռած պէտք է լինէր քո սիրեցեալ Որդու փոխարէն: Երդուում եմ, ես ուրախութեամբ կը մեռնէի, բայց ոչ սկզբում, ո՛չ: Ես այն ժամանակ դեռ ծարաւում էի ազատութեան և կեանքի ուրախութեան, բայց այն ժամանակից, երբ ես Նորա դէմքը տեսայ, տեսայ Նորա գերբնական պատկերը, կեանքս ինձ այնքան չնչին և անարժէք երևաց, որ ես հրճուանքով անձս կը տայի Նորա փրկութեան համար:

Նորա ունկնդրուհին ոչինչ չը ասաց, բայց միմիայն նէրա նայուածքի մէջ ու շրթունքների վերայ միենոյն քնքշութեան արտայայտութիւնը հանդստացաւ:

—Ասում են, քո Որդին աստուածաննութիւն էր անում,—շարունակեց Բարաբբան, աւելի և աւելի գրգռուելով,—անվեհեր ազատութեամբ էր խօսում Աստուծոյ մասին, Նորան Հայր կոչելով: Դոքա արտակարգ և տարօրինակ խօսքեր էին: Իսկ այժմ միենոյն ունայն ու խելքից դուրս ձայնը տարածուել է և ամբոխի մէջ, աւելի և աւելի հնչուն դառնալով, որ Նա իրաւ որ Ամենա-

կարող Աստծու Միակ Որդին է: Ուրեմն ինչո՞ւ համար դու, Մարիամ, չը փարատեցիր այդ ձայնը: Ամբողջ աշխարհիս մէջ միակ դու գիտես Նորա ծննդեան գաղտնիքը, դու Նորան պարտաւոր էիր, ինչպէս մայր, այդ խօսքերի վնասակարութիւնը ու փորձանքը բացատրել, այն ժամանակ Նա օրէնքի խիստ պատժից ազատուած կը լինէր: Թող Նա ամենասուրբ մարդը և լինէր աշխարհիս երեսին, դարձեալ մի այդպիսի խօսակցութիւն թէ չափից դուրս յանդուգն և թէ սրբապղծութիւն է: Մեծ Աստուածը, ահաւոր Տէրը և Տիեզերքի Հրամանատարը ոչ մի ժամանակ իւր Աստուածութիւնը մի ուրիշ մարդու չըպիտի ներշնչէր, այնպէս չէ միթէ: Կամ միթէ դու չը գիտես, որ այդ սխալ հասկացողութիւն է, որը տարածուած է Նորա մասին, որ այդ շշուկը, մէկից դէպի միւսը անցնելով, գրգռում է տարօրինակ մտքեր և մարդկային հոգիների մէջ երկիւղ և կասկած է ցանում: Մինչև անգամ և ես, Բարաբբաս, կոպիտ և անհաւատ եղեռնագործս, անհանգստութեամբ մտատանջւում եմ այդ հարցի վերայ, ամէն մի տեղ ճշմարտութիւն պտրտելով և այդպիսին չը գտնելով: Ամբողջ հանելուկը քեզնից է կախուած. դու Նազովրեցւու Մայրն ես: Ճշմարտութիւն յայտնելու ժամանակը դեռ ևս չէ անցել, դու այդ բոլոր գաղտնիքը կարող ես բացատրել, և այդպէս, խնդրում եմ, պատասխան տուր ինձ:

Բարաբբայի աղերսագական ակնարկը քննողական կերպով ուսումնասիրում էր նէրա խաղաղ դէմքը, բայց դարձեալ նէրա շուրթերը չէին շարժւում, մինչև անգամ ի պատասխան հառաչք մի ևս չը հնչեց:

—Ինչո՞ւ համար ես լռում դու.—բացականչեց Բարաբբան՝ խիստ գրգռմունքի և այլայլութեան մէջ:—Միթէ չես մտածել դու, թէ ինչ ինչ հետևանքներ կը լինեն, եթէ թոյլ տաս դու այդ խելքից դուրս ձայնը տարածուէ անարգելք: Եթէ քո մեռած Որդուն Աստուծոյ տեղ ընդունեն, այն ժամանակ Իսրայէլի ազգի վերայ նզովք պիտի ընկնէ հէնց այն բանի համար, որ Նորան մահացրել է: Իսրայէլը արհամարհուած պիտի լինէ ամբողջ աշխարհիս մէջ, համայն մարդկութեան բերանով և յաւիտենական դարերի ընթացքում: Մեր վերայ անէծք և պատիժ կը թափէ այն բանի համար, որ մենք Աստուած Մեսիային ուրացանք և անգոսնեցինք. աշխարհիս բոլոր ազգերը, մեր խստութեան համար, կը արհամարհեն մեզ ու կը փախչեն մեզանից մեր կամակորութեան և անհաւատութեան պատճառով: Մարիամ, չէ թէ դու ճշմարիտը գիտես, ասա՛,—միթէ դու թոյլ պիտի տաս, որ ամբողջ աշխարհս երկրպագութիւն տայ այն

բանին,—ինչը՝ խաբեբայութիւն, հասարակ առասպել և սուտ ու պատիր տարաձայնութիւն է լոկ։ Այո, այդ բոլորը այդպէս է և այդ բոլորի վերայ Թագաւորում է՝ սուտը։

Բայց երբ այդ վերջին խօսքը արտասանեց նա, յանկարծ մի տեսակ սառն դող բռնեց նորան, աչքերի առջև պղտորուեց ու նա միանգամից Թուլացաւ։ Մեծ դժուարութեամբ նա ուշքի եկաւ և դեռ ես միևնոյն տեղում կանգնելով, ուղիղ և ուշադիր Նէրա վերայ նայեց։ Նա չէր շարժվում, բայց մի ինչ որ բան էր փոխուել Նէրա տեսքի մէջ, մի ինչ որ անըմբռնելի բան, որը վախեցրեց Բարաբբային։ Արեգակից փոխ չը առնուած գաղտնախորհուրդ լոյսը՝ Նէրա դէմքն էր լուսաւորում. խոհուն աչերի մէջ կայծիկներ էին պէծպըծում և աւելի փայլուն, քան թէ լուսնի շողքերը ծովի ծոցի վերայ։ Իրեն ալէծփող զգացմունքների չափազանցութիւնից համարեա գիտակցութիւնը կորցնելով, Բարաբբան անսպասելի կերպով ծնկների վերայ ընկաւ, Նէրա ձիւնափայլ հանդերձների ծայրը մի ձեռքով ըմբռնելով։

—Մարիամ,—խուլատ ձայնով շշնջաց նա,—կարեկից եղիր ինձ՝ մեղաւորիս, դէպի համայն աշխարհս ողորմածասիրութեան և գթասիրութեան զգացմունքից դրդուած, յայտնիր ինձ ճշմարիտը և իսկութիւնը։ Ասա, քո Որդու հայրը Ո՞վ էր։

Նորա յանդուգն պատասխանին խորին լռութիւնը պատասխանեց։ Անուշահոտ շուշանների վերեից Նէրա ճառագայթափայլ դէմքը կենդանացաւ անլսելի ճարտարախօսութեամբ. աչերը բարձրացնելով, Նէ դէպի վեր նայեց, դէպի հեռու—երկնային կապուտակ եթերի խորքը, անըմբռնելի անդունդի մէջ. գաղտնի ու հրաշալի մտաքով պայծառակերպուած, Նէ, այնպէս էր երեւում, հնազանդուելով անլսելի երկնային կոչին, Թռչելու վերայ էր։ Արեգակը, դանդաղութեամբ ծածկուելով հորիզոնի հետևը, բոլորովին անյայտացաւ և երկինքը արևելեան արշալոյսի աղօտ գոյնով ծածկուեց, որը փայլփլուն աստղերի հակիրճ աւետաբեր էր։

—Ոչ մի բառ, ոչ մի խօսք.—գոչաց Բարաբբան, համբերութիւնը կորցրած և ոտքի կանգնելով։—Ո՞հ, կին դու. դու ընդմիշտ պիտի խաբես մարդկանց։ Մի՞թէ մինչև անգամ և մեր Աստուածը քեզնից է ծնուած, և մեր հաւատքը ես քեզնով պիտի մոլորեցնես։ Մի՞թէ դու պէտք է և մեր հոգու վերայ իշխես, այնպէս, որ՝ մինչև անգամ՝ և գրախտի լոյսը ես քեզնով տարածուէ։ Եթէ դու մահկանացու ես, եթէ դու սուրբ ես, եթէ դու ցանկանում ես, որ ճշմարտութիւնը բոլորին ես յայտնի լինէ, խօսիր, Մարիամ, դու, այն կինդ, որ այն

Թագաւորին ծնար, որին այժմ գահի փոխարէն խաչ տուին և փշեայ պսակ՝ թագի փոխանակ։ Կարող է պատահել, դու մի որևէ վրէժ ես մտածել, մի յաւիտենական անագորոյն ոխ, ու երդուել ես դու, որ մարդիկ պիտի սկսեն աստուածացնել Նորան, Որին արհամարհեցին Նորա, և աղօթել Նորան, Որին Նոքա իսկ սպանեցին։ Այնպէս չէ՞։ Եթէ այդպէս է, ուրեմն վրէժը զարհուրելի կը լինէ ու ահաւելի, վրէժ՝—աւելի Թունաւոր ամենասարսափելի տանջանքներից իսկ։ Ինչո՞ւ ես լռում, Մարիամ։ Ի՞նչ պատճառով—բարկութիւնից թէ սիրուց։

Նէրա երկնագեղ շուրթերը Թեթևութեամբ դողացին, բայց Նա դարձեալ ոչինչ չը պատասխանեց։ Նորա աչերը առաջուայ նման դէպի երկինք էին յառած, կարծես թէ աղօթքի ժամանակ։

—Ի՞նչ մի օգուտ պիտի տայ քեզ լռութիւնը.—գրգռուած՝ շարունակեց Բարաբբան։—Եթէ մեծազօր աներևոյթ Աստուածը իւր գաղտնախորհուրդ Հոգին է փչել քեզ և դու սուրբ հոգւով ես լցուած, ուրեմն մի՞թէ դու այդ բոլորից հրաշալի չես։ Մի՞թէ քո կեանքը ամբողջ կանացի ցեղը չէ սրբագործում, բարձրացնելով նորա անունը և յաւիտենական դարերի ընթացքում պատնէշ կազմելով։ Իսկ եթէ դու և ոչ մի հրաշք պատմել կարող չես,—ուրեմն դու խստասրտութեան մարմնացումն ես, քանզի քո արդարամիտ լինելու մերժմամբ, դու մի այն տեսակ սուտ չարաբաստիկ ցանց ես հիւսում աշխարհիս շուրջը, որի երևակայելն իսկ ոչոք չի յանդգնիլ։ Մտածի՛ր, դատի՛ր։ Պարտակա՞ն են արդեօք իմաստուն մարդիկ, արքաներ, աշխարհակալներ իրենց հպարտ գլուխը խոնարհել մի հասարակ կնոջ առջև՝ իւր մանուկով։ Համայն բնութեան սիմվօլը (նշանաբան), որի մէջ աստուածային ոչինչ չը կայ։ Կամ, կարող է պատահել ես, դու, մայրդ Քրիստոսի և՝ պատմուածքներին նայելով՝ Կոյսդ, ցանկանում ես մարդկանց ցեղերին և զանազան ազգերին յիմարացնել ու Նոցա ես պատրել։ Ոչոք և ոչ մի ժամանակ անկարող էր գիտենալ քեզ, այդպիսի լուրեր են պտտում, բայց դու և ամուսին ունիս, դու Որդի ես ունէիր։ Կամ մի՞թէ դու ինքդ հրաշք ես իսկ։ Կամ թէ չը վստահած փառքով մխիթարուելով, դու համբերում ես, որ քեզ համար այնքան՝—ճշմարտութիւնից դուրս՝—բաներ պատմեն և քո հասցէին հրաշքներ կցեն։ Ասա ինձ, մի՞թէ ասածներիս և ոչ մէկը ճշմարիտ է։

Բայց այնու՝ ամենայնիւ՝ Նէ ոչինչ չը պատասխանեց։ Միմիայն Նէ իւր աչերը Բարաբբայի վերայ խոնարհեց՝ Թեթև յանդիմանութեան և կարեկցութեան արտայայտութեամբ։

—Ես չեմ կամենում անպատիւ խօսք ասել քեզ, կամ մի որևէ գործողութեան մէջ մեղադրել,—շարունակեց Բարաբբան,—Նէրա ակնարկից չփոթուած: — Ես գիտեմ, որ դու վշտալի Մայր ես, թէպէտ,—իմ կարծիքով,—քո դէմքը աւելի ուրախութիւն է արտայայտում, քան թէ տխրութիւն: Բայց ես այն մարդկանցից մէկն եմ, որոնք արցունքով և աղօթքով քեզնից պատասխան են խնդրելու: Ես մի միայնակ ու անբախտ մեղապարտ եմ, խորտակուած սրտով, կեանքը ինձ համար ոչինչ է, ծիսակատարութիւնները ոչնչութիւն, մարդկանց կարծիքը՝ ունայնութիւն: Ես ճշմարտութիւն եմ փնտռում, ցանկալով դորա մէջ գէթ փոքր ինչ սփոփանք գտնել ու մխիթարուել, իսկ ինձ նմաններ և այդ տեսակ միտք ունեցողներ հազար հազար կան. բիւրաւոր մարդիկ գուցան են ողբում: Եթէ ես կարողանայի և մինչոց գտնէի հաւատալու,—կրհաւատայի արդէն,—իսկ դու ես ոչինչ չես ասում,—դու ինձ իմ անհասկացողութեան մէջ ես թողնում: Եթէ քո Որդին Աստուծոյ Հոգուց է ծնուած, ես Նորան երկրպագութիւն պիտի տամ, պիտի պաշտեմ ես Նորան, նոյնպէս և քեզ, բայց եթէ Նա միմիայն Մարդ է, այն ժամանակ ես կը սկսեմ Նորա մասին կարեկցութեամբ մտածել, որպէս մի առնական սիրտ ունեցողի և ազնիւ մարդու վերայ կը լաւէի, ես կը խղճամ Նորան, որին չարանենգութեամբ սպանեցին, իսկ քո մասին, ինչպէս հէք կնոջ, որին ճակատագիրը այդքան հալածել է, վսեմ գաղափար պիտի կազմեմ: Ահա և վախճանը ասացի: Այժմ քո խօսքերին եմ կարօտ, որոնց անհամբեր սպասելով, հոգս իսկ փափագում եմ: Ո՜հ, դու՝ երևի՝ քարէ կամ պողպատեայ սիրտ ունիս, եթէ, այս անգամ ես, չը պատասխանես ինձ: Բարէ, լռակեաց Տիրուհի: Խօսի՛ր դու:

Այս անգամ Նէ թեթևակի շարժուեց, բայց չը խօսեց: Դէպի Բարաբբայի կողմը թեքելով իր գլուխը՝ անուշահոտ շուշանների վերայ, Նէ Նորա վերայ դարձեալ նայեց քնքուշ մայրութեամբ: Զմայլած և երկիւղով բռնուած՝ Բարաբբան ակամայ տատանուեց: Նէրա հետևից իր չորս կողմը մի տեսակ ստուար լոյս երևաց,—շուրջը ճաճանչներ տարածելով,—մի տեսակ հրային փայլումն, որը Նէրա երկու կողմերի վերայ՝ կարծես երկու փայլուն թևեր էր կազմում, որոնց մէջ Նէրա խաղաղ, մեծախորհուրդ պատկերը դըշխոյութեան հանդստութեամբ էր արտափայլում: Այդ անդրաշխարհային ցոլացումն հազարաւոր քնքուշ ծիածանագոյն սաւերներով էր շնչում, որոնց ներգործութեան տակ՝ Բարաբբան, զմայլմունքի ու հիասթափութեան թոյլ ճչոցով, ծնկաչոք ընկաւ:

—Տէր իմ, ողորմեա ինձ,—շշնջաց նա, պղտոր աչքերով ճառագայթացող հրաշքին հետևելով, և ակնածառոյց նայելով այն առանձնաշուք կերպարանքին, որը այնքան հանդարտ կանգնած էր՝ շուշանները ձեռքին: Տէր, ո՞վ ես: Ես կարծում էի, որ կնոջ հետ եմ խօսում, իսկ սա—հրեշտակ է:

Զարմանքի սաւերը սահեց Նէրա դէմքի վերայից: Ակնյայտնի էր, որ Նէ ինքը չը գիտէր այն խորհրդաւոր փայլմունքի մասին, որը շրջապատել էր իրեն: Այդ լոյսը նոյնքան յանկարծակի անյայտացաւ, ինչքան հայտնեց և երևաց: Ծնկաչոք Բարաբբան, դէպի վեր նայելով, մտածեց, որ անշուշտ տեսողութիւնը պիտի պատրած լինէր իրեն, և թէ այդ բնութեան անհուն պատրանքներից մէկն էր անշուշտ: Նէ դէպի նա մօտեցաւ, բոլորովին մօտ, երկար նայեց Նորա աչքերի մէջ և հազիւ լսելի շշնջաց:

—Վաղը:

Անլսելի քայլերով Նէ անցաւ Նորա մօտից, կամ աւելի շուտ լողաց, ինչպէս հոգի, այնտեղ,—դէպի քարայրի կողմը: Բարաբբան շտապով վայր թռչեց, մի տեսակ ձգողական ուժի ազդեցութեան տակ, վազեց Նէրա հետևից և բարձր ձայնով գոռալ սկսեց.

—Մարիամ, Մարիամ Նազարէթի: Կին կամ հրեշտակ, ով էլ որ լինես դու, մի մեղադրիր ինձ: Ես սոսկ ճշմարտութիւնն էի փնտռում և այնպէս, ինչպէս համայն աշխարհն է պտրտո՞ւմ: Ասա բոլոր ճշմարտութիւնը քո Որդու մասին: Պիտի պատասխանես դու, վերջապէս:

Նէ դէպի նա դարձրեց իր գլուխը մեծախորհուրդ խոնարհութեան տեսքով:

—Վաղը,—կրկնեց Նէ, և Նէրա ձայնը, թւում էր, տարածուեց օդի մէջ, ընդ թափ անցնելով ժայռերի իւրաքանչիւր պատռուածքից, մինչ հեռաւոր դաշտերը հասնելով, և՝—համայն տիեզերքին խոստացած առաքելութիւնը՝—իր հետ տանելով, որը մի բառի մէջ էր կայանում.

Վաղը:

Ապա թեթև քայլուածքով Նէ դէպի առաջ գնաց և անյայտացաւ:

Վրդովմունքից խեղդուելով, Բարաբբան աւազոտ գետնի վերայ ընկաւ. Նա ամբողջ մարմնով դողում էր և 'ի զուր էր ջանում սառնասրտութիւն գտնելու:

Վաղը,—ասաց նա:—Բայց ինչ կարող է վաղը բերել: Միթէ Նէրա մեռած Որդին կարող է կենդանանալ: Միթէ Նէ ես այդ յոյ-

ռով է մխիթարւում: Եթէ որ Նա իրաւացի ժայռերը խորտակէ և յարութիւն առնէ, այն ժամանակ այդ զմայլեցուցիչ և անբնական հաստատութիւն կը լինէ՝ յօգուտ Նորա Աստուածութեան և այդ՝ բոլորի հանդէպ,—բայց մի այդպիսի հրաշք չէ կարող լինել,—անբնական մի բան է դա. թէպէտ և այժմ իսկ ես կարող պիտի լինեմ հաւատալու, որ տարօրինակ գաղտնիք է տիրում աշխարհիս վերայ և թէ Աստուծոյ միտքը գոյութիւն ունէ և աշխարհիս խորքերի մէջ: Երկար, երկար դարեր Աստուած մեզ մոռանում էր. միթէ հէնց ներկայումս յիշեց Նա մեզ, երբ մենք Նորան համարեա թէ մոռացանք": Միթէ Նա իրաւացի յաճախեց մեզ մօտ և ընդունելութիւն չը գտաւ: Եթէ դա այդպէս է, ուրեմն ինչ պիտի լինէ մեր ճակատագիրը: Ո՜հ, մենք՝ մարդիկս,—բոլորս էլ մի տեսակ ինքնավստահ յիմարներ ենք և ես բոլոր յիմարների ամենայիմարն եմ. որովհետև այնպէս երևակայեցի, որ այն Նազարէթից եկած կնոջ չուրջը երկնային փայլ տեսայ—նոյնպէս, ինչպէս և պատարագանատան մէջ՝ նէրա Որդու կերպարանքի շո՜ւրջը: Մի բան իրաւ է, որ մի տեսակ խաբերայութիւն կար, որը պղտորուած տեսողութեան պատրանքից է առաջանում, և կապ ունէ յոգնածութեան և ուժասպառութեան հետ, որոնք անցնելիս—անյայտանում է և լոյսը: Ի՜նչքան ստէպ և քանի քանի անգամ է մեր երևակայութիւնը մեզ հետ խաղ անում: Հիւանդ մարդը տեսիլներ է տեսնում և մտածում է, որ այդ ճշգրտատիպ իրողութիւն է, և ես, երկար բանտարկութիւնից թուլացած և կերակրի զրկողութիւնից—մաշուած, միևնոյն ժամանակ՝ գրգռուած և ախրած,—նոյնպէս իմ երևակայութեանը զոհ գնացի: Ինչքան ուժեղ էի ես մի ժամանակ, ինչպէս որ քաջ էի նախ, իսկ ներկայումս՝ այդ Նազարէթից եկած Մարիամի մի ակնարկը խռովում է ինձ և ես շփոթւում եմ: Վաղը—ստաց նէ: Ես կը ցանկանայի, որ այդ օրը արդէն իսկ սկսէր: Բայց դեռ ևս մթնում է: Ես դէպի Մելխիօրը գնամ և ասեմ նորան, թէ ինչպէս վճռեցի ես գիշերս անցկացնել: Ապա այստեղ կը վերադառնամ և գաղտասոյր կը սպասեմ հրաշագործ օրուայ արշալոյսին:

Եւ նա շտապով դէպի Երուսաղէմ տանող ճանապարհը շուռ եկաւ: Ուղիղ քաղաքի դռների մօտ՝ նա մի խումբ զինուորների պատահեց, որոնց գլուխը Գալբուսն էր կազմում, և որի հրամանի տակ և հետևում էին նոքա: Նոքա գնում էին գերեզմանի մօտ կանգնած պահնակին փոխելու, ամբողջ գիշերը այնտեղ մնալու համար: Նա մի կողմ քաշուեց, որպէս զի նոցա անցնելու ճանապարհ տայ: Նոքա՝—ինչպէս երկար մեծկակ պարան՝—բացուեցին ճանապարհի

վերայ. միևնոյն ժամանակ լուսինը, ինչպէս մի մեծ ոսկեայ վահան, քաղաքի վերայ երևաց, իւր երկար շողքերը մինչ անդին լեռները ձգելով, ու համր զարմանքի մէջ ուշադիր լինելով այն Աստուածային գաղտնիքին, Որը գետնի մէջ էր թաղուած:

X.

Քո հրամանը կատարուած կը լինէ, բայց այնու ամենայնիւ, Կայիափա, այդ թէ տարօրինակ է և թէ չը լսուած մի բան:

Այդ ասողը մի ծերունի դպիր էր,—դժգոյն, նիհար, բայց խելօք դէմքով ու բարձր բաց ճակատով, որը նա այժմ կնճռել էր՝—խորին անհասկացողութեան տեսքով, մի մարդ էր նա: Նա քահանայապետի ընդունարան—սենեակում էր նստած: Իսկ ինքը՝ քահանայապետը ոսկեայ քանդակուած թիկնաթոռի վերայ մեծապէս բազմել էր նորա հանդէպ: Սենեակը շատ պայծառ էր լուսաւորուած. սեղանը ամբողջովին մագաղաթեայ թերթերով էր ծածկուած. բաց պատուհանի միջից ապարանքի մեծ այգին էր երևում, որը ամբողջովին թափուած էր լուսնի խորհրդաւոր լոյսով: Զարմանթ օրուայ երեկոն էր այդ:

—Թէպէտ և իմ միտքը արտակարգ և չը լսուած է թուում,—սառնութեամբ հակաճառեց Կայիափան,—բայց իմ հրամանս այդպէս է: Հակառակ կանգնել և վիճել քո գործը չէ, դու պարտական ես նոցա կամքը կատարել, որոնք քեզ վերայ մեծ են դրուած: Ինչու համար դու և քո ծառայակիցներդ անշուշտ պատմութեան մէջ պիտի ձգէք խելագար աստուածաննգի թէ կարճ կեանքը և թէ արհամարհանք ազդող և անարգելի մահը:

—Քո «ինչու համարին» միմիայն մի պատասխան կայ,—հազիւ նկատելի ժպիտով՝ ասաց դպիրը:—Այդպէս է մեր սովորութիւնը, դարէ դար այդ է եղել մեր սկզբունքը. մեր գրքերի մէջ ամեն ինչ գրել*), թերևս անցքերն անգամ, առանց զանազանութեան, չար

*) Մինչև անգամ Տալմուդը ևս Աւետարանական ճշմարտութիւնը հաստատելու է ծառայում. Մատթէոսը, Թադէոսը և Յակոբոսը, որոնք իրենց յարակցութիւնը չէին խզել հրէից ատեանի հետ, յիշատակուած են Բաբելոնական Տալմուդում (Traité du Sanhédrin, X, 43, 1): Միևնոյն ժամանակ Տալմուդը և ուրանում է Քրիստոսի հրաշագործական իշխանութիւնը. «Երբ րաբբի Եղիազարը, Դա մի որդին, օձահար էր, այն ժամանակ Զեխանիի որդի Յակոբը եկաւ նորա մօտ և դար-

կամ բարի մարդկանց վերաբերեալ։ Այդ Նազովրեցի ֆանատիկոսի (մոլեռանդ) պատմութիւնը արժանի է, որ նկատողութեան առնուի, թէկուզ միմիայն Նորա համար, որպէսզի մեկուսացնուին այն զանազան անբնական առասպելները, որոնք արդէն տարածուել են Նորա մասին։ Նորա ուսմունքից մի քանի բաներ իմաստուն էին, մի քանիսը —անմիտ, որովհետև այդպիսիները անիրագործելի էին. գուցէ Նորա մտքերից լաւերը քննադատելու կարիք զգան և ուղղակի Եգիպտոսից ծնունդ առած լինին, որոնցով կարելի կը լինէ հաստատել, որ Նա միմիայն արձագանգ էր կազմում մի որևէ վաղուց կորած հաւատքի։ Խոստովանում եմ քեզ, Կայիափա, ես ոչ մի պատճառ չեմ գտնում, որը ստիպել կարողանար մեզ, բոլորովին ջնջել Նորան պատմութեան միջից։

Կայիափան շառագունեց, ապա Նորա երեսի գոյնը նետեց և նա ջղաձգութեամբ իւր բազկաթոռի քանդակազարդ բռնաթևերը սեղմեց։

—Դու իմաստակի մէկն ես և շատ նեղ տեսութեան տէր.—բարկացկոտ գոռաց նա։—Դու այն չես կարող նախատեսնել, ինչ ես եմ տեսնում։ Միթէ չը գիտես դու, որ ժողովրդի գրութիւնը փոխուել է այլես, որ նոքա արդէն սկսել են ափսոսալ իրենց Մարգարէի մահը և լաց են լինում ու ասում, որ Նա նոցա բազմաթիւ բարութիւն է արել։ Բացի դա,—Յուդա Իսկարիովտացու չարաբաստիկ վախճանը բոլորին էլ խոր ցնցել է, վասն զի բոլորն էլ գիտեն արդէն, որ նա խղճի խայթից դադար չը գտնելով, իւր Վարդապետին մատնելու վերաբերութեամբ,—խեղդել է իւրեն։ Այդ տեսակ ձայները աւելի և աւելի են տարածուում ու միշտ պիտի յիշուեն։ Մենք և ամբողջ սինեդրիոնը անխիղճ մարդասպանների հռչակ կը ստանանք, իսկ Խաչեցեալ Յանցաւորին անբաղդ Մարտիրոսի պիտի փոխարկեն։ Հէնց այդ բանի համար էլ, Ձերնա, ես չեմ ցանկանում, որ Նորա մասին մեր մատեաններում յիշէին։ Թո՛ղ կորչէ Նորա անունը, իսկ Նորա ուսմունքը կը մոռացուի, որովհետև և ոչ ոք ու ոչ մի ժամանակ կարող պիտի լինէր հարցնելու. ո՞վ էր այդ Մարդը։ Ինչո՞ւ համար այդ Նազովրեցուն մահուամբ դատապարտեցին։

—Էլ աւելի պիտի հարցնեն, եթէ ձայներից բացի, այլևս ոչ մի

ձաւ Նորան խօսքերով. «Ես կամենում եմ քեզ հետ խօսել Յիսուսի անունով, Պանդերի որդու»։—Ռաբբի Իսմայիլը գոռաց այդ պահուն. «ոչ, այդ չէ կարելի թոյլ տալ»։—«Լաւ է մեռնել, ասաց միւսը, քան լսել այդ անունը»։ (Talmud de Jerusalem. Traité, Advoda Sarah, p. 46. 4.—Troluck, Claubwürdigheit der Evang. Ceschichte, p. 72)։

Ծանօթութիւն Հայ թարգմանչի։

բանի վերայ կարելի չը լինէ վստահանալու,—հակառակեց Ձերնան՝ սառնութեամբ, իւր մագաղաթեայ փաթեթները հաւաքելով։ Եթէ դու ցանկանաս պիտի դարերով այդ մարդուն փառաբանել, այն ժամանակ թոյլ տուր, որ Նորա մասին բերանացի պատմուածք պտտեն և ոչ մի գրի առնուափաստ չը լինէ։ Երբեմն ժողովրդի ձայնը հասարակ մարդուն Աստուած է ընդունում, մինչդեռ պատմութեան ամբողջ հատորներ անընդունակ են այդ անելու։ Ասում եմ քեզ, որ ես կը գերադասէի, որ խօսէին իմ մասին, քան թէ գրէին։ Եթէ ես անտարբեր և սառնութեամբ Յիսուս Նազովրեցու պատմութիւնը գրելու լինեմ, ինչպէս մի չուառ ու անխելք արարածի վերայ կը գրէի, և բացայայտեմ, որ Նա իրեն Որդի Աստուծոյ երևակայեց, որպիսի սրբապղծութեան հիման վերայ և մահուան դատապարտուեց, այն ժամանակ ոչոք, ոչ այժմ, ոչ էլ ապագայում, այլ ես չը պիտի հետաքրքիր լինէ ու մտածէ Նորա մասին։

—Եթէ դու մի բան գրես, այն ժամանակ պարտական ես և այն բոլորը գրել, ինչ որ իրաւացի կայ,—վրդովուած յայտարարեց Կայիափան։—Դու պարտաւոր ես խաւարի և երկրաշարժի մասին ևս պատմել, և ինչ տեսակ պիտի բացատրես դու այն աչքի ընկնող տըխուր անցքի շարժառիթը, որ տաճարի վարագոյրը վերին ծայրից մինչ վարին տուտը պատառուեց։

Ձերնան մտածեց։

—Իրաւացի դա մի տարօրինակ և զարհուրելի բան էր ու անբացատրելի անցք,—քրթմնջաց նա։—Թէպէտ, կարելի է և այսպէս ասել, որ վերջին օրերը անսովոր տաք էին, երկրաշարժը և փոթորիկը բնութեան երևոյթներն են, որոնք միշտ էլ կարող էին պատահել, իսկ տաճարի վարագոյրը գուցէ կայծակի հարուածից պատառուած լինի։ Դու քո սովորական հանդարտութիւնից դուրս ես եկել, Կայիափա, հակառակ դէպքում դու դորա մէջ ոչ մի այնպիսի բան չը պիտի գտնէիր, որի պատճառով կարելի լինէր գրի չը անցկացնել և այդ երևոյթները իսկ։

Ներքին չարութեան ուժգին վրդովմունքից սաստիկ դողալով, քահանայապետը ոտքի կանգնեց։

—Կամակոր գելի, դու չը պիտի գրես այդ, հասկանո՞ւմ ես,—իրեն կորցրած գոռաց նա։—Ես քո մտքինդ լաւ եմ զգում, ես միշտ քո արծարծած միտքը տեսնում եմ և ապա թէ իմ կնիքն եմ դնում ի նշան պատմութեանդ ճշմարտութեան։ Եթէ դու սոսկ համարձակուես Յիսուս Նազովրեցու անունը գրել, ես կը կտրատեմ, ծուիկ ծուիկ պիտի թափեմ քո մագաղաթը, Նորա մանրկեկ մասնիկ-

ները քամուն պիտի տամ, իսկ քեզ պարտաւորութիւն ստիպուած պաշտօնիցդ հեռացնեմ պիտի:

Ջերնան նոյնպէս կանգնեց, տարակուսական կերպով լաւ գըրգըռուած իշխանաւորի վերայ նայելով:

—Ի՛նչ. զուր տեղը մի բարկանայ, Կայիափա,—կամացուկ ձայնով ասաց նա,—ես քո հրամանին չեմ հակառակել, և կատարած կը լինեմ. ես միմիայն քեզ կամենում էի հաստատած լինել, որ այդ բանից ոչ մի տարակոյս չէ կարող ծագել ու ոչ մի երկիւղ չը պէտք է կրել.—չէ թէ այդ անխաղաղ և խաբդաւիչ Նազովրեցին այլ ես մեռած է: Բայց և այնպէս, ես քեզ լիովին հնազանդիմ պիտի. մեր փաստաթղթերի և մատեան կազմող փաթեթների մէջ ոչ մի խօսք չի լինիլ, որը կախումն ունենայ այսպէս կոչուած «Թագաւոր Հրէից» Մարդուն. մենք նորան մոռացութեան կը տանք:

—Այո, այդպէս աւելի լաւ է,—և Կայիափան, փոքր ինչ հանգըստանալով, իր նախկին տեղը բռնեց:—Ինչ որ գրիչը չի գրել, այն աչքը չի կարդալ: Դուք, դպիրներդ ընդհանրապէս, մեր երկրի միակ ոյժն էք: Ենթադրենք, որ դուք մի որևէ յաղթութիւն չէք գրել և աշխարհը չը պիտի գիտենայ, որ այդ յաղթութիւնը տարած է. եթէ դուք ձեր պատմութիւնների մէջ մի մարդու մասին չը խօսէք, այն ժամանակ ո՞վ պիտի իմանայ, որ նա գոյութիւն ունէր անգամ: Ես ձայնի ուժին, ինչպէս դու, չեմ հաւատում: Ոմանց պատմութիւններին և աւանդներին ո՞վ պիտի նշանակութիւն տայ:

—Ո՞վ: Բոլորն էլ,—հեգնութեամբ պատասխանեց Ջերնան:—Մարդ շատ անգամ չի հաւատալ այն բանին, ինչ պատմութեան մէջ է գրուած, այլ այն ամեն ձայներին կը հաւատայ, ինչ դրացին կասէ նորան: Բացի դա, Կայիափա, դու չը պէտք է մոռանաս, որ կան և ուրիշները, որոնք նոյնպէս ճանաչում էին Նազովրեցուն և նոքա ևս կարող են նորա մասին գրել. Նորան հետևողներ շատ կային...

—Բոլորն էլ անկիրթ մարդիկ,—հակառակեց քահանայապետը,—անուս և ագէտ: Իրաւացի լաւ ընկերակցութիւն է: Գալիլիայից եկած ծոյլ ձկնորսներ, գողեր, խաբեբաներ, հաշմանդամներ և փողոցային շրջմոլիկներ. այդ տեսակ մարդիկ ընդունակ չեն և ոչ մի տող գրելու: Կամ՝ մինչև անգամ՝ նոքա և գրէին իսկ, նոցա պատմութեանը ո՞վ պիտի հաւատ ընծայէ, երբ հրէական պատմութեան մէջ ոչինչ չը պէտք է լինէ:

Ջերնան այլ ես ոչ մի հակաճառութիւն չը բերեց, այդ հարցը վերջնականապէս գործքի ընթացքը լուծեց: Թէպէտ Ջերնան ևս իր կարծիքը ունէր, բայց նա երկիւղից չը արտայայտեց այդ: Նա մի-

միայն հնազանդութեան շարժումներ գործեց և օտար իրերի վերաբերեալ մի քանի նկատողութիւններից զ՚կնի, իր մագաղաթեայ փաթեթները հաւաքեց, և՝ խոնարհութեամբ գլուխ տալով քահանայապետին՝ [illegible] կողմից ապարանքից դուրս եկաւ:

Կայիափան, միայնակ մնալով, իր բազկաթոռը չը թողեց, արի վերայ բազմած, խոր մտատանջութեան մէջ ընկաւ: Նորա դէմքը փոքրացել և երեսը խստութեամբ դուրս էր ցցուել. իսկ արտևանունքները՝ քնի պակասութիւնից՝ ծանրացել էին:

—Ինչո՞ւ պիտի ես այդքան թուլանայի,—դանդաղ հառաչելով շշնջաց նա:—Ամենաչնչին, աննշան բաներն իսկ խռովում են ինձ, իմ ուղեղս դատարկ է. Նազովրեցի Մարդու պատկերից ես չեմ կարողանում բաժանուել. մի ինչ որ յաղթական բան կար նորա աչերի մէջ, երբ նա հոգեվարքի մէջ էր տակաւին, և, միևնոյն ժամանակ, մի ինչ որ բարկացկոտ արտայայտութիւն, որից իմ հոգիս ամբողջովին դողաց: Բայց ես հանգստացրի նորան և նորա ուսմունքը կըտրեցի: Նոր հաւատք չի լինիլ. մենք միակ Եհովայով բաւականանք պիտի. վրիժառու, խիստ ու անհարկու և նախանձոտ Աստուծով, որի անունից իսկ համայն աշխարհ է դողում: Եթէ որ Աստուած սիրոյ Աստուած եղած լինէր, այն ժամանակ մարդ չափից դուրս կը հպարտանար: Միթէ ճճուն կարող է ենթադրել, որ Աստուածութիւնը իր մասին խնամք է տանում և նոյն իսկ սիրում է: Եթէ սկզբին այդ տեսակ խելայեղութեան հաւատալ, այն ժամանակ ժողովրդին մենք անկարող պիտի լինէինք մեր ձեռքի տակ պահելու. իւրաքանչիւր անհատ ոչ դէպի մեզ, այլ Աստծուն կը դիմէր ու կը երևակայէր որ բոլորն էլ ազատ են և իրար հետ հաւասար իրաւունքով պիտի վարուեն: Ա՜խ, ինչ չարաթ էր այսօր, ինչ մի չարաբաստիկ օր: Իւրաքանչիւր րոպէն, առանձին վերցրուած, դառնութեամբ է լցուած, հէնց նոյն իսկ դեռ վաղ առաւօտից, երբ խելքահան եղած Իսկարիովտը նզովքով ինձ վերայ յարձակուեց, և, անէծքի տարափի տակ, իր կորած աղջկանը պահանջելով, ինձ արհամարհական խօսքերի տակ ամօթահար արաւ: Բայց միթէ գիտեմ ես, թէ ուր է պահուած նորա աղջիկը: Կը ցանկայի գիտենալ, իրաւացի, ո՞վ կարող պիտի լինէր պատմել Իսկարիոտին իմ և նորա աղջկայ յարաբերութեան մասին: Միթէ բանտից արձակուած Բարաբբան, արդեօք նա չէ: Ոչ նա չէր կարող ոչ մի բան հասկանալ այդ հարցի վերաբերութեամբ: Ես միշտ զգոյշ էի, բայց՝ այնու ամենայնիւ՝ անգամ շշնջոցի միջոցով արտասանուած բամբասանքը մի այնպիսի թևերի վերայ է թռչում, որոնք

քամուց և կայծակից իսկ շուտ են կտրում ճանապարհը, և ո՞վ կարող է կանգնեցնել նոցա։ Ես պարտական եմ հնազանդութիւն ունենալ Թէպէտ Յուդիթին և սիրում եմ ես, բայց երբ գտնեն նորան, ես երկար օրերով չը պիտի գնամ նորա մօտ, չարախօսութեան տեղիք չը տալու համար։

Նա կանգնեց և դէպի լուսամուտը շարժուեց, որը բացուած լինելով, մի քանի սանդուխքների միջոցով ճոխ այգու ստուերախիտ ծառուղիների խորքն էր առաջնորդում։ Լուսամուտի նիշի վերայ յենուելով, նա՝ պաղ անտարբերութեամբ աչքերը դէպի աստղալից երկինքը ձգեց։

—Պահապանների վերջին գիշերն է,—ասաց նա։—Վաղը ամէն ինչ վերջացած կը լինէ։ Արեմաթացի խորհրդականը իւր խոստմունքը կատարեց,—նա անմիջապէս Թաղումից յետոյ այլ ևս չը յաճախեց գերեզմանը. Նազովրեցու աշակերտներն նոյնպէս, որոնք երկիւղով լցուած, այս ու այն կողմն են ցրուել,—կը նշանակէ, որ ամէն ինչ անոյշ անցաւ և յաջող վախճան պիտի ունենայ։ Վաղը ամբողջ ժողովրդի և խուժան բազմութեան ներկայութեամբ մենք հռչակենք պիտի այդ սուտ Մարգարէի խաբեբայութիւնը, որին շատերն էին հաւատում։ Իսկ այն ժամանակ մեզ վախենալու այլ ևս ոչինչ չի մնալ։ Բոլոր ինչ մոռացութեան ու խորին մտաթափութեան պատանքով ծածկուէ պիտի... Այդ ֆանատիկոսները իրաւացի մեծ անհանգստութիւն են պատճառում, աւելի ևս, քան թէ խառնակիչ աւազակները։ Մերկ ճշմարտութիւնը քաղաքագիտութիւն չէ և աշխարհս սոսկ ստով պէտք է կառավարել։

Նա իւր սեփհական ցինիքական (կեղտոտ) ենթադրութեան վերայ ժպտաց, ապա ակամայ դողաց, պատշգամբի տակ, Թփերի մէջ մի Թեթև շաչիւն լսելով։ Նա դէպի առաջ ընկաւ և Թանձր շուաքի միջից երկու հրավառ աչքեր, ինչպէս աստղներ, փայլփլեցին նորան՝ ՚ի պատասխան։

—Կայիափա,—խորին խաղաղութեան մէջ մի շշնջոց բարձրացաւ ու այնպէս հնչեց, ինչպէս թէ օձի խիստ շշուռն լինէր,—Կայիափա...

Անբացատրելի երկիւղով բռնուած, քահանայապետը շտապ վայր իջաւ սանդուխքներով և ուշի ուշով սկսեց թէ ուղղել և թէ տընտըղել, խիտ առ խիտ փռուած տերևներով օժտուած, Թաւաճիւղ Թփերը. համարեա թէ ուղիղ գետնի վերայ, պատառոտուն սպիտակ ազուածքի մէջ, մի կին էր կծկուել, երևի, Թագ կենալու նպատակով, որը, Թէպէտ այլայլուած, բայց հրաշալի գեղեցիկ դէմք ունէր։ Այդ

կինը անուշահոտ Թփերի ծածկոյթի տակից ժպտաց նորա երեսին Թէ տխուր և Թէ միևնոյն ժամանակ՝ ուրախ ժպիտով։ Կայիափան խուլ բացականչութիւն արձակեց։

—Յուդի՜Թ...

Եւ կիսակատաղի ու կիսազգուելի զգացմունքի տարափի մէջ, Կայիափան դուրս քաշեց նորան Թագստեան տեղից և շտապով իւր գրկի մէջ առաւ, անհանգստութեամբ շրջահայելով, համոզուելու համար, որ ոչոք նոցա չէ տեսնում, միևնոյն ժամանակ, աշխատելով ծածկել նորան,—իւր երկար վերարկուի քղանցքի տակ առնելով։

—Յուդիթ, Յուդիթ,—փսփսաց նա՝ ուժգին տրոփող սրտով, նորա ոսկեհուռ, սքանչելի մազերը շոյելով, անկարգ Թափթփած գիֆերին փոքր ինչ սովորական ձև տալու նպատակով։—Ի՞նչ ես անում այստեղ։ Ո՞ւր էիր դու։ Մի՞թէ չը գիտես դու, որ հայրդ փնտռում է քեզ, որ նա յուսահատ դրութեան մէջ ու արտասուաթաց աչքերով քո վերադարձին է սպասում։ Ինչո՞ւ դու վստահացար միայնակ այստեղ գալու։ Մի՞թէ դու քաղաքում պտտող բամբասանքներից և չար բարբաջանքից երկիւղ չես կրում։ Ինչ տեսակ խելացնորութիւն է այս, մտածի՛ր։ Ի՞նչ, եթէ կինս քեզ այստեղ տեսնելու լինէ, կամ ծառաներս քեզ բռնել կարողանան։ Այլ ևս և ոչ մի րոպէ պիտի այստեղ մնաս, այլ պարտաւոր ես տուն վերադառնալու. գնա՛նք։ Ես ինքս քեզ դէպի գաղտնի մուտքը պիտի ուղեկցեմ. ոչ մի կասկածանք չի լինիլ։ Գնանք, այլ ևս անկարելի է ժամավաճառ լինել, եթէ ցանկանում ես դու զազրախօսութիւնից խոյս տալ և լուտանքից խուսափե՛լ։

Բռնի՛ շարժմունքով Յուդիթը դուրս եկաւ նորա գրկից և տատանուեց,—ուշադիր նորա վերայ նայելով։ Տերևները և փշալից բոյսերը, նորա զգեստներից կպչելով, մի տեսակ ձև էին տալիս նորան, հնդկաթզենու կարմրերանգ ծաղիկը խրուած էր նորա գօտու մէջ, իսկ կրծքի վերայ այդ հէք կինը բոլորովին մի ինչոր սև առարկայ էր սեղմել, որին՝ ակնյայտնի էր՝ որ մեծ նշանակութիւն էր տալիս։

—Չէ Թէ Կայիափան ես դու,—ասաց նա՝ զննելով Կայիափային։
—Դու՝ քահանայապետդ Աստուծոյ, որ դէպի ինձ ունեցած սիրուցդ ինձ գերի ես դառել, սրբազան պաշտոնդ ստրկութեան փոխելով։ Ես փնտռել եմ քեզ ահա՛ ամբողջ օրուայ ընթացքում և չեմ կարողացել գտնել. քո օրինաւոր տիկնոջդ՝ Աննայի աղջկան, ես ահա այն լուսամուտի մօտ տեսայ. նա դառնութեամբ լաց էր լինում։ Մի՞թէ նա քեզ համար էր արտասուում։ Այդ շատ տարօրինակ բան կը լինէր։ Խելօք կինը տղամարդու համար արցունք չը պիտի Թափէ, այնպէս է,

չէ՛: Լսի՛ր, Կայիափա, դու ամբողջ Երուսաղէմի մարդկանցից հնազանդութիւն ես պահանջում—այժմ եկաւ և այն ժամը, որ դու ես պարտաւոր ինձ հնազանդելու:

Նորա վայրենի ակնարկից և շարժմունքներից վախեցած, Կայիափան դէպի նա մօտեցաւ, աշխատելով ընդգրկել նորան, բայց Յուդիթը աւելի հեռու քաշուեց. Յուդիթի աչքերը կայծակներ էին թափում:

—Ի՞նչ պիտի կարող լինիմ քեզ համար անելու, Յուդիթ.—շշընջաց նա, քնքուշ ձայնով, աշխատելով իւր փափուկ վարմունքով հանգստացնել Յուդիթին:—Դու գիտես, թէ ինչպէս ես միշտ պատրաստ եմ քեզ բաւականութիւն տալու, որի համար միշտ ինձ ուրախութիւն եմ սեպել կամքովդ գնալու: Միայն թէ աղերսում եմ քեզ, գնանք այս տեղից, մեզ կարող են նկատել ու մեր մասին թիւր բաներ կը խօսուին:

—Ամբողջ աշխարհը կարող պիտի լինէ մեզ վերայ նայելու,—յաղթական կերպով պատասխանեց Յուդիթը,—համայն բնութիւնը կարող է և լսել մեզ: Ինձ համար այդ միենոյն է: Ինչիս է աշխարհը, երբ Յուդան դեռ ես բարկանում է: Յուդան չէ կամենում ինձ հետ խօսել, նա մտածում է, որ այն ես էի, որ Նազովրեցուն մահուան պատիժ տալ տուի, մինչդեռ այդ դու էիր, դու, և միմիայն դո՛ւ: Եւ այդ դու պարտական ես ասել նորան. դու պարտաւոր ես քո մասնակցութիւնդ յայտարարե՛լ այդ գործի մէջ,—ոչ ես և ոչ նա չենք կամենում, մեր կողմից ոչ մի բանով տեղիք չը տուած, այդ պատիժը տանելո՛ւ: Եղբայրս այժմ տանը քնած է. ես նորան ասացի, որ դու երդուեցեր որ նորա անունը ամբողջ մեր ազգի մէջ փառաւոր առնես,—իսկ նա ոչինչ չէ պատասխանեց: Ես նորան խոստացայ ամեն մի նորութիւն իմանալ, գնանք ինձ հետ և զարթեցրի նորան: Դու երևակայել անգամ չես կարող, թէ ինչպէս է նա նեղւում և ինչքա՜ն խոր է նորա մրափը: Բոլորը ասա նորան, ասա նորան, թէ ինչպէս սովորեցրիր դու ինձ՝ համոզել նորան իւր ընկեր Նազովրեցուն մատնե՛լու: Որովհետև, չը նայելով, որ Նազովրեցուն սպանել են, բայց՝ երևում է՝ որ նա վատթար չէր բոլորովին ու այնպէս մեղաւոր, ես խղճում եմ, որ նա մեռաւ, քանի որ Յուդան շատ էր սիրում նորան: Ես չը գիտէի, որ եղբօրս սէրը այնքան շատ է և բուռն ու այնքան քնքուշ, իսկ այժմ իմ անհանգստութիւնից տանջւում եմ ես: Յուդան չէ կամենում ների ինձ, նա՝ մինչև անգամ՝ ինձ վերայ նայել չէ կամենում. այժմ նա այլ ես չի ասել, ինչպէս պատահում էր նախ. գեղագանձ քոյր,

այլ ես օրը բաւականին չքնաղ փայլ և գեղեցկութիւն ստացար, ինչ երևացիր դու: Նա յաճախ ինձ այդ խօսքն էր ասում՝ ժպտալով, և ես իբրև որ գեղեցկուհի էի, Հրէաստանի առաջին աղուոր ու գեղանի աղջիկը մինչ այն ժամանակ, որ պառաւեցի:

Այստեղ նա կանգ առաւ, որպէս թէ իւր սեփհական խօսքերի վերայ զարմանալով, ապա դարձեալ սկսեց քրթմնջալ.

—Այո, մինչ չը պառաւեցի ես, ծերութիւնը երբ մերձենում է, այդ մեր բոլորի համար էլ է. մենք պարտաւոր չէինք սառչել սիրուց, քանի որ նորա, որոնց մենք սիրում էինք և այժմս էլ սիրենք պիտի, կարող են խլուել մեզնից. մենք պարտական ենք երկար չը յետաձգել մեր հաշտութիւնը, որովհետև մեզ կարող են թաղել, մինչդեռ մենք դեռ ես ընկերներ չենք տեսել ու եղե՛լ: Իսկ հէնց որ մենք ձգուեցինք այդ յաւիտենեայն խաւարի մէջ,—այլ ես ոչ մի ժամանակ յարութիւն չը պիտի առնենք, մինչև անգամ անվերջ արցունքների ալիքների վերայ ես:

Այդտեղ նորա ձայնը դողաց և կտրուեց, ապա նոր սաստկած ուժով՝ նա յանկարծ ճչաց.

—Նայի՛ր, Թագաւորը այսպէս մեռաւ:

Եւ ձեռքերը բաց անելով, որոնք մինչ այդ ջղաձգութեամբ սեղմուած էին նորա կրծքի վերայ, նա մի փոքր խաչ բարձրացրեց, որը երկու ձիթենու ոստերից էր շինուած, որոնք՝ նորա սեփհական գօտուց հանած մետաքսեայ թելի շնորհիւ իրար էին կապուած:

Կայիափան սասանուեց, զարհուրած թէ նորա խօսքերից և թէ գործողութիւնից, ապա արհամարհուածի և վիրաւորուածի տեսք ընդունեց: Յուդիթը նկատեց այդ և աւելի զգալի դէպի նա շարժուեց, նորա աչքի առաջ խաչը տատանելով:

—Այո, հէնց այս տեսակ և այս ձևի մէջ մեռաւ Թագաւորը,—մի տեսակ ներշնչման և խելայեղ մոլեգնութեան մէջ՝ կրկնեց Յուդիթը.—Իւր սեփհական քահանայապետով սպանուած և այն ես համայն աշխարհիս սեղանի վերայ...

Եւ սարսափելի խելաթափութեան ցնորական փայլով աչքերի մէջ, նա շարունակ կանգնած էր, անդրաշխարհային գեղեցկութեամբ պայծառակերպուած և չնաշխարհիկ սիրով օժտուած, որով և՛ վախեցնում և՛ գթում էր իւր նախկին սիրեկանին: Մի վայրկեան նոքա այդպէս մէկ մէկու դէմ կանգ առան, ինչպէս անխաղաղ հոգիներ, լուսնկայ լոյսի տակ զմայլուած, լուսնի խորհրդաւոր փայլմունքի տակ դիմադարձ, իսկ նոցա մէջ բարձրացրուած խաչը յաւիտենական նշան էր երևում, գաղտնախորհուրդ պատնէշով, որը զարհուրով բաժանում էր նոցա, և որոնք այլևս մէկ մէկուց ընդ միշտ հեռու էին:

XI.

Մի քանի վայրկեան կանգնեցին նոքա՝ անշարժ, մէկը միւսի հանդէպ. յետոյ, Կայիափան, անակընկալ երկիւղի և տարակուսանքի զգացմունքին տիրանալով, բանից խելատար աղջկան, աշխատելով խաչը նորա ձեռքերից դուրս կորզել: Բայց Յուդիթը, խելագարներին յատուկ կատաղի ուժի տարափի մէջ, շատ ամուր էր բռնել այն: Երիտասարդ մատակ վագրի ուժեղ շարժմունքով, խստութեամբ դուրս պրծաւ նա Կայիափայի գրկից ու փոքր ինչ հեռաւորութեան վերայ կանգնեց, և, վրիժատենչ ժպիտը շրթունքների վերայ, Կայիափայի ամեն մի շարժմունքին սկսեց ուշադիր լինել: Դեռ ոչ մի ժամանակ հպարտ քահանան այն աստիճան կատաղութեան և յուսահատութեան չէր հասել, ինչպէս այժմ: Ի՞նչ պիտի անէր նա այդ անխելք աղջըկան, որի միակ ներկայութիւնն իսկ նորա այգու մէջ, կարող էր նորա անունը արատաւորել, փչացնել վարկը և՝ մինչև անգամ բարձր դրութիւնից զրկել: Այն խօսքերը, որ գործ էր ածում Յուդիթը խենթութեան մէջ, հէնց նոքա ևս կարող էին նոցա սիրային յարաբերութիւնը մերկացնել և նոցա մէջ եղած գաղտնիքը բանալ: Անտանելի դրութիւն էր այդ, բայց ինչպէս պէտք է այդ փորձանքից դուրս գար նա: Եւ ինչու համար Յուդիթը պիտի սկսէր խաչով սպառնալ նորան:—Այն կինը, որը այնքան բացարձակ դէպի Նազովրեցին իւր խորին ատելութիւնն էր յայտարարում: Այդ անշուշտ նորա հիւանդ խելքի արդասիքն էր և պարզ հակասութիւնը. բայց այնուամենայնիւ այդ երևոյթը Կայիափային շատ էր անհանգստացնում: Նա դէպի Յուդիթը մօտեցաւ և՛ աղերսանքի զգացմունքով՝ երկու ձեռքը դէպի նա տարածեց:

—Յուդիթ, ինձ մօտ արի,—ասաց նա հանդարտ ձայնով ու մի տեսակ ներշնչող կամքով, որի մէջ լսւում էին և՛ խնդիր և՛ հրաման:—Դու տկար ես, ջղերդ խանգարուած են, երկար ժամանակ շրջելուց յոգնած պիտի լինես, և ինքդ չես կարող գիտենալ, թէ ինչ ես խօսում: Քո հայրը տանը փնտռում է քեզ, թոյլ տուր ինձ, որ քեզ նորա մօտ առաջնորդեմ. դու չէ թէ չը պիտի կամենաս ոչ ինձ վշտացնել և ոչ էլ նորան, այնպէս չէ՞: Գնանք,—և նա դարձեալ մի քայլ առաջ անցաւ:—Չէ թէ ես սիրում եմ քեզ, Յուդիթ, դու կարող ես լիովին հաւատ ընծայել իմ դէպի քեզ տածած քընքուշ զգացմունքներին:

Յուդիթը մի տեսակ տարօրինակ կերպով էր նորա վերայ նայում ու նորա աչքերը անբնական ձևով էին բացուած:

—Քո քնքուշ զգացմունքներին.—կրկնեց նա: Ի՞նչ բանի վերաբերութեամբ ես խօսում դու, Կայիափա: Քո զգայողութիւնը նոյնն է, ինչ որ գայլի գիւրագորովութիւնը իւր աւարի վերայ: Միթէ ճիշտ չէ այս: Կարող է պատահել, որ դու սիրոյ մասին խօսես: Դու ինձ չես սիրել, ոչ էլ ես եմ սիրել քեզ, և՝ ընդհանրապէս՝ այլ ևս սէր չը կայ ամբողջ աշխարհիս մէջ: Նա կորչեց և ինձ այնպէս է երևում, որ դու սպանեցիր նորան:—Այստեղ Յուդիթը կանգ առաւ ու յօնքերը կիտեց, կարծես ուժով մի ինչ որ բան մտածել տքնելով:—Ես չը գիտեմ թէ ինչպէս դէպի ինձ հասաւ այն յղումն,—քրթմնջաց նա,—Յուդան ոչինչ չը ասաց ինձ:

—Ի՞նչ մի առաքումն, որի յղումն.—փափկութեամբ հարցրեց Կայիափան, միևնոյն ժամանակ քնքուշ կերպով դէպի նա մօտենալով, որպէս զի՝ մի տեսակ՝ զգուշութեամբ և փաղաքշանքով դուրս հանէ նորան այգուց:—Ասա ինձ, քեզ ինչ բան է անհանգստացնում:

Յուդիթի շրթունքի վերայից թեթև ժպիտ սահեց:

—Ոչ, ոչինչ ինձ չէ անհանգստացնում,—ասաց նա:—Ես անհամեմատ կերպով շատ եմ ապրել, որպէս զի այն բանի վերայ տըխրեմ, ինչը վաղուց անցել է արդէն: Հաւատացնում եմ քեզ, որքան յիշում եմ և ինչքան կարծում եմ,—աշխարհս սարսափելի կերպով փոխուել է այլ ևս. մեծ երջանկութիւն չը պիտի լինէ և Հրէաստանը արդէն, բոլորովին այն չէ, ինչ որ էր նախկին օրերում: Հա՛, իսկ ինչ վերաբերում է առաքման կամ պատգամին, այդ իրաւ որ տարօրինակ էր,—նա հռչակում էր, որ Աստուած ապրում է, իսկ մահը մեռաւ: Լսիր,—և արագ ինքնահաճոյ շարժմունքով նա ընկաւ քահանայապետի գիրկը և, գլուխը նորա կրծքի վերայ դնելով, անքթիթ նորա դէմքի վերայ նայեց.—Ես լսել եմ, որ ներկայումս մեզ վերայ մի ինչ որ նզովք է ընկած, և որ մենք ոչ մի ժամանակ, երբէք և այլ ևս չենք մեռնիլ... Որքան զարհուրելի և քստմնեցուցիչ է այդ: Ես այնքան դադրել եմ ապրելուց, բայց դու ևս պէտք է որ նոյնը լինես: Մենք արդէն այնքան վաղուց ենք ապրում,—հարիւրաւոր տարիներ են անցել այն ժամանակից, ինչ ես ծաղկափթիթ հասակի մէջ էի, կեանքի գարունն էի վայելում, և ինչ որ դու Նազովրեցուն սպանեցիր: Յիշում ես նորա դէմքի ճառագայթացող փայլը, երբ մահուան րոպէի մէջ էր նա: Ինձ այնպէս երևաց, որ կայծակը նորա վերայ յաղթական պսակի փոխուեց, բայց խաւարը յանկարծ ամեն ինչ ծածկեց, և ես այն ժամանակ կորցրի իմ եղբայր Յուդային: Բարաբբան նորան ապա թէ գտաւ նորից և տուն բերեց:

—Բարաբբա՜ն,—շշնջաց Կայիափան. սիրային ուժով Յուդիթին իր գրկի մէջ բռնելով և աքնելով, նորանից աննկատելի, այգու գաղտնի մուտքին դիմելու:—Բարաբբան մարդասպան է։

—Դու պէտք է որ նորա ընկերը լինիս,—ասաց Յուդիթը.—չէ՞ թէ դու նոյնպէս մարդասպան ես։ Միթէ Նազովրեցուն դու չը սպանեցիր։ Այդ մեծ խորամանկութեամբ էր գլուխ բերուած, Կայիափա, իսկ մարդիկ բոլորն էլ մի այն տեսակ յիմարներ են, որ ոչ ոք չը պիտի մտածէ անգամ քեզ դատապարտութեան տակ ձգելու և մեղադրելու։ Իսկ ինչ վերաբերում է Յուդային, նա չէ մեռել,—նա քընած է. եթէ որ նա իրաւացի մեռել է,—այն ժամանակ, համայն աշխարհը իմանար պիտի, որ նորա սպանիչը դու ես և միայն դո՛ւ։

Կայիափան խոժոռուեց. Նա յանկարծ մի կատաղի ատելութիւն զգաց դէպի այդ կինը, որին դեռ ոչ այնքան ուշ մոլեգին սիրով աստուածացում էր։

—Լսիր, Յուդիթ,—կատաղութեամբ ասաց նա,—դու անխելքացած դառանցում ես. դու ինքդ քեզ չես ճանաչում,—դու բոլորովին կորցրել ես քեզ. տեսնելով այդ՝—ես քեզ վերայ չեմ բարկանում։ Նազովրեցու վերաբերութեամբ այդպիսի յիմար բաներ մի խօսիր, եթէ ցանկանում ես, որ ես չը ատեմ քեզ նոյնքան անչափ և անսահման, ինչպէս և սիրեցի՝ նախ։ Դու ինքդ գարշում էիր այդ Մարգարէից և արհամարհելով նորան, նորա մահը ցանկացար, դու ինքդ էիր, որ նորա վերայ ծիծաղեցիր նորա իսկ մահուանից քիչ առաջ, իսկ այժմ կանացի մաքուր փոփոխականութեամբ, դու այնպէս ես խօսում նորա վերայ, որպէս թէ նորա յիշատակը քեզ համար շատ թանգ լինէ։ Այդ տեսակ անհասկացողութիւնը կատաղեցնում է ինձ. բայց դու տկար ես և ինքդ էլ չը գիտես, թէ ինչ ես խօսում։ Դեռ այլ ես ինչ։ Ի՞նչ մի նոր ցանկութիւն բռնեց քեզ։

Յուդիթը իրաւացի տատանուեց նորանից և խոր հառաչելով կոպիտ պարանի հետ սկսեց խաղալ, որը տարուբերւում էր նորա գոտիի մօտից, ապա Իսկարիօտի աղջիկը արձակեց այդ թոկը և դէպի քահանայապետը յարեց։

—Խնդրում եմ քեզ, Կայիափա,—ասաց նա. արցունքից խեղդուող ձայնով,—գիր այս պարանը տաճարի մէջ պահուած սուրբ իրերի մօտ, կարող է պատահել, որ այդ պիտանի լինէ. այս թոկը Յուդայի պարանոցի շուրջն էր պատել. նայիր, ահա և նորա արեան բծերը։

Կայիափան զզուանքի ճչոցով տատանուեց, իսկ Յուդիթը, աւելի և աւելի մօտենալով, աղերսում էր նորան ընդունել այդ պիղծ ու ազահղի ընծան։

—Դու չը պիտի վերցնես նորան.—հարցրեց Յուդիթը, նորա երկիւղալի ու դալուկ դէմքին խիստ և զննողական ակնարկ ձգելով։—Ի՞նչ տեսակ քահանայ պիտի լինես դու՝ սորանից յետոյ։ Քո տաճարի սեղանի վերայ այնպիսի անօթներ և տաւարկաններ են ընկած, որոնք արիւն թափելու և զոհերի համար են ծառայում. կը նշանակէ, որ հէնց այս թոկի տեղն էլ նա է և այնտեղ պէտք է դրուի։ Ախր այդ պարանը Յուդայի զղջմունքն է արտայայտում. նա մեղաւորուեց ու նորա խղճի խայթոցներն մեծ են, ուստի նա և աղերսում է ներել իրեն և ողորմածասիրութեան մասին է թախանձում։ Ես աշխատեցի մխիթարել նորան. ես ասացի նորան, որ այն դու, դու և այն մարդիկ, որոնց գրաւեցիր դու, և որոնց թւում ես էլ եմ գըտնւում,—ի մի գործելով—սպանեցինք Նազովրեցո՛ւն։ Եւ նա, կարծեմ, ուրախացաւ, երբ այդ ասացի նորան. նորա վերայ երկնքից մի պայծառ լոյս ընկաւ և նա... ժպտաց,—նա միշտ իւր քահանաներին ատում էր, իսկ որ նորա անմեղութիւնը հայհոյեցին և Աստծուն խաչեցին—դորա մէջ զարմանալու ոչինչ չը կա՛յ։

Ներքին չարութիւնից ամբողջովին դողալով, Կայիափան անշարժ կանգնած էր, իսկ Յուդիթը հնազանդութեամբ արիւնաներկ թոկը նորից իւր գոտու մէջ խոթեց։ Ապա կրծքի վերայից մի կոպիտ շինուած խաչ հանեց և ժպտաց։

—Այս խաչը հմայական զօրութիւն և դիւթական ուժ ունենալով հանդերձ, գերբնական ներգործութեամբ է տիրում.—ասաց հրէայ աղջիկը։—Նա հին աշխարհը նոր երկրի է փոխում։ Սոյնատեսակ խաչի պատկերը, փայլուն ճառագայթներից գործուած և ծիածանների եթերեան թելերով հիւսուած, քնած Յուդայի վերայ էր տարածուում և, թւում էր, խաղաղացրեց և հանգիստ պարգևեց նորան՝—սիրելի եղբօրս։ Ես այս ճղները Գեթսեմանէում գտայ, և ես ինքս եմ նոցա այսպէս կպցրել, եթէ Յուդային խաչը կարողացաւ մխիթարել, ուրեմն նա պարտական է և ինձ ես սփոփել։

Այս խօսքերով նա խաչը շրթունքներին տարաւ և համբուրեց։

—Յուդիթ, Յուդի՜թ...—կոչեց քահանայապետը՝ յուսահատութեան և կատաղութեան մէջ։—Ինչպէս ես կարող դու համբուրել խայտառակ մահուան նշանաբանը, այդպիսի մի անտանելի սիմվօլը, որից սոսկանք պիտի մենք։

—Ինչու համար և չը պէտք է կարողանամ.—ասաց Յուդիթը։—Եթէ որ այդ սիմվօլ—նշանաբանի միջոցով մահը մեռած է, անյայտացած է։ Ես աւետեցի քեզ առաքումն. Աստուած ապրում է և մահ չը կայ։ Մենք լալիս էինք Յուդայի վերայ, մտածելով, որ նա մեղանից

ընդմիշտ դէպի գերեզման գնաց, բայց այժմ մենք գիտենք, որ նա ապրում է, և դորանով մխիթարուեցինք մենք։ Մենք նոր իմաստութեան մէջ մտանք, նոր գաղափարի հասանք, թէպէտ և հին տխմարութեան մէջ ես շատ լաւ բաներ կային։ Երբ մենք հաւատացած էինք, որ կը մեռնենք, այն ժամանակ անտարբեր էինք, թէ՝ արդեօք՝ լաւ ենք ապրում մենք, թէ վատ, արդար՝ թէ ոչ,—մի քանի տարիներ կեանք պիտի ունենայինք մենք, և ամեն ինչի վերջ էր գնում. մեր մեղքերը ոչ ոք էր համարել։ Իսկ այժմ մենք չը պիտի համարձակենք մեղանչել, քանի որ այդ յանցանքների յիշողութիւնը մեզ համար զարհուրելի կը լինէ և մի անհուն ծանրութիւն անվերջ ժամանակների ընթացքում։ Ես կարծում եմ, որ յաւիտենական կեանքի ուրախալի յոյսը ոչ առանց մի տեսակ դառնութեան խառնուրդի է։ Ինչ պիտի լինէ քեզ հետ, Կայիափա։ Իսկ ինձ հետ։ Ի՞նչ ես կարծում դու, կամ ինչպէս ես մտածում,—կը մոռանանք մենք մեր մեղքերը, մեր գործած չարիքները ու աններելի ընթացքները, թէ յաւէտ յիշենք պիտի։

Քահանայապետը նորա խոշոր աչերի կատաղի փայլմունքով արտայայտուած հարցական ակնարկը տարաւ, ապա կաթոգին փաղաքշանքով գրկեց նորան։

— Յուդիթ, աննման Յուդիթ, թանկագինդ իմ,—շշնջաց նա,—աղաչում եմ, քեզ և ինձ մի տանջիլ այդքան վայրենաբարոյ անթիւ դառանցանքներով։ Գնանք. ես չը պիտի ստիպեմ քեզ տուն գնալ, երբ ինքդ չես կամենում այդ, գնանք ինձ մօտ՝ ապարանքս, ես քեզ այն տեղ կը թագցնեմ, ուրտեղ դու արդէն եղել ես,—այն գաղտնի անկիւնում, ուր մենք սիրատարփ այնքան ժամեր ենք անցկացրել…

— Քեզ բոլորովին այն մտքով մի մխիթարիլ, որ ես՝ երբ և իցէ՝ սիրել եմ քեզ,—հակաճառեց Յուդիթը նախկին արհամարհութեան և հպարտութեան տեղատուութեամբ։—Տղամարդիկ իմ գերիներս էին, իսկ դու՝ բոլորից ամենազզուելի՛ն։—Նա կանգ առաւ, սաստիկ այլայլմունքից բոլորովին դողալով, ապա դարձեալ շարունակեց թուլացող, հազիւ լսելի ձայնով։—Բայց այդ բոլորը այնքան վաղուցուայ գործ է, այնքան շուտ է եղել այդ և անցել, որ ես հազիւ եմ յիշում. այն ժամանակ դեռ ես երիտասարդ ու չքնաղ մի կին էի։ Դու յիշո՞ւմ ես՝ ինչքան գեղեցիկ էի ես։ Աչքերս ադամանդի նման էին փայլում, իսկ մազերս—ոսկեգոյն իմ՛ փայլով ծփծփում էին։

— Դու փոխուած չես, Յուդիթ,—շշնջաց Կայիափան, բռնկող ցանկութեան տեղատուութեան տակ՝ նորան մոլեգին իւր կրծքին սեղմելով։—Դու նոյնատեսակ մարմնացումն ես սէրի, դու այն ես, ինչ որ նախ էիր,—աշխարհիս միջի առաջին գեղեցկուհի՛ն։

— Դու ծիծաղում ես ինձ վերայ,—ասաց Յուդիթը, խոր հոգւոց քաշելով և անուժութեան մէջ, նորա վերայ յենուելով,—բայց ինչ որ էլ ասես դու, կամ չը ասես—ինձ համար միևնոյն է, քանի որ ոչ մի ժամանակ ես քեզ չեմ սիրել։ Ես ոչ մի ժամանակ ոչ ոքի չեմ սիրել, անբաղդ Բարաբբային անգամ, որը իրաւացի աստուածացնում էր ինձ։ Իմ սիրուս համար նա Գաբրիասին սպանեց, և այդ իսկ պատճառով բանտի մէջ էր պահուած ու նկուղում դրուած։ Բայց այդ բոլորը դարձեալ ինձ համար միևնոյն բանն են։ Եթէ մարդիկ յիմար են, ո՛վ է մեղաւոր, որ նոքա տանջւում են, և թող տանջուեն էլ նոքա՝ իրենց անխելքութեան համա՛ր։

Յուդիթը դէպի յետ նահանջեց և իւր ոսկեհուռ փարթամ ծամերը ուսերի վերայ ձգեց։

— Գնանք,—ասաց նա,—գնանք Յուդային արթնացնելու։ Նա վաղուց է՝ ինչ քնած է, իսկ այժմ շուտով առաւօտը կը ծագէ։

Նա շտապով առաջ շարժուեց։ Կայիափան ուրախանալով, որ նա մտածեց հեռանալ, վճռեց նորան ճանապարհ դնել։ Յուդիթի հրաշալի իրանը, թեթև և ճկուն ու նազաճեմ, սահեց նորա առջևից, ինչպէս մի գերբնական տեսիլ. այդ գեղեցկուհու կախարդիչ արբշռութիւնը այնքան հզօր էր, որ Կայիափան շատ մեծ դժուարութեամբ էր կարողանում պահել իրեն նորան իւր գրկի մէջ խլելու ու երեսը այրող համբոյրներով դրոշմելու ցանկութիւնից, որոնք նորա յուսահատ սիրոյ վերջին հրաժեշտն պիտի կազմէին. բայց այն երկիւղը, որ մի որ և է մէկը կարող է տեսնել նոցա, նորա մոլի կրքերը հնազանդեցրեց և նա գնում էր Յուդիթի կողքով տխուր խնամարկողի տեսքով, այնպէս, որ եթէ մի որ և է մէկը որ պատահէր էլ, այն ժամանակ այդ ականատեսը կարող էր ինքն իրեն բացատրել, թէ Կայիափան այդ կիսախելագար անբաղդ աղջկան իւր այգու մէջ պատահելով, միմիայն իւր սուրբ պարտականութիւնն էր կատարում, աշխատելով նորան նորից իւր հօր տան մէջ տեղաւորելու։

Յանկարծ Յուդիթը դադար առաւ ու նորա վերայ կասկածելի և ցասկոտ ակնարկ ձգեց։

— Դու քո մեղքերդ բոլորովին կը մերկացնես Յուդայի մօտ.—հարցրեց նա։—Դու կասե՞ս նորան, որ Նազովրեցուն մահուան պատժի ենթարկելը իսկ քո գաղտագողի մտածմունքի շնորհիւ էր։ Դու Յուդային կը մխիթարես և կը հանգարտեցնես, չէ՞։ Չէ թէ այն քամնեցուցիչ արարքը, որ այնքան տանջում է նորան, քո և իմ մտածմունքների պտուղն է։

Կայիափան շուռ եկաւ նորանից։—Հանգիստ կաց, Յուդիթ,—

փսփսաց նա՝ նահանջող ձայնով,—ինչ կարող լինիմ ասելու, այն էլ կասեմ անշուշտ։

— Ոչ, ո՛չ այն—ինչ կարող ես, այլ այն,—ինչ որ պարտական ես ասելու և ինչ որ պարտաւոր ես խոստովանելո՛ւ.—գրգռուած դրութեան մէջ բացականչեց Ցուդիթը։—Դու խաբել էլ կարող ես, չէ՞ թէ դու ստիպուած պիտի լինես ճշմարիտը ասելո՛ւ։ Խստասիրտ քահանայ, քեզ չի յաջողիլ արատաւորել իմ եղբօր անունը և նորա պատիւը ոտնատակ տալ, հէնց նոյն քո մատնութեանդ շնորհիւ,—դու ես մատնիչը և չը պիտի կարողանաս Ցուդայի կռնակի ետև թագ կենալ և թիկունքի տակ պահուստ որոնե՛լ։ Դու, Տիրանարգ քահանայ, հէնց դու, Աստուծոյ քահանադ, ատում էիր Աստծուդ, եթէ իրաւա՛ցի Նորան զոհեցիր իսկ։ Ժողովուրդը ինքնին պիտի ազատէր Նորան, եթէ դու չը սովորեցնէիր ինձ, եթէ դու չը ստիպէիր ինձ նոցա մոլութիւնը գրգռել իմ տարփալի զոռուն կոչիւններով և կրքերը զարթեցնել սոյն նախադասութեամբ. բա՛րձ 'ի մէնջ. բա՛րձ 'ի մէնջ, և հա՛ն զ'դա 'ի խա՛չ։ Ես քեզ ասում եմ, որ դու պարտաւոր ես բոլորն էլ ասել և ամեն ինչ խոստովանքի տակ քաւել։ Ես չը պիտի գնամ այս տեղից, մինչ դու այդ չը խոստանաս ինձ։ Ցուդան տանը սպասում է մեզ, երդուիր, որ դու նորան բոլորը ասես պիտի։

Մինչ վերջին յուսահատութեան հասցրուած, և միևնոյն ժամանակ այն մտատանջութեան տակ դեգերելով, որ Ցուդան իրաւացի մեռած է, թէպէտ և նորա անխելք քոյրը չէր կամենում ընդունելու այդ, Կայիափան շտապ և շփոթուած պատասխանեց.

— Երդուում եմ, Ցուդիթ, որ ամեն ինչ քո կամքի համեմատ կը լինէ։

Իսկարիոտի աղջիկը կասկածանքով նորա վերայ նայեց և այդ իրեն կորցրած աղջկայ աչքերի մէջ մի տեսակ չարաբաստիկ կրակ փայլեց։

— Ես քեզ չեմ հաւատում,—դանդաղութեամբ ասաց նա.—դու մի այն տեսակ ճարպիկ և խուզարկու մատնիչ ես ու զարմանակալ քայքայիչ, որ քեզ հաւատ ընծայել չէ կարելի։ Եթէ դու իրաւացի կամենում ես քո խօսքը կատարել և խոստմունքդ չը մոռանալ, երդուիր ահա այս նշանով։

Եւ Իսրայէլացի աղջիկը խաչը բարձրացրեց։ Այդ խաչը տեսնելիս Կայիափային բարկութեան մի այնպիսի կատաղի ընդհարում տիրեց, որ՝ մի վայրկենաչափ՝ նա իրեն բոլորովին կորցրեց։

— Ի՞նչպէս կը համարձակես դու ցասումն, գազիր առաջացնել ինձ մէջ, կամ մինթէ կատակել ու ծաղրել կը պքնես ինձ,—գոռաց

նա՝ ահարկու ձայնով։—Դու ո՛չ թէ Ցուդիթ Իսկարիովտացին, այլ ինքը՝ սատանայէն ես—նոր կերպարանքի մէջ մտած, դու իսկ և իսկ դև ես, մի նոր տեսքի տա՛կ։ Դիւալլուկ աղջիկ կամ դիւաղէմ չարքի մէկը, կամ նոյն իսկ հէնց չարամարտ սատանայ, դու այլ ես ինձ փորձել և պատուհասի բերել չը պիտի կարողանա՛ս։

Եւ Ցուդիթի վերայ ընկնելով, նա՝ կատաղի ուժով՝ փորձեց նորա ձեռքերից դուրս կորզել այդ սիմվօլական խաչը։ Մինչ վայրենի գազանի կատաղութեան հասցրուած ուժով, Ցուդիթը դիմադրեց նորան։

Այդ ինքնուրոյն կռուի ու մաքառման ժամանակ խաչը կռացաւ և՝ երկու մասերի բաժանուելով՝ կոտրուեց։ Տեսնելով այդ Ցուդիթը յուսահատութեան տակ, ամպրոպային որոտմունքի նման, ճչաց և... զօտիից դուրս քարշելով դաշոյնը, իւր սիրեկանի կուրծքը ցցեց 'ի քթթել ական և այնպիսի ուժով ու ընդ թափ, որ քահանան գետնի վերայ ընկաւ և ուշաթափուեց։ Արիւնը յորձահոս ուժով դուրս ցայտեց նորա վէրքից։ Հասցրուած խոցը անակնկալ և խոր էր։ Դէպի նա կռանալով՝ Ցուդիթը—անհասկացողութեան մէջ—սկսեց զննել նորան, աւելի և աւելի դէպի նա թեքուելով, կարծես թէ ինքն իսկ իւր անելիքի վերայ զարմանալով ու արածը չը ըմբռնելով. իւր կատարածը—նորան խորթ էր երևում։ Ապա ձգելով դաշոյնը և խաչի կոտրուած կտորները քահանայի արիւնաքամ մարմնի վերայ ես ձգելով, անխելքի երկիւղի ազդեցութեան տակ նա վազեց պարտէզով և անյայտացաւ, ինչպէս մի դժգոյն ուրուական կամ սարսռաբեր թևթև ստուեր—խորհրդաւոր գիշերի աղջամուղջի մէջ կլանուած . .

. . . .

XII.

Մինչ այդ՝ սուրբ քաղաքը, առաջուայ նման, պահապանների հսկողութեան տակ էր։ Նորա շուրջը, այս ու այն կողմերից, թէ ետ և թէ առաջ, զինուորներ էին քայլում, իսկ իւր վրանի մուտքի մօտ ահռելի և քաջարի Գալբուսն էր կանգնած, իւր գտնուած հեռաւորութիւնից մօտակայ կողմերը զննելով։ Բոլորովին փափուկ օդը անուշահոտութիւններով էր համակուած, կարծես թէ քնքուշիկ զեփիւռը անվերջանալի բազմութեան ծաղիկների հոտը իւր հետ էր բերել։ Լուսինը համայն երկնքի վերայ յաղթութեամբ տիրելով, իւր

երկար գաղտնախորհուրդ շողքերը սուրբ գերեզմանը պատած փայլուն ժայռերի վերայ էր ձգում, որի փայլուն լոյսը տարածւում էր մինչ դրացի լեռների չոր ու կիզուած գետնին. ստուերները այդ պայծառ լոյսից գունաթափ, այնպէս էր թւում, թէ հանդարտութեամբ լողում էին միգային, ծխածանագոյն լճակի վերայով: Խորին խաղաղութիւն էր թագաւորում. Գալբուսի վրանի վերև ծածանւող փոքրիկ դրօշակը, թուլութեամբ կախ էր ընկած, առանց մի չնչին տատանման. մրտենի թփերի ոչ մի տերևը չէր շարժւում, ոչ մի ձայն չը կար, բացի զինուորների միաչափ քայլերի ձայնը: Գալբուսը, այդ զարմանալի լռութեամբ խեղդուած, կիսաձայն քրթմնջալ սկսեց, իբր տխրութեան առաջն առնելու համար ոչ մի ուրիշ ելք չը գտնելով:

— Նորա վերայ ինչպէս պիտի ծիծաղեն Հռոմում,—ասաց նա: Արդեօք ո՞վ է կարող սորա նման բան երևակայել: Ես՝ Գալբուսս, պատերազմի սովոր, մինչ տասնեակ թշնամիներ համարող, որոնք սեփհական ձեռքովս էին սպանուած, և որոնք, պատահում էր, առանց համրանքի չէին մնում, այժմ՝ յանկարծ՝ պարտաւորուած եմ մեռած մարմին պահպանել, երկիւղ կրելով, որ նա կարող է փախչել: Երդւում եմ բոլոր աստուածներով, այդ հրէայ քահանաների կասկածելի երևակայութիւնը ինձ համբերութիւնից չափից դուրս հանում է: Նոքա այնպէս են մտածում, որ չուառ, սովալլուկ աշակերտները, որոնք՝ մի ժամանակ՝ հաւաքուել էին Խաչեցեալ Նազովրեցու շուրջը, Նորա մարմինը կը գողանան, բոլորովին մոռանալով, որ՝ ծայրայեղ դէպքում՝ վեց հատ ամենաքաջ մարդիկ են պէտք, որ թէկուզ փոքր ինչ շարժէին այն վէմը, որով գերեզմանն է ծածկուած. Ես մինչև անգամ կասկածում եմ, որ վեց հոգի ես չը կարողանային: Բայց գիշերը շուտով կը անցնէ և այս անխելք գործը վերջացած կը լինէ: Ինչքան պիտի ծիծաղեն Հռովմում, երբ ես պատմեմ նոցա, թէ ինչպէս ես ինքս և տասն և չորս ամենաքաջ մարդիկ, որոնք իմ վաշտից էին ընտրած, մի անբաղդ մեռած մարմին էին պահպանում, որպէս զի արգելենք նորան յարութիւն առնելու:

Եւ սաղաւարտը հանելով, ճակատը զովացնելու համար, նա ձեռքերը դանդաղութեամբ աչքերին քսեց, ապա շփեց նոցա և յօրանջեց:

— Եթէ այժմ ես քնելու լինեմ,—շարունակեց նա ինքն իրեն խօսել,—այն քսու քահանան, գիտենալով այդ, պիտի յաջողեցնէր ինձ պաշտօնիցս զրկել տալը: Ինչ լկտի և սառը քահանայ է նա, և —'ի լրումն—խորամանկ, ինչպէս ինքը Պուլպիանը, որը, Դիանայի տաճարի սեղանը պահպանելով, ինքն իսկ ոչ թէ մի մատաղ ու գեղանի կոյս է մոլորեցնում ու հրապուրում, այլ աւելի՛: Դոքա բոլորն

էլ միատեսակ են, այդ՝ այսպէս կոչուած՝ սուրբ մարդիկը: Իմ սրտակերանցիցս ոչ մէկը քահանայ չը պիտի լինէ, այդ բանի մէջ երդւում եմ ես: Ահա հէնց այդ էլ եղել է՝ թւում է՝ մեռած Նազովրեցու գլխաւոր յանցանքը,—որքան որ ես կարողացայ հասկանալու: Նա քահանաների դէմ էր մաքառում, նա կռւում էր նոցա հետ,—իբրև որ այդ դժուար խնդիր է և տանջանքի տակ ձգող հարց: Չեմ կարող չը յիշել այն անբաղդ ծերունին, որը այս առաւօտ իւր փոքրիկ թոռան համար էր աղօթում. նա քաղաքի մէջ պատահեց ինձ, բուռն ուրախութիւնից ամբողջովին ցնցուելով, և ասաց. «Ողորմած պարոն, փոքրիկ աղջիկը փրկուած է»: Իսկ յետոյ նա հեկեկաց և երդուեց, որ նոյն այն ժամու մէջ, երբ նա քարայրի մօտ էր աղօթում, ջերմը թողել է երեխային: Ի՞նչ խելացնոր ծերունի է, խենթուկի մէկը: Հասարակ ամբոխի մէջ նախապաշարմունքը երբեմն իւր բոլոր սահմաններից անցնում է. բայց ճիշտը ասած, բոլորն էլ ասում են, որ այդ երիտասարդ Մարգարէն, այդ Նազարէթի ծնունդը, բարի էր, կարեկից մի մարդ և շատ մեծ յաջողութեամբ բժշկում էր հիւանդներին: Երդւում եմ բոլոր աստուածներով,—այստեղ նա յօրանջեց դարձեալ,—այս գիշեր դէպի խաղաղ քունն է դրդում մարդուս, բայց ինձ նիրհել անգամ անկարելի է. եթէ ես փակեմ աչքերս, ուրեմն կարող են անլսելի և անբնական ոյժեր երևիլ օդի մէջ ու այլանդակ խաղեր խաղա՜լ,—և ծիծաղեց նա:

— Գալբուս, Գալբուս,—յանկարծ լսուեց մի ձայն:

— Ի՞նչ է դարձեալ,—խստութեամբ հարցրեց նա, դէպի նա շտապով մօտեցող զինուորին տեսնելով:—Ինչո՞ւ ձգեցիր տեղդ:

— Ես Փեդիասին այնտեղ թողեցի,—ասաց մօտեցող մարդը, ներողութիւն խնդրելով և գլուխ տալով:—Ես կոչեցի քեզ, որ դու ուշադիր լինես և ականջ դնես:

— Ականջ դնե՞լ,—անհամբերութեամբ հարցրեց Գալբուսը:—Բացի մեր կոպիտ ձայնից, ոչ մի ուրիշ ձայն չը կայ: Դու զառանցող ու երևակայութեան տակ ընկնող մարդ ես երևում, Մակսիմուս, և երազատեսութիւնների իսկ հակումն ունիս. այդ քո մայրը ինքն է ասել ինձ:

Մակսիմուսը, սիրուն դէմքով, բարձր ու ուժեղ մի հռովմայեցի, ժպտաց՝ թեթև կերպով, բայց՝ միևնոյն ժամանակ՝ ձեռքը բարձրացրեց, հարիւրապետի ուշադրութիւնը գրաւելու համար:

— Ոչ, այդ երազ չէ, Գալբուս, լսի՛ր՝ խնդրում եմ. մի տեսակ անծանօթ թռչուն է երգում:

Մռայլ հարխրապետը, բարկութեամբ և զարմանքով՝ նորա վերայ նայեց:

—Թռչո՜ւն,—կրկնեց նա:—Ես քեզ երաշխաւոր եմ կանգնում, որ քիչ թռչուն կը ճարէիր դու Պաղեստինայում, նոքա էլ, որոնք գոյութիւն ունեն, չը պիտի երգեն, որովհետև կոկորդները այնպէս է չորացել, ինչպէս մորեխի որկոր:

— Համդարտ,—շշնջաց Մակսիմուսը:—Ահա դարձեալ սկսում է:

Եւ նախ, մինչ Գալբուսը կարող կը լինէր մի որ և է խօսք արտասանել, կախարդական երաժշտութեան արծաթահնչիւն ձայներ լսուեցին, մաքուր ու հնչիւն գեղգեղանքի ալիքներով, որ լի էր թովիչ խաղերով, որոնց սոխակն անգամ անկարող է երգել, այն ժամանակ իսկ, երբ անտառի մէջ, լուսնկայ գիշերները իւր սիրայեղ դայլայլիկներն է ձգում: Հարխրապետի դէմքի վերայ դրոշմուած զարմանքը բուռն յափշտակութեան փոխուեց: Իւր տէգը երկու ձեռքերի մէջ ամուր բռնելով, նա կռթնեց նորա վերայ և զմայլմունքով սկսեց լսել: Իսկ անտեսանելի թռչունը իւր երգն էր շարունակում. թւում էր, թէ մի ինչ որ խորհրդաւոր և գաղտնի միտք կար այդ երգի մէջ. իւրաքանչիւր նորանոր ձայներից, նորա կախարդիչ ներգործութիւնը աւելի և աւելի զօրեղանալով, տարածուեց խաղաղ օդի մէջ: Յանկարծ երգեցողութիւնը կտրուեց, բայց խզուած մեղեդին ուրիշ մի դայլայլիկների փոխուեց, որոնց պատճառը՝ ակնյայտնի էր՝ ուղիղ քարայրի մօտ գտնուած մրտենի թփերի մէջ պահուած պիտի լինէր: Այդ երկրորդ թռչունը առաջինից աւելի ես ներշնչմամբ էր երգում, և մինչ նորա սրտագրաւ ու հնչուն դայլայլիկները տարածուում էին, դէպի ցետուրիօնի վրանը շտապով երկրորդ զինուորն էր դիմում, որը և մօտեցաւ նոցա:

— Գալբուս, լսում ես դու այդ նուագածութիւնը:

Գալբուսը հառաչանք արձակեց, նորա աչքերի մէջ արցունքը լճացաւ. մի վայրկեան նա մի տեսակ մոռացկոտութեան մէջ էր, որին տեղի տուեց հոգեզմայլութիւնը, և նորա փոքրիկ աղջկայ դէմքը, որը մեռած էր ընդամենը երեք տարեկան հասակում, պատկերացաւ նորան, կամ թէ նորան միմիայն այնպէս երևաց, որ ձևակերպուեցաւ այդ՝ փայփլուն լուսնի մակարդակի վերայ: Երկրորդ զինուորին տեսնելիս, որը նոյնպէս իւր սահմանատեղին էր ձգել, նա միանգամից իւր վրդովմունքին տիրեց և խաքուսիկ բարկութեամբ ձեռքի սուինը գետին խփեց:

— Ի՞նչ պատահեց քեզ: Դու թռչունների երգ անգամ չես կարողանում լսելու առանց այն, որ նոյն ժամոյն այստեղ չը վազես,

ինչպէս մի փոքր երեխայ, և դորա մասին չը պատմես ինձ: Գնա՜ քո տեղը՝ շուտով: Միթէ դու չը գիտես, որ այսօր մենք պարտաւոր ենք աւելի ես խիստ ու աչալուրջ հսկել, քան սովորական էր մեզ: Իսկ թռչունների ծլվլոցը իսկ փախցնում է ձեզ, ինչպէս մոլորած ոչխարների: Մակսիմուս ամաչի՜ր:—Դու վատթար օրինակ տուեցիր, դու ես գնա՜ ու քո պարտականութիւններդ նոյնպէս աւելի լաւ կատարիր: Ո՞վ գիտէ, այն էլ կարող է պատահել, որ դուք մի որ և է կախարդական ուժ էք գտնում այդ երգեցողութեան մէջ, որի հիման վերայ և վախենում էք:

Ցհաճութեան կարմրութիւնը Մակսիմուսի այտերը ծածկեց, երբ նա այդ արհամարհանքը լսեց, բայց նա ոչինչ չը պատասխանեց և հեռացաւ: Նորա պահնակատեղին Գալբուսից ընդամենը մօտ քսան քայլաչափ էր: Նա իրեն փոքր ինչ յոգնած զգալով, հանգստանալու համար վրանի մէջ մտաւ: Գլուխը տարածած ձեռքերի վերայ թեքելով, նա շարունակեց դիւթիչ երգեցողութիւնը լսել, որը աւելի և աւելի էր բարձրանում: Երկրորդ զինուորը՝ նոյնպէս տխուր՝ իւր տեղը վերադարձաւ և Գալբուսը միայնակ մնաց,—զմայլած լուսնի խորհրդաւոր փայլմունքով, և անտեսանելի երգեցիկ խմբի կախարդական երաժշտական խաղերով փառաւորուած, նա ունկնդիր էր այն չքնաղ ձայներին, որոնք, թւում էր, խաղաղ քարայրի վերևում էին թագաւորում, աստուածային մեղեդու ընդ միշտ լայնացող շրջան կազմելով: Կամաց կամաց բոլոր զինուորները ես, իրենց զէնքերի շառաչմունքներով չը կամենալով այդպիսի նուագածութիւնը խանգարել, լռութեամբ իրենց վրանների տակ մտան, երաժշտութեան խորհրդաւոր ու անբնական ներգործութեան տակ հմայուած:

— Այս իրաւ որ մի տարօրինակ բան է, չը պիտի կարողանամ ուրանալ այդ,—վերջապէս շշնջաց Գալբուսը, բոլորովին վրանի մուտքի մօտ նստելով և պատրաստուելով նորից աւելի ուշադիր լսելու:—Առաջ միմիայն մի թռչուն կար, իսկ այժմ թւում է, թէ նոքա քըսանի մօտ են: Պաղեստինէում ես ոչ մի ժամանակ այսպիսի երգեցողութիւն չեմ լսել. այդ, թոյլատրենք, թէ մի տեղից դէպի միւս տեղ թռչող թռչուններ են, բայց դէպի որ կողմն են չուել նոքա և ո՞ւր են դիմում: Ինչո՞ւ նոքա այսքան մի վշտալի և անպտուղ շրջակայք պիտի ընտրէին իրենց հանգստատեղիի համար: Վերջապէս զարմանալի է և այն, որ նոքա այսքան ուշ սկսեցին երգել:

Եւ նա խորին մտածմունքի մէջ ընկած մնաց, անդրաշխարհային մեղեդու քնքոյշ դայլայլիկներով հանգստացած ու մխիթարուած:

Իսկ մի որոշեալ հեռաւորութեան վերայ այդ կախարդական նուագածութեան դարձեալ մի ունկնդիր ևս կար, որի ներկայութիւնը պահապանների կողմից բոլորովին աննկատելի մնաց։ Այդ ունկնդիրը—Բարաբբան էր։ Նա՝ պառկելով, գաղուած էր գետնի խոռոչի մէջ, որը քարայրի հետևն էր գտնուում, և զմայլած ականջ էր դնում հրաշալի երգեցողութեան։ Նա երեխայութիւնից իսկ Երուսաղէմի բոլոր շրջակայքի հետ լաւ ծանօթ էր, բայց այդ կողմերում ոչ մի ժամանակ նա այդպիսի երգեցիկ թռչունների չէր պատահել, որ լսել կարողանար։ Նա չէր հասկանում թէ որտեղից կարող պիտի լինէին այդ ձայները տարածուել, ու այդ երևոյթը նորան իսկական հրաշք էր երևում։

Օդը բաւականին անխռով էր, իսկ թփերը մինչ այն աստիճան անշարժ, որ այդ հնչուն նոտաները ու երաժշտական գեղգեղանքը, թուում էր, թէ առաջ էին գալիս որևէ չնաշխարհիկ ուժից. նորա կարող էին օդային սրինգների գերբնական ձայներ լինել, կամ թէ ոսկեղէն քնարների ու տաւիղների քնքուշ ու ներդաշնակ դայլայլիկներով համակուած սաղմոսերգութիւններ, որոնք, բոլորն էլ ՚ի միասին վերցրուած, միևնոյն ժամանակ և խառնուած էին աներևութ սոխակների երգեցողութեան հետ։ Պարբերաբար, խորին հանդըստութեան և սքանչելաժպիտ բաղդի միևնոյն զգացմունքը տիրեց և Բարաբբայի յոգնահոծ հոգուն, ինչպէս և Գայլուսի, և նա ևս ինքնամոռացութեան մէջ մտաւ, միևնոյն ժամանակ պզտոր կերպով մի տեսակ բաղդաւոր մտածմունքի մէջ սքանչացած, նա ինքն ևս չը հասկացաւ այն,—ինչ մտածում և զգում էր։ Երբ նախ նա Մելխիօրին ասաց իւր մտադրութեան մասին, թէ գիշերը պէտք է Նազովրեցու գերեզմանի մօտ, պահապան կանգնածի նման, անցկացնէ, այն ժամանակ այդ տարօրինակ մարդը չը արգելեց նորան, միմիայն փաղաքշանքով ասաց. «Նայիր, երբ Ուսուցիչը կը գայ, չը լինէ թէ նա քեզ քնած գտնէ»։ Ահա ինչ անհասկանալի դարձուածք։ Ի՞նչ տեսակ անըմբռնելի բան էր դա։ Եւ ահա նա արդէն իւր տեղի վերայ է գտնւում, ամուր մտադրութեամբ՝ չը քնել երբէք ու այդ գիշեր աչալուրջ ուշադիր լինել, պարզ տեսնելու համար այն բոլորը, ինչ անցնէ պիտի և դորա մասին վկայել։ Բայց չը նայած այդ մտադրութեան, նա օդի անշարժութիւնից՝ մի տեսակ թմրութիւն էր զգում. անտեսանելի ակումբի անուշ երգեցողութիւնը նորան ակամայ օրօր էր կարդում։ Այդ անվերջ զգուանքի փափկութեան դէմ նա իւր բոլոր ուժով մրցել սկսեց, որը աւելի և աւելի էր գերում նորան։ Նա աշխատեց զանազան օտար առարկաների վերայ մտածել. Նազովրե-

ցու բոլոր աշակերտներին բռնած երկիւղի վերաբերութեամբ դատողութիւն տալ՝ ինքն իրեն, այն վախի, որը ազդեց նոցա վերայ այն չափով, մինչ նոքա ստիպուած եղան քաղաքի ամենահեռաւոր թաղերում թագնուել և իրենց Ուսուցչի գերեզմանը յաճախելուց բոլորովին խոյս տալ. այդ բոլորին պակաս չը ազդեց և քահանայապետ Կայիափայի ձեռք առնուած պահպանողական խիստ միջոցները։ Նա Պիղատոսի դեռ չարունակուող տկարութեան մասին ևս մտածեց. Յուդա Իսկարիովտացու ինքնասպանութիւնը անցաւ նորա մտքից և, վերջապէս, կորած Յուդիթը... Այդտեղ նորա մտքերը խառնուեցին ու կտրուեցին, որպէս թէ ներքին դողացին։ Յուդիթի մասին յիշողութիւնը ծայրայեղ ծանր էր նորա համար։ Այս րոպէում լաւ կը լինէր, եթէ Յուդիթը մեռած լինէր, տխրութեամբ ասաց նա՝ ինքն իրեն։ Հազար անգամ լաւ Յուդիթի համար, լաւ կը լինէր և իրեն՝ Բարաբբային։ Նա ինքը ևս ուրախ կը լինէ մեռնել, այդպէս էր երևում Բարաբբային։ Նորա վերայ, դէպի բոլոր շրջապատողները և ամբողջ կեանքը, կատարեալ անտարբերութեան մի տեսակ թախծութիւն ընկաւ. մահը, իւր խաւարով և խորին հանգստութեամբ, նորան աւելի թանկագին պարգև էր երևում, քան թէ կեանքը։

Նա իւր ամբողջ բոյով գետնի վերայ տարածուեց, և սկսեց լուսնին ու աստղներին նայել։ Ինչքա՜ն չքնաղաձայն էին երգում այդ թռչունները։ Ինչպիսի՜ քաղցր և անուշաբոյր զեփիւռ բարձրացաւ։ Նա՝ բոլոր՝ լայնութեամբ՝ ձեռքերը երկու կողմերի վերայ տարածեց,—զարմանալի մխիթարութեան զգացմունքով, ապա, նկատելով, որ ակամայ մի այնպիսի մարդու դրութիւն ընդունեց, որը պատրաստւում է խաչուելու համար, նա ինքնովին, անհասկանալի պատճառով, ուրախացաւ։ Նա ծուլութեամբ սկսեց նորա մասին մտածել, թէ ինչ կը զգար նա, եթէ որ նորա ձեռքերի մէջ ահագին մեխեր խփէին, այնպէս՝ ինչպէս խեղճ Նազովրեցուն։ Անգիտակցաբար ձեռքերը գետնի վերայ շարժելով, յանկարծ նա մի ինչ որ անբնական բան շօշափեց, և՝ մօտուստ նայելով՝ տեսաւ, որ նա մի փոքրիկ ծաղիկ քաղեց, որը զանգակիկի (КОЛОКОЛЬЧИКЪ) նմանութիւն ունէր և բոլորովին սպիտակ էր ու անուշաբոյր։ Նա ուշադիր քննեց այդ ծաղիկը. այդ տեսակ մի ծաղիկ դեռ չէր տեսել նա, որը բուսականութեան նոր նմուշ էր կազմում,—նորա կարծիքով։ Բայց նորան տիրող նինջը այնքան ուժեղ էր, որ նա այլ ևս ուժ չունէր բարձրանալու, փնտռելու համար, թէ դարձեալ այդպիսի ծաղիկներ կան արդեօք, հակառակ դէպքում նա վկայ պիտի լինէր մի՝ բնութիւնից դուրս՝ այլաբանական ու գերբնական երևոյթի։ Լեռների ստորոտից մինչ

ուղիղ գագաթը շրջապատող աւազոտ պետինը այդ ձիւնափայլ ծաղիկների տարափով ծածկուեց շուտ առ շուտ, որոնք խաւապատ, ինչպէս ծովային փրփուր, հազարներով և հազարաւոր ընդգրկւում ու բուսնում էին գետնի ծոցից։ Գետինը, այնպէս էր թւում՝ թէ դողում է, իւր ծոցի մէջ Աստուածային փրկութիւնը ընդունելուց, և ծարաւում էր իւր Իշխողի ոտքերի տակ թաւալուել ամբողջովին։ Իսկ պահ մտած թռչունները մոլեգնութեամբ շարունակում էին երգել, որոնց երգեցողութիւնը աւելի քան յաղթական էր. քարայրի չորս կողմը, իրենց վրանների մէջ, նիրհում էին պատահական զինուորները, հրաշալի երազների մէջ ընկղմուած, քնքշութեամբ, սիրով և անվերջանալի թանկագին յիշողութիւններով լցուած, որոնց խօսքերով անկարելի է բացատրել խսկ։ Միմիայն երիտասարդ Մակսիմուսը իւր ուժերը ամրապնդեց. Գալբուսի նախատինքը խիստ կպչեց նորան, և, զինուորականի պատիւը վայր չը ձգելու համար, նա վճռեց իւր վերայ խստութեամբ հսկել։ Եւ թէպէտ նա, մի տեսակ ներշնչման տակ, գետնի վերայ ձգուելու ու հանգստանալու կարիք էր զգում, բայց իշխել կարողացաւ այդ ծանր ըզգացմունքին ու իւր՝ զօրանից կրած՝ ծանրութեանը չը նայելով, ըսկըսեց դանդաղ ետ և առաջ քայլել, թէպէտ և ոչ մի առանձին գոհունակութեամբ, բայց և կարեկցութեամբ նայելով իւր ընկերակիցների վերայ։ Նա մտադիր չէր իւր ընկերներին շարժելու, նա իւր բացառիկ արթնութեան համար առանձին մի գովասանք ու շնորհակալութիւն էր սպասում ստանալու։ Նորա բարձր կերպարանքը, լուսնի լուսաւորութեան տակ, երկար ստուեր էր ձգում, և նա փիլիսոփայական մտածողութեան մէջ ընկղմուեց։

Ի՞նչ մի աշխարհ պիտի լինէր մեր այս աշխարհը, մտածեց նա, եթէ մարդկային ստուերը ոչ մի ժամանակ նորա վերայ չը կարողանար ընկնելու։

Այդ մտքի հետ տալով ու առնելով ու այդ գաղափարի վերայ մտատանջուելով, նա՝ յանկարծ՝ ծայրայեղ կերպով շփոթուեց, համարեա թէ երկիւղ կրելով. լոյսի մի ահագին ճառագայթ, ուղղակի երկնքից ընկնելով, նորա կերպարանքից ընկած ստուերը շտապով անյայտացրեց, նորա շուրջը խաղալով և փայլուն կրակի երկար լեզուներով փաթաթելով նորան։ Լի զմայլմունքով՝ նա իւր աչքերը բարձրացրեց. արևելքի վերայ պարզ-վարդագոյն ստուեր երևաց, ապա այդ ստուերը շտապով լայնացաւ, ամբողջովին՝ ոսկու ուղղաձիգ գծերով կտրուած, որոնք դրախտի դռների տեսիլքի նման էին երևում։ Իւր րոպէական երկիւղին տիրելով, նա շտապով դէպի Գալբուսը ընկաւ, որը, իւր վրանի մուտքի մօտ նստած և իւր նիզակին կռթնած, համարեա թէ ննջելու մօտ էր։

—Գալբուս, Գալբո՛ւս,—գոռաց նա։

Գալբուսը վայր թռչեց տեղից՝ կատաղի տեսքով, որպէս թէ մահով սպառնալով իւրաքանչիւր անհատի, ով կարող պիտի լինէր նախակարծելու, որ նիրհելու վերայ էր նա։

Մակսիմուսը, խիստ այլայլմունքի մէջ, նորա ձեռքից բռնեց և, կիսա-երկիւղի ու կիսա-ափշութեան մէջ, դէպի արևելք ցոյց տուեց։

—Գալբուս, հսկողութիւնը վերջացած է։ Նայի՛ր,—արփիակիզբն՜։ Լոյսը բացւում է՜։

XIII.

Գալբուսը կոպտութեամբ և շփոթուած նայեց։

—Լոյսը բացւում է... Լուսաբաց է, ասում ես դու... Ոչ, ոչ... Այս տեսակ տարօրինակ լոյսի ծագումն ոչ մի ժամանակ դեռ ես չէ եղել։—Եւ նա սարսափելի գունատուեց։—Դա կրակ է... կամ կայծակ... Մակսիմուս, Մակսիմուս, տեսողութիւնը խաբում է ինձ... այդ լոյսի մէջ մի ինչ որ անբնական ու չնաշխարհիկ բան կայ... Նա կուրացնում է ինձ... Ո՞վ աստուածներ, նայի՛ր։ Մակսիմուս, նայի՛ր։

Եւ տէգը անգիտակցաբար վայր ձգելով, նա երկու ձեռքն էլ դէպի երկինք բարձրացրեց, շնչառութիւնից ես զրկուելով ու չափազանց երկիւղից և զարմանքից այլ ևս անկարող լինելով մի որևէ խօսք արտասանելու։

Մակսիմուսը, նոյնպէս խօսելու անընդունակ, ըմբռնեց նորան և վայրենաբար ահռելի փայլմունքին նայեց, որը շրջապատելով նոցա, լուսաւորել էր ամբողջ այն տարածութիւնը, որը աչքի էր ընկնում։ Մինչ այդ՝ հրային առանցքի միջից մի տեսակ հովհարանման փայլուն սպիտակ ղանգուած բաժանուեց, և ինչպէս երկու ահագին կաղօղաւոր, բայց միգապատ թևեր, լայն տարածուելով, այսպէս ասած, այդ օդային թևերը հասնում էին արևելքից մինչև հարաւ, իսկ հիւսիսից՝ պայծառ ոսկեայ մակարդակի վերայ՝ բոլորովին նոյնատեսակ շլացուցիչ տեսիլք էր բաժանւում։ Յանկարծ, ինչպէս կարօղ հարուածից, երկիրը օրօրուեց և զարհուրելի փոթորիկ բարձրացաւ, որից ծառերը թեքուեցին ինչպէս թոյլ եղէգն, և, թւում

էր, վախեցած աստղերի ամբողջ բազմութիւն քշեց երկնքից։ Խուլ ձայնով գաղտնախորհուրդ թեւոր ճերմակութիւնը դէպի առաջ ձգուեց ու տարածուեց՝ կայծակի արագութեամբ։

—Գալբուս, Գալբո՛ւս.—կերկերաձայն կոչեց Մակսիմուսը, ծնկների վերայ ընկնելով և՝—յուսահատութեան երկիւղի ազդեցութեան տակ՝—ձեռքերով երեսը ծածկելով։—Ծալիր ծնկներդ, որովհետև մենք պէտք է որ մեռնե՛նք՝ Աստուածները երկրիս վերայ են վայր իջնո՛ւմ։ Նայի՛ր, ահա գալիս են Նոքա՛։

Երկիւղից չռուած աչքերով և առանց շնչառութեան, Գալբուսը համարեա իւր խելակորոյս աչքերը դէպի երկինք բարձրացրեց՝ տարօրինակ ակնարկով։ Նա պղտոր կերպով զգում էր, որ—իրաւացի—երկնային ուժերը տիրել էին բոլորին և որ անփախուստ մահը շուտափոյթ իրեն պիտի հասնէ։ Ոչ մի աշխարհային ուժ չը պիտի կարողանար այդպիսի րոպէի մէջ պահպանել մարդուս։ Ոչ մի մահացու ակնարկ չը պիտի կարողանար ներկայ տեսիլքի կուրացուցիչ փայլը տանել... Երկու մեծահրաշ օդային կերպարանքներ, մարդկային պատկերի տեսք ընդունած, ծաղկեցին փայփլուն արեւելքից և շարժուելով, կարծես, հրով և հողմով, ինչպէս մետէօրաներ, թռչում էին երկնքի վերայ, որոնք լռիկ ցած իջան և միասին Նազովրեցու ծածկուած գերեզմանի վերայ իջան։ Այդ գերաշխարհային արարածներից մէկը սպիտակ բոցով էր շրջապատուած. Նորա ճառագայթացոլ դէմքը, շողշողուն՝ ինչպէս փայլակ, պարզ ոսկեայ հերայց խոպոպիքների տակից լուսաւորուում էր, իսկ նորա գլխի վերայ հանգչում էր ճառագայթը, ինչպէս մի թանկագին պսակ։ Կաթուածահարի նման՝ Գալբուսը գետնի վերայ ընկաւ և ուշաթափուեց... Եւ այդ վայրկեանի մէջ այլ ևս ոչ ոք վկայ չէր Աստուածային հրաշալի երեւոյթին, ոչ ոք—բացի Բարաբբայից։ Երբ անսպասելի լոյսը երևաց, երբ հրաշալի տեսիլքները որոտմունքով և կայծակով երկնոի վերայ փռուեցին, նա դուրս սողաց իւր թագստատեղից և այժմ, ամբողջովին կծկուելով ու դողալով, անհասկանալի երկիւղի ազդեցութեան տակ, նա՝ անարգելը՝ անընական յայտնութիւնն էր դիտում, ոչ նորա միտքը և ոչ փառաւորութիւնը հասկանալով, այլ երեւակայելով, որ այդ բոլորը մի հրաշալի երկնային երազ է։ Մինչ նա կը նայէր, սուր լոյսը՝ ինչպէս մտրակ՝ խփուեց նորա աչքերին, և նա նոյնպէս ամբողջովին տատանուեց և, ուշաթափ լինելով, ընկաւ խորին—համարեա մահացու—խաւարի մէջ։ Երկիրը՝ թուում էր՝ դող էր բռնել, այդ ճառագայթացոլ Աստուածային Առաքեալների ներկայութիւնից իւր վերայ. Նոքա միասին

էին կանգնած, և իրենց թափանցիկ թեւերի փայլով՝ կարծես՝ կորչող լուսնի արծաթագոյն ճառագայթներն էին մթնեցնում. Նոցա ճառագայթափայլ դէմքերը դէպի ծածկուած քարայրն էին դարձրըուած, ուր նոցա Հրամանատարն էր ննջում։ Նոր ուժով մի անդիմադրելի հողմ բարձրացաւ, դարձեալ երկիրը տատանուեց և դողաց ու յաղթական և մեծաձայն որոտմունք հնչեց։ Օդային խորհրդաւոր ձայների անհամար բազմութիւն, թուում էր, մեծ ճշմարտութիւնների մասին էին շշնջում, որոնք պարտաւոր էին երեւալու. մահը մեռաւ, կեանքն անվերջանալի պիտի լինէ և անվախճան ու Աստուած՝ սիրոյ Աստուած է։

Հրեշտակները շուրջով կանգնած էին՝ մի կարգի վերայ, Նոցա երկնային աչերը աստուածային զմայլմամբ էին լուսաւորուած, և նոցա ամբողջ կերպարանքից երկար փայլուն ճառագայթներ էին դուրս գալիս, որոնք երկնքին հասնելով, թուում էր, վերջին ուշացած աստղերին էին հալածում։ Արշալոյսը մօտենում էր։ Բնութեան մոլեգին ակնկալութիւնը իւր սահմանին հասաւ. Թուում էր, որ այդ նորա ուժից վեր էր, երբ համայն աշխարհը և արեգակը, ճառագայթները, և բոլոր մոլորակները, կարծես թէ պիտի հալուեն գերթ ցօղիկաթիլներ, այդքան զմայլելի ակնկալութիւնի՛ց։ Արեւգալը մերձ էր, այն արեւացայթը, որը ոչ մի ուրիշ լուսաբացի չէր նմանում,—արշալոյս յոյսի, ուրախութեան, հաւատքի և սիրոյ, որոնցով յաւիտենական կեանքն է լցւում։ Այժմ խորին խաղաղութիւնը թագաւորեց։ Բոլոր գինուորներն էլ պարկած էին գետնի վերայ—ուշագնացութեան մէջ, կայծակի հարուածից խփուածի նման. Նախկին գաղտնամիտ երգեցողութիւնը կտրուեց. միմիայն Աստուածային առաքեալների թեւերի թեթեւակի թափահարումն մի տեսակ մեղեդու նման շշնջոց էր հանում, իսկ այս ամեն ինչ խորհրդաւոր լռութեան մէջ ընկզմեց... Յանկարծ խորհրդաւոր խաղաղութեան տակ, ահագին վիմաքարը, որը Խաչեցեալի գերեզմանն էր ծածկում,—դողաց և... 'ի բաց ընկեց, ինչպէս մի դուռն—ի քթթել ական բացուած կայսերի հանդիսաւոր ելքի ժամանակ..

Գերեզմանից երևաց երրորդ ամենափառ հրեշտակ։ Գերբնական գեղեցկութեամբ տիրացած, նա կանգնեց, այդ յարուցեալն 'ի մեռելոց, և սիրող աչերով համայն մարդկային աշխարհին նայեց, որը անյիշողութեան և մրափի մէջ էր խորասուզուած. միևնոյն գերբնական Պատկերը, ոչ այնքան ուշ Խաչելութեան և Մահու Խաչը լուսաւորող, այժմ յաղթական ժպիտով ընծայեց անբաղդ մարդկութեան թէ յաւիտենական և թէ երջանկութիւն սպասող անմահ

կեանք։ Շնորհապարտ երկինքը ի պատասխան լուսաւորուեց, երկիրը կենդանացաւ, և ամեն մի ծաղիկ, Նորաձոր բուսականութեան իւրաքանչիւր թերթիկը քաղցր անուշահոտութիւն ու խնկաբոյր հոտ տարածեց. համայն բնութիւնը ցնծում էր յաւիտենականութեան հետ չփուելու համար և լուսաբացի պղտոր մոխրագոյն տեսքը բոլոր գետինը ծածկեց սպիտակ, ջինջ սպիտակ խանձարուրով, որպէս թէ օրհնաբանելով Նորան։ Խաչեցեալ և Յարեալ Մարդը այժմ Աստծու Մարդի հետ մի խորհրդաւոր միաւորումն էր պատկերացնում, հաստատելով, որ մեղքից ազատուած հոգեկան ուժերի համար չը կայ ո՛չ պատնէշ, ո՛չ թաւալումն և ո՛չ վերջ։ Յաւիտենական բաժանմունք չը կայ այլ ես Նոցա համար, որոնք երկրիս վերայ մէկմէկու սիրեցին, չը կայ այլ ես անելանելի յուսահատութիւն,—մարդկային յանցանքը գնուած է և մահ չը կա՛յ։

Կարօղ հրեշտակները բարեբարոյ խոնարհութեամբ գլխները կռացրին, իսկ Նա, Ով գերապանծութեամբ Նոցա առջև էր կանգնած, իւր ջինջ, հրաշալի ակնարկը դէպի երկինք բարձրացրեց, ապա դարձրեց Նորան անխօս գետնի վերայ և օրհնաբանող շարժմունքով՝ ձեռքերը տարածեց։ Դժգոյն և խոնաշամանդաղը, ինչպէս մըխացող կնդրուկ, դանդաղութեամբ բարձրացաւ արևելքից ու տակաւ առ տակաւ մշուշապատ լոյսը տարածուել սկսեց. Նախկին ծիրանի—հրափայլ գոյնը վարդային թերթիկի գունատ սառեցման փոխուեց, մի քնքուշ սառեր տարածուեց ամբողջ երկրիս վերայ, Նախկին լուսաւորութեան պայծառ փայփլումը՝ փափուկ արծաթագոյն ճառագայթների փոխելով։ Ձնաշխարհային ճառագայթացողումն, որով Յարեալն էր պատուած՝ տակաւ առ տակաւ և հանդարտ անյայտացաւ։ Նորա Մարդկային Պատկերը աւելի և աւելի պարզում էր ու պարզում, այնպէս, որ Նա համարեա միևնոյն տեսքը ընդունեց, ինչ պատկեր որ ունէր Պիղատոսի առջև կանգնած ժամանակ, երբ մարդկային օրէնքը Նորան մարդկային մահուան մատնեց։ Միմիայն Նորա դէմքի վերայ արտափայլում էր աւելի ես գերբնագոյն փառք ու անսահման ընդհանրական ոյժի արտայայտութիւն. ամենամեծ իմացականութիւնն բոլորի և բոլոր, որը փառաւորում էր Նորան ստորադրեալ հրեշտակների աչաց առջևն անգամ։ Նա դէպ՝ Նոցա դարձաւ լռիկ հրամանով. մի լուսափայլ արարած անյայտացաւ, ինչպէս հալող ամպ—քարայրի մէջ, որը այնքան գերբնական իմն ուժով բացուած էր, իսկ միւսը, ահագին վիմաքարին մօտենալով, որը ոչ հեռաւորութեան վերայ էր ընկած, իջաւ նորա վերայ, ինչպէս մի փայլուն Հրաշք՝ ճառագայթացող թևերով։

Մինչ այդ՝ Նա, Ով հաստատեց, որ մահը միևնոյն կեանքի տարբեր և մի ուրիշ անունն է, սկսեց դանդաղութեամբ ետ և առաջ քայլել թափթփուած թփերի միջով, որոնք իրենց ոչ արհեստական ճոխութեամբ՝ այդ տեղին մի տեսակ, ամայի կողմերին յատուկ, զմայլելի գեղեցկութիւն էին պարգևում։ Նա քայլում էր, որպէս թէ գետինը սիրելով. անգամ բոյսի թերթիկներին Նորա ոտքերը քնքշութեամբ էին կպչում. Նորան շրջապատող տերևները դէպի Նա էին ձգւում աներկիւղ, Նորա օրհնութիւնը խնդրելով, և իրենց մէջ նոր կեանք ծծելով ու նոր զգացմունք՝ կախուած Նորա Ներկայութիւնից։ Իւրաքանչիւր վայրկեանի մէջ, Նորա պատկերը աւելի և աւելի Մարդկային էր դառնում։ Երկրիս ամենախոր կուրծքից, երկրի ընդերքից Նա, թւում էր, իւր համար մահացու պատեան ու մարդկային փաթեթ էր դուրս կորզում։ Հազիւ երբեմն Նա կանգ էր առնում, մարդկանց անզգայ կիրպարանքներին նայելու, որոնք գրուած էին Նորա գերեզմանը պահպանելու, և Նորա գաղտնագէտ աչերի մէջ՝ խորին կարեկցութիւն, անսահման, անփոփոխ, անշահասէր սէր էին արտափայլում, որոնք միակ Աստծուց կարող պիտի լինէին դուրս գալու։ Դանդաղ և անլսելի Նոցա միջից անցնելով, մինչդեռ Նոքա անշարժ պարկած էին, Նորա մերձաւորութիւնը չը զգալով,—նոյնպէս, ինչպէս և մենք, մեր վստահ ու սառնասիրտ անձնայարգութեան մէջ չենք նկատում, թէ երբ է Նա մեր մէջ։ Նա այն տեղին մօտեցաւ, որտեղ յանցաւոր Բարաբբան էր պարկած, մեռածի նման։ Նա պարկած էր, տարածած ձեռքերով, որպէս թէ գետինը Նորա խաչն էր, որի վերայ խաչուած էր նա. Նա յանցաւոր էր,—մոլորուած մի մարդ, վայրենաբարոյ, մոլի ցանկութիւններով բռնուած և ամեն տեսակ պատժի պատրաստ, կազմ ու առ երես վայրկենական ՝ի չիք դարձնող պատուհասի։ Ի՞նչ արեց Նա, յանցաւոր, սպանութեամբ արատաւորուած, գողի դրոշմով խարուած, հազարաւոր մեղքերով լցուած, որ արժանի լինէ այն անչափ կարեկցութեան և ներման, որոնք արտայայտւում էին այն քնքուշ ակնարկի մէջ, որը Նորա վերայ էր ձգել Յարուցեալ Քրիստոսը։ Ի՞նչ արեց Նա։—Ոչինչ արժանաւոր գործ նա չէր կատարել, և չէր էլ կամենում կատարած լինե՛լ։ Սոսկ միայն կարեկցական մի միտք ծնուեց Նորա մութ հոգու մէջ, այդ Խաչուած Մարդի տանջանքները տեսնելիս, և Նա սուրբ ու անմեղ Կալանաւորի վերայ, Նորա չարչարանքի ժամանակ, արցունքներ թափեց. մարդկային չարութիւնով համակուած, Նա ծարաւեց գիտենալ և այն սքանչելի իդէալին (գաղափար) ծառայել, որը բոլոր ժամանակների համար էլ էր, ահա՛, բոլորը—ուրիշ ոչինչ։ Բայց այդ ես բաւական

էր, անմահ Վարդապետին և Մեծ Ուսուցչին գլուխը։ Բարաբբային նայելիս, հրաշալի աստուածային Կերպարանքը տխրութեան ստուերով նըսեմանալու նման պղտորուեց, կարծես թէ ծանրկեկ ապագայի նախատեսութիւնից։ Բարաբբան կենդանական մարդկութեան սիմվոլն էր կազմում, այն մարդկութեան, որը աղօտ կերպով զգում է Ամենաբարձրեալի կամքը համաստեղութեան, բոլոր տիեզերքի վերայ, բայց՝ միևնոյն ժամանակ՝ այն բոլոր երևոյթները թօթափող, որոնք այդ հզօր կամքից կախումըն ունին յաւէտ, ու իւր վայրենաբարոյ ցանկութիւնները և երկիւղածութիւնը առաջ քաշող մի այնպիսի մտայոյզութեամբ, որը կաթիլ մի ցօղ է Աստուածային Նախասահմանութեան արփային հրածնի առջև,—որպէս զի իրեն Յաւիտենական Աստծու յայտ գալուց պահպանէ։ Առընթեր Բարաբբայի, ինչպէս արտակարգ հակապատկեր, Աստուածային Հոգու ջինջ ու մեծախորհուրդ մարմնացումն էր կանգ առել—կատարելագործուած մարդկութեան կեանքի էմբլեման (խորհրդական նշան), հանճարի սիմվոլը (Նշանաբան), որը՝ տանջուած չարչարանքներով, հալածուած բամբասանքներով և չարախօսութիւնների տակ ծածկուած, խաչուած և թաղուած... յարութիւն առաւ՝—յաղթելով թէ մահուան, և թէ չարին։

Մի մեղմիկ հառաչանք լուծեց օդի խաղաղութիւնը. հեծեծանքը Նորա, Ով գիտէր, որ մարդկութեան անխիղճ կամքով պիտի տեւականին Իրեն և մտաւորապէս դեռ շատ և շատ դարեր 'ի խաչ հանեն՝ նորից և նորից։ Ահա աշխարհիս յարութիւն առած Փրկիչն դարձաւ և խաղաղաշարժ քայլերով անցաւ դողդոջուն թփերի միջից։

Արեգակի ծագելուն դեռ շատ ժամանակ կար։ Քնքուշ ու անուշահոտ բուրմունքը պատել էր տիեզերքին և համայն բնութիւնը խորասուզուեց սրտառուչ խաղաղութեան և զմայլելի երկրպագութեան մէջ, զգալով, որ կենաց Վարդապետը և Տէրը այժմ, ինչպէս և նախ, ինքնիշխանութեամբ իւր երկրի վերայ էր ընթանում։

XIV.

Ցաւից և անհասկանալի երկիւղից ամբողջ մարմնով դողալով, Բարաբբան—վերջապէս—իւր երկարատև ուշաթափութիւնից արթնացաւ։ Մի ինչ որ բան էր պատահել, բայց ինչ։ Նա շփեց աչքերը և՝ բարձրանալով՝ անհանգստութեամբ շուրջը նայեց. Նա իւր հին տեղի վերայ էր գտնուում—լեռան մօտ, քարայրի ետև. բայց այժմ

ոչ թէ փոսի մէջ, այլ թէ աւելի վերև. աղօտ կերպով յիշեց նա, որ, նորա հետ մի ինչ որ տարօրինակ բան պատահեց. մի տեսակ անբնական, բայց փայլուն երազ կամ տեսիլք, որից խելքը կորցրեց նա։ Թւում էր նորան, որ նա երկու արարած է տեսել և այն ոչ երկրային, որոնք կարծես թէ կրակից կազմուած լինէին և որոնք վայր էին իջնում ուղիղ Նազովրեցու շիրմի վերայ, բայց նա նոցա երկար ժամանակ նայել չը կարողացաւ,—նորա աչքերը մի տեսակ մշուշով ծածկուեցին, և այլ ևս նա ոչինչ չը տեսաւ։

—Նայիր ու միտ առ, երբ Ուսուցիչը գայ, որ նա քեզ քնած չը գտնէր։

Այդ խօսքերը, որ ասել էր նորան Մելխիօրը՝ նորա այդտեղ գալուց առաջ, այժմ յիշեց նա, որոնք անդուր կերպով ափշեցրին նորան։ Մի՞թէ իրաւացի քնեց նա։ Մի՞թէ Ուսուցիչը եկաւ։

Հանդարտութեամբ ոտքի կանգնելով, նա դէպի աջ ու ձախ նայեց. ոչինչ—երևի—չէր փոխուել։ Ձիթենիների վրանները սպիտակին էին տալիս արշալոյսի դժգոյն—մոխրագոյն լուսաւորութեան տակ, մարդիկ, ակնյայտնի էր, դեռ ևս իրենց ժամանակաւոր կացարանները և պահպանութեան տեղին չէին ձգել, թէպէտ և գիշերը արդէն անցել էր և այնպէս էր թւում, թէ արեգակը դուրս է գալիս։ Մի ինչ որ կախարդիչ անուշաբոյրութիւն կար հրաշալի առաւօտեայ թարմութեան մէջ։ Աշխարհը վերանորոգուած էր թւում և որպէս թէ մահուան դէմ կեանքի յաղթանակն էր զգում։ Բարաբբան՝ վրդոված և անհանգստացած, այնուամենայնիւ, մի տեսակ մխիթարութիւն ստացաւ իրեն շրջապատող խորին անդորրութիւնից։ Կատարելապէս զգալով իրեն և տիրանալով իւր վերայ, նա՝ թւում էր՝ պատրաստուում էր ուղղակի քարայրի մօտ գնալ և Գալբուսին փնտռել ու հարցնել՝ թէ նա ինչ անկացրեց գիշերը, ապա սկսեց տատանուել իւր մտքերի մէջ. եթէ, իրաւ որ, մի ինչ որ բան էր պատահել, չըպիտի՞ սկսեն նորան,—Բարաբբային, կասկածել։ Մինչ նա դեռ ևս անվճռականութեան մէջ էր կանգնած, մի փափուկ և գաղտնապահ քայլեր ջոկեց, որոնք՝ անշուշտ՝ որևէ մի անձնաւորութեան էին պատկանում. Նա շուտափոյթ նորից իւր խորշի մէջ իջաւ, որտեղից կարող պիտի լինէր տեսնելու բոլոր ինչ,—ինքը ոչ ոքից չը նկատուելով։ Երեք կանայք էին գնում քաղաքի ճանապարհով. Նոցանից առաջինը Մարիամ Մագդաղենացին էր։ Նա գըլուխը տխրութեամբ ցած էր ձգել և գնում էր դանդաղ՝ անհուն տխրութեան տեսքով. Նա իւր ձեռքերի մէջ ծաղիկներ ունէր բըռնած, նոյնպէս և հոտաւէտ խոտեր ու նորա կոպիտ հագուստի ամեն

մի ծալքերը անուշ հոտ էին բուրում։ Այդ կանայք իրար մէջ ոչինչ չէին խօսում. նոքա բոլորն էլ խորին յուսահատութեան լռութեան մէջ էին խորասուզուած։ Երբ նոքա այն տեղի մօտից անցան, ուր Բարաբբան էր պահուած, նա զգուշութեամբ նոցա վերայ նայեց, միենոյն ժամանակ մտածելով. խելացի կը լինէ արդեօք, եթէ նա նոցա հետեւելու լինէ։ Նոքա այդ մօտեցող օրուայ կիսալոյսի մէջ միգային ուրուականների էին նմանում։ Հազիւ եթեմն Մագդաղենացու ոսկեհուռ մազերի փայլը նոցա վերայ աւելի կենդանական նշոյլ էր ձգում։

Դժգոյն, անբաղդ, վշտալի կանայք—մտածեց Բարաբբան,—նոքա այստեղ են, որպէս զի Նազովրեցի մեռած Մարդուն յաճախեն։ Նորա սիրոյ և ամենաներողամտութեան ժպիտը այլ եւս չը պիտի լուսաւորէ նոցա միայնակ կեանքը՜։ Նոքա այլ եւ՚ս ՚ի զուր նորոգեն պիտի յուսահատութեան անզատութիւնը, հանդարտ գերեզմանին նայելով, որը իւր զոհին չը պիտի տայ, չը նայելով՝ նոյն իսկ՝ և ոչ մի տեսակ կանացի քնքոյշ արցունքներին։

Այդպէս էր մտածում Բարաբբան՝ կարեկցութեամբ, թէպէտ և նա չէր կարող բոլորովին բաժանուել երկիւղի զգացմունքից և կասկածանքից, իւր գիշերուան երազի յիշողութեան վերաբերութեամբ, որպիսի տեսիլքի ժամանակ, նորա աչքերը չը կարողացան տանել հրեշտակային թեւերի կուրացուցիչ ճերմակութիւնը։ Յանկարծ սրտաճմլիկ մի ճիչ խանգարեց դիւթիչ խաղաղութիւնը և երկու կանայք շտապով դէպի ետ վազեցին՝ նոյն ճանապարհով, աննկարագրելի երկիւղի տարափի տակ, ամեն մի անձնական զգուշութիւնները մոռանալով։ Բարաբբան դուրս թռաւ իւր խորշի միջից և նոցա ճանապարհը կտրեց։

—Ի՞նչ է,—այլայլուած հարցրեց նա։ —Ասացէք շուտափոյթ։ Ի՞նչ պատահեց։

—Նա յարեաւ, Նա յարեաւ.—գոռացին նոքա, շտապելով ամեն ինչ միասին ասել և միանգամից։ — Կնիքները կտրտուած—փշուր փշուր են եղած, գերեզմանի վերայից վէմը թաւալուած է՝ և Տիրոջ հրեշտակը այն տեղ է։ Նա յարութիւն առաւ։

Նոքա ցանկացան դէպ՚ առաջ վազելու, բայց Բարաբբան դողդոջ ձեռքերով բռնեց նոցա ու կանգնեցրեց։

—Դուք խելքից դուրս էք եկել,—կոչեց նա, — դէպի ու՞ր էք շտապում դուք։

Նոքա անհամբերութեամբ դէպի քաղաքն ցոյց տուեցին։

—Այնտեղ,—ասացին նոքա։—Մենք պարտական ենք նորա ա-

շակերտներին կոչելու։ Գնա՛, նայիր այնտեղը, ուրտեղ մեր Տէրն էր պառկած. ոչ ոք չը պիտի խանգարէ քեզ, զինուորները այն տեղ պառկած են՝ մեռած։ Նա յարեաւ, Քրիստոս Յարեաւ ՚ի մեռելոց...—և նոքա արագ արագ դէպի առաջ վազեցին, որպէս թէ անտեսանելի թեւերից քաշուելով։

Բարաբբան այլեւս չը սպասեց. նա շտապով քարայրի մօտ վազեց, տենդային ակնկալութիւնից ամբողջովին դողալով։ Նազովրեցու գերեզմանից մի քանի քայլ առդին, նա դադարեց վազելուց, ափշած և վախեցած տարօրինակ պատկերով։ Այդ ճշմարիտ էր։ Պահնակը իրաւացի քնած էր անուշ՝ մրափի մէջ ընկղմուած։ Գալրուսը և միւս զինուորները պառկած էին, կարծես պատերազմական դաշտի վերայ ընկածներ։ Այն՝ ինչ մինչ այդ ժամանակ անիրագործելի էր երեւում, այժմ կատարուեց. այրը բաց էր։ Բայց ո՞ւր էր հրեշտակը, որի մասին կանայք խօսում էին,—Բարաբբան չը կարողացաւ տեսնել, թէպէտ և նորան երեւաց, որ մի ինչ որ աներնական լոյս փայլում էր թաւալագլոր քարի վերայ, նորան փայլուն յղկած ոսկու մեծակտորի տեսք տալով։ Նա անհասկացողութեամբ շփեց աչքերը. այդպիսի հրաշքները ստիպում էին նորան իւր սեփհական զգացմունքի վերայ կասկածել և իւր տեսողութեան պատրանքը ի նկատի ունենալ, բայց այն տեղ, մուտքից դէպի բաց քարայրը՝ ոչ հեռու, նա որպէս թէ մի ընկած մարդու զանազանեց. այո՛, դա Մագդաղենացին էր, որը, երեւի, ուշաթափ էր եղած։ Բարաբբան նորան մօտենալ կամեցաւ, բայց մի անտեսանելի ոյժ գամեց նորան իւր տեղի վերայ և նա, երկիւղով ու զարմացմամբ բռնուած, չը համարձակուեց դէպ՚ առաջ դիմել։ Նա սկսեց նէրա վերայ գէթ հեռուից ուշադիր լինել, մինչ տեսաւ, թէ ինչպէս՝ վերջապէս՝ բարձրացաւ նէ և թոյլ, դողդոջ ու անհաւասար քայլերով դէպի մուտքը շարժուեց։ Յանկարծ խաղաղ և անդորր մի ձայն խորին խաղաղութիւնը խզեց.

—Կին դու, զի՞ լաս։

Անհասկանալի այլայլմունքից ամբողջովին դողալով, Բարաբբան տեսաւ, թէ ինչպէս Մագդաղենացին ծունկ իջաւ և՝ յուսահատ աղերսանքի տակ՝ իւր ձեռքերը տարածեց։

—Զի բարձին զՏէրն իմ ի գերեզմանէ ասաւ, եւ ոչ գիտեմ ո՞ւր եդին զնա։

— Խորին լռութիւն տիրեց։ Քարի վերայ անդրացոլացող ոսկեղէն փայլը անյայտացաւ. սկսեց մի ուրիշ լոյս երեւալ—առաւօտեր ծագող արեգակի։ Անմխիթար և պատասխան չը ստացած Մագդաղենացին իւր դէմքը բացուած ձեռքերի մէջ ծածկեց. հրեշտակնե-

րին նէ տեսաւ—մէկին գլխավերևը, իսկ միւսին ոտքերի մօտ, այն սալի վերայ, որտեղ նէրա Ուսուցիչն էր պարկած՝ իւր կարճատև մահուան ժամանակ։ Բայց ինչ պիտի արժենային արքայութեան բոլոր հրեշտակներն իսկ, երբ Նա Ինքը, սիրեցեալը չը կար։ Եւ յուզուած և մինչ սրտի խորքը յուսահատութեան զգացմունքով, նոյնպէս և իւր միայնակութեան թախիծով, նէ շարունակեց արտասուել, և նէրա ամբողջ ճկուն մարմինը հեկեկանքներից դողում էր, այնպիսի մի հեծեծանքներից, որոնք առաջ էին գալիս Նորա բացակայութիւնից, Որը իւր թօղութեամբ նէրա կեանքը գնե՛ց։ Բայց մինչ նէ ամբողջովին իւր վշտին էր նուիրուել, այդ տեսարանի միւս վկան—Բարաբբան յանկարծ հէնց նոյն օդի մէջ զգաց մի ինչ որ մեծափառ և ահարկու ոյժի թէ ներկայութիւնը և թէ գերաշխարհային փառքի մի ներշնչումն, որից համայն մթնոլորտը՝ կարծես թէ՝ դողայ, ինչպէս պատահում է այդ որոտմունքից առաջ։ Ոյժասպառ և դողդոջուն, նա աւելի շուտ զգաց, քան թէ տեսաւ, որ մի կերպարանք դանդաղ դէպի վիմափորն էր մօտենում. ակնկալութեան և անհասկանալի մտադրութեան ծայրայեղ հոգեվարքի մէջ, նա իւր աչքերը բարձրացրեց և տեսաւ... կենդանի Նազովրեցուն։ Խաչուած, մեռած, թաղուած—Նա կանգնած էր նորա առջև՝ կենդանի, նոյն տեսքով, որպիսին ունէր Նա նախ, մինչ դէպի խաչելութիւն կը դիմէր. նոյնը, բոլորովին նոյնը, դէմքի միևնոյն գծերով, նոյնչափ մարդ, ինչպէս և բոլոր մարդիկ, միայն թէ Նորա հագուստը՝ ըստ երևոյթին՝ հիւսուած ու գործուած էր թէ փայլուն կրակից և թէ լոյսից։ Առանց շունչ քաշելու, պղտորուած աչքերով, անընդունակ և ոչ մի ձայն արտասանելու, Բարաբբան Նորա վերայ նայեց, Նորա դէմքի չնաշխարհային գեղեցկութիւնը լիովին ճանաչելով, մտաբերելով այն իմաստութիւնը և անհուն սէրը, որոնք Նորա ճառագայթացոլ աչերի մէջ էին անդրադառնում, բայց այդ հրաշքը ճշմարտութեան տեղ ընդունելուց մի տեսակ երկիւղ էր զգում նա։ Մեծափառ հանդարտութեամբ, առանց ձայն հանելու, ինչպէս Արքայական Հոգի մահացու պատեանի մէջ, շարժում էր Նա, և տակաւ առ տակաւ այն տեղին մօտեցաւ, որտեղ Մագդաղենացին միայնակ լաց էր լինում։ Նէրա առընթեր կանգ առնելով, Նա խօսեց հանդարտիկ, կախարդիչ, չնաշխարհիկ ձայնով.

—Կին դու, զի՛ լաս, զո՞ խնդրես։

Անհանգիստ շարժմունքով նէ կիսաթեքեր դէպի Նորա կողմը դարձաւ, կէս մի շուռ գալով և Նորա վերայ նայելով՝ արցունքների և թարթիչների ծածկոյթի միջից, միմիայն հասկանա-

լով այն, որ մէկը նէրա տխրութեան մասին է հարցնում, բայց թէ ով, նէ ինքն ևս չը կարողանալով գիտենալ։ Խորին հառաչանքով նէ նորից գլուխը խոնարհեց և տխրութեամբ պատասխանեց.

— Տէր, եթէ դու բարձեր զնա, ասա ինձ ո՞ւր եդիր զնա, զի ես առից զնա։

— Մարիա՛մ։

Սքանչելի սուրբ*) անունը, քաղցր մեղեդու հնչիւնով և լռութիւնը լուծելով, տարածուեց օդի մէջ։ Նէ սարսեց, վեր ցաթկեց տեղից, երերուն ոտների վերայ կանգնեց, նայեց Նորա վերայ վայրենաբար, ափշած, տարակուսանքով... ապա հրճուանքի ճիչ և ուրախութեան աղաղակ բարձրացնելով, որը՝ թւում էր՝ մինչ երկնքի խորքը սլացաւ, նէ ծունկ չոքեց։

— Ռա՛բբունի,—բացականչեց Մագդաղենացին, և ձեռքերն դէպի յարուցեալ Քրիստոսն տարածեց, Որի ներկայութիւնը համայն աշխարհիս համար փրկութեան կենդանի նշան էր կազմում։ Գերբնական լոյսը պատել էր Նորան, այնտեղ, որտեղ կանգնած էր Նա, գետինը դողում էր. արգելիչ, բայց քնքուշ շարժմունքով Նա նէրան թոյլ չը տուեց էլ աւելի մօտենալ։

— Մի՛ մերձենար յիս, զի չեւ ևս ելեալ եմ առ Հայր իմ։

Երբ արտասանեց Նա այդ խօսքերը, Նորա ամբողջ պատկերը աւելի ևս լուսաւորուեց։ Նա իւր աչերը զարթնած երկնքին ձգեց. թւում էր, թէ նորածին առաւօտեան բոլոր ծիածանագոյն երփնագեղ գոյները Նորա վերայ և Նորա շուրջն էին վխտում, լոյսի միշտ մեծ և աւելի մեծ շրջաններ գոյացնելով, մինչդեռ ծագած արեգակի առաջին ճառագայթները մինչ իրեն՝ երկնքին հասնելով, կայսերական պսակ էին կազմում աշխարհիս Հրամանատարի գլխի վերայ, 'ի մի խմբուելով և գեղգեղուն լոյսերով միախառնուելով։ Աստուածութիւնը Նորան անասելի փառքով և մեծութեամբ էր ծածկում. երբ Նորա ձայնը հնչեց նորից, այս անգամ թէ հրամայական և թէ իշխանական ելևէջներով էր համակուած. Հոգեզմայլ Աստուածային ձայնը խօսեց.

— Երթ դու առ եղբարսն իմ, եւ ասա ցնոսա. ելանեմ ես առ Հայրն իմ և առ Հայր ձեր, եւ Աստուածն իմ եւ Աստուած ձե՛ր։

Մի անգամ ևս, դարձեալ վայրկեան մի իւր ստեղծագործութիւնները Նորա վերայ նայեցին։ Մագդաղենացին լռիկ հոգեզմայլ յափշտակութեամբ, Բարաբբան զարմանքի հիասթափութեան մէջ,

---

*) Մարիամ || բարձրացեալ—լուսաւոր։ (Բ. Բ.) Ծ. Հ. Թ.

բայց ոչ առանց մի տեսակ անըմբռնողութեան և անհաւատութեան խառնուրդի։ Ապա մի տեսակ չփոթութիւն տիրեց համայն բնութեան. դատարկութեան և զրկողութեան մի զգացմունք։ Մահուան Կայսերական Ցաղթանակողը այլ ևս իւր օքանչելիութեան արփիահրատութիւնը ծնուող օրին չէր պարգևում։ Նա արդէն չը կար, Նա անյայտացաւ, ինչպէս ամառնային ամպ, տարածութեան մէջ կլանուած, և միմիայն հոտաւէտ ձիւնափայլ ծաղիկներն էին ցոյց տալիս այն տեղը, ուրեղ կանգնած էր Նա։ Տակաւ առ տակաւ, խորին խաղաղութիւնը խանգարելով, արթնած քաղաքային կեանքի հեռաւոր աղաղակն էր հնչում. գիշերուայ գաղտնախորհուրդ հրաշքներն վերջացած էին։ Առաջին կիւրակէն իւր փառքը տարածեց, և արեգակը զմայլութեան տակ բորբոքուելով ու բոցավառուելով, վերջնականապէս բարձրացաւ՝ թէ փառքով և թէ յաղթանակով։

XV.

Երկիւղը և զարմանքը, որոնք մի տեսակ կախարդական ոյժով կաշկանդում էին—մինչ այդ—Բարաբբային,—անյայտացան։ Վայրենաբարոյ դէպի առաջ դիմելով, և համարեա իւր անելիքը չը զգալով, Նա Մագդաղենացուն մօտեցաւ, որը դեռ ևս ծնկաչոք ընկած էր միևնոյն տեղում, որտեղ Տէրը թողեց նորան, և, զմայլած, դէպի երկինք բարձրացնելով իւր ձեռքերը, այնպէս էր թւում, որ յաւիտենական ուրախութիւնների խորհրդաւոր յայտնութեան է ուշադիր լինում։ Մութ կասկածանքի ազդեցութեան տակ, յանկարծակի երևացող կոպիտ խստութեամբ, Բարաբբան ըմբռնեց նորա ձեռքերից։

—Ինչո՞ւ համար ես դու տարածութեանը աղօթում,—գոռաց նա ցասկոտ։—Հէնց նոր՝ այստեղ Նազովրեցին էր գտնուում։ Ո՞ւր փախչեց Նա։

Մարիամը, իւր զմայլած դրութիւնից արթնացաւ, դողդողաց, և իւր բիրտ հարց առաջարկող մարդուն նայեց, զարմանքի հեգ արտայայտութեամբ. կիսավշտահար, կիսաուրախ ժպիտ երևաց նորա շրթունքների վերայ, որպէս թէ նա հէնց նոր էր զարթնած ու դեռ ևս յիշում էր իւր հրաշալի տեսիլը։

—Այո՛, ճշմարիտ որ Նա այս տեղ էր,—պատասխանեց նա զմայլած ձայնով։—Իրաւացի, թէպէտ իմ թոյլ հոգին չէր կարող

դորան միանգամից հաւատալու։ Նա յարեաւ 'ի մեռելո՛ց։ Սորանից զ'կնի, ո՞վ պիտի երկիւղ կրէ գերեզմանի զարհուրանքից։ Նա յաղթեա՛ւ։ Իրաւացի Աստուած մեր մէջ յայտնեցաւ, աշխարհիս վշտերն թեթևացնելու և ամոքելու համա՛ր։

Մագդաղենացին դեռ ևս մի տեսակ ինքնամոռացութեան մէջ էր գտնուում, նորա աչքերը փայլում էին՝ ինչպէս աստղեր, երեսը հրեշտակային գեղեցկութեան դրոշմն էր կրում։ Բարաբբան աւելի և աւելի դժգոհութիւն զգաց։

—Կինարմատի մէկը, դու խելքահան ես եղել կամ դեռ ես քնի մէջ ես.—բացականչեց Նա։—Քո Ուսուցիչը միշտ հրաշքներ է գործում։ Այդպիսի հրաշքներ Նա հէնց այս գիշեր էլ էր գործում։ Նորա յարութեան վերաբերեալ և մեռեալների ցանկից դուրս գալու վերաբերութեամբ ոչինչ մի պատմիր ինձ, քանի որ դու ինքդ շատ լաւ գիտես, որ Նա ոչ մի ժամանակ չէ մեռել։

Մարիամը ղանդաղ վեր կացաւ և իւր ծըփծըփուն մազերի ճոխ հիւսկէնները դէպի ետ ձգելով, անըմբռնողական նորա վերայ նայեց։

—Ոչ մի ժամանակ չէ՞ մեռել,—կրկնեց նա։—Ի՞նչ ես ուզում ասել դորանով։ Չէ թէ դու, Բարաբբա, ինքդ տեսար, թէ ինչպէ՞ս մեռաւ Նա։ Մի՞թէ դու ինքդ ինձ հետ չը արտասուեցիր Նորա երկարատև հոգեվարքի վերայ։ Եւ մի՞թէ դու այժմ չը տեսար Նորան —դարձեալ կենդանի։ Ո՞ւր է քո դատողութիւնը, որ դու Աստծուն իսկ չես հաւատում։ Բայց ասա՛ ինձ, թէ դու ինչ կերպով ես այստեղ գտնուում։

Բարաբբան ոչինչ չը պատասխանեց։ Նորա մութ յօնքերը կիտուած էին, նա այլայլմունքից բոլոր անդամներով դողում էր, բայց դեռ դարձեալ կասկածում և զանազան ենթադրութիւններ էր անում։ Նա բացուած վիմափորին մօտեցաւ և թերահաւատութեամբ նորան նայեց, ապա, մի լուպէաչափ երերմունքից յետոյ, կռացաւ և ներս մտաւ։ Բացի քարեայ փորուածքից, ոչինչ չէր երեւում, հէնց այդ նիշի մէջ էին դրել Նազովրեցուն. կտաւեայ պատանքները, օծանելիքով փաթաթուած էր նա, դեռ այժմ իսկ փաթաթուած ու մի անկիւնում էին ընկած։ Նա դուրս եկաւ յուսահատ և անբաւական։ Նա ծարաւում էր կասկածանք յայտնելու, որը, ինչպէս մի չար հոգի, նորա մտքին էր տիրել, բայց նա ամաչեց արտայայտելու այդ, դիմացի կնոջ խորին հնազանդութեան և անխախտ հաւատքի բնքուշ զմայլմունքն տեսնելու ժամանակ, որը իւր սիրով անհամեմատ ուժեղ էր Բարաբբայից, որը կամաւոր անհաւատութեան տարակուսանքների տակ էր մաքառում։ Մինչ Բարաբբան կըտատան-

ուէր Մագդաղենացուն հետևելով, արեգակի ճառագայթները հեռու և հեռու տարածուելով, կենդանաբար ներգործութիւն առաջացրին դեռ ևս պարկած և այս կամ այն կողմ տարածուած զինուորների վերայ։ Նոցանից մէկը յանկարծ ուշքի եկաւ մի այնպիսի զարմանք դրոշմուած դէմքի վերայ, որպէս թէ նա հէնց նոր ընկած լինէր երկնքից։

—Ո՜հ աստուածներ,—կոչեց նա ուժգին ձայնով։ Ի՞նչ է պատահել։ Բոլորն էլ քնած են։—Գայբուս, Մակսիմուս, Դիօն, Անտոնի՜ուս։ Օրը վաղուց է կանգնած, մինչդեռ մեր պահնակներից ոչոք չէ զարթնո՜ւմ։

Այն աղաղակը, որ բարձրացրեց նա, որին յաջորդում էին և— ոչ մի անգամ—հարուածներ, վերջապէս ներգործեց նորա ընկերակիցներին։ Բայց նախ՝ մինչ այդ կը յաջողէր նորան, Բարաբբան Մագդաղենացու ձեռքից բռնեց և նորան իր հետևից քարշ տալով, պահուեց այն ժայռի հետևը, որի մէջ գտնուում էր վիմափորը։ Նոքա այնքան արագ պահուեցին, որ ոչ ոք չը կարողացաւ նկատել։ Այդ տեղ նա կանգ առաւ, դժուարութեամբ շունչ քաշելով, ու Մարիամի վերայ նայեց, որը դեռ ևս, նախկին հիացմունքի ազդեցութեան տակ, չէր կարողանում հասկանալ, թէ ինչու պէտք է Բարաբբան այդպիսի երկիւղով փախչէր։

—Եթէ որ այն հռովմայեցիք,—ասաց նա,—ինձ բաց գերեզմանի մօտ կանգնած տեսնէին, նոքա երդուէին պիտի, որ Նազովրեցու մարմինը ես եմ գողացել, որովհետև վաղուց է, ինչ ես աւազակի հռչակ եմ ստացել։ Եւ քեզ ես՝ նոյնպէս՝ կը սկսէին կասկածել *). Թէպէտ և դու թոյլ կին ես, բայց՝ այնու ամենայնիւ՝ երեսպաշտութեան ընդունակ։

Եւ նա դէպի Մագդաղենացին բարկացկոտ ու զննողական ակնարկ ձգեց, բայց Մագդաղենացին նորա խօսքերի գաղտնի նշանակութիւնը չը հասկացաւ. Մարիամի երեսը սքանչելի իւր մանկական թարմ ու մատղաշ դէմք էր մտաբերում և մի այնպիսի սուրբ ուրա-

*) Մարիա Կորելլին Ռենանի կարծիքն է շեշտում, որը՝ ինչպէս յայտնի է՝ իրեն թոյլ է տալիս կարծելու, թէ Յիսուսի մարմինը Մագդաղենացին կարող էր յափշտակել, (Э. Ренанъ предъ судомъ науки—Аббата Гетте, стр. 359.) Անհեթեթ կարծիք չէ՞, կանայք ի բնէ երկչոտ են լինում և նոցանից դիագերծների տեղ ևս չունենք, մինչդեռ աշխարհահռչակ գիտնականն մի ամենաթոյլ կնոջ վերայ Քրիստոսի մարմին գողանալու վստահութիւնն է դնում։

Ծ. Հայ Թարգմ.

խութեան ու հրճուանքի փայլով էր լուսաւորուած, որ այդ, առանց այն էլ արտակարգ, գեղանիութիւնը համարեա գերաշխարհային էր։

—Արդեօք ինչո՞ւ չես գնում պատուիրանը կատարելու.—շարունակեց Բարաբբան։—Քո Ուսուցիչը քեզ հրաման տուեց. դու այդ պատուէրը կատարե՛ս պիտի։ Քո երկու ընկերուհիդ փախչեցին արդէն, «Նա յարեա՜ւ»... աղաղակներով օժտուած։ Աւելացրի քո կախարդիչ ձայնն ես... և, կարող է պատահել, որ աշխարհս քո խօսքը աստուածային ճշմարտութեան տեղ ընդունէ՛։

Մագդաղենացին նայեց նորան նախ տարակուսանքով, ապա կարեկցութեամբ։

—Զուա՜ռ, անբաղդ Բարաբբա,—ասաց նա,—դու Տիրոջ դէմքն ես նայեցիր և՝ այնուամենայնիւ՝ չե՞ս հաւատում Նորան։ Ի՞նչ պատահեց քեզ, յանդուգն ու տանջանաւոր հոգի։ Այսպիսի մի ուրախարար ժամանակ, ինչո՞ւ պիտի դու անբաղդացնես քեզ։ Բոլոր միտքդ բացատրիր։ Ի՞նչի մէջ են կայանում քո կասկածանքներդ։ Ի՞նչն է քեզ անհաւատալի՞ թուում։

—Ո՛չ մի բան,—պատասխանեց Բարաբբան ակամայ և դանդաղ,—ես միմիայն մտածում եմ, որ դու այնքան մի խիստ ու անբնական հաւատքով ես բռնուած, որ դու՝ ինքդ իսկ՝ հրաշքի ես հաւատում։ Ճիշտ է, ես տեսայ քո Ուսուցչին, տեսայ և այն, որ նա ապրում է, և մահ է գալիս, և խօսում է. ես պատրաստ եմ երդմամբ վկայել այն, բայց՝ միևնոյն ժամանակ՝ ես իմ նախկին խօսքս էլ եմ կրկնում և նորից ասում. Նա չէր մեռել, Նա ոչ մի ժամանակ մեռած չէ եղե՛լ։ Եւ դու՝ Մարիամ Մագդաղենացիդ՝ նոյնպէս գիտես այդ։

Մագդաղենացու ջինջ, մանկական աչքերի մէջ խորին զարմանք կարելի էր կարդալ։

—Ի՞նչ ես կամենում զորանով ասած լինել,— այլայլուած հարցրեց նա։—Ես քեզ չեմ հասկանում,—դու իրաւ որ զառանցանքի մէջ ես։ Մտքիդ տուտը չե՞ս կորցրել դու։

—Ոչ, չեմ զառանցում, ոչ էլ մտքիս ծայրն եմ կորցրել,—խստութեամբ կտրեց նա,—ես կին չեմ. ինձ ոչ տենդոտ տեսիլքները կը խաբեն և ոչ խելատար երևակայութի՛ւնը։ Երէկ երեկոյեան, սոյն այս լեռների մօտ, ես նոյնպէս արթուն դիտում էի... ոչ մի նշանաւոր բան չը պատահեց, բայց՝ գուցէ՝ յանկարծակի հողմից, որոտմունքի և կայծակի հետ խառն, իսկ յետոյ, մինչ լուսաբացը, ճիշտ է, որ ես ուշաթափութեան մէջ ընկայ. գլուխս պտոյտ եկաւ և ինձ այնպէս երևաց, որ կայծակը մի ինչ որ թևաւոր երեւոյթների փոխուեց, ո-

րոնք ման էին գալիս գետնի վերայ: Փայլուն լոյսը կուրացրեց ինձ և ես այլևս ոչինչ չեմ յիշում մինչ հեռու առաւօտը: Զարթնելով ես տեսայ, թէ ինչպէս դու և քո ընկերուհիներդ գաղտագողի ու հանդարտութեամբ շարժւում էիք, ապա քո ընկերուհիներդ նոյն ճանապարհով դէպի յետ վազեցին, մի տեսակ խելացնորութեան տակ, և՝ հանդիպելով ինձ՝ Նորա երդուեցին, որ Խաչեցեալն յարեաւ 'ի մեռելոց: Ես չը հաւատացի նոցա, այո, այժմս իսկ դորան չեմ հաւատում, թէպէտ և ես ինքս սեփհական աչքովս իսկ Նորան կենդանի տեսայ: Ես հաստատում եմ, որ Նա խաչի վերայ չը մեռաւ,—Նա միմիայն ուշաթափուեց: Այո, այդ միմիայն պատրական և ըստ երևոյթի մահ էր, և դու, Մարիամ, փափկացրիր սրտերը Նոցա, որոնք Նորան խաչել էին, և երբ խաչից վայր դրեցին Նորան, այն ժամանակ քեզ և Նորա մօրը յանձնեցին, և ողորմած սիրական զգացմունքից դրդուած, քաշուեցին Նորա բարձերն ու անդամներն խորտակելուց: Դու ճիշտ է, որ նոյնպէս համոզել էիր արեմաթացի խորհրդականին, որ Նորան այս միայնակ, խաղաղ, այրի մէջ դնեն, որտեղ, օգտուելով հանդարտութեամբ և խաւարով, Նա առողջացաւ: Միթէ Նա ամեն տեսակ բուժարար միջոցների գաղտնիքները չը գիտէր և առողջարար ուժով չէր տիրանում: Ոչ, ես ոչինչ չեմ հաստատում, ես միմիայն, ինչպէս մարդ, դատել կարող եմ. պէտք է խլուրդի կամ բուի նման կոյր լինել, որ չը տեսնել այն խորամանկ դարանը, որ կնոջ սիրով է մտածուած: Գնա քո ճանապարհով, Մարիամ: Միամիտ մի ձևանալ այլ ևս. ինձ համար բնաւին հրաշք չէ, որ քո Վարդապետը ապրում է:

Մինչ Բարաբբան խօսում էր, Մագդաղենացին չէր շարժւում: Համբերատարութեամբ լսելով նորան, Մարիամը երկնային կարեկցութեան մարմնացումն էր երևում: Նորա շրթունքները թեթևութեամբ դողում էին և այն է որ նա ուզում էր խօսել, երբ մի ուրիշ ձայն, հնչուն և հրամայողական, նոցա խօսակցութեան մէջ խառնուեց:

—Գնա քո ճանապարհով, Մարիամ: Կատարիր քեզ տուած յանձնարարութիւնը և մի յապաղիր, քանի որ, սորանից յետոյ, բոլոր լաւ կանանց կոչումն այդ է լինելու, մինչ դարերի վերջանալը՛:—Կոչում դէպի սէր և գութ: Դու նոցա առաջին կատարող կինը եղիր. ասա քո եղբայրներին, ինչպէս Ուսուցիչը հրամայեց քեզ, որ Նա յարեաւ, որ մահը յաղթուած է յաւիտենական կեանքով և որ Նա գնաց դէպի Իւր Հայրը, որը, (մենք այժմ այդ Նորանից ենք իմացել)—և մեր Հայրն է:

Նոցա դիմաց Մելխիօրն էր կանգնած՝ վշտահար և մտայոյզ, ու

սակաւ մի արհամարհական տեսքով: Բարաբբան՝ երկիւղի և ամօթի զգացմունքով՝ նորա վերայ նայեց: Նա ապշած էր: Ինչպիսի մի ճարտար իմն կերպով կարողացաւ Նա դէպի նոցա մօտենալ այդպէս անլսելի, որ նոքա չը նկատեցին, այդ զարմացնում էր երկուսին էլ: Նորա սառն, հեգնական ակնարկն տանելով, Բարաբբան ակամայ շըփոթուեց. մինչդեռ Մելխիօրը իւր խօսքը շարունակեց:

—Դու շատ լաւ ես արթուն կացել, ընկեր Բարաբբա, նոյնքան լաւ, ինչպէս և Նազովրեցու աշակերտները, որոնք, երբ Նա նոցա խնդրեց աղօթել և չը ննջել, իրենց հանգստութիւնից զրկել չը կարողացան և... քնեցին, չը նայելով նոցա գովական սիրուն ու անձնուիրութեան: Դու մոլորուած, կամակոր յանցաւորի մէկն ես, դու արժանի եղար Աստուածութիւնը կենդանի տեսնել և, այնու ամենայնիւ, դու իրեն՝ Աստծուն խաբեբայութեան տեղ ես դնում, քո ծանծաղ դատողութեամբ ամեն ինչ չափելով: Միթէ ես քեզ չը ասացի, որ դու մարդու իսկական տիպարն ես կազմում ու անհաւատ ցեղի գերազանց ներկայացուցիչը: Մարիամ,—և Մելխիօրը դէպի Նա դարձաւ՝ քնքուշ պատուասիրութեամբ,—խնդրում եմ քեզ, այլ ևս այստեղ մի յապաղեր դու, այլ շտապիր, համբաւդ տար նոցա, որոնց պատկանում է ընդունելու այդ, թէպէտ ճշմարտապէս ոչ ոք չի գտնուիլ, ով պարզասրտութեամբ Աստուածային ճշմարտութեան մասին վկայէր: Բայց պահպանիր հաւատքդ, Մարիամ. սէրը և համբերութիւնը կնոջ մէջ արմատացած, բոլոր ապագայի համար հիմք պիտի կազմեն:

—Մարիամը երկիւղալի ու զարմացական ակնարկ ձգեց, ապա, բնազդմամբ նորա `պատկառելի ձայնի ներդաշնակութեան հնազանդելով, շտապով հեռացաւ նա. Նորա մոխրագոյն զգեստը և ծփծըփան ոսկեհուռ մազերի գիսակները հեռուից միգապատ ամպի նմանեցին—արեգակի տակ լուսաւորուած:

—Ո՛հ, դու. մութ, անհաւատ հոգի,—Մելխիօրը իւր մռայլ ընկերոջը դարձաւ: Ինչպէս կարող պիտի լինիս դու ճակատագրի ողորմածութեան արժանանալ, երբ դու տեսար Աստծուն և չը ընդունեցիր Նորան: Քեզ ծանր պատիժ էր, եթէ որ դու միայնակ այդքան յանցաւորութեամբ հակառակէիր, բայց մխիթարուիր,—քո ետևից ամբողջ քո ցեղդ է գալիս: Դու քո կամքիդ հակառակ, իրաւացի «Հրէաստանի թագաւոր ե՛ս»: Բայց նայիր, ահա գալիս է պահնակը—զարմացած և զարհուրած. ես հասկանում եմ, երբ նոքա այդպէս վայրենաբար և խորթ նայում են, քանի որ նոցա համբաւները այնքան անսովոր են, որ նոցա արտասանելը անգամ դժուար է: Մի

կողմի վերայ քաշուենք, որ նոցա ճանապարհ տանք անցնելու։
Եւ նա Բարաբբայի հետ թեթեւակի շարժուեց. զանազան զգաց-
մունքներով նոքա սկսեցին մօտեցող զինուորներին նայել, որոնք
քարայրի շուրջը իրենց պահնակատեղին ձգելով, սրնթաց և անկա-
նոն կերպով, դէպի քաղաք էին դիմում։ Նոքա բոլորն էլ կիսա-
արթնացածների տպաւորութիւն էին թողնում. հարիւրապետ Գալ-
բուսը արդէն առջևից չէր գնում, ինչպէս նորան պատկանում էր այդ,
նա շարժւում էր դանդաղ, սայթաքելով, որին երկու կողմից և իւր
զինուորներից մի մի հոգի էին բռնել. նա մահուան չափ գունատ
էր, նորա աչքերը խելագարել և անշարժութեամբ դէպ առաջ էին
նայում, նա կաթուածահար էր երևում և յանկարծակի սաստիկ ծե-
րացած։ Մելխիօրը նորա վերայ նայեց և, առաջ ձգելով իւրին, ասաց.
— Ողջոյն ձեզ, հռովմայեցի՛ք։ Ձեր իշխանաւորին ի՞նչ է պա-
տահել։
Զինուորները կանգ առան, և Մակսիմուսը, որ առաջնորդում
էր նոցա, հակիրճ պատասխանեց.
—Անծանօթների հարցերին մենք չենք պատասխանում։ Մի
կողմ կաց և մեզ անցնելու ճանապարհ տուր։
Դանդաղ շարժմունքով Մելխիօրը աջ ձեռքը բարձրացրեց, որի
վերայ լայն, թանկագին մատանին էր փայլում։
— Բարի զինուոր, քաղաքավարի եղիր,—ասաց նա,—և Կեսարի
կնիքին հնազանդուիր։
Զարմացած Մակսիմուսը շտապով խոնարհուեց. ոչ մի կասկա-
ծանք չը կար, որ խորհրդաւոր օտարականը իրաւացի կայսերական
թալիսմանով էր տիրում, և նորա հեղինակաւորութիւնը վայրկենա-
պէս ընդունուած էր։
—Ներողութիւն եմ խնդրում, պարոն,—շշնջաց Մակսիմուսը՝
թախծելի ձայնով։—Բայց այս կողմերքում, Հրէաստանի մէջ, իւրա-
քանչիւր հռովմայեցի պարտական է երկիւղի և զգաստութեան մէջ
լինել։
—Այո՛, և լաւ արթուն մնալ, ինչպէս դուք—անկասկած—այս
գիշեր արեցիք,—կարեց նորան Մելխիօրը.—ոչ մի կարևոր բան, 'ի
հարկէ, չը պատահեց. այնպէս չէ՞։ Դուք մեռածին իւր գերեզմանի
մէջ թողեցի՞ք։
Լռութիւնը նորան պատասխան եղաւ։ Զինուորները անհանգըս-
տութեամբ իրար նայեցին. Մակսիմուսը ամբողջ մարմնով դողաց,
որպէս թէ առաւօտեան աբեգակի ջերմ ճառագայթները սառեցրին
նորան, բայց գունատ Գալբուսը շարժմունքի ոչ մի նշան չը արաւ,

միմիայն շարունակեց անշարժութեամբ իւր առջևը նայել,—ինչպէս
մի կոյր—իւր առջևը ոչինչ չը ջոկելով։
—Տէր,—վերջապէս ասաց Մակսիմուսը,—անցած գիշերուայ
մասին շատ բան կայ, ինչ կարելի է պատմել, բայց ինձ թւում է,
որ ես պարտաւոր եմ նախ բոլոր այդ նորութիւնները նոցա պատ-
մելու, որոնք Հրէաստանին են կառավարում։ Հռովմը Նազովրեցուն
չը սպանեց, և կառավարիչը հրապարակայայտ այդ մահուան պա-
տասխանատուութիւնը մերժեց իւր վերայ ընդունելու։ Նոյնպէս չէ
կարելի հռովմայեցիներին մեղադրել և այն բանի մէջ,—ինչ որ պա-
տահեց. սինեդրիոնի կնիքները խորտակուած են, գերեզմանը ծած-
կող վէմը մի կողմի վերայ է ձգուած և Խաչեցեալ Մարգարէի
մարմինը ուր որ է անյայտացած է,—բայց թէ ինչպէս ան-
ցաւ այդ բոլորը—ես չը գիտեմ։ Ես խոստովանում եմ, որ մենք
քնեցինք, երբ մեզ հարկաւոր էր արթուն կենալ, բայց—իրաւ եմ
ասում—մենք տարօրինակ կախարդութիւններով էինք շրջապատուած։
Մի ինչ որ անսովոր թռչուններ երգում էին այնքան քաղցր, այն-
քան անուշ և այնքան զմայլելի, որ մենք՝ ակամայ՝ լսում
էինք. լուսաբացը մօտ էր, ինչ մենք մի այնպիսի պայծառ փայլա-
տակումն տեսանք, որ, կարծես թէ, երկինքն էր բոցավառուել.
մենք տեսանք, այսինքն Գալբուսն և ես,—մնացեալները քնած
էին,—այդ տեղ նա ձայնը ցածրացրեց և հազիւ լսելի շշնջոցով ա-
ւելացրեց.—ինձ վերայ պարտականութիւն է ընկած, որ այդ բոլո-
րը իշխանութեան յայտնեմ, քանի որ Գալբուսը խօսելու ընդու-
նակութիւնը կորցրել է. նա այն բոլորից, ինչ տեսաւ, ոչինչ չէ
կարող յայտնել,—նա, երևի, պապանձուել է կայծակի հարուածի՜ց։
—Եւ այդպէս, նա չէ՞ կարող վկայել անցած գիշերուայ հրաշք-
ների մասին.—նկատեց Մելխիօրը, հարիւրապետի թոյլ ու կռա-
ցած կազմուածքի վերայ ողորմածասիրական ակնարկ ձգելով։—
Բայց մխիթարուիր, բարի զինուոր։ Նորա համրութիւնը ժամանակա-
ւոր է ու կը անցնէ շուտով։ Այժմ դուք ո՞ւր էք գնում։ Դէպի Պիղատո՞սը։
—Այո՛, նախ Պիղատոսի, ապա Կայիափայի մօտ,—պատասխա-
նեց Մակսիմուսը։—Եւ ես այնտեղ բոլորը կասեմ, ինչ գիտեմ։ Իսկ
եթէ դու Կեսարի բարեկամն ես, բարի պարոն, խնդրում եմ քեզ.
մեզ մի դատապարտի՛ր։ Մենք մինչ այս ժամանակ միշտ քաջու-
թեամբ էինք զանազանուում ու արթնութեամբ. Ճշմարտապէս, ես
չեմ հասկանում, թէ ինչ մի տեսակ կախարդութեամբ ներգործեցին
մեզ, որ բոլորիս վերայ էլ միատեսակ ընդարմացումն ընկաւ։—Թըմ-
րութիւնը պատել էր մեզ։ Եւ ես կարող պիտի լինիմ երդուելու դա-

տատտոնի և ամբողջ սինեդրիոնի առջև իսկ, որ ոչ ոք—լինէ նա հրէայ կամ հռովմայեցի,—չէ կարող երկնային ուժերին ընդդիմութիւն ցոյց տալ։

Եւ նա Գալբուսի վերայ ցոյց տուեց, որպէս գիշերուայ սարսափելի անցքերի կենդանի վկայի վերայ։

Մելխիորը մի քանի քայլ հեռացաւ։

—Երկիւղ մի՛ կրիր, զինուոր.—ասաց նա։—Դու տեղիցդ չես զրկուիլ և Կեսարի ողորմածութիւնը քո վերայից անպակաս կը լինէ։ Շարունակիր ճանապարհդ, այդ համբ հարիւրապետին Կայիափայի առաջադրի, թող նա քահանայապետի մօտ կանգնէ, ու բոլոր ճշմարտութիւնը պատմիր այնպէս,—ինչպէս որ նա երևում է քեզ. մի զարմանար, եթէ այդ ճշմարտութիւնը շուտով խաբեբայութեան կը վերածեն ու արդարին սուտը կը փոխարինէ։ Խաբեբայութիւնը հրէաների համար աւելի ձեռնտու է. նա այնքան սահուն ու առանց դժուարութեան է տարածւում, իսկ ճշմարտութիւնը մեծ կարիք է զգում, որ իւր համար կռուէին և մեռնէին դեռ երկար երկար դարեր։ Մնաս բարեաւ։ Որքան կարող լինեմ, քեզ Կեսարի հանդէպ օգնեմ պիտի։

Մակսիմուսը խոր գլուխ տուեց և պահնակը շտապ շտապ անցաւ։ Ճանապարհին մի զինուոր իւր մտերիմ ընկերակցին խմեց, ասելով.

—Այն օտարականը, որի մօտ Կեսարի մատանին կայ, իւր ընկերների վերաբերութեամբ առանձին ջոկողութիւն չունէ,—Բարաբբան նորա հետ էր։

—Բարաբբա՞ն,—կրկնեց միւսը։—Նա, որին Նազովրեցու փոխարէն էին արձակել։

—Հէնց նա ինքը։ Ասում են, որ նա աւազակ է։

Նոքա իրենց ճանապարհը շարունակեցին, սպիտակ փոշու տարափի մի ամբողջ մշուշ բարձրացնելով, մինչ վերջապէս քաղաքի դռներին մօտեցան, որտեղ նոցա հետաքրքիր մարդկանց մի ամբողջ խումբ մօտեցաւ, ողջունելով նոցա հեգնական բացականչութիւններով։ Արդէն ձայն տարածուեց այլ ևս, որ Նազարէթից եկած և Խաչեցեալ Մարգարէն յարեաւ 'ի մեռելոց, և թէպէտ ոչ ոք այդ հրաշքին չէր էլ հաւատում, այնու ամենայնիւ մի քանի սնոտիախօս մարդիկ սկսեցին բացատրել մէկ մէկու, որ նա ոչ մի ժամանակ չէր էլ մեռել, որ նա անգամ մեռնել էլ չէր կարո՛ղ։ Բայց ընդհանրական կարծիքը այն էր, որ մարմինը վիմափորից գողացած պիտի լինէին, չը նայելով ձեռք առնուած նախազգուշութիւններին, որ զինուորներին, ակնյայտնի էր, գինով հիւրասիրելով, մինչ անզգայութիւն արբեցրել էին և, օգտուելով նոցա գինեհարութիւնից, Նազովրեցու աշակերտները, դէպի այրը տանող մուտքը բռնած քարը վերցնելով, իրենց մեռած Ուսուցչի մարմինը տարել էին։ Յամենայն դէպս հռովմէական աչալրջութիւնը և արթնութիւնը ճարպիկութեամբ բաց էր թողնուում, և մի ինչ որ ծայրայեղ զուրեկան բան կար հրէական կոյր ամբոխի համար այդ տեսակ պարտութեան մէջ։ Ամբոխը գոռում կոչում էր բարձրացնում այլայլուած պահապանների չորս կողմը և ճչում էր, անզգայ Գալբուսի վերայ ցոյց տալով, որպէս կենդանի օրինակ դեռ ևս չը սթափուած արբեցողութեան, և զինուորներին՝ ուղիղ՝ մինչ Պիղատոսի ապարանքն ուղեկցելով։ Երբ ապարանքի հսկայաձև մեծ դռները բացուեցին՝ պահապաններին ներս առնելու համար, ամբոխը, դրսևում մնալով, հռովմէական քաջութիւնը արհամարհաբար դատաքննելու ձեռք զարկեց. յետոյ, իւր սեփհական աղաղակից դադարելով, դանդաղութեամբ զանազան կողմերի վերայ ցրուեց։

Մինչև այդ՝ Բարաբբան, Մելխիորի հետ, դէպի իւր օթևանը դիմեց, և այնտեղ դէպի իւր տարօրինակ բարեկամն դարձաւ այսպիսի մի հետաքրքիր հարցով.

—Ո՞ւմ թոյլատուութեամբ ես դու Կեսարի կնիքով մատանին կրում։

—Այդ—իմ գործս է, ոչ թէ քո, Բարաբբա, — հանդարտութեամբ պատասխանեց Մելխիորը։—Գաղտնիութեան գէթ առաջին պատուէրը սովորիր, որը կայանում է սոսկ նորա մէջ, որ չը պէտք է ուրիշի գործերի մէջ խառնուել։ Այնու ամենայնիւ պիտի ասեմ քեզ, որ Կեսարը իմ ընկերակիցն է և որ մի անգամ նորան ցոյց տուածս ծառայութեան համար — ամբողջ Հռովմը գրաւական է ինձ մօտ։

Ափշութեան տակ՝ Բարաբբան լայն չռեց աչքերը և կամենում էր դարձեալ մի ինչ որ է բան հարցնել, բայց դրան խանգարեց դռան թեթևակի ընդհարումն, որից յետոյ մի քնքուշ ձայն հնչեց.

—Բաց արէք, բաց արէք՝ շուտով։ Ես Բարաբբայի համար լուր եմ բերում։ Ես եմ—Մարիամը, Մագդաղենացի՛ն։

XVI.

Նոքա վայրկենապէս դուռը բաց արին։ Շէմքի վերայ Մագդաղենացին էր կանգնած։ Նա դժուարութեամբ էր շունչ քաշում իւր շտապ քայլելուց, իսկ նորա գեղածուփ աչերի մէջ անսահման կարեկցութեան արտայայտութիւն կար։

—Ես խոստացայ, Բարաբբա,—սկսեց նա շտապ,—որ Յուդիթ Իսկարիոտացու վերաբերեալ ինչ էլ որ լսելու լինեմ, նոյն ժամայն յայտնեմ քեզ. իսկ այժմ ես նորան հէնց իրեն գտայ։—Նա Գեթսեմանի պարտէզումն է՝ միայնակ, տկար և խելակորոյս. Նա՝ հաւանական է՝ մեռնէ պիտի և այդ շուտո՜վ։ Խնդրում եմ ջեզ, շտապիր. գնանք ինձ հետ հէնց այս ժամուայ մէջ, կարող է պատահել, որ դու նորան կարողանաս համոզել—դուրս գալ այն տեղից։ Ինձ այդ չը յաջողեց։ Նա լաց է լինում և երգում է, ապա կոտրտում է ձեռքերը և աղօթում, որպէս թէ ինչից որ է վախենում է։ Շատ փափկութիւն ես գործ դնել է հարկաւոր, որ համոզուէ նա. բայց դու՝ ինչպէս ծանօթ անձնաւորութիւն՝ գուցէ դէպի տուն գրաւես նորան։ Գնանք, գնանք շուտով։

—Գնա՛, շտապիր, Բարաբբա,—ասաց Մելխիորը՝ քաղաքշանքով, —երբ մի նոր վիշտ պատում է մէկին,—այդպիսի դէպքում նորա անցեալը պէտք է մոռանալ և ներե՛լ։

Նա շուռ եկաւ, և Բարաբբան երկրորդ հրաւէրին այլ ևս չը սպասելով, Մագդաղենացու առաջնորդութեամբ, շտապով դուրս եկաւ տնից։ Դէպ՝ Գեթսեմանի տանող ճանապարհը նոցա անվերջանալի երևաց. Թէպէտ և նոքա ժամավաճառ չէին լինում և՝ մինչև անգամ՝ իրար մէջ խօսում. Իւրաքանչիւրը խորասուզուած էր իւր մտածմունքի մէջ։ Վերջապէս նոքա այգու վանդակափեղկին հասան և Մարիամը, դուռը բաց անելով, յանկարծ ձեռքը բարձրացրեց։

—Լսի՛ր,—ասաց նա։

Դէպի նոցա էին թռչում մի ինչ որ երգեցողութեան թոյլ հնչիւնները, որոնք անսովոր մեղեդու հրաշալի ու քաղցր կտորներն էին կազմում. Բարաբբան ճանաչեց դոցա մէջ Սողոմոնի երգերից մէկին, այդ արքայ—բանաստեղծի։ Յանկարծ ձայնը կտրուեց և մի ահարկու ու քստմնեցուցիչ կոչ որոտաց.

— Յուդա՜, Յուդա՜, Յուդա՜։

Այդ անունը, երեք անգամ կրկնուած, յուսահատութեան մի այնպիսի ուժով էր հնչում, որ Բարաբբան վրդովմունքից ու այլայլմունքից ամբողջովին դողաց։

— Ո՞ւր է նա.—խուպոտ ձայնով հարցրեց Բարաբբան։

Մարիամ Մագդաղենացին ոչինչ չը պատասխանեց, միմիայն նորա թեւքից քաշելով, դէպի առաջ տարաւ։ Նոքա քայլում էին օձապտոյտ ուղիով, որը այնքան խիտ էր կանաչած խոտով, որ նոցա թէ քայլերը և թէ ձայնը—չէր լսուում. վերջապէս նոքա մի փոքրիկ բարձրութեան հասան, որտեղ անհոգ թողած շատրուանի գաղտակուրն էր աչքի ընկնում։ Միայնակ մի սպիտակ կերպարանք էր նըստած գետնի վերայ, որը շրջապատուած էր երկար սողացող ոստերով և ծաղիկներով, որոնք՝ պարզ էր՝ հէնց նոր էին հաւաքուած և անփոյթ թափուած թառամելու համար։ Մարիամը և Բարաբբան զգուշութեամբ դէպի առաջ շարժուեցին և մի քանի քայլ սորին կանգ առան անկարգ շաղ եկած կրակավառ մազերով և խառնիւ խուռն թափթփած գիսակապեր կնոջ մօտ։

— Սպասի՛ր այստեղ,—շշնջաց Մարիամը,—նորա խելքը գլխին չէ և սարսափելի երկչոտ է այլևս. եթէ նա մեզ երկսիս միասին տեսնէ և միանգամից—նոյն ժամայն փախչէ պիտի։ Ես միայնակ կը մօտենամ և նորա հետ կը խօսեմ։

Բայց մի տեսակ բնազդական զգացմունք արդէն զգուշացրեց անխելք աղջկան՝ իւր խանգարուած միայնակութեան վերաբերութեամբ։ Կոպիտ շարժմունքով ոտքի վերայ ցատկեց, ձեռքով աչքերը պայծառ լոյսից պատսպարեցու սկսեց խորագննին ակնարկով քննել նոցա։ Ապա միևնոյն վայրկենաբարոյ յուսահատ բացականչութիւնով «Յուդա՜» շտապ քայլերով մօտեցաւ նոցա։ Քայքայուած մազերով և տենդային կայծարձակ և ծամածուռ աչքերով՝ նա նոցա առջև կանգնեց, իսկ երբ նորա խենթուկ ակնարկը Բարաբբայի վերայ ընկաւ, —նա մեծ հրճուանքով աղաղակեց.

—Յուդա՜.—և վայրենի հիացմունքի տակ՝ երկու ձեռքով գըրկեց նորան։—Յուդա՜։ Վերջապէ՜ս եկար դու։ Բայց ինչո՞ւ այդքան ուշացար դու։ Ես փնտռում էի քեզ ամբողջ քաղաքում,—ես՝ մինչև անգամ՝ Կայիափային 'ի սէր քո սպանեցի։ Մի՞թէ դու այդ դեռ ես չը գիտես։ Բայց դու ուրախ ես—ես տեսնում եմ այդ։ Ճշմարիտ որ իսկական մատնիչն նա էր, բայց աւա՜ղ, ես շատ ուշ իմացայ այդ և չը կարողացայ օգնել քեզ քո ընկեր Նազովրեցուն ազատելու համար։ Ես յայտնապէս խոստովանում եմ, որ դորա մէջ մասամբ ինքս եմ մեղաւոր, իսկ դու, խեղճ Յուդա, դորանում ոչ մի մեղ չունիս. այդ բոլորն էլ ես եմ կատարել։ Կայիափան համոզում էր ինձ։ Ուրեմն այլ ես ուրիշի ոճրագործութեան համար մի տխրիր դու՛։ Իսկ այժմ ես

այն բոլորը արեցի, ինչ կարող էի, յանցանքս գնելու համար և դու պիտի ներես ինձ: Ճշմարիտ չէ՞, արդեօք: Դու քո փոքրիկ քրոջ վերայ չես բարկանում: Դու նորան այնպէս կը սիրես, ինչպէս և առաջ:

Մինչ նա արցունքաթոր այն բոլորը շշնջում էր, կամ ժպտում էր, կամ արտասուում, կաթոգին սիրով իւր քնքուշ երեսը նորա կրծքին սեղմելով, և նորա վերայ իւր մութ աղերսալից աչերը բարձրացնելով, Բարաբբան զգաց, որ իւր սիրտը կարեկցութիւնից և սիրուց կտրատւում է. արցունքները, նորա աչքերը լցնելով, խանգարեցին նորան խօսելու. Նա միմիայն ջղաձգաբար և անխօս Յուդիթին իւր գրկի մէջ սեղմեց: Վերջապէս Յուդիթը այդ լռութիւնից գրգռուելով, քնքուշութիւնից վայրկենապէս վայրենի կատաղութեան անցաւ: Կոպտութեամբ հեռանալով նորանից, նա փոքր ինչ դէպի ետ նահանջեց, դեռ ևս Բարաբբային նախ զարմանքով, ապա արհամարհական զզուանքով նայելով:

—Դու չէ թէ Յուդան չես, ասաց նա:—Ինչպէ՞ս ես համարձակւում դու իմ միայնութիւնը խանգարել ու ինձ միայնակ մնալուց զրկել քո ներկայութեամբ: Միթէ՞ չը գիտես դու, որ այս այգին իմս է: Ես միշտ այստեղ եմ ապրում և ոչ ոքի, Յուդայից բացի, ինձ մօտ թողնել չեմ կարող: Այո՛, Յուդայից բացի՝ բոլորի ներկայութիւնն էլ ինձ անտանելի է: Ես նորան երէկ գիշեր տեսայ. Նա ինձ մօտ եկաւ և ասաց, որ նորա դրութիւնը լաւ է, որ նա դարձեալ դէպի ինձ կը վերադառնայ, և՛ մի րոպէ՝ ես քեզ նորա տեղ ընդունեցի՜: Բայց ոչ. դու անկոչ ու յանդուգն եկւորի մէկն ես. դուրս այս տեղից: Ինձ միայնակ թո՛ղ,—ինձ շատ ծաղիկներ է հարկաւոր հաւաքելու, որպէս զի նորանցով ծածկեմ իմ գերեզմանը, մինչդեռ ես մեռել եմ. այժմ ես միմիայն թափառում եմ. Յուդան նոյնպէս մեռել է և մենք դեռ ևս առանձին առանձին ենք շրջում, բայց մենք դեռ պատահենք պիտի, ես չը գիտեմ՝ որտեղ և երբ,—բայց ես գիտեմ, որ այդ շուտ կը լինէ:

Նա յանկարծ իւր անկապ խօսքը կտրեց, որի ժամանակ Մարիամ Մագդաղենացին փորձեց դէպի նա մօտենալ:

—Յուդիթ, խեղճ Յուդիթ, եղկելի քոյրս,—շշնջաց նա և քնքշութեամբ նորա ձեռքից բռնեց:

Յուդիթը կասկածանքով նորա վերայ նայեց, յետոյ ժպտաց տժգոյն, տխուր ժպիտով:

—Դու շատ բարի ես,—ասաց նա հառաչանքով:—Ես յիշում եմ, դու՝ ոչ այնքան վաղ՝ այստեղ էիր. և դու ինձ մխիթարութեան յուզիչ խօսքեր ասացիր: Թէպէտ և ես քեզ չեմ ճանաչում, բայց դու

կին ես և կարող պիտի լինես իմ վիշտս հասկանալու: Ես այստեղից չեմ կարող գնալ. ես խոստացայ Յուդային, որ նորան այս տեղ սպասեմ. դորա համար իսկ խնդրում եմ քեզ, մի՛ վիրաւորիր ինձ այն խնդրով՝ թէ գնանք այստեղից: Բացի այդ, ես պարտաւոր եմ մի որևէ տեղ պահուել, որովհետև ես քահանայապետ Կայիափային սպանեցի: Ասա՛, արդեօք դորա մասին գիտեն քաղաքում և պիտի սկսեն փնտռել ինձ: Ես երդուեցի, որ ինձ չը պիտի գտնեն: Յուդան կը գայ արեգակը մայր մտնելիս և ինձ իւր հետ տանէ պիտի. սարսափելի դժուար ու տաղտկացուցիչ է այսքան երկար սպասելը. եթէ ցանկանում ես, դու ես կարող ես ինձ հետ մնալ, միայն թէ այդ անծանօթին հալածիր այս տեղից և դուրս ձգիր:

Եւ Յուդիթը Բարաբբայի վերայ ցոյց տուեց, որը մինչ սրտի խորքը վշտացած, փոքր ինչ յետ քաշուեց: Բայց Յուդիթը նորա յուսահատութիւնը չը հասկացաւ. ակնյայտնի էր, որ նա ոչինչ չէր հասկանում և ոչ ոքի չէր էլ ճանաչում. Նորա խարխափող խելքը արդէն դէպի ուրիշ կողմ գնաց:

—Գնանք այն ծառերի մօտ,—դարձաւ նա Մարիամին՝ աղերսական ձայնով,—այնտեղ նստենք և մի որևէ բան երգենք: Կամ թէ դու միայնակ կը երգես, իսկ ես կը քնեմ: Ես երկար ճանապարհից և անվերջանալի երազներից յոգնած եմ: Ես տեսիլքների այնքան բազմութիւն եմ տեսնում... մի քանիսը զմայլելի, միւսները սարսափելի, բայց Յուդան միշտ նոցա մէջ է: Նորա վզի շուրջ կողմը պարանից գոյացած կարմիր գիծ կայ ահա՛ այս պարանից...—և նա շօշափեց այն անմաքուր թոկը, որ քարշ էր ընկել իւր գօտիից:—Ես հանգոյցը կտրեցի, բայց նա՝ այնուամենայնիւ տանջւում է, թէպէտ ես չեմ հասկանում թէ ինչու և, թւում է, որ նա դեռ զայրացած է ինձ վերայ և միշտ բարկացկոտ ակնարկ է ձգում վրաս: Որքա՛ն կոպտութիւն է այդ նորա կողմից: Նա անշուշտ պարտական է այն օրերը յիշելու, երբ մենք երեխայ էինք և խաղում էինք միասին. ոչ մի ժամանակ առաջին մտերմութիւնը չէ պէտք է մոռանալ: Եւ թէպէտ այժմ իմ տարիքս թեքուած են, բայց մի ժամանակ ես մի երիտասարդ կին էի և զմայլելի գեղեցկութեան տէր. ես Հրէաստանի առաջին գեղեցկուհին էի: Գէթ այդպէս էին կոչում ինձ և այդ ճշմարտութիւն էր: Յուդան պարտաւոր է յիշելու այդ, այլ ոչ թէ այժմ արհամարհէ ինձ, երբ խորին վշտից իմ զմայլելի գեղեցկութիւնս խամրեց: Բացի դա, այն Նազովրեցու մասին, որին ծառայում էր նա, այնքան քիչ բան պատմեց ինձ եղբայրս,—միմիայն այն, որ նա իմաստուն է, բարի, խեղճ և անիմանալի,—բայց չէ թէ բոլոր իմաստուն և յա-

մարդկանց ճակատագիրն է այդ, և ոչ մի բացառութիւն դորա մէջ չը կայ։ Միւսները ասում են, որ նա Աստուած է, բայց միթէ Հռոմում քիչ աստուածներ կան։ Յուստինիան,—Պիղատոսի կինը, դէպի նոցա միմիայն արհամարհանք է զգում։ Եւ ես մինչև անգամ լսեցի, թէ ինչպէս Աննայի գունատ աղջիկը ասաց, որ նա ևս իսկ Եհովային չէ հաւատում և ատում է նորան, իսկ նա Կայիափայի կինն է և Կայիափան՝ Եհովայի քահանան։ Կարող է պատահել, որ նա անբասիր էր և իրաւացի պատճառներ ունէր իր ամուսնուն անհաւատարմութեան մէջ կասկածելու, բայց Աստծուն նա չէ՞ր սիրում,—ես այդ գիտեմ։ Ինձ այնպէս է երևում, որ դժուար է անտեսանելի մի ոյժ սիրել։ Այդ մտքերը անհանգստացնում են ինձ, բայց ահա թէ ինչն է մխիթարում ինձ։

Եւ նա հանդերձի ծալքերից մի այնպիսի կոպտութեամբ և երկու ձիթենու ճղներից շինուած խաչ հանեց, որպիսին արդէն առաջուց ունէր նա։

Կայիափան մի այսպիսին, կատաղութեան մէջ ընկնելով, կտրեց,—շարունակեց Յուդիթը,—և դորա համար իսկ, ու ուրիշ բանի համար ևս, ես սպանեցի նորան. ապա ես դարձեալ մի ուրիշը շինեցի, և այդ սիմվոլ—նշանաբանը մի կախարդական բան է. երբ ես նորան այսպէս եմ պահում,—և նա բարձրացրեց խաչը գլխի վերևը՝ մի տեսակ հիացմունքի մէջ,—ինձ թւում է, օր ես մի հրաշալի դրախտային նուագածութիւն եմ լսում և մի քնքուշ ձայն ասում է ինձ. «Խաղաղութիւն քեզ»։

Նա ամրութեամբ Մագդաղենացուց սեղմուեց, որը արցունքներով և տանջանքի կարեկցութեամբ, մի ձեռքով գրկեց նորան, աշխատելով այգուց դուրս տանելը յաջողացնելու։ Բայց Յուդիթը շտապով նորա նպատակը իմացաւ և, նորա շարժմունքը նկատելով, կամակորութեամբ՝ թէկուզ մի քայլ՝ առաջ գնալը մերժեց։

— Ոչ, ոչ, ասաց նա,—մենք ուրիշ մի ուղղութեամբ կը գնանք, և այնտեղ, որտեղ շատ ծառեր կան։ Այստեղից ոչ այնքան հեռու մի այնպիսի տեղ կայ, որտեղ թէ շատ ծաղիկներ կան և թէ շատ արմաւենիներ են կանաչում,—այնտեղ հով է ու անուշաբոյր։ Դու ինձ քո երգով քնեցրի, ընկերուհիս եղիր և ինձ հետ մնա մինչ արեգակի մայր մտնելը, երբ Յուդան պիտի գայ։

Նա սկսեց իր թափթփած ծաղիկները հաւաքել։ Մինչ նա դորանով էր զբաղուած, Մագդաղենացին դէպի Բարաբբան խաղաց և շշնջաց նորա ականջին.

— Հանգիստ կաց, ընկեր, ես նորա հետ շատ չը պիտի մնամ։

Դու հետևիր մեզ, որ այնտեղը տեսնես, որ նա կը ընտրէ իւր հանգստանալու համար, ապա շուտով նորա հօր մօտ գնա և ասա նորան, որ աղջիկը այստեղ է։ Զգուշացրի և պատրաստիր նորան, որ նա միանգամից թէ քնքշութիւն և թէ վճռականութիւն արտայայտէ, և մի վշտանար այն բանի համար, որ Յուդիթը այժմ արհամարհեց քեզ. նա քեզ բոլորովին չէ ճանաչում,—նորա ուղեղը պղտորուած է։ Փոքր ինչ համբերի։

— Միթէ նա իրաւացի սպանել է Կայիափային,—այլայլուած հարցրեց Բարաբբան,—կամ թէ այդ նորա հիւանդոտ խելքի զառանցանքն է միայն։

— Չը գիտեմ,—պատասխանեց Մարիամը։—Դու պարտաւոր ես հարցաքննել և ճշմարտութիւնը իմանալ։ Ես ոչինչ չեմ լսել. ինձ համար իմ Ուսուցչի մնացեալների միջից յարութիւն առնելը բաւականացուցիչ համբաւ է։ Մարդկանց գործողութիւններից ես ոչինչ չը գիտեմ։

Մինչ նա շշնջոցով խօսում էր, Յուդիթը անհամբերութեամբ նորա թևքից բռնեց և իւր հետ քարշ տուեց։

— Հրամայիր անծանօթին հեռանալ,—ասաց նա,—նա ինձ դուր չի գալիս։ Նա մի՝ Բարաբբա անունով՝ մարդու է նմանում։ Նա իմ սիրեկանս էր և ես նորան խաբեցի. նա կը սպանէր ինձ—եթէ գիտենար այդ։

Եւ նա քայլերը շտապեցրեց։ Մագդաղենացին ճանապարհորդակցում էր նորան, իսկ Բարաբբան գնում էր նոցա ետևից դանդաղ և որոշեալ հեռաւորութեան վերայ, աշխատելով աննկատելի մնալու։ Վերջապէս նոքա այնտեղին հասան, որի մասին Յուդիթը յիշել էր, և որտեղ՝ իրաւացի՝ արմաւենիներ էին կանաչել։ Նոցա թեթև տերևները վերև, դէպի կապուտակ երկինքն էին բարձրանում, մինչ այդ, միւս ոչ այնքան բարձր ծառերը հարթ գետնի վերայ մութ ստուեր էին ձգում. սողացող վարդերի և «տարփալի հարմնուկ ծաղիկների» (страстныхъ цвѣтковъ—страстоцвѣтъ) անթիւ քանակութիւնը ամեն կողմերից խիտ ճեմելիքներ էին գոյացնում։ Այդտեղ անխելք աղջիկը միանգամից հանդարտեց։ Նա խորին հոգւոց հանեց և նորա անհանգիստ դէմքը լուսաւորուեց։ Նա ծաղիկների բնական կամարի տակ նստեց ու իր կողմը քաշեց և Մարիամին։ Ժպիտը խաղում էր նորա շրթունքների վերայ, նախկին դիւթիչ ժպիտը, որը նորա համար այնքան առնական սրտեր էր յաղթանակել։

— Մի ինչ որ բան երգիր,—ասաց նա։—Որև է պարզ, քնքուշ երգ, որը հալածէ պիտի այն բոլոր տեսիլքներին ու երևոյթներին,

որոնք միշտ դէպի ինձ են ձգտում ու ինձնից կպչում։ Ես քեզնից չեմ հարցնում—ով ես դու։ Սէրը քո աչերի մէջ լոյս է տալիս, և դու զարմանալի սիրուն ես։ Քո մազերը երկայն, ծփծփան և արևնափայլ են, բայց նայիր,—և նա ցոյց տուեց իւր ճոխ հիւսկէնները, որոնք բաց-կրակային լոյսով էին փայլփլում.—ինձ թւում է, որ սորա քոնից փայլուն են և՝ շօշափիր տես՝ նորա ամենափափուկ մետաքսի են նմանում։ Երբ ես կը մեռնեմ, կտրիր մազերս և դորանցից պարան հիւսիր, որով Յուդայի վիզը կապիր, գուցէ այդ նորա վէրքը բժշկէ և խոցին բուժարար բալասան դառնայ։ Դէհ, ինչ եղաւ, երգիր։

Նա գլուխը Մարիամի կրծքի վերայ թեքեց և աչքերը կիսախուփ արաւ։ Բարաբբան վստահացաւ աւելի մօտենալ և խիտ ծառերի մէջ թաքկացաւ։ Մագդաղենացու արծաթահնչիւն, բայց արցունքներից դողդոջ, ձայնը վշտաբեկ հնչեց. մի տխրալի մեղեդի էր այդ, որի իւրաքանչիւր կտորը վերջանում էր միևնոյն նուագով.

«Ամենից լաւ է արքայական այգու շրջապատի մէջ բուսած վարդ լինել»։

Քնքուշ երգը վերջացաւ և Յուդիթը՝ անհանգստութեան մէջ՝ սկսեց ետ և առաջ տատանուել, իւր ձեռքերը կոտրտելով, որպէս թէ սուր ցաւի ազդեցութեան տակ։

— Արքայական այգի,—հեծկլտում էր նա։—Այո՛, բայց ո՞ւր է Ինքը՝ Թագաւորը։ Նա պսակուած էր, բայց փշերով, Նա մեռա՛ւ։ Մեռա՛ւ։ Խաչեցին Նորա՛ն։ Ես՝ Յուդիթ Իսկարիօտացիս՝ մատնեցի Նորա՛ն։ Թո՛ղ միմիայն ինձ վերայ ընկնէ նզովքը, բայց ոչ Յուդայի, միայն թէ ո՛չ Յուդայի, ո՜հ, Աստուած, Ողորմած Տէր, ինձ, ինձ վերայ։ Թո՛ղ որոտմունքի ուժը խփէ ինձ, թող գետնի խորքի կրակները այրեն ինձ, բայց իմ մեղքն է, պիտի կրկնեմ ես,—իմ, ասում եմ ես, Յուդան անմեղ է։ Արքայական այգում պէտք է ընդ առաջ ելնել Թագաւորին, բայց Նա մեռա՛ւ։ Ո՜հ, ինչպէս կուզէի ես, որ Նա ապրէր, քանի որ այն ժամանակից, ինչ Նա մեռաւ, ինձ խորին խաւարը կլանեց ու աղջամուղջը լափեց։

Եւ նա խեղուկ վշտացեալի արցունքների տարափով լցուեց։ Մարիամը յուզմունքով իւր երկու ձեռքը դէպի նա կարկառեց ու գրկեց նորան, և Բարաբբային թեթևակի նշան արաւ։ Նա հասկացաւ և ետ դառնալով, շտապ շտապ այգու ելքին դիմեց. նորա սիրտը ջղաձգաբար սեղմուեց և ջերմ, կուրացնող արցունքները նորա աչքերը լցուեցին, մինչդեռ—միևնոյն ժամանակ—Մագդաղենացու երգի արտասովոր եղանակը դարձեալ հնչեց նորա խելքի մէջ, որի բառերն չէր կարող մոռանալ նա. «Ամենից լաւ է արքայական այգու շրջապատի մէջ բուսած վարդ լինել»։ Այո՛, իրաւ որ լաւ է։ Աւելի լաւ է մի հասարակ ծաղիկ լինել այն խորհրդաւոր այգու մէջ, ուր որ Քրիստոսն է Թագաւո՛ր։

XVII.

Բարաբբան շտապում էր որքան կարելի է շուտով Իսկարիովտի տունը հասնելու, որպէսզի անպայմ հօրը յայտնել կարողանայ իւր հէք աղջկայ դրութեան մասին։ Նա ամբողջ քաղաքը սարսափելի իրարանցման մէջ գտաւ։ Փողոցները ամբոխի անկարգ խմբերով էին լցուած, շատերը լալիս և հեկեկում էին, միւսները՝ տենդային դրութեան մէջ՝ գոռում էին ու գրգռուած աղաղակում թէ՝ բոլոր գերեզմանները բացուել են և աշխարհիս վախճանը մօտեցել է։ Դժուարութեամբ իրեն համար ճանապարհ բաց անելով, Բարաբբան այդ խառնակութեան պատճառը հարցրեց և իմացաւ, որ Նազովրեցու հրաշալի յարութեան համբաւը տենդային գրգռմունք էր բարձրացրել խաւար ամբոխի մէջ, որ բազմամթիւ մարդիկ և կանայք անմիտ երկիւղի ազդեցութեան տակ, ձգել էին իրենց տները, ճիչ ու աղաղակ բարձրացնելով, որ նոքա ննջեցեալներին տեսել էին նորից։ Վաղուց մեռած ընկերները, սիրելի ծնողները, երկար տարիներով թաղուած, յանկարծ դարձեալ երևացել էին, գոնէ, ծայրայեղ դէպքում, այդպէս էին հաւատացնում. այդ ուրուականների և դարձի եկած հոգիների ձեռքերը հպւում էին նոցա, հոգիների ձայները կոչում էին, համայն օդը մի ինչ որ գաղտնամիտ և խորհրդաւոր նշանով էր ծածկուած։ Նախապաշարմունքի մի ինչ որ երկիւղով բռնուած, այդ բոլոր մարդիկը չը համաձայնուեցին ոչ մի կերպ՝ դէպի իրենց սովորական և ամենօրեայ պարապմունքներին դիմելու, և միմիայն նորանով էին մխիթարւում, որ միատեղ էին խմբուած, մտածելով իրենց բազմութեամբ փոքր ինչ պաշտպանուել այն ամբողջ անբնականութեան դէմ, որ այդ նշանաւոր առաւօտ, թւում էր, տիրել էր բոլոր երկրին։ Իսկարիօտը տանը չէր,—ահա թէ վերջապէս Բարաբբան ինչ իմացաւ. նորա անբաղդ որդուն արեգակի ծագումից քիչ յետոյ, անմիջապէս թաղեցին, իսկ նա ինքը ձիով դէպի Բեթանիայի կողմն գնաց, իւր կորած աղջկայ ապարդիւն պտրտումն շարունակելով։ Չը նայելով այդ համբաւին, Բարաբբան շարունակեց իւր ճա-

նապարհը, յոյս ունենալով, այնու ամենայնիւ, պատահելու նորան, բայց քահանայապետի տան առաջ այնքան ստուար խմբով մարդիկ էին կանգնած, որ նորան դէպի առաջ գնալը չը յաջողեց։ Անխելք, անսանձ գոռում կոչում ձգած ամբոխի մէջ տեղ հռովմէական պահնակն էր գտնուում, որը գիշերը սուրբ վիմափորի մօտ էր անցկացրել. դոցա հարցաքննութիւնը Պիղատոսը արդէն վերջացրել էր, և այժմս, կառավարչի հրամանով, նոքա Կայիափային էին դիմում, մեծահրաշ գիշերուայ անցքերը նորան յայտնելու համար։ Նոքա կարգապահութեան կազմակերպութիւնը դժուարութեամբ էին պահպանում, քանի որ գրգռուած ժողովուրդը անկարեկցաբար հրում էր նոցա ամեն կողմից և, չը քաշուելով, ամենաստոր հայհոյանքներով անպատուում։ Ինչ լիրբ ու վատթար արբեցող մարդիկ են այդ հռովմայեցիք, նոքա՝ մինչև անգամ՝ մեռածին ևս չը կարողացան պահպանել։ Նազովրեցի Մարգարէն ո՞ւր է։ Սինեդրիօնի կնիքները ո՞վ է կտրել։ Հրէից Թագաւորի հետ ի՞նչ արեցիք դուք։ Նորան մեզ վերադարձրէք և մենք երկրորդ անգամ աւելի յաջողակ կը խաչենք նորա՛ն։ Ահա՛ դոքա էին նոցա բացականչութիւնները։ Քահանայապետի տանը, ինչպէս հակապատկեր այդ բոլոր աղմուկի, խորին հանդարտութիւն էր թագաւորում։ Բոլոր ծառայողներն էլ գիտէին, որ երէկ երեկոյեան մի անյայտ մարդասպան այնքան ծանր վիրաւորեց Կայիափային, որ՝ անկարծիք՝ մնացել է որ նա հրաշքով անփախուստ մահից ազատուէ։ Նորան անզգայ պարկած գտան իւր պատրշգամբի տակ, խոտի վերայ. ոչ ոք չէր կասկածում այն բանի մէջ, որ այդ փորձը, որի նպատակն էր սպանութիւն առաջացնել, Նազովրեցու աշակերտներից մէկի գործն պիտի լինէ, որը իւր Ուսուցչի մահուան վրէժն էր առնել։ Անյապաղ բժիշկ կոչուեց. նա գտաւ, որ վիրաւորուածի դրութիւնը բոլորովին անյոյս չէ, այլ թէ առողջանալու համար անհրաժեշտ են լաւ խնամք և կատարեալ հանգստութիւն։ Ուրեմն բոլոր դռները, որոնք դէպի ապարանքն էին տանում, ուշադրութեամբ կողպուած էին. ծառայողները ման էին գալիս անխօս ու լռելեայն կարգադրութիւններ անում ոտքի մատների վերայ շարժելով, իսկ Հռաքէլը—«Աննայի գունատ աղջիկը», ինչպէս Յուդիթն էր անուանում նորան, նստել էր լուռ և,—մի որոշեալ հեռաւորութեան վերայ,—իւր ամուսնու անկողնին մօտ, հազիւ երբեմն պաղարիւնութեամբ հիւանդի պահանջներն կատարելով, աւելի շուտ որպէս մի վարձկան հիւանդապահ կին, քան թէ ամուսնասէր կին։ Լուսամուտների վարագոյրները ցած էին թողնուած, որպէս զի ցերեկուայ պայծառ լոյսին թող չը տան թափանցել տանջուողի սե-

նեակի մէջ. մի խօսքով ամեն մի միջոց ձեռք էր առնուած՝ կատարեալ հանգստութեան հասնելու համար։ Բայց այնու ամենայնիւ զգուշութիւնները քիչ օգուտ էին բերում, որովհետև Կայիափան ինքը բժշկի կարգադրութեան չէր հետևում։ Նա հակառակում և հայհոյում էր, իւր անկողնի մէջ դադար չէր առնում ու այս և այն կողմն էր ընկնում՝ բարձերի վերայ ու լի կատաղութեամբ բողոքում էր, որ անգործութեան է բռնադատուած և ինքն իրեն շատ մեծ դժուարութեամբ էր ստիպում իւր աներ Աննայի սիրային հարցերին պատասխանելու։

— Դու 'ի զուր տեղն ես այդքան վրդովմունք պատճառում քեզ,—հանդարտութեամբ խօսում էր խորամանկ քահանան. մինչդեռ դու գիտես, որ ես այժմ կը սկսեմ քո փոխարէն գործել և քո պաշտօնը կատարել տաճարի մէջ։ Բացի դա, դու լաւ չես անում, որ այդքան կամակորութեամբ լռում ես և չես կամենում նկարագրել մեզ քեզ սպանել ցանկացողի դէթ արտաքին տեսքը։ Նորան հարկաւոր է գտնել և պատժել. քո մօտ գտնուած զէնքը, որից քիչ էր մնացել, որ սպանուէիր դու, մեզ կը օգնէ յանցաւորին գտնելու։

Կայիափան իւր վերայից վերմակը ձգեց և կանգնեց, բժշկի համոզմունքներին ուշք չը դարձնելով։

— Ինչ զէնքի մասին ես խօսում դու.—հարցրեց նա խռպոտ ձայնով։—Նորան ինձ տուր,—ես դորան նայել եմ ցանկանում։

Աննան, նորա դէմքի վայրենաբարոյ արտայայտութիւնից երկիւղ կրելով, նորա խնդիրը կատարեց։ Փոքրիկ դաշոյնը խլելով, նա կատաղութեամբ շուրջը նայեց։

— Թող տուէք ինձ բոլորդ էլ, բոլորդ էլ,—գոռաց նա կատաղի,—բոլորդ՝ բացի իմ կնոջի՛ց։ Ես կամենում եմ նորա հետ առանձնապէս խօսե՛լ։

Նորա գրգռմունքը այն տեսակ էր, որ ոչ ոք չը կամեցաւ, կամ աւելի ճիշտն ասած, չը համարձակեց հակաճառել նորան, և նորա հրամանը վայրկենապէս կատարուեց։ Նա այնքան սպասեց մինչ դուռը չը ծածկուեց Աննայից ետոյ բժշկի և երկու ծառաների, որոնք նոյնպէս սենեակումն էին գտնուում, հետևից. ապա անյուշութեամբ բարձերի վերայ ընկաւ, մի ձեռքի մէջ ջղաձգաբար թանկագին դաշոյնը սեղմելով, որի միջոցով Յուդիթ Իսկարիոտացին հազիւ թէ նորան կեանքից չէր զրկել։

— Հռաքէլ, մօտեցիր ինձ,—ասաց նա թոյլ, բայց հրամայական ձայնով։

Նա մօտեցաւ։

Դա մի նիհար, մութ—հերաւոր կին էր, դժգոյն, խաղաղ երեսով և սառած, անկիրք աչքերով։

— Դու այս խաղալիքը առաջ էլ տեսել էիր.—ասաց նա, դաշոյնը նորան ցոյց տալով։—Դու ճանաչում ես այդ։

Հաքէլը սառնասրտութեամբ նայեց նորան։

— Շատ լաւ եմ ճանաչում,—պատասխանեց նա։—Դաշոյնը Յուդիթին է պատկանում, իսկ նորան՝ մնացած Գաբրիլան է ընծայել։

Կայիափան անհամբեր շարժում գործեց։

— Այո, դու ճշմարիտ ես։ Աղջիկը ցնորուել է իւր եղբոր մահուան մասին իմանալով. Նա երէկ երեկոյեան ինձ մօտ եկաւ, բոլորովին զգջալով թէ ինչ է անում կամ թէ ինչ է խօսում։ Հէնց նա ես վիրաւորեց ինձ, բայց այդ ոչ ոք չը պէտք է գիտենայ։ Դաշոյնը վերցրի և ձգիր նորան այգու տակ գտնուած ջրհորի մէջ։ Դու կանես այդ և ոչինչ չես ասիլ, սառն և պաղ արիւն խմե կերպով, ես այդ զգում եմ, ու վստահ կարող եմ քեզ վերայ յոյս կապած լինել։

Նա վերցրեց փոքրիկ զէնքը և մի աննշան ժպիտ սահեց նորա դէմքի վերայ։

— Աւա՜ղ, անբաղդ, խղճուկ Յուդիթ.—ասաց նա։

Կայիափան շտապով ու տարակուսանքի մէջ նորա վերայ նայեց։

— Դու խղճո՞ւմ ես նորան։

— Ամբողջ հոգւով։

Արիւնը քահանայապետի երեսին զարկեց։

— Ես սիրում էի նորան,—գոռաց նա խուլ և անմտաբար, տկար ցանկութեան ազդեցութեան տակ։—Լսում ես, Հաքէլ, ես նորան սիրում է՛ի։

Հաքէլի սառն աչքերը նորա վերայ կանգ առան՝ արհամարհաբար։

— Ես լսում եմ, Կայիափա, և ես գիտէի այդ։

— Ուրեմն դարձեալ և մի բան ես իմացիր,—ճչաց նա վայրենաբարոյ կատաղութեամբ,—հէնց իսկ նորա պատճառով ես քեզ հետ անճշմարիտ էի, որին քեզ էի փոխո՛ւմ։

— Այդ ես և նոյնպէս լաւ գիտեմ ես,—սառն և անվրդով ձայնով պատասխանեց Հաքէլը։

— Եւ դու ոչինչ չե՞ս ասում։ Քեզ համար միեւնո՞յն է այդ.—զարմացած և զրգռուած հարցրեց նա։

Հաքէլի գունատ դէմքը յանկարծ արհամարհանքի գոյնով ծածկուեց։

— Ես ոչինչ չեմ ասում, որովհետև ոչինչ չեմ զգում, Կայիա-

փա,—պատասխանեց նա։—Գիտենալով քեզ, ինչպէս ես քեզ ճանաչեցի, հէնց նոյն այն օրից, երբ Աննա հայրս իմ ամբողջ կեանքն քո անսխալ պահպանութեան տակ դրեց, այդ արդէն բաւական է, որպէս զի ամենաքնքուշ կնոջ սիրտը իսկ քարի կամ երկաթի փոխէ։ Ես չեմ ողբում, քանզի ով կարող պիտի լինի մի այնպիսի սէր կորցնելու մէջ վշտանալ, որպիսին քոնն է և այնքա՜ն լկտի ու սպառուա՛ծ։ Բայց այլ ես դորա մասին չենք խօսիլ, ես վաղուց է, ինչ ինձ լաւութեան եմ սովորեցրել։ Ես քո կինն եմ, միմիայն կինդ, այդ նշանակէ պիտի քո աչաց առջև—փոքր ինչ գերուց կամ շնից առաւել մէ՛կը։ Եւ ես կը կատարեմ քո կամքը, ինչպէս մի գերուհի կամ շուն, մինչ ցանկալի մահը ինձ այլ ես չի ազատիլ. ես չափից դուրս հպարտ եմ, որպէս զի թոյլ տամ ինձ չը կատարել իմ պարտքս, մինչև անգամ և քո վերաբերութեամբ ի՛սկ։ Իսկ մինչ քո մոլի ցանկութիւններին գործ չունեմ ես, դու ազատութեամբ կարող ես ընկճուել նոցա և գերի դառնալ ում ա՛նկ է։

Հաքէլի ձայնը այնքան արհամարհաբար էր դողում և աչքերը մի այնպիսի բարկութեամբ էին փայլատակում, որ նորա ամուսինը մի վայրկենաչափ կորցրեց իրեն, բայց երբ նա շուռ եկաւ, որ սենեակից դուրս գայ, Կայիափան ցասկոտ ձայնով կոչեց նորան.

— Հաքէլ։

— Ի՞նչ դարձեալ։

— Ի՞նչպէս ես համարձակւում դու,—խօսեց նա խեղդուկ ձայնով,—ինչպէս ես վստահանում դու այդքան կատաղի կերպով և անպատուութեամբ ինձ հետ վարուելու։

Հաքէլը արհամարհաբար ժպտաց։

— Ես ամեն բանի կը համարձակէի, քանզի ինքս իսկ արհամարհուած եմ քեզնից,—պատասխանեց նա։—Իսկ դէպի Յուդիթ Իսկարիովտացին ես անկեղծ կարեկցութիւն և սէր եմ տածում, ու շնորհակալ պիտի լինեմ նորա համար, որ նա աշխատեց քեզնից աշխարհս ազատելո՛ւ։ Նա ազնուաբարոյ և քաջութեամբ վարուեց։ Ցաւում եմ միայն, որ նորան չը յաջողեց ա՛յդ։

Եւ վճռական, սէգ քայլերով նա սենեակից դուրս եկաւ։ Հէնց նոյն այդ ժամանակ, Աննան, երկիւղից գունատ և դողդոջ, ներս մտաւ՝ բժշկի ուղեկցութեամբ։

— Կայիափա... Կայիափա...—սկսեց նա կցկտուր։

— Տէր, մի վրդովիր,—խառնուեց բժիշկը, շտապով հիւանդի անկողնուն մօտենալով։—Ես աշխատեցի քեզ մօտ ոչ ոքի ներս չը

թողնել, բայց երեւում է, որ գործը լուրջ ու անհետաձգելի է...—եւ նա չը կարողացաւ իւր խօսքը առաջ տանել:

Կայիափան՝ դեռ եւս կնոջ անսովոր վարքից շփոթուած՝—տարակուսանքի մէջ նոցա վերայ նայեց:

— Ձեզ հետ ի՞նչ է պատահել.—թոյլ ձայնով հարցրեց նա:—Ի՞նչ, դու էլ դողում ես, Աննա,—դու, որը յուզւում է միմիայն այն ժամանակ, երբ ճաշը իւր քմաց ճաշակին չէ յարմարեցրա՛ծ: Ասա՛, ի՞նչ մի լուրեր ունիս դու:

— Պիղատոսը իւր մարդկանց քեզ մօտ է ուղարկել,—սկսեց Աննան:—Պահնակը հետ է վերցրած, վիմափորը բացուած...

Սարսափելի աղաղակով Կայիափան հազիւ չը ոստոստեց անկողնուց:

— Վախկոտ արարածնե՛ր, գողե՛ր, խաբեբանե՛ր: Նոքա չը պիտի յանդգնեն ասելու, որ Նազարէթից եկած Մարդը յարեաւ 'ի մեռելո՛ց: Եթէ որ Նորա մարմինը այլ եւս վիմափորի մէջ չէ, այն ժամանակ, կը նշանակէ որ գողացել են Նորա՛ն: Ո՞ւր են այն դատարկապորտ ծոյլերը, այդ սանձարձակ հռովմայեցիք: Պիղատոսը ուղարկե՞լ է նոցա: Հրամայեցէք նոցա, որ ներս մտնեն:

Աննան բժշկի վերայ նայեց, որը տատանեց գլուխը եւ ձեռքերը թօթվեց, որպէս թէ իրենից բոլոր պատասխանատուութիւնը հեռացնելով ու անցնելիք ապագայի մասին անպարտութիւն զգալով:

— Թո՛ղ ներս մտնեն.—դարձեալ գոռաց Կայիափան. Նորա ամբողջ դէմքը, չարութիւնից եւ անհամբերութիւնից, այլայլուեց: Ներս մտաւ Մակսիմուսը, իսկ Գալբուսը կողքին. Նոցա հետեւում էին եւ միւս զինուորները:

— Տէր եւ պարոն,—ասաց նա, ուղղակի քահանայապետի վերայ նայելով,—որը չարութեան եւ անփախուստ վրիժառութեան արտայայտութեամբ Մակսիմուսին էր նայում:—Ինձ այնպէս է երեւում, որ ես անյաջող ժամանակ եմ եկել,—սկսեց վերջինը,—որովհետեւ դու վիրաւորուած ես, որից տանջւում ես անշուշտ, բայց ես պարտաւոր էի կառավարչիս հրամանը կատարելու: Պիղատոսը մեզ ուղարկեց քեզ ասելու համար, որ պահնակի աշալուրջ հսկողութիւնը ապարդիւն էր. երկնային ոյժեր խառնուեցին, մեր դժուարատար պարտականութիւնը կատարելու զօրեղ խոչնդոտներ եղան եւ հրաշք պատահեց: Նազովրեցին յարութիւն առա՛ւ:

—Խաբեբայ եւ ունայնախօ՛ս.—փրփուրը բերանին՝ գոռաց Կայիափան, ձեռքերի մէջ ջղաձգաբար իւր ծիրանի, մահիճից խլուած, ծածկոցը սեղմելով ու դէպի առաջ տատանուելով, որպէս թէ իւր

թշնամուն որեւէ զէնքով խփելու պատրաստութիւն տեսնելով:—Ստախօսի մեծը եւ ստահա՛կ: Ո՞վ ես դու, երկչոտ հռովմայեցի, որ համարձակում ես պատրել մեզ մի այդպիսի անարգար պատմութեամբ: Վերջապէս ոչ թէ դու էիր պահնակի գլուխը անցել, այլ Գալբուսը. նա է ձեր բոլորի գլխաւորը,—քեզ նման անպէտք մարդկանց: Թո՛ղ նա խօսէ:

Մակսիմուսը բարկութիւնից գունատուեց, միեւնոյն ժամանակ, վիրաւորուած իրեն եւ իւր ընկերակիցներին հասցրած անպատուութեան համար: Նա մեծ դժուարութեամբ զսպեց իրեն, իւր արհամարհանքը չը արտայայտելու վերաբերութեամբ:

—Պարո՛ն քահանայ,—վերջապէս ասաց նա խեղդուկ ձայնով:—Դու շատ հեռուն գնացիր քո խօսքերի մէջ եւ—հաւանական է—թէ մոռացար, որ Հրէաստանը Հռովմի երկրների մի մասի մէջ է մտնում, եւ որ հէնց դու ինքդ էլ Կեսարին հարկ ես վճարում: Ես քեզ սուտ ու պատիր պատմութիւն չեմ հաղորդում,—ես ինքս իսկ խաբեբայութիւնը արհամարհում եմ,—ես այստեղ եկայ, որ դու այն բոլորը գիտենաս, ինչ ես ինքս տեսայ. այն բանի մէջ, թէ իմ մարդիկը քնած էին,—ես չեմ կարող դրժել. բայց ես,—ես ինքս արթուն էի եւ սեփհական աչքերովս տեսայ, թէ ինչպէս, կէս գիշերը անց, երկինքը պատառուեց եւ երկու Աստուածային Պատկեր ուղիղ գերեզմանի վերայ իջան: Գալբուսը այդ հրաշալի երեւոյթին ինձ հետ ուշադիր էր. շլացուցիչ փայլը, կայծակի նման, կուրացրեց մեզ,—մենք ընկանք... ինչպէս մեռածներ: Առաւօտեան, երբ զարթնեցանք, մենք ահագին քարը քարայրից հեռու, մի կողմի վերայ ձգուած տեսնք եւ... գերեզմանը—ունայն, բացի պատանքները, որոնց մէջ Նազովրեցու մարմինն էր փաթաթուած: Իսկ ինչ Գալբուսին է վերաբերում, ես ինքս էլ շատ կը ցանկանայի, որ քո կամ իմ հրամանը եւ խնդիրը կարող լինէին խօսեցնելու նորան եւ ստիպէին, որ նա էլ իւր գիտելիքը ասէր. հէնց այն ժամանակից, երբ երկնային զարհուրելի կրակները մեզ վերայ տեղացին,—նա թուլացաւ եւ, ինչպէս դու նորան տեսնում ես այժմ,—պապանձուեց:

Մինչդեռ Մակսիմուսը տակաւին կը խօսէր, Կայիափայի դէմքը այլայլուեց եւ, ներքին չարանենգութիւնից եւ կատաղութիւնից, որոնք լցրել էին նորա հոգին,—ձգձգուել եւ դողալ սկսեց:

—Ինչո՞ւ համար ես իմ ասածս չը պնդեցի, ինչու մտքիցս անցած նպատակն չը իրագործեցի իսկոյն եւ մէկէն 'ի մէկ չը հանգստացայ.—քրթմնջաց նա՝ դժուարութեամբ շունչ քաշելով:—Ես կը յօշոտէի այն անիծեալ սրբապղծի մարմինը, մաս մաս կը բաժանէի

աստուածանենգի այնքան գովուած սիրունկազմուածքը և,—մանրկեկ կտորների վերածելով,— պիտի ձգէի այդ մնացորդները ի կեր քաղաքիս թափառաշրջիկ շների՛ն:

Նա կանգ առաւ, աւելի ևս սարսափելի հայհոյանքներ, —լուտանքներ և նզովքներ չը դուրս ժայթքելու համար, որոնք դուրս էին թափւում նորա շրթունքներից, ապա թէ դարձեալ Մակսիմուսին դիմեց:

—Այդպէս ուրեմն,—ասաց նա,—գողացած մարմնի խաբեբայ պատմութիւնը այդ տեսակ է ուրեմն. գալիլէացի խաբեբայ ձեռնածուների ձեզ վերայ արած տպաւորութիւնը այդ է միայն, բայց չէ թէ նոքա, ինչպէս և իրենց մոլար Ուսուցիչը, ամեն տեսակ կախարդական պատրանքների թէ քաջահմուտ են և թէ գործածող: Բայց մի մտածէք դուք բոլորդ էլ, որ ինձ մինչ այդ աստիճան էլ դիւրին է խաբել. մեռած մարդիկ յարութիւն չեն առնում և ես պիտի քննեմ այդ գործը: Գալբուսը, ասում ես դու, խօսելու ընդունակութիւնը կորցրել է, բայց ինձ թւում է, որ նա խուլ չէ և ընդունակ պիտի լինի նշաններ անելու մէջ... Թո՛ղ նա յառաջանայ և ինձ մօտ, երեսի երեսի առած, դէմ առ դէմ կանգնէ: Ես հարցեր պիտի դնեմ նորա համար և երդւում եմ Իսրայէլի Աստուծով,—նա պիտի պատասխանէ ինձ, թէկուզ լռելեայն նշաններով իսկ:

Նորա հրամանը կատարուեց,—երկու զինուորներ օգնեցին անբաղդ կաթուածահար Գալբուսին՝ քահանայապետին մօտենալու: Կայիափան, անկողնի մէջ շարժելով, կոպտութեամբ բռնեց նորա ձեռքից.

—Գալբո՛ւս:

Ցենտուրիոնի շրջմոլիկ պղտոր աչքերը դանդաղութեամբ բարձրացան և անորոշ կերպով կանգ առան քահանայապետի գունատ ու դաժան դէմքի վերայ: Սկզբում նորա ակնարկի մէջ ոչ մի արտայայտութեան նշոյլ չը կար, բայց՝ տակաւ առ տակաւ՝ դէպի դատողութիւն ու յիշողութիւն առաջնորդող լոյսը կենդանացրեց նորան. յանկարծ մի տեսակ փոփոխութիւն առաջացաւ նորա վարուեցողութեան մէջ: Նա խորին հեծեծանք արձակեց, կորացած կերպարանքը ուղղեց և ուժգին իմն կերպով իրեն բռնող մարդկանց մի կողմ տուաւ, որոնք՝ ափշած՝ նորան նայել սկսեցին, մի ձեռքով նա իր սուրը փնտռեց և նորա ծանօթ երախակալին հպուելով, ժպտաց, մի տեսակ գերբնական ուժի ազդեցութիւնից, և գլուխը, նախկին սէգ և պատերազմական արժանաւորութեամբ, բարձրացրեց: Կայիափան ուշադիր էր նորա ամեն մի շարժմունքին, բայց լի կասկածան-

քով. այդ մարդու նախկին անօգուտ ու թոյլ դրութիւնը այժմ կատակ էր թւում. գուցէ՝ մինչև անգամ՝ նորա ըստ երևոյթին համրութիւնը ես կամակորութեան արդիւնք լինէր: Այդպիսի մի եզրակացութեան գալով, քահանայապետը ցասկոտ կերպով յօնքերը կիտեց և՝ բարկութեամբ լի ձայնով՝ հարցրեց.

—Բա՛րէ: Դէհ, Գալբո՛ւս: Զեկուցումդ ինչո՞ւմն է կայանում: Անցկացած գիշերուայ անցքի մասին ի՞նչ պիտի պատմես մեզ: Եթէ դու համր ես—նշանացի խօսիր, իսկ եթէ կարող ես և խօսել, ուրեմն այլ ես սկսիր: Ո՞վ խանգարեց արթնութիւնդ, քո հռովմէական քաջութիւնը ո՞վ խորտակեց:

Ահարկու և բոլորի համար էի անսպասելի ու անփոփ պատասխանը հնչեց.

—Յիսուս Նազովրեցին—Կենդանի Աստուծոյ Որդի՛ն:

Պատասխան տուողը ինքը... Գալբուսն էր. ընդարմացումն յանկարծ թողեց նորան և նորա ձայնը—հնչուն և համոզեցուցիչ, մինչ սենեակի խորքը տարածուեց: Շփոթութիւնը և զարմանքը տիրեցին բոլորին էլ, ով ներկայ էր այդտեղ, բայց նա, կարծես թէ հէնց նոր արտասանած ճշմարտութիւնից աւելի ևս ոյժ ստանալով, ամուր ձայնով և անվեհեր ու վստահութեամբ կրկնեց դարձեալ.

—Յիսուս Նազովրեցին—Կենդանի Աստուծոյ Որդի՛ն:

Կատաղութիւնից խելքից դուրս եկած, Կայիափան մի շարժմունք գործեց, որպէս թէ կամենալով նորա շրթունքներին խփել, բայց հեռատես և զգոյշ Աննան բռնեց նորան:

—Դուրս, դո՛ւրս ձգեցէք նորան.—գոռաց նա, կորցնելով իրեն և սեղմուած բռունցքները օդի մէջ շարժելով:—Կապոտեցէք նորան, նորա բերանը բռնեցէ՛ք: Սպանեցէք նորան,—Կեսարի առջև նորա մահուան մասին պատասխանատուն ես եմ կանգնո՛ւմ: Փակեցէք նորա բերանը, ասում եմ ձեզ, ստիպեցէք լռելու նորա՛ն: Նա ստախօս է, նա խաբեբայի մէկն է: Ես նորան բոլոր ժողովրդի ներկայութեամբ խայտառակեմ պիտի՛: Դուրս տարէք նորան շուտո՛վ: Խանգարեցէք նորան, որ նա քաղաքի մէջ սրբապղծութիւն չը գործէ: Ամենաստոր արարածներ, դուք չէք կամենում լսել ինձ անգա՛մ: Դուք թո՛յլ պիտի տաք, որ ժողովուրդը այդ խաչուած յանցաւորին իրաւայի Աստուածութեան մէջ փաթաթուած հաւատար: Ա՛հ, թող նզովեալ լինէ նա: Դուք՝ բոլորդ էլ՝ խաբեբաներ էք,—դուք ևս նզովքի տակ մնաք և անիծեալ լինի՛ք:—Ստորաքարշ անասուններ, հռովմէացի վախկոտներ, գալիլիացի խարդախիչների կեղտոտ փաղաքշողներ:

Նորա ձայնը յանկարծ կտրուեց,—վէրքը բացուեց նորից և

դուրս ժայթքող արիւնը սպիտակ փաթաթանի վերայ մի կարմիր բիծ գոյացրեց: Նորա առողջութեան հոգատարը վախեցաւ և այն ոչ նպատակով և ո՛չ իսկ կատակով, այլ իրաւացի, և յայտնեց Աննային, որ ինքը հիւանդի կեանքին երաշխաւորող չէ այլ ևս ու էլ աւելի ևս,—եթէ այդ տեսարանը դեռ ևս շարունակուելու լինէ: Աննան վստահացաւ հարցաքննութեանը ինքն վերջ դնել:

—Դուրս կորսուէք բոլորդ էլ,—ասաց նա՝ բարկութեամբ, դէպի Մակսիմուսը դառնալով:— Ձեզ հետ վերցրէք և խելքը կորցրած Գայբուսին: Նորա լռութիւնը իրա խօսելուց լաւ էր: Բայց չը մտածէք, որ մենք այդ գործը այսպէս բարձի թողի արած պիտի թողնենք: Ո՞ր մի կատարեալ դատողութեան տէր մարդ հաւատալ կարող է այդ անհեթեթութեան—ո՛չ ոք: Մեզ ոչ գալիլէացիք պիտի խաբեն, ոչ էլ հռովմայեցի՛ք:

Մակսիմուսը միմիայն խորին արհամարհութեան ակնարկով պատասխանեց: Մինչ այդ՝ Գայբուսը ուսումնասիրում էր Կայիափայի գունատ ու այլայլուած դէմքը:

— Նայեցէք, թէ ուրիշի չար հոգիներ են տանջում այս հրէական քահանային,—ասաց նա մտածկոտ:—Համայն դժոխքն է զինուել Քրիստոսի սպանիչի դէմ:

— Լռի՛ր, անասուն.—գոռաց Աննան:

— Ինքդ լռի՛ր, հրէայ,—հակաճառեց Գայբուսը,—դու չը պիտի համարձակիս այդպէս վարուել Տիբերիայի զինուորի հետ:

Աննան կատաղութիւնից կապտեց: Կայիափայի վէրքը կապող բժիշկը 'ի զուր էր աշխատում արիւնը կանգնեցնելու. Նկատելով այդ, նա դարձեալ միջամտեց, աղերսելով, սենեակը դատարկել և աշխատել հիւանդին դադար տալ: Աննան, հայհոյանքի տարափը դժուարութեամբ պահելով, որոնք պատրաստ էին դուրս ժայթքելու նորա շրթունքներից, արժանավայել և խաղաղ տեսք ընդունեց:

— Ցենտուրիոն,—ասաց նա,—ես ինձ և իմ կոչմանս համար անյարմար եմ համարում վիճել սոր անարդարների հետ: Դուրս կորիր քո մարդկանց հետ, մենք քեզ հետ Պիղատոսի միջոցով կը խորհրդակցենք, և քո վարքդ աշխարհակալի գիտակցութեան կը հասցնենք: Մի կասկածիր, արդարադատութիւնը յաղթանակէ պիտի, և նա, ով սինեդրիոնի գերեզմանի վերայ տուած կնիքները կոտրել է, կը քննուի և ամենախիստ օրէնքի դատակնիքով պատժուէ պիտի:

Գայբուսը արհամարհաբար ժպտաց:

— Այդ դէպքում հրեշտակներին հետախուզեցէք և գտնէք պի-

տի դէպի դրախտ տանող ճանապարհը,—ասաց նա,—սուտ քահանաների համար այդ տեսակ մի հարց այնքան էլ թեթև չէ:

Եւ ուժգնապէս ետ դառնալով, նա իւր մարդկանց վերայ կանչեց, որպէս թէ ոչ մի ժամանակ իւր տեղը թողած չը լինէր: Բայց հէնց ուղիղ դուրս գալու ժամանակ, մի զինուոր ետ մնաց և Աննային գաղտնապէս նշան արեց:

— Քեզ ինչ է պէտք,—անհամբերութեամբ ասաց Աննան,—միթէ դու չես տեսնում, որ քահանայապետը այլ ևս անկարող է ձեր աղաղակը տանելո՛ւ:

—Ես կամենում եմ նորան միմիայն մի խօսք ասել,—ասաց զինուորը,—Սիցիլիայի տգեղ և մութ ծնունդներից մէկը:—Կարող է պատահել, որ ասածս նորան մեղադրանքի տեղ ծառայէ:

Աննան ուշադրութեամբ զննեց նորան, ապա շտապով Կայիափային մօտեցաւ, որը մահիճի վերայ ընկած ու բարձերին կռթնեց համարեա թէ ուշագնացութեան մօտ դրութեան մէջ:

—Այս զինուորը քեզ մի ինչ որ բան ունէ ասելու, որդիս,—ասաց նա:

Կայիափան իւր դադրած ու արիւնով լցուած աչքերը բաց արեց:

—Մի՛ք տանջիլ ինձ,—շշնջաց նա հազիւ լսելի ձայնով,—ես չարչարւում եմ: Թողէք ինձ:

—Պարոն,—մէջ մտաւ զինուորը,—ես քեզ կամենում եմ մի միջոց տալ, որ կարող է քեզ պէտք գալ: Իրաւացի՝ մենք բոլորս էլ երէկ գիշեր քնած էինք, հրաշալի երգեցողութեամբ, կարծես թէ անտեսանելի սոխակների, դիւթուած ու գեղգեղուն օրօրի տակ, բայց մենք այլ ևս ոչ մի հրաշք ասած բան չը տեսանք, չը նայելով, որ քեզ այդպէս ասաց Մակսիմուսը: Բայց այսօր առաւօտեան, երբ մենք քարայրից հեռանում էինք, մեզ մի օտարական պատահեց, որը մանրամասնաբար հարցաքննեց, թէ ինչպէս մենք գիշերը անցկացրինք: 'Ի մեծ զարմանս բոլորիս, նա մի մատանի ունէր, որի վերայ Կեսարի կնիքն կայ դրոշմուած: Նորա հետ էր և Բարաբբան:

Կայիափան դողաց և թեթևակի բարձրացաւ:

—Բարաբբա՞ն:

—Այո, պարոն, հէնց նա ինքը: Բարաբբա՛ն, այն՝ որը աւազակ է՛ր:

Խարդախութեան ուրախարար կայծը յանկարծ քահանայապետի աչքերի մէջ երևաց:

— Զինուոր, շնորհակալ եմ քեզնից,—ասաց նա:—Դու լաւ ա-

բեցիր, որ այդ յայտնեցիր ինձ։ Ապա, քիչ ուշացնելուց յետոյ, այստեղ վերադարձիր,—ես կը հրամայեմ քեզ ոսկի տալ 'ի պարգև։ Եւ լսիր ինձ, ընկեր, քո այն բոլոր ընկերներին, որոնք հրաշքները չեն տեսել, այլ՝ ամենապարզ կերպով՝ քնած էին, որոնք նոյնպէս առաւօտեան Բարաբբային են հանդիպել քեզ հետ, նոյնպէս ես ոսկի կը տամ, բայց միմիայն մի պայմանով, որ Նոքա ևս այդ պատմէին քաղաքի մէջ։ Բարաբբան պաշտպանում էր Նազովրեցուն և դորա համար իսկ, նորան ևս կարելի է Նորա աշակերտների դասին դասել։ Դու ճշմարտութիւն ես պատմում։ Բարաբբան աւազակ էր։

Եւ երբ զինուորը իւր ընկերներին խառնուեց և իւր շարքի հետ միաւորուեց ու նոցա քայլերի ձայնը վերջնականապէս անլսելի դարձաւ, Կայիափան բարձերի վրայ ընկաւ, գոհունակութեան և թեթևութեան հառաչանքով։ Զարտարաստիկ ժպիտով նա դարձեալ շշնջաց.

—Բարաբբա՜ն։—Բարաբբան աւազակ էր։

Եւ չը նայելով, որ քիչ առաջ Նա կատաղի դրութեան մէջ էր ու ցաւով բռնուած,—այնու ամենայնիւ նա հանգիստ քնի մէջ մտաւ. Նորա բարակ շրթունքների վրայ, քնի մէջ անգամ, միևնոյն չարախայթ ժպիտի ստուերն էր խաղում։

XVIII.

Խիտ ամբոխի միջից դժուարութեամբ իրեն ճանապարհ բաց անելով, և այն մարդկանց մի կողմ տալով, որոնք պահնակին դէպի Կայիափայի ապարանքն էին ուղեկցել և այժմ ապարանքի դռների մօտ սպասում էին Նորա վերադարձին, Բարաբբան վերջապէս Իսկարիօտի բնակարանին հասաւ։ Ամբողջ տունը փակուած էր 'ի նշան սգակիր տխրութեան, ծառաներից ոչ ոք ուղիղն չը կարողացաւ ասել, թէ ուր էր գնացել ինքը՝ ծերունին, որդու վշտալի թաղումից յետոյ։ Բարաբբան չը գիտէր թէ ինչ անէր։ Ծառաներին Յուդիթի խելագարութեան մասին չը կամենալով ոչինչ ասել և ոչ էլ յայտնել նոցա, որ նա Գեթսեմանի այգում և միմիայն Մագդաղենացու խնամքին է մնացած, նա, մի տեսակ մտատանջութիւնից յետոյ, վերջապէս վճռեց երկու կանանց մօտ վերադառնալ և Մարիամի հետ խորհրդակցել, թէ ինչ կերպ լաւ կը լինէր անյապաղ աղջկան Նորա ոչ պակաս թշուառ հօրը վերադարձնել։ Նա այդ պատճառով կողքի փողոցներով դարձեալ դէպի այգին դիմեց, ամբոխից փախուստ

տալու համար։ Երբ նա մեծ ճանապարհի վրայ դուրս եկաւ և արդէն Գեթսեմանի այգու ծառերը զանազանեց, այն ժամանակ նկատեց մի խումբ մարդկանց, որոնք նորանից ոչ հեռու կանգնած լինելով, լուրջ խօսակցութեամբ էին զբաղուած։ Նորանց աւելի մօտենալով, նա նոցանից մէկին ճանաչեց,—դա Սիմոն Պետրոսն էր. միւսներին նա չէր ճանաչում, բայց նոցա հագուստից և տեսքից եզրակացրեց, որ գալիլիացիք դոքա էին և՝ աւելի շուտ՝ Նազովրեցու աշակերտները։ Նա մտադրուեց շտապով նոցա մօտից անցնել, որպէս զի շուտով իւր նպատակին հասնէ, բայց Պետրոսը ճանաչելով նորան՝ կոչեց։ Նա մօտեցաւ։

— Ահա սա է Բարաբբան,—դանդաղութեամբ ասաց Պետրոսը,—հէնց նոյն ինքն նա, որին, հրէաների խնդրի հիման վրայ, մեր Տիրոջ փոխարէն արձակեցին։ Նա դարձի է եկել իւր մեղքերից ու քաւել է իւր յանցանքները. նորան ևս—որդեօք—չը համոզենք, որ մեզ հետ գայ։

Բոլորն էլ հետաքրքրութեամբ նորա վրայ նայեցին. Նորանցից մէկը խարտեաշ ու բարձր—գեղանի հասակով մի մարդ—պարկեշտափայլ դէմքով և փայփլուն մտայոյզ աչքերով, սիրով դէպի նա մօտեցաւ։

— Աւետում ենք քեզ, ընկեր։ Գիտես դու, որ Նա, որին այնքան անխղճաբար խաչեցին, փառաւորապէս յարեաւ 'ի մեռելոց։ Եւ ահա մենք, Նորա աշակերտները այլ ևս չենք վշտանում. մենք մի այնպիսի յոյս ստացանք, որ մեզ այլ ևս թողնել չէ կարող։ Մենք այժմ Բեթանիայի կողմն ենք գնում, ապա կը գնանք Գալիլիա, ինչպէս որ մեզ Ուսուցիչն է հրամայել։ Նա խոստացել է դիմաւորել մեզ ճանապարհին։

Բարաբբան խօսեցողի վրայ գննողական ակնարկ ձգեց։

— Դու հաւատո՞ւմ ես, և այն քո բոլոր սրտովդ ու հոգւովդ, որ Նա յարեաւ 'ի մեռելոց։

— Ճշմարտապէս հաւատում եմ։

— Խնդրում եմ, տա՛ս ինձ անունդ։

— Անունս՝ Յօհաննէս է։

Լռութիւնը յաջորդեց։ Բարաբբան կանգնած էր անշարժ, յօնքերը կիտած ու վառվռուն աչքերով, որոնք կիսա-խուփ նայում էին երկար, սև արտևանունքների տակից։

— Չը պիտի՞ գաս, որդեօք, և դու մեզ հետ.—հարցրեց Պետրոսը։—Կարող է պատահել, դու ևս կարողանաս պատահել և յարուցեալ Տիրոջ տեսնել։

— Ես Նորան տեսայ արդէն.—պատասխանեց Բարաբբան։

Այդ խօսքերը լսելով, աշակերտները հա եա քաշուեցին Նորանից, իրար հետ զարմացական ակնարկներ անելով։

—Ձեր խօսքերից ես տեսնում եմ, որ դուք Նորան դեռ ես չէք տեսել։ Ճշմարտապէս ապրում է Նա, դորա մէջ ես կարող եմ երդուել։ Դուք այդ լուրը Մարիամ Մագդաղենացուց էք ստացել, և դուք նոյնպէս պատրաստ պիտի լինիք մի կնոջ պատմութեան հաւատալ՝ կատարուած հրաշքի վերաբերեալ. բայց ես կանգնած էի հէնց մօտակայում, երբ Նա նորա հետ խօսում էր. ես քննադատեցի և ուսումնասիրեցի նորա դէմքը, ես նորա ձայնը լսեցի, ես ինքս տեսայ, թէ ինչպէս հեռացաւ Նա և անյայտացաւ։ Այդ բոլորը՝ իրաւացի՝ տեսայ ես։ Բայց թէ ուր գնաց Նա—այդ ես չը գիտեմ, թէպէտ և վիմափորը նայեցի, բայց Նա այնտեղ չէր...

—Մենք նոյնպէս գնեցինք այրը,—ուզում էր սկսել Պետրոսը։

—Ինչպէս թէ՞։ Եւ դո՞ւք էլ կասկածում էիք, որ Նա՝ իրաւ որ՝ յարեաւ 'ի մեռելոց։ Դուք նոյնպէ՞ս.—և Բարաբբան չարաբաստիկ ժպիտով բռնուեց։—Դուք մտածում էք, որ Նորան ճանաչէք պիտի, եթէ որ ճանապարհին պատահելու լինիք։

—Կը ճանաչէ՞նք—արդեօք—մենք Նորան.—կրկնեց Պետրոսը։—Հազար հազարաւոր մարդկանց միջից մենք պիտի ճանաչենք Նորան։

Բարաբբան ուշադիր Նորան նայեց. նորա աչքերի մէջ կասկածանքի ստուեր երևաց։

—Զգոյշ եղիր, Պետրոս, և մի երդուիր։ Երիցս դու Նորան ուրացար արդէն։

Նա մի րոպէաչափ կանգ առաւ, ապա նորից սկսեց.

—Բարեպաշտ տեարք, շնորհակալ եմ ձեզնից ձեր առաջարկութեան համար՝ ձեզ ընկերակցելու, բայց ես չեմ կարող միաւորուել ձեզ հետ։ Ինձ թւում է, որ իմ ճակատագիրս այլ է։ Ես մեծ յանցաւորի մէկն եմ, բազմաթիւ կասկածանքներով և տատանմունքներով օժտուած, որոնք ձեր անձնուիրութեան հետ չեն կարող հաւասարուել։ Բայց ես մտածում եմ, որ ճշմարտութիւնը ո՛չ մի ժամանակ չէ կարող մարդուս վնասել. ճշմարտութիւնը—Աստծու մասնիկն է, եթէ Աստուած դեռ ես գոյութիւն ունէ, և դորա համար էլ ես ձեզ չը հետևելու մերժմունքիս ճշմարիտ պատճառը կասեմ այլ ես։ Երբ ձեր Ուսուցիչը մատնուած էր, դուք բոլորդ էլ անխղճաբար ձգեցիք Նորան և այդ իսկ անտանելի գործողութիւնը իմ հոգիս խռովում է դէպի ձե՛զ։ Աւելի շուտ ես Յուդային կը հետևէի ու նորա յանցաւոր

գերեզմանը կը ընտրէի, այնտեղ ինձ ես տեղ գտնելով, ուր չիրիմի տակ խաղաղ կը լինէի,—քան թէ ձեր ճանապարհով կը գնայի։ Ես անմեղ Նազովրեցու փախուստ տուող աշակերտների հետ միասին հաց չեմ կարող ուտել։

Ամբողջովին խիստ վրդովմունքից դողալով, Նա կանգ առաւ։ Նորա ունկնդիրները, նորա խօսքի խայթող անխիղճ ճշմարտութեամբ խորտակուած, լռութիւնը չը խզեցին։

— Ես Բարաբբան եմ,—շարունակեց նա,—իմ անունս իսկ կարող է մտքի մէջ խայտառակութիւն յիշեցնել ու կեղտոտութիւն զարթեցնել, որով ամեն մի մարդ պիտի արհամարհէ ինձ։ Ես և՛ գող եմ եղած. և՝—մարդասպան։ Ես չըջմոլիկի մէկն եմ և խօսում եմ ոչ ուսումնականի ձևով,—բայց ես չեմ ծածկում իմ յանցանքներս, չեմ աշխատում գաղել թերութիւններս և ինձ այն չեմ ձևացնում,—ինչ որ չեմ։ Դուք, կարող է պատահել, այն սուրբ մարդկանց մէկն էք, որոնք աշխատել և աշխատում են մարդկութիւնը բարձրացնել, իսկ ես յանցաւոր եմ և գիտեմ, որ հազիւ երբեմն յաջողում է այդ։ Ես նոյնպէս չեմ ծածկում և իմ անհաւատութիւնս. ես ձեզ՝ բոլորիդ էլ նոյնպէս բացարձակ կասեմ, որ՝—իմ կարծիքով՝—ոչ մի ժամանակ՝ Նազարէթից եկած Մարդը չէ մեռել. դորա հաստատութիւնը այն է, որ այդ երևակայական մահուանից ց'կնի,—ես Նորան տեսայ, հէնց այսօր իսկ առաւօտեան, կենդանի։ Նորա տեսքը հրաշալի է, այդ մասին ես չը պիտի հակառակեմ. Նա ամբողջովին շնչում էր անբնական գեղեցկութեամբ. կուրացուցիչ լոյս էր շնչում ամբողջ նորա պատկերը, բայց Նա միշտ այդպէս էր, անգամ դատաստանատան մէջ—Պիղատոսի դիմաց, երբ ես առաջին անգամ Նորա դէմքը տեսայ։ Որ Նա խաչի վերայ ուշաթափուեց — շատ կարելի է, և փր Նա ուշքի եկաւ՝ գերեզմանի մէջ,—նոյնպէս կարելի է։ Ես մինչև անգամ հաւատում եմ և այն բանին, որ նորա բարեկազմ մարմինը մի այնպիսի կարող ու անսովոր ոյժ ունէր, ու մի այնպիսի միջոցով էր տիրանում, որ հէնց Նորան միայնակ իսկ յաջողեց թաւալել այն վէմը, որը մուտքն էր պահում. բայց գերբնական, ընդհանրապէս անկարելի երևոյթներին ես չեմ կարող հաւատալ, մինչդեռ նոքա դեռ ես ոչնչով հաստատուած չեն։ Եւ եթէ դուք այնքան պարզ մէկն լինէիք, որպիսին ես եմ, այն ժամանակ ես բացատրէի պիտի իմ կասկածանքներս։ Բայց այդ բոլորին չը նայելով, եթէ ես Նազովրեցուն ծառայէի այնպէս, ինչպէս դուք էք ծառայել, և թէպէտ ես կը հաշուէի Նորան միմիայն մարդ, ընկեր և Ուսուցիչ,—այնու ամենայնիւ, ես չէի թողնել Նորան թշնամիների իշխանութեան տակ ու

չէր փախչիլ, ու չր պիտի ուրանար Նորան, ինչպէս Պետրոսը։

Նա բարձր և ճարտար էր խօսում՝ Պետրոսը զղջաց և գունատուեց. այդքան նախատինք ու անուանարգութիւն սառնասրտութեամբ նա չէր կարող տանել։

—Ծերօրինակ աւազակ,—վրդովմունքի մէջ ասաց նա։—Միթէ դու այն մարդու երկիւղը և տատանմունքը չես կարող հասկանալ, որ...

—Ես ամեն ինչ կարող եմ հասկանալ, — կոպուտ ձայնով վրայ բերեց Բարաբբան,—բացի երկչոտութիւնից։ Լսիր, եթէ այդ ձեր Ուսուցիչը իրաւացի Աստուած է և իրաւացի յարեաւ 'ի մեռելոց, թող Նա մէկ միայն գէթ՝ ինձ մօտենայ և խօսակցէ ինձ հետ, —անբաղդիս, յանցաւորիս, կասկածող Բարաբբայիս,—թող ես միմիայն ճանաչեմ Նորան, ինչպէս որ իսկապէս կայ Նա։ Այլ ես ինչ ունիմ ես Նորա մէջ, որ թէ՝ հաւանական է՝ կր մեռնիմ ես երկիւղէց կամ Նորա ներկայութեան փառքից։ Կասկածը այլ ես չր պիտի կրծոտէր իմ հոգիս,—ես տանջանաց յաւիտենականութիւնը քաղցրութեամբ կր տանէի, որ գոնեայ իսկ Նորա Աստուածութիւնը հաստատած լինէի՜։ Իսկ դուք ճանաչում էիք Նորան, գոնէ այդպէս էք ասում դուք, և՝ այնու ամենայնիւ՝ կասկածեցիք և ծգեցիք Նորան։ Դուք ինքներդ իսկ հաստատեցիք, որ դուք Նորա մէջ Թիւրիմացութիւն էիք գտնում, որովհետև՝ եթէ որ դուք հաւատում էիք, որ Նա Աստուած է, ինչու համար ուրեմն բոլորդ էլ թողեցիք Նորան ու հալածական եղաք։

Խոշորկեկ արցունքները աշակերտ Յօհաննէսի աչքերը լցրեցին։

—Խնդրում եմ, քեզ, Բարաբբա,—մի ասիր ոչինչ աւելի,—շըշընջաց նա։ —Մենք սոսկ մարդ ենք, մենք մեղաւոր ենք։

—Ճիշտ է,—ասաց Բարաբբան վշտակիր,—մենք միմիայն մարդիկ ենք։ Մենք պարտաւոր ենք աստուածներ լինելու, որպէս գի Աստծուն ծառայել կարողանանք։ Շատերը ասում են, որ մենք կարող ենք և աստուածներ լինել, քանի որ մեր մէջ բարւոյ և չարի գիտակցութիւնը կայ։ Բայց ինձ թւում է, բայց ինձ այնպէս է երեւում, որ մենք ծանօթ ենք միմիայն մի կէսի հետ—այսինքն չարի հետ. բարւոյ մասին մենք քիչ բան գիտենք և աւելի սուտ ենք սիրում նորան։ Բոլորից էլ խնդրում եմ ինձ իմ խօսքերիս կոպտութեան մէջ ներել։ Ես վշտահար մի մարդ եմ, չարացած, խորտակուած սրտով և իմ կեանքս հրապուրիչ չէ։ Եւ թէպէտ ես ձեզ հետ չեմ գնալ, բայց ձեզ բարի ճանապարհ եմ ցանկանում, և եթէ դուք ձեր Տիրոջ կը պատահէք, թող լեցուին ձեր աչքերը բաւականաչափ սիրով, որպէս զի Նորան ճանաչէք, նախկինը զղջաք, քաւէք

և ապագայում այլ ևս չը մոլորիք։ Դէհ, մնաք բարեաւ։

—Սպասիր,—գոչեց Պետրոսը,—քո բոլոր յանդիմանութիւններդ անպատասխան չը պիտի մնան։ Դու գիտես թէ ում վերայ է ընկած գլխաւոր յանցանքը, թէպէտ և իմ ընկերակիցները չը գիտեն այդ։ Ես քեզ բոլորը պատմեցի, քեզ և այն անծանօթին, որը քեզ հետ էր գնում, և դորա համար էլ տուր քո յանդիմանախօսութիւնդ այն տեղ, որտեղ նա ամենից շատ է արժանի,—տար այն մատնչուհուն, պէտի որը դեռ ես քո բոլոր հոգիդ մոլեգնաբար չողոքորթում է, չը նայելով նորա բոլոր խայտառակութեան։ Ասա՛, ո՞վ պիտի ճիշտ խօսէ այն բանի վերաբերութեամբ, թէ ինչպէս մատնեցին Տիրոջը։—Ո՛չ ոք։ Քանի որ պօռնիկ կինը թանկագին ապաստանարան է մարդկանց համար. և մինչև անգամ օրէնքներն իսկ պահպանում են նորան և վաւաշ, տափոտ հեշտասիրութիւնը գովաբանում։

—Դու՝ այնու ամենայնիւ՝ դեռ ես վախկոտ ես, Պետրոս,—բարկացած հակառակեց Բարաբբան.—դու ցանկանում ես սեփհական թուլութիւնդ արդարացնել և բոլոր յանցանքը կնոջ վերայ ձգե՛լ։ Դա փոքրոգի և անարժան գործ է։ Միթէ թեթևացնում է քո մեղքը և Յուդայի յանցանքը այն, որ կինը յաջողեց պատրել ձեզ թէ իր յոնաձօճ աչերով և թէ սէրուսիրտ ձայնով։ Այդ կրկնապատկում է քո յանցանք՞դ։ Հաւատա ինձ. մի ժխտիլ քո մեղաւորութիւնը. միշտ աւելի լաւ է խոստովանել կատարած յանցանքի մասին, քան թէ ծածկել նորան և արդարանա՛լ։

Այդտեղ նա բարկացկոտ կանգ առաւ հապճեպ, աշակերտների մէջ առաջացած յանկարծակի շարժմունքից ափշած, որոնք բոլորն էլ սկսեցին դէպի Գեթսեմանի տանող հեռու ճանապարհի կողմը նայել ուշադիր։ Նա նոյնպէս դարձաւ և տեսաւ... մի կնոջ, սպիտակի մէջ, սրընթաց վազող, ինչպէս ուրուական ու՝ ձիթենի ծառերի խիտ ստուերի տակից անցնող։ Նորա խառնափնդոր մազերը ու անպարտակ հիւսքէնների հրային փայլը միանգամից Բարաբբայի ակնարկը գրաւեց։ Նա խելատար Յուդիթին ճանաչեց։ Նորա հետևից ուժասպառ տեսքով ու խորին յուսահատութեան մէջ, Մագդաղենացին էր վազում։ Մի կողմից դէպի միւսը տատանուելով ու սայթաքելով, խելայեղ աղջիկը տարւում էր, կարծես թէ կարող հողմի ուժից քշուելով, կամ ինչպէս մի գազան, որին որսկանն է հալածում. բայց նա յանկարծ կանգ առաւ, ճանապարհի վերայ կանգնած աշակերտներին ընդհարուելով, որոնց մօտ էր և Բարաբբան, որի հետ նա երես առ երես գտնուեց։ Վերջինս դէպի նա մօտեցաւ, կամենալով նորա ձեռքից բռնել, բայց Յուդիթը կատաղութեամբ 'ի բաց մղեց

նորան ինից և միայնակ կանգնած մնաց—ամբողջովին դողալով և դժուարութեամբ շունչ քաշելով։ Նա մի տեսակ նահանջման մէջ էր. նորա դէմքը այլայլուեց ու մահատիպ գունատութեան մէջ մտաւ. շրթունքները ջղաձգաբար սեղմուեցին ու կպտեցին, ապա դուրս ցցուած ատամների վերայ ընդարմացան, իսկ սոսկալի մեծ աչքերի մէջ մի տենդային ագահ փայլ լուսաւորուեց, ինչպէս տարփատենչ անբաւականացուցիչ փափկութիւնից։

—Ո՞ւր է Թագաւորը,—բացականչեց նա, իւր աչքերը Պետրոսի վերայ յառելով՝ մոլեգնոտ ու վառահ։—Ես Նորա այգու ծաղիկների ու արմատների մէջ էի, ես Նորա այգում պտրտեցի Նորան—բայց Նա այն տեղ չէ։ Ասում են՝ Նա դուրս է եկել գերեզմանից, դևերը և հրեշտակներն իսկ միևնոյնն շշնջում. թէպէտ ես Նորան փնտռում եմ, բայց չեմ կարողանում գտնել, Նորան անհրաժեշտ է ման գալ, ես պէտք է՝ որքան կարելի է՝ շուտով տեսնեմ Նորան. ես պարտաւոր եմ աղերսել Նորան—ներել Յուդային։ Յուդան զայրանում է ինձ վերայ և ես չեմ կարողանում մխիթարել Նորա՜ն։

Այստեղ նա դադար տուեց և, ծածան ծածան մազերի գիսակները ձեռքով ուսերի վերայից դէպի ետ տուեց, ապա դէպի բոլորը, հարցական ակնարկ ձգելով՝ թոյլ կերպով ժպտաց։ Պետրոսի բարկացայտ աչքերը նորա վերայ ընկան՝ խստութեամբ և անկարեկցութեամբ. Յուդիթը տատանուեց նորանից, և դարձեալ նորա շրջմոլար և անորոշ ակնարկը բոլորի վերայ ընկաւ և, վերջապէս, մի տեսակ մագնիսական ուժից ձգուած, այդ ակնարկը կանգ առաւ Յօհաննէսի խաղաղ ու գեղեցիկ դէմքի վերայ։ Վայրենի բացականչութեամբ Յուդիթը ծունկ չոքեց նորա առաջ և, միշտ միևնոյն ժպիտով ու աղերսական նայուածքով, դէպի նա բարձրացրեց իւր ձեռքերն։

— Սիրելի պարոն, մի բարկանար,—ասաց նա,—ես շատ բանի մէջ եմ մեղաւոր և ոչ մէկի իսկ ողորմածասիրութիւն ինքս չեմ ցոյց տուել, բայց ի սէր իմ եղբօր, ես պարտաւոր եմ Արքային գտնելո՜ւ։ Ես գիտեմ, որ Նա շատ զգալի հեռաւորութեան վերայ չը պէտք է լինէ, քանի որ երէկ երեկոյեան տեսիլքիս մէջ Նա պատկերացաւ ինձ։ Նա ննջում էր, ամբողջովին տարածուած սպիտակ և սառն քարեայ առագաստի վերայ. Նորա ոսկեհուռ հերերի մէջ դեռ ես արիւնոտ փշեր կային,—միայնակ պատանքները Նորա արքայական հագուստն էին կազմում։ Մինչ Նա դեռ ես պառկած էր այդպէս, համայն աշխարհս Նորա մօտ գնաց՝ երկրպագութեան համար։ Տարօրինակ աշխարհ, ահագին աշխարհ,—աշխարհ մեռեալների՜։ Նորա Նո-

րա առագաստն էին կոխում և ժպտում էին. նոյն թափանցիկ կերպարանքները կենդանանում էր, որոնք կենսական տաւերագծերով էին ներկւում և՝ մօտենալով՝ Նորա բոլորն էլ երգում էին. «Մահը ոչնչացրուած է և մենք կարող ենք ապրե՜լ»։ Բայց լսիր, պարոն, Յուդան նոյնպէս այն տեղ էր։ Յուդան—քնքուշ աչերով և ժպտուն շուրթերով. բայց՝ աւա՜ղ՝ ինձ վերայ չը նայեց նա և նորա ժպիտը ինձ համար չէր. բայց ես՝ այնու ամենայնիւ՝ ուրախացայ, ես մեծ հրճուանք ու բաւականութիւն զգացի, քանզի նորա պայծառացի շուրջը արիւնոտ ու շառագոյն հետքը չը կար այլ ևս, և նա, իւր հերարձակ ու գեղեցկատիպ դէմքով, շատ բաղդաւոր էր երևում և իրեն երջանիկ պիտի սեպէր,—թէպէտ և ես—նորա քոյրը—հեռու էի կանգնած ու միայնակ... Իսկ եռոյ սպիտակ Թագաւորը վեր կացաւ։ Այդ արդէն հիանալի էր։ Նորա գլուխը պատած փշերը՝ ատողների փոխուեցին, պատանքները փայլում էին հրավառ ճաճանչներով. ինչպէս առաւօտեան արեգակ, Նա համայն աշխարհս լուսաւորե՜ց։ Եւ բոլոր թաղուածներն էլ՝ մարդ թէ կին, թէ գողտրիկ երեխայք—կենդանացան. այո՜ ամբողջ երկիրը կենդանութեամբ և հրճուանքով լցուեց։ Բայց մի ինչ որ սարսափեցուցիչ բան կար այդ բոլոր հանդիսակատարութեան մէջ, և ես մի ահարկու ձայն լսեցի, որը մի այսպիսի պատգամ կարդաց. «Յետ այսու՝ ամեն մի հոգի անմահ է, կեանքը տիրում է համայն տիեզերքի վերայ և միմիայն դու, Յուդիթ Իսկարիօտացի,—մեռած ես»։

Նորա կուրծքից խորին հառաչանք դուրս թռաւ և նա ջղաձգաբար Յովհաննու քղամիդը բռնեց, կարծես թէ նորանից պաշտպանութիւն խնդրելով։ Յօհաննէսը չը հրեց նորան և՝ միևնոյն ժամանակ՝ չը աշխատեց և բարձրացնելու, բայց անշարժ մնաց,—անսահման կարեկցութեամբ նորա խռովահուած կերպարանքին նայելով։ Մարիամ Մագդաղենացին նոյնպէս մօտենալ կարողացաւ նորան և՝ դէպի նա թեքուելով՝ քնքուշ խօսքեր շշնջաց ու մի այնպիսի տեսքով,—ինչպէս անուշ ու խանդակաթ մի քոյր՝ դէպի միւսը։ Բայց Յուդիթը, ըստ երևոյթին, նորա ներկայութիւնը չէր նկատում, և շարունակ Յօհաննու վերայ էր նայում։

— Մտածիր, սիրելի պարոն,—շարունակեց Յուդիթը՝ արցունքների միջից՝ խեղդուած ձայնով,—մի՞թէ այդ զարհուրելի չէ, որ ամբողջ այս ստեղծագործուած աշխարհիս մէջ ես, սոսկ միայն ես և միայնակ ես—մեռայ։ Ինձ շրջապատող բոլորի ուրախութեան մէջ, ամեն մի շարժմունքի մէջ՝ միմիայն իմ սիրտս է անշարժ և միայն ես եմ մեռած։ Միայն ես չեմ կարող զգալ ո՛չ սէր, ո՛չ էլ յոյս, ինձնից

յիշողութիւնս անգամ խլեցին։ Բայց այդ ճիշտ է,—ես զգում, որ ինձ վերայ նզովքն է ընկել—բանականութիւնս և ոյժս խլելով ինձնից. ես այժմս քար եմ,—ճանապարհի վերայ ընկած, որին ամեն մի անցաւոր կարող է ոտքով այս կամ այն կողմ ձգել։ Ես գեղեցկութեամբ տիրում էի բոլորին էլ,—բայց ինձ նա ևս չը օգնեց. սէր ունէի ես, բայց սէրը շատ անուժ երևաց՝ պաշտպանելու համար, և ահա՛—երբ ամբողջ աշխարհս հրճուում է՝ յաւիտենական կեանքով պարգևատրըւած—ես՝ Յուդիթս՝—միակ մեռած և անիծեալ հոգին եմ երևում, մինչ... ես Թագաւորին չը գտնի՜մ։ Քանզի թէպէտ նա ինձ վերայ բարկութեամբ նայեց, բայց ասում են, որ նա քնքուշ է և բարի, և համբերող. բոլոր մարդկանցից նա ամենահեզ և ամենաներողամիտն է ու անշուշտ պիտի ներէ և ի՛նձ... Բայց նա՝ եղո՛ւկ ինձ՝—պալատէկումն չէ։ Ես նորան ամեն տեղ ման եկայ և Յուդան իսկ դեռ ես չէ եկե՛լ։ Օգնիր ինձ, ընկերս, աղերսում եմ քեզ, առաջնորդիր ինձ ԹԱԳԱՒՈՐԻ մօտ,—քանզի Յուդան դեռ ես բարկանում է,—Յուդային մխիթարել պէտք է...

XIX.

Յուդիթը աչքերը դէպի երկինք ձգեց, յետոյ փոքրիկ ու կոպիտ խաչը վերցրեց, որը ինքն էր շինել, և այդ խաչը զարմացած Յօհաննէսին լարեց։

— 'Ի սէր սորա, խղճա՛ ինձ,—ասաց նա յուզուած։

Յօհաննէսը սարսեց, որպէս թէ քնից զարթելով։

— Նա, երևի, մեռած Յուդայի քո՛յրն է.—հարցրեց նա փափուկ ու զարմացական ձայնով։—Այդ նշանաբանը նորա ինչին է պէտք։

— Աւա՜ղ, ով գիտէ.—պատասխանեց Բարաբբան, իր արցունքները կուլ տալով, որոնք ակամայից նորա կոկորդը բռնեցին։—Ո՞վ կարող է հսկել նորա խանգարուած խելքի զանազանակերպ արշաւանքների վերայ։ Նորա եղբօր մահը նորան դատողութիւնից զրկել է։ Խնդրում եմ քեզ, համբերիր։ Ինչպէ՜ս կը ցանկայի ես, որ մեզ նորան իր հօր տունը վերադարձնել յաջողէր։—Եւ նա հարցական կերպով Մագդաղենացուն նայեց, որը տխրութեամբ իր գլուխը շարժեց։

— Վախենում եմ, որ այդ դժուար լինէ,—ասաց Մագդաղենացին։—Նորա հետ անսպասելի արկածներ են լինում։ Նա այգում ու-

րախ տրամադրութեան տակ էր և բոլորովին հանդարտ. ապա յանկարծ վայր թռաւ տեղից և աղաղակեց ու ջղաձգութեամբ ձեռքերը կոտրտելով,—շտապով փախչեց։ Ես նորա հետևից ընկայ, բայց այլևս չը կարողացայ բռնելու նորան։

Նոքա խօսում էին կիսաձայն. Յուդիթը նոցա խօսակցութեան վերայ ուշադրութիւն չէր դարձնում։ Նա, ծնկների վերայ չոքած, շարունակում էր Յօհաննէսի վերայ նայել։

— Ո՛ւր է Թագաւորը,—հարց տուեց նա։

Նախ քան Յօհաննէսը կարող կը լինէր պատասխանելու, Պետրոսը կոպտութեամբ առաջացաւ։

— Եթէ դու նորա մասին ես հարցնում, Որին քահանաները քո օգնութեամբ խաչեցին—խիստ ձայնով ասաց նա,—կը նշանակէ՝ դու 'ի զուր ես հարցնում։ Նա անարդարների կոչին չէ պատասխանում, իսկ մատնիչների համար՝—աւելի ես—նա կարեկցութիւն չունէ։ Միթէ սպանողը իր զոհից օգնութիւն կը խնդրէ։ Միթէ նա, ով անմեղից խլել է կեանքը, կարող է պահանջել, որ այդ կենսական ուժը նորից կենդանանայ։ Դիմի՛ր, Յուդիթ, դէպի երկինք, երկնային Թագաւորը այնտեղ է, այնպիսիների համար, որպիսին դու ես, Նա երկրիս վերայ այլ ես չի երևի՛լ։

— Ի՞նչպէս ես դու կարող գիտենալ այդ, Պետրոս.—խառնուեց խօսակցութեան մէջ Յօհաննէսը։ Դու չափից դուրս խիստ ես։ Դու քեզ պարտական չը պիտի համարես Աստուածային շաւիղների մասին այդքան հաստատուն վճիռներ տալու։ Կարեկցութիւն ու խիղճ չունիս դու։ Մեր Ուսուցիչը ողորմածասէր էր, և ինձ թւում է, որ նա մխիթարէր պիտի այս վշտահար, ողբացող հոգուն։

— Քո Ուսուցիչը տարօրինակ աշակերտներ ունէ,—ասաց Բարաբբան՝ բորբոքուած։—Այդ Պետրոսը միմիայն իր մեղքերն է ներում։

— Լսեցէք, լսեցէք,—աղերսեց Մագդաղենացին.—իրար մէջ խռովութիւն մի՛ք ձգիլ. միթէ նորա մէջ դուք փոփոխութիւն չէք նըկատում։ Յուդի՛թ, Յուդի՛թ։

Յուդիթը այլ ես ծնկների վերայ չէր, նա թոյլ և երերուն ոտքերի վերայ հազիւ էր կանգնում. ջերմ արեգակը նորա արձակուած ու անծածկոյթ մազերի վերայ ընկնելով ուղիղ, նոցա պայծառ բոցի հրային փայլ էր տալիս, բայց նորա դէմքը գունատ էր և տըխուր,—ինչպէս մեռնողների դէմքերը։ Նորա աչերը դէպի Պետրոսն դարձան, բայց դալկահար ու մի անորոշ արտայայտութեամբ։

— Քո ձայնը ցասկոտ է հնչում,—ասաց Յուդիթը՝ վերջապէս՝—հազիւ լսելի ձայնով։—Ինձ այնպէս է երևում, որ դու ոչ մի կնոջ և ոչ մի ժամանակ չես սիրել, անգամ մօրդ,—որը ծնել է քեզ։ Ո՞վ ես դու։ Ես քեզ չեմ ճանաչում, բայց ես համոզուած եմ, որ դու շատ անխիղճ գործողութիւններ կը կատարես աշխարհիս մէջ։ Նոյն իսկ սիրող մարդը, գութը իրեն նեցուկ ունենալով, դարձեալ խստասիրտ է, բայց առանց նորան, աւա՜ղ,—ի՜նչ կը նշանակէ առանց սիրոյ լինել։ Չը գիտեմ, որովհետև ես այն սէրը կորցրեցի, որ ունէի, և ես մեռա՜յ։ Եւ այդպէս, ձեզնից ոչ ոք չը գիտէ, թէ ո՛ւր է գտնւում Թագաւորը այժմս։ Ես պարտական եմ Նորան էլ հեռու տարածութեան վերայ ման գալու։ Դուք 'ի զուր էք ժամանակ վատնում, նզովք կարդալով և անիծելով ինձ. աւելի լաւ կը լինէր դէթ փոքր մի յոյս տալ ինձ։

Այդ տեղ նա տատանուեց և հազիւ թէ վայր չը ընկաւ։

Մարիամ Մագդաղենացին ընկալաւ նորան ու մի ձեռքով գրկեց։

— Ես առողջ չեմ,—շարունակեց Յուդիթը։—Սրտիս վերայ մի տարօրինակ ծանրութիւն է ընկած և գլուխս այրւում է։ Դու, իմ քնքուշ ընկերուհի,—դարձաւ նա դէպի Մարիամը և փայփայանքով՝ իւր երկու ձեռքը նորա պարանոցով անցկացրեց.—մենք Թագաւորի այգում քեզ հետ էինք և քեզ հետ միասին շատ տեղ եղանք, այնպէս չէ՞. ճշմարիտ չէ՞ արդեօք։ Երկու թոյլ, մեղաւոր, տխուր կանայք,—բայց մենք Նորան այնտեղ չը գտանք։ Եթէ Նա մեզ տեսնէր, պիտի մեր վերայ խղճար։ Յուդան նոյնպէս չը եկաւ։ Նա խոստացաւ, բայց իւր խոստմունքը դրժեց։ Այո՛, իւր ասածը չը կատարեց նա։

— Դու չէ թէ ասացիր ինձ, որ նա արեգակի մայր մտոյին պիտի գայ,—շշնջաց Մագդաղենացին հանգստացուցիչ ձայնով։—Իսկ արեգակը դեռ ևս բարձրում չէ։

— Չէ կարող լինե՛լ.—հառաչեց Յուդիթը զարմացման մէջ՝ աչքերը լայն բացանելով։—Մայր մտոցը պէտք է մօտ լինէ, որովհետև երկինքը սարսափելի խաւարեց. շուտով դժուար պիտի լինէ ճանապարհը զանազանել։—Եւ նա կանգ առաւ՝ ծանր շունչ քաշելով։

Աշակերտները իրար մէջ երկիւղի ակնարկներ փոխեցին, իսկ Բարաբբան, իրեն կորցրած, շտապով դէպի Յուդիթը մօտեցաւ։

— Յուդի՛թ, խօսիր ինձ հետ—բացականչեց նա։

Յուդիթը նորա վերայ նայեց և ժպտաց, միևնոյն գիրքով աւելի ևս Մարիամին սեղմուելով։

— Ո՞վ է նա.—հարցրեց Յուդիթը։—Նա իմ անունս է տալիս, հաւանական է, որ ճանաչում է ինձ։

— Յուդիթ, Յուդիթ,—ես Բարաբբա՛ն եմ.—և նա դէպի Յուդիթը ձգեց իւր ձեռքերը սարսափելի ցաւի և անսահման յուսահատութեան զգայմունքի տակ։

Յուդիթը թուլութեամբ ձեռքերը դէպի նա լարեց։

— Եւ դու իրաւացի Բարաբբա՞ն ես.—ասաց նա, և նորա ձայնը թոյլ և քնքուշ հնչեց—ինչպէս նախկին ժամանակները։—Խեղճ Բարաբբա՛։ Հաւատա՛ ինձ—ես քեզ խղճում եմ։ Դու մի ժամանակ սիրում էիր ինձ։

Բարաբբան ջղաձգութեամբ նորա փոքրիկ ձեռքը բռնեց և շուռ եկաւ, որ ծածկել կարողանայ իւր ջերմ, անարգել թափուող արցունքները։

Բոլոր աշակերտների դէմքերի վերայ խորին համակրութիւն էր դրոշմուած, և՝ մինչև անգամ՝ Պետրոսի խիստ դէմքն ևս փափկեց և նա—թւում էր—իւր նախկին խստութեան վերայ զղջաց։ Բայց յանկարծ Յուդիթը դողալ սկսեց, ինչպէս սաստիկ ջերմի մէջ։ Մարիամ Մագդաղենացին այլ ևս չէր կարողանում ընդգրկած պահել նորան։ Բարաբբան և աշակերտներից երեքը Նորան օգնութեան հասան, բայց խելատար Յուդիթը արտալած ուժի ազդեցութեան տակ, նոցա ձեռքերից դուրս էր թռչում մի այնպիսի կատաղութեամբ, որ նորա հետ վարուելը շատ դժուար էր։

— Նորան ծառերի տակ դրեցէք, հէնց այս ճանապարհի մօտ,—մեղմացնելով իւր ձայնը, Պետրոսը ասաց։—Նորան ցնցում է տենդը, ստուերի տակ լաւ պիտի լինէ նորա համար։

Բայց նորան տեղից շարժել անկարելի էր։ Նա կանգնած էր, ջղաձգաբար Մարիամին սեղմուած, ինքն իրեն ուժ տալով և իւր ֆիզիքական թուլութեան հետ մրցելով, որը աւելի և աւելի էր սաստկանում. նորա աչքերը անշարժ ընկան անամպ երկնքի վերայ։ Կամաց կամաց դողոցը կարուեց. նորա դէմքը՝—իւր նախկին սիրունութեան բոլոր կախարդիչ գեղանիութեամբ՝—նորից փայլել սկսեց, և բիրտ շարժմունքով նա Մագդաղենացուն մի կողմ տուեց։ Ինչպէս մի կարող թագուհի, նա սիգափայլութեամբ բարձրացրեց գլուխը և նորա աչքերը պայծառ լոյսով վառուեցին։

— Ի՞նչ լուրեր կան քաղաքում.—հարցրեց նա։—Ի՞նչ էք կարծում և ինչ գիտէք. արտասուում թէ ուրախանում են Կայիափայի մահուան վերաբերութեամբ։

— Աւա՜ղ, Յուդիթ, դու դեռ պառանցում ես,—շտապով խօսեց

Բարաբբան։—Կայիափան մեռած չէ. նորան մէկը՝ լիսւ որ՝ վիրաւորել է, բայց նա ապրում է և կը ապրէ. ՚ի զուր մի՛ վրդովիր։

Մինչ նա խօսում էր, Յուդիթը տարօրինակ կերպով նորա վերայ նայեց, և նորա երեսը դարձեալ մահացու գունատութեամբ ծածկուեց։

— Ի՞նչ։ Կայիափան ապրում է և կը ապրէ՞.—գոռաց նա։—Նա չէ՞ մեռել։ Ուրեմն անիծի՛ր նորան Իսրայելացւոց Աստուած յաւիտենական նզովքով. խաւար դժոխքի բոլոր սատանաներով պատի՛ր նորան։ Նա մատնիչ է, հրապուրող, առևանգող, խաբեբայ և ամենաչար երեսպաշտ։ Աստուած ճշմարիտ, այս Քո անարդար պաշտօնեայի բոլոր յանցանքները յիշիր, և թո՛ղ վրէժառու դատակնիքդ տա՛ նորան՝ իւր գործքին համեմատ։ Աղերսում եմ Քե՛զ.—և նա աղաչանքի ձևով ձեռքերը դէպի երկինք բարձրացրեց։—Ոչ թէ Յուդայի և ոչ մի ուրիշ կոյր ու անկիրթ յանցաւորի վերայ վայր սփռիր Քո վրէժը, ով ահարկու Աստուած, պատուախնդիր Եհովա՛,—այլ թէ հէնց քո քահանայի վերայ, որը Աստուածութեան ծառայելու պատճառաբանութեան պատրուակով սպանեց Աստծո՛ւն։ Անէ՛ծք Կայիափայի վերայ։ Մեռած Յուդայի և մեռնող Յուդիթի նզովքը անպարտոյն Կայիափային։ Յաւիտենական անէծքը այն բոլոր թշուառների, որոնց քահանայի սուրը ոչ դէպի դրախտ, այլ դէպի դժոխքն է տանո՛ւմ...

Ամբողջ մարմնով երերուն՝ իւր սեփհական զրգռմունքի ուժից, նա գունատ ու ահարկու մարգարէուհու էր նմանում,—իւր ժամանակակից անարդարութիւնը և մեղսագործութիւնը մարակող։ Գիտակցութիւնը և բանականութիւնը՝—ըստ երևոյթին՝—վերադարձել էին դէպի նա. ձայնը պարզ էր, միտքը մէկմէկու յաջորդող։ Պետրոսը և միւսները նորա վերայ էին նայում լի ափշութեամբ, հիասթափուած և ընդարմացած։ Բայց նորա շլացուցիչ ճարտարախօսութեան տարափը հանդչեց,—նա դժուարութեամբ էր շունչ քաշում, և պղտոր ակնարկը չորս կողմը ձգելով, սկսեց ձեռքերը անհանգստութեամբ օդի մէջ շարժել, որպէս թէ անսպասելի խոր խաւարի մէջ ընկղմուելով։ Ապա դարձեալ նախկին արագութեամբ և գիւրաթեքութեամբ դարձեալ դէպի առաջ մի քանի քայլ արեց, չը բռնուած ոչ ոքից, բացի Բարաբբան, որին նա նոյնպէս հեռացրեց սէգ, արհամարհական շարժմունքով։ Միայնակ նա կանգնած էր մութ ճանապարհի վերայ, որպէս թէ մի որ և է բանի ականջ դնելով. կարելի էր կարծել, որ նա լսում էր, կամ թւում էր նորան, որ նա մի ինչ որ ձայն է լսում, միւսները ոչ մի ձայն չէին լսում։ Արևգակը իւր կարող պայծառ փայլով ամբողջովին ծածկում էր նորան. նա մի

մատղաշ, շփոթուած սիլֆիդայի *) էր նմանում—արևելեան միջօրէի սաթեայ փայլուն ծածկոցի տակ։ Տակաւ առ տակաւ նորա գունատ երեսը՝ խորին մխիթարանքի տակ գտնուած՝ հոգեզմայլութեան և ափշութեան արտայայտութեամբ փայլեց. նա խաղաղ բարձրացրեց իւր աչերը և տարակուսական զմայլութեան մէջ, սկսեց ձիթենիների լեռան ստորոտը նայել, որտեղ երկու մեծ ու հզօր թզենիներ խոր գաղտնախորհուրդ ստուեր էին ձգում իրենց առջևը։ Մի ձեռքով այդ տեղի վերայ ցոյց տալով, Յուդիթը ժպտաց, և նորա նախկին չքնաղագեղ սիրունութիւնը—վերանորոգուած—նորից նորա դէմքի և գերալանծ իրանի չքնաղակերտութիւնը պատկերացրեց։

— Նայեցէ՛ք.—մի ճիչ արձակեց նա՝ խորին երջանկափառութեան հրճուանքի տակ։—Ի՞նչպէս կարող էիք դուք չը գտնել... Նորան։—Ահա՛ Թագաւո՛րը...

Եւ հոգեզմայլութեամբ երկու ձեռքն տարածելով, ապա դէպի վեր բարձրացնելով, նա սրտատրոփ առաջ սլացաւ, տատանուեց... և երեսի վերայ փոշոտ ճանապարհի մէջ ընկաւ—ընդմիշտ անշարժ։ Նա Յուդայի ներումն էր աղերսում, նա փնտռում էր և գտաւ—«Թագաւորի՛ն»։

Բարաբբան, Մագդաղենացին և աշակերտները պարկած կերպարանքը շրջապատեցին հապճեպ, որը ճոխ ոսկեհուռ մազերով էր սփռուած։

Բայց նախ, մինչ նոքա կարող կը լինէին բարձրացնել նորան, շտապով մօտեցող մի ձիու սմբակների ձայն լսուեց և առնական ձայնը հնչեց.

— Ի՞նչ ունիք դուք այդ տեղ։ Կարօ՞տ էք օգնութեան։

Նոքա պաշած գլխեցին և խորին լռութիւն տիրեց։ Իսկարիովտը ինքն կանգնած էր նոցա առջև։ Իւր աղջկան ՚ի զուր տեղը մերձակայ գիւղերում փնտռելով և բոլոր գիւղերի բնակիչներին անհանգիստ անելով, նա հէնց նոր էր վերադառնում։ Նոցա երկիւղած դէմքերի միակ նայուածքն բաւական էր, որ նա իւր նոր թշուառութիւնը հասկանալ կարողանար։ Ձուտափոյթ ձիուց վայր իջնելով, նա՝ յուսահատական շարժմունքով՝ իւր դէմ կանգնած մարդկանց մի կողմ շարժեց. նորան մի սպիտակ կերպարանք երևաց, որը անշարժ ըն-

*) Սիլֆիդա—(сильфида)՝—Օդի մէջ գտնուած հոգիներ, որոնք, ՚ի հնումն, յունական ժողովրդական աւանդութեամբ, պատրաստ էին հէնց առաջին իսկ կոչից դէպի մարդիկ դառնալ—նոցա ծառայելու համար։

Ծան. Հ. Թարգմ.

կած էր ճանապարհի վերայ և որը զարդարուած էր հարուստ, հրավառ մազերով, որոնք ծածկում էին նորան, ինչպէս թէ մի թիկնոցով. սրտաճմլիկ, անբնական, յուսահատ ճիչ բարձրացնելով, նա գետնի վերայ թաւալուեց՝ այդ մարմնի շարքում, ջղաձգութեամբ նորա հագուստի ծայրը բռնելով, որպէս թէ չը հաւատալով, որ դա իրաւացի նա էր,—իւր աղջիկը, որը նորան աշխարհիս երեսին ամեն բանից թանկ և առաւել ևս սիրելի էր։

— Յուդի՛թ.—կոչեց նա և հառաչակոլ եղաւ։

Ապա դանդաղ և երկչոտութեամբ՝ նա բարձրացրեց մարմինը և երեսը դէպի լոյսը դարձրեց... Եղո՜ւկ, ինչքա՛ն սրտաճմլիկ էր այդ դէմքի գեղեցկութիւնը, ո՛րքան դմայլելի—գեղանի աչերը։ Ինչքան տխրութիւն և որքան զարմանք կար այդ խամրա՛ծ ժպիտի մէջ։ Ինչպէ՛ս նա այժմ մեռած Յուդայի դէմքին էր նմանում։ Մի տեսակ գերբնական հրճուանք էին արտափայլում նորա դէմքի խաղաղ գծերը. կրծքին սեղմուած փոքրիկ ձեռքը՝—դեռ ևս՝ ջղաձգաբար, բռնել էր խաչը։

Իսկարիօտը նկատեց այդ և, դուրս կորզելով նորան սառած մատներից, փոշոտ ճանապարհի վերայ ձգեց այդ։

— Հեռացէ՛ք բոլո՛րդ էլ.—կատաղութեան մէջ գոռաց նա։—Խելագար գալիլիացիներ, հեռացէ՛ք։ Հեռո՛ւ իմ աչքից։ Մի՛ ուշանաք. յապաղել պէտք չէ այստեղ,—թշուառութեանս վերայ նայելով և ձեր յաղթանակը տեսնելո՛վ։ Աւա՜ղ, իմ տունը այլ ևս դատարկ է՛։ Այս աշխարհիս մէջ այլ ևս ինձ համար ո՛չ տեղ կայ, ո՛չ էլ պատի՛ւ։ Ուրախ եղէք դուք, Իսրայէլի թշնամինե՛ր։ Ի՞նչ մի օգուտ ինձ ձեր խոստացուած դրախտից ու ձեր քաղցած արքայութիւնից։ Դուք ինձնից աշխարհային ուրախութիւնը և մխիթարութիւնը խլեցիք։ Ինձ ինչ ձեր գովաբանուած հրաշքները և ձեր՝ գերեզմանից յարութիւն առնելը։ Մի՞թէ դուք իմ երեխաներս վերադարձնէք պիտի։ Արդեօք դուք կենդանացնէք պիտի իմ որդուս, որը իւր իսկ ձեռքը իւր վերայ է դրել ձեր Մարգարէի պատճառով։ Մի՞թէ դուք կը վերադարձնէք ինձ իմ հարազատ աղջկաս, սեփհական միս ու արիւնս, իմ միակ գանձը։ Ոչ, դուք բոլորդ էլ խաբեբաներ է՛ք։ Ձեր մօտ վըշտացեալներին մխիթարանք չը կայ, անսիրտ քարոզիչներ անխիղճ հաւատքի, դուք բոլորդ էլ նզովեալ լինի՛ք։ Թողէք ինձ... ասում եմ ես, թողեցէք ինձ միայնակ՝ իմ ննջեցեալի հե՛տ։

Եւ երկու ձեռքով ջղաձգութեամբ աղջկայ մարմինը ընդգրկելով, նա իւր ալեոր գլուխը նորա հանդարտ կրծքի վերայ դրեց և

հեկեկաց, այնպիսի մի հեծեծանք արձակեց ու ողբաց,—ինչպէս խորտակուած սրտով ուժեղ մարդիկ են սգում ու արտասւում։

Այդքան մեծ վշտի տեսարանով շարժուած, որը ոչ մի մխիթարանքի տակ չէր կարող ընկճուիլ,—աշակերտները դանդաղութեամբ հեռացան. Նոցա հետևից դանդաղ ու մտքամոլոր գնում էր և Մագդաղենացին, իւր երեսը ծածկելով, որպէս զի ծածկուած լինին և արցունքները։ Բարաբբան միայն մնաց, որպէս զի վշտով սպանուած հօր հետ նորա յուսահատութիւնը և վիշտը բաժանէ։ Պետրոսը մի անգամ դէպի յետ նայեց, ոչինչ չը վստահանալով խօսելու։ Եւ ինչ կարող պիտի լինէր ասելու նա։ Նա իւր Աստուածային Ուսուցչի գերբնական ու թովիչ ուժով չէր տիրում, որը սոսկ մի նայուածքով փոթորիկին էր սաստում։ Գիցուք նա կարող էր նորան ասել. «Համբերի՛ր, Իսկարիօտ։—Աստուած քեզ կը մխիթարէ»։—Ի՞նչ։—Այդ փարիսեցուն և վաշխառուին ասել։ Ոչ մի ժամանա՛կ։ Թո՛ղ նա իւր գաւակների փոխարէն, վատթար ճանապարհներով ձեռք ձգուած, ոսկու քսակներով զգուէ ու մխիթարուէ։ Մի՞թէ հարուստ հրէան ուրիշի մխիթարութեան կարօտում է։

Պետրոսը այդպէս էր մտածում, բայց՝ չը նայելով դորան՝ նա հանդարտել չէր կարողանում։ Նորա Ուսուցիչը (նա այդ զգում էր), ուրիշ կերպ կը վարուէր,—նա նոյնպէս զգում էր, ուրիշ կերպի կարևորութիւնը. շնորհիւ իւր սիրոյ նեղ դրութեան մէջ գնելու սկըզբունքից, նա արդէն Աստուածային ուսմունքը փոփոխութեան էր ենթարկե՛լ։

Իւր խղճմտանքի տակ՝ խղճի ձայնի այդ շշնջոցով անհանգստացած, բայց չը ընկճուելով դորան, նա գնում էր դէպի Գալիլէա տանող ճանապարհով, այն նպատակով, որ իւր Տիրոջը դիմաւորէ. կիսայոյսով, կիսահաւատքով և կիսակասկածանքով,—իսկական ներկայացուցիչ ամբողջ ապագայ մարդկութեան։

Մինչ այդ, Յոհաննէսը դեռ ևս դանդաղում էր. նորա կարեկից ակնարկը իրնից չէր կարողանում թօթափել փոքրիկ խմբին—ծերունի հրէային՝ իւր մեռած աղջկան գրկած, որոնց մօտ կանգնած էր Բարաբբայի աչքի ընկնող մութ կերպարանքը։ Վերջապէս նա թեքուեց և երկիւղածութեամբ փոքրիկ խաչը բարձրացնելով, որին Իսկարիովտը, կատաղութեան մէջ, դէն էր շպրտել, նորան դէպի շրթունքները տարաւ, ապա իւր կրծքի վերայ դրեց և ցած ձգուած գլխով ու մտայոյզ աչքերով, դանդաղ ու մոլորաքայլ Պետրոսին հետևեց։

XX.

Մօտ մի շաբաթ էր անցել այն ժամանակից, երբ Խաչեցեալի յարութեան հրաշալի համբաւը տարածուեց Երուսաղէմի մէջ։ Քահանայապետ Կայիափան համարեա թէ իւր մահացու վէրքից արագութեամբ առողջանում էր, և նա այնքան յաջող տարաւ իւր դարանակալ մտքերը և նպատակները, որ Ցենտուրիոն Գալբուսին և զինուոր Մակսիմուսին դէպի ետ՝ Հռովմ կոչեցին։ Պետրոնիան, դէպի Նազովրեցու աշակերտները տածած յարգանքի պատրուակով և նոցա համակրող բնաւորութեան վերաբերութեամբ կասկածանքի տակ ընկած, նոյնպէս արձակուած էր, բայց դորա երեքն էլ, հայրենիք վերադառնալուն պէս, հռովմէական լեգիոնի մէջ բարձր նշանակութիւն ստացան, բայց թէ ինչ պատճառով և ում միջնորդութեամբ—ոչ ոք չը կարողացաւ գուշակել, միայն թէ մի օտարական Մելխիօր, որը Կեսարի մատանին էր կրում, այդ գաղտնի գործի մէջ խառնուեց։ Մինչ այդ՝ բոլոր հրէաներին էլ «Գալիլիացի Մարգարէի» անյայտանալը նորանով բացատրեցին, որ նորա մարմինը գողացուած էր։ Սինեդրիոնի մէջ հեղինակաւոր մարդիկը պնդում էին, որ նոքա արդէն աւազակի հետքը գտել են և քաջ գիտեն թէ ով էր այդ գործում մասնակցողը։ Բացի այդ, ընդհանուրի ուշադրութիւնը գրաւուած էր Յուդիթի անակնունելի թաղման վերայ։ Վաղուց քաղաքը այդ տեսակ տեսարան չէր տեսել։ Երիտասարդ օրիորդների (որոնք սպիտակի մէջ էին և շուշաններով պսակուած), թափորը Հրէաստանի առաջին գեղեցկուհուն դէպի նորա գերեզմանն էր ճանապարհ ձգում ու նորա գեղեցկակերտ մարմինը իւր անբաղդ եղբօր մօտ առաջնորդում։ Սպիտակ ծաղիկները ու ձիթափայլ փարագոյրները մեռնողի կուսական նշանաբանի և կուսութեան սիմվոլի տեղ էին ծառայում. թէպէտ և շատերը տատանում էին գլուխները և ուսերը թօթափում, միևնոյն ժամանակ մեռնողի վարք ու բարքի մասին զանազան գաղտնամիտ ու խռովարար պատմուածքներ անելով, բայց և այնպէս, բարձր ձայնով ոչ ոք չը պիտի վստահանար իւր կարծիքն յայտնելու։—Իսկարիօտը ահագին ուժ էր համարուած Երուսաղէմի մէջ ու ազդեցիկ մարդկանց կարգն էր դասուած նա. նորա վաշխառու ձեռքերի մէջ ոչ թէ մի ընտանիքի կացութիւնն էր պահուած և այն երկիւղը, որ ներշընչել էր նա բոլորի մէջ, պապանձեցում էր նոցա լեզուները։ Թաղման տխրահնչիւն երգեցողութիւնը լսելով, որ անցնում էր լուսնային ապարանքի դռնակի մօտից, հպարտ քահանայ Կայիափան, խղճի խայթից

այրուող դէմքը բարձերի մէջ ծածկելով, ոչ մի խօսք չը արտասանեց։ Գունատ Հռաքէլը սառն անտարբերութեամբ նորա վերայ էր նայում, խորին լռութիւնը չը խզելով. նոցա մէջ տարածուած էր ամօթանքը—Յուդիթը։ Բայց նոյնպէս, ինչպէս և նորա չարախայթ դաշոյնը, որը ջրհորի մէջ էր ժանգոտում,—և այդ խայտառակութիւնը ևս նոցա սրտերի մէջ թաղուած մնաց, երկուստեք լռիկ համաձայնութեամբ։

Նազովրեցու բոլոր աշակերտները և հետևողները՝ թէ մարդ թէ կին, ձգեցին Երուսաղէմը։ Ոմանք քահանաների երկիւղից, այլք հակառակօրէն ձգուած գիւղերը վերադառնալով։ Քաղաքի բնակիչները քիչ քիչ իրենց կեանքի և նախկին սովորութիւնների կազմակերպութեան մէջ մտան դարձեալ, որոնք վերջին ժամանակներս, այդքան տարօրինակ կերպով, խանգարուած էին։ Քահանաների ցանկութեամբ, սուրբ այրի ամբողջ գագաթը բացուած էր, որպէս զի դիւրին լինէ համոզուելու, որ նա բոլորովին դատարկ էր։ Յովսէփ Արիմաթացին, նոցա կասկածանքներից և անգթութեամբ գրգռուած, Քրիստոսի Աստուածավայել Յարութեանն խորապէս հաւատալով, Երուսաղէմի մէջ գտնուած իւր գեղաշուք ապարանքն վաճառեց և բոլոր ստացած փողերն աղքատներին բաժանելով ու չքաւորներին պատսպարելով, վերջապէս իւր համեստ հայրենիքը վերադարձաւ ու Արիմաթեա քաղաքի մէջ բնակութիւն հաստատեց։ Քաղաքի մէջ ձայներ էին պտտում, որ կառավարիչ Պիղատոսը նամակ է ուղարկել Տիբերիային այն աղերսանքով, որ իրեն նորից Հռովմ վերադարձնեն. քայքայուած առողջութեան պատճառով։

Զատկուայ ութերորդ օրն էր անցնում և Նազարէթ փոքրիկ քաղաքի վերայ արեգակը արդէն մայր էր մտնում։ Արևմուտքից պայծառ ծիրանի լոյսը ամբողջ պտղաբեր ձորն էր լուսաւորում և շրջապատ դաշտերի վերայ ճաճանչներ ձգում, որոնց ջերմ ծիածանագոյն ցոլմունքը, բաց դռան միջոցով, փոքրիկ տաք բնակարանի մէջ էր ընկնում, որտեղ կոպիտ նստարանի վերայ մի ծերունի ատաղձագործ էր նստած, որ աշխատասիրութեամբ էր պարապած։ Սովորաբար արեգակի մայր մտնելն նա դադարում էր աշխատելուց, բայց այժմ նա շտապում էր մի փայտեայ օրօրոց վերջացնելու, որը ամբողջովին փոքրիկ քառանկիւն ակների էր կտրտուած, ամենանուրբ քանդակագործութեամբ զարդարուած։ Նորա կնճռոտած ձեռքերը զարմանալի ճարպկութեամբ էին տիրանում գործիքներով, ու մինչ նա չինում էր մի որ և է ծաղիկ կամ տերև, նկատելի էր դառնում, որ նա չափից դուրս մի հմուտ վարպետ էր ու իւր աշխատանքի մէջ

ծայրագոյն կատարելագործութեան հասած։ Նորա մօտ, նստարանի վերայ, մի քանի հատ հէնց նոր քաղուած շուշաններ էին ընկած. Նա նոցա տախտակի քառանկիւնու վերայ էր պատկերացնում—զարմանալի լաւ ճարպիկութեամբ։ Երկնքի կարմիր լոյսը նորա կուացած ու կոպիտ հագնուած կերպարանքն էր լուսաւորում, ձիւնափայլ գըլխի վերայ վարդագոյն ցոլմունք գոյացնելով։ Նա բոլորովին իւր գործի մէջ էր մտած ու իւր մտքի տակ խորասուզուած մինչ այն կէտը, որ չը լսեց անգամ ոչ մօտեցող դանդաղ քայլերի ձայնը և ոչ այն յանկարծ ընկած ստուերը, որը ուղիղ նորա դէմն հանդէպ էր կանգնած։

— Դու Յովսէփն ես—Նազարէթի հիւսն.—հարցրեց մի ուժգին և տխուր ձայն։—Դու ինչպէս ես կարողանում այդքան խաղաղ աշխատել և չը վշտանալ, մինչ քո որդին հէնց դեռ նոր է մտել Երուսաղէմի մէջ։

Ծերունին դողաց։ Նա մի կողմի վերայ դրեց տախտակը, որով զբաղուած էր, և մի ձեռքով աչքերը լոյսից պաշտպանելով, զարմացած սկսեց խօսեցողին նայել։ Նա իւր դիմաց մի բարձր ու լայնաթիկունք մարդ տեսաւ, մութ ու մռայլ պատկերով ու փոշով ծածկուած, որպէս թէ երկար ճանապարհորդութիւնից եկող, սևորակ, սարսափելի աչքերով, որոնք տենդային լաւ կերպով փայլում էին ծանր յօնքերի տակից, որպէս թէ այրուած չը թափուող արցունքներից։

— Ո՞վ ես դու.—դարձաւ Յօսէփը դէպի նա։—Ինչո՞ւ դու այստեղ եկար։

— Ես աշխարհիս հալածականն եմ, թափառականի մէկը,—Բարաբբա անունով,—պատասխանեց եկւորը և աւելի մօտ շարժուեց դէպի ծերունին,—ես քեզ բացարձակ պատասխանեցի, բայց դու ինձ դեռ և ոչ մի խօսքի չը արժանացրիր—՛ի պատասխան։ Ես եկայ այստեղ Երուսաղէմից, քեզ գտնելու ցանկութեամբ բռնուած և—աւելի ես—քեզ հետ խօսելու, եթէ որ դու իրաւացի այն ես, որի մասին ասել են ինձ։ Եւ դորա համար իսկ ես հարցնում եմ նորից. դո՞ւ ես՝ արդեօք՝ Յօսէփը—Յակօբի որդին,—Դաւթի տան շառաւիղը, և հայրը Նորա, որին Թագաւոր Հրէից էին կոչում։

Իւր նստարանի վերայից բարձրանալով, պատկառելի ծերունին փափկութեամբ պատասխանեց.

— Այո՛, ես—Յօսէփն եմ։

Բարաբբան յոգնած, մաշուած երեսով, խորտակուած վշտով, իւր բորբոքուած աչքերը նորա վերայ ձգեց խորին ակնարկով, որպէս

թէ կարդալ կամենալով նորա հոգու մէջ գանձուած բոլոր խորհուրդները և թաքուցուած բոլոր գաղտնիքները։

— Դու մի խղճուկ ծերունի մարդ ես,—հազիւ լսելի ձայնով շշնջաց նա։—Քո ոտքդ ուղիղ գերեզմանի ծայրին է,—քեզ մի անքըննելի և խոր խաւար է սպասում, մութ, որի մէջ, մենք չը գիտենք՝ թէ ինչ է լինելու մեզ հետ. դու չես կամենալ խաբել։ Վերջապէս ես ճշմարտութիւնը գտած կը լինիմ, վերջապէ՜ս...

Նորա ձայնը կտրուեց, աչքերը խփուեցին, նա թուլութեամբ ընկաւ դռան մօտ—ցածր նստարանի վերայ։ Բարաբբան երկու օր առանց հանգստութեան, համարեա առանց սնունդի, ճանապարհ էր եկել, և մինչ այն աստիճան էր դադրած, որ մի քանի վայրկեան անցնելով, նա հազիւ նկատեց, որ Յօսէփը մօտեցրեց նորան մի բաժակ սառն, մաքուր ջուր և դէպի նորա շրթունքները տարաւ։ Բարաբբան լի գոհունակութեամբ և շնորհակալութեամբ խմեց և զովութիւն զգալով, դարձեալ իւր ակնարկը պատկառելի ծերունու կերպարանքին ձգեց, նորա մօտ կանգնած։

— Ես Բարաբբան եմ,—կրկնեց նա՝ փոքր ինչ դադար առնելուց յետոյ։—Կարող է պատահել, որ այդ անունը ոչինչ չը պիտի ասէ քեզ. այդ դէպքում ես քեզ բոլորը կը բացատրեմ։—Ես գող էի, խառնակիչ և մարդասպան,—իմ հոգու մէջ ոչ մի բարի զգացմունք չը կայ. հոգուս մէջ կատարեալ մրցումն է առաջանում թէ չարի և թէ բարւոյ հետ. իրաւ է, որ ինձ էին պարտական խաչելու քո որդու փոխարէն, քանի որ Նա անմեղ էր,—իսկ ես յանցաւոր։ Բայց եթէ որ դու ծանօթ ես աշխարհիս սովորութիւնների հետ, այդ քեզ չը պիտի զարմացնէ, որովհետև մարդկային օրէնքները ստեղծուած են մարդկային իսկ մեղաւորութիւնը սահմանափակելու համար. անմեղութիւնը միշտ տանջւում է, քանի որ նա անպէտք բարեգործութիւն է և մեղաւորութեան համար արհամարհանքի տեղ է ծառայում։ Այդպէս էր նաև Երուսաղէմում այս վերջին քստմնելի օրերը և այդպէս էլ նա կը լինէ—թւում է ինձ—բոլոր հեռաւոր ժամանակներում։ Ազատութիւնը ինձ շատ քիչ ուրախութիւն բերեց, եթէ չը ասեմ, որ նա ինձ միմիայն վիշտ բերեց։ Ես տանջանքի յաւիտենականութիւնը այն ժամանակից աշխատեցի, երբ բանտի դռներն առջես բացուեցին։ Ես ծարաւում էի ազատութեան,—նա եկաւ և ինձ միմիայն տանջանք բերեց. ես մեռնելը կը գերադասէի, քան թէ այն տանելը—ինչ որ տարայ և կրեցի ես։ Ոչ մի ժամանակ մահը ինձ այնքան ուրախարար և գրաւիչ չէ երևացել, վկայ է Աստուած։ Դու

ինձ վրայ հանգարտ, անայլայլ դէմքով ես նայում,—միթէ միևնոյն է քեզ համար, այն ինչ՝ ես քո որդուն սպանեցի։

Յովսէփը ոչինչ չը պատասխանեց, նա անշարժ մնաց։ Մայր մտոցի պայծառ լոյսը ամբողջ նորա կերպարանքը լուսաւորեց և նորա արծաթի մազերի ալիքների փայլը էլ աւելի պարզացրեց։

— Ոչ պակաս ասածներից, երևում է այժմ, որ Նորան բոլորովին չը սպանեցին, և դու—հաւանական է—գիտես այդ,—դարձեալ սկսեց Բարաբբան, աշխատելով որևէ փոփոխութիւն նկատել այդ ալևոր դէմքի խաղաղ արտայայտութեան մէջ։—Համայն աշխարհս կարծես խելակորոյս է դարձել, մի տեսակ հրաշքների մասին վայրախօսելո՛վ։ Նա մեռածների միջից կենդանի դուրս եկաւ և իւր աշակերտների առաջ կանգնեց... կենդանի՜։ Այդ պատմութեան մի մասը ճշմարտանման է,—բայց ոչ մի հրաշք չը կար, քանի որ ես համոզուած եմ, որ Նա ոչ մի ժամանակ մեռած չէ՛ր։ Նա ուշագնաց եղաւ խաչի վրայ և գերեզմանի մէջ արթնեց։ Շատ պարզ է, որ Նա ոչ մի անգամ և շատ ու զանազան մարդկանց կը երևայ դարձեալ, և այդպիսով Նորա յարութեան մասին եղած պատմութիւնը հաստատուէ պիտի։ Հասկանում ես դու, թէ ես ինչ եմ խօսում։ Այդ Մարդի մէջ ո՛չ մի Աստուածային յատկութիւն չը կար, և հրաշք ևս չը կար, չը կա՛ր։ Դու Յովսէփ, Նորան Աստուածայնութիւն չես վերագրում, 'ի հարկէ, ով ծնուած էր քեզնից և քո կամքով, և որը, վերջապէս, ծնուեց սովորական ձևով, ինչպէս ծնւում են բոլոր մահկանացու մարդիկ։

Նա դիտմամբ սառն, անտարբեր և անպաճոյճ ելևէջով էր խօսում, բայց նորա չինծու հանդարտութեան տակ սարսափելի կեղեքիչ վիշտ էր ծածկուած։ Յովսէփը՝ միևնոյն տեսակ՝ լուռ էր, և կանգնած նորան էր նայում. ծերունու արքայավայել կերպարանքը ծիրանի-ոսկեգոյն ճառագայթներով էր լուսաւորուած։ Բարաբբան այլ ևս չը կարողացաւ համբերել. նորա զսպուած անհամբերութիւնը յանկարծ և ուժգին իւր կարող սահմանից դուրս թռաւ։

— Խօսիր, ծերունի, խօսի՛ր.—գոռաց Նա համարեա կատաղի։—Եթէ դու գիտենայիր միայն իմ բոլոր տանջանքները, կեղեքումնե՛րը։

Չէ թէ ես տեսայ այդ մարդուն, այդ «Հրէից Թագաւորին», Իւր բոլոր անհամեմատելի, կարող ու հրաշալի գեղեցկութեան մէջ։ Նորա դէմքը, Նորա ձայնը, համայն Նորա տեսքը—ինձ չեն թողնո՛ւմ։ Նորա խաղաղ և հեզ աչերը անհանգստացնում, խռովում են հոգի՛ս։

Մարդ կամ Աստուած, ով էլ որ լինէր Նա կամ չը լինէր, բայց—ճշմարտապէս—Նորա դէմքը աւելի շուտ Աստուածային էր, քան թէ մարդկայի՛ն։ Նորա քնքշութիւնը և բարութիւնը աշխարհային չէի՛ն։ Մարդիկ իրար մէջ վարուեցողութեան համար անխիղճ են—Նա ողորմածասէր է՛ր։ Մարդիկ միշտ գանգատում են—Նա հեզութեամբ լռում էր։ Ես ուշադիր քննադատում էի Նորան, մինչ կը մեռնէր Նա,—Նա տանջանքը յաղթանակի փոխեց, և առաւօտեան,—երբ Նա յարութիւն առաւ գերեզմանից,—ես ինքս տեսայ Նորան—առաւօտեան արշալոյսի շուաքի տակ մեղմիկ քայլող, և Նա կանգ առաւ և խօսում էր ո՛ւմ հետ, գիտես, կարող ես միտ բերել դու։—Այն ողբացող կնոջ հետ, որի մեղքերը ներել էր Նա՛։ Այդ մի տեսակ զարմանալի էր։ Ոչ մի մարդ, հէնց նոր դուրս պրծած գերեզմանի միջից, չը պիտի կանգ առնէր մի այդպիսի պատճառի համար. իսկ Աստուած, ասում են,—Աստուած խիստ պատժող է, և դորա համար էլ իսկապէս թւում էր, որ այդ Նազովրեցին ո՛չ Աստուած է, ոչ էլ Մա՛րդ։ Ա՛խ։ Եթէ որ ճանաչէի Նորան և Նորան այնպէս գիտենայի ես—ինչպէս որ Նա է և կայ՝ իրաւացի՜։ Ես կանգ չը պիտի առնէի և ոչ մի արգելքի հանդէպ, Նորան ճանաչելու համա՛ր։ Ես մինչև անգամ Նորա Մօրը դիմեցի,—քո կնոջ, աղերսելով Նէրան Նորա ծննդեան մասին պատմել, որը այժմս նոյնպէս հրաշքների են վերագրում,—բայց Նէ լռեց—նոյնպէս, ինչպէս և դու, և մինչ ես Նէրա հետ խօսում էի, Նէրան մի գերբնական փայլումն շրջապատեց,—փայլումն խորհրդաւոր էր և գերբնական, որը ինձ երկիւղի մէջ կորցրեց։ Հէնց ճիշտ այդպիսի մի փայլումն ևս Նազովրեցուն էր լուսաւորում, երբ ես առաջին անգամ տեսայ Նորան դատաստանատան մէջ։ Գեղեցկութիւնը և լոյսը Նորա մասնիկն էին թւում. բայց այդ գաղտնիքը զրկում է ինձ դատողութիւնից, և այդ իսկ պատճառով ես քեզ մօտ եկայ։ Ասա՛ դու ճշմարիտը, Յովսէփ, ինչպէս հասարակ և ազնիւ մարդ, պատմիր ինձ բոլորը—ինչ գիտես դու այդ Յիսուսի մասին—բոլոր Հրէաստանի հրաշքի և զարմացմա՛ն։ Դու Նորա հայրն ես, դու պարտական ես Նորա մասին բոլորը գիտենալ,—Նորա ծննդեան առաջին րոպէից սկսա՛ծ։ Եւ այդպէս, խղճա՛ իմ անքաղաքավարութեանը իսկ և տանջանքներիս, աղերսում եմ քեզ պատասխան տուր, աղաչում եմ՝ բացատրիր բոլորը, բոլորը։

— Ի՞նչ կարող եմ ես քեզ ասել, խեղճ հոգի,—ասաց Յովսէփը՝ վերջապէս, և նորա ձայնի մէջ խորին կարեկցութիւն լսուեց,—բացի այս, որ այդ Աստուածանման Մարդը իմ Որդին չէ եղե՛լ։

Բարաբբան վեր թռաւ տեղից և ջղաձգութեամբ բռնեց նորա ձեռքից։

— Քո որդին չէր․—կրկնեց նա։—Միթէ Մարիամը քո կինը չէ։ Միթէ դու երեխայ չունիս։

— Եւ ոչ մէկը, որը Նորան մայր կոչէր,—պատասխանեց Յովսէփը։ Զաւակներ ես ունիմ, բայց նոքա բոլորն էլ ծնուած են եղել իմ առաջին կնոջից,—երիտասարդութեանս ժամանակ,—իսկ այդ կինս՝ վաղուց է մեռել։ Մարիամին ես այնպէս գիտէի, որպէս մի արարածի, բայց ո՛չ այս աշխարհից։ Նա երկնային Կոյս է, որի անմեղութիւնը և անսովոր ճակատագիրը՝ ես կոչուած էի պահպանելու։

— Միթէ դու Նէրա վերայ չը ամուսնացար։

— Միայն թէ այնպէս, ինչպէս հրամայուած էր ինձ,—պարզութեամբ պատասխանեց Յովսէփը։—Ես Նէրա առաջ ծունկ իջայ՝ ինչպէս Թագուհու կամ հրեշտակի դէմ։

— Ա՜խ։ Ահա այժմս էլ դու ես շփոթում ինձ քո տարօրինակ խօսքերո՜վդ․—բացականչեց Բարաբբան համարեա թէ կատաղութեամբ։—Ինչո՞ւ համար ես դու Նէրան Թագուհի կոչում։ Ձայները ասում են որ Նէ մի հասարակ աղջիկ է՝—Եգիպտոսից բերուած։

Յօսէփի աչքերը մտածկոտ ու զմայլելի արտայայտութիւն ընդունեցին։

— Եթէ որ Նէ մի որ և է կողմից էր եկած, ուրեմն, 'ի հարկէ, Եգիպտոսից,—ասաց նա դանդաղ։—Ինձ հրամայեցին Նէրա հետ Եգիպտոս փախչել, Հերօդէս բռնակալից ազատուելու համար, որը Նորա մանկան կեանքն սպառնաց խլել։ Երբ առաջին անգամ ես Նէրան պատահեցի, գարուն էր... խաղաղ գիշեր,—Նէ միայնակ քայլում էր դաշտի մէջ, ինչպէս խորհրդաւոր ստուեր—հերաց մէջ գերբնական փայլ մը ունենալով. ինձ այնպէս երևաց, որ ես երկնքից իջած մի հրեշտակի պատահեցի և Նէրա ոտքերի տակ ընկայ ես—բարեպաշտութեամբ և յարգանօք։

Նա դադար տուեց, յիշողութեամբ տարուելով և ամբողջովին գրաւուելով անցեալից, ետոյ դարձեալ անդորր շարունակեց.

— Նէրա ցանկութիւնն էր, Նէրա կամքը, որ ես Նէրա վերայ ամուսնանամ՝ բոլորի աչքի առջև. մի անգամ,—խոստովանում եմ բացարձակ,—ես սկսեցի տատանուել, չարից երկիւղ կրելով, բայց դարձեալ հրաման եկաւ—և ես լսեցի՛։

— Ինչ հրամանի մասին ես խօսում դո՛ւ․ անվճռականութեան մէջ և գրգռուած՝ բարձրացրեց ձայնը Բարաբբան։ Ի՞նչ ես ուզում դորանով ասել։ Միթէ Յիսուսը Մարիամից չէր ծնուած։ Միթէ դու Նէրա վերայ չը ամուսնացար—այդ կնոջ կամ Թագուհու։ Միևնոյն չէ՞ միթէ՝ որ տեղից և որ ժամանակ եկաւ Նէ,—չէ թէ Նէ քոնն էր։

— Ո՜չ,—պատասխանեց Յօսէփը՝ յանկարծ տաքանալով,—մի համարձակիր արտասանել այդպիսի մի սրբապղծութիւն։ Նէ ո՛չ մի ժամանակ իմս չէ եղել, ո՛չ մի ժամանակ․ ո՛չ ակնարկով, ո՛չ խօսքով, ո՛չ շնչով, ո՛չ էլ հպարտութեա՛մբ։ Հրեշտակներն էին Նէրա ընկերակիցները; նոքա Նէրան աստղերի բարձրութիւնից էին փառաբանում այն գիշերը, երբ Մանուկը ծնուեց։ Ես միմիայն Նէրա հաւատարիմ ծառան էի։

— Դու զառանցում ես, ծերուկ․—սարսափելի այլայլման մէջ՝ գոռաց Բարաբբան։—Դու բանականութիւնդ կորցրել ես, որպէս և այդ տարօրինակ պատմութեանդ ու խառնափնդոր գործքիդ միջի բոլոր խառնուածնե՛րը։ Բայց ես քեզ մօտ եկայ՝ ճշմարտութեան ետևից ընկնելու, և ճշմարիտը ու սրդալը դուրս պիտի կորզեմ քեզնից ու նպատակիս հասած լինի՛մ։ Դու խղճուկ, թոյլ ծերունի ե՛ս։ Միթէ դու մահից չես վախենում։ Եւ գերեզմանի իսկ եզրին կանգնած, դու կամենում ես սուտը պաշտպանել և՝ պահպանելով դորան՝ անարգարութիւնը—սուտը հռչակել և տարածել։ Դու գիտէիր, որ Մարիամը ծնէր պիտի և—եթէ որ Նա քո որդին չէր—ապա ո՞ւմ Որդին է Նա....

Հալածեց շուաքը ողողեց գետինը,—արեգակը հէնց նոր էր մայր մտել. խորին ու խորհրդաւոր լռութիւն տիրեց։ Երեկոյեան մոխրագոյն լոյսը դանդաղութեամբ տարածուեց, և մթնած խրճիթի մէջ այդ երկուսը՝ մէկը միւսի հանդէպ՝ կանգնած մնացին—դողդոջ և անխօս։

Ո՞ւմ որդին է Նա,—կրկնեց Բարաբբան տարօրինակ շշնջոցով։

Մի տեսակ երկիւղ, մի տեսակ տարակուսանք տպաւորուեց Յօսէփի դէմքի վերայ։ Նորա ալեոր դէմքը մի տեսակ խորհրդաւոր արտացոլումն ստացաւ։ Երկու ձեռքերը գաղտնամիտ շարժմունքով ու վեհանձնաբար դէպի առաջ տարածելով, նա իւր յանդուգն հարցաքննողի ուղիղ աչքերի մէջ նայեց։

— Յանուն Ամենաբարձրեալ Աստուծոյ, Որը տեսնել է մե՛զ—որոտաց նա՝ վրդովմունքից դողդոջուն ձայնով.—երդւում եմ ես, որ ոչ մի ժամանակ չը գիտէի՛։ Ես ոչ մի ժամանակ չը գիտէի այդ։ Ես միայն թէ... տեսայ տեսիլ...

Մինչ կը խօսէր նա, յանկարծ պայծառ լոյսը՝ շեղ և արագ ընկնելով, մռայլ բնակարանը լուսաւորեց... Անսպասելի փայլից վախեցած, ծերունին դէպի բաց դուռը դարձաւ... ետոյ... անբնական ու քստմնեցուցիչ ճիչ արձակեց, միաժամանակ ձեռքով դէպի նա ցոյց տալով։

— Նայի՛ր, Նայի՛ր այնտե՛ղ: Ահա Նա կանգնած է: Նորան հարցրի—ոչ ի՛նձ: Հարցաքննիր Նորան մի այնպիսի հարցի մէջ, որպիսին ոչ մի մահկանացու չը պիտի բացատրէ քե՛զ:

Եւ գետնի վերայ ընկնելով, ծնկաչոք դրութեան մէջ սառած, նա խոնարհութեամբ գլուխ տուեց, մինչդեռ Բարաբբան երկիւղած, շփոթուած ու յաղթահարուած՝ տատանուեց... Նոցա դէմ լռիկ, ճառագայթացող ու արքայապատիւ գեղեցկութեան վսեմութեամբ և փառքով օժտուած՝ կանգնած էր... Նազովրեցին:

XXI.

Դա նոյն հրաշալի Պատկերն էր, որ իւր փառքով լուսաւորեց խաչը, հէնց նոյն այն խորատես աչերը, որոնք անսահման ներողամտութեամբ համայն աշխարհիս վերայ դարձան: Բայց—այնու ամենայնիւ—ինչքա՜ն էր գեղեցկացել մարդկային նմանութեան մօտ դէմքը: Ամեն կողմից պայծառ լոյսը Նորա կայսերական պատկերն էր լուսաքօղում, որը, թւում էր, թէ ամպային բոցով է պատած. երկնային ոսկէ ճաճանչները փայլում էին աստուածային յօնքերի վերևում, բոլոր առաւօտեան, օրուայ և երեկոյեան մեծութիւնը, ստեղծագործութեան ամբողջ գաղտնիքներն, թւում էր, Նորա կայծակնաբեր աչերի մէջ էին համախմբուած, որը, այնու ամենայնիւ, արտայայտում էր նոյնպէս սէր և ուժ, ուժ և սէր—բայց մահկացու հասկացողութիւնից անջատ մի սէր և նորանով անհասանելի,—սէր, աւելի լայնածաւալ, քան արեգակի փայլումն, անսահման և ընդհանրական—ինչպէս օդը: Ափշած, իւր սեփհական աչքերին հաւատալուց իսկ վախենալով, Բարաբբան ծնկների վերայ ընկաւ. վերջապէս, նա ծնկաչոք ընկած՝—իւր աղերսալի ակնարկը Երևոյթին դարձրեց, բայց՝ այնու ամենայնիւ՝ նոյնաժամանակ դեռ ևս ինքն իրենից հարցնելով՝ պատրանք չէ՞ արդեօք այդ—թէ հրաշալի իրականութիւն: Համոզուել կամենալով, նա ստիպեց իրեն ամենամանրկեկ առարկաները նկատել, որոնք շրջապատել էին իրեն. ստեղծագործի նստարանը, շուշանների ճիւղը, որոնք հէնց այդ տեղ էին ընկած, քանդակագործութեան վերաբերեալ գործիքները, այդ բոլոր ձեռքի աշխատանքի հաստատութիւնները ամենօրեայ կեանքի ու առօրեայ կեանքի պահանջները, իրենց բոլոր կազմակերպութեամբ՝ ընդունեց նա ճշգրտապէս: Իրենից ոչ հեռու ծնկաչոք Յօսէփն էր կանգնած՝ ծածկուած վերարկուի մէջ: Այո, այդ կենդանի աշխարհային կերպարանք էր

ու իրականութիւն: Բացուած դռնից, Հրեշտակային Պայծառ Երևոյթի ետև—կանաչագոյն, թարմ մարգագետինն էր ջոկւում, իսկ աւելի հեռու՝ անվերջանալի դաշտերը,—արդէն գրկուած երեկոյեան աղջամուղջի մառախուղով... Կը նշանակէ՝ այդ տեսիլք չէր. աշխարքը դարձեալ միևնոյն աշխարհս էր մնում,—այլ ոչ թէ ուրուականական երևոյթների քաօսով պատուա՜ծ: Այդ հրաշալի Թագաւորը իրաւացի կանգնած էր այն համեստ շէմքի վերայ, ուր իւր երեխայութիւնն էր անցկացրել, հանդարտ կանգնածը ուրուական չէր, այլ Զմայլեցուցիչ Կենդանի Ճշմարտութի՛ւն: Մարմնացած Իրականութիւն էր ա՜յդ... Բարաբբան կամաց կամաց համոզուելով դորա մէջ, սկսեց մօրի հետ շշնջոցով աղօթել, որպէս զի մնանել կարողանայ այդչափ մեծ ու երջանիկ հոգեզմայլութեան ներգործութեան տա՛կ: Քիչ քիչ նա մի տեսակ բուռն ցանկութիւն զգաց—Աստուածային Երևոյթին աւելի մօտենալ: Որպէս թէ նորան վստահութիւն տալու համար, մի գերիմաստ ժպիտ խաղաց շրթունքների վերայ: Դանդաղութեամբ մօտ և մօտ ու էլ աւելի մօտ խաղաց նա, ընդ միշտ դէպ՝ առաջ ձգտելու պատրաստականութեամբ ու ալէծուփ և համարեա առանց շնչառութեան, նա—ողորմելի, մահապարտ ու մահացու յանցաւորը յանդգնեց Անմահ Մաքրութեան մերձենալու. վերջապէս երևաց նորան, որ նա ինքը՝—հէք արարածների տրուպը՝—իւր վերայ կրեց ու զգաց այն ոսկի լուսանշոյլը, որը տարածուում էր աշխարհիս Փրկչի Յարութիւն առած Պատկերի՛ց:

— Ուսուցի՛չ, այդ Դո՜ւ ես.—խոնարհութեամբ շշնջաց Բարաբբան:—Իրականապէս Դո՜ւ ես: Ինչո՞ւ եկար Դու, երբ ես Քո մասին կասկածեցի: Խնդրում եմ՝ պատիժ տո՜ւր ինձ—իմ կասկածանքիս ու մեղքերիս չափի համեմա՜տ: Ես արժանի չեմ ո՛չ կեանքի, ո՛չ մահուա՜ն: Այստեղ—Քո ոտքի տակ, ես ընդ միշտ մնանել կը կամենայի՜:

Խորին լռութիւնը նորան պատասխան եղաւ. քնքուշ լռութիւն, որ մխիթարում է տանջուողներին և վաստակեալներին հանգստութիւն շնորհում: Ամբողջովին դողալով, նա ուժով աչքերը բարձրացրեց: Այն անհուն սէրը, որով շնչում էր համայն Հրաշալի Պատկերը, Նորա հոգին զմայլմունքով լցրեց. Նորա կեղեքուող, վաղուց գերուած հոգին թօթափեց հին կապանքները և նոր կեանքի մէջ յարութիւն առաւ. անմահութեան և անեղծութեան զգացմունքի տակ:

— Ես հաւատում եմ, ես Քեզ հաւատում եմ և դաւանում—Դու իմ Աստուածն ե՛ս.—բացականչեց նա նահանջման մէջ, միշտ դէպի ետ և ետ քաշուելով:—Թո՛յլ տուր ինձ Քեզ հետևել ամեն ժամանակ և ամեն մի տեղ, որպէս զի ես Քեզ կորցրած չը լինեմ, որով կորցրած

պիտի լինեմ միակ ճշմարտութիւնը՝ համայն աշխարհիս մէջ: Վեր առ ինձ Քեզ հետ. ես Քո կամքի գերին եմ այսուհետև, և՝ այլ ես՝ բոլոր ժամանակներում: Բոլորը լաւ է, այն բոլորը սուրբ է և նուիրական— ինչ Քո առաջնորդութեամբ և կամեցողութեամբ է լինում:

Նա հազիւ էր իւր զմայլումն արտայայտող կոչն վերջացրել, երբ փայլուն կերպարանքը դանդաղութեամբ հեռացաւ, շուռ եկաւ և միգապատ դաշտերի վերայ հանդարտ քայլել սկսաւ, պայծառութեամբ փայլող նեղ ճանապարհի սիրտը իւր ետև թողնելով: Բարաքբան վայրկենապէս ոտքի կանգնեց և գնաց նորա հետևից: Ոչինչ չը տեսնելով, ոչինչ չը լսելով, ոչինչ չը զգալով, բացի այն, որ թագաւորական հրաշալի Պատկերը անլսելի սահեց նորա առջև, նա հոտաւէտ ծաղիկների միջից արագութեամբ քայլել սկսաւ և նորան այնպէս էր թւում, որ նա թռչում է օդի մէջ: Սաստիկ ուրախութիւնը տիրել էր նորան, մի այնքան մեծ ուրախութիւն, որը նորան իւր ճաշակից բարձր երևաց: Նորա երեսին փչող թեթև քամին դրախտի զգուանք էր երևում. նա պղտոր կերպով յիշում էր ու ըզգում, որ աստղերը երևացին, որոնք դժգոյն էին, ինչպէս ցօղի կաթիլնե՛րը: Նորա հոգու զգացմունքը այնպէս էր, որ երկիրը,—իւր բոլոր գեղեցկութեամբ, իւր համայն երևոյթներով, նորան տիրած ափշանքի ալիքների մէջ միմիայն մի կաթիլ էր կազմում. բայց յանկարծ, փոքրիկ բլրակի զառիվայրում—ճառագայթացոլ երևոյթը կանգ առաւ, ապա... ինչպէս թեթև ամպ—օդի մէջ հալուող,—ակնթարթի մէջ աներևոյթացաւ:

Բարաքբան կանգ առաւ և շուրջը դիտեց: Նա արդէն Նազարէթից մի քանի մղոններով հեռու էր. այնտեղ, ուր քիչ առաջ փառաւոր լոյս էր, այժմ խաւարի մէջ էր ընկղմուած: Բայց հրճուանքը նորա հոգու մէջ մնաց, և նա շատ չնչին շփոթմունք ես չը զգաց: Ամենամեծ Թագաւորը անյայտացաւ, բայց դորանից ինչ մի վնաս կարող էր առաջանալ: Նորա բացակայութիւնը միմիայն ժամանակաւոր կարող էր լինել: Նա ապրում է և դարձեալ կը վերադառնայ: Խոր հաւատքի զգացմունքից հրճուելով, Բարաքբան աչքերը դէպ՝ խաղաղ երկինք բարձրացրեց, և ինքն իրենից հարցրեց, թէ իրականապէս վիշտ և տխրութիւն գոյութիւն ունեն: Կարո՞ղ է արդեօք մարդ անբաղդ լինել, երբ գիտէ, որ իւր Աստծուն, որպէս ընկեր կարող է ունենալ և զգալ, որ կեանքը անմահ է: Ո՞վ պիտի սկսէ կորած սիրոյ մասին տխրել, սգալ մեռածի վերայ կամ թէ ճակատագրի փոփոխականութեան վերայ անհանգստանալ, երբ՝ գիտենայ պիտի՝ որ բոլոր չարը բարու պիտի փոխուի, թէպէտ և տակաւ առ տակաւ,

բայց վերջ ի վերջոյ պիտի լինէ այդ: Մի ժամանակ վշտացող, տանջւող Բարաքբան, այժմ անդորր հոգու տէր էր. նորա կարծիքները և տատանմունքները ընդմիշտ անյայտացան:

— Նոքա Աստծուն սպանեցի՛ն.—ասաց նա:—Եւ Աստուած յարութիւն առաւ գերեզմանից: Այդ Աստծուն, Քրիստոսին և Փրկչին, որ աշխարհս փրկեց, յանձնում եմ ես իմ հոգի՛ն:

Նա այդ խօսքերը ամուր ձայնով արտասանեց, ու լի համոզմունքով, որ նոքա պիտի լսուեն: Եւ թէպէտ ձայն ունեցող պատասխան չը ստացաւ նա, բայց զգաց ու մի խորին հանգստութեան զգացմունք ստացաւ. նա դորանով խաղաղութիւն, մխիթարութիւն և ուրախութիւն վայելեց, որոնց դեռ ոչ մի ժամանակ չէր ճաշակել: Ուրախ և վստահ, նա իւր ուղին առաջ տարաւ, որով և գնում էր, Ուսուցչին հետևելով: Այդ ճանապարհը ուղիղ լեռների միջից, նորից դէպի ետ՝—Երուսաղէմ էր տանում: Դանդաղութեամբ ու խաղաղ քայլերով առաջ գնալով, նա իւր ապագայ գործունէութեան մակարդակն էր կազմում: Նա՝ մտաւոր՝ իւր ընկեր ու տարօրինակ դատողութեան տէր Մելխիօրի մօտ էր վերադառնում, որը միշտ համոզում էր նորան Նազովրեցու Աստուածութեանը հաւատալու, և որը բոլորովին չէր խանգարում նորան ճշմարտութեան յետևից ընկնելու ու այդպիսին տրնտրնելու: Հէնց նորան նա ինքը՝ Բարաքբան՝ առաջինը կը պատմէ իւր Նազարէթում գտնուելու մասին: Ապա նա կը տարածէ իւր հաւատքը ոչ թէ միմիայն Մելխիօրի մօտ, բայց և ամէն մի մարդու, ով հարցաքննել և հետաքրքրուել կարող պիտի լինէ: Ի՛նչ մի հետևանքի պիտի հասնէ—այդ նա չէ մտածում. նորան պատած ներքին հոգեկան ուժը ներշնչում էր Բարաքբային, իսկ աշխարհիս անցքերին լիակատար անտարբեր լինելու: Խստասրտութիւնը, վրէժը և բոլոր մարդկային չարութիւնները անզօր էին այժմ վնասել նորան, այլև տանջանք ու կեղեքիչ նեղութիւններ նա պատրաստ էր տանելու, այդ շատ դիւրին է նորան, ով Քրիստոսին տեսաւ, միևնոյն ժամանակ գիտենալով հանդերձ, որ դա իրաւացի Քրիստոսն է: Յովսէփի մասին, որին այնքան տարօրինակ կերպով յաճախեց, նա այլևս չէր մտածում: Եթէ որ նա գիտենար, ինչ պատահեց իւր գնալուց ետոյ, ափսոսանքի ստուերը նորա սեփհական ուրախութիւնը աղօտացնէր պիտի:—Մի քանի բանուորներ Նազարէթից վաղ առաւօտեան դաշտային աշխատանքների դիմելով, նկատեցին, որ յարգելի ծերունու ծանօթ կերպարանքը իւր սովորական տեղի վերայ չէր գտնուում: Նոքա ներս մտան իմանալու—արդեօք չէ՞ր տկարացել նա: Նորան խաղաղ պառկած գտան,—նա յատակի վերայ հանգստութեամբ պառ-

կած էր երեսում։ Նորա ձիւնափայլ գլուխը թեթևակի փայտեայ նըստարանին էր կռթնած, որի վերայ շուշանների ճիւղը դանդաղ թառամում էր, նորա աչքերը խփուած էին, ինչպէս խորունկ, անդորր քնի մէջ. ըստ երևոյթին նա հանգստութեամբ ննջում էր։ Նորա որդիներից երկուսը աշխատում էին արթնացնել նորան և դուրս բերեցին թարմ օդի մէջ. այդտեղ նոքա նկատեցին, որ նա արդէն վախճանուել էր. նա այժմ այնտեղ էր, ուրտեղ ծերութիւնը երիտասարդութեան է փոխուում և ուր մինչ այդ ժամանակ գուշակական երազները պարզ, հասկանալի, և սփոփանքով լի են լինում։

XXII.

Լրիւ լուսնի լայն լոյսը արծաթափայլ ցոլմունքով Երուսաղէմի պատերը և պարիսպներն էր լուսաւորում. այդ այն գիշերն էր, երբ Բարաբբան իւր դէպի Նազարէթ ճանապարհորդութիւնից վերադարձաւ։ Նա ուշացել էր և քաղաքի դռները փակուած էին։ Բայց նորան յաջողեց քնած դռնապանին զարթեցնել, որը դուրս եկաւ իւր բնակարանատեղից և հէնց ուզում էր դուռը բաց անել, երբ յանկարծ կանգ առաւ, ուժով աչքերը շփեց և ափշութեամբ նորա վերայ նայեց։

— Բայց չէ՞ թէ դու Բարաբբան ես. բացականչեց նա։

— Հէնց այդպէս, այո՛,—ես Բարաբբան եմ, բայց ետոյ էլ ինչ։ Ինձ հետ մի որ և է գործ ունիս դու, ինչ է։

Դռնապանը ուղղակի և անմիջապէս պատասխան չը տուեց, նա փականքը ձգեց և ուժգին ձայնով գոռաց.

— Ե՛յ, դուք՝ այդ տեղ. զարթեցէք, ծոյլեր, և դուրս եկէք շուտո՛վ։ Ահա այն մարդը, որին դուք ման էք գալիս՝—Բարաբբա՛ն։

Սարսափելի աղմուկ բարձրացաւ, շատուորի քայլերի կոխկըրտոց, զէնքերի շաչիւններ, և դեռ նախ, մինչ հիացած Բարաբբան կարող էր հասկանալ թէ բանը ինչումն է,—նա զինուորներով շրջապատուած էր արդէն, որոնք բռնելով նորան, տարան մի որևէ կալանաւորի նման։ Ափշած, բայց բոլորովին չը շփոթուելով, նա ոչ մի ազատարար ուժ գործ չը դրեց։ Նա փոխարերաբար իրեն շրջապատող բոլոր մարդկանց վերայ նայեց,—բոլորն էլ հռովմայեցի զինուորներ էին և իրեն անծանօթ։

— Այս ինչ մի կատակ է.—հարցրեց նա։—Ի՞նչու համար այսպէս կոպիտ էք վարուում ինձ հետ։ Մի՞թէ դուք չը գիտէք, որ ես ազատուած եմ, և այն ժողովրդի կամքով, հապա այլևս ինչո՞ւ պիտի կալանաւորէք ինձ։

— Լռի՛ր, չարագործ,—ասաց բարկութեամբ նորան շրջապատած մարդկանցից մէկը։—Եղեռնագործներին չէ մնացել օրէնքի դէմ վիճել ձգտելո՛ւ։

— Ես գիտեմ, որ ես յանցաւոր եմ,—համբերութեամբ ասաց Բարաբբան,—բայց իմ չարագործութիւններս օրէնքով ներուած էին ինձ։ Ի՞նչ մի նոր չարագործութեան մէջ են մեղադրում ինձ։

— Քահանայապետ Կայիափայի սպանել ձգտելու գարշելի փորձի մէջ.—պատասխանեց զինուորների խումբը կառավարող սպան։—Նա հազիւ թէ սարսափելի վէրքից չը մեռաւ, որին մի անյայտ մարդ էր հասցրել, և նա երդուում է, որ այդ սպանիչը դու ես։ Բացի դա, քեզ կասկածում են և նորա մէջ, որ դու Նազովրեցու աշակերտներին օգնեցիր կնքուած այրից Նորա մարմինը գողանալու։ Քեզ տեսել են, թէ ինչպէս դու բացարձակապէս յայտնի պոռնիկ Մագդաղենացու հետ խօսելիս ես եղել։ Քեզ նոյնպէս նկատել են Սիմոն Պետրոսի ընկերակցութեան մէջ, և դարձեալ, միևնոյն առաւօտ, երբ Նազովրեցու մարմինը անյայտացաւ, հռովմայեցի զինուորները քեզ մերձակայքում պատահեցին։ Երևի այսքան ապացոյցները բաւական կը լինին քո դէմ, ՚ի նկատի ունենալով և քո նախկին չարաբարոյ նիստ ու կացը։ Այդ բոլորի համար, պարզ է, որ մահուան պատիժ պիտի կրես։

Բարաբբան զարմանալի հանդարտութեամբ լսում էր նորան։

— Ինձ Կայիափա՞ն է մեղադրում.—հարցրեց նա։

— Կայիափան քեզ վերայ մեղադրանքներ բառնալով, Պիղատոսին մատնեց, որից կատաղի կերպով քո պատիժը է պահանջում,—պատասխանեցին Բարաբբային։—Մի հարցաքններ մեզ այլ ևս և հարցափորձը մի կողմ դիր, այլ հետևիր մեզ հլու հնազանդութեամբ և չը պիտի հակառակես քո ճակատագրին։

Բարաբբան ժպտաց։ Կայիափայի բռնած ընթացքը և գծած տեղապրութիւնը հասկանալի էին և բոլորովին պարզ։ Որպէս զի Յուդիթ Իսկարիովտացուն և իրեն կասկածանքներից և բամբասանքներից պաշտպանած լինէ, խորամանկ քահանան այդ սուտ ու արդէն յայտնի մեղադրանքը մտածեց Բարաբբայի դէմ, օգտուելով նորա նախկին յանցաւոր լինելուց։ Բացի այդ, նա դեռ բաւականութիւն ևս տուեց իւր բուռն ատելութեանը և վրիժառութեանը Բարաբբայի վերաբերութեամբ, նորա համար, որ նա ևս Յուդիթին սիրողների շար-

քումն էր գտնւում։ Երկրորդ մեղադրանքը՝ Խաչեցեալի մարմնու գերեզմանից գողանալու վերաբերութեամբ—արած էր, որ՝ այսպէս ասած՝ թող ու մոխիր փչուէր ամբոխի աչքերը և հրաշալի Յարութեան մասին տարածուող խօսակցութիւնների առաջն առնուէր։ Նորա դրութիւնը մինչ վերջին ծայր պարզ էր, բայց քահանայապետի չար նախանձի գոհը, այդ տեսակ անբարեպատեհ հանգամանքներում իսկ, թեթև անգամ չը պղտորուեց։ Դառնալով սպային,—որը նորա յանկարծակի կոյանաւորութեան պատճառը բաց էր արել,—նա փափկութեամբ ասաց.

— Ընկեր, ինչ կերպ էլ որ չը լինէ իմ ճակատագիրը, հաւատացած կաց, որ ես պատրաստ եմ տանելու այդ,—և նա իւր երկու ձեռքը լարեց, հեշտութեամբ կապելու համար։—Այո, մինչև անգամ, ես այն չը գործելով, որի մէջ անիրաւացի մեղադրում են ինձ, համբերեմ պիտի, որովհետև անմեղութիւնը, առօրեայ օրէնքների գործածութեան ժամանակ, աւելի ես այսպիսի դէպքերում, հաշուի չի դրւում. և այդպէս, ահա ես ասում եմ, որ 'ի սէր Յիսուս Նազովրեցու,—ես կազմ և պատրաստ եմ ու ուրախ՝ դէպի մահը դիմելու։

— Անխե՛լք.—բացականչեց մի զինուոր, խփելով նորան։—Այդպէս մի ասիլ, եթէ կեանքդ թանկ է քեզ համա՛ր։ Այն, ինչ ասացիր դու,—սրբապղծութիւն է, բաւականին մեծ սրբապղծութիւն, որի հիման վերայ քեզ մահուան պատիժ կը տա՛ն։

— Քանի որ ինձ պէտք է առանց այն էլ սպանեն, որ հաւանական է երևում,—այն ժամանակ իմ խօսակցութիւնը ոչ մի նշանակութիւն չունէ,—հանգստութեամբ պատասխանեց Բարաբբան։—Ինձ այնպէս է երևում, որ ամէն մէկը պարտական է այն ճշմարտութիւնը խօսելու, որ զգում է նա, 'ի նկատի չը առնելով, թէ կեանք կամ մահ է սպասում նորան 'ի տրիտուր։ Էհ, դորանից ինչ պիտի լինի որ, գնա՛նք, շուտով տարէք ինձ, այժմ վէճի ժամանակ չէ այլևս։ Դուք չէ թէ միայն օրէնքի վարձկաններն էք և չէք կարող չը կատարել այն, ինչ որ հրամայուած է ձեզ. ընկեր թող մնանք, բարի հռովմայեցիք ես ձեզ վերայ չեմ նեղանում։ Նայեցէք, չէ թէ ես ձեզ չեմ ընդդիմանում։ Դուք ձեր իրաւունքի մէջ էք, դուք պարտաւոր պիտի լինիք օրինական իշխանութեանը ընկճուելու, թէպէտ և օրինական իշխանութիւնը մահացուցիչ է, մահացու և սուղ ժամանակի արգասիք։ Ես նոյնպէս պարտաւոր եմ իշխանութեանը ընկճուել, բայց կան և այնպիսի հրամաններ, որոնց ես եմ ստանում, իսկ իմ ստացած հրամանները, անփոփոխելի են, և նոքա, որոնք նոցա չեն կատարում, նզովեալ պիտի լինին։

Նորա մութթ աչքերը փայլեցին. երբ նորա ձեռքերը կապեցին, նա դարձեալ ժպտաց։

—Նա խելագար է,—ասացին զինուորները, զարմացական ակնարկներ փոխելով։—Ասում են, որ նա Յուդիթ Իսկարիոտացուն էր սիրում, կարող է պատահել, որ նորա անսպասելի մահը զրկել է սորան իւր գիտակցութիւնից։

Բարաբբան լսեց այն, ինչ նոքա իրար մէջ խօսեցին։ Յուդիթ, Իսկարիովտացի։ Այո, ինքն սիրում էր նորան, և քանի որ նա մեռել է, այժմ իրեն՝ Բարաբբային աւելի թանկագին եղաւ։ Քանի որ նա այժմ այլ ևս Յուդիթ Իսկարիոտացի չէ, այժմ նա մի նոր ստեղծագործութիւն է, մի վերափոխուած արարած, հեռաւոր, խորհրդաւոր հոգի, մի ազատուած հոգի—ուրախութեան կամ վշտի տակ,—ով կարող էր գիտենալ նորա մասին և ով ինչ ուզում էր թող խօսէր, բայց—յամենայն դէպս—նա հեռու է աշխարհիս ունայնութիւնից և յանցաւոր սկզբմունքից։ Այդ մտքերի մէջ ընկղմուած, նա լուռ գնում էր զինուորների հետից, որոնք անմարդ փողոցներով շտապ և ուղղակի տանում էին նորան քնի մէջ ընկղմուած քաղաքից հեռու—դէպի ետ, իւր նախկին բանտը։ Ոչ դեռ այնքան ուշ նորան դար-առջև բացուած մռայլ դռները դարձեալ բացուեցին, որ նորան դարձեալ ներս թողնեն, և նա զգաց, որ նորա ազատութիւնը այս աշխարհիս մէջ այլ ևս վերջացած է։

— Ի՞նչ, դու դարձեալ վերադարձար, Բարաբբա՛,—քրթմնջաց բանտապահը, լապտերի լոյսով նայելով նորան։—Ակամայ մտածում ես, թէ ինչ տեսակ յիմարութիւններ է պատրաստ մարդկանց համար և ինչ չեն անում փչացած մարդիկ։ Միմիայն տասն և հինգ օր է անցել այն ժամանակից, ինչ ազատեցին քեզ՝ ամբոխի ուրախ աղաղակների տակ, բայց դու մի այնպիսի զզուելի բնաւորութեան տէր մարդ ես, որ չը կարողացար մի նոր չարագործութիւն ես չը գո՛րծել։ Ընկերոջդ,—այն վախկոտ շանը—Գանանին, խաչեցին, այժմը՝ երևի՝ կը խաչեն և քեզ։ Սրիկայի կենաց արժանի վախճան։

Բարաբբան լուռ էր։ Յանկարծակի արցունքները նորա աչքերը լցուեցին. Նորա հրաշալի կերպարանքի և աստուածային Պատկերի մասին մտածեց, որոնք խաչի վերայ մահը փառաւորեցին։

—Ձկան նման լուռ, արջի նման մռայլ.—շարունակեց բանտապանը։—Այնպիսինները, որպիսին դու ես, ամենավատթար տիպարներն են։ Յոյս չը պիտի կապել մռայլների և անզարձների վերայ։ Գնանք ինձ հետ, ես քեզ քո նախկին տիրացած խցիկն պիտի կոխեմ. ոչ ոք այնտեղ չէ եղել, բացի քաղցած առնէտներից, երբ դու թո-

ղեցիր այդ անզը՝ Ներս մտիր շուտով ու երկնքի հետ հաշտուել ջանացիր։

Նա դէպի այն սարսափելի նկուղի առաջնորդող դուռը բաց արեց, որի մէջ Բարաբբան տասն և ութ ամիս անց էր կացրել արդէն՝ անուժ կատաղութեան և սարսափելի տանջանքների մէջ, և մի շարժմունք գործեց, որպէս թէ կալանաւորին ներս մտնել յանկանալով։ Բարաբբան շէմքի վերայ կանգ առաւ և ուղիղ բանդապետի աչքերի մէջ նայեց։

—Ինձ հետ կոպիտ լինելու կարիք մի զգալ դու,—ասաց նա փափուկ ձայնով,—քեզ բարկանալու պատճառ չը կայ. այս անգամ ես անմեղ եմ այն չարագործութիւնների մէջ, որոնցով մեղադրում են ինձ, թէպէտ և այն բոլորը, ինչ պատմում են, աւելի բարեգործութիւնների կարգին պիտի դասել. բայց ես նախ անխրատ իմն կերպով էի ազատուած. այդ միմիայն ժողովուրդի յանկութիւնն էր —այլ ոչ թէ արդարադատութեան, և այժմ ես պարտականութիւն եմ զգում նախկին մեղքս քաւելու։ Ճիշտ որ, ինչպէս դու ինքդ խորհուրդ տուիր ինձ, ես կը աշխատեմ երկնքի հետ հաշտուելու։

Անսովոր գեղեցկութիւնը նորա մութ երեսը լուսաւորեց. նորա աչքերի մէջ մի տեսակ մտածկոտ արտայայտութիւն կար և շրթունքների վերայ քնքուշ ժպիտ էր խաղում։ Բանտապահը զարմացաւ, նա լի կարեկցութեամբ Բարաբբային նայեց։

—'Ի սէր այդ ազնուաբարոյութեանդ—ասաց նա՝ աւելի ընկերական ոճով ու քաղցրութեամբ, քան այդ վայել էր բանտարկեալի —ես չը պիտի սկսեմ թունաւորել քո կեանքի վերջին ժամերը։ Առաջդ զղջման համար ամբողջ մի օր կայ, —վաղը դատարանում նիստ չը կայ։ Դու քաղցած և ծարաւ չը պիտի մնաս այլևս. թէպէտ դու և չարագործ ես կոչւում, բայց ես քեզ առանց կերակրի չը պիտի թողնեմ. աւելին քեզ համար ես անկարող եմ անելու և—այդպէս—տեղաւորուիր հին բնակարանումդ։

Նա ծանրկիկ երկաթի դուռը ծածկեց, շառաչմունքով սողնակը քաշելով։ Բարաբբան լսեց այդ, բնազդմամբ զգալով, որ նորա համար արտաքին աշխարհը այլ ևս գոյութիւն չը պիտի ունենայ։ Նա դանդաղութեամբ չորս կողմն նայեց։ Բանտախուցը մռայլ, և—միևնոյն ժամանակ—տգեղ ու անվայելուչ էր. բարակ պատառուածքից, ինչպէս և այն ժամանակ, արծաթափայլ լուսնի նրբածայր ցայթն էր թափանցում։ Բարաբբան նստեց ու սկսեց նորան դիտել։ Այդ խեղճ դրութեան մէջ, նորա գաղտնախորհուրդ փայլով լուսաւորուած դէմքը թէ բաղդաւոր էր և թէ հանգիստ. այդ աղքատիկ

քանիցն անգամ նորա աչքի առջև գրկուած չէր մի տեսակ գեղեցկութիւնից, և առաջիկայ անփախուստ մահուան պատժի միտքը նորա հոգին աւելի շատ ուրախութեամբ, քան թէ երկիւղով լցրեց։ Նա գիշերը խաղաղ անցկացրեց,—խորին մտայուզութեան մէջ. լոյսի արծաթափայլ շիթը փոքր ինչ ոսկիափայլ ընդունեց, և նա հասկացաւ, որ արեգակը կանգնած է արդէն։ Բանտապանը նորան ուտելիք և խմելիք բերելով, հարցրեց,—արդեօք լաւ էր ննջել նա։

—Ո՛չ, ես չը քնեցի,—պատասխանեց Բարաբբան քաղցրութեամբ.—համարեա թէ լուսաբաց էր, երբ այս տեղ եկայ ես, և դուրեկան մտքերս հալածեցին իմ քունը։ Ի՞նչ կասէք, լաւ օր է արդեօք։

—Այո, լաւ է,—պատասխանեց Բանտապետը, բանտարկեալի հանդստութեամբ ափշելով։—Ինձ այնպէս է թւում, որ եղանակը քեզ քիչ պիտի հետաքրքրէ։ Դու կարող ես դարձեալ մի օր և գիշեր անցկացնել դուրեկան մտածմունքի մէջ, ինչպէս դու ես ասում, և ապա քո վախճանն է։ Այլ ևս մտածմունքը չը պիտի պէտք կայ։ Դու գիտես, թէ ինչի մէջ են մեղադրում քեզ։

—Ես լսեցի,—պատասխանեց Բարաբբան,—բայց իրականապէս ես ինքս ինձ մէջ աւելի մեղքեր եմ գտնում, քան թէ աշխարհս է կարող կասկածել։

Բանտապահը, զարմանքի տակ, ուսերը թօթվեց։

Դու հանելուկներով ես խօսում,—ասաց նա,—և ընդհանրապէս դու այլ ևս մի տարօրինակ մարդ ես դարձել։ Բայց քո գործը վատթար է, որովհետև Կայիափան ինքն է մեղադրում քեզ...

—Ինձ այդ չէ զարմացնում,—կտրեց Բարաբբան։

—Այդպէս,—կը նշանակէ նա տեղիք ունէ։

—Ո՛չ, նա տեղիք չունէ։ Բայց ես չեմ զարմանում, երբ նա սուտ խօսում է ու անարդար գործում։

Բանտապանը ծիծաղեց։

Սիրում եմ քեզ այդ տեսակ խօսքերիդ համար։ Յարգում եմ քեզ, ինչ տեսակ չարագործ էլ որ լինես,—և նա իւր ձեռքերը իրար շփեց։—Դու մի տեսակ սրամտութեամբ ես խօսում։ Իրաւ որ, եթէ Աստուած այնպէս լինէր, որպէս ձեր հրէական քահանաներն են ներկայացնում, ուրեմն նա մի անխիղճ բռնակալ պիտի լինէր, որը երբ և իցէ կեղեքում է մարդկութիւնը։ Բայց ուշ դարձրի վրադ,—այդքան բաց մի խօսիր։ Անբաղդ Նազովրեցուն յիշիր, որը քահանաներին դէմ կանգնեց, և բոլոր ինչ նոր տեսակի և դրութեան կը բերին դէմ կանգնեց, և բոլոր ինչ նոր տեսակի և դրութեան կը բաքեփոխէր, եթէ չը խանգարէին նորան։ Նորանում—ահա—ուժեղ և

ճշմարտագոյն հոգի կար,—այդ Նազովրեցի՛ն։ Ես ինքս լսեցի, թէ
ինչպէս Նա մի անգամ ասաց. «կեղծաւորքն սիրեն 'ի ժողովուրդս
և յանկիւնս հրապարակաց կալ յաղօթս. որպէս զի երևեսցին մարդ-
կանն»։ Այդ հարուածը բոլոր քահանաների համար ոչ թէ յօնքի էր,
այլ թէ՝ աչքի՛։ Նա՝ միևնոյն ժամանակ՝ և տանջուեց իւր ուղղու-
թեան համար և ճշմարտութեան մէջ. թէպէտ և ասում էին, որ Նա
Աստուծոյ Որդի է,—բայց այդ ևս բնաւին չը օգնեց Նո՛րան։

—Խնդրում եմ քեզ, մեղմ եղիր խօսքերիդ վերաբերութեամբ.—
կտրեց Բարաբբան՝ փափուկ ձայնով։—Նայիր, որ ինքդ սրբապղ-
ծութիւն չը գործես։ Նա էր, Նա է Աստուծոյ Որդին, որը Յարեաւ
'ի մեռելոց և Նոյն Ինքն—Փրկիչն է աշխարհիս։ Այդպէս եմ ճանա-
չում Նորան, և այդ իսկ տեսակ հռչակո՛ւմ։

—Այժմ ես տեսնում եմ, որ դու խելքիցդ չուռ ես եկե՛լ։—Բա-
ցականչեց բանտապանը, կոպտութեամբ հեռանալով Նորանից։—
Ցնորուածի մէկը, հրաշքների ջերմով բռնուած, որոնք դեռ ևս հա-
մաճարակում են Երուսաղէմը։ Նազովրեցին ամբողջ օդն է կախարդե՛լ։
Այդ տեսակ ծանծաղամիտ առասպելներով ինքդ քեզ մխիթարիր,—
ցնդաբանութիւնների ես չը համբերեմ պիտի։ Վաղուան խաչուելուն
պատրաստուիր, դա աւելի օգտակար կը լինէ։ Դու ինձ այլ ևս չը
պիտի տեսնես,—ես խղճացի քո անագորոյն ճակատագրի վերաբե-
րութեամբ, քո կարճ ազատութեանդ, երկրորդական բանտարկու-
թեանդ վերաբերեալ ևս,—իսկ այժմ—ճշմարիտ որ ես գտնում եմ,
թէ դու երկիւղալի մարդկանց հզօրագոյնն ես և պէտք է որ մեռ-
նես իսկ։

Այդ խօսքերով նա չուռ եկաւ՝ դուրս գալու համար։ Բարաբ-
բան կապկպուած ձեռքերը դէպի նա տարածեց։

—Մնա՛ս բարեաւ, ընկեր,—ասաց նա՝ խեղդուկ ձայնով։

Բանդապետը ակամայ տխրութեամբ դէպի նա նայեց. Նա ին-
քը իւր վերայ իսկ բարկացած էր այն բանի վերաբերութեամբ, որ
այդ Բարաբբան այդքան խիստ ու կարեկցաբար հետաքրքրեց Նորան։
Նա մի խիստ ակնարկ ձգեց նորա բարձր ջղապինդ կերպարանքի
կազմութեան վերայ, խոհուն, հանդարտ աչքերի մեղմ արտայայ-
տութիւնը նկատեց, ապա, որպէս թէ սեփհական կամքին հակառակ,
բռնեց նորա ձեռքը, և շտապ ու կարճ սեղմելով.

—Բարեաւ գնա՛ս,—ասաց ուժգին։—Երբ կը մեռնես—մեռի՛ր
արժանաւորութեամբ։

Միայնակ մնալով, Բարաբբան իւր նախկին մտքերին դարձաւ։
Նա համարեա թէ իւր բանտի բոլոր անյարմարութիւնները չէր ըմ-

բռնում. խափանուած օդի, խեղդող տաքութեան և կիսախաւարի
ազդեցութեան հետ չէր գնում նա. այլ նա յաղթանակտարած թա-
գաւորի նման գոհունակութեան և փառքի մէջ էր,—իւր անմահու-
թեան վերաբերեալ նոր գիտակցութիւնով։ Հաւատքի հզօրագոյն
ոյժը նորան այն հաւասարութեանը բարձրացրեց, ուր մարդս կարող
է բոլորի համար էլ տանջուել, բոլոր ինչ տանել, չը կորցնելով,
յոյսը. քաղցր համոզմունքը, որ կայ մի իր, որը բարձր, գերազանց,
ու աւելի երջանիկ է, քան աշխարհային կեանքը, լցրել էր նորա
հոգին թէ ուրախութեամբ և թէ հանգստութեամբ։ Եւ ժամանակ
առ ժամանակ նա կամենում էր, նա ծարաւում էր աղօթքով այն Աս-
տուածային Ընկերոջ դիմելու, որը նախ տարաւ Նորան իւր հետևից,
ապա յանկարծակի ձգեց բլրակի վերայ՝ Նազարէթին մօտ. նա կա-
մեցաւ աղաչել Նորան՝ դարձեալ մի անգամ, գէթ գամ մի իւր ամ-
բողջ գերիմաստ ու սքանչելի գեղեցկութեամբ նորից կանգնել իւր
հաւատարիմ գերու Նորան աստուածացացնող ակնարկի առաջ։ Բայց
նա բաւականութիւն չը զգաց այդ ցանկութեան մէջ, որը նորան
իւրեն կասկածանքի հաստատութիւնն երևաց. որպէս թէ նորա հա-
ւատքի համար ճշմարտութիւնը պարտական է դեռ դարձեալ և դար-
ձեալ հաստատուե՛լ։ Դորա համար իսկ նա աղօթել անգամ չը սկսեց,
այլ շարունակեց անշարժ նստել, իւր հոգու մէջ նկատելով անմահ և
անվախճան կեանքի բոլոր գեղեցիկ պատկերը։

Իսկ օդը դանդաղութեամբ սահում էր և դարձեալ գիշերը,
իւր հրաշալի մութ հագուստի մէջ, գեղգեղ աստղերով և փայլուն
լուսնով պճնազարդուած,—պատեց ամեն ինչ։ Յօգնաթախծութեան
գրաւիչ ու դուրեկան զգացմունքը՝ վերջապէս՝ տիրեց Բարաբբային.
նա քիչ էր մտածում վաղը գալիքի համար, երբ նորան, Կայիափա-
յի ներկայութեամբ, դատել կը սկսեն. մեղաւոր կը գտնեն և մահ-
ուան դատապարտեն պիտի։ Նա միմիայն վճռեց՝ բնաւին չը պաշտ-
պանուել, որպէս զի դորանով գոնէ մեռած Յուդիթի յիշատակը
պահպանել։ Բացի դա, նա դարձեալ որոշեց, որ եթէ նորան Նա-
զովրեցու մարմնի գողութեան մասին հարցաքննեն—նա բացարձակ
հռչակէ պիտի իւր հաւատքը թէ բոլոր դպիրների և թէ փարիսե-
ցիների առջև, որ բոլորի ներկայութեամբ էլ յայտարարէ պիտի, որ
Յիսուս Նազովրեցին Որդի է Կենդանաբար Աստուծոյ։ Եւ հէնց այդ
նախադասութիւնը շրթունքների վերայ, նա բանդի անկիւնում փը-
ռուած յարդի վերայ պառկեց, աչքերը խփեց և քաղցր ու խաղաղ
քնի մէջ մտաւ։

Նորան մի հրաշալի տեսիլ երևաց։—Տեսաւ նա, որ, որպէս թէ, ինքը պարկած է մի զմրուխտային մամուռի մահիճի մէջ—փափուկ քան ամենանուրբ թաւիշ, որ իր շուրջը ամեն տեսակ անուշաբոյր ծաղիկներ էին կանաչել, որ իր շարքում իսկ նստած էր մի ձիւնափայլ, փայփլուն կերպարանք, որը անփուշ վարդերի մի պսակ էր հիւսում,—իսկ այդ վարդերը որքան գմայլելի էին։—Ուրեմն ես,—շշնջաց նա,—ո՞ր մի դիւթական կողմերում։ Եւ հրեշտակային պատկերը, նորա շարքում նստած, թովիչ ձայնով պատասխանեց.—Դու փոթորիկների մէջից դէպի պատսպարան ես դուրս եկել. երկար օրերի տանջանքներից ետ, մենք համոզեցինք քեզ այստեղ գալ. հանգստացիր այժմս և հրճուիր,—դու Կայսերական ճեմելիքի պարսպի մէջ ես։

Դեռ նորա ականջներում հնչում այդ խօսքերով, զարթնեց նա և՝ արթնանալով՝ մի տեսակ անբացատրելի անուժութիւն զգաց։ Միանգամից թուլացաւ նա. բանտի պատերը՝ թւում էր՝ տատանւում էին այս ու այն կողմ—ինչպէս երկրաշարժի ժամանակ և լուսընկայ լոյսի շողքը, շեղ ընկնելով նեղորակ բացուածքից, ինչպէս հրային մտրակի հարուած, նորա աչքերն էր կտրում ու ծակում։ Մի ինչ որ ծանրութիւն և ցուրտ ճնշում էր նորա սիրտը. կոկորդը ջղաձգութեամբ սեղմւում էր. ծանր տանջանքի ազդեցութեան տակ, նա իրեն ստիպեց ոտքի կանգնել, թէպէտ և հազիւ հազ էր կանգնում ու սուղ երբեմն շնչում։ Արիւնը այրուող ու այրող ալիքներով նորա բոլոր երակներով քշուեց, ապա միանգամից սառոյց կտրեց. նորա սրտի ծանրութիւնը անյայտացաւ, նա դողում էր բոլոր անդամներով։ Այդ յանկարծակի ֆիզիքական ցաւի ազդեցութիւնից խորտակուած, նա գլուխը կրծքի վերայ թեքեց, պատին կռթնելով, որ վայր չը ընկնէ, ապա ծանր ծանր շունչ քաշել սկսեց և... յանկարծ անսպասելի գերբնական լոյսը, ինչպէս հեղուկ ոսկու թափուող առուակ, ամբողջ բանտի խորշը կուրացուցիչ փայլով լուսաւորեց։ Նա աչքերը բարձրացրեց և սքանչացած աղաղակեց։ Դարձեալ, դարձեալ իւր միայնակ բանտարգելութեան մէջ, դէմք դէմքի իւր հետ Նազովրեցուն տեսաւ նա,—ճաճանչափայլ Կերպարանքը և լուսափիւռ Պատկերը նորա, Ով Վշտի Աստուածային Մարդ էր փառաւորուած, և որի ներկայութեամբ բոլոր շրջապատող խաւարը 'ի չիք դարձաւ։

Բարաբբան երկիւղածութեամբ իւր Աստուածային Յաճախորդին նայեց։

—Տէր, Տէր,—հազիւ լսելի շշնջաց նա, և դէպի Նա տարածեց իւր կաշկանդուած ձեռքերը։—Ես անարժանի մէկն եմ։ Ինչո՞ւ Դու դէպ՝ ինձ եկար։ Ես, Բարաբբաս, չեմ համարձակում Քեզ վերայ նայելո՞ւ։ Ես էի պարտաւոր մեռնել խաչի վերայ—ո՛չ թէ Դո՛ւ։ Ուղարկիր ինձ մի որևէ պատիժ կրելու տեղ, մի խաւար, միայնակ անապատ, որպէս զի ես կարող լինիմ այնտեղ մաքրուել մեղքից, եթէ կարելի է,—Քեզ վերայ դրուած իմ հաւատքի ուժով, իմ սիրոյս ոյժո՛վ։

Նա կանգ առաւ, ամբողջովին դողալով, իսկ Քրիստոս՝—թւում էր՝—ժպտում էր։

Մեծ ուրախութեամբ համակուած, նա տեսաւ, թէ ինչպէս Աստուածային Կերպարանքը դէպի նա թեքուեց։ Քնքոյշ ձեռքերը նորա վիրաւոր, կապկպուած դաստակներին հպուեցին, որոնք նորան ձգում էին միշտ մօտ և մօտ, ապա դանդաղ դէպի վեր, դէպի բարձըր և միշտ բարձր—այնտեղ, որտեղ ուրիշ օդ ու տարբեր լոյս կային, քան թէ աղքատիկ երկրիս վերայ... Դիւթիչ ձայնը շշնջաց.

—Ամենայն որ կենդանի է եւ հաւատայ յիս, մի՛ մեռցի ի յաւիտեան։ Ընդ իս իցես ի վայրկեա հանգստեան և յաւիտենիցն կենաց։

Լոյսը ընդլայնացաւ—անսահման երկնագոյն—ոսկեճաճանչ ծով կազմելով. բանտի խորշի պատերը, թուեց, տատանուեցին և լայնացան, անհամեմատելի գեղեցկութեան հրաշալի տեսիլքներ էին բուսնում, ինչպէս ծաղիկները՝ թափանցիկ անդունդի միջից. մի այնպիսի գերբնական երաժշտութիւն հնչեց, որ, երևում էր, թէ համայն տիեզերքը, բոլոր տարրերը զմայլած՝ նորան էր ուշադիր։ Դեռ ես ուժեղ ձեռքերից պահուելով, որոնք ձգում էին նորան, հիացած և շնորհակալութեամբ լի, Աստուածային աչերին նայելով, որոնք ժըպտում էին նորան 'ի նշան յաւիտենական ներման և սիրոյ, Բարաբբան ձգեց բանդը... և անսահման ազատութիւն գտաւ։

. . . .

Առաւօտեան վաղ, միւս օր, երկու մարդ հապճեպ դէպի բանտըն էին վայր իջնում։ Նոցանից մէկը բանդապետն էր, իսկ միւսը օտարական Մելխիորը։

—Ես թոյլ չը պիտի տամ, որ Բարաբբան խաչուի,—ասաց վերջինը։—Ես նորա փոխարէն պատասխանատու պիտի լինիմ և ինքըս իսկ դատաստանի ժամանակ պիտի պաշտպանեմ նորան։

—Դու վճռողաբար ես խօսում,—պատասխանեց բանտապահը,

իր թափանցիկ ակնարկի տակ գննելով նորան։ Բայց չը նայելով, որ քո մօտ ինքնակոչի մատանին կայ և Կայիափան թոյլ տուեց քեզ տեսակցել կալանաւորի հետ,—բայց այդպիսի ողորմածութիւնները կարող չը պիտի լինեն օրէնքի ընթացքը դադարեցնելու։

—Կարող է պատահել և կը դադարեցնեն,—անհամբերութեամբ պատասխանեց Մելխիօրը,—բայց օրինակատարները Երուսաղէմի մէջ կաշառուողներ են։ Ես գործ կը դնեմ ամեն մի միջոց, որպէս զի նորան փրկել կարողանամ։ Բարաբբայի սրտի մէջ շատ բարութիւններ են թագնուած։

Նոքա ներքին շինութեան հասան արդէն։

Բանդապանը շտապով սողակները հանեց և դուռը բաց անելով.

—Բարաբբա՛,—կոչեց նա։

Պատասխան չը կար։

—Բարաբբա, դուրս ա՛րի։

Դարձեալ լռութիւն։

Նա խոր քնած է,—ասաց բանդապետը, իր դժգոյն վառուող լապտերը ուղղելով, աւելի լոյս սփռելու համար։—Դուք պէտք է մտնէք ու արթնացնէք նորան։

Եւ իր առաջ լապտերը լոյս բռնելով, նա ներս մտաւ։

Մելխիօրը հետևեց նորան։

Բարաբբան պարկած էր յատակի վերայ, և ըստ երևոյթին, ննջում էր. նա խոր, անվրդով քնի մէջ պէտք է որ լինէր, բայց նորա կապուած ձեռքերը խաչաձև կրծքի վերայ էին դարսուած։ Մելխիօրը շտապով դէպի նա մօտեցաւ և թեքուեց առաջ։

—Բարաբբա՛.—դարձեալ կոչեց նա, բայց Բարաբբան իր լռութիւնը շարունակեց։ Լապտերի լոյսի ներկայութեամբ կարելի էր նորա մութ կոպտաձև դէմքը զանազանել, որը այժմ խաղաղ արտայայտութիւնն էր ստացել և իր կատարեալ գեղեցկութեան մէջ մտել. ծալուած շրթունքների վերայ մեղմ ժպիտ էր դրոշմուած. մի ինչ որ խորհրդաւոր ներշնչումն կար այդ կերպարանքի բոլոր ձևակերպութիւնների մէջ, որոնք մի այդպիսի հիմնական հանգստութեան տակ էին դրուած։ Նորա ծալած ձեռքերը և խփուած աչքերը յաւիտենական անվրդով հանգստութեան էմբլեմայի (նշանաբան) տեղ էին ծառայում, խաղաղութեան, որի յատակում գտնուում էր, ինչպէս և ծովայատակի խորքերում, այնպիսի մարգարտահատ, որի անունն է—ամենագիտակցութիւն։

Իր կարճ հետազօտութիւնից յետոյ, Մելխիօրը իր գլուխը

բարձրացրեց. խաղաղ, վշտաբեկ արտայայտութիւնը մթնեցրել էր նորա դէմքը։

—Մենք կարող ենք այլ ևս չը վճռել Բարաբբայի ճակատագրի վերաբերութեամբ,—ասաց նա ցածրացրուած ձայնով։—Ոչ ինքնակալների կնիքները, ոչ էլ քահանաների ազդեցիկ բնաւորութիւնը չը պիտի փոխեն նորան այլ ևս։ Մենք ուշացանք։ Ինչ տեսակ էլ որ լինէին նորա մոլութիւնները և յանցանքները,—նոքա ներուած են նորան. աւելի բարձր,—քան թէ մեր,—իշխանութիւնն ազատել է նորան։ Զգուշութեամբ դուրս բերէք նորան,—նա մեռած է։

ՎԵՐՋԱԲԱՆ

Օրը արդէն իւր վախճանին էր մօտենում, երբ երկու ճանապարհորդ մարդիկ միասին կանգ առան, Երուսաղէմի սպիտակ պատերի և Թագուցեալ այգիների վերայ մի վերջին ակնարկ ևս ձգելու համար։ Սքանչելի տեսարանի չքնաղ պատկերը դիտելով, նոքա,—միևնոյն ժամանակ—մօտակայ փոքրիկ սարի գագաթից հետևում էին թէ ինչպէս էր շառագոյն երկինքը իւր հրաշէառ ստուերը ձգում Սողոմոնի փառահեղ ճարտարապգործութեամբ յայտնի, տաճարի վերայ։ Նոքա կարողացան զանազանել թէ մութ, աւաղուտ անապատային Կալ'բարիոսի գագաթը և թէ հեռու ստորոտում Գեթսեմանի այգու խիտ ու կանաչ տերևները։ Նոցանից մէկը,—մի անսովոր հասակի և ամուր կազմուածքի տէր մարդ,—ծունդ իջաւ, ու լարուած և բուռն ցանկութեան արտայայտութեամբ, սկսեց դէպի Գողգոթայի կողմը նայել. Նորա աչքերը մի տեսակ զարմացական ընքուշ արտայայտութիւն ստացան, որպէս թէ այն մեայնակ բարձրութեան վերայ, որը—մայրմտոցի վերջին ճառագայթների տակ, վառուում էր փայլուն բոցով,—մի հրաշալի տեսիլ պատկերացաւ։ Նորա ընկերակիցը, որը ոչ այլ ոք էր, եթէ ոչ Մելխիօրը, շուռ եկաւ ու նորա զմայլած ակնարկը նկատեց։

—Դու տխրութիւն ես զգում, Սիմօն,—փափուկ ձայնով ասաց նա։ Քեզ համար ծանր է թուում այն երկիրը ձգել, որին Աստուած ընդ միշտ այցելեց։ Մի վշտանար, որովհետև Աստուած ընդ միշտ քեզ հետ է և Գողգոթան այլևս ոչ թէ միմիայն Հրէաստանին է պատկանում, այլ այսուհետև համայն լայնածաւալ աշխարհին։ Հրէաստանը մերժեց և չը ընդունեց Աստծուն, հէնց այդ իսկ պատճառով՝ նա ինքը պիտի մերժուած լինէ ու անտէս արուած։

Սիմօն Կիւրենացին—դա նա էր—գլուխը բարձրացնելով, դէպի վեր նայեց։

—Ա՛յո, դու ճիշտ ես,—ասաց նա,—թէ դորա և թէ միւս բոլոր բաների մէջ։ Բայց ես չը պիտի կարողանամ մոռանալ ու չը յի-

չել, թէ ինչպէս ես այն լեռան վերայից խաչը տարայ։ Խօսքերը չեն
կարող այն մխիթարութիւնը արտայայտել, որ զգացի ես, այդ ինձ
վերայ դրուած գործը կատարելով, նոքա չեն կարող հասկացնել այն
հրճուանքը, որը իւր բոլոր ուժով պատել էր ինձ։ Բայց աւելի ես
հրաշալի էր խաչի բարձրացումը։ Ինձ պարզ երևում էր, որ ես աշ-
խարհիս փրկութիւնն էի բռնե՛լ։ Ես չեմ կարող դորա մասին խօսել
—միակ յիշողութիւնից իսկ՝ դողում է հոգի՛ս։ Եւ նորից նորա Երե-
սըն եմ տեսնում ես, նկատում եմ Աստուծոյ Դէմքը, զննում եմ
Մարտիրոսի Պատկերը, որը ժպտաց ինձ՜...

Մելխիօրը ոչինչ չը ասաց, նորա մտայոյզ աչքերը մի շարժ-
ժայռերի վերայ դարձան, որոնք հարթայարմար գետնի վերայ փը-
ռուելով, քաղաքից դէպի ձախ էին ընկնում և որոնք՝ ըստ ոմանց՝
«Գերեզմանատեղի» էին կոչւում, շնորհիւ իրենց մէջ փորուած բազ-
մաթիւ քարայրերի և գերեզմանների։

— Ահա այնտեղ,—փոքր ինչ լռութիւնից յետոյ՝ ասաց Մել-
խիօրը,—ննջում է Բարաբբան, ո՛րի մասին խօսել եմ ձեզ հետ, հէնց
այնտեղ, ուր միայնակ արմաւենին իւր համարեա թէ թառամած
ոստերն է խոնարհում։ Ես միայնակ թաղեցի նորան,—Երուսաղէմում
նա ոչ մի ընկեր չունէր, չը նայելով այն հիացմունքին, որ ցոյց
տուեց նորան յիմար խառնիճաղանճը իւր բանտից ազատուելու օրը։
Դա մի մեղաւոր, տխմար հոգի էր, բայց ոչ առանց մի տեսակ ազ-
նուութեան, մարդկային կասկածոտութեան տիպարն էր նա, որը
դէպի ճշմարտութիւնն էր ձգտում. ինձ այնպէս է երևում, որ հէնց
այդ ընթացքի շնորհիւ և 'ի սէր իւր դէպի արդարը հետաքրքրու-
թեան՝ նա թէ թողութիւն գտաւ և թէ—հանգիստ։

Նա լռեց, ապա յարձեալ սկսեց.

— Կիւրենացի. դու խաչը տանելով ուժ էիր ստացել. այդ
նպատակը կատարելով, դու թէ հաւատ գտար և թէ—փրկութիւն։
Բայց այդպիսի և այդքան յանկարծակի և զարմանալի երջանկութիւն
բոլորին բաժին չէ ընկնում և մարդկութիւնը՝ ընդհանրապէս՝ թոյլ է։
Մարդկութիւնը իրեն սակաւ է զոհում՝ 'ի սէր Աստուծոյ և ամեն մի ծանր
բեռնից հրաժարուում է։ Դու, որ ներկայումս հրաժեշտ ես տալիս
թէ, տանդ և թէ ազգականներիդ, Կիւրենական գաւառի պտղաբեր
հովիտների փոխարէն, ինքդ քեզ ազատ ծառայելու տեղ,—միմիայն
Աստծուն նուիրուելդ ես գերադասում,—դու իմաստուն ես, բայց ոչ
ժամանակի ընթացքի համեմատ, և դու շուտով այն բոլոր բաները
պիտի գտնեսա, որոնց հասնելու համար, այն ոչ հոգեպէս սահղ-
պիտի գտնենաս, որոնց հասնելու համար, այն ոչ հոգեպէս սաեղ-
ծուած աշխարհիս մէջ, դեռ շատ երկար դարեր պիտի պահան-

ջուրն։ Առաջնալր եկաւ և պատուէրը դրուած է արդէն։ Առաջումն յանձնուած և օրինակը պատկերացրուած է։—Քրիստոս խաչեցաւ և յարեաւ 'ի մեռելոց, նշանաբանի տեղ կանգնելով 'ի սէր այն ճշմարտութեան, որ բարին ընդ միշտ չարի վերայ պիտի յաղթանակ ցոյց տայ. բայց—և այնպէս—դեռ երկար ժամանակ պիտի անցնէ, մինչ այդ Աստուածային Կատարելագործութեան դասը ըմբռնեն մարդիկ և իրենք ևս այդ օրինակին հետևին։

Սիմոնը, չոգած տեղից բարձրանալով, մի տեսակ հետաքրքրութեամբ, խօսեցողի վերայ նայեց։

—Ինչու պէտք է այդքան երկար ժամանակ անցնէ.—հարցրեց նա։—Դու շուտ իմացար Քրիստոսին։ Կամ Թէ դու մի ուրիշ տեսակ գաղտնիքների տէր մէկն ես, քան Թէ բոլոր մարդիկ։

Խոստովանորէն ասածս և այդ հարցի վերաբերութեամբ խօսածս՝ խաբուսիկ պարծենկոտութիւն պիտի լինէր,—կամկարութեամբ պատասխանեց Մելխիօրը,—բայց՝ միևնոյն ժամանակ՝ ես չեմ կարող և խօսել Թագուած բաների մասին։ Բայց—և այնպէս—մի բան ես կասեմ քեզ։—Երիտասարդ հասակիս մէջ ես Թագաւոր էի, այո,—մի զարմանալի Քրիստոսի Բեթղեհէմում ծննդեան ժամանակ, ես մի տեսիլ ունեցայ. այո, երազ տեսայ ես, և ահա իմ դէմ մի հրեշտակ էր կանգնած, նա ասաց ինձ. «Մելխիօր *), վեր կաց, Թագաւորութիւնից առաջին հրաժարուողը եղիր։ Դէպի Բեթղեհէմ գնա, Յուդայի երկիրը գնա,—այնտեղ դու Աստծուն կը գտնես՝ Նորածին Մանկան կերպարանքով, աշխարհիս Ժառանգորդին, որը աշխարհիս բոլոր ազգերին 'ի մի պիտի Ձուլէ, նոցա իրար հետ անքակտելի կապով միաւորելով, և Մարդկութիւնը Երկնքի հետ պիտի շաղկապէ

*) Մինչ այստեղ խորհրդաւոր «Մելխիօր» անունը մենք չը մերկացրինք, որ ընդ մեզ կոչի «Մելգոն» և Փրկչին Բեթլեհէմի մէջ այցելող մոգերից մէկն էր։ Ըստ վկայութեան Բարսեղայ Մեծի, Յովհաննէս Ոսկեբերանի և Կիպրացի Յոստինայի այդ մոգերը Թագաւորներ կամ մեծ իշխաններ էին՝ Պարսկաստանից կամ Արաբիայից եկած։—Մելքոմը—ծեր, Սէմի ցեղից, Յիսուս Քրիստոսին ոսկի բերեց ընծայ, ինչպէս՝ Թագաւորի. միւսը—Գասպար, անմօրուս, պատանեակ՝ վարդագոյն դէմքով, Քամի ցեղից, կնդրուկ մատուցեց, ինչպէս Աստուծուն. երրորդը—Բաղդասար, տանական առաջին հասակում, Թխադէմ, Յաբէթի ցեղից, առաջարկեց՝ զմուռս, որպէս Փրկչի։ Ըստ աւանդութեան նոքա մկրտուած և սրբերի կարգն են անցած (календарь Сытина)։—Իսկ հայր Գ. Վ. Այվազովսկին իւր «Վարք Քրիստոսի» աշխատասիրութեան մէջ այդ դէպքը այսպէս է նկարագրում. «Որք իմաստունք, են ըստ վաղեմի աւանդութեան՝ Թագաւորք կամ իշխանք՝ եկեալք ի Միջագետացն Հայոց կամ Ասորւոց, և կամ յԱրաբիոյ։ Աւանդի և երիս լինել մոգունսն և կոչել Նոցա Մելքոն, Գասպար և Բաղդասար։ Ծանօթ. Հայ. Թարգմ.

Իւր Յաւիտենական Անուան պայծառութեամբ»։

Նա կանգ առաւ, իւր սեփհական յիշողութիւններից զմայլած ու տարուած։

Սիմոնը ապշող և գիւԹուած՝ լսում էր։

—Հրեշտակը անյայտացաւ,—շարունակեց Մելքոմը (Մելխիօր),—և ես նոյն վայրկեանի մէջ վեր Թռայ, գնացի և չը յապաղեցի ճանապարհին, մինչ Բեթղեհէմ հասայ։ Բեթլեհէմում ես իմ պսակը Մարիամի Մանուկի ոտքերի տակ դրեցի և Նորա անունով ճշմարտութեան երդում կնքեցի։ Ես հետևեցի Նորան՝ օրրանից մինչև խաչը. իսկ ներկայումս ես Նորա շաւղով պիտ ընթանամ բացուած գերեզմանից մինչ դրախտի բացեալ դուռը։

—Եւ ես քեզ հետ,—մի տեսակ զմայլեցուցիչ խոնարհութեան մէջ՝ աղաղակեց Սիմոնը։—Ես, երեխայի նման, հպատակ կը լինիմ, և խոնարհութեամբ՝ գետնից այն բոլոր միջոցները կը սովորիմ, որոնց միջոցով պէտք է գործել։

—Ո՛չ, ես ոչինչ չեմ կարող սովորեցնել քեզ,—ասաց Մելքոմը՝ քնքուշ ձայնով։ Դու խաչը կրեցիր և մինչև Կալ՛վարիոս բարձրացրիր ու տարար, դու Քրիստոսին ընդգրկած ունէիր, մնացեալները ինքնաբեր կը բացուին քեզ համար։

Եւ նա իւր ակնարկը դարձեալ անդորր քաղաքի վերայ ձգեց, որը երեկոյեան Թեթև մշուշով էր ծածկւում. արեգակը արդէն մայր էր մտել։

—Եթէ դու գէթ սոյն օրից գիտենայիր Քրիստոսի խօսքերի իմաստը,—Երուսաղէմին դառնալով՝ կրկնեց նա իւր սովորական խօսքը։ Աւա՜ղ։ Եղո՜կ։ Ձատերը անկրթութիւնը գիտութիւնից բարձր են դասում, իսկ խաւարը՝—լոյսից վեր։

—Դու այն մոլորած մարդկանց վերայ ես խօսում, որոնք Աստուածութիւնը անտես արին.—հարցրեց Սիմոնը։—Բայց—հաւանական է—Նոքա բոլորն էլ պիտի համոզուին շուտով, բոլորն էլ—մինչև անգամ և Կայիափան։

—Միամիտ մարդ, անմեղ հոգի,—պատասխանեց Մելքոմը,—միթէ կարծում ես դու, որ ստախօսն երբ և իցէ խոստովանում է ճշմարտութիւնը։ Դա անբնական հրաշք է։ 'Ի սէր Կայիափայի՝ մատնիչութեան բիծը մնաց Յուդայի վերայ պիտի մնայ յաւէտ 'ի չնորհրս Կայիափայի Աստուածային Յարութիւնն անգամ անգոսնութեան առարկայ պիտի դառնայ. նոյնիսկ Կայիափայի ձեռք առած միջոցների հիման վերայ, հրէական պատմագրութիւնների միջից Քրիստոսի անունը անգամ պիտի աշխատեն վանել կամ այլ մեր

թիւր բացատրութիւն տալ։ Յիշիր այս և լաւ մտադիր եղիր։ Աստուծոյ քահանայ կոչուած սպասաւորը,—Աստուծոյ Առաքեալին խաչեց։ Այդ քեզ պիտի օգնէ դեռ շատ բան հասկանալ ապագայում։

—Արդեօք գիտես դու,—յանկարծ հարցրեց Սիմոնը,—որ Պետրոսը Բեթանիայի կողմերից վերադարձել է և այժմ համարձակ քարոզում է Խաչուած և Յարութիւն առած Քրիստոսի Աստուածութիւնը։

—Նա քարոզում է արդէն.—հարցրեց Մելքոմը, որի ձայնը վշտի ազդեցութեան տակ՝ դողաց.—Ես գիտէի այդ։—Նա—վերջապէս—վստահութիւն ստացաւ դորանով աքնում է իր մեղքերը քաւելու։ Նա տարօրինակ ճակատագրի տակ է ծնունդ առել, քան զի աշխարհիս կէսն այնպէս պիտի հաւատայ և ըմբռնէ, ինչպէս կը սովորեցնէ նա,—ով իր Ուսուցչին ուրացաւ։

Եւ խորին հառաչանքով նա իր ակնարկը կտրեց քաղաքից և շուռ եկաւ։

—Այդ Աստուծոյ նշանաբանական ուսմունքն է,—աւելացրեց նա,—որին մեզնից շատ քչերն են ընդունակ հասկանալու։ Այն Գողգոթայ լեռան վերայ, որից դու, Սիմոն, չես կարողանում զատել քո հիացական ակնարկը, աշխարհիս միակ եղբայրութիւնը խաղացուեց,—եղբայրութիւն սիրոյ և ողորմածասիրութիւն, զոհուած մարդկային չարութեան համար։ Բայց սէրը և ողորմածութիւնը—անմահ են, իսկ անմահութիւնը ընդ միշտ պիտի յաղթէ. հէնց այդ պատճառով մենք առաջիկայ օրերում մեր արիութիւնը չը պէտք է կորցնենք և փայլուն երջանկութիւնը մոռանանք։ Հաւատքի բազմաթիւ տեսակներ ու ձևեր առաջ պիտի գան, շատ և շատ դաւանանք երևան եկնեն, որոնց մէջ և ոչ մի կայծ չը պիտի լինի ներկայիս յայնածաւալ Աստուածային ուսմունքի, բայց և այնպէս, մենք Քրիստոսի ուսմունքով պիտի ընթանանք, և, չը նայելով մեր դէմ յարուցուած բազմաթիւ կասկածանքների, այնուամենայնիւ, մենք չենք մոլորիլ։ Եւ ո՛չ մի փորձութիւն չը պիտի նեղէ մեր երկնակերտ ուղին,—բայց ուշ է արդէն, գնանք, աշխարհիս առաջին թափառական քրիստոնեայ, գնանք, քայլենք միասին։ Օ՛ն, դէպի առա՛ջ։

Նոքա սարից վայր իջան։ Դանդաղութեամբ քայլեցին նոքա հովիտի միջից, դէպի աշխարհիս գաղտնախորհուրդ կողմն—Եգիպտոս դիմելով, որտեղ մեծափառ բուրգերը դէպի կապուտակ երկինքըն են բարձրանում, և խորունկ Նեղոսը խորհրդաւոր կերպով մոռացուած աստուածների մասին է շշնջում։ Նոքա գնում էին դեռ մայր մտած արեգակի վարդագոյն փայլով լուսաւորուած ուղիով,

տակաւին և ոչ մի անգամ իրենց շուրջը նայելով։ Տակաւ տակաւ նոցա կերպարանքը փոքրացաւ պատկերները նսեմացան, և՝ ապա՝ բոլորովին անյայտացան նոքա։

Երուսաղէմի վերայ շուտափոյթ մութ գիշերը ընկաւ, մռայլութեամբ տարածուելով, ինչպէս առաջիկայ փոթորկի և անդանդաղ աւերման սպառնալից ստուեր. որոտմունքը լսւում էր հեռաւորութեան մէջ, և միմիայն մի հատիկ ու միայնակ դժգոյն աստղ երկչոտութեամբ նայում էր երկնքից, իր աղքատիկ փայլը «Գերեզմանատեղիի» վերայ ձգելով, որտեղ, թարշամող արմաւենու տակ, անդորր ու խաղաղիկ, հանգչում էր Բարաբբան։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Տեսութիւն հայ թարգմանչի՝ Մարիա Կորէլլու «ԲԱՐԱԲԲԱ» վէպի առթիւ։

Նպատակ եւ գործ։ Մեր առաջ բազմաշնորհ կնոջ մի գեղեցկակերտ ձեռագործութիւն է դրուած, որը, հաւատի հաստատուն առէջքի վերայ, ճշմարտութեան ջինջ հիւսուածքով, երկնային հաւատքի լուսափիւռ պատկերն է ներկայացնում, որի պարգեւիչ Փրկիչը՝ մի կողմից—Հէկէլի, Ձարաւսի, Թենանի, Փոգտի, Մոլեշոտի, Տոլստոյի նման հազարաւոր գրական տիտաննեըի, իսկ միւս կողմից—Յովհաննէս Աւետարանչի, Ներսէս Շնորհալու, Իրինէոսի, Օգոստինոսի, Աթինագորոսի, Տերտուլիանոսի, Փարրարի, աբբայ Գեստէյի նման բիւրաւոր երկնաձիր հանճարների մէջ, ծայրայեղ հակառակութեան պատճառ է դարձել։

Այդրէն իսկ պարզ է, որ այլ եւս դժուարատոկ, բազմահաւաք ու խռովայոյզ և—միևնոյն ժամանակ—վսեմախոհ, դժուարավէճ ու փափագելի նպատակ, քան բարոյականութեան սիրտ կազմող կրօնը,—չը կայ։

Այդ բուն պատճառների հիման վերայ, «Բարաբբայի» ընտրած նպատակը օրինակելի և տաղանդաւոր հեղինակուհի՝ Մարիա Կորէլլու՝ նոյն գործքը սաժանելի գտնելով,—մենք դէպի այդ բեղմնաւոր աշխատասիրութիւնը, խորին յարգանքով պիտի վերաբերուենք։

Նիւթ: «Բարաբբայի» նիւթը Աւետարանն է, որը մի այնպիսի երփներանգ գոյներով և վառ տեսութեան ճշգրտապատում նկարագրութիւններով է պատկերացնում Փրկչի փշալից, բայց արդարութեան յաւիտենական յաղթանակը տարած, կեանքը, որ մարդ սքանչանում է—թէ նորա ոճի հիանալի դասաւորութեան, թէ զգացմունքի նրբազնին հայեցողութեան և թէ խորիմաց նիւթի զարմանալի կերպով 'ի կատար ածելու ընդունակութեան վերայ։

Վստահութիւն ունենալ սկզբմունքի այն դրօշը ճօճելու, որի տակ Սենկեւիչ, Գուցկով, Բերսիէ, Վոլթէր, Էմիլ Զօլա. մէկ մէկու դէմ գրական պայքար ու լքումն կը մղեն—ինքնին մի մեծ բան է։—Համարձակութիւն ունենալ «Ցմ երթասի», «Ուրիէլ Ակոստայի», «Լույդ, Հռովմ, Փարիզի» մօտ «Բարաբբան» ևս դնելու, պարզ ապացոյց է, որ մի այդ տեսակ դժուարար գործի ձեռնամուխ լինողը՝ վստահութիւն պիտի ունենայ իւր վերայ. 'ի հաստատութիւն որի, ահա՝ նա այնքան յաջողութիւն է գտնում, որ սկսում է այլ և այլ լեզուներով թարգմանուել,—կենդանի ապացոյց կազմելով գործչի մի այնպիսի գրականական սահմանի մէջ մտնելուն, որին պաշտպանական ու իրենց կատարեալ կարծող մարդկանց մերձենալը արգելուում է այլևս։

Հազար ու մի Պղատոն, Պիրրոն, Փիլոն, Ժան Ժակ Ռուսսօ, Դանտէ, Կանտ, իրենց գործունէութեան համար, ինչ մի աւելի մեծ սկզբնապատճառ պիտի ընտրէին, որը մինչդ տար նոցա Աւետարանական՝ «Զամենայն զոր միանգամ կամիջիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք արարէք նոցա. զի այն իսկ են օրէնք եւ մարգարէք» ամենակատար սկզբմունքից դուրս գալու եզկելի փորձին դիմել։—«Թափառական Հրէայ» ու «Թշուառներ» առաջարկող Եօժէն Սիւ կամ Վիկտոր Հիւգօ, իրենց նմաններով, երբ նպատակ են ընտրել տառապեալներին պաշտպան լինելու, պարզ է, որ չը պիտի յանդգնէին՝ «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ. առէք զլուծ

ըմ ի ձեզ, եւ ուսարուք յինէն՝ զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց. զի լուծ իմ քաղցր է, եւ բեռն իմ փոքրոգի»—Փըրկչի ափոփանքի գէթ չնչին մասնիկը առաջարկելու:

Գրական տիտան Էմիլ Զոլայի ներկայիս չորս աւետարան կազմող՝ «Բեղմնաւորութիւն, Աշխատանք, Արդարութիւն, Ճշմարտութիւն» ստուար ու խորաքննին հատորների տեսութիւնը եթէ Աւետարանի պարզ և ամփոփ՝ «հաւատք, յոյս, սէր»-ի հետ բաղդատելու լինենք, կը տեսնենք, որ ներկայիս չորս աւետարանը յաւիտենական երկնապարգև Աւետարանի մէջ մի աննշան ճիւղի, օրինակ Փրկչական կենդանի օրինակով պսակուած անձնուիրութեան մէջ ամբողջովին մտնելով,—դեռ ևս թերի և ըստ պատկանելոյն ուսումնասիրուած ու կատարելագործուած չէ: Իսկ անձնուիրութիւնը՝ հաւատքի, կամ սիրոյ ամենապարզ մասն է կազմում:

Ինչպէս մենք, Մահմէտի կեանքը ուսումնասիրելով, առանց աղանդագիր «Ղուրանի» ըստ պատկանելոյն գնահատում ենք և Ղուրանը, որը արժանի արգասիք է այն գործքերի և նպատակի, որ ընտրել է Մահմէտը. ինչպէս մենք աղանդագիր Ղուրանից աւելի շատ Մահմէտի կենսագրութեանն ենք դիմում, նորանով Ղուրանի հանելուկները պարզելու,—նոյնն է և «Բարաբբան» այն ոչ քրիստոնեայ մարդկանց համար, որոնք Աւետարանից, ինչպէս մի կրօնական գրքից, մի տեսակ խուսափում են, որոնց սխալը «Բարաբբան» իսկ շտկում է:

Բարաբբայի նիւթը, մեր նկարագրած շրջանակի մէջ հաստատուն գտնելով, մենք լիովին իրաւունք ունենք պնդելու, որ այդպիսի լայն սկզբմունքի վերայ հիմնուած մի գործ, անշուշտ բազմակողմանի, վսեմ և փափագելի է ամեն մի խաւի և դասակարգի մարդկանց համար, որի վերայ ընթերցողների լուրջ ուշադրութիւնը գրաւելով հանդերձ,—մենք կանգ ենք առնում:

ՌՃ: Ինչպէս առանց լքման, վշտի ջինջ մարգարիտներ չեն թափւում, կամ խորտակուած քնարով մեղեդի չեն նուագում,—նոյնպէս առանց գեղգեղուն լեզուի ու փափուկ ոճի—գրական գործիչը զինաթափ է: Անուրանալի փաստ է, որ շատ հեղինակներ հռչակ են ստանում սոսկ իրենց լեզուի ներդաշնակութեան ու բառախաղութեան շնորհիւ: Կան այնպիսի գրողներ էլ, որոնք պատիր նիւթն անգամ սահուն ոճի ազդեցութեան տակ առաջ են տանում:

Պօլ Բուրժէն վկայում է, որ Ռենանը իւր այնքան առաջադիմութեամբ, գլխաւորապէս իւր ինքնուրոյն ու սիրուն ոճին է պարտական: Նոյնը վստահ կարելի է ասել և Կոմս Տոլստոյի վերաբերութեամբ: Մինչև անգամ մեր առօրեայ վիճաբանութեան մէջ նոյնն ենք տեսնում: Ճարպիկ և քաղցրախօս լեզուն, շատ անգամ, ճշմարտութեան զէնքով պատսպարուած, բայց անուշ խօսելու ընդունակութիւնից զուրկ հակառակորդին՝ զինաթափ է անում: Այդպիսի մարդկանց մենք «լեզուակօխ» անող ենք անուանում: Մեր մէջ գրական ասպարիզում գործողներին մի տեսակ ըմբիշների տեղ են ընդունում. ով ճռճռան ոճ ու մեծ մեծ խօսքեր կը շռայլէ,—յաղթանակութիւնը նորա կողմն է թեքւում:

'Ի հարկէ՝ մեր ասածները ոճի այն անպայման գեղեցկութեան չեն վերաբերւում, որը իրաւացի պահանջւում է գրականութեան զինուորից, և որը անհրաժեշտ է Շէկսպիրի, Գեօթէյի, Լեսսինգի նման բանահիւսներին և Բալզակի, Շատօբրիանի ու Գիւ դը Մօպասանի պէս վիպասաններին՝ հռչակ ստանալու համար:

Մասնաւորելով մեր խօսքը, գանք այժմ համեստափայլ Մարիա Կորելլու ոճի ուսումնասիրութեան:—Ինչպէս քնքուշ ու զգայուն մի կին, հարկաւ, նորա ոճն ևս նոյնը պիտի լինէ, բացի մի քանի գեղեցկապաճոյճ առանձնայատկութիւններից ևս: Ինքը՝ Մ. Կորելլին շատ սուր և ամփոփ է խօսում, իսկ խօսելիս զգալ է տալիս այն, ինչ վաղուց արդէն պատրաստուած է ըմբռնելու: Ամենակարճ նա-

խաղաւութիւնների մէջ անգամ շատ լայն բացատրութիւն է պահուած, իսկ երկար նախադասութեան տաղտկացուցիչ բնաւորութիւնը մեղմացրած և սքանչելի իմն կերպով ձեւակերպուած է։ Իսկ եթէ հայերէն թարգմանութեան մէջ շատ և շատ թերութիւններ կան, այդ բոլորը,—առանց կարմրելու,—մենք, ինչպէս հայ թարգմանիչ, մեզ վերայ ենք առնում, այդ նկատմամբ մեր անձնաւորութիւնը անուանարկողների դէմ արդարանալու իրաւունքը եւ՛ մեզ վերապահելով, որոնց մասին յետոյ։ Իսկ այժմ «Բարաբբայի» ոճի նկատմամբ մի քանի նմուշներ տանք միայն։

Խելակորոյսի տպաւորութիւն թողնող Յուդիթի Էօրասոյդ ողբը ու-խարազններին կանացի վստահութիւնը, Գանանի դառն տանջանաց ու քամենեցուցիչ հոգեվարքի նկարագրութիւնը. հոմանի Կայիափայի Յուդէթով իսկ նկարագրած տենչանքը, Մագդաղենացու ինքնուրոյն դերը, Սուրբ Կոյս Մարիամի լռելեայն ու խորհրդաւոր տեսքը, Յուսափգիայի անման և բազմախորհուրդ երազը,—այդ հռովմէական հպարտ մատրօնայի իր ցեղին յատուկ վստահութիւնը, Պիղատոսի երեւակայական տառանումն, վէճի բնուողների տարակուսական ու գաղտնամիտ ենթադրութիւնները, Պետրոսի մոմռումն, խղճի խայթը, անսանձ վստահութիւնը, Մելխիօրի փիլիսոփայական դարձուածքները, բուն ներողամիտ քրիստոնէական ոգին, Բարաբբայի և Սիմօն Կիրենացու տակա առ տակաւ հաւատքի զօրանալը ու վստահութիւնը, Փրկչի երկնային հեզութիւնը ու լռելեայն չարի հետ մաքառումը, վերջապէս բոլոր գործող անձանց տիպերի վեհութիւնը և մանրակրկիտ ուսումնասիրութիւնը համարեա թէ գրքի ամեն մի երեսում աչքի է ընկնում,—ուստի մենք վստահութեամբ կարող պիտի լինինք ասելու, որ Մարիա Կորելլին մի այնպիսի ոճ ու լեզու ունէր, որ Տէնի ու Ֆլօբէրի նման քննադատներ՝ Լամարգին և Տորկուատո-Տասսոյից պիտի պահանջէին։

Տիպ եւ հերոսներ։

Իւրաքանչիւր վիպասան բազմաթիւ տիպ ու հերոսներ է թողնում, բայց միթէ նոքա՝ այսպէս ասած՝ բնական և գրականական անսպառ աղբիւրի բիւրաձեւ առուակներն չեն կազմում. եթէ կոմս Տոլստոյ կամ Էմիլ Զոլա, իրենց յատուկ գաղափարների տակ, ինքնուրոյն հերոսներ ունին,—ապա ինչո՞ւ պիտի խարդախ քննադատներն մէկին կամ միւսին անուանարկեն՝ այս կամ այն տիպը արդէն եղածից ընդօրինակելու համար։ Բայց «Բարաբբան» այդպիսի թիւրիմացութիւններ չէ տալիս մեզ. նա, սուրբ գրքի անյաղթ պատնէշի տակ պատսպարուած, այնպիսի մի աւետարանական տիպ ու հերոսներ է տալիս, որոնք իրենց ճշմարտութեամբ ոչ ոքի չը պիտի խաբեն։

Մարիա Կորելլին Էմիլ Զոլայի նման «Ռուգօն-Մակկարական» էպօպայի հրատարակութիւն չէ տալիս և ոչ նա Գիւ դը՝ Մոպասանի ներկայ կեանքի աւետարանն է ստեղծագործում,—այլ նա մի համեստագոյն և գործօն կին է, որը երկնային հաւատքի անեղերական դրօշի տակ է գործում. հարց է, ո՞վ աւելի պէտք պիտի գայ մարդկութեան՝—բոլորիս տներն էլ Բուգերօյի բնագիր մադօննան չէ կարող զարդարել, մինչդեռ նկարչական ճաշակը ամեն ոք իւր ոճանն գնահատել և ըմբռնել գիտէ։

Այնպիսի գրական գործիչներ էլ կան, որոնք կամակորութեամբ, հատոր հատորի ետեւից տալով, մի տեսակ բանի ներշնչման տակ՝ գերում են ընթերցող մարդկանց, մինչ գրողի անունն և հանճարի հռչակ կը ստանային, որոնք նախ իրենց տոկունութեամբ, իսկ ապա—անունով աւելի և աւելի յայտնի են դառնում և իրենց նմանների գլուխն անցնում, որոնք ընդ միշտ մէկ մէկու ծայրայեղ հակապատկեր կազմելով հանդերձ, ինչպէս Վօլտեր և Ռուսսօ,—երկուսեք եւ անմահանում են. Մարիա Կորելլին այդ տեսակ հանճար էլ չէ և չի էլ կարող լինել. նա ինքնուրոյն ոչինչ չունէ,—նորա «Բարաբբան» Աւետարանն է, բայց՝ այսպէս ասած՝ տարբեր դասաւորութեամբ։

Գրողներ էլ կան, որոնք հռչակ են ստանում ուրիշների հարուստ երևակայութեան սեթևեթ կարծիքների շնորհիւ. Դանտէ կամ Գեօթէ գուցէ մտքի այն հանելուկային դարձուածքները չունէին, ինչ որ վառ երևակայութեան տէր մարդիկ են պատկերացնում իրենց մէջ ու աստուածացնում նոցա: Կորնելլուն դոցա շարքին դնել ևս չէ կարելի, քանի որ նա հանելուկներով խօսելու կարիք էլ չունէ, մինչդեռ ճշմարտութիւն քարոզող Աւետարանն իրեն նեցուկ, իսկ Փրկչի յանուն արդարութեան ինքնակամ զոհուելն՝ ապացոյց՝ ունէ:

Տեղի սղութեան պատճառով, այս մի քանի՝ գէթ մեզ համար ճիշտ՝ ենթադրութիւններից հետոյ, գանք «Բարաբբայի հերոսներին»:

Սոյն գիրքը «Բարաբբա» խորագիրն է կրում, ուրեմն և այդ հերոսը աւելի վաղ պիտի մեր ուշադրութիւնն գրաւէ, բայց մինթէ կարելի է այդ:—«Բարաբբան» մենք ենք, մեզնից իւրաքանչիւր մի անհատ, ամեն մի քրիստոնեայ, հաւատքի թիւրիմացութեան և մոլեռանդութեան ծովի մէջ ընկղմուած: Եթէ կամենանք մանրամասնաբար ուսումնասիրել Բարաբբայի տիպը, պիտի բոլոր՝ Փրկչին ապաւինած՝ անհատներին քննադատենք և այն մէկիկ մէկիկ—անկարելի է այդ: Միևնոյն ժամանակ Բարաբբան աւետարանական Թոմասն է, որը «...եթէ ոչ տեսից 'ի ձեռս Նորա զնշան բևեռացն, և արկից զմատունս իմ 'ի տեղիս բևեռացն. և մխեցից զձեռս իմ 'ի կողս Նորա, ոչ հաւատամ» է կոչում և ... աւելին տեսնում, քան թէ Թոմաս ու էլ աւելին լսում, քան թէ՝ «... բեր զձեռս քո՝ և մուխ, և տես զձեռս իմ. և բեր զձեռ քո. և մխեա 'ի կողս իմ. և մի լինիր անհաւատ, այլ հաւատացեալ»: Իսկ մենք, ընթերցող, մենք՝ «Բարաբբաներս», այս բոլորը գիտենալով հանդերձ, դեռ ևս թերահաւատ չենք. այնու ամենայնիւ Զոլայի, Ռենանի, Տոլստոյի վայրիվերոյ ենթադրութեան աւազի վերայ հիմնուած պատնէշից, Էմիլ Լիտտրէի հէնց իւր ձեռքի մէջ ջախջախուած զէնքով, Փրկչակերպ յաւէտ կան-

դուն տաճարին ձեռնամուխ չենք լինում... Ունայն բարբաջանք:

Մելխիօրի տիպը՝ Յովհաննէս Աւետարանիչն և ներկայիս անսայթաք հաւատացեալի պարզ պատկերն է: Իսկ Յովհաննէս Աւետարանչի մասին Ս. Օգոստինոսը իւր «Confessions» մէջ ասում է, որ նա Յովհաննու Աւետարանը միմիայն այն ժամանակ հասկացաւ, երբ պղատոնականների մի քանի ընդարձակ հեղինակութիւններ կարդաց: «Ես գտայ դոցա մէջ՝—ասում է նա՝—այն բոլոր մեծ ճշմարտութիւնները, թէ՝ ի սկզբանէ էր բանն. և բանն էր առ Աստուած և Աստուած էր բանն... որ նովաւ կեանք էր. և կեանքն էր լոյս մարդկան: Եւ լոյսն 'ի խաւարի անդ լուսաւորէ. և խաւար նմա ոչ եղև հասու, թէպէտ և այդ ուսմունքը այդ իսկ ոճով չէ դասաւորուած և բայց այդ, բազմաթիւ հաստատութիւններ է բերուած»: Ասելով, որ Մելխիօրը փիլիսոփայական և քրիստոնէական անհուն սիրոյ ճշգրտահան մի տիպ է, մենք չը պիտի սխալենք, եթէ 'ի նկատի ունենանք գրքիս երկրորդ մասի երկրորդ գլխից նորա հետևեալ խօսքերը, այնքան հռչակ ըստացած Պետրոսին ուղղած. «Իրաւ որ, Պետրոս, դու մարդկանց մի տարօրինակ իմն ձևով ես տալիս Աստուածային առաքումն»: Մելխիօրը անցեալ և ներկայ կեանքի թէ խորագնին գիտականն է, և թէ օրինակելի գաղափարականը:

Պիղատոսի երերուն տիպը և գործքը մտքին չը բռնելու ենթադրութիւնները պարզ են և հասկանալի: Միշտ և այժմ ամեն մի գործի գլուխ Պիղատոսներ են կանգնած, որոնք անելով այն, ինչ որ, իրենք էլ են զգում, որ չը պիտի անէին, այնու ամենայնիւ, որպէս թէ մարդկային օրէնքն 'ի նկատի առնելով, գործում են և պիտի գործեն, թէ իրենք տուժելով և թէ ուրիշ շատ անմեղների կորստեան պատճառ դառնալով:

Արժէ մինթէ խօսել քահանայապետներ՝ Աննա և Կայիափայի մասին, որոնք այլ իմն կերպ գործելու համար չէին ընտրուած և որոնց ալարտականու

թիւնն էր իրենց երեսուն դրօշակի տակ անվեհեր դէմ կանգնել ճշմարտի իսկ՝ աւելի մեծ ծառայով՝ տարածելու համար։ Ընդ միշտ ամէն ինչ մաքառման մէջ է։

Հռովմէական մատրոնա, գեղանիութեամբ ծըփծըփան Յուստիցիայի. երկչոտ, եղկելի՝ քստմնեցուցիչ, մահուան տանջանքով օժտուած, Դամանի, ընթերցողի առաջ երփներանգ գոյներով փայլող նախկին բոզ,—իսկ Փրկչի քաղցած անհուն ներմամբ, ներկայիս սուրբ, աւետաբեր Մագդաղենացու, իբր կենդանական ուժերը կամաց կամաց բարոյական ոյժերի վեր ածող Կիւրենացու, վերջապէս ամենաաննշան տեղ բռնող նոյն իսկ Յուդիթին պահապան կարգուած կանանց բոլորի սովորական պատկերները՝ աւելի քան գմայլելի են և ուշի ուշով ուսումնասիրութեան կարօտ։

Նոյնաման՝ յայտնի Սենկևիչի «Յո՛ երթաս» վէպի մէջ, նոյնպէս գլխաւոր հերոսներից մինը՝ Պետրոս Առաքեալը, այն բոլոր փորձութիւններից յետոյ, որ նորա գլխով են անցել, դարձեալ մի առանձին իմն կերպով է պատկերացրուած—նա դեռ ես՝—Ներոնական ամփիթատրոնում գաղուած՝—ծածկաբար է խաչակնքում կատաղի գազանների ձգուած առաջին քրիստոնեաներին, մինչդեռ, այստեղ՝ Կորելլու «Բարաբբայի» մէջ նա իրեն յատուկ անվեհերութեամբ և անձնուիրութեամբ, այլ եւ իւր անձնականը մոռացած, քստմնեցուցիչ և երկիւղալի տեսարաններում իսկ, քաջերի դէմ կանգնած, ահարկու ձայնով իւր պատգամն էր որոտում։

Իսկ ինչ վերաբերում է գլխաւոր հերոսուհի Յուդիթին—ներկայիս կանանց ճշգրտօրէն պատկերին, որոնք, ամէն ինչ անելուց յետոյ, դեռ նոր դարձի պիտի գան, և դեռ շատ ու շատ՝ Բոկկաչիօ, Ֆերենցուօլա, Ժորժ Զանդ, Դիւմա (հայր և որդի), Բալզակ, Մոպասան իրենցով գրագէտներն, որպէս զի հէնց այդ իսկ տարփայոյզ վէպերի շնորհիւ մնացող միամիտներին եւ՝վարակեն, մինչ... դարձի գան—բայց երբ... այս կասեմ, որ դէթ Յուդիթի դարձը սքանչելի և օրի-

նակելի է, աւելի եւս չքնաղ քանի որ կանացի սըրտին քնքուշ գիտակ՝—նոյն իսկ պարկեշտ սեռի ներկայացուցչի՝—փափուկ վրձինն է ստուերագծում նորա թոյլ կողմերը, արփիաճաճանչ անարատ ու ջինջ սիրոյ հրեշտակատիպ պատկերի շուրջը թափթփելով։

Բնութեան նկարագրութիւնները, հրաշքների ձեւակերպութիւնները, մաքի փափուկ դարձուածքները, մի այնպիսի չափաւորութեամբ և չքեղութեամբ են դասաւորուած որ պատիւ են բերում «մետաֆիզիկ», «մոնիզմուս», «գոյութեան կռիւ» դաւանողներին իսկ, թէ «մագնիտիզմ», «սպիրիտիզմ», «մեսմերիզմ» փնտռողներին և թէ պարզ, Աստուածային հոգւով սնուած միամիտ մարդուն. հրաշքների նկարագրութիւնը Կորելլու բեղմնաւոր գրչի տակից, նորա բազմաճոխ գաղափարների շնորհիւ, այնպէս բընական, պարզ և անայլելի են սահում, որ «այլապէս լինել չէ կարող», մտածում է կղերականը. այդ գիտութեան մօտ է,—ասում է բնագէտը և «նմանութիւն կայ»—կնքում է «Անգնոստիկեան»-ը։ Ի՞նչը աւելի պարզ,—քան լոյսի ցայթը, երբ հրջմոլիկ հուր կարող էր լինել դիակի շուրջը, որքան ըմբռնելի Բարաբբայի, Կիւրենացու, Պիղատոսի մի Աստուածային ուժի տակ ընկճումն,—երբ «ներշնչումն» Ճարկօի նման գիտնականն կարողացել է պարզաբանել. իսկ այդ բոլորն եւ Աստուածային շնորհաց պարգեւների չնչին հիւլէն չեն կազմում,—իսկ չէ թէ Փըրկչին—Աստուած է։ Եւ այդ բոլորը, բոլորը Կորելլին, իւր ցեղին յատուկ նրբագնին համառօտութեամբ, յուրեայն ինչպէս օրինակելի ռէալիստ, և միեւնոյն ժամանակ աշակերտ ընկելանաիզմի, ամբողջովին միակողմանիութեամբ մշակուած լինով voman xpérimentale, բացատրութեան խուսափմամբ. գիտութեան բոլոր խաւի ներկայացուցիչներին թողնելով որնել այն շրջանակից դուրս ծաւալելու, որպիսին Նախասահմանութիւնն է յատկացրել։

Մեծ նիւթի վերաբերութեամբ հակիրճ ու կցկտուր խօսելով, մենք՝ այս նիւթի մասին՝ մի խօսք պիտի կնքենք սոսկ մի խնդրով՝—որ «Բարաբբան» բնաւին

մի հէքեաթ չը կարծեն, ինչպէս մեզանում՝ ընդհանրապէս՝ սովոր են—ամեն մի վէպի ձեւով գրուած, լուրջ և բազմակողմանի գիրք ընդունելու,—այլ նորան ինչպէս սուրբ մատեանների բացատրող մի միջոց ընտրելով,—ուշի ուշով քննութեան տակ առնեն, որով՝—Քրիստոսաւանդ սիրոյ և կարեկցութեան մոլի թշնամի՝—անհաւատութեան հանելուկը մերկացրած կը լինին անշուշտ: Այո, հետաքրքրուողների համար, «Բարաբբան», անհամաձայնութեան տարտարոսական խաւարը, Քրիստոսաձիր վեհ հաւատքին, նորա անընկճելի փառքերի և ճաճանչափայլ ճառագայթների տակ անյայտանէ պիտի. տեղի տալով գրախտաբուղխ միաւորութեան...

Ուղղութիւն: Համարեա աշխարհիս գոյութիւնից սկսած այսպէս ասած՝ համայն աշխարհիս մի մեծ տիեզերական երկունք էր պատել, մի այնպիսի երկունք, որից մարդկութիւնը, նախասահմանութեան դիմելով, փրկարար հաւատք և հաւասարութեան ու կարգապահութեան անսայթաք կանոն էր սպասում: Եւ այդ երկունքը, վերջ 'ի վերջոյ, յաղթանակով պսակուեց. վաղուց սպասած Մեսսիան աշխարհք եկաւ: Քրիստոնէութեան լայն հիմքերը մինչ, այժմ և հանապազ, ամեն մի նոր ուսմունքի կամ աղանդի՝ ըստ չափու՝ հզօր պատնէշներն են կազմել:—Չինաստանում Կոնֆուցիան և Մենցիան պարզ հոգի և մերձաւորին իբր անձի նման սիրել են պահանջում: Եգիպտոսը, իբր հոգեփոխութեան շնորհիւ, չարերին մետամարֆոզական ձևակերպութիւնից էր անց կացնում: Հրէից Եհովան և Տէր Սաբաւովթը (Եսայու) ամպրոպային որոտում էր. «Ես եմ Տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց որդոց՝ յերիս և 'ի չորս ազգս ատելեաց իմոց». մինչդեռ Աղէքսանդրիայում հրէական ուսմունքը, իրեն գլուխ ունենալով Փիլոնին, «Հրէից Պղատոնին», որ Քրիստոսի ծննդից 30 տարի առաջ էր ծնուել, աշխատում էր նոյնը զուգայարմարացնել յունական փիլիսոփայութեան հետ, այդպիսով աւե-

տող ձեւանալով քրիստոնէական կրօնի,—որի համար իրաւացի կոչում են նորան «Եկեղեցու Հայրերի Հայր»: Նորան յաջորդում է Պլոտինը, Ամմօնիա Սակկի հետեւողը, որը Միակ Աստծուն Հայր է կոչում, Բանը Dogos Որդի, ինչպէս և քրիստոնէական տեօլոգիայում: Հնդկական՝ Բրաման, Շիվա, Վիշնու երրորդութիւնն է առաջ գալիս (տրիմուրտի), որոնք նոյնակերպ են բացատրում. «Գիտէք»,—ասում է Bhagavata Tourana մէջ, «որ մեր մէջ իսկական զանազանութիւններ չը կայ, այլ թէ այդպէս երեւում է». առաջ է գալիս Բուդդան, որի ուսմունքով հոգին անմահ է: Մի ուրիշ աղանդ Պարսկաստանում Զօրաստրի պատրուակով առաջ է գնում, և այդ բոլորի հետ շաղկապուած յունական փիլիսոփայութիւնը, իրեն գլուխ ունենալով բազմաթիւ՝ Սոկրատէս, Պղատոն, Արիստոտել, Պիրրօն, Էպիկուր, զանազան դպրական կամ բացասական շաղփաղփանքներով. երկար ու ձիգ դարեր ճանապարհ են հարթում Սիրոյ Մեծ Վարդապետի համար, Որի դժգոյն ստուերն ընդմիշտ պիտի կազմեն թէ նոքա—անցկացածները, և թէ ներկայումս և ապագայում նոցա փոխարինող՝ Հէկէլ, Ֆեյերբախ, Ստիւարտ Միլլ, Շելլինգ, Դիդրօ, Սպենսեր, Շոպենգաուէր, Դարվին, Կլօդ Բերնար և այլն և այլն:—Եւ Նա եկաւ, Երկնայինը շնորհեց և երկինք վերաալացաւ... Թող Հնդկաստանը իր Վիդ և Բրամայով յայտնէ, թէ «Նա տալիս է կեանք և ոյժ, և իրենք աստուածները Նորա օրհնութիւնն են խնդրում. անմահութիւնը և մահը սոսկ Նորա ստուերներն են կազմում. «ահա թէ որպիսի Աստծու ենք պաշտում մենք»: Նորա կարող ակնարկը տարածուում է ջրերի վերայ, ուժ և բարութիւն բերելով, աստուածների վերայ. Նա աստուածների Միակ Աստուածն է. ահա այս Աստծուն ենք մենք փառաբանում» (21 օրհնաբանութիւն Ռիգ—Վեդ). —նոքա անգիտակցաբար մեր Աստծուն են կոչում: Թող կրկնեն, որ Պղատոնի ֆօս ակֆիեոս դարձուածքը սենեկցիա ստացաւ Նիկիական ժողովում. Թող Տիցիանը և ս. Իրիւոնը կանգ առնեն Փիլոնի

հրոյ, լոյսի և գիտութեան օրինակի վերայ.—դոքա բոլորն էլ մի Եսայի Մարգարէի չափ դեռ պարզ կարող չը պիտի լինէին Մեսիայի աւետաբերը լինելու, որը՝ Աստուածային ներշնչմամբ՝ կոչում է. «Զթիկունս իմ նետս ի հարուածս. զծնօտս իմ յապտակս. և զերեսս իմ ոչ դարձուցի յամօթոյ ընդ երես թքանելոյ... Եւ Տէր Տէր եղև իմ օգնական... Զի մերձ է՝ որ արդարացուցանէն զիս: Ով է՝ ոսոխն իմ, եկեսցէ՝ կացցէ ի մէջ. և ով է՝ որ դատէն զիս՝ մերձեսցի առ իս»: (Մարգ. Եսայեայ գլ. Ծ. 6—9): Այսքանով ընթերցողի առաջ մենք փորձեցինք այն դժուարին ճանապարհի կողմն ցոյց տալ, որից այնքան անսայթաք Կորեյլին է անցնում, օժտուած այն ուղղութեամբ, որին պարզաբար ճշմարտութեան ճանապարհն են կոչում:

Այո, Մեսիան եկաւ, բայց դեռ Մանուկ հասակի մէջ, երբ Ծերունին Սիմէօն «ընկալաւ զնա 'ի գիրկս իւր... ասէ ցՄարիամ մայր Նորա. ահա սա կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց 'ի մէջ Իսրայէլի. և 'ի նշան հակառակութեան»,—կենդանի արձագանք դառնալով Եսայուն, թէ՝ «Նա եղիցի ձեզ 'ի սրբութիւն: Եւ ոտն քո զքարի ոչ հարկանիցի. եւ գայթագղութիւն քեզ ոչ պատահեսցի: Բայց տուն յակօբու յորոգայթ և 'ի ծործորս դարանակալաց Երուսաղէմի: Վասն այնորիկ տկարասցին 'ի նմա բազումք: Անկցին՝ և խորտակեսցին...» (Ղուկ. Բ. 34: Եսայ. Ը. 14): Այդ բոլորից և մի այդպիսի հիմքի վերայ գրուած երկնային հաւատքից քրիստոնէական մօրալը պիտի կազմուէր: Ամեն մի գաղափար, իւրաքանչիւր հասարակական բարօրութիւն դորա մէջ ամփոփուելով, վերջապէս միջոց պիտի տար հէք մարդկութեան զէթ ամէն ինչ հաւասարութիւն գտնելու:

Քրիստոնէական փիլիսոփայութեան ջատագովները ոչ այլ ինչ, եթէ ոչ թշուառների, կարեկցութեան կարօտ, եղկելի կեանքն բարեփոխելու էին ձգտում. «Եթէ զլեզուս մարդկան խօսիցեմ և հրեշտակաց և զսէր ոչ ունիցիմ, եղէ ես իբրև զպղինձ,

որ հնչէ. կամ իբրև զծնծղայս՝ որք ղօղանջեն: Եւ եթէ ջամբիցեմ զամենայն զինչս իմ աղքատաց. և մատնիցեմ զմարմինս իմ յայրումն. և զսէր ոչ ունիցիմ, ոչինչ օգտիմ». կոչում է Պօղոս Առաքեալը: Տանջանքը մեր հաւատքի մէջ աստուածային բնաւորութիւն է կրում. ողորմածասիրութիւն և ներողամտութիւն. «Երանի սգաւորաց՝ զի նոքա մխիթարեսցին: Երանի որք հալածեալք իցեն վասն արդարութեան՝ զի նոցա է արքայութիւն յերկնից»,—աւետում է Փրկիչը: Քրիստոնէական մօրալը պահանջում է մարդուց ոչ թէ միմիայն մարդկային կատարելութիւն, այլ, ինչպէս և ստօիցիզմը, աստուածային կատարելութիւն. «Արդ եղերուք դուք կատարեալք. որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»: Եւ բազմաթիւ կենսական հարցեր պարունակող ու նոցա չափ ու սահմանի մէջ առնելով, մեր հաւատքը՝ վերջապէս՝ թեասքօղում է՝—«Պատուիրան նոր տամ ձեզ. զի սիրիցէք զմիմեանս, որպէս սիրեցի ես զձեզ. զի և դուք սիրեսջիք զմիմեանս»—վեհ, գերաշխարհային ցանկութեամբ:

Ահա այն սկզբմունքը, որի տակ այնքան յաջող կերպով Կորեյլին է գործում, և որը՝ իւր հարուստ մտքի ու սուր գրչի համար՝ այլ իմն օգտակար նիւթ, քան թէ հաւատքի ջինջ աղբիւրը, չէր պիտի փնտռէր և իրաւունք էլ ունէր:—Հաւատքը ամեն ինչ տալիս է և, բացի ճշմարտութիւնը,—ոչինչ չէ պահանջում 'ի տրիտուր:

Մի քանի խօսք մեր թարգմանութեան առթիւ:

Սոյն գիրքը հայերէն վերածելու մեծ փափագ զգալով, վերջապէս մեծ դժուարութեամբ կարող եղանք մեր նպատակին իրագործել, թէպէտ և՝ մի կողմից՝ հաստատ գիտէինք, որ ներկայիս մեր ինտելիգենտ, իրենց ազատամիտ կոչող երիտասարդներ, ծաղր ու ծանակի առարկայ պիտի շինեն թէ մեր թարգմանութիւնը և թէ մեր բռնած գիրքը,—«կղերականների» շարքն անց կացնելով մեզ: Հոգ չէ, մենք ուրախութեամբ պիտի տանենք այդ հեգնութիւնները, քանի որ հաստատ գիտենք, որ «Բարաբբա» տալով մեր

ազգութեանը աւելի քիչ սխալուեցինք, քան կը սըխալուէր «Դրեսլեր» առաջարկող մէկը: «Պրուդոններ» ուսումնասիրել ցանկացողք կարող են դոյնանման հեղինակների ռուսերէն թարգմանութիւններն իսկ կարդալու, եթէ միայն իրենց դոյա հասած համարելով, դեռ ես ընդունակ եղած չեն լինիլ բընագիրն իր յատուկ լեզուով կարդալու: Այո, կրկընում ենք, «Դրեսլերի» տխրահռչակ թարգմանութիւնըն մեծ դաս եղաւ մեզ ընտրելու այս,—այն, որը աւելի կարեւոր, աւելի հասկանալի և աւելի տարածուելու կարիք ունէ մեր մէջ: Գալով այն հարցին, որ մեզ կղերական պիտի կոչեն, մենք սոսկ այս կասենք, որ մենք այդ ատողների ճանապարհն արդէն վաղուց, շատ վաղուց ենք գնացել և այնտեղ, ուր այնքա՜ն տենդային սլանում են նոքա,—այդ ճանապարհի ծայրայեղ սահմանում, բացի սխալականութիւնը ոչինչ չը գտնելով, գլխակոր, դանդաղ քայլերով, մեր ապագայի իւրաքանչիւր անելքն քննադատելով, այլ ես այն տեղ ենք դարձել, ուր... կղերականներն են: Չը մոռանանք սակայն, որ մեզ հեռաւորները ես շատ ենք ճանաչում:

Ինչ վերաբերում է մեր թարգմանութեան ոճին, սխալներին և ուղղութեանը, մի քանի խօսքով միայն պիտի աշխատենք պաշտպանել մեզ այն գրական տախծներից, որոնք շատ և շատ սուր գործել գիտեն և մեծ ու մեծ չափով պահանջել սովոր են: Քանի որ նպատակ ենք ընտրել անձնական փաստերի չը դիմել (իրաւունք էլ չունինք), ուստի այս միայն կարող ենք ասել, որ մենք մի տաղանդաւոր համարուած քննադատ ենք ունեցել, որը մի շատ յայտնի վիպասանի՝ այսպէս ասած՝ առել ու ընկել էր, ամենաանտանելի կերպով, երկար ու ձիգ, քննադատելով վերջինիս և վէպ գրելու դասեր տալով: Ժամանակը ինչ ասէք չի անում. յանկարծ այդ քննադատը վիպասան դարձաւ, բայց մի այնպիսի դըրութեան մէջ ընկաւ (Աստուած չը ցոյց տայ), որ վէպերն էլ թողեց, կրիտիկոսութիւնն էլ: Գիտեմ, ասեն պիտի, որ քննադատ և վիպասան տարբեր

բաներ են. այո, բայց բանն էլ հէնց նորանումն է, որ մեր մէջ անպայման այն է, ինչ որ մենք ասացինք. տարբեր բան է այլ լեզուների մէջ:

Մեր խօսքին դառնանք. մեզնից մաքուր ոճ պիտի պահանջէք, այնպէ՞ս չէ. բարի, նախ ցոյց տուեցէք մեզ, թէ ո՞ր ոճն է ուղիղը: Անուրանալի փաստ է, որ մեր անտէր գրականութեան մէջ ամեն մէկը իր ինքնուրոյն ոճի, բառի, անգամ ամբողջ նախադասութիւնների առանձնայատկութիւններն ունի, իսկ մենք, պարծանքով ենք ասում, որ տրուպն ենք բոլորի: Եթէ կուսակցական պայքարը մեր օրինակելի թարգմանիչների առաւելութիւններն իսկ մոռանալ և նոցա անուանարկել գիտէ, մենք ո՞ւր պիտի մնանք: Բայց և այնպէս գէթ այս կասենք, որ 'ի նկատի ունենալով «Բարաբբայում» յիշուելիք բազմաթիւ ցիտատների Աւետարանից գրաբար իսկ վերցնուելուն, հարկաւ մեր ոճն իսկ պիտի գրաբարին յարմարեցնէինք: Մեր կարծիքով դա աւելի լաւ էր, քան թէ ստիպուած լինէինք բազմաթիւ օտարամուտ բառեր գործ ածելու, ինչպէս ընդունուած է արդէն, մինչդեռ մեր լեզուն այնքան ճոխ և բազմակողմանի է: Ոճի վերաբերութեամբ բաւական է յիշել, որ մենք պիտի աշխատէինք Մելխիորի ծածկամիտ ոճը, Յուդիթի խենթերին յատուկ դարձուածքները, Պետրոսի ցասկոտ ու խօսքի տուսը կոլցնող դրութիւնը, Պիղատոսի մտամոլոր ու կըցկտուր բառերը, որքան կարելի է, բնականին մօտ դասաւորելու, աշխատելով,—միևնոյն ժամանակ,—բնագիրը ձեռքից չը տալ. իսկ «Բարաբբայի» համարեա իւրաքանչիւր երեսը լի է այդ տեսակ խորթութիւններով: Դորա էլ թող մեր առանձնայատկութիւնը կազմեն. լաւ թէ վատ—միևնոյն է, քանի որ այլ իմն ելք չունէինք մենք:

Գալով սխալներին, այսքանը կասենք, որ դոքա ըստ մեծի մասին առաջ են գալիս՝ կ—գ, թ—դ, տ—դ, խ—ղ, վ—ւ—ու, ո—օ, ռ—ր, ճ—չ, կ—ք, ե—է... օրինակ՝—թանկ—թանգ, թակարթ—թակարդ, բանտ—բանդ, անուշ—անոյշ, արփանք—

տափանք, երեկ—երէկ, բաղդ—բախտ, ժայթքումն—ժայտքումն, զեղխ—զեխ, մրմռումն—մռմռումն և այլն՝ բազմաթիւ տարբերութիւններից, որոնք երկուստեք ևս գործածուելու սովորութիւնն ունեն: Եթէ այդ բոլորի վերայ աւելացնենք նոյնպէս աշխրահռչակ «ւ» տառի «ու»-ի հետ մրցումն, որոնց մենք երկու տեսակ էլ գործ ենք ածել և, ինչպէս սովորութիւն է դառած, մեւս տառասխալներն էլ տպագրական համարէինք, համարեա թէ մեզ ազատած պիտի լինէինք այդ բարդ պատասխանատուութիւնից ևս:

Կրիտիկոսներին մի երկու խօսք. պարոններ, եթէ դուք էլ, խոստովանում ենք,—հազարական անգամ մի բառարանից միւսը, մի գրքից մէկ ուրիշը անընդհատ դիմէիք, և գրքից—գիրք, ոճից—ոճ վազէիք, ինչպէս մենք,—հաւատացած եղէք, որ ձեզ ձեր քննադատները շատ և շատ աւելի խիստ պիտի կրիտիկայի տակ առնէին, քան թէ դուք մեզ քննադատէք թերևս: Իսկ եթէ կուսակցական պայքար ևս լինէ մէջ տեղ, այն ժամանակ՝ այսպէս ասած՝ «վայը եկել և տարել է» ինձ էլ... ձեզ էլ: Գրիչը ձեր ձեռքին ազատ է,—ինչ կուզէք՝ շարժեցէք, բայց գէթ յիշեցէք, որ որքան շատ մեր մասին խօսելու լինիք, այնքան շատ կը պարտաւորեցնէք մեզ. ա՛խ, եթէ գիտենայիք թէ որքան ենք սիրում մենք, որ մեր մասին աւելի և աւելի խօսում է՝ և այն մամուլի մէջ, լաւ թէ վատ—միևնոյն է մեզ համար, որովհետև կը դառնուին և այնպիսիք, որոնք «չարը բարուց զանազանել կարող են»:

Մենք անտարբեր ենք և գիտենք որ դէմ պիտի տանք այն գրոհին, որի ճաճուան «Բնութեան օրէնք», «Ժառանգականութիւն», «Էվօլիւցիա», «Գոյութեան կռիւ», շատ անգամ խարուսիկ կարծիքի դէմ «Հաւատք, Յոյս, Սէր» տարածելով, Փրկչի կեանքն ենք հռչակում, Որին այնքա՛ն անպատուեցին... Աստուածացնելու համար:

Ամփոփումն:

Ո՛վ գիտէ. գուցէ այս գիրքը ևս՝ Աւետարանական ճշմարտութիւնը աւելի խոր ըմբռնելու պատճառ դառնայ: Թերևս, այսրէն նկարակերտուած ճշգրտահան պատկերների շնորհիւ, երկնահրաշ հաւատքի մրրկայոյզ ծովի մէջ նետուած խարխափողներ՝ աւելի վաղ՝ դէպի արփիաճաճանչ փարոսը՝ Փրկիչն դառնան:

Կարող է պատահել, որ սոյն աշխատութիւնը մասամբ օգտակար լինէ, երկպառակութեան և հակասութեան խռովայոյզ ծովի մէջ երերուն, այն մարդկանց համար, որոնք դէպի կղզիացած երկնային լուսաճաճանչ տաճարով պսակուած, անխորտակելի քարաժայռն են ձգտում,—դէպի Նորա լուսեղէն տաճարը, որի գլուխ անկեանը Ինքն՝ Փրկիչն է և որոնք, երկնառաք հաւատքի արփիահրաշ փարոսի տակ, անդադար մաքառելով,—ոմանք երկնածիր կրօնի մէջ իրենց փրկութիւնը գտնելով, դէպի ժայռըն են դուրս գալիս, իսկ ոմանք՝ դեռ ևս Աստուած—Մարդու դէմ եղկելի կռիւ յայտարարելով, անեղծական քարաժայռի ժանիքաձև ցցուած սեպերին են կպչում, ջախջախուում ու անհետանում հաւատքի անեզր ովկէանոսի կոհակների տակ...

Բայց մի բան անշուշտ պիտի պակէ դոյզն այս աշխատութիւնը:—Այդ դէպի Փրկիչն դիմող ու Աւետարանի մէջ իրենց սփոփանքն փնտռող տառապեալների և լքեալների մխիթարութիւնն պիտի լինէ, որոնք այլևս գիտեն, որ իրենց միակ յոյսը՝ հաւատն է մնացել, որի երկնառաք Հիմնադիրը Սուրբ Մարտիրոսը միշտ եղել է և պիտի լինէ այն հէգ մարդու յոյսը, որը այլևս ոչինչ ունէ յոյս կապելու: Այդ մարդիկ իմանան պիտի, որ Նա մեռնողների մխիթարիչ լինելով հանդերձ, մեզ անյայտ աշխարհի տարտարոսական խաւարը ճեղքող ճաճանչափայլ ճառագայթն է կազմում:

Վերջապէս,—այս գիրքը ամեն մի մարդու սրտի մէջ սիրոյ և ճշմարտութեան բեղմնաւոր սերմեր ցանելով,—գթասիրութեան և համբերութեան ցանկալի և սփոփեցուցիչ պտուղներ պիտի տայ:

Ա. Պարզեանց:

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ
С.С.Р.А. Публичная
7/31 1922
имени А. Мясникяна
*Ա. ՄՅԱՍ

ԱՂԲԻՒՐՆԵՐ

Որոնց՝ այլ եւ այլ պատճառներով՝ դիմուած է տեղեկութիւններ քաղելու:

1)I. «Шерръ.—Всеобщая исторія литературы», 1896 г.

2) Аббатъ Гетте.—«Э. Ренанъ предъ судомъ науки», 1889 г.

3) Э. Медзаботта.—«Iезуитъ», 1892 г.

4) Проф. А. Фуллье.—«Исторія философіи», 1901 г.

5) С. Ф. Годлевскій.—«Ренанъ какъ человѣкъ и писатель», 1895 г

6) Докторъ А. Дебэ.—«Коринѳскія ночи», 1901 г.

7) «Научное Обозрѣніе», 1902 г. № 10—Октябрь.

8) К. Ф. Беккеръ.—«Древняя исторія», ч. III. изд. 1893 г.

9) Л.—С—ъ.—«Философскіе взгляды Эрнеста Ренана», «Русское Обозрѣніе», 1892 г.

10) К. К. Арсеньевъ.—«Философская драма Ренана «Калибанъ» («Вѣстникъ Европы»), Январь 1879 г.

11) Сочиненія Св. Иринея, епископа Ліонскаго, 1900 г.

12) Сочиненія св. Iустина философа и мученика, 1891 г.

13) Ф. В. Фарраръ.—«Искатели Бога». 1898 г.

14) Жизнь Iисуса Христа (Ф. В. Фарраръ)—1900 г.

15) *Պրոֆէսոր Ի. Հ. Ինգրայամ,—«Ադինայի նամակները»՝ Թարգմ. Յ. Ք. Տէր-Պետրոսեանց*, 1897.

16 *«Ֆարրարի Քարոզները». Թարգմ. Ս. Մանդինեան*, 1901.

17 *«Արարատ» զանազան տարիների և այլք:*

ՀՀ Ազգային գրադարան
NL0168702

82
Ч-78